ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

`

ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 710

Հրատարակության են երաշխավորել Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտի և պատմության ֆակուլտետի գիտխորհուրդները, ԵՊՀ գրահրատարակչական խորհուրդը:

Խմբագիրներ՝ ՀՀ ԳԱԱ ակադ. Աշոտ Մելքոնյան
բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

Գրախոսներ՝ պ.գ. դոկ. Արման Եղիազարյան
պ.գ.թ. Գագիկ Բաղդասարյան
պ.գ.թ. դոցենտ Միքայել Մալխասյան
պ.գ.թ. Հայկ Մխոյան

Մինասյան Էդիկ Գարեգինի

Մ 710 Մայրաքաղաք Երևանը ՀՀ անկախության տարիներին (1991-2018 թթ.)/ Էդիկ Գարեգինի Մինասյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 380 էջ + 16 էջ ներդիր:

Աշխատությունը ներկայացնում է մայրաքաղաք Երևանի՝ Հայաստանի երրորդ հանրապետության (1991-2018 թթ.) ժամանակաշրջանի ամբողջական պատմության գիտական հրատարակությունը: ՀՀ ազգային արխիվի նյութերի, մամուլի և տարաբնույթ ու համապատասխան այլ գրականության վերլուծությամբ ցույց է տրվում մայրաքաղաքից սկսված ՀՀ անկախացման և անկախ պետականության կայացման գործընթացը, Երևանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը, մայրաքաղաքը հանրապետության վարչաքաղաքական համակարգում, նրա համակողմանի օգնությունը մարտնչող Արցախին և արտաքին կապերն ու փոխհարաբերությունները աշխարհի տարբեր երկրների քաղաքների, այդ թվում՝ քույր քաղաքների և միջազգային կազմակերպությունների ու կառույցների հետ:

Գիրքը հասցեագրված է պատմաբաններին, քաղաքագետներին, Երևանի պատմությամբ հետաքրքրվողներին և առհասարակ ընթերցող հանրությանը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2464-7

© ԵՊՀ հրատ., 2020
© Մինասյան Է. Գ., 2020

Գիրքը նվիրվում է մորաքրոջս որդու՝
Երևանի քաղաքապետարանի վասպակաշատ աշխատող
Հովհաննես Ահարոնյանի հիշատակին:

Ներածություն

Դարերի ու հազարամյակների բովով անցած Հայաստանի Հանրապետության և համայն հայության մայրաքաղաք Երևանը հայ ժողովրդի երկար ու դժվարին պատմական ուղու վկան է ու մասնակիցը: Երևանցին միշտ էլ հպարտացել ու հպարտանում է իր հնամենի մայրաքաղաքով, նրա պատմությամբ, մշակույթով ու ավանդույթներով: Պատմության ընթացքում Երևանն ունեցել է իր ծաղկման ու անկման ժամանակաշրջանները, բազմիցս ենթարկվել է փորձությունների, ավերվել ու վերածնվել է իր ժողովրդի հետ որպես նրա հազարամյա ճանապարհի հավատարիմ ուղեկիցը: Երևանն աշխարհի հնագույն և միևնույն ժամանակ երիտասարդ քաղաքներից է: Այն «հավերժական քաղաք» Հռոմից 29 տարով ավելի հին է: Մայրաքաղաք Երևանը աշխարհի այն սակավաթիվ բնակավայրերից է, որի հիմնադրման մասին ստեղծվել ու պահպանվել են ոչ միայն ավանդազրույցներ, այլև սեպագիր արձանագրություն՝ որպես քաղաքի քարագիր ծննդյան վկայագիր: Ք.ա. 782 թ. Արգիշտի Առաջինն այժմյան Երևանի հարավարևելյան մասում հիմնադրեց Էրեբունի բերդաքաղաքը՝ այդ մասին թողնելով հետևյալ սեպագիր արձանագրությունը. «Խալդի աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և հիմնեց Էրեբունի բերդաքաղաքը՝ ի հզորություն Բիայնիլիի և ի սարսափ թշնամիների...»:

Թերթելով Երևանի պատմության խիստ համառոտ տարեգրության էջերը՝ կարելի է արձանագրել, որ նախամարդու բնակության առաջին հետքերն այստեղ շուրջ երկու միլիոն տարեկան են:

Երևանը վաղ քաղաքային բնակավայր է դարձել դեռևս վեց հազարամյակ առաջ, իսկ քաղաքն անվանակոչվել է Էրեբունի-Երևան 2802 տարի առաջ: Դեռևս հին քարեդարյան ժամանակներից Երևանը դարձել է մարդու հնագույն օրրաններից մեկը, այն պատմական առումով իսկապես հնությունների հանգույց է. այստեղ կարելի է տեսնել քարի, պղնձի, բրոնզի դարերի, ուրարտական ժամանակաշրջանի բերդերի ու կառույցների հետքեր: Երևանի տարածքը, ըստ էության, աշխարհում առաջիններից մեկն է մուտք գործել քաղաքակրթության և վաղ պետականության շրջան: Երևանում է գտնվում

Շենգավիթը՝ մարդու շինարարական գործունեության ամենահին նմուշներից մեկը (Ք. ա. IV-II հազարամյակներ): Վաղ քաղաքային կյանքը Երևանի տարածքում սկզբնավորվել է Երևանյան լճի ափին գտնվող Շենգավիթ հնավայրում Ք. ա. IV հազարմյակի կեսերին, ինչի պատճառով էլ մի շարք գիտնականներ Հայաստանի վաղ բրոնզի դարի մշակույթը կոչվում են «Շենգավիթյան»: Երևանում գտնվող միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների հնավայրերից (Ծիծեռնակաբերդ, Ձորաբերդ, Կարմիր բլուրի մինչուրարտական շերտեր, զանազան դամբարաններ) հայտնաբերված ուշագրավ նյութերը վկայում են, որ այս տարածքները բնակեցված են եղել բրոնզի դարից մինչև զարգացած միջնադար: Երևանի պատմության համար կարևորագույն նշանակություն ունի Վանի կամ Արարատ-Ուրարտու թագավորության ժամանակաշրջանը (Ք. ա. IX-VII դարեր): Արգիշտի Ա-ի հիմնադրած Էրեբունին Ք. ա. 782 թ. (շուրջ 100 տարի) կատարեց Վանի թագավորության հյուսիսային գլխավոր հենակետի դերը, որին Ք. ա. 680-670-ական թթ. փոխարինեց Վանի տիրական Ռուսա Բ-ի կառուցած Թեյշեբաինի ամրոցը (այսօր հայտնի Կարմիր բլուրի հնավայրը), որը նույնպես գտնվում է Երևանի տարածքում՝ Հրազդան գետի ձախ ափին: Արարատ-Ուրարտու թագավորությանը հաջորդած Հայկազան-Երվանդականների պետության շրջանում ևս (Ք. ա. 6-3-րդ դարեր) Էրեբունի-Երևան ունեցել է կարևոր դերակատարում: Այդ ժամանակաշրջանում, հատկապես Ք. ա. III դարից մինչև Ք. հ. IIII դարը (ամբողջ հելլենիստական ժամանակաշրջանում) Երևանի տարածքի մի շարք հնավայրերից (Խոսրովապատ, Կարմիր բլուր, Կոնդ, Ավան) հայտնաբերվել են հնագիտական հարուստ նյութեր, այդ թվում՝ Ալեքսանդր Մակեդոնացու, Տիգրան Մեծի, պարթևական ու հռոմեական դրամներ:

VII դարի կեսերից կարևոր տեղեկություններ են պահպանվել Երևանի բերդի կողմից 640 և 660-ական թթ. արաբների նվաճողական բանակներին ցուցաբերած հերոսական դիմադրության մասին, որի արդյունքում արաբները պաշարել, բայց չեն կարողացել գրավել բերդերը: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ X դարի պատմիչներ Հովհաննես Դրաստխանակերտցին և Սամվել Անեցին պատերազ-

մական գործողությունների այդ դրվագները անվանել են հերոս-բերդի անունով՝ «Երևանու կռիվ»: Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում Երևանը բազմիցս հիշատակվում է իբրև հարուստ այգեստաններ ունեցող քաղաքագյուղ, որը XII-XIII դարերում վերածվեց միջնադարյան քաղաքի: XIII դարասկզբին Երևանը հիշատակվում է իբրև ավագանի և ավագների խորհուրդ ունեցող բավականին զարգացած քաղաք: Դրա լավագույն վկայությունն է նաև 1336 թ. ձեռագիր-մատյանում հիշատակված Երևանի «պատվական քաղաք» կոչումը:

XV դարում Հայաստանում հաստատված թուրքմենական կարակոյունլուների տիրապետության օրոք ստեղծված Արարատյան կուսակալության կենտրոնը դարձավ Երևանը: Պատահական չէ, որ այդ ժամանակներից Երևանը հաճախ է նշվում որպես «Արարատյան երկրի մայրաքաղաք»:

XVI-XVII դարերը հայտնի են թուրք-պարսկական աղետալի պատերազմներով, որոնք ծանր հետևանքներ ունեցան հայության համար: Այս պատերազմների ժամանակ հատկապես հիշատակելի է 1724 թ. Երևանի հերոսամարտը, որը մղվում էր մեծաքանակ թուրքական բանակների դեմ: 30-35 հազար ազգաբնակչություն ունեցող Երևանը թշնամու դեմ հանեց մոտավորապես 9.5 հազարանոց զորք: Քաղաքի պաշտպանությունը տևեց 60 օր: Միայն հունիսի 7-ին՝ երկամսյա պաշարումից հետո, բազմաթիվ համալրումներով բազմապատկված օսմանյան մեծաքանակ զորքը (մոտ 60 հազարանոց) գրավեց քաղաքը, իսկ բերդը հանձնվեց Երևանի Միհր Ալի խանի կողմից սեպտեմբերի 22-ին: Պատերազմների արդյունքում Հայաստանը բաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև, որի բաժանման գիծը պահպանվեց մինչև XIX դարասկիզբ: Արևմտյան Հայաստանն անցավ Թուրքիային, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանին, որի գլխավոր կենտրոնը Երևանն էր:

Ամբողջ հայության, այդ թվում Երևանի հայ բնակչության համար ճակատագրական նշանակություն ունեցան XIX դարասկզբին ռուս պարսկական 2 պատերազմները, որոնց արդյունքում 1913 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի և 1828 թ. փետրվարի 10-ին

կնքված Թուրքմենչայի պայմանագրերով Արևելյան Հայաստանի հիմնական մասը՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Շիրակը, Զանգեզուրը, Երևանի և Նախիջևանի խանություններն ու Օրդուբադի գավառն անցան Ռուսաստանին: Հենց վերոնշյալ վերջին տարածքներից կազմվեց Հայկական մարզը, որը դարձավ Ռուսական կայսրության առանձին վարչական միավոր: Նրա կենտրոնը դարձավ Երևանը: Հայկական մարզը գոյություն ունեցավ 1828 թվականից մինչև 1840 թվականը: 1849 թ. ստեղծվեց Երևանի նահանգը, որը գոյություն ունեցավ մինչև 1918 թ. մայիսի 28-ը. վեցդարյա ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց անկախ պետությունը: Այն նոր էջ բացեց նաև Երևանի պատմության մեջ. հինավուրց քաղաքը դարձավ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը: Առաջին հանրապետությունն գոյություն ունեցավ ընդամենը երկուսուկես տարի: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանյան համաձայնագրով Հայաստանը խորհրդայնացավ, բաժանվեց քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի միջև՝ ունենալով տարածքային կորուստներ: Ամբողջ Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանի մի մասն անցան Թուրքիային, իսկ մյուս մասի վրա ստեղծվեց Խորհրդային Հայաստանը՝ Երևան մայրաքաղաքով: Չնայած Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության՝ ԽՍՀՄ կազմում ընդգրկված կիսանկախ պետություն լինելուն, քաղաքականապես ու տնտեսապես անկախ, ազգային ազատ պետություն չլինելուն, Հայաստանի տարածքների բռնազավթմանն ու օտարմանը, հոգևոր և մշակութային բազմաթիվ հուշարձանների ոչնչացմանը, առաջադեմ մտավորականների աքսորին, պատերազմի մեծաքանակ զոհերին՝ Խորհրդային Հայաստանը և նրա մայրաքաղաք Երևանը, այնուամենայնիվ, նշանակալից նվաճումներ ձեռք բերեցին հասարակական և տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: ՀԽՍՀ-ն և Երևանն ունեցան զարգացման արդյունաբերություն, որի հիմնական մասը կենտրոնացած էր մայրաքաղաքում, գյուղատնտեսություն և մշակույթ: Խորհրդային Հայաստանում և նրա մայրաքաղաք Երևանում ծավալված բուռն շինարարությունը նպաստեց բնակչության թվաքանակի աճին: Երևանը դարձավ մեկ միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաք: 1991 թ., երբ հայ ժողովուրդը վերականգնեց իր երա-

զած անկախությունը, Երևանն այս անգամ աչքի ընկավ Հայաստանի երրորդ հանրապետության մայրաքաղաքի կարգավիճակով:

2018 թվականը հոբելյանական էր մայրաքաղաք Երևանի համար, քանզի նշվեց նրա հիմնադրման 2800-ամյակը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ մենք սույն մենագրությունը սկսել ենք Հայաստանի երրորդ հանրապետության անկախության սկզբի Երևանի պատմությունից՝ հասցնելով այն մինչև 2018 թ. հոբելյան տարվա ավարտը: Դարերի ու հազարամյակների միջով անցած Երևանն այսօր վարչական, արդյունաբերական, գիտական, մշակութային խոշոր կենտրոն է, երկաթուղային, օդային ու ավտոճանապարհային հանգույց:

Երևանն այսօր համայն հայության գիտակրթական և մշակութային կենտրոնն է: Այստեղ է գտնվում հայ մշակույթի և հայագիտության նշանավոր օջախը՝ Մատենադարանը, որտեղ, ի թիվս այլ անկրկնելի գանձերի, խնամքով պահվում է նաև պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող հայերեն ամենամեծ մագաղաթե ձեռագիրը՝ «Մշո ճառընտիրը» (1200-1205): Այստեղ են գտնվում գիտակրթական խոշոր օջախ հանդիսացող Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանն ու բուհերի մեծամասնությունը:

Երևանը դեպի իրեն է ձգում պատմության ճակատագրով օտարության մեջ գտնվող աշխարհասփյուռ իր զավակներին: Հանձին Երևանի՝ Սփյուռքը տեսնում է մայր հողի վրա մի միասնական ընտանիքում միավորվելու, իր նվիրական իղձն իրականություն դարձնելու գրավականը:

Հայրենիք վերադարձած հազարավոր հայեր երևանամերձ վայրերում հիմնադրեցին թաղամասեր՝ Նոր Բութանիա, Նոր Արեշ, Նոր Զեյթուն, Նոր Մարաշ, Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ, Նոր Կիլիկիա, որոնք նոր զարգացում ապրեցին ՀՀ անկախության տարիներին: Այսօր, երբ մոտենում ենք Հայաստանի Հանրապետության անկախության երրորդ տասնամյակի ավարտին, թվում է, թե այն պատմության համար մի ակնթարթ է, սակայն Երևանի համար՝ վիթխարի քայլերով առաջ ընթացող քաղաքաշինական նվաճումների ժամանակաշրջան: Սերունդները, երախտագիտությամբ հիշելով Երևանի կառուցողներին, անշուշտ, պետք է հարգանքի տուրք մատուցեն մեր հին

ու նոր մայրաքաղաքի առաջին գլխավոր հատակագծի հեղինակ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանին: Նրա նախագծած հատակագծով վեր է հառնում մեր մայրաքաղաք Երևանը: Մեր տաղանդավոր ճարտարապետների (Ն. Բունիաթյան, Մ. Գրիգորյան, Ա. Գուրզադյան, Ա. Թարիխանյան, Ջ. Թորոսյան, Ռ. Իսրայելյան, Ս. Խաչիկյան, Գ. Մուշեղյան, Ս. Քյուրքչյան, Ն. Սարգսյան, Ս. Դանիելյան և այլք) մտահղացումով և շինարարների տքնաջան աշխատանքով այսօր բարձրացել է հիացմունքի արժանի մի քաղաք, որտեղ զարմանալի վարպետությամբ զուգորդվել են ազգային բազմադարյան ճարտարապետության ավանդույթները և ժամանակակից քաղաքաշինության նվաճումները:

Ժամանակին գրվել և հրատարակվել են Երևանի պատմությանը նվիրված մեծաթիվ աշխատություններ, եղել են նաև մայրաքաղաքի պատմությունը ամբողջացնելու փորձեր[1]: Դրանցից առավել հաջողվածը Թադևոս Հակոբյանի «Երևանի պատմությունը» քառահատոր աշխատությունն է (ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 1917 թվականը), որը լույս է տեսել 1959-1971 թթ. ընթացքում մեկ այլ ուսումնասիրությամբ (Երևան - 2750 (Ք. ա. 782 թ. - 1968 թ.), Երևան, 1968): Նույն հեղինակը՝ պրոֆ. Թ. Հակոբյանը, փորձ է արել առավել ամբողջական ներկայացնելու մայրաքաղաք Երևանի պատմությունը:

Վաղուց հասունացել էր Երևանի պատմության ամբողջական նոր շարադրանքի անհրաժեշտությունը, որը զերծ կլիներ խորհրդային ժամանակներին բնորոշ գաղափարախոսական պարտադրանքից և կարտացոլեր վերջին հիսնամյակում գիտության նոր ձեռքբե-

---

[1] Տե՛ս Գրիգոր Խլաթեցի, Յիշատակարան աղետից, Վաղարշապատ, 1897: Ղ. Ալիշան, Այրարատ, Վնտ., 1890: Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800), Երևան, 1958: Ա. Լ. Հարությունյան, Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1958: Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (հ. 1-4), Երևան, 1959-1971: Ա. Պ. Սիմոնյան, Երևան, 1920-1967, Երևան, 1968: Մ. Ա. Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971: Կ. Գ. Ղաֆադարյան, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975: Ա. Պ.Սիմոնյան, Քաղաքամայր Երևանը, Երևան, 1983: Ս. Ս. Նազարյան, Երևանի պարբերական մամուլ (1880-1917), Երևան, 1986: Ю. С. Яралов, Ереван, М., 1948: В. Потто, Покорение Эривани, СПб, [ա. թ.]. В. М. Арутюнян, М. М. Асратян, А. А. Меликян, Ереван, М., 1968, Т. Х. Акопян, Очерк истории Еревана с древнейших времен до наших дней, Е., 1977, К. Оганесян, Крепость Эребуни, Е., 1980. А. Г. Григорян, М. Л. Товмасян, Архитектура Советской Армении, Е., 1986.

րումները այս ասպարեզում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ հայրենի գիտնականների մի խումբ հանձն առավ լրացնելու հայոց պատմագրության մեջ եղած կարևոր այդ բացը[2]: Այդ աշխատությունը հարազատ քաղաքի պատմությունը սկզբից մինչև մեր օրերն առավել համակարգված, ամբողջական, հիմնավոր ու հանրամատչելի ներկայացնելու առաջին փորձն է, որը նվիրված է մայրաքաղաքի 2800-ամյակին: Նշված կոթողային հրատարակությունը, որի նախագծի հեղիակն ու հեղինակային խմբի համակարգողը պատմաբան Գագիկ Բաղդասարյանն է, իսկ գլխավոր խմբագիրները՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն ու պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, իր հեղինակային կազմում ընդգրկելով հարապետության համապատասխան ոլորտի առաջատար մասնագետներին (Արտակ Մովսիսյան, Հակոբ Սիմոնյան, Աշոտ Փիլիպոսյան, Արման Եղիազարյան, Լուսինե Ամիրջանյան, Էդգար Հովհաննիսյան, Մեր Մելիք-Բախշյան, Գեղամ Բաղալյան, Աշոտ Մելքոնյան, Էդիկ Մինասյան, խմբագիր՝ Մերի Հովհաննիսյան), արխիվային փաստաթղթերի ու նյութերի, ինչպես նաև հրապարակի վրա եղած գրականության օգտագործմամբ ընթերցողին նորովի ներկայացնում է Երևանի ամբողջական պատմությունը, որը գալիս է լրացնելու Երևանի մասին նախորդ տարիներին հրատարակված աշխատությունների ցանկը: Մեր կարծիքով նշված աշխատությունը, լինելով բազմամյա տարիների ընթացքում ձեռք բերած գիտական մտքի ընդհանրացված արտացոլանքը, տեղեկատվության և պատմության անփոխարինելի սկզբնաղբյուր կլինի: Հրատարակությունը ներկայացնում է հեղինակային խմբի կատարած աշխատանքի հանրամատչելի տարբերակը, իսկ գիտական և առավել ամբողջական տարբերակը նախատեսվում է հրատարակել մոտ ապագայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն աշխատության վերջին բաժնի՝ ՀՀ երրորդ հանրապետության շրջանի Երևանի պատմության հանրամատչելի տարբերակի շարադրման ժամանակ հայտնաբերված բազմաթիվ նորահայտ արխիվային փաստաթղթեր ու նյութեր տեղ չգտան աշխատությունում, որոշեցինք ավելի ծավալուն հրատարակել ՀՀ անկախության

[2] Տե՛ս Երևանի պատմություն (հեղ. խումբ), Երևան, «Երևան բուք» ՍՊԸ, 2018, 342 էջ:

շրջանի (1991-2018 թթ.) գիտական տարբերակով Երևանի ամբողջական պատմությունը:

ՀՀ անկախության շրջանի Երևանի պատմության ուսումնասիրության համար չափազանց կարևոր սկզբնաղբյուր են ՀՀ ազգային արխիվի փաստաթղթերն ու նյութերը[3]: 113-րդ ֆոնդի արխիվային նյութերը վերաբերում են ոչ միայն 1991-1995 թթ. ՀՀ կառավարության որոշումներին, կարգադրություններին, Երքաղգործկոմի, շրջգործկոմների հետ ունեցած կապերին ու փոխհարաբերություններին, այլև Երևանի քաղաքապետարանի 1996-2009 թթ. գործունեությանը, նրանց հետ ունեցած գրագրություններին, Երևանի քաղաքային խորհրդի, թաղապետարանների հետ ունեցած կապերին, խորհրդակցությունների Երքաղխորհրդի նիստերի արձանագրություններին և այլն: Երևանի քաղաքապետարանի գործունեության մանրամասներ է պարունակում մայրաքաղաքի քաղաքային արխիվը, որը ՀՀ ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղն էր մինչև 2013 թվականը, երբ այն լուծարվեց: Մասնաճյուղի արխիվային շատ փաստաթղթեր գտնվում են ՀԱԱ հասարակական-քաղաքական փաստաթղթերի բաժնում (ՀՔՓԲ): Երևանի արխիվային հիմնական ֆոնդերը Ե. 1-ը և Ե. 257-ն են: Ե. 1 ց. 15-ի գործերը տեղեկանքներ են, տեղեկատվություն են (1987-1996 թթ.)՝ ներկայացված ՀՀԿ կենտկոմ, ՀԽՍՀ նախարարների խորհուրդ, ՀԽՍՀ պետպլան և այլ վերադաս մարմիններ Երքաղխորհրդի գործկոմի հիմնական գործունեության վերաբերյալ: Երքաղգործկոմի գրագրություններն են ուղղված վերադաս մարմիններին և պատասխան գրությունները[4]:

Երևանի քաղաքապետարանի՝ Ե-257 ֆոնդն իր 9-ը ցուցակներով ընդգրկում է 1996-2009 թթ. արխիվային գործերը, որոնք վերա-

---

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, 371, 372, 373, 374, 563, 564, 713, 714, 715, 874, 875, 876, 1049, 1050, 1243, 1244, 1245, 1246, 1262, 1789, 1490, 1491, 1524, 1808, 1809, 1810, 1811, 1812, 1847, 2093, 2094, 2095, 2096, 2097, 2127, 2128, ց. 163, գ. 398, 408, 473, 489, 619, ց. 165, գ. 41, 42, 57, 59, 85, 95, 153, 176, ց. 166, գ. 219, 457, 462, 586, 617, ց. 167, գ. 91, 119, 253, 380, ց. 169, գ. 77, 120, 218, 526, 571, 602, 629, ց. 171, գ. 187, 188, 582, ց. 174, գ. 40, 41, 44, 45, 85, 86, 87, 91, 93, 129, 134, 242, ց. 175, գ. 178, 301, 320, 324, 412, 528, ց. 177, գ. 74, 101, 140, 345, 463, 579, 580, 589, ց. 182, գ. 254, 255, 256, 257, 287, 508, 509, 510, 511, 543, ց. 191, գ. 224, 225, 226, 227, ց. 197, գ. 264, 265, 266, 267, 325, ց. 209, գ. 267, 268, 269, 270, 272, 726, 727, 728, 729, 730, 1156, 1157, 1158, 1159, 1160, 1161, 1162, 1163, 1164, 1165, 1166, 1167, 1168, 1169, 1170, ց. 215, գ. 1171, 1190:

[4] Տե՛ս Ե. 1, ց. 15, գ. 562, 563, 564, 565, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579:

բերում են Երևանի քաղաքապետարանի և նրա վարչությունների (ֆինանսատնտեսագիտական, առողջապահության, կրթության, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի, առևտրի, բնապահպանության և գյուղատնտեսության, արտաքին կապերի և տրանսպորտի) գործունեության մանրամասներին, քաղաքապետի և քաղաքային խորհրդի որոշումներին ու կարգադրություններին, ՀՀ նախագահի, վարչապետի քաղաքապետարանում անցկացրած խորհրդակցություններին, Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին, քաղաքապետարանի տարեկան հաշվետվություններին և այլն[5]:

Երևանի նորագույն շրջանի պատմության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն Երևան քաղաքի պատմության թանգարանի կողմից հրատարակած «Երևանի տարեգրությունը» (Եր., 2009 թ.): Այն ընդգրկում է Երևանի տարեգրությունը հնագույն ժամանակներից մինչև 2009 թ. վերջը: Նույն թանգարանի կողմից 2009 թ. հրատարակվեց «Երևան քաղաքի պատմության թանգարան» գրքույկը, որը ներկայացնում է 8700 մշակութային արժեք ունեցող թանգարանի 80-ամյա հարուստ պատմությունը:

Երևանի ժամանակակից պատմության շարադրման համար կարևորագույն սկզբնաղբյուր են նաև քաղաքապետարանի ամենամյա հաշվետվությունները և Երևանի ավագանու ընտրություններում քաղաքապետերի նախընտրական ծրագրերը, որտեղ վերլուծվում են նաև նախորդ տարիներին իրականացրած ծրագրերը, նշվում թերություններն ու բացթողումները: Երևանի 1991-2013 թթ. սոցիալ-տնտե-

---

[5] Տե՛ս ֆ. 257, ց. 1, գ. 6, 7, 33, 34, 41, 42, 81, 82, 129, 130, 175, 176, 181, 182, 254, 255, 259, 260, 332, 333, 337, 338, 339, 340, 346, 351, 357, 367, 379, 391, 398, 402, 406, 415, 428, 432, 439, 445, 455, 469, 477, 478, 498, 500, 502, 506, 507, 508, ց. 2, գ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 111, 112, 168, 172, 189, 194, 202, 226, 244, 265, 294, 301, 309, 372, 376, 396, 404, 409, 427, 432, 444, 445, 446, 447, 463, 464, 469, 473, 474, 477, 481, 482, ց. 4, գ. 1, 2, 3, 98, 99, 117, 206, 208, 209, 213, 225, 230, 231, 232, 233, 240, 241, ց. 5, գ. 1, 2, 3, 67, 78, 99, 106, 109, 122, 164, 165, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 238, ց. 6, գ. 1, 3, 8, 11, 14, 18, 23, 28, 36, 38, 42, 47, 49, 51, 54, 56, 57, 61, 64, 67, 72, ց. 7, գ. 1, 2, 3, 4, 9, 10, 68, 91, 117, 172, 191, 208, 301, 345, 367, 406, 412, 425, 437, 476, 483, 491, 495, 497, 503, 506, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 639, 640, 647, 648, 654, 664, 670, ց. 9, գ. 1, 2, 3, 16, 19, 28, 74, 106, 109, 183, 184, 206, 209, 264, 291, 318, 394, 402, 405, 443, 486, 497, 509, 522, 534, 539, 542, 544, 546, 547, 548, 549, 550:

սական հիմնախնդիրների ուսումնասիրման համար կարևոր է Երևանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի ատենախոսությանն ու սեղմագիրը[6]: «Երևանի պատմաշխարհագրական ատլասը» («Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2009) քաղաքի պատմական և ժամանակակից վիճակն արտացոլող քարտեզների համակարգված ժողովածու է, որտեղ բազմաբնույթ ներկայացված են Երևանի պատմության, քաղաքաշինության, բնության, բնակչության, տնտեսության, մշակույթի քարտեզները: Դրանք ունեն տեղեկատվական կարևոր նշանակություն քաղաքի ժամանակակից պատմության ուսումնասիրության համար: Մայրաքաղաքի պատմության համակողմանի գիտական հետազոտության համար կարևոր նշանակություն ունեն Երևան քաղաքի պատմության թանգարանի կողմից հրատարակած ու մայրաքաղաքի պատմության հարցերին նվիրված գիտական նստաշրջանների արդյունքները ամփոփող «Երևան, գիտական հոդվածների ժողովածուները» 5 գրքերով[7]: «Հին ու նոր Երևան գիրք-ուղեցույցը» (Եր., 2009) գիտական հոդվածների ժողովածուում ընդգրկված հոդվածների մի մասը վերաբերում է մայրաքաղաքի ժամանակակից պատմության մի շարք հիմնախնդիրներին՝ սկսած քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնահարցերից մինչև XXI դարի Երևանի ժողովրդագրությունն ու մշակույթը:

Սկզբնաղբյուրի նշանակություն են ձեռք բերում նաև հետազոտվող խնդրի համար օգտագործվող մամուլը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների ժողովածուները (1990-1996 թթ.), ՀՀ պաշտոնական տեղեկագրերը՝ հրատարակված 1997 թվա-

---

[6] Տե՛ս Տ. Ա. Մարգարյան, Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, ատենախոսություն, ը.00.02. «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 2013, նույնի սեղմագիրը:

[7] Տե՛ս Երևան, հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության խնդիրներին, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2006, 263 էջ, Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 2, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2009, 168 էջ, Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 3, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2012, 176 էջ, Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 4, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2016, 200 էջ, Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 5, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2018, 382 էջ, նվիրվում է Երևանի 2800-ամյակին:

կանից, ՀՀ գործող օրենքների ժողովածուները՝ սկսած 1995 թվականից, ինչպես նաև ՀԽՍՀ և ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագրերը՝ 1990 թվականից սկսած[8]:

Հայաստանում և նրա մայրաքաղաք Երևանում անկախության հաստատման գործընթացի ուսումնասիրման ոլորտում մեծ կարևորություն և որոշ հարցերում սկզբնաղբյուրի նշանակություն են ձեռք բերում այդ ժամանակահատվածում հանրապետությունում բարձրագույն պետական պաշտոններ զբաղեցրած անձանց՝ Լ. Տեր-Պետրոսյանի, Ռ. Քոչարյանի, Վ. Մանուկյանի, Ս. Հարությունյանի, Ա. Կիրակոսյանի, Հ. Բագրատյանի, Վ. Մովսիսյանի, Ֆ. Սարգսյանի հուշերն ու հրատարակված աշխատությունները[9]: Դրանք արժեքավոր են նաև ՀՀ և մայրաքաղաքի ներքին ու արտաքին քաղաքականության ու կապերի հիմնահարցերն ուսումնասիրելիս:

Աշխատանքը գրելիս օգտագործել ենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված և հասարակական կյանքի տարբեր բնագավառներն ընդգրկող բազմաթիվ վիճակա-

---

[8] «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 1990 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1991 թ. հունվար 10-ից մինչև 2018 թ. դեկտեմբերի 30-ը, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 2007-2018 թթ., ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, N1, 1991 թվականից մինչև 1996 թ. դեկտեմբեր ներառյալ, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 1997 թ. հունիսի 1-ից սկսած, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Երևան, 1995, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Ա, Երևան, 1999, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Բ, Երևան, 1999, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Գ, Երևան, 2000, ՀՀ գործող օրենքների ժողովածու (2001 թ.), գիրք Դ, Երևան, 2001, ՀՀ գործող օրենքների ժողովածու (2002 թ.), գիրք Ե, Երևան, 2003, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր N15 (971), 23 օգոստոսի, 1990, ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր N2 (982), 31 հունվարի 1991:

[9] Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան 2006, Ռ. Քոչարյան, Կյանք և ազատություն, Երևան, 2019, Ս. Հարությունյան, Անցյալի և ներկայի մասին, Երևան, 2011, Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002, նույնի՝ Գնացքից թռչելու ժամանակն է, հոդվածների ժողովածու, Երևան, 2002, Հ. Բագրատյան, Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանց դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000, նույնի՝ Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999, Г. Багратян, Земельная реформа вопросы теории и крактики, Ереван, 2003, Վ. Մովսիսյան, Հողի ճակատագրով, Երևան, 2001, Ֆ. Սարգսյան, Կյանքի դասերը, Երևան, 2013, նույնի՝ Հոդվածներ, Երևան, 2013, Կիրակոսյան Ա., Մայրամուտի շեմին, Երևան, 2002:

գրական ժողովածուներ[10], 1991-2018 թթ. հանրապետության և մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական վիճակն արտացոլող տեղեկատվական-վերլուծական ամսական և տարեկան զեկույցներ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, հարավկոսվկասյան երկրների վիճակագրական տարեգրքեր և ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություններ:

Որպես պաշտոնական տվյալներ՝ օգտագործվել են Անկախ Պետությունների Համագործակցության վիճակագրական տնտեսական ժողովածուները և ՀՀ վիճակագրական ռեգիստրի ու վերլուծության նախարարության նյութերը, ինչպես նաև ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի պատրաստած ՀՀ սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածուն[11]:

---

[10] Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, Երևան, 2001, Պատմություններ աղքատության մասին, գիրք երկրորդ, Երևան, 2007: Արտագաղթը Հայաստանից, Երևան, 2003: Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություններ – 2000, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, Երևան, 2002: «Զեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների», ընտրանքային հետազոտություն, Երևան, 2002: «Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին», վերջնական զեկույց (ամփոփագիր), Տոկիո, 1999:

[11] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1991թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1992, 1992 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1993, 1993 թ. հունվար-դեկտեմբեր, Երևան, 1994, 1994թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1995, 1995 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1996, 1996 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1997, 1997թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1998, 1998թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1999, 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2000, 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2001, 2001 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2002, 2002 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2003, 2003 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2004, 2004 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2005, 2005 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2006, 2009 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2010, 2010 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2011, 2011 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012, 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2013: 2015 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2015, 2016 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2016, 2017 թ. հունվար-դեկտեմբերին, 2017: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թ., Երևան, 1991: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1991 թ., Երևան, 1994, Հայաստանը թվերով 1992 թ., Երևան, 1994, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994, Երևան, 1995, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Երևան, 1998, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Երևան, 2001, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005,

Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակն արտացոլող վիճակագրական ժողովածուները կարևոր տվյալներ են պարունակում կրթության, գիտության, առողջապահության, սոցիալական ապահովագրության, մանկատների, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման, գրադարանների, մշակույթի, սպորտի, արխիվային, արտոնագրային, նոտարական գործունեության և իրավական ոլորտի տարաբնույթ խնդիրների վերաբերյալ[12]:

Երևան, 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, Երևան, 2010, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Երևան, 2011, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Երևան, 2012, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, 2013: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, Երևան., 2015: Содружество независимых государств: Десять лет спустя. 1991-2001. (Исполнительный комитет СНГ), Минск, 2001, Содружество независимых государств в 2002 году, Статистический ежегодник /Межгосударственный статистический комитет СНГ, Москва 2003, Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001, Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը 1997-2001, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002, ՀՀ կենտրոնական բանկ Հայաստանի բանկային համակարգ: Հոդվածներ, խմբ.՝ Լ. Դավթյան, Բ. Ասատրյան, Երևան, 2002, Հայաստանը թվերով 2003, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003:

[12] «Զեկույց առողջապահական կազմակերպությունների և դեղատների ու տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի ընտրանքային հետազոտության», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2001 թ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2002 թ. վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2004, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2006 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2006, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013: «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004, Համաշխարհային բանկ, Երևան, 2006, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2008, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2009, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»,

Նրանցից յուրաքանչյուրում առանձին ժամանակահատվածներով ներկայացված են ոչ միայն հանրապետության, այլև մայրաքաղաքի բնակչության ժողովրդագրական ցուցանիշները, նրանց զբաղվածությունը, աշխատանքային պայմանները, կրթության, առողջապահության վիճակը, կացությունը ապրանքների և ծառայությունների սպառողական շուկայում, գների մակարդակն ու դինամիկան, հանրապետության ու Երևանի ներքին և արտաքին առևտուրը և այլն: Նրանցում ներկայացված են նաև հանրապետության և մայրաքաղաք Երևանի սոցիալ-տնտեսական կյանքում նկատվող դժվարությունները, բացասական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են աղքատությունն ու գործազրկությունը, պետական բյուջեի պակասուրդն ու արտաքին պարտքի աճման միտումները, ցույց են տրված դրանց առաջացման պատճառները և այլն: Հանրապետության բնակչության սոցիալական վիճակի, այդ ոլորտում իրականացրած բարեփոխումների արդյունքների, ժողովրդագրական քաղաքականության վերաբերյալ արժեքավոր սկզբնաղբյուրներ են ՀՀ մարդահամարի արդյունքներն ու աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ամփոփ հաշվետվությունները, ՀՀ ժողովրդագրական ժողովածուները[13]:

վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013: Առևտուր և մարդկային զարգացում, Միավորված ազգերի զարգացման ծրագիր, Երևան, 2011:

[13] Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2003-2006 թթ. ամփոփ հաշվետվություն, Երևան, 2007: Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, Երևան, 2011: Սոցիալական պետության հայեցակարգեր, հայկական իրողություններ և հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, փետրվար, 2006 թ., Երևան, 2007: Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, Երևան, 2006, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2004, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005 թ., Երևան, 2005, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2009թ., Երևան, 2009: ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արագածոտնի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արարատի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արմավիրի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Լոռու մարզի ցուցանիշ-

Հանրապետության և Երևանի արդյունաբերության ու գյուղատնտեսության վիճակի մասին լայն պատկերացումներ են տալիս դրանց վերաբերող հրատարակված վիճակագրական ժողովածուները, որոնցում վերլուծված է առկա վիճակը, ու ցույց են տրված նրանցում տեղ գտած թերությունները, հանրապետության ազգաբնակչության զբաղվածությունն այդ ոլորտներում: Հանրապետության և մայրաքաղաքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը արտացոլված է նաև Հ�հ մարզերին և Երևանի քաղաքի վերաբերող վիճակագրական ժողովածուներում, իսկ ներքին և արտաքին առևտրի ցուցանիշները ներկայացված են դրանց նվիրված վիճակագրական ժողովածուներում[14]:

ները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Վայոց ձորի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Կոտայքի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ք. Երևանի ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003:

[14] Արդյունաբերություն 1990-1997, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1999: Արդյունաբերություն 1998-2003, վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2004: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001: Սպառողական շուկան Հայաստանի Հանրապետությունում 1921-2000, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 1999, Վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999, Երևան, 2000: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1998-2001, Երևան, 2002, Հայաստան 2001, Վիճակագրական գրքույկ, Երևան, 2001, Հայաստան 2002, Երևան, 2002, Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, Աղքատության կրճատմանն ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն, Երևան, 2002: Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Երևան, 2002: Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, «Իրավիճակային վերլուծության զեկույց», Երևան, 2002, «Հայաստանի ազգային

Երևանի ժամանակակից պատմության առանձին հարցերի լուսաբանման գործում որոշակի ներդրում ունի Երևանի քաղաքապետարանի երկարամյա ու վաստակաշատ աշխատող, պատմաբան Գագիկ Բաղդասարյանը, որի հեղինակությամբ լույս են տեսել Երևանի պատմությանը նվիրված մի քանի ստվարածավալ աշխատություններ, այդ թվում՝ օտար լեզուներով[15]: Այս բոլոր աշխատություններն էլ նկարագրող են և ունեն տեղեկատվական բնույթ, պարունակում են պատմական ակնարկներ Երևանի հիշարժան վայրերի, քաղաքապետերի, գործող համայնքների, ուշագրավ փաստական նյութեր՝ ժամանակակից Երևանի պատմության որոշ հարցերի մասին: Աշխատությունները չնայած արժեքավոր գործեր են, բայց համակարգված և ամբողջական շարադրանք չեն պարունակում Երևանի ժամանակակից պատմության մասին: Ժամանակակից Երևանի պատմության ժողովրդագրական հարցերին է անդրադարձել պ.գ.թ., դոցենտ Մ. Մալխասյանը[16]: Վերջինիս «Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ» (ԵՊՀ, 2015, 248 էջ) աշխատությունը հարուստ և արժեքավոր տվյալներ է պարունակում Երևանի բնակչության՝ XX դարի փոփոխությունների և Երևանի՝ XXI դարասկզբի (2001-2011 թթ.) ժողովրդագրական գործընթացների մասին:

մրցունակության զեկույց 2010», բարձրագույն կրթության մարտահրավերները, Երևան, 2010, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1999-2003, վիճակագրական ժողովածու, Երևան, 2004: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2000-2004 թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2005, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2001-2005թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2006, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2003-2007թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2008, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2010: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012 թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2013, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011-2015 թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2016, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012-2016 թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2017:

[15] Տե՛ս Գ. Բաղդասարյան և ուրիշներ, Երևան, 2002, 240 էջ, Г. Багдасарян, Ереван, 2008, 340 стр., նույնի՝ Երևան, 2800, Երևան, 2018, 298 էջ, նույնի՝ Երվանդ Զաքարյան, Երևան, 2013, 170 էջ, G. Bagdasaryan, Yerevan, 2800, 298 pages:

[16] Տե՛ս Մ. Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացները Երևանում 21-րդ դարի սկզբին»//«Երևան-3» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 74-82:

Աշխատությունը գրելիս մշակույթի բաժնում օգտագործել ենք Երևանի պատմության թանգարանի տնօրեն պ.գ.թ. Արմինե Սարգսյանի «Երևանի թանգարանները» և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, ա.գ.դ., պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Երևանի ժամանակակից արվեստին նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները, որոնք զետեղված են «Երևանի պատմությունը» (Երևան, 2018) աշխատությունում:

Երևանի ժամանակակից պատմության հիմնահարցերին անդրադարձել է տողերին հեղինակն իր մի շարք աշխատություններում[17], այդ թվում՝ մայրաքաղաքի ժամանակակից պատմության հանրամատչելի տարբերակում, գիտական զեկուցումներում և տարբեր ամսագրերում տպագրված գիտական հոդվածներում:

Այսպիսով՝ նկատի ունենալով, որ դեռևս չկա Երևանի ժամանակակից պատմության գիտական ամբողջական հրատարակությունը, որոշեցինք ձեռնամուխ լինել այդ կարևոր գործին:

Որպես առաջին փորձ՝ բնական է, որ աշխատությունը զերծ չէ թերություններից: Մենք հոժարակամ և շնորհակալությամբ կընդունենք դրանց վերաբերյալ ընթերցողների դիտողություններն ու առաջարկները և անպայմանորեն հաշվի կառնենք մենագրության վերահրատարակման ժամանակ:

---

[17] Տե՛ս Է. Մինասյան, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013, նույնի՝ Հայոց պետականության քառորդ դարը, Երևան, 2018, Մայրաքաղաք Երևանը 1991-2018 թթ. // Երևանի պատմություն, Երևան, 2018, էջ 260-310, Է. Մինասյան, ՀՀ երրորդ հանրապետության տարիների Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման պատմությունից // Երևան գիտական հոդվածների ժողովածու, 2, Երևան, 2009, էջ 76-80, նույնի՝ ՀՀ անկախ պետականության կայացման գործընթացի սկիզբը մայրաքաղաք Երևանում// Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 5, 2018, էջ 316-329, նույնի՝ Մայրաքաղաք Երևանի արտաքին կապերը, համագործակցությունը միջազգային կառույցների և քույր քաղաքների հետ// Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Լիմուշ», 2018, էջ 196-215, նույնի՝ Մայրաքաղաք Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը անկախության տարիներին // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2019, N1, էջ 76-86, նույնի՝ Երևան Հայաստանի անկախ պետականության վարչաքաղաքական համակարգում// «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2018, Երևան, 2018, էջ 3-14:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ (1990-2018 ԹԹ.)

ա. ՀՀ անկախության հռչակումը և անկախ պետականության կայացման գործընթացի սկիզբը մայրաքաղաք Երևանում

1990 թ. մայիսի 20-ին և հուլիսի 3-ին, պայմանավորված Արցախյան շարժման ալիքով սկիզբ առած համազգային զարթոնքով, Խորհրդային Հայաստանում անցած 70 տարում առաջին անգամ անցկացվեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրություններ՝ մեծամասնական ընտրակարգով՝ երկու փուլով, արցախահայության մասնակցությամբ: Ընտրական պայքարը հիմնականում ընթացավ «Հայոց համազգային շարժման» (ՀՀՇ) և «Հայաստանի կոմունիստական կուսակցության» (ՀԿԿ) միջև:

Ընտրությունների արդյունքում ստեղծվեց հասարակության մեջ իշխող տրամադրություններն արտացոլող իր կազմով սկզբունքորեն նոր խորհրդարան, թեև շատ կողմերով դեռևս խորհրդային, քանի որ Հայաստանը շարունակում էր մնալ ԽՍՀՄ կազմում, որտեղ գործում էր խորհրդային օրենսդրությունը:

Նորընտիր խորհրդարանը, որը կազմված էր 260 պատգամավորներից, որոնց մի մասը ընտրված էր մայրաքաղաքի ընտրատարածքներից, սկսեց գործել հուլիսի 20-ից մայրաքաղաք Երևանում՝ Մելիք Ադամյան 1 հասցեում տեղակայված կառավարության շենքում: 1990 թ. օգոստոսի 4-ին նորընտիր խորհրդարանը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց «Հայոց համազգային շարժման» վարչության նախագահ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանին: Մայրաքաղաք Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցավ համաժողովրդական տոնախմբություն[18]:

Օգոստոսի 7-ին հրապարակվեց Լևոն Տեր-Պետրոսյանի դիմումը հայ ժողովրդին, իսկ օգոստոսի 8-ին՝ նրա՝ ԽՍՀՄ նախագահ

[18] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Հնագույն ժամանակներից մինչև 2009 թ. վերջը, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2009, էջ 195:

Մ. Գորբաչովին հասցեագրված նամակը, որում ՀԽՍՀ ԳԽ նորընտիր նախագահը կոչ էր անում սառնասրտորեն գնահատելու մեր հանրապետության ներկա ճգնաժամային իրավիճակը՝ դրանից դուրս գալու միակ գրավականը համարելով ժողովրդի համախմբումը պետականության գաղափարի և նրա մարմնավորումը հանդիսացող ազգային խորհրդարանի շուրջ: «Ես վստահ եմ, որ մենք ի վիճակի ենք կարճ ժամանակամիջոցում սեփական ուժերով լուծելու հանրապետության ներքին կյանքին վերաբերող բարդ խնդիրները և կարգավորելու ստեղծված պայթյունավտանգ իրավիճակն այն պայմանով, որ բացառված լինի արտաքին միջամտությունը: Հիմք ունեմ ակնկալելու նաև, որ միութենական իշանությունները ըմբռնումով կընկալեն մեր դիրքորոշումը» [19],– նշում էր Լևոն Տեր-Պետրոսյանը:

Օգոստոսի 13-ին ՀՀ նախարարների խորհրդի նախագահի (վարչապետ) պաշտոնը ստանձնեց ՀՀԾ վարչության և Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Վազգեն Մանուկյանը: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի մյուս անդամներն ու ՀՀԾ այլ ներկայացուցիչներ զբաղեցրին հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների կարևորագույն պաշտոնները: Դրանով, փաստորեն, Հայաստանում վերջ դրվեց «Կոմունիստական կուսակցության» ավելի քան 70-ամյա մենատիրությանը, և իշխանությունն անցավ «Հայոց համազգային շարժման» ձեռքը: Խորհրդարանը դարձավ մշտապես գործող և հնարավորություն ստացավ իրականացնելու սահմանադրությամբ ամրագրված պետական իշխանության բարձրագույն և միակ մարմնի գործառույթները: Խորհրդարանն առաջին իսկ օրերից ակտիվորեն և բարդ պայմաններում ձեռնամուխ եղավ նոր պետականության ստեղծմանը, կյանքի կոչեց ընդհանուր ժողովրդավարական վերափոխումները: Դրանք առաջին իսկ հերթին իրականացվեցին բուն խորհրդարանում քննարկված և ընդունված օրենքների հիման վրա: Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան ազգային անկախ պետության ստեղծմանը:

---

[19] Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2016, էջ 34-35:

Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը 1990 թ. օգոստոսի 23-ին՝ երկարատև ու հանգամանալից քննարկումից հետո, ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց անկախացման գործընթացի սկիզբը[20]:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշված էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետության (կրճատ՝ Հայաստան), այսինքն՝ այնպես, ինչպես հանրապետությունը կոչվել է 1918 թվականին: ՀԽՍՀ 12-րդ գումարման Գերագույն խորհրդի 1-ին նստաշրջանը վերածվեց ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Առաջին գումարման Գերագույն խորհրդի, որն էլ իր ընդունած օրենքներով դրեց անկախ Հայաստանի պետականության առաջին անկյունաքարը: ՀՀ Գերագույն խորհուրդը օգոստոսի 24-ին ընդունեց «ՀՀ պետական դրոշի մասին» օրենքը, որով ի լուր աշխարհի հայտարարվեց, որ այսուհետ «ՀՀ դրոշը եռագույնն է», որը Առաջին հանրապետության դրոշն էր՝ կարմիր, կապույտ և նարնջագույն՝ հորիզոնական հավասար շերտերով: Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, Հայաստանի անկախության և ազատության համար թափված արյունը: Կապույտը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը կապույտ, խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1:2-ի[21]: Նույն օրը հայտարարվեց նորանկախ Հայաստանի պետական զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ, որի կազմակերպումը հանձնարարվեց Նախարարների խորհրդին և խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովներին: Նշված կարևոր պատմական որոշումներով անկախացման գործընթացի սկիզբը դրվեց:

12 կետից բաղկացած հռչակագիրը նախանշում էր Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման ուղիները:

---

[20] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոսի, 1990:

[21] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 16 (972), 31 օգոստոսի, 1990, էջ 6:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի՝ իբրև պետական լեզվի կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին գործավարությունը պետք է կատարվեր հայերենով: Հռչակագիրը արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խոսքի, մամուլի, խղճի, ժողովների ազատություն, բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում: Հռչակագրում հատուկ հոդված մտցվեց 1915 թ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ: Հոդվածում արձանագրվում էր, որ ՀՀ-ն սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Փաստաթղթում ամրագրվում էր, որ Հայաստանն ինքնիշխան պետություն էր՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախության լիիրավությամբ: Նրա ամբողջ տարածքում գործելու էին միայն ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները: Այստեղ բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում էր ՀՀ քաղաքացիություն, որի իրավունքը պետք է ունենար նաև արտերկրի հայությունը: Պետությունն ապահովելու էր իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից[22]:

Մինչև նոր սահմանադրության ընդունումը հռչակագիրը ծառայում էր իբրև ծրագրային փաստաթուղթ: Այն միաժամանակ դարձավ ազգային օրենսդրության և նոր սահմանադրության ստեղծման հիմքը: Անկասկած, այդ փոփոխությունները խաթարում էին խորհրդային սահմանադրության ամբողջականությունն ու ներքին տրամաբանությունը[23]: Փաստորեն՝ հռչակագիրն անկախացման գործընթացի իրավաբանական հիմնավորումն ու ուղեցույցն էր հայ հասարակության համար անցման շրջանում:

---

[22] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 16 (972), 31 օգոստոսի, 1990, էջ 5:

[23] Տե՛ս Է. Մինասյան, Հայաստանի Անկախ հանրապետության քսանհինգամյա ուղին // Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2017, էջ 19:

Օգոստոսի 24-ին մայրաքաղաք Երևանում տեղի ունեցավ խորհրդանշական հայտնի իրադարձություն, երբ խորհրդարանում Հայաստանի անկախության մասին հռչակագրի վերջնական տեքստը մեծ հանդիսավորությամբ հրապարակեց Գերագույն խորհրդի պատգամավոր Արամ Մանուկյանը, որն անվանակիցն էր Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրի[24]:

1990 թ. օգոստոսի 25-ին՝ առավոտյան 10:10 րոպեին, մայրաքաղաք Երևանի Լենինի անվան հրապարակում (այժմ՝ Հանրապետության Հրապարակ) գտնվող ՀՀ Գերագույն խորհրդի շենքի (այժմ՝ ՀՀ կառավարության շենք) վրայից իջեցվեց Խորհրդային Հայաստանի պետական դրոշը, և 10:14 րոպեին բարձացվեց ՀՀ պետական դրոշը՝ եռագույնը[25]: Հայաստանի ազգային խորհրդանիշի փոփոխման արարողությանը ներկա էին հազարավոր մարդիկ, խորհրդարանի բազմաթիվ պատգամավորներ: ՀՀ ԳԽ նորընտիր նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթից հետո դրոշակաձողից իջեցվեց հայ ժողովրդի անցած ուղու մի էական ժամանակահատվածը խորհրդանշող Հայկական ԽՍՀ դրոշը, և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից կատարվող «Մեր հայրենիքի» հանդիսավոր հնչյունների ներքո բարձրացվեց Հայոց անկախ պետականության խորհրդանիշը՝ եռագույնը[26]: Այդպես սկսվեց հայոց եռագույնի հաղթարշավը մայրաքաղաք Երևանից նորանկախ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

ՀՀ կառավարության 1990 թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ հայտարարվեց ՀՀ զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ, որի համաձայն՝ ստեղծվեց բարձրաստիճան պաշտոնյաներից, գիտության, արվեստի, գրականության ոլորտների հեղինակավոր ներկայացուցիչներից կազմված, 15 հոգուց բաղկացած կազմկոմիտե՝ հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի գլխավորությամբ[27]: ՀՀ կառավարության 1990 թ. հոկտեմբերի 10-ի

---

[24] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26 օգոստոսի, 1990:
[25] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 196:
[26] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 31 օգոստոսի, 1990, էջ 7:
[27] Տե՛ս ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), ֆ.113, ց.163, գ.418, թ.1-3:

որոշմամբ էլ ստեղծվեցին Հայաստանի պետական զինանշանի (նախագահ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրաչիկ Սիմոնյան) և պետական օրհներգի (ղեկավար՝ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, երգահան Էդվարդ Միրզոյան) մրցութային հանձնաժողովները[28]:

Խորհրդարանի 1991 թ. հուլիսի 1-ի նիստում քննարկման դրվեցին օրհներգի երկու տարբերակներ՝ հանրահայտ «Մեր հայրենիքը» և երգահաններ Առնո Բաբաջանյանի ու Ալեքսանդր Հարությունյանի կողմից 1944 թ. գրված օրհներգը: Քվեարկությանը մասնակցած 158 պատգամավորներից 146-ը նախապատվությունը տվեց «Մեր հայրենիքին»[29]:

Որոշվեց ՀՀ օրհներգի համար հիմք ընդունել Մ. Նալբանդյանի «Մեր հայրենիք» ստեղծագործությունը երգի խոսքերը հետագայում հանձնաժողովում վերջնականապես խմբագրելուց հետո: ՀՀ ԳԽ 1992 թ. մարտի 25-ին կայացած նիստի որոշմամբ Հայաստանի պետական զինանշան ընդունվեց 1920 թ. հուլիսին հաստատված Հայաստանի առաջին հանրապետության հերալդիկան[30]:

Զինանշանի կենտրոնում վահանը պահող արծիվն ու առյուծն են, պատկերված է Արարատ լեռը՝ Նոյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները, սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն[31]:

Անկախ հանրապետության մայրաքաղաքի զինանշանը, դրոշն ու օրհներգը ընդունվեցին ավելի ուշ: 1994 թ. փետրվարին հայտարարվեց Երևանի զինանշանի ստեղծման մրցույթ[32]: 1995 թ. ապրիլի 26-ին Երևանի քաղաքային խորհուրդը որոշեց հաստատել Երևան քաղաքի զինանշանը, որի ուղղանկյուն վահանի վրա պատկերված է ոսկեգույն երեք երանգներով (ծիրանագույն, ոսկեգույն, արծաթա-

---

[28] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 417, թ.1-5:
[29] Տե՛ս Է. Սինասյան, ՀՀ անկախ պետականության կայացման գործընթացի սկիզբը մայրաքաղաք Երևանում // Երևան - 5 գիտական հոդվածների ժողովածու, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2018, էջ 321:
[30] Տե՛ս ՀՀ ԳԽ տեղեկագիր, 8 (1012), 30.04.1992, էջ 3:
[31] Տե՛ս նույն տեղում:
[32] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 203:

գույն) Էրեբունի թևավոր առյուծը, գլխին՝ թագի տեսքով կենաց ծառի պատկերը, ձեռքին՝ իշխանության գավազանը, կրծքին՝ կլոր վահանի մեջ հավերժության նշանի վրա Արարատ լեռան պատկերը, ներքևում՝ հայերեն մեծատառերով «Երևան» մակագրությունը (հեղինակ՝ Ալբերտ Սոխիկյան)[33]:

Երևանի խորհրդի 2004 թ. սեպտեմբերի 27-ի նիստում փոփոխություն կատարվեց Երևանի քաղաքային խորհրդի 1995 թ. ապրիլի 26-ի «Երևանի զինանշանի մասին» հ. 1/8-2 որոշման մեջ. փոփոխվեց Երևանի զինանշանի նկարագրական մասը: Ըստ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ Երևան քաղաքի ավագանու՝ 2010 թվականի ապրիլի 12-ի «Երևան քաղաքի խորհրդանշանների մասին» N 85 որոշման համաձայն՝ զինանշանն ունի հետևյալ նկարագիրը. կապույտ ֆոնին հայերեն բրոնզագույն մեծատառերով մակագրված «ԵՐԵՎԱՆ» պատվանդանին կանգնած, գլուխը ետ շրջած, իշխանության խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է՝ մեջտեղից բարձրացող Կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով: Առյուծի կրծքին՝ հավերժության նշանի վրա, Արարատ լեռան պատկերն է: Ողջ պատկերը երիզված է ուղղանկյունաձև վահանակով: Գործածված են բրոնզագույն և կապույտ գույները[34]:

2004 թ. օգոստոսի 18-ին հայտարարվեցին Երևան քաղաքի հիմնի և դրոշի ընտրության, «Երևանն իմ աչքերով» լուսանկարների, «Երևանը երգերի մեջ» մրցույթները՝ նվիրված Երևանի հիմնադրման 2786-ամյակին[35]:

Նույն թվականի սեպտեմբերի 18-ին ամփոփվեց Երևանի դրոշի մրցույթի արդյունքը: Առաջին տեղը տրվեց Կարապետ Աբրահամյանի և Կարապետ Փաշայանի աշխատանքին: Սեպտեմբերի 27-ին Երևանի խորհրդի նիստում N 12/1 որոշմամբ հաստատվեց Երևանի դրոշը՝ որպես ՀՀ մայրաքաղաքի խորհրդանիշ[36]:

---

[33] ՀԱԱ, Հասարակական-քաղաքական փաստաթղթերի բաժին (ՀՔՓԲ), ֆ.Ե 257, ց.2, գ. 4, թ. 44:
[34] Երևան քաղաքի ընթացիկ արխիվ, 12.04.2010:
[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Ե 257, ց. 2, գ. 4, թ. 40, Երևանի տարեգրությունը, էջ 218:
[36] ՀԱԱ, ֆ.Ե 257, ց. 2, գ. 4, թ. 40:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝ Երևան քաղաքի ավագանու 2010 թ. ապրիլի 12-ի «Երևան քաղաքի խորհրդանիշների մասին» N 85-Ն որոշման համաձայն՝ դրոշն ունի հետևյալ նկարագիրը. դրոշի ուղղանկյուն պատկերը ընտրված է սպիտակ՝ որպես մաքրության, պարզության, անաղարտության միացյալ խորհրդանիշ: Դրոշի կենտրոնում Երևանի զինանշանն է՝ շրջապատված 12 կարմիր եռանկյունիներով, որոնք խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները: Զինանշանը ծիրանագույն և բրոնզագույն է՝ կապույտով երիզված: Ազգային դրոշի գույները համահեղինակներն օգտագործել են՝ ընդգծելու դրոշի մայրաքաղաքային նշանակությունը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1:2-ի: Լայնության և երկարության չափերի հարաբերության պահպանմամբ կարող է օգտագործվել փոքր կամ մեծ չափի դրոշ[37]:

2004 թ. սեպտեմբերի 23-ին ամփոփվեցին Երևանի օրհներգի մրցույթի արդյունքները, և որոշվեցին 3 հաղթողները: Առաջին տեղը գրավեց Էդգար Հովհաննիսյանի երաժշտությամբ և Պարույր Սևակի խոսքերով «Էրեբունի Երևանը», երկրորդ և երրորդ տեղերում հայտնվեցին Արամայիս Սահակյանի խոսքերով, Արա Գևորգյանի երաժշտությամբ և Գեղունի Չթչյանի երաժշտությամբ ու Սուրեն Մուրադյանի բանաստեղծության հիման վրա գրված երգերը[38]:

2004 թ. Երևանի խորհրդի N 12/2 որոշման հիման վրա հաստատվեց Երևանի հիմնը՝ որպես Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի խորհրդանիշ[39]:

Ըստ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ Երևան քաղաքի ավագանու 12.04.2010 թ. «Երևան քաղաքի խորհրդանիշների մասին» N 85 որոշմամբ սահմանվեց Երևանի օրհներգը[40]:

---

[37] ՀԱԱ, ֆ.Ե 257, ց.2, գ. 4, թ.41, Երևանի ընթացիկ արխիվ, 12.04.2010:
[38] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 218:
[39] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Ե 257, ց. 2, գ. 4, թ. 42-43:
[40] Տե՛ս նույն տեղում, թ. 44, Երևանի ընթացիկ արխիվ, 12.04.2010:

«Էրեբունի-Երևան»
Խոսքը՝ Պարույր Սևակի
Երաժշտությունը՝ Էդգար Հովհաննիսյանի

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

Կրկներգ: Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևան:
Մենք արյան կանչ ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ,
Մեր կանչն առանց քեզ իզուր կկորչի,
Առանց քեզ մեր տաք տենչն էլ կսառչի:

Կյանքում ամեն սեր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզնով հարբել,
Տաք է սերը մեր՝ շեկ քարերիդ պես,
Հին է սերը մեր՝ ձիգ դարերիդ պես:

2004 թ. հոկտեմբերի 13-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ «Երևանի օր» տոնակատարության հանդիսավոր նիստը՝ նվիրված մայրաքաղաքի հիմնադրման 2786-ամյակին: Նիստում պաշտոնապես ընդունվեցին Երևանի խորհրդանիշները՝ դրոշը և օրհներգը: Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թ. ապրիլի 12-ի «Երևան քաղաքի խորհրդանիշների մասին» Ն 85 որոշումը և ղեկավարելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Երևան քաղաքի ավագանու 18.06.2010 թ. N 118-Ն որոշմամբ սահմանվել են Երևան քա-

ղաքի խորհրդանիշների պարտադիր օգտագործման այլ դեպքերը և կարգը: Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը դրանք մշտապես պահպանության հանձնեց Երևան քաղաքի պատմության թանգարանին, որն իր նոր և հարմարավետ տեղը գտավ մեկ ամիս անց՝ 2004 թ. նոյեմբերի 26-ին, շահագործման հանձնված Երևանի քաղաքապետարանի նորակառույց շենքում[41]: Շենքի բացմանը ներկա էին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանը, նախարարներ, ԱԺ պատգամավորներ:

Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը, որի կենտրոնը մայրաքաղաք Երևանն էր, որտեղ էլ կայացվում էին պետական անկախության գործընթացի բոլոր որոշումները: «Անկախ պետության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական նոր օրենքով սահմանվում էր իշխանության պետական կարգը, ապահովում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը:

1990 թ. հոկտեմբերի 9-ին մայրաղաքաղաք Երևանում լույս տեսավ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը՝ անկախ պետականության առաջին տպագիր պարբերականի առաջին համարը[42]:

Ըստ քաղաքային խորհրդի ընդունած նոր կարգի՝ մայրաքաղաքի ղեկավարը ոչ թե նշանակվում էր, այլ ընտրվում Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, ապա՝ քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ: Նման ընթացակարգով Հայաստանի երրորդ հանրապետության մայրաքաղաքի քաղխորհրդի գործադիր կոմիտեի առաջին նախագահը կամ առաջին քաղաքապետը դարձավ պատմաբան Համբարձում Գալստյանը: Մինչ նրա պաշտոնավարումը՝ 1989 թ. նոյեմբերի 11-ից մինչև 1990 թ. հոկտեմբերի 2-ը, Երևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահն էր Արտաշես Գեղամյանը, որը 1999 թվականից եղել է ԱԺ պատգամավոր, իսկ 2001 թվականից՝ «Ազգային միաբանություն» կուսակցության հիմնադիր նախագահը: Նա որոշակի դերակատարում ունեցավ 1990 թ.

---

[41] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 218:
[42] Տե՛ս նույն տեղում, էջ 196:

մայիսի 27-ին Երևանի երկաթուղային կայարանում ռուս զինվորականների կողմից հրահրած արյունալի ընդհարումների կանխման գործում, որի հետևանքով զոհվեցին և վիրավորվեցին բազմաթիվ մարդիկ[43]: Բարեբախտաբար, այդ ընդհարումները լայն ծավալ չստացան: 1990 թ. նոյեմբերի 1-ին Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն որոշեց մայրաքաղաքի Վ. Ի. Լենինի հրապարակը վերանվանել Հանրապետության հրապարակ, իսկ Լենինի պոդոտան՝ Մաշտոցի պողոտա, կարմիր բանակի փողոցը՝ Գրիգոր Լուսավորիչ, Մաշտոցի շրջանի Մեսրոպ Մաշտոցի փողոցը՝ Շինարարների փողոց[44]:

1990 թ. հունիսի 27-ին ընդունվեց ՀՀ նախարարների խորհրդի որոշումը՝ հայոց ազգային հերոս զորավար Անդրանիկ Օզանյանի աճյունը վերաթաղման մասին: Հանձնարարվեց Ժողովրդական դեպուտատների Երևանի քաղխորհրդի գործկոմին (Ա. Գեղամյան) և «Զորավար Անդրանիկ» համազգային միությանը (Ն. Մուշեղյան) կազմակերպել և 1990 թ. օգոստոսի 26-ին Երևան քաղաքի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում վերաթաղել Անդրանիկ Օզանյանի աճյունը՝ նախօրոք ձևավորելով և բարեկարգելով շրջակայքը[45]: Սակայն հանգամանքների բերումով աճյունի տեղափոխումը ձգձգվեց 10 տարի, և այն իրականացվեց միայն 2000 թ. փետրվարի 20-ին[46]: Վերահուղարկավորումը տեղի ունեցավ 1990 թ. Եռաբլուրում հիմնադրված «Փառքի պանթեոնում»: Մինչ այդ՝ 1999 թ. փետրվարի 25-ին, Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքում տեղի ունեցավ զորավար Անդրանիկ Օզանյանի արձանի բացումը:

1990 թ. դեկտեմբերի 4-ին Ա. Գեղամյանին փոխարինեց Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից, «Ղարաբաղ կոմիտեի» անդամ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմաբան Համբարձում Գալստյանը, որը 1990 թ. ընտրվել էր Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, իսկ 1991

---

[43] Երևանի տարեգրությունը, էջ 195:
[44] Նույն տեղում, էջ 196:
[45] ՀԱԱ, ֆ.1, ց. 15, գ. 572, թ. 28-30:
[46] Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակը. ժամանակագրություն 1990-2016 թթ., Երևան, 2016, էջ 74:

թ. հունվարի 10-ին քաղաքային խորհրդի առաջին գումարման առաջին նստաշրջանում ընտրվեց քաղխորհրդի գործկոմի գործադիր կոմիտեի նախագահ: 1991 թ. հունիսի 21-ին միաձայն Երևանի քաղաքային խորհրդի քարտուղար ընտրվեց պատմաբան Գագիկ Բաղդասարյանը, որը Երևանի քաղխորհրդի պատգամավոր էր: Համբարձում Գալստայանը այդ պաշտոնում աշխատել է մինչև 1992 թ. դեկտեմբերը, իսկ հրաժարական տալուց հետո զբաղվել է գործարարությամբ: Նա եղել է Հայաստանի երրորդ հանրապետության առաջին քաղաքապետը: Չարագործի գնդակից սպանվել է 1994 թ.: Նրան հաջորդել է տնտեսագետ Վահագն Խաչատրյանը, որը Երևանի քաղաքային խորհրդի և գործադիր կոմիտեի նախագահ է եղել 1992 թ. դեկտեմբերի 22-ից մինչև 1996 թ. փետրվարի 22-ը: 1996-1998 թթ. ՀՀ նախագահի խորհրդականն էր:

Հայտնի է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունումից հետո Երևանը ստացավ մարզի կարգավիճակ, որի ղեկավարները կոչվեցին քաղաքապետեր: Դրանից հետո մայրաքաղաքը ղեկավարել են 9 քաղաքապետեր[47]: Երրորդ հանրապետության բոլոր քաղաքապետերն էլ իրենց որոշակի ներդրումն են ունեցել մայրաքաղաքի զարգացման գործում:

ՀՀ երրորդ հանրապետության մայրաքաղաքի երրորդ քաղաքապետը շինարար Աշոտ Միրզոյանն էր (23.02.1996-07.11.1996) չորրորդը՝ գրող, Ղարաբաղ կոմիտեի անդամ, ՀՀ ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյանը (14.11.1996-02.02.1998), հինգերորդը՝ կիբեռնետիկ, ինժեներ, գեներալ-մայոր Սուրեն Աբրահամյանը (06.05.1998-15.06.1999), վեցերորդը՝ սպորտային մարզիչ, գիտաշխատող, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ալբերտ Բազեյանը (09.08.1999-10.01.2001), յոթերորդը՝ ինժեներ-շինարար, ՀՀ տրանսպորտի և կապի նախկին նախարար Ռոբերտ Նազարյանը (11.01.2001-08.11.2003), ութերորդը՝ ինժեներ-շինարար Երվանդ Զախարյանը (15.11.2003-04.03.2009), իններորդը՝ տնտեսագետ, սոցիոլոգ Գագիկ Բեգլարյանը (04.03.2009, 31.05.2010), տասներորդը՝ կի-

[47] Տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակը. ժամանակագրություն 1990-2016 թթ., էջ 151, 153, 155, 157, 159:

բեռնետիկ, տնտեսագետ, հետագայում՝ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը (17.12.2010-28.10.2011), տասնմեկերորդը՝ տնտեսագետ Տարոն Մարգարյանը (15.11.2011-09.07.2018), իսկ տասներկուերորդը՝ դերասան Հայկ Մարությանը (30.09.2018):

1989-1991 թթ. Խորհրդային Միության ծայրամասերում առաջացան ճգնաժամի, ազգամիջյան հակասությունների, լարվածության մի շարք օջախներ, որոնք գնալով վերածվեցին անկախության համար պայքարի կենտրոնների: Դրանցից առաջիններից մեկը Հայաստանի և Ադրբեջանի միջև առաջացած հակասություններն էին՝ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Մյուսները Մերձբալթյան հանրապետություններն էին՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան, ինչպես նաև Հարավկովկասյան տարածաշրջանը, գլխավորապես Վրաստանի, Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի միջև եղած հակասությունները: Այս ամենի և մի շարք այլ պատճառներով 1991 թ. գարնանը ԽՍՀՄ-ը գտնվում էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը ջանքեր էր գործադրում՝ Խորհրդային Միությունը փրկելու համար: Կանխազգալով ԽՍՀՄ փլուզման վտանգը՝ Խորհրդային Միության առաջին նախագահ Մ. Գորբաչովը դեռևս 1990 թ. ապրիլի 3-ին ստորագրեց «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը[48], որը միութենական հանրապետությունների հնարավոր անկախացումը կանխելու փորձ էր, քանի որ ԽՍՀՄ սահմանադրության 72-րդ հոդվածով, թեկուզ անորոշ, բայց տեսականորեն ընդունելով միութենական հանրապետությունների անջատման իրավունքը[49], չսահմանելով դրա գործնականում կիրառման մեխանիզմներ՝ ավելի մեծ հնարավորություններ էր ընձեռում անկախանալու ձգտող հանրապետություններին, քան գորբաչովյան օրենքը: Դրա գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ ժամանակային առումով հնարավորինս ձգձգվում էր անկախացման գործընթացը: Նախատեսվում էր անկախացման հարցով հանրաքվեի մասին որոշումն ընդունելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո իրականացնել հանրաքվեն, որի

[48] Տե՛ս “Известия”советов Народных депутатов СССР”, 7. 04.1990:
[49] Տե՛ս Конституция (Основной закон) Союза Советских Социалистических Республик, Ташкент, 1978, с. 63:

ընթացքը գտնվելու էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի վերահսկողության տակ: Ըստ օրենքի 9-րդ հոդվածի՝ ԽՍՀՄ-ից անջատվող հանրապետությունը կարող էր անկախանալու թույլտվությունն ակնկալել միայն հանրաքվեից 5 տարի անց: Այդ հնգամյա անցման շրջանում պետք է լուծվեին ԽՍՀՄ-ից անկախանալու հանդգնություն ունեցող հանրապետության՝ միությունից դուրս գալուն առնչվող հարցերը[50]:

Հայաստանն առաջիններից մեկն էր, որ պատրաստակամություն հայտնեց անկախացման գործընթացում ղեկավարվելու բացառապես վերոնշյալ օրենքով: Հանրապետությունների անկախացումը թույլ չտալու, ԽՍՀՄ փլուզումը կանխելու նպատակով Մ. Գորբաչովի ղեկավարությամբ մշակվեցին և կիրառության մեջ մտան մի շարք, այսպես կոչված, «հակաանկախացման» օրենքներ՝ «Հասարակական կարգը պահպանելիս ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի պարտականությունների և իրավունքների մասին»[51], «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին»[52] և այլն:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի Գերագույն խորհուրդը կայացրեց բացառապես Հայաստանի շահերից բխող ինքնիշխան վճիռ, որով կասեցվում էր ԽՍՀՄ նախագահի հրամանագրի կիրարկումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում[53]: Այդ կապակցությամբ ընդունվեց Հայաստանի իշխանությունների ինքնուրույն գործելաոճն արտահայտող «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի հայտարարության մասին» որոշումը[54]:

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը 1991 թ. հունվարի 31-ի որոշմամբ ուղղակիորեն կասեցրեց ՀՀ տարածքում ԽՍՀՄ պաշտպանության և ներքին գործերի նախարարների 1990 թ. դեկտեմբերի 29-ի «Ներքին գործերի մարմինների աշխատակիցների, խորհրդային բանակի ու ռազմածովային նավատորմի զինծառայողների համատեղ պարեկություն կազմակերպելու մասին» հրամանի գործունեությունը՝ այն որակելով որպես հակասահմանադրական և

---

[50] Տե՛ս Է. Պողոսյան, Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013, էջ 48-49:
[51] Տե՛ս “Известия”советов Народных депутатов СССР”, 31.03.1990:
[52] Տե՛ս նույն տեղում, 10.04.1990:
[53] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 2 օգոստոսի, 1990:
[54] Տե՛ս ՀԽՍՀ ԳԽ տեղեկագիր, N 15(971), 23 օգոստոսի, 1990, էջ 13:

ստեղծված իրավիճակում սադրիչ փաստաթուղթ[55]: Հունվարի 31-ին Հայաստանում, փաստորեն, բարձրագույն իշխանական կարգավիճակ ունեցող ՀՀ Գերագույն խորհուրդն իր ընդունած մեկ այլ որոշմամբ կասեցրեց Հայաստանի տարածքում ԽՍՀՄ նախագահի՝ 1991 թ. հունվարի 26-ի մի այլ՝ «Տնտեսական սաբոտաժի և տնտեսական հանցագործություններին» վերաբերող հրամանագրերի գործողությունը:

ԽՍՀՄ կործանման և խորհրդային հանրապետությունների անկախացման օրավուր ահագնացող գործընթացները կանգնեցնելուն էր միտված նաև ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ին անցկացվելիք հանրաքվեն, որի մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումն ընդունվել էր 1991 թ. հունվարի 16-ին[56]: Խորհրդային Հայաստանը անկախացման ուղին ընտրած միութենական վեց հանրապետությունների թվում էր, որոնցից էին Մերձբալթյան երեք հանրապետությունները, Վրաստանը, Մոլդովան և Հայաստանը, որոնց տարածքում նշված հանրաքվեն չանցկացվեց[57]: Կենտրոնի այդ նախաձեռնության դեմ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. մարտի 1-ին ընդունեց հանրաքվեն Հայաստանի տարածքում արգելելու մասին որոշում՝ պատճառաբանելով, որ այն հակասում է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին[58]:

ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. մարտի 1-ին ընդունեց մի այլ որոշում՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին»: Հայաստանի ինքնիշխանության ճանապարհին կարևոր քայլ էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991 թ. ապրիլի 2-ին «Հանրաքվեի մասին» օրենքի ընդունումը, որում արձանագրված էր, որ համաժողովրդական հանրաքվեով պետք է լուծվեին նաև ՀՀ կարգավիճակի փոփոխման վերաբերյալ հարցերը[59]:

1991 թ. ապրիլի 12-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության և նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշմամբ հավա-

---

[55] Տե՛ս ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 2 (982), 31 հունվարի, Երևան, 1991, էջ 72-73:
[56] Տե՛ս Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, 2018, էջ 65-66:
[57] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 65-66:
[58] Տե՛ս նույն տեղում:
[59] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 120:

նություն տրվեց ՀՀ Գերագույն խորհրդի անկախ պետականության հաստատման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովների կողմից հանրաքվեի հանձնաժողովի կազմի վերաբերյալ ներկայացված առաջարկությանը: 1991 թ. մայիսի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով կազմելու մասին որոշում, որով հաստատվեց հանձնաժողովի կազմը: ՀՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ դարձավ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանը[60]:

1991 թ. գարնանից կենտրոնական իշխանությունների գործունեությունն ուղղված էր Նովո-Օգարյովոյում միութենական նոր պայմանագրի վերջնական մշակման խնդրի կենսագործմանը, որի համար Մերձմոսկովյան այդ բնակավայր պետք է ժամանեին արագորեն փլուզվող ԽՍՀՄ հանրապետությունների ներկայացուցիչները: ՀՀ իշխանությունները հնարավորինս խուսափում էին նոր պայմանագրի նախապատրաստական կոմիտեի աշխատանքներին մասնակցելուց և այդպես էլ չներկայացան ապրիլ ու մայիս ամիսներին Նովո-Օգարյովոյում կայացած երկու հանդիպումներին:

1991 թ. հուլիսի 23-ին նախատեսված էր դաշնային նոր պայմանագրի վերջնական մշակման նպատակով նախապատրաստական կոմիտեի հերթական նիստը, որին մասնակցելու համար հրավիրված էր ՀՀ Գերագույն խորհրդի նախագահը[61]: Ելնելով ստեղծված կացությունից՝ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հուլիսի 23-ին մասնակցեց նովոօգարյովյան նիստին: Սակայն դա ավելի շուտ դիվանագիտական բարեկրթության այց էր և ոչ թե նոր միության «կերտման» մտահոգությամբ իրականացված գործնական ուղևորություն[62]:

Փաստորեն՝ Հայաստանը մինչև սեպտեմբերի 21-ը չմասնակցեց նաև կենտրոնի և հանրաքվեին մասնակցած ինը հանրապետություն-

---

[60] Տե՛ս ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 10(990), 31 մայիսի, Երևան, 1991, էջ 12-13:
[61] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 հուլիսի, 1991:
[62] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 օգոստոսի, 1991, ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 14 (994), 31 հուլիսի, 1991, էջ 13:

ների (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ադրբեջան) (9+1) կողմից մշակվող միութենական նոր պայմանագրի նախապատրաստման աշխատանքներին, որի ստորագրմամբ Կրեմլը հույս ուներ անկախացող հանրապետությունները պահպանել միության կազմում: Հայաստանի անկախացման և ընդհանրապես ԽՍՀՄ վերջնական փլուզման գործում վճռորոշ դերակատարություն ունեցավ 1991 թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ-ում հետադիմական ուժերի նախաձեռնած հեղաշրջման անհաջող փորձը[63]:

Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից, ինչպես նաև բացահայտ հակահայկական քաղաքականություն վարող կենտրոնից ձերբազատվելու և ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու համար հայոց խորհրդարանը որոշեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախանալու հարցով[64]՝ քվեարկության դնելով հետևյալ հարցը՝ «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս»:

Սեպտեմբերի 21-ի հանրաքվեին մասնակցեց քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների 95,05 %-ը: Հայաստանի անկախության օգտին իր ձայնը տվեց 2 մլն 43 հազար մարդ կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 %-ը[65]: Համապատասխանաբար անկախությանը դեմ էին քվեարկել մոտ 0,47 %-ը, և անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակը կազմում էր քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0,19 %-ը[66]:

Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ՀՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի անկախության հանրաքվեի արդյունքների ամփոփիչ նիստում արձանագրվեց, որ բոլոր դիտորդները միահամուռ

---

[63] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20 օգոստոսի, 1991:
[64] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց 84, գ 1, թ. 68, 69, ց 128, գ. 3, թ. 1:
[65] Տե՛ս ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 18(998), 30 սեպտեմբերի, 1991, էջ 21:
[66] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1991:

էին իրենց տեսակետներում, որ հանրաքվեն իրականացվել էր նորմալ մթնոլորտում, և այդ ընթացքում «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի խախտման վերաբերյալ ոչ մի բողոք չէր արձանագրվել[67]:

1991 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը, հիմնվելով համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վրա, ընդունեց Հայաստանն անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշումը[68]:

Սեպտեմբերի 24-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ սեպտեմբերի 21-ը հայտարարվեց տոնական, ոչ աշխատանքային օր: Այսպիսով՝ 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայաստանի ազգային անկախությունը:

Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն ու ըստ էության միակն էր, որն անկախացման հանրաքվեն անցկացրեց Խորհրդային Միության Սահմանադրության և «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքին լիակատար համապատասխանությամբ, այն է՝ հանրաքվե իրականացնելու որոշման ընդունումից 6 ամիս անց, և անկախացման մասին որոշումը կայացրեց հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ազգաբնակչության ոչ պակաս, քան երկու երրորդի համաձայնությամբ[69]:

Ելնելով պետական կառավարման նոր արդյունավետ համակարգի ձևավորման անհրաժեշտությունից և առաջնորդվելով օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման վերաբերյալ «Անկախության հռչակագրի» դրույթներով՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. հունիսի 25-ին հիմնեց հանրապետության նախագահի պաշտոնը, որով հաստատեց նախագահական կառավարման համակարգ՝ վերջինիս զիջելով իր լիազորությունների մի մասը[70]: Նույն թվականի օգոստոսի 1-ին ընդունվեց «Հայաստանի

---

[67] Տե՛ս ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 18(998), 30 սեպտեմբերի, 1991, էջ 29:
[68] Տե՛ս նույն տեղում, N 18 (998), 30 սեպտեմբերի, 1991, էջ 21:
[69] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 հոկտեմբերի, 1991:
[70] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 415, թ. 42:

Հանրապետության նախագահի մասին» օրենքը, համաձայն որի՝ ՀՀ նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը[71]: Դրանով, ըստ էության, ուրվագծվեց անկախության ուղիով ընթացող Հայաստանի Հանրապետության պետական կարգը:

1991 թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում առաջին անգամ տոնվեց անկախության օրը[72]: Օգոստոսի 16-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ հանրապետության ողջ տարածքից վերացվեց պարետային ժամը՝ մտցված 1990 թ. օգոստոսի 29-ին[73]:

1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: Արդյունքում ձայների ճնշող մեծամասնությամբ (83,4 %) հանրապետության նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկ փոխնախագահ՝ Գագիկ Հարությունյանը[74]:

1991 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին «ՀՀ Գերագույն խորհրդի և կառավարության կառուցվածքի մասին» օրենքներով սահմանվեցին իշխանության պետական բարձրագույն մարմինների գործունեության շրջանակները[75]:

Հանրապետությունում պետական կառավարման համակարգը ներառում էր պետական գործադիր մարմինները, իսկ ՀՀ գործադիր իշխանությունն իրականացվում էր ՀՀ կառավարության կողմից, որը կազմված էր վարչապետից ու նախարարներից: Կառավարությունը 1991-1992 թթ. գործադիր իշխանությունն իրականացնում էր ՀՀ նախարարությունների, 8 պետական վարչությունների և վարչապետի ու

---

[71] Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու 1990-1995, Երևան, 1995, էջ 158-162:
[72] Տե՛ս նույն տեղում, էջ 198:
[73] Տե՛ս նույն տեղում:
[74] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1991:
[75] Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու 1990-1995, էջ 189-196, 198:

փոխվարչապետի միջոցով[76]: Հետագայում կառավարության կառուցվածքային կազմը բազմիցս փոփոխությունների ենթարկվեց:

1992 թ. ապրիլին Երևանի քաղխորհրդի նախագահության որոշմամբ վերանվանվեց 27 փողոց, որոնցից Կուտոզովի, Կոշևոյի և Մռավյանի փողոցները վերանվանվեցին հայ նշանավոր բարերարների՝ Գյուլբենկյանի, Մանթաշյանի և Ալեք Մանուկյանի անուններով, իսկ Աթաբեկյան, Խմելնիցկու և Գորկու փողոցները՝ XX դարի հայ ազգագրական մտքի ու պայքարի նշանավոր գործիչների, ՀՅԴ հիմնադիրների՝ Սիմոն Զավարյանի, Ստեփան Զորյանի (Ռոստոմ) և Քրիստափոր Միքայելյանի անուններով: Ռուս գործիչների անուններով մի քանի փողոցներ (Ջերժինսկու, Կրուպսկայայի, Նախիմովի, Շչորսի, Վատուտինի, Ուշակովի և այլն) վերանվանվեցին XIX դարի և XX դարասկզբի հայ ազգագրական պայքարի նշանավոր մարտիկզորավարների՝ Աղբյուր Սերոբի, Սոսեի, Նիկոլ Դումանի, Քեռու, Սնքարեցի Սաքոյի, Սեպուհի, Դրոյի անուններով:

Հանրապետության համար ծանր պայմաններում 1991 թ. դեկտեմբերի 8-ին Մինսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում ԽՍՀՄ հիմնադիր հանդիսացող չորս պետություններից երեքը սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները ստորագրեցին համաձայնագիր՝ ԽՍՀՄ գոյությունը դադարեցնելու մասին՝ որպես միջազգային սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն: Դրանով իրականացավ ԽՍՀՄ փլուզումը: Միաժամանակ հայտարարվեց միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կազմավորման մասին[77]: Միութենական նախկին հանրապետություններից Մինսկի համաձայնագրին առաջինն արձագանքեց Հայաստանի Հանրապետությունը՝ ողջունելով ԱՊՀ ստեղծումը և հայտնելով նրան միանալու իր պատրաստակամությունը:

1991 թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի նախկին մայրաքաղաք Ալմա-Աթայում 11 ինքնիշխան պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկս-

[76] Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու 1990-1995, էջ 195:
[77] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 դեկտեմբերի, 1991:

տանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Ադրբեջանը, Մոլդովան և Հայաստանը, ստորագրեցին համաձայնագիր՝ ԱՊՀ ստեղծման մասին[78]: Այլևս գոյություն չունեցող երկրի նախագահ Մ. Գորբաչովին մնում էր հրաժարական տալ:

Անկախության ուղին բռնած հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասվում: Այն, փաստորեն, կտրվել էր նախկին միութենական տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991 թ. նոյեմբերից հերթական անգամ փակվեց Վրաստանից եկող գազամուղը: Հայաստանի էներգետիկ շրջափակումը գնալով ավելի մեծ չափեր ընդունեց[79]: Նույն տարվա դեկտեմբերին վառելիքաէներգիայի ճգնաժամի պատճառով կանգ առան հանրապետության, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանի գրեթե բոլոր ձեռնարկությունները, ուսումնական հաստատություններում դադարեցրին պարապմունքները, բնակչությունը զրկվեց ջեռուցումից: Գազամուղի փակումից բացի՝ ընդհատվեց նաև երկաթուղային կապը մայրաքաղաքի և մյուս շրջանների միջև[80]: Օրըստօրե ծանրացավ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, իսկ տարածաշրջանում լարվածությունը գնալով ավելի էր սրվում:

բ. Մայրաքաղաքի օգնությունը մարտնչող Արցախին

Առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անվտանգության և անկախության պահպանման հարցը, որի երաշխիքը կարող էր լինել մարտունակ բանակը: Իր կարճատև պատմության ընթացքում հաղթահարելով պատերազմի ու բանակաշինության ծանրագույն փորձությունները՝ հայոց բանակը կոփվեց և դարձավ մեր անկախ պետականության կարևորագույն երաշխիքը: Արցախյան ազատամարտի տարիներին, հատկապես 1990-1992 թթ., հայ հասարակության մտածողության մեջ հասունացավ այն գիտակցութ-

[78] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 դեկտեմբերի, 1991:
[79] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևան, 2009, էջ 199:
[80] Տե՛ս նույն տեղում:

յունը, որ միայն սեփական զինված ուժերը կարող են լինել ժողովրդի ու հասարակության անվանգության երաշխիքը: Այս ժամանակահատվածում «բանակ» էին համարվում իրարից անջատ գործող շուրջ 80 կամավորական ջոկատները, որոնք, ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասարաններից ու բոլոր հնարավոր այլ վայրերից զենք հայթայթելով, կամավոր, հայրենասիրական ու բարոյական մղումներից դրդված, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ պաշտպանելու հանրապետության սահմանները: Այդպիսի ջոկատներից էին «Վրիժառուները», «Սասունցի Դավիթը», «Սասնա ծռերը», «Կոնդը», «Արգավանդը», Շենգավիթը», «Մերգելյանը», «Մալաթիան», «Կումայրին», «Աղանան», «Աֆղանցիները», «Արտաշատը», «Արամ Մանուկյանը», «Զորավար Անդրանիկը», «Նիկոլ Դումանը», «Մուշը» և այլն[81]: Նրանց մեծ մասը կազմավորվել էր Երևանում: Ինչպես Արցախյան շարժման սատարման, այնպես էլ հայոց բանակաշինության սկիզբը դրվեց մայրաքաղաքում: Արցախին սատարելու համար մայրաքաղաքում կազմակերպված համաժողովրդական ցույցերն ու միտինգները ստիպում էին Խորհրդային Հայաստանի իշխանություններին ուշադրություն դարձնել Արցախյան խնդրի լուծմանը: Նույնիսկ Արցախյան խնդրում Կենտրոնի կոշտ ու անբարյացակամ վերաբերմունքի պայմաններում մայրաքաղաքի բնակչությունը, ամբողջ հայ ժողովրդի հետ միասին մի բռունցք դարձած, ամեն կերպ օգնում և աջակցում էր արցախահայության ազատագրական պայքարին՝ սկսած ցույցերի ու միտինգների ակտիվ մասնակցությունից, վերջացրած նյութական աջակցությամբ:

Երքաղխորհրդի և գործադիր կոմիտեի համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ առանձին գերատեսչությունների, կազմակերպությունների և պատգամավորների տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների խնդրանքով, համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ, որոշվել էր մեծ մասամբ մայրաքաղաքի, մասամբ էլ

[81] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ հոբելյանական հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», 1, 2 (31-32), Երևան, 2002, էջ 12:

շրջկենտրոնների հյուրանոցներում, հանգստյան տներում և պանսիոնատներում ժամանակավորապես բնակեցնել Ադրբեջանական ԽՍՀ-ից բռնագաղթվածներին և բնակեցման ու շենքերի պահպանման ծախսերը ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. օգոստոսի 3-ի N394 կարգադրությամբ փոխհատուցել ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին[82]: Որոշման մեջ նշվում էր, որ Ադրբեջանական ԽՍՀ-ից բռնագաղթվածների պահպանման ծախսերը հատուցելու նպատակով հատկացնել 1611,7 հազար ռուբլի, հանրապետական բյուջեի միջոցների 1991 թ. հունվարի 1-ի դրությամբ, եղած ազատ մնացորդի հաշվին, այդ թվում՝ հյուրանոցներում գիշերավարձի նոր սակագների հետ կապված՝ մինչև 1991 թ. մայիսի 1-ը կատարված լրացուցիչ ծախսերի հատուցման համար 462,1 հազ. ռուբլի, որից «Բնակկոմունտնտ» հանրապետական միավորմանը՝ 309,1 հազ. ռուբլի, պատգամավորների Երևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեին (հյուրանոցային տնտեսությանը)՝ 23,9 հազ. ռուբլի, տուրիզմի, էքսկուրսիաների հայկական հանրապետական խորհրդին՝ 72,6 հազ. ռուբլի, «Ծիծեռնակ» միջազգային տուրիստական կենտրոնին՝ 26,9 հազ. ռուբլի, «Սևան» ավիացիոն տուրիստական համալիրին՝ 29,6 հազ. ռուբլի[83]:

Մայրաքաղաքի բնակչությունը, հաշվի առնելով Արցախյան ազատագրական պատերազմի կարևորությունը, դիմացավ խավարին, ամեն տեսակի դժվարություններին ու զրկանքներին հանուն Արցախի ազատագրության: Այսպես, օրինակ, Երևանի բնակչությունը ըմբռնումով մոտեցավ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1993 թ. ընդունած մի շարք որոշումներին, որով մայրաքաղաքին տրվող հոսանքը կրճատվեց՝ սկզբում հասնելով 8, այնուհետև՝ 4 ժամի՝ մարտնչող Արցախին 24-ժամյա լույսով ապահովելու համար: Ըստ Երևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Վ. Խաչատրյանի տեղեկության՝ մայրաքաղաքի քաղաքապետարանի աշխատակազմի անմիջական ջանքերով հաշվի առնելով ռազմաճակատի կռվող ուժի և ռեզերվի պակասը՝ մայրաքաղաքի փողոցներից հա-

[82] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 400 (398), թ. 8-9:
[83] Տե՛ս նույն տեղում, թ. 12-13:

վաքագրված երիտասարդները ուղարկվում էին Արցախի պաշտպանական գծերը, բանակի տրամադրության տակ:

Մայրաքաղաքի իշխանություններն ու քաղաքի բնակչությունն ամեն կերպ օգնում էին մարտնչող Արցախին: 1990 թ. հոկտեմբերի 2-ին ընդունելով Ժողովրդական պատգամավորների քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի և ՀՀ պետպլանի առաջարկությունը՝ ՀԽՍՀ նախարարների խորհուրդը N654 կարգադրությամբ 1990 թ. ԼՂԻՄ ռեզերվից հատկացրել է 300 տոննա ալյուր՝ հացաթխման կարիքների համար:

Արցախահայության ֆինանսական օգնության համար կարևոր նշանակություն ունեցավ մայրաքաղաքում «Արցախբանկի» մասնաճյուղի ստեղծումը: Երքաղխորհրդի համաձայնությամբ, ՀՀ հատուկ տնտեսական ծրագրերի իրագործման պետական կոմիտեի առաջարկությամբ և ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. հուլիսի 17-ի N366 կարգադրությամբ Երևան քաղաքում հիմնվեց Լեռնային Ղարաբաղի բաժնետիրական առևտրային «Արցախբանկի» մասնաճյուղ: Դրա համար Երքաղխորհրդի գործկոմին հանձնարարվեց մեկամսյա ժամկետում հատկացնել «Արցախբանկի» մասնաճյուղի ձևավորման համար ոչ պակաս քան 200-250 քմ մակերեսով տարածք: Հարցն անմիջապես կարգավորվեց:

Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ստիպեց մայրաքաղաքում գործող բուհերի, առաջին հերթին ԵՊՀ մի շարք ֆակուլտետների ուսանողներին կիսատ թողնել համալսարանական ուսումնառությունը, ստեղծել կամավորական ջոկատներ և մեկնել Արցախ[84], ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններ, իսկ նրանք, ովքեր մնացին համալսարանում և մյուս բուհերում, մեր ժողովրդի հետ միասին ամեն կերպ աջակցում էին մարտնչող Արցախին: Միայն 1988-1991 թթ. ընթացքում համալսարանականները կազմակերպեցին երկու տասնյակից ավելի ուղղաթիռային չվերթ՝ Արցախ հասցնելով հագուստ, սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ:

[84] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, գլխ. խմբ.՝ Ա. Սիմոնյան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 8:

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի աշխատակիցները Միսակ Մարտիրոսյանի և Արմանդ Ռոստոմյանի ջանքերով հրացանների համար կոտորակ էին պատրաստում, կապարի գնդակներ ձուլում՝ Արցախ ուղարկելու համար, իսկ քիմիայի ֆակուլտետի դասախոսներ Հելբիկ Հակոբյանը և Կարապետ Դավթյանը առաջինն էին, որ Հայաստանում սինթեզեցին հրթիռային վառելանյութ:

Զգալի էր նաև ԵՊՀ օգնությունը Արցախի պաշտպանության պետական կոմիտեին[85]: ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղար Յու. Մկրտումյանի ջանքերով ոչ միայն արգելվել էր խորհրդային զորքերի մուտքը ԵՊՀ, այլև կազմակերպվել և Եղեգնաձորից թիկնոցներ՝ յափնջիներ էին բերվել ԵՊՀ, որտեղ էլ դրանցից կաղապարներով որսորդական հրացանների համար խից էին պատրաստում և հագուստի հետ միասին ուղարկում Արցախ: Ցավոք, համալսարանականներից և մյուս բուհերից շատերը մարտի դաշտից չվերադարձան: Նրանցից թվում էր 1990 թ. փետրվարից համալսարանականների ուժերով կազմավորված «Անկախության բանակի» հրամանատար, համալսարանի դասախոս Լեոնիդ Ազգալդյանը:

Հրամանատարը զոհվեց 1992 թ. հունիսի 21-ին Մարտակերտի Տոնաշեն գյուղում թշնամու դեմ անհավասար կռվում[86]: Նա հետմահու պարգևատրվել է ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշաններով[87]:

Արցախյան պատերազմի սկզբում իր քաջագործություններով աչքի ընկավ ԵՊՀ 11 տարվա դասախոս, ինժեներ-երկրապահ Սիմոն Աչիքգյոզյանը: Գիտության անխոնջ մշակը 1989 թ. անդամագրվել է «Արաբո» կամավորական ջոկատին և մասնակցել Եղեգնաձորի ու Նոյեմբերյանի շրջանների և սահմանամերձ այլ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, ապա՝ մեկնել Արցախ (Շահումյանի շրջան)՝ ստանձնելով Մարտունաշենի պաշտպանության ջոկատի

---

[85] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 8:
[86] Տե՛ս նույն տեղում, էջ 90, Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան 2005, էջ 35:
[87] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 12:

հրամանատարությունը: 1990 թ. Ս. Աչիքգյոզյանը ընտրվել է Երևան քաղխորհրդի պատգամավոր, մասնակցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստերին: Նա իսկական հերոսություն գործեց Մարտունաշենի ինքնապաշտպանության ժամանակ, որտեղ էլ զոհվեց 1991 թ. ապրիլի 30-ին՝ Արցախը հայաթափելու «Օղակ» գործողությունը կանխելիս[88]: Նա 1996 թ. սեպտեմբերին հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

Արցախյան պատերազմում քաջաբար կռվեցին և հերոսի մահով ընկան ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանողներ ՀՀ ազգային հերոս Թաքուլ Կրպեյանը, հետմահու «Արիության համար» մեդալով պարգևատրված Վարդան Դալլաքյանը, Զաքար Ավանեսյանը, ֆակուլտետի գիտաշխատող Վարդան Բախշյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող, հետմահու «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով պարգևատրված Պետրոս Ղևոնդյանը, տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող Վարդան Հովհաննիսյանը, իրավաբանության ֆակուլտետի ուսանող, 1990 թ. Երևանի քաղխորհրդի պատգամավոր Տիգրան Սարգսյանը, նույն ֆակուլտետի ուսանող Վարդան Ստեփանյանը (Դուշմանը) և ուրիշներ: Թվով 30 ԵՊՀ ուսանող ազատամարտիկներ նահատակվեցին Արցախի ազատագրության համար մղվող կռիվներում[89]:

Պատմության ֆակուլտետի մեկ այլ խիզախ ուսանող Վարդան Դալլաքյանը, ծառայելով Աֆղանստանում տեղակայված խորհրդային բանակում, իր մարտական փորձը լավագույնս կիրառեց Արցախյան պատերազմում: Մարտնչել է Բերդաձորում, Կարմիրում, Քարվաճառում: Վ. Դալլաքյանը զոհվել է 1994 թ. հուլիսին՝ Քարվաճառի շրջանի ազատագրական մարտերի ժամանակ, Ղամշլու գյուղի մատույցներում: Պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: ԵՊՀ պատմության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է նրա անունով[90]:

Խորհրդային բանակում է ծառայել նաև հերոս ազատամարտիկ հրամանատար, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի սան Պետրոս

---

[88] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 13-14:
[89] Տե՛ս նույն տեղում, էջ 23-24:
[90] Տե՛ս նույն տեղում, էջ 37-38:

Ղևոնդյանը: 1988 թ. սկսված Արցախյան շարժման առաջին օրերից Պ. Ղևոնդյանը զինվորագրվել է հայրենիքի պաշտպանության գործին: 1991-1992 թթ. Պ. Ղևոնդյանը մասնակցել է Ղուշիլլարի, Մալիբեյլիի, Լեսնոյի և հարակից գյուղերի ազատագրման մարտերին: Շուշիի ազատագրման ժամանակ նշանակվել է Շուշվա առանձնակի գումարտակի հրամանատարի տեղակալ: 1993-1994 թթ. մասնակցել է Հադրութի, Ֆիզուլու, Ջեբրայելի, Զանգեզուրի ազատագրական մարտերին, Քարավաճառի շրջանի Օմարի լեռնանցքի կռիվներին: Զոհվել է 1994 թ. փետրվարին: Պ. Ղևոնդյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով: Նրան շնորհվել է «Արցախի հերոս» կոչում և «Ոսկե արծիվ» շքանշան: Նրա անունով են անվանվել մի քանի միջնակարգ դպրոցներ ՀՀ-ում և Արցախում, ինչպես նաև ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի լսարաններից մեկը[91]:

1972 թ. հունվարին Երևանում է ծնվել հայոց ազատամարտի մեկ այլ նվիրյալ Վարդան Հովհաննիսյանը: ԵՊՀ տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Վ. Հովհաննիսյանը 1992 թ. անդամագրվել է Վ. Սարգսյանի հավաքագրած «Արծիվ» մահապարտների ջոկատին: Գումարտակի կազմում նա մասնակցել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չլդրան, Դրմբոն, Հարությունագոմեր բնակավայրերի ազատագրման մարտերին, զոհվել է նույն թվականի սեպտեմբերին՝ Վաղուհասի բարձունքի ազատագրման ժամանակ: Նրա աճյունը ամփոփված է Եռաբլուր-հուշահամալիր պանթեոնում[92]: Խորհրդային բանակում մարտական փորձառության անցած հետախուզական ջոկատի հրամանատար Տիգրան Սարգսյանը ծնվել է 1965 թ. ապրիլին Երևանում, ավարտելով Երևանի թիվ 162 միջնակարգ դպրոցը՝ ծառայել է խորհրդային բանակում, ապա՝ 1985 թ.՝ զորացրվելուց հետո, ընդունվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ[93]: Նա ակտիվորեն մասնակցել է ազգային-ազատագրական շարժմանը: Նա հիմնադրել է «Մեծ Հայք» հայրենասիրական կազ-

[91] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 51-52:
[92] Տե՛ս նույն տեղում, էջ 46:
[93] Տե՛ս նույն տեղում, էջ 64-65:

մակերպությունը, իսկ 1990 թ. փետրվարից սկիզբ է դրել «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի կազմավորմանը՝ իր հաստիքային կառուցվածքով, սպառազինությամբ և դրոշով:

Տ. Սարգսյանը, ընտրվելով գնդի շտաբի պետ, ռազմական խորհրդի անդամ, մասնակցել է Երասխավանի, Վայքի, Սիսիանի, Խնձորեսկի, Նոյեմբերյանի պաշտպանական մարտերին: Նրա ղեկավարությամբ մշակվել և իրականացվել են Հյուսիսային Արցախի՝ Շահումյանի շրջանի Էրքեջ, Մանաշիտ, Բուզլուխ գյուղերի ինքնապաշտպանական մարտերը: 1990 թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի պատգամավոր՝ աշխատանք տալով իրավաբանական հանձնաժողովի կազմում: 1991 թ. նոյեմբերին Թոդան գյուղի հակառակորդի կրակակետերի ոչնչացման ժամանակ ծանր վիրավորվել է և դեկտեմբերին կնքել է իր մահկանացուն: Նրա աճյունը ամփոփված է «Եռաբլուր» հուշահամալիրում: Նա հետմահու արժանացել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է նրա անունով[94]:

ԵՊՀ նույն ֆակուլտետի ուսանող էր նաև քաջակորով ազատամարտիկ Վարդան Ստեփանյանը (Դուշմանը): Նա ծնվել է 1996 թ. մարտին Երևանում: Երևանի թիվ 32 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1984-1986 թթ., ծառայել է Աֆղանստանում տեղակայված խորհրդային բանակային ստորաբաժանումներում, կուտակել մարտական ծառայության հարուստ փորձ: Նա իր ցուցաբերած քաջագործության համար 1986 թ. մարտին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

1989-1992 թթ. Վ. Ստեփանյանը մասնակցել է Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի, Արարատի, Վարդենիսի, Գորիսի և ԼՂՀ ինքնապաշտպանական մարտերին, Խոջալուի, Շուշիի, Լեսնոյի, Կրկժանի, Մալիբեյլուի, Բերձորի՝ Լաչինի, Մարտակերտի, Ասկերանի, Բերդաձորի և այլ բնակավայրերի ազատագրմանը: Նա զոհվել է

[94] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 64-65:

1992 թ. հուլիսին ԼՂՀ Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի համար մղվող մարտերում: Գյուղի մոտակայքում կանգնեցված է հուշակոթող՝ նվիրված Վ. Ստեփանյան հիշատակին: Վ. Ստեփանյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է նրա անունով[95]:

Արցախին օգնության հասցնելու գործում մեծ է նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի դերը, որը, 1990 և 1991 թթ. ապրիլից սկսած, բազմիցս վտանգների ենթարկվելով, Արցախի և ՀՀ սահմանամերձ շրջանների կամավորական ջոկատներին էր հասցնում ոչ միայն հաղորդակցության սարքեր՝ «Ալենկո» տիպի հաղորդիչներ, այլև անհրաժեշտ սննդամթերք, հատկապես մասուր, ուրց, թթի օղի, տաք հագուստ և այլն: Հետագայում նա Արցախում բազմիցս կազմակերպել է ծառատունկեր և այլն[96]:

1992-1993 թթ. երկրապահ կամավորական ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով ստեղծվեց շարժունակ և կարգապահ բանակ[97]: 1992 թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, որով ազդարարեց Ազգային բանակի ստեղծման սկիզբը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ՆԳՆ պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության գունդը և հանրապետական զինկոմիսարիատը[98]: Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները ստեղծվեցին ավելի ուշ: Դեռևս 1991 թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար էր նշանակվել Վազգեն Սարգսյանը (1959-1999)[99]: Նա, արդեն լինելով խորհրդա-

---

[95] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 67-69:
[96] Տե՛ս նույն տեղում, էջ 81-83:
[97] Տե՛ս Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, 2003, էջ 54-64:
[98] ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406, թ. 6-9:
[99] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 165, գ. 298, թ. 1:

բանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ, կամավորների մեծ մասի սիրված հրամանատարն էր: Ազգային բանակի ստեղծման գործում մեծ է նրա ներդրումը:

Արցախի աջակցության գործում իրենց նպաստը բերեցին նաև Մանկավարժական համալսարանի ուսանողները, շրջանավարտներն ու դասախոսները, որոնց մի մասը մայրաքաղաքի բնակիչներ էին: Արցախյան 1991-1994 թթ. պատերազմի ընթացքում զենք-զինամթերքի հայթայթման և մատակարարման գործում ակտիվություն ցուցաբերեցին Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսները՝ ՀՀ ԱԺ պատգամավոր, դոցենտ Հ. Հարությունյանը, դոցենտներ, Մ. Սահրադյանը, Ա. Ղուշչյանը, Բ. Սիսիանը և ուրիշներ: Պրոֆեսոր Լ. Վ. Հարությունյանը խնայած անձնական միջոցներով մի քանի անգամ սննդամթերք, զինվորական հանդերձանք և այլ պարագաներ ուղարկեց Արցախ: Համալսարանի 17 ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսներ իրենց մահկանացուն կնքեցին Արցախյան ազատամարտում: Նրանց մի մասը ծնունդով մայրաքաղաքից էին: Նրանց թվում էին ՀՀ ազգային հերոս, քաղաքական գործիչ, հրապարակախոս, դերասան Մովսես Գորգիսյանը, որը՝ որպես անկախության բանակի զինվոր, զոհվեց 1990 թ. հունվարի 18-ին Երասխավանի մարտերում, դասախոս, ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստճանի շքանշանակիր, քանդակագործ, ավագ լեյտենանտ Գևորգ Համբարձումյանը, որը մասնակցել էր Մարտակերտի Կարմիրավան գյուղի պաշտպանությանը[100]: Նա զոհվեց 1994 թ. Կարմիրավան գյուղի մարտերում:

Սերժանտ Կարեն Հարությունյանը նույնպես ծնունդով երևանցի էր, մասնակցել է Մարտակերտի գյուղերի ազատագրական կռիվներին և զոհվել Մարտակերտում 1994 թ.: Իրենց քաջագործություններով աչքի է ընկել երևանցի, նույն բուհի գծանկարի ամբիոնի դասախոս Աղվան Մխիթարյանը, որը մասնակցել է Մարտակերտի, Լաչինի, Քարվաճառի, Ֆիզուլու մարտական գործողություններին, պարգևատրվել է 1992-1994 թթ. «Մարտական գործողությունների մասնա-

[100] Տե՛ս Հ. Պատրիկյան, Արյան կանչով, Երևան, 2015, էջ 3-11:

կից» մեդալով: Նրա գործընկեր, նույնպես երևանցի Արմեն Մուշեղյանը բուհն ավարտելուց հետո աշխատել է Պռոշյանի անվան միջնակարգ դպրոցում որպես նկարչության և գծագրության ուսուցիչ: Նա Շուշիի առանձնակի գումարտակի կազմում մասնակցել է ԼՂՀ Մարտակերտի և Աղդամի տարածքների ազատագրական, մարտական գործողություններին, կռվել մինչև հրադադարը: Իրենց քաջագործություններով աչքի են ընկել երևանցիներ կապիտան, ՀՀ ՆԳ «Միլիցիայի գերազանցիկ» մեդալակիր Վահան Ավետյանը, որը մասնակցել է Ասկերանի, Մարտակերտի և Աղդամի տարածաշրջանի մարտական գործողություններին, ռեժիսոր Միքայել Ղազարյանը, որը մասնակցել է Լաչինի շրջանի մարտական գործողություններին, Անդրանիկ Ոսկանյանը[101], որը մասնակցել է Գետաշենի տարածաշրջանի մարտական գործողություններին, դասախոս Արթուր Մարտիրոսյանը և ուրիշներ:

Արման Եղյանը, ծնվելով Երևանում, ավարտելով բուհը, աշխատել է N94 պրոֆտեխուսումնարանում որպես վարպետ, 1990 թվականից մասնակցել է Երասխավանի, 1991 թ.՝ Հայաստանի սահմանամերձ գյուղերի համար մղվող մարտական գործողություններին, Շուշիի ազատագրական մարտերին՝ իբրև հրամանատարի տեղակալ, ապա՝ Մարտակերտի ինքնապաշտպանական մարտերին[102]: Նիկոլայ Դավթյանը, ծնվելով Երևանում, ավարտել է բուհի Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի նորաբաց բաժինը, աշխատանքի է անցել մշակույթի նախարարությունում, ապա որպես հեռուստաընկերության գլխավոր ռեժիսոր մեկնել է Արցախ 5-րդ բրիգադի կազմում, մասնակցել մարտական գործողություններին: Ամենաթեժ կետերում աչքի է ընկել քաջագործություններով[103]:

Արցախի օգնության գլխավոր կազմակերպիչներից էր ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դոցենտ Նորիկ Գալստյանը: Նրա տվյալներով Արցախի պաշտպանության կոմիտեին Երևանի պետական համալսարանի կոլեկտիվը օգնել է ոչ միայն զինամ-

---

[101] Տե՛ս Պատրիկյան, նշվ. աշխ., էջ 192-200:
[102] Տե՛ս նույն տեղում:
[103] Տե՛ս նույն տեղում, էջ 207-231:

թերքի մեծ պաշարով, այլև հայթայթել է 1200 ձեռք զինվորական հագուստ՝ բաճկոն, տաբատ, զինվորական կոշիկներ և գլխարկ, համալսարանում կազմակերպել և ֆիզիկայի դասախոս Միսակ Մարտիրոսյանի ջանքերով կարել են 8000 անձրևանոց և Արցախ են ուղարկել քնապարկերի ու վրանների հետ[104]: Նրա տեղեկությունների համաձայն՝ Գետաշենը համալսարանի օգնությունը ստացել է ըստ պահանջի:

Հայկական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով ստեղծված կամավորական ջոկատները պետական կառույցում ընդգրկելու համար ՀԽՍՀ նախարարների խորհուրդը 1990 թ. օգոստոսի 21-ին ընդունեց «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին» որոշումը[105]: Իրավական այս հիմքի վրա էլ 1990 թ. սեպտեմբերին Երևանում կազմավորվեց ՀՀ ներքին գործերի նախարարությանը կից Հատուկ գունդը, որի կազմում ընդգրկվեցին Երևանի, Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի, Մեղրու և այլ շրջանների 26 ինքնապաշտպանական վաշտերը[106]: Այդ վաշտերը կռվեցին ՀՀ և ԼՂՀ գրեթե բոլոր ռազմաճակատներում: Հայրենիքի սահմանների պաշտպանության համար մղված մարտերում զոհվեցին 159 մարտիկներ, այդ թվում՝ նաև գումարտակի հրամանատար, Հայաստանի ազգային հերոս, երևանցի Ջիվան Աբրահամյանը[107]: Կամավորական ջոկատների տարերայնորեն կազմավորման և բնակչության ձեռքին մեծաքանակ զենք հայտնվելու արդյունքում ի հայտ եկան նաև չվերահսկվող զինված խմբավորումներ, որոնց գործունեությունն ապակայունացնում էր Հայաստանի ներքին դրությունը: Այդպիսի մի զինված անհնազանդության ժամանակ՝ օգոստոսի 29-ին՝ դեպքերի հետագա սրումն արգելելու նպատակով բանակցությունների մեկնելիս,

---

[104] Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 89-90:
[105] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 298, թ. 1:
[106] Տե՛ս Ս. Օհանյան, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 40, ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406, թ. 8,9:
[107] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», 1, 2 (31-32), էջ 13-14:

զոհվեցին Վիտյա Այվազյանն ու Գեղազնիկ Միքայելյանը՝ իրենց կյանքի գնով սթափեցնելով բոլորին ու կանխելով հնարավոր արյունահեղությունը: Նրանց հետմահու շնորհվեց «Ազգային հերոսի» կոչում[108]: 1991 թ. ապրիլի 26-ին ՀՀ նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը», որը տարածվում էր մինչև 50 տարեկան, կամավորական սկզբունքով հանրապետության պաշտպանության գործին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիների վրա: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության պետական կոմիտեն, որի հիմքի վրա էլ ավելի ուշ ստեղծվեց պաշտպանության նախարարությունը[109]:

Վ. Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ հայոց բանակաշինության գործում զգալի աշխատանք կատարվեց: 1992 թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին: 1992 թ. մայիսի 22-ին Նուբարաշենում տեղի ունեցավ ՀՀ առաջին դեսանտագրոհային գնդի երդման արարողությունը: Մայիս-նոյեմբեր ամիսներին ստեղծվեցին ՀՀ ԶՈՒ կապի առաջին զորամասը, ավարտվեց ՀՀ ԶՈՒ ավիացիոն, հակաօդային, ինժեներական, տանկային, քիմիական, հրթիռահրետանային, հետախուզական, ռազմաբժշկական զորամասերի ձևավորումը: Նույն թվականի օգոստոսի 30-ին սպարապետ Վազգեն Սարգսյանի կոչով մայրաքաղաքից և մարզերից հավաքագրված շուրջ 500 ազատամարտիկներից ստեղծվեց «Արծիվ-մահապարտների» գումարտակը, որը վճռորոշ դեր խաղաց Արցախի հյուսիսարևելյան ճակատում՝ բեկում մտցնելով ռազմական գործողությունների մեջ, ռազմաճակատի այդ հատվածում կասեցնելով թշնամու հարձակումը: Նոր կազմավորված զորամասերի անձնակազմը 1992 թ. մայիսի 28-ին մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում առաջին անգամ զորահանդես անցկացրեց և տվեց առաջին զինվորական երդումը:

---

[108] Տե՛ս Ս. Օհանյան, նշվ. աշխ., էջ 41:
[109] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 317, թ. 1,2:

Անկախ Հայաստանի զորամիավորումներն ու զորատեսակները, ինչպես նաև սպայական կազմը ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի կազմակերպական հիմքի վրա: Նորաստեղծ հայկական բանակի սպառազինությունը և ռազմական տեխնիկան ժառանգություն էր մնացել նույն խորհրդային բանակից: Աստիճանաբար աճեց բանակի թվաքանակը: Հաշվի առնելով Հայաստանի տարածքում ձևավորված ռազմաարդյունաբերական համալիրի գիտատեխնիկական և տեխնոլոգիական բարձր մակարդակը՝ աշխատանքներ ծավալվեցին դրա պահպանման ու զարգացման ուղղությամբ: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում բանակի մարտական պատրաստականության կատարելագործմանը: Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում: Նրանք լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման գործին: Նրանց թվում էին՝ գեներալներ Գ. Դալիբալթայանը, Մ. Հարությունյանը, Ն. Տեր-Գրիգորյանցը, Ք. Իվանյանը, Յու. Խաչատուրովը, Ա. Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) և շատ ուրիշներ[110]: Հետագայում Երևանում բացվեցին Վ. Սարգսյանի անվան ռազմական դպրոցը, Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական ուսումնարանը, Արմենակի Խամփերյանցի անվան ռազմաօդային ուժերի, հատկապես սպայական կազմի պատրաստման համար նախատեսված ուսումնական հաստատությունը և այլք: Կազմակերպվեց նաև սպայական կադրերի պատրաստման բարձրագույն դպրոցը, ամրապնդվեց նյութատեխնիկական բազան: Հայոց ազգային բանակի ստեղծման գործում մեծ եղավ պաշտպանության նախարարներ Վ. Սարգսյանի, Վ. Մանուկյանի, Ս. Սարգսյանի և ուրիշների դերը: Բանակը աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախ պետականության վերականգնման գործընթացում և հանդիսացավ նրա ամենամեծ ձեռքբերումը: Լավ կազմակերպված հայոց բանակում ծառայելը դարձավ յուրաքանչյուր հայ երիտասարդի պատվի գործը:

---

[110] Տե՛ս Ս. Օհանյան, 21-րդ դարի բանակը, Երևան, 2007, էջ 11:

Օգտվելով ԽՍՀՄ ղեկավարության բացարձակ աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական գյուղերը և բնակիչներին արտաքսել իրենց բուն հայրենիքից:

1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները (ռուս.՝ ՕՄՕՆ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ: Փաստորեն՝ 1991 թ. մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ:

1991 թ. հուլիսին ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում կազմակերպվեցին զինված ջոկատներ, որոնք հետագայում համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո:

Երբ ակնհայտ դարձավ ԽՍՀՄ փլուզման անխուսափելիությունը, 1991 թ. օգոստոսի 30-ին Բաքվում հրավիրված Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց Ադրբեջանական հանրապետության անկախության վերականգնման մասին հռչակագիր[111]: Դա նշանակում էր, որ Ադրբեջանը դուրս էր գալիս ԽՍՀՄ կազմից՝ նպատակ ունենալով իր հետ տանել նաև Լեռնային Ղարաբաղը: Հռչակագրում ասված էր, որ Ադրբեջանի Հանրապետությունը ընդգրկված է լինելու 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի Հանրապետության սահմաններում: Փաստորեն՝ Բաքուն հրաժարվում էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ո՛չ Նախիջևանը, ո՛չ Լեռնային Ղարաբաղը: Ուստի անհրաժեշտ էր շտապել և ձեռքից բաց չթողնել հարմար պատմական պահը, հատկապես որ 1990 թ. ապրիլի 3-ից գործող «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»[112] ԽՍՀՄ օրենքով Խորհրդային Միությունից դուրս եկող հան-

---

[111] Տե՛ս НКР, История и современность, Степанакерт, 1998, с. 9:

[112] Տե՛ս С. Золян, Нагорный Карабах: Проблема и конфликт, Ереван, 2001, с. 111:

բապետության սահմանների մեջ գտնվող ինքնավար հանրապետություններին ու ինքնավար կազմավորումներին և տվյալ տարածքում բնակչության մեծամասնությունը կազմող համահավաք բնակվող ազգային խմբերին իրավունք էր տրվում ինքնուրույնաբար վճռելու իրենց պետական-իրավական կարգավիճակի խնդիրը: Ուստի այդ օրենքը Լեռնային Ղարաբաղի հայությանը թույլ էր տալիս օրինական ճանապարհով բաժանվել Ադրբեջանից և դառնալ սեփական ճակատագրի տերը, մանավանդ որ 1918-1920 թթ. Ղարաբաղը երբեք այդ պետության մաս չի կազմել: Բացի այդ՝ 1991 թ. հոկտեմբերի 18-ի «Անկախության մասին» սահմանադրական ակտով Ադրբեջանը անվավեր ճանաչեց իրեն վերաբերող Սովետական Միության գոյության ժամանակ ընդունված ակտերը: Դրանով իսկ Ադրբեջանը անվավեր ճանաչեց նաև բոլոր ակտերը, որոնք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին:

Առաջնորդվելով ԽՍՀՄ սահմանադրությամբ և նշված օրենքով՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային, բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջանը: Ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշումը: Նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)[113]: Նրա տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը գործելու էին ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև նշյալ հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին չհակասող գործող մյուս օրենքները:

Փաստորեն՝ Ադրբեջանի անկախության հռչակումից հետո ԼՂԻՄ-ը՝ որպես ինքնավար կազմավորում, և Շահումյանի շրջանը՝ իբրև ազգային փոքրամասնությամբ համահավաք բնակեցված տարածք, մինչև ԽՍՀՄ իրավաբանական գոյության ավարտն իրականացրին իրենց պետաիրավական կարգավիճակների որոշմանը

[113] «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, Երևան, 1991:

նպատակաուղղված, Խորհրդային Միության գործող օրենսդրությամբ սահմանված իրավական քայլեր: Հետևաբար Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում զուրկ են իրավական հիմքերից:

Միջազգային իրավունքի տեսանկյունից ևս նման հիմքեր գոյություն չունեն, քանի որ Ադրբեջանը, անկախություն հռչակելով, իրեն հայտարարել է 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետության իրավահաջորդը, որը չի ճանաչվել Ազգերի լիգայի կողմից այդ հանրապետության մեջ մտնող տարածքների հստակ սահմանների որոշման դժվարության պատճառով:

Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զուրկ են նաև պատմական հիմքերից, քանի որ վերջինս անկախ Ադրբեջանի մաս երբևէ չի եղել:

Տասնամյակներ շարունակ ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու՝ արցախահայության բոլոր խաղաղ նախաձեռնություններին ի պատասխան՝ Ադրբեջանը կիրառել է բռնություններ, ոտնահարել հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Ուստի Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չունեն նաև բարոյական հիմքեր:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը իրականացվում է մի տարածքի վրա, որի նկատմամբ Ադրբեջանն իրավական, պատմական և բարոյական հավակնություններ ունենալ չի կարող: Սակայն Ադրբեջանը ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել այս իրողությունը: Ուստի պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը համարեց դավադրություն Ադրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ և հանրապետության ուժային գերատեսչություններին հանձնարարեց խափանել այդ Հռչակագրի իրականացման ցանկացած փորձ՝ պատասխանատվության ենթարկելով դրա հեղինակներին[114]: Միաժամանակ հանրապետական Կազմկոմիտեին

[114] Տե՛ս Տ. Հակոբյան, ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Երևան, 2011, էջ 21:

հանձնարարվեց լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել ԼՂԻՄ բնակչության զինաթափումն արագացնելու ուղղությամբ: Սակայն այս հանձնարարականները գործնականում անհնար էր իրականացնել, քանի որ մարզի մեծ մասը, գտնվելով հայկական ուժերի վերահսկողության ներքո, անհասանելի էր Ադրբեջանի պաշտոնական անձանց: Ուստի Ադրբեջանը սաստկացրեց ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում:

1991 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Այդ օրը, չնայած պատերազմական դժվարին վիճակին, ԼՂՀ բնակչության ձայնի իրավունք ունեցողների 82 %-ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99,8 %-ը ձայն տվեց անկախության օգտին[115]:

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ, որին ադրբեջանցիները չմասնակցեցին ղեկավարության հրահանգով: 1992 թ. հունվարի 6-ին Ստեփանակերտում նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհը փակ լինելու պատճառով 3 պատգամավոր չէր հասել Ստեփանակերտ) և 80 դիտողների ու լրագրողների ներկայությամբ «Հայր մեր» տերունական աղոթքով իր աշխատանքը սկսեց ու կայացավ հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որն ընդունեց ԼՂՀ անկախության հռչակագիրը:

Հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը: Ստեղծվեց ԼՂՀ նախարարների խորհուրդ՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ[116]:

1992 թ. հունիսի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց պետական դրոշը, իսկ նոյեմբերի 17-ին՝ երկրի զինանշանն ու օրհներգը: ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ սպիտակ հնգատամ սանդղանման զարդանախշով, որի աջ փոքրիկ հատվածը անջատված է դրոշի հիմնական մասից, ինչը խորհրդա-

---

[115] Տե՛ս Տ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 22-23:
[116] Տե՛ս Հ. Աբրահամյան, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 151:

նշում է Արցախի և՛ այսօրվա կացությունը, և՛ նրա ապագան: Աստիճանաբար կազմավորվեց դատական համակարգը՝ Հայաստանի Հանրապետության օրինակով: Մարտերի բովում կազմավորվեց ԼՂՀ բանակը, որն ազատագրական պայքարում իրեն պսակեց հաղթանակների փառքով: Առաջնային համարվեց ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղ բանակցությունների գործընթացը: Վերջինս դարձավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա: Բայց Ադրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական մեթոդներով կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջներ: Ավելին՝ Թուրքիայի հովանավորությամբ ու աջակցությամբ ադրբեջանցիներն իրենց ռազմական բազաներից սկսեցին անընդհատ ռմբակոծել Արցախի բնակավայրերը: Խոջալուից, Շուշիից և Աղդամից ամեն օր ռմբակոծվում էր Ստեփանակերտը՝ պատճառելով ավերածություններ և բազում մարդկային զոհեր: Համապարփակ շրջափակումն ու շուրջօրյա հրետակոծությունները ավերում ու կաթվածահար էին անում Արցախի տնտեսությունը: Առանց հակառակորդի ռազմական հենակետերի ու կրակակետերի վերացման հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը:

ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ուժերը կազմակերպչական լուրջ աշխատանքներ տանելուց հետո՝ 1992 թ. հունվարից, ձեռնամուխ եղան Ստեփանակերտի քաղաքամերձ ադրբեջանական կրակակետերի ոչնչացմանը: Փետրվարին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հատուկ որոշում ընդունեց ինքնապաշտպանության ուժերի մասին և հանձնարարեց զինված ջոկատները դիտել որպես ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր և դրանք համախմբել մեկ միասնական հրամանատարության ներքո: ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. մարտի 4-ի նիստի որոշմամբ Զինված ուժերի ինքնապաշտպանական (ԻՊՈՒ) ընդհանուր հրամանատար նշանակվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)[117]: Նույն նիստի որոշմամբ կազմա-

[117] Տե՛ս Ս. Օհանյան, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 58, Տ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 56:

կերպվեց ԼՂՀ պաշտպանության խորհուրդ՝ Արթուր Մկրտչյանի նախագահությամբ: Խորհուրդի կազմի մեջ ընդգրկվեցին Օ. Եսայանը, Վ. Բալայանը, Ս. Սարգսյանը, Ա. Տեր-Թադևոսյանը, Ռ. Քոչարյանը և Ա. Կարապետյանը: Շուտով՝ 1992 թ. մարտի 26-ին, ԼՂՀ նախարարների խորհրդին (ՆԽ) առնքեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ): Հանրապետության ներքին կայունությունը պահպանելու նպատակով ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը որոշեց ՊԿ նախագահ նշանակել Սերժ Սարգսյանին[118]: ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաև կառավարության կազմի հաստատմանը: 1992 թ. մարտին վերջնականապես ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորությունները իրեն վերապահեց մինչև 1992 թ. օգոստոս (Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ)) ստեղծումը[119]: Այդ կարևոր ձեռնարկումը անմիջապես ունեցավ դրական մեծ արդյունքներ: Սկսեց գրվել ազգային բանակի մարտական փայլուն կենսագրությունը, որի առաջին էջը դարձավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացման ռազմական գործողությունների հաջող իրականացումը:

1992 թ. հունվարի 11-ին հայկական մարտական ուժերը լուրջ հարված հասցրին Մալիբեյլոյին և Ղուշչուլարին, որտեղի կրակակետերից ոչ միայն Ստեփանակերտն էին ռմբակոծում, այլև Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Ստեփանակերտը ռմբակոծվում էր հատկապես Կրկժան թաղամասից, որտեղի կրակակետը լռեցնելու համար կենտրոնացվեցին մի քանի կամավորական ջոկատներ, այդ թվում՝ Երևանյան ջոկատը: Հայ մարտիկները փոքրաթիվ ուժերով 1992 թ. հունվարի 19-20-ը լիովին ազատագրեցին Կրկժանը: Այդ հաղթանակը քաղաքական և հոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ:

1992 թ. հունվարին թեժ մարտեր տեղի ունեցան Քարինտակի մատույցներում: Շուշիի բարձունքից ադրբեջանցիները գրոհում էին, բայց ներքևում գտնվող հերոսական գյուղը մնում էր անառիկ: Այդ

---

[118] Տե՛ս Տ. Հակոբյան, նշվ աշխ., էջ 64:
[119] Տե՛ս նույն տեղում, էջ 57:

գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր ԼՂՀ Գեղարգույն խորհրդի պատգամավոր Վ. Առուշանյանը: Ադրբեջանի ազգային բանակն այդ ուղղությամբ նոր լայնածավալ հարձակում սկսեց 1992 թ. հունվարի 25-ի լույս 26-ի գիշերը: Երբ մինչև ատամները զինված 250 ադրբեջանցիներ զրահամեքենաներով մոտեցան բնակավայրի մատույցներին, գյուղի պաշտպանները ստիպված նահանջեցին առաջավոր դիրքերից[120]: Քարինտակին օգնության հասավ «Շոշի» ինքնապաշտպանական ջոկատը՝ Ս. Հայրյանի հրամանատարությամբ: Ի վերջո, ադրբեջանցիները 12-ժամյա արյունահեղ մարտում պարտություն կրեցին և մարտադաշտում թողնելով 74 սպանված ու 70 վիրավոր՝ նահանջեցին: Քարինտակում հայերի հաղթանակը ահ ու սարսափ առաջ բերեց ադրբեջանցիների շրջանում: Քարինտակը հետագայում կարևոր հենակետ դարձավ Շուշիի կրակակետերը լռեցնելու գործում:

ԼՂՀ պաշտպանական ուժերը, փետրվարի 11-ին և 12-ին անցնելով հարձակման, վնասազերծեցին Ստեփանակերտի մոտակա ադրբեջանական հենակետերը: Կրակակետերի ոչնչացմանը ակտիվորեն մասնակցեցին նաև Երևանի, Պռոշյան գյուղի և Աբովյանի ազատամարտիկները:

Թշնամին շարունակում էր ռմբակոծել Ստեփանակերտը հրթիռային կայանքներից: Միայն 1992 թ. փետրվարի 19-ին ԼՂՀ մայրաքաղաքի վրա արձակվեց 300 հրթիռ[121]:

Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր, որը փակում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները Երևանի, Պռոշյանի, Աբովյանի և ՀՀ այլ ջոկատների հետ միասին, 1992 թ. փետրվարի 15-ին դիրքավորվելով Խոջալուի արևմտյան մասի երկարությամբ, ադրբեջանական կողմից պահանջեցին թողնել և հեռանալ: Ի պատասխան՝ ադրբեջանցիները սկսեցին ռմբակոծել Ստեփանակերտը:

---

[120] Տե՛ս Ռ. Թաղևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից, XIX-XX դարեր, Երևան, 2012, էջ 232, 234, 236:

[121] Տե՛ս Հ. Խաչատրյան, Գ. Ղազարյան, Ս. Մարգարյան, Հաղթանակներն ինչպես եղել են, «Ազդանշ 44», Երևան, 2008, էջ 23-24:

1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական ջոկատները՝ Աշոտ Ղուլյանի (Բեկոր) գլխավորությամբ, հասան առաջավոր դիրքերին: Անակնկալի եկած հակառակորդը նահանջեց[122]:

Առանց զոհերի հայ ազատամարտիկներն առաջացան դեպի օդանավակայան: Փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով 8 զոհ և 20 վիրավոր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը և լռեցրին նրանց կրակակետերը: Խոջալուն ադրբեջանցիների առաջին խոշոր պարտությունն էր: Հաջորդը Շուշին էր: 1992 թ. ապրիլին Ստեփանակերտի մատույցներում տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ: Հակառակորդը, խոշոր համալրում ստանալով, զրահատեխնիկայի առաջակցությամբ ապրիլի 29-ին գրոհեց Ստեփանակերտի հարավարևմտյան դիրքերը, բայց հակահարված ստանալով՝ նահանջեց: Այդ օրերին՝ 1992 թ. ապրիլի 14-ին, չբացահայտված հանգամանքներում ողբերգական մահով կյանքից հեռացավ Արցախի Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը:

1992 թ. մայիսի սկզբին ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում օրհասական դրություն էր: Մայրաքաղաքը սովի եզրին էր: Քաղաքում չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Ստեփանակերտի և հարակից բնակավայրերի անվտանգության ապահովման համար Շուշին պետք է ազատագրվեր[123]:

Մեծ դեր ուներ ոգու ուժը: Ամբողջ հայ ժողովուրդը պատրաստ էր ազատագրելու Շուշին: Շուշիի ազատագրման գործողությունների ծրագիրը մշակվել էր խիստ գաղտնի պայմաններում: Ծրագիրը կազմելու և իրագործելու պատասխանատվությունը դրված էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) վրա: Նրա գերխնդիրն էր Շուշիի ազատագրման միջոցով ՀՀ-ի հետ ճանապարհային ուղիղ կապ ապահովելը:

Թշնամին ուներ 2300 զինյալ, իսկ գրոհող հայկական ուժերի թիվը հասնում էր 1700-ի: Շուշիի ազատագրման գործողություններին

---

[122] Տե՛ս Ս. Օհանյան, նշվ. աշխ., էջ 51:
[123] Տե՛ս նույն տեղում, էջ 54-55:

մասնակցում էր մոտ 60 ջոկատ, այդ թվում՝ Երևանյան ջոկատը: Հարձակումը կազմակերպվեց չորս ուղղությամբ[124]:

Մայիսի 8-ի գիշերը՝ 2-ն անց 30-ին, հրետանային կրակի ներքո բոլոր չորս ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը: Արդեն կեսօրին Շուշիի պաշտպանությունը ճեղքված էր հյուսիսից և արևելքից: Մայիսի 9-ի կեսօրին մարտերը մղվում էին միայն հենակենտրոնի մոտ: Թշնամին դիմեց խուճապահար փախուստի: Շուշիում կռիվների ժամանակ հակառակորդը տվեց 300 զոհ, 600-700 վիրավոր, 13 գերի: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց: Շուշիի ազատագրումով ու հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարևան բնակավայրերը շունչ առան:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ ամբողջական ու անշրջելի: Շուշիի ռազմական գործողությունները լուրջ մարտական մկրտություն էին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրությունում:

Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ, բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետագայում չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից:

Հայ ազատամարտիկները մայիսի 15-ին ազատագրեցին Լիսագորը, իսկ մայիսի 17-ին՝ Բերդաձորի ենթաշրջանը[125]:

Հետապնդելով խուճապահար հակառակորդին ու զարգացնելով ռազմական գործողությունները՝ ղարաբաղյան ուժերն առաջ շարժվեցին և մայիսի 18-ին մտան Լաչին: Դրանով իսկ ճեղքվեց շրջափակման օղակը, և Արցախը ցամաքային ճանապարհով միացավ Հայաստանի Հանրապետությանը: Լաչինի հումանիտար միջանցքով սկսվեց Արցախին սննդամթերքի, վառելանյութի, դեղորայքի և այլ

---

[124] Տե՛ս Ս. Հարությունյան, Վ. Չիթչյան, Հաղթական հրամանատարը, Երևան, 2012, էջ 33-34:
[125] Տե՛ս Վ. Բալայան, Արցախի պատմություն, Երևան 2002, էջ 368:

անհրաժեշտ ապրանքների առաքումը: Բացվեց «կյանքի ճանապարհը», և Արցախը հավերժ կապվեց մայր հայրենիքին: Այս հաղթանակները խթանեցին ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը:

1992 թ. ամռանը՝ հունիսի 12-ից, ադրբեջանական բանակը օտարերկրյա վարձկանների աջակցությամբ և թալանչիական ջոկատների ուղեկցությամբ լայնածավալ հարձակում սկսեց ԼՂՀ հյուսիսային մասում և գրավեց Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի շրջանի մի քանի գյուղեր: Ռազմակալված տարածքներում սկսվեցին հայ բնակչության կողոպուտը, խոշտանգումները, սպանությունները, բնակավայրերի ավերումները[126]: Այս շրջաններից մազապուրծ փախստականների նոր հոսք ուղղվեց դեպի Հայաստանի Հանրապետություն: Ադրբեջանցիների գրաված տարածքներում սկսվեց պարտիզանական շարժում: 1992 թ. օգոստոսի 13-ից ռազմական դրություն և զորահավաք հայտարարվեց ԼՂՀ ողջ տարածքում: Օգոստոսի 15-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, որին վերապահվեց ոչ միայն ռազմաքաղաքական, այլ նաև տնտեսական իշխանությունը[127]: Շուտով սկսեց կարգավորվել անկայուն վիճակը: Ձեռնարկված միջոցառումները շուտով տվեցին դրական արդյունքներ: Վերամիավորելով ուժերը՝ ԼՂՀ ինքնապաշտպանական բանակը կարողացավ կանգնեցնել թշնամու բազմահազարանոց ուժերը Կիչան գյուղի ռազմական բնագծում և անցնել կտրուկ հակահարձակման: 1992 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության մի շարք ջոկատների (այդ թվում՝ Երևանյան, Պռոշյանի, Արմավիրի, Արագածոտնի, Սյունիքի) և արցախյան ինքնապաշտպանական ուժերի հետ համատեղ ազատագրվեցին Ասկերանի և Մարտունու մի շարք գյուղեր[128]: 1993 թ. ապրիլին հայկական զորքերն ազատագրեցին ռազմավարական նշանակություն ունեցող

---

[126] Տե՛ս Զ. Բալայան, Դժոխք և դրախտ, Երևան, 1995, էջ 134:
[127] Տե՛ս Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը 1917-200, գիրք Գ, 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 412-413:
[128] Տե՛ս Ս. Օհանյան, նշվ. աշխ., էջ 119-121:

Քելբաջարի (Քարվաճառ) շրջանը, իսկ մայիս-հունիս ամիսներին՝ Մարտակերտի շրջանի գրավված տարածքները: Այստեղ մյուսների հետ քաջագործություններով աչքի ընկավ Երևանյան ջոկատը: Ադրբեջանական Լաչին-Քելբաջար խմբավորման ջախջախման շնորհիվ ապահովվեց անվտանգ երթևեկություն «կյանքի ճանապարհով»: Հունիսի 12-ին Աղդամի ուղղությամբ Մարզիլոյի մարտերում զոհվեց Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս, փոխգնդապետ Մոնթե (Ավո) Մելքոնյանը[129]:

1993 թ. առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլը Մարտակերտ քաղաքի ազատագրումն էր: 1993 թ. հուլիսի 23-ին արցախյան ուժերին, այդ թվում՝ երևանյան ազատամարտիկներին, հաջողվեց թշնամուն պարտության մատնել Աղդամի մոտ: Աղդամի խմբավորման ջախջախումից հետո թշնամին ուժ ու միջոցներ կուտակեց Ֆիզուլիի (Դիզակ) և Ջաբրայիլի շրջաններում: Հակահարձակման անցնելով՝ ԼՂՀ ԻՊՈՒ մի շարք ստորաբաժանումները, որոնց թվում՝ նաև 5-րդ կամավորական բրիգադը, որի կազմում էր Երևանյան ջոկատը (հրամանատար, այժմ՝ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյան) ջախջախեցին թշնամուն և ազատագրեցին Ֆիզուլիի (օգոստոսի 22), Ջաբրայիլի (օգոստոսի 23), Կուբաթլիի (օգոստոսի 31) և Զանգելանի (Կովսական) (նոյեմբերի 1) շրջանները[130]: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 24-ին մի քանի ուղղություններով սկսված հարձակման արդյունքում ոչնչացվեցին Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերը, և ազատագրվեց Հորադիզի շրջանը: Ադրբեջանական ստորաբաժանումները խուճապահար փախչում էին ռազմական գործողությունների շրջաններից՝ մեծ թվով զոհեր տալով և ռազմադաշտում թողնելով բազմաքանակ տեխնիկա: Ազատագրական այդ հաղթական երթի ժամանակ հերոսաբար զոհվեցին հայ քաջորդիներ Լեոնիդ Ազգալդյանը, Սամվել Շահմուրադյանը, Յուրա Հովհաննիսյանը, Աշոտ Ղուլյանը (Բեկոր), Վարդան Բախշյանը, Մոնթե Մելքոնյանը (Ավո), Շահեն Մեղրյանը և շատ ու-

[129] Տե՛ս Ս. Օհանյան, նշվ. աշխ., էջ 135:
[130] Տե՛ս նույն տեղում, էջ 126-128, 139, 143:

րիշներ[131]: ԼՂՀ ռազմական հաջողությունները Ադրբեջանում հանգեցրին հերթական իշխանափոխության: Ադրբեջանի նախագահ դարձավ Հ. Ալիևը: Նա սաստկացրեց հակահայկական քարոզչությունը, արտասահմանից նոր վարձկաններ հավաքագրեց: 1993 թ. դեկտեմբերի կեսերին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ փորձելով վերադարձնել կորցրած տարածքները, բեկում մտցնել պատերազմում: Ադրբեջանական բանակը համալրվեց օտարերկրյա ժամանակակից տեխնիկայով: Նրանց բանակի շարքերում կռվում էին աֆղան, թուրք, ուկրաինացի, չեչեն և հյուսիսկովկասցի այլ վարձկաններ:

Սկսած 1993 թ. դեկտեմբերի 15-ից՝ ադրբեջանական զորքերը հարձակումներ գործեցին Ֆիզուլիի, Մարտունիի, Աղդամի, Մարտակերտի, Քելբաջարի ուղղություններով: Խախտելով Ռուսաստանի միջնորդությամբ մինչ այդ հաստատված տասնօրյա երկկողմ զինադադարը՝ հակառակորդը մեկօրյա հրետանային նախապատրաստությունից հետո՝ դեկտեմբերի 22-ին, տանկերի ՀՄՄ-ների աջակցությամբ, 30 կմ ճակատային գծով վերսկսեց հարձակումը Ֆիզուլիի շրջանի ուղղությամբ[132]:

Ազատատենչ արցախցիները կարողացան կասեցնել հակառակորդի բոլոր հարձակումները և առանձին վայրերում հակահարձակման անցնելով՝ հսկողության տակ վերցնել նոր տարածքներ: Ավելի քան մեկամսյա համառ մարտերի ընթացքում հակառակորդը չկարողացավ որևէ հաջողության հասնել:

1994 թ. փետրվարի 18-ին Քելբաջարի (Քարավաճառ) շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումով, որտեղ մարտական գործողություններն ընթանում էին 3000 մ և ավելի բարձր լեռնային շրջաններում 30^0 սառնամանիքի պայմաններում, ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող պաշտպանական ուժերի թիկունքը: Աղդամի շրջանի և Միրբաշիրի (Թարթառի) ուղղությամբ ձեռնարկված լայնածավալ գործողությունները լիակատար խուճապի մատնեցին ադրբեջանցի-

---

[131] Տե՛ս Գ. Մարտիկյան, Սա Հայաստան է և վերջ. Լեոնիդ Ազգալդյան, Երևան, 2012, էջ 111, Ս. Օհանյան, նշվ. աշխ., էջ 135:
[132] Տե՛ս նույն տեղում, էջ 497, 499:

ներին: Ազատագրվեցին Մարտակերտի և Ասկերանի շրջանների բնակավայրերը: Շուրջ երեքամսյա թեժ մարտերի ընթացքում թշնամին կորցրեց 5 հազարից ավելի զինվոր և սպա, 72 միավոր տեխնիկա[133]:

Չկարողանալով ռազմական ուժի օգնությամբ իր օգտին լուծել դարաբաղյան հիմնահարցը՝ հետագա խայտառակությունից խուսափելու համար ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թ. մայիսին հրադադար խնդրել: Մայիսի 5-ին Բիշքեկում Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ միջնորդական խորհրդաժողովի միջնորդությամբ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության խորհրդարանների ղեկավարները (Յ. Մամեդով, Կ. Բաբուրյան և Բ. Արարքցյան) ստորագրեցին արձանագրություն՝ կրակի դադարեցման վերաբերյալ: Բիշքեկյան արձանագրությանը Ադրբեջանը միացել է ավելի ուշ՝ մայիսի 8-ին[134]: ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովի միջնորդական ջանքերով ՀՀ, ԱՀ պաշտպանության նախարարները (Ս. Սարգսյան, Մ. Մամեդով և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայան) մայիսի 11-ին համաձայնագիր ստորագրեցին՝ կրակը դադարեցնելու վերաբերյալ[135]: 1994 թ. մայիսի 12-ին համաձայնագիրը ուժի մեջ մտավ: Հաջորդ օրը ադրբեջանական բանակն այն խախտեց: Վերջապես մայիսի 16-ին Պավել Գրաչովի նախաձեռնությամբ ու առաջարկությամբ ՀՀ պետնախարար Վ. Սարգսյանը, ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարներն ու ԼՂՀ ՊԲ հրամանատարը Մոսկվայում համաձայնության եկան մայիսի 17:00 ժամից դադարեցնել կրակը, որին Ադրբեջանը մեկ ամիս անց տվեց իր համաձայնությունը[136]:

Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որը դեռևս շարունակվում է:

---

[133] Տե՛ս Վ. Բալայան, նշվ. աշխ., էջ 403-404:
[134] Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, էջ 28:
[135] Տե՛ս նույն տեղում:
[136] Տե՛ս նույն տեղում:

ԼՂՀ նախագահի հրամանագրով 1996 թ. սահմանվեց պետական բարձրագույն պարգև՝ «Արցախի հերոսի» կոչում: Հերոսներին հանձնվեց «Ոսկե արծիվ» շքանշանը: Այդ կոչմանը արժանացան՝ 1) Սամվել Բաբայանը, 2) Քրիստափոր Իվանյանը, 3) Զորի Բալայանը, 4) Վիտալի Բալասանյանը, 5) Սամվել Կարապետյանը, 6) Ժորա Գասպարյանը, 7) Մանվել Գրիգորյանը, 8) Մովսես Հակոբյանը, 9) Արշավիր Ղարամյանը, 10) Պետրոս Ղևոնդյանը (հետմահու), 11) Աշոտ Ղուլյանը (հետմահու), 12) Մոնթե Մելքոնյանը (հետմահու), 13) Յուրի Պողոսյանը (հետմահու), 14) Վահագն Վարդևանյանը (հետմահու), 15) Շահեն Մեղրյանը (հետմահու), 16) Ռոբերտ Քոչարյանը, 17) Սերժ Սարգսյանը, 18) Վազգեն Սարգսյանը, 19) Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս), 20) Սեյրան Օհանյանը, 21) Արկադի Ղուկասյանը, 22) արքեպիսկոպոս Պարգև Մարտիրոսյանը, 23) Ռոբերտ Աբաջյանը (հետմահու)[137]:

1996 թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ նախագահի հրամանագրով 7 ազատամարտիկների հետմահու շնորհվեց «Հայաստանի ազգային հերոսի» կոչում: Նրանց հարազատներին հանձնվեց «Հայրենիքի» շքանշան և ՀՀ նախագահի պատվոգիր: «Հայաստանի ազգային հերոսի» կոչման արժանացան Ջիվան Աբրահամյանը, Գեղազնիկ Միքայելյանը, Վիտյա Այվազյանը, Մովսես Գորգիսյանը, Թաքուլ Կրպեյանը, Մոնթե Մելքոնյանը և Յուրի Պողոսյանը: ՀՀ Ազգային հերոսի կոչման են արժանացել նաև Շառլ Ազնավուրը, Վիկտոր Համբարձումյանը, Վազգեն Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, Նիկոլայ Ռիժկովը, Կարեն Դեմիրճյանը, Քըրք Քրքորյանը, Ալեք Մանուկյանը, Էդուարդ Էռնեկյանը և Հովհաննես Չեքիջյանը:

ԼՂՀ կառավարության որոշմամբ ինքնապաշտպանական ուժերի 197 մարտիկներ ու սպաներ հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության և արիության համար պարգևատրվեցին «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով, իսկ 705 մարտիկներ՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի

[137] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11, 12 մայիսի, Երևան, 2016:

շքանշանով: Շուրջ 4500 ազատամարտիկներ պարգևատրվել են «ՀՀ արիության», «ԼՂՀ արիության համար», «Շուշիի ազատագրման համար» և այլ մեդալներով[138]:

Պատերազմում զոհվեց շուրջ 6500 ազատամարտիկ[139]:

Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի բոլոր զոհվածներին ու մասնակիցներին:

Երևանի քաղաքային խորհրդի որոշումներով Արցախյան ազատամարտին ակտիվ մասնակցության, հայրենիքի պաշտպանությանը մատուցած մեծ ծառայությունների համար հայոց բանակի մի քանի զորահրամանատարներ և մասնակիցներ արժանացել են «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման:

1998 թ. հոկտեմբերին նման կոչման է արժանացել ՀՀ բանակի գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կամանդոս), 2001 թ. հունիսին՝ գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը, 2001 թ. սեպտեմբերին՝ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը[140] և ուրիշներ: Երևանի քաղաքային մի շարք որոշումներով մայրաքաղաք մի շարք փողոցներ, պուրակներ, հանրակրթական դպրոցներ անվանակոչվել են ազատամարտիկների անուններով: Երևանի քաղաքային խորհրդի որոշումներով 1998 թ. մայրաքաղաքի թիվ 93 դպրոցը անվանակոչվեց արցախյան ազատամարտիկ Աշոտ Մանուկյանի անունով, 2000 թ. Նոր-Նորքի մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործական կենտրոնը անվանակոչվեց Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի անունով: Նույն թվականին Երևանի Ս. Ալավերդյանի անվան թիվ 90 հանրակրթական դպրոցը անվանակոչվեց Մալաթիա-Սեբաստիա համայնքի ղեկավար, ազատամարտիկ Վահան Զատիկյանի անվամբ: 2015 թ. սեպտեմբերին Երևանի Նոր-Նորքի վարչական շրջանում բացվեց ազատամարտիկ, ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգին և այլն[141]: Դեռևս 1994 թ. մայրաքաղաքում

---

[138] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11, 12 մայիսի, Երևան, 2016:
[139] Տե՛ս նույն տեղում:
[140] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 2, գ. 3, թ. 62, 104, 130
[141] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 1, գ. 1, թ. 257:

Երևանում բացվում է հայ ազատամարտիկների փառքի թանգարանի, իսկ 1998 թ. հունիսին արցախյան պատերազմում զոհված մայրաքաղաքի աջափնյակցի ազատամարտիկներին նվիրված հուշարձանը և այլն[142]:

Տանուլ տալով պատերազմը՝ Ադրբեջանը, 1990-ական թթ. կեսերից սկսած, հատկապես 2000-ական թթ. սկզբներին, չկարողանալով շոշափելի հաջողությունների հասնել նաև դիվանագիտական ասպարեզում, որդեգրեց պատերազմի նոր տրամաբանություն՝ դիպուկահարների և դիրքային պատերազմ, դիվերսիոն հարձակումներ, գյուղերի և առհասարակ խաղաղ բնակչության թիրախավորում և այլն: Թեև նմանատիպ գործողությունները մշտապես տեղի են ունեցել հետհրադադարյան ռազմաճակատային պայմաններում, բայց, այնուամենայնիվ, 2014-2016 թթ. թե՛ քանակական և թե՛ նպատակադրումների առումներով դրանք ձեռք բերեցին որակապես նոր բովանդակություն: Թշնամու դիվերսիոն հարձակումները ակտիվացան 2014 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը: Այդ օրը թշնամու դիվերսիոն խմբերը կեսգիշերն անց միաժամանակ հարձակում ձեռնարկեցին Կորգանի և Ջրաբերդի դիրքերի ուղղությամբ: Մարտակերտում կռիվը տևեց ամբողջ գիշեր: Թշնամու հետ անհավասար մարտում մինչև վերջ կռվեց ու քաջի մահով զոհվեց կրտսեր սերժանտ, ջոկի հրամանատար ծնունդով Երևանցի Արմեն Հովհաննիսյանը[143]: Նա ծնվել է 1994 թ. հունիսի 30-ին Երևանում, ավարտել է մայրաքաղաքի Գրիգոր Բաղյանի անվան թիվ 141 դպրոցը: Ընթշամարտով զբաղվելուց հետո նա սկսել է հետաքրքրվել արվեստով, հատկապես նկարչությամբ և քանդակագործությամբ: Շուրջ 3 տարի սովորել է Մշակույթի պետական քոլեջի կինոսարքավորումների տեսատեխնիկայի բաժնում: Մեծ ցանկություն ուներ դառնալ օպերատոր: Հանձնելով վերջին քննությունները նա զորակոչվել է բանակ և ծառայության անցել Արցախում՝ Մարտակերտի շրջանում: Հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը՝ ժամը 23:50-ից մինչև 00:15-ի սահմանները, հայ-ադրբեջանական

---

[142] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 135:

[143] Տե՛ս Է. Էլբակյան, Հայ ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները, Երևան, 2015, էջ 58:

հրաղաղարի գծի հյուսիսարևելյան (Ջրաբերդի) և հարավարևելյան (Կորգանի) ուղղություններում արձանագրվեցին թշնամու դիվերսիոն խմբերի ներթափանցման միաժամանակյա փորձեր: Առաջինը նկատելով թշնամու առաջխաղացումը՝ Արմենը տեղյակ է պահել դասակի հրամանատարին, ապա չի թողել զինվորներն իրենից առաջ ընկնել: Նա մարտը շարունակել է մի քանի անգամ ծանր վիրավորվելուց հետո: Նա կռվել, կրակել է մինչև նռնականետի պայթյունից մահացու վիրավորվելը: Ընդհանուր փոխհրաձգությունը տևել է 1 ժամ, ամենաուժեղ պայքարը դիվերսիան հետ մղելու ժամանակ տևել է 25 րոպե, որի ամբողջ ժամանակ Արմենը վիրավոր կռվել է[144]: ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, ռազմական փորձագետ Դավիթ Ջամալյանը, անդրադառնալով ադրբեջանցիների ձախողված դիվերսիային և Արմեն Հովհաննիսյանի ցուցադրված խիզախությանը, գրում է. «Այստեղ հարկ է հատուկ շեշտել, որ կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը զոհվել է մարտ վարելիս, ընկել, հիրավի, հերոսի մահով… Հենց նրա այդ զգոնությունն է եղել մեր դիրքապահների հաջողության «գործի կեսը»[145]: Նա հետմահու արժանացավ «Հայրենիքին մատուցած ծառության համար» առաջին աստիճանի մեդալի (ՀՀ) և «Արիության համար» (ԼՂՀ) մեդալի: Հայկական կողմի պատասխանի արդյունքում, թշնամին այդ մարտում կրեց 8 մարտական կորուստ:

Հատկապես թեժ էր հուլիս-օգոստոս ամիսներին ծավալված թշնամու դիվերսիան հարձակումը նորից Մարտակերտի ուղղությամբ, որտեղ զոհվեց ժամկետային զինծառայող Խաչատուր Բաղդասարյանը: 2014 թ. հուլիսի 31-ին առավոտյան դարանակալված թշնամին հարձակվեց հայ դիրքապահների վրա՝ նպատակ ունենալով գերեվարել նրանց: Անզեն ձեռնամարտի բռնկվելով թշնամու հետ՝ կռվեցին և քաջի մահով ընկան սերժանտ Արարատ Խանոյանը և շարքային Ազատ Ասոյանը, իսկ շարքային Նորայր Քամալյանը ծանր վիրավորվեց, նույն շրջանում հայրենիքի պաշտպանության

---

[144] Տե՛ս Է. Էլբակյան, նշվ. աշխ., 2015, էջ 58:

[145] Դ. Ջամալյան, «Խրամատային ճշմարտություն», «Հայաստանի Հանրապետություն», 8 փետրվարի 2014, էջ 3:

գործում ցուցաբերած անձնական խիզախության, ծառայողական անձնազոհություն կատարելու համար: Արարատ Խանոյանը և շարքային Ազատ Ասոյանը հետմահու արժանացան «Մարտական ծառայության համար» (ՀՀ) և «Երախտագիտության» (ԼՂՀ) մեդալների: 2015 թ. փետրվարին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվեց Ազատ Ասոյանի անունով:

2014 թ. օգոստոսին Հայկական զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումը պատասխան պատժիչ գործողության դիմեց՝ թշնամու թիկունքում ոչնչացնելով 8 զինծայողի: 2014 թ. օգոստոսի 2-ին թշնամու ուժեղացված դիվերսիոն խումբը հարձակվեց այն նույն դիրքի վրա, որի ուղղությամբ հարձակվել էր հուլիսի 26-ին: Հայ դիրքապահների՝ Զորիկ Գևորգյանի և Սարգիս Մովսիսյանի կյանքի գնով, նրանց ցուցաբերած անօրինակ քաջության շնորհիվ հաջողվեց հանկարծակիի բերել թշնամուն, որը, մեծ կորուստներ տալով, նահանջեց: Անձնական խիղախության և նվիրումի, ծառայողական պարտքը անձնազոհաբար կատարելու համար ավագ լեյտենանտ Զորիկ Գևորգյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով (ՀՀ) և «Արիության համար» մեդալով (ԼՂՀ), իսկ սերժանտ Սարգիս Մովսիսյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով (ՀՀ և ԼՂՀ): Օգոստոսի 2-ից հետո ևս թշնամին նորից փորձեր արեց հասնելու հաջողության, սակայն չկարողացավ:

2015 թ. նույնպես թշնամին շարունակում էր դիվերսիոն հարձակումները: Այդ նույն տարում շարունակվում էին նախորդ տարում իրենց քաջագործություններով աչքի ընկած նորօրյա մեր հերոսների օրինակով հայ դիրքապահների նոր հերոսական սխրանքները: Նույն տարում թշնամու դեմ խիզախ մարտեր վարելով՝ փառքով անմահացան, քաջի մահով ընկան հայրենիքի պաշտպաններ Վարդան Մկրտչյանը, Արշակ Հարությունյանը, Էդուարդ Հայրապետյանը, Հակոբ Խաչատրյանը, Սամվել Հակոբյանը: Նրանք՝ մեր նորօրյա 10 հերոսները, հետմահու արժանացան ՀՀ և ԼՂՀ նախագահների «Արիության համար», «Հայրենիքին մատուցած ծառայության համար» մեդալների և շքանշանների՝ հերոսի իրենց անունը փառքով

գրելով հայոց նորօրյա պատմության էջերում: Սակայն անողոք թշնամին 2016 թ. չբավարարվեց դիվերսիոն հարձակումներով կամ դիպուկահարների կրակոցներով, այլ որոշեց հարցը լուծել ռազմական ճանապարհով՝ խախտելով զինադադարը[146]:

Սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ հայտնված մայրաքաղաքն իր ունեցած բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր Արցախին Ադրբեջանի դեմ մղվող ազատագրական պայքարում: Դա դրսևորվեց նաև 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին: Մեծաքանակ ուժերով ու ռազմական տեխնիկայով մինչև ատամները զինված ադրբեջանական բանակը 2016 թ. ապրիլի 2-ին անցավ հարձակման Արցախյան ճակատում:

Ապրիլի 4-ին թշնամին սկսեց կիրառել ծանր հրետանային համակարգեր, ընդլայնել հարվածային անօդաչու թռչող սարքերի և այլ գերժամանակակից տեխնիկայի օգտագործումը: ՊԲ զինվորների գրագետ, հմուտ ու նպատակասլաց գործողությունների շնորհիվ օրվա ընթացքում ոչնչացվեցին թշնամու 11 տանկ, 4 հարվածային անօդաչու թռչող սարքեր, 1 ՀՄՄ, 2 ավտոտեխնիկա և մեծաթիվ կենդանի ուժ[147]:

Օր օրի մեծացնելով կիրառվող զինատեսակների տրամաչափը՝ ապրիլի 4-ի լույս 5-ի գիշերը թշնամին կիրառեց «Սմերչ» ռեակտիվ համակարգ: Խաղաղ բնակավայրերի ռմբակոծումը թշնամուն ոչինչ չտվեց, քանզի ԼՂՀ քաղաքացիական պաշտպանության գործուն համակարգը թույլ տվեց նվազագույն կորուստներով դուրս գալ նաև այս փորձությունից:

Պատերազմի հենց սկզբում օդուժի, ռեակտիվ հրետանու և ծանր զրահատեխնիկայի օգտագործմամբ բացահայտ հարձակողական գործողությունների դիմած մեր ոխերիմ թշնամու դեմ մարտերում հայ զինվորների սխրագործությունները համատարած էին ու զանգվածային: Հայրենիքի մերօրյա հերոս պաշտպանները՝ քաջարի դիրքապահները, ինչպես միշտ, իրենց սպաների հրամանատարությամբ

---

[146] Տե՛ս Է. Էլբակյան, նշվ. աշխ., էջ 146-179:
[147] Տե՛ս «Հայ զինվոր», 13-19 ապրիլի, Երևան, 2016, էջ 4:

սառնասրտորեն դիմակայեցին հակառակորդի մինչև ատամները զինված հատուկ ջոկատայիններին և կանոնավոր զորամասերին:

Ծավալվեցին արյունահեղ մարտեր ամեն մի թիզ հողի համար: Թշնամին հույսը դնելով վարձու բանակի հատուկ պատրաստություն անցած հարյուրավոր թուրք ասկյարների վրա՝ անակնկալի եկավ, հանդիպելով 18-20 տարեկան հայ զինվորների համառ դիմադրությանը: Հայ զինծառայողներն իրենց հմտավարժ սպաների հրամանատարությամբ արիաբար կանգնեցին մինչև վերջ և հանդես բերեցին հերոսության անկրկնելի օրինակներ:

Մինչ ռազմաճակատի ողջ երկայնքով մարտական գործողությունները շարունակվում էին, մեր հայրենիքի տարբեր շրջաններից, հատկապես մայրաքաղաք Երևանից, հազարավոր ազատամարտիկներ, երկրապահներ շտապում էին առաջնագիծ՝ անվարան կանգնելու իրենց կրտսեր ընկերների և որդիների կողքին՝ գիտակցելով, որ անհրաժեշտ է զարգացնել ձեռք բերած հաջողությունները:

Ապրիլի 3-ին հակառակորդի գերազանցող ուժերի առաջին հարվածն իրենց վրա վերցրին հյուսիսարևելյան ուղղության հրաձգային վաշտերից մեկի քաջարի մարտիկները՝ աննկուն հրամանատար, մայրաքաղաք Երևանում ծնված-մեծացած Արմենակ Ուրֆանյանի գլխավորությամբ: Քանիցս զավթիչները համառ փորձեր արեցին տիրելու մեր դիրքերին և ամեն անգամ հետ շպրտվեցին՝ տալով բազմաթիվ զոհեր ու վիրավորներ: Կատաղի մարտերի ընթացքում կապիտան Ա. Ուրֆանյանը նռնականետի դիպուկ կրակոցով շարքից հանեց հակառակորդի մեկ տանկ, ոչնչացրեց մեկ տասնյակից ավելի զինյալների: Տեսնելով, որ ուժերն անհավասար են, և զինամթերքը սպառվում է, վաշտի հրամանատարն ընդունեց երկրորդ խրամատ հետ քաշվելու, այնտեղ վերախմբավորվելու և հակագրոհի անցնելու որոշում: Կրակով ապահովելով իր զինվորների տեղաշարժը՝ կապիտան Ա. Ուրֆանյանը մինչև վերջին փամփուշտը կռվեց, ապա մարտիրոսվեց հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում ծավալված խրամատային մարտում, հակառակորդի հրետանային արկի պայթյունից: Հերոս հրամանատարը հետմահու պարգևատրվել է ՀՀ և ԱՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշաններ-

ռով[148], իսկ 2020 թ. օգոստոսի 29-ին Ա. Ուրֆանյանին շնորհվել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչումը:

Ա. Ուրֆանյանից հետո այդ նույն դիրքերում իր անձնուրաց հերոսությամբ աչքի ընկավ երևանաբնակ 19-ամյա կրտսեր սերժանտ Ռոբերտ Աբաջյանը, որը ծառայում էր Մարտակերտի զորամասում[149]: Ավարտելով մայրաքաղաքի Զեյթուն թաղամասի հիմնական դպրոցներից մեկը՝ սովորել է Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջում, ստացել է ատամնատեխնիկի մասնագիտություն, իսկ բանակ զորակոչվելուց առաջ ընդունվել է բժշկական համալսարան: Բուհից զորակոչվել էր հայոց ազգային բանակ ծառայության: Նա ապրիլի 2-ին հակառակորդի հետ կռիվ տվեց մինչև վերջին փամփուշտը: Անմիջական շփման պայմաններում, խրամատային մարտում նա չհանձնվեց ու չնահանջեց, իսկ վերջում իր մոտ եղած միակ նռնակով պայթեցրեց իրեն և հակառակորդի մոտ տասնյակ զինվորների[150]: Իր այդ արարքով նա հնարավորություն ընձեռեց հայ զինվորներին թիկունքային դիրքերից գրոհելու հակառակորդի վրա և ազատագրելու առաջապահ դիրքերը, որի համար հայ հերոս հայորդին հետմահու արժանացավ «Արցախի հերոսի» ԼՂՀ բարձրագույն կոչմանը և պարգևատրվեց «Ոսկե արծիվ» շքանշանով[151]:

Հյուսիսային ուղղությունում ևս դաժան մարտեր էին: Օգտվելով քանակական բացարձակ գերակշռությունից՝ ոսոխը տանկերով փորձ արեց ճեղքել Թալիշ գյուղի պաշտպանական դիրքերը: Թշնամու հաշվարկները, որպես կանոն, սխալ էին, քանի որ մեր սպաներն ու զինվորները աննկուն դիմադրություն ցույց տվեցին: Ուստի պատահական չէ, որ Թալիշի մոտակա մարտական դիրքերը վերածվեցին հակառակորդի գերեզմանոցի, խրամատները ծածկվեցին տասնյակ դիակներով: Անօրինակ հերոսությամբ աչքի ընկավ մարտա-

---

[148] Տե՛ս Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, 2018, էջ 104-105:
[149] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 105:
[150] Տե՛ս «Հայկական ժամանակ», 10 մայիսի, 2016:
[151] Տե՛ս նույն տեղում, էջ 1, 3:

կան դիրքերից մեկի անձնակազմը, որը մինչև վերջին փամփուշտը մարտնչեց հակառակորդի գերազանցող ուժերի դեմ: Մեր տղաներին օգնության հասած հատուկ նշանակության վաշտի հրամատար, մայոր Արարատ Բաղդասարյանը նռնականետի դիպուկ կրակոցներով ոչնչացրեց հակառակորդի երկու տանկ, մեկ տանկ էլ շարքից հանվեց մայոր Արմեն Սանթրյանի հրամանատարությամբ գործող հրետանային դիվիզիոնի կապիտան Վասիլ Ծառուկյանի մարտկոցի անձնակազմի դիպուկ համազարկով: Թշնամու հատուկ ջոկատայինների դարանակալ հարձակման արդյունքում ապրիլի 2-ին 31 տարեկան հասակում քաջի մահով մարտիրոսվեց ծագումով երևանցի մայոր Հայկ Թորոյանը, որը հետմահու պարգևատրվեց ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

Հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում ծավալված խրամատային մարտերում առանձնակի խիզախությամբ աչքի ընկան և զոհվեցին երևանցիներ, շարքայիններ Բագրատ Ալեքսանյանը, Տիգրան Բերակչյանը, Գրիգոր Հարությունյանը, շարքային պայմանագրային Հրաչյա Մուրադյանը, ազատամարտիկ Սուրեն Ճարտանյանը, սերժանտ Ադամ Սահակյանը և ուրիշներ[152]: Քաջի մահով ընկան տանկիստ ավագ լեյտենանտ Բենիամին (Մոնթե) Եղոյանը, որն արցախյան պատերազմի քաջարի հրամանատար, մարտերում մեկ ոտքը կորցրած գնդապետ Ներսես Եղոյանի 24-ամյա որդին էր[153]: Նրանք բոլորն էլ հետմահու պարգևատրվեցին ՀՀ «Արիության» և ԱՀ «Մարտական ծառայության» մեդալներով: Աղրբեջանի հետ ԼՂՀ շփման գծում մարտական գործողությունների ժամանակ հակառակորդի հատուկ ջոկատայինների դեմ ծավալված մերձամարտում հերոսի մահով զոհվեց երևանցի հետախույզ-գնդացրորդ, պայմանագրային զինծառայող, շարքային Սասուն Մկրտչյանը[154]:

Պաշտպանական բանակի հերոսամարտերի շնորհիվ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման, հայ հասա-

---

[152] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 118:
[153] Տե՛ս «Հայկական ժամանակ», 10 մայիսի, 2016:
[154] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 ապրիլի, 2016, էջ 2:

ռակության համախմբման, հակառակորդը հուժկու հակահարված ստացավ և պարտադրված գնաց զինադադարի. ապրիլի 5-ին՝ ժամը 12:00-ին, առաջարկվեց հրադադար ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Սակայն դրանից հետո ևս ադրբեջանական կողմը պարբերաբար խախտում է հրադադարի ռեժիմը, կրակում է նաև խոշոր տրամաչափի զենքերից, գործի է դնում հետախուզական դիվերսիոն խմբեր: Փաստորեն՝ Բաքվի կառավարողների ծրագրած կայծակնային պատերազմը խայտառակ ավարտ ունեցավ:

Ապրիլի 2-5-ը ընկած ժամանակահատվածում հայրենիքի սահմանների պաշտպանության գործում դրսևորած բացառիկ խիզախության և անձնվիրական արիության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը կատարելիս ցուցաբերած քաջության անձնական խիզախության և անձնվիրության համար ՀՀ և Արցախի նախագահների կողմից պետական պարգևներով պարգևատրվեցին ութ տասնյակից ավելի զինծառայողներ[155]:

Ինչպես արցախյան պատերազմի ծանր տարիներին էր, ապրիլյան իրադարձությունների առաջին օրվանից, առնելով թշնամու սանձազերծված հարձակումների մասին լուրը, ողջ հայությունը, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանի բնակչությունը, շտապեցին մեկնել տեղակայման վայրեր: Հարյուրավոր վետերաններ և երիտասարդներ մայրաքաղաքում դիմեցին մարտական գործողությունների դաշտ մեկնելու խնդրանքով: Բազմաթիվ կամավորական խմբեր ժամանեցին Հայաստանի տարբեր վայրերից և հատկապես մայրաքաղաք Երևանից ու հայրենիքի կոչով հայտնվեցին առաջնագծում՝ իրենց որդիների և եղբայրների կողքին: Ոչ ոք խուճապի չենթարկվեց և համախմբելով ուժերը՝ ջախջախիչ հարված հասցրեց թշնամուն: Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին ամբողջ հայ ժողովուրդը, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանի բնակչությունը, դրսևորեց իր միասնությունն ու համախմբվածությունը. մի բռունցք դարձած՝ ինչով կարող էր, աջակցում էր մարտնչող Արցախին: Մարտերի օրերին չէր դադարում Երևանից մեկնած կամավորական ջոկատների հոսքը: Նման

[155] Տե՛ս «Ազգ», 29 ապրիլի, 2016, էջ 1, 7:

ջոկատներ ստեղծվեցին ոչ միայն ԵՊՀ-ում, այլև մայրաքաղաքում գտնվող մյուս բուհերում, ուսումնական հաստատություններում, հիմնարկ ձեռնարկություններում[156]:

Ապրիլյան պատերազմի օրերին ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախաձեռնությամբ ձևավորված Մարտական պատրաստության ակումբում գրանցվեց ավելի քան 200 ուսանող կամավորական: Ակումբի անդամները և նրանց շարքերը համալրած համալսարանականները ձևավորեցին ջոկատ և մեկնեցին Արցախ՝ հայրենիքի մերօրյա պաշտպաններին զորավիգ լինելու և մեր իսկ արյամբ սրբագործված հողը հակառակորդից պահելու համար: Ջոկատի անդամները աչքի ընկան իրենց կազմակերպվածությամբ, կարգապահությամբ և զինվորական պարտականությունների ճշգրիտ կատարմամբ, որն ըստ արժանվույն գնահատվեց զորամասի հրամանատարության և աշխարհազորայինների կողմից:

Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին և ռազմական բախումներից տուժած ազգաբնակչությանը համալսարանի ուսանողները կազմակերպեցին օգնություն՝ առաջին անհրաժեշտության իրեր, դեղորայք, սննդամթերք, տնտեսական ապրանքներ հասցնելով նրանց:

ԵՊՀ ռեկտորատի արտահերթ նիստում կայացվեց որոշում՝ բացելու առանձին հաշվեհամար, որպեսզի աշխատակիցները և ուսանողները կամավոր հիմունքներով դրամական օգնություն ցուցաբերեն Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին և սահմանամերձ գոտիներում ապրող մեր ազգաբնակչությանը: Հավաքվեց 8 մլն դրամ, որով գնվեցին առաջին անհրաժեշտության իրեր, իսկ գումարի մյուս մասը ԵՊՀ-ի տրամադրած 20 մլն դրամ գումարի հետ փոխանցվեց ԼՂՀ կառավարության կողմից բացված հատուկ հաշվեհամարին[157]:

---

[156] Մանրամասն տե՛ս Է. Մինասյան, Ա. Վարդանյան, Հայ երկրապահ կամավորական ջոկատները Արցախյան ազատագրական պայքարում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, 2015, էջ 131-142:

[157] Տե՛ս Փ. Ենգոյան, Է. Մինասյան, Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), Երևան, 2019, էջ 560-561:

ԵՊՀ ուսանողական բոլոր կառույցները կազմակերպեցին տարաբնույթ միջոցառումներ: ԵՊՀ մշակույթի կենտրոնը ապրիլի 29-ին իր երգի-պարի և «Համալսարանական» թատրոն ստուդիայի սաների ուժերով ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական հոսպիտալում կազմակերպեց համերգ՝ ի զորակցություն Արցախում վիրավորված զինվորների:

Մարտական պատրաստության ակումբի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում բացվեց «Ճանաչենք մեր հերոսներին» խորագրով լուսանկարների ցուցահանդես, որի հերոսները քաջարի հայ մարտիկներն էին:

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի անդամները, պարբերաբար այցելելով ՀՀ ՊՆ զինվորական հոսպիտալում բուժվող զինծառայողներին, բարձրացնում էին նրանց մարտական տրամադրությունը՝ նախապատրաստելով նրանց օր առաջ դիրքեր վերադառնալուն, իսկ ակումբի «Վարդանանք» թերթի էջերում մշտապես լուսաբանվում էին թե՛ համալսարանական և թե՛ ՀՀ նորօրյա հերոսների կյանքն ու գործած սխրանքները, որոնք հայրենասիրության լավագույն դասեր են:

Քառօրյա պատերազմին մասնակցած բազմաթիվ համալսարանականների մեջ իրենց քաջությամբ և հերոսական սխրանքներով աչքի ընկան երևաբնակներ՝ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող, ՀՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ Շուլի Հակոբյանը, որը 2016 թ. ապրիլի 4-ին 30 րոպեի ընթացքում խոցել է հակառակորդի «Т-80» տեսակի 3 տանկ, և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Գևորգ Մանուկյանը, որն արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի և ՀՀ «Արիության մեդալի», 2016 թ. ապրիլի 2-ին խոցել է հայոց բանակի մարտական դիրքերի ուղղությամբ հրթիռներ արձակող հակառակորդի «МИ-8» տեսակի ուղղաթիռը[158]:

Այսպիսով՝ համալսարանական հայ զինվորների նորօրյա սխրանքները փաստում են, որ ներկա համալսարանական նոր սե-

[158] Փ. Ենգոյան, Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 561:

րունդը, շարունակում է հերոսական կռվի ավանդույթը մեր հարևան ոսոխի դեմ:

Ապրիլյան քառօրյա պատերազմը հերոսական մի նոր էջ դարձավ հայ ժողովրդի պատմության մեջ՝ ցույց տալով, որ հայը իր անկոտրում ոգով ու կամքով միշտ պատրաստ է մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու հանուն հայրենիքի, հանուն խաղաղության, հանուն իր ազգային արժանապատվության:

Սահմանագիծ մեկնելու համար անդամագրվել էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք: Թիկունքը, այդ թվում՝ մայրաքաղաքը, ամենատարբեր խողովակներով շարունակում էր օգնությունը պաշտպանության բանակին: Հարյուրավոր տոննաներով սննդամթերք և հանդերձանք ուղարկվեց Արցախ, ցուցաբերվեց ֆինանսական աջակցություն: Մայրաքաղաքում ամենուրեք սկսվեց Արցախին օգնելու համար դրամահավաքի, սննդի, հանդերձանքի, հագուստի և միջոցների հավաքումը, կազմակերպումը ու ուղղորդումը Արցախ: Այդ օրերին Երևանի քաղաքապետարանը և քաղաքային բազմաթիվ կառույցներ հարյուրավոր տոննա սնունդ (միայն «Գրանդ Քենդին»՝ 4 տոննա քաղցրավենիք) ուղարկեցին Արցախ: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը կազմակերպում էր Երևանից Արցախի Հանրապետությանը օգնություն ցուցաբերել ցանկացող բոլոր պետական, հասարակական և մասնավոր կառույցների, կազմակերպությունների ու անհատների կողմից տրամադրվող մարդասիրական օգնության (այդ թվում՝ քնապարկեր, թիկնոց-անձրևանոցներ, անձնական հիգիենայի պարագաներ և այլն) տեղափոխումը ընդհանուր հավաքատեղից Արցախ[159]:

Արցախյան պատերազմի երկրորդ փուլը ապացուցեց, որ Ապրիլյան պատերազմի օրերին մեր ժողովուրդն իր համախմբվածությամբ, զինվորի ու բանակի կողքին կանգնելու հաստատակամությամբ, տարբեր միջոցներով օգտակար ու աջակից լինելու անկեղծ ցանկությամբ ևս մեկ անգամ ցույց տվեց, որ հայ ժողովուրդը միասնական ուժ է ոչ միայն պատմության մեջ՝ անցյալում (Ավարայր, Սարդարապատ, Շուշի և այլն), այլև շարունակում է այդպիսին մնալ

[159] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1 ապրիլի, 2017:

նաև մեր օրերում: Այդ միասնությունը ավելի արտահայտիչ է դառնում վտանգի պահին: Այն հոգու պարտադրանքն է՝ հայրենիքի կանչին ականջալուր: Մեր ժողովուրդը ցույց տվեց, որ կարողանում է համախմբվել առանց կոչի, զինվորագրվել նվիրական և ազգային կարևոր խնդրի շուրջ, նեցուկ կանգնել հայոց պաշտպանական վահանին՝ հայկական բանակին:

Զինադադարի կնքումից հետո շարունակվեցին բանակցային գործընթացները, որոնք դարձան Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա: ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցություններում այսօր էլ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է հետևյալ սկզբունքը. «Հայաստանի Հանրապետությունը կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Արցախի ժողովրդի համար և ստորագրված նրա ղեկավարության կողմից»[160]: Իսկ Արցախի ղեկավարությունը բացառում է որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին և կախվածություն նրանից: Սակայն Ադրբեջանի իշխանությունները մինչև այժմ էլ մերժում են Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջներ:

գ. Հասարակական-քաղաքական գործընթացները Երևանում

Հայաստանի անկախության գործընթացում քայլեր ձեռնարկվեցին հասարակական կյանքի ժողովրդավարական և նոր հարաբերությունների հաստատման ուղղությամբ: 1990 թ. նոյեմբերի 5-ին Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական

[160] Տե՛ս Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն, պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, Երևան, 2006, էջ 58, 62-63:

ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու վերաբերյալ[161]: 1991 թ. փետրվարի 26-ին խորհրդարանի կողմից ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը[162], որով հանրապետությունում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ:

Երկարամյա ընդմիջումից հետո մայրաքաղաք Երևան վերադարձան և ազատորեն գործելու իրավունք ստացան ազգային ավանդական «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Ռամկավար-ազատական» և «Հնչակյան» կուսակցությունները[163]: Աստիճանաբար մայրաքաղաքում առաջացան նոր կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու միություններ՝ «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ), «Ազգային ինքնորոշում միավորումը» (ԱԻՄ), «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը» (ՀՀԿ), «Ազգային ժողովրդավարական միությունը» (ԱԺՄ), «Հայաստանի քրիստոնեադեմոկրատական միությունը» (ՀՔԴՄ), «Սահմանադրական իրավունք միությունը» (ՍԻՄ), «Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը» (ՀԴԿ) և այլն: Շարունակում էր գործել իշխանությունից զրկված «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը», որը, սակայն, չուներ նախկին միասնությունը և խոր ճգնաժամ էր ապրում ներքին երկպառակություններից: Ավելի ուշ հիմնվեցին «Հայաստանի սոցիալիստական կուսակցությունը» (ՀՍԿ), «Հայաստանի սոցիալիստական ուժերի միությունը» (ՀՍՈՒՄ), «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը» (ՀԺԿ), «Միավորված աշխատանքային կուսակցությունը» (ՄԱԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊԿ), «Լուսավոր Հայաստան» (ԼՀԿ), «Հզոր հայրենիք» (ՀՀ), «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ), «Ժառանգություն» կուսակցությունները և այլն: Հետզհետե կուսակցությունների թիվը աճեց՝ հասնելով մի քանի տասնյակի[164]:

---

[161] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N16 (972), 31 օգոստոսի, Երևան, 1990, էջ 9:
[162] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995), էջ 115-118:
[163] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, տեղեկագիր 2007, Երևան, 2007, էջ 20, 30, 45, 174:
[164] Տե՛ս նույն տեղում, էջ 72, 87, 154, 236, 278:

Վերոնշյալ կուսակցությունների մի մասի կազմավորումը սկսվել էր 1980-ական թթ. վերջերից և հիմնականում կապված էր ԽՍՀՄ-ում տեղի ունեցող քաղաքական գործընթացների, հատկապես Արցախյան շարժման ծավալման հետ: Կուսակցություններին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին իրավունք տրվեց օրենքի սահմաններում ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը:

1991 թ. ապրիլի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց «Հայաստանի կոմունիստական կուսակցության» և «Հայաստանի լենինյան երիտասարդական միության» ունեցվածքը ազգայնացնելու մասին: Միաժամանակ գործող մյուս կուսակցություններն ու հասարակական-քաղաքական կազմակերպությունները ձեռք բերեցին գույք ու տարածքներ[165]:

Հասարակական-քաղաքական կյանքում բազմակուսակցական համակարգի կայացման համար կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. հունիսի 24-ի N 332 կարգադրությամբ ստեղծված հանձնախմբի առաջարկությունը՝ «Հայաստանի կոմունիստական կուսակցության» և ՀԼԵՄ-ի կողմից նախկինում զբաղեցրած շենքերն ու շինությունները՝ ավտոմեքենաներով և այլ գույքով, հանձնել պատգամավորների քաղաքային և շրջանային խորհուրդների գործկոմների տնօրինությանը՝ պետական կազմակերպությունների ու ձեռնարկությունների աշխատանքային պայմանները բարելավվելու, ինչպես նաև ՀՀ կուսակցություններին և կազմակերպություններին տարածք տրամադրելու համար[166]:

Հանձնարարվում է պատգամավորների շրջանային և քաղաքային խորհուրդների գործկոմներին՝ Հայաստանի կոմկուսի գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով նախկինում նրա կողմից զբաղեցված շենքերում կոմկուսին հատկացնել 3 աշխատասենյակ և 1 մարդատար ավտոմեքենա: Այդ կապակցությամբ ուժը կորցրած համարել N 234 կարգադրությունը:

Պատգամավորների Երքաղխորհրդի գործկոմին հանձնարար-

---

[165] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N8 (988), 30 ապրիլի, Երևան, 1991, էջ 6-7:
[166] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 165:

վում է քննության առնել և տասնօրյա ժամկետում ՀՀ նախարարների խորհուրդ առաջարկություն ներկայացնել կոմկուսի և ՀԼԵՄ-ի կողմից նախկինում զբաղեցրած շենքերի օգտագործման վերաբերյալ[167]: ՀՀ կառավարության 1991 թ. դեկտեմբերի 19-ի՝ «Պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի քաղաքի կառավարման համակարգի գիտահետազոտական կենտրոն ստեղծելու մասին» N 688 որոշմամբ տնտեսագիտական հիմունքներով և ինքնուրույն հաշվեկշռով ստեղծվում է Երքաղգործկոմի կառավարման համակարգի գիտահետազոտական կենտրոն[168], որի նպատակներից մեկն էլ մայրաքաղաքի հասարակական-քաղաքական կյանքի կառավարման նոր սկզբունքների մշակումն էր: Դրան էլ ձեռնամուխ եղավ նորաստեղծ կենտրոնը :

Նոր փոփոխված պայմաններում, երբ հանրապետությունը դուրս էր եկել ճգնաժամային պայմաններից, անհրաժեշտություն առաջացավ նորից անդրադառնալու հասարակական-քաղաքական կազմակերպություններին, և դրա համար Ազգային ժողովը 1996 թ. նոյեմբերի 1-ին ընդունեց «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը[169]: Այս օրենքում, որը բաղկացած է 8 գլխից, ընդգծվեց հասարակական կազմակերպությունների կարևոր դերը Հայաստանում քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման գործում, շարադրվեցին նրանց գործունեության հիմնական սկզբունքները: Օրենքը նպաստեց հայ հասարակության մեջ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի՝ քաղաքական կուսակցությունների և տարբեր տիպի հասարակական կազմակերպությունների ձևավորման համար, որոնց մեծ մասը մայրաքաղաք Երևանում էր գտնվում: Դեռևս 1988 թ. մարտին Երևանում ստեղծվեց «Ղարաբաղ կոմիտեն»՝ իր կենտրոնական և տեղական կազմակերպություններով : Նույն թվականի մայիսի վերջին «Ղարաբաղ կոմիտեն», համալրվելով նոր անդամներով, կոչվեց «Ղարա-

---

[167] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 179:
[168] Տե՛ս նույն տեղում, թ. 182, 183:
[169] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, N 21-22 (1121-1122), նոյեմբեր, 1996, էջ 4-12:

բաղյան շարժման Հայաստանի կոմիտե»), որի նախաձեռնությամբ հիմնադրվեց «Հայոց համազգային շարժումը» (ՀՀՇ): Մյուս նորաստեղծ կուսակցություններից ակտիվ գործունեություն ծավալեցին «Ազգային ինքնորոշում միավորումը», «Սահմանադրական իրավունք միությունը», «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» և այլն[170]:

1991 թ. Հայաստանում նոր աշխուժացում ապրեց քաղաքական կյանքը, Գերագույն խորհրդի չորս տասնյակից ավելի պատգամավորներ հայտարարեցին ՀՅԴ-ին և ՀՌԱԿ-ին անդամակցելու իրենց որոշման մասին, որի հետևանքով խորհրդարանում ձևավորվեցին երկու նոր կուսակցական-պատգամավորական խմբեր: Հետխորհրդարանական Հայաստանի առաջին բազմակուսակցական խորհրդարանում ամենամեծ պատգամավորական կուսակցական խումբը «Հայոց համազգային շարժումն» էր (ՀՀՇ-ն), նրան հաջորդում էին «Հայ հեղափոխական դաշնակցությունը» (ՀՅԴ), «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» (ՀԿԿ) և «Հայաստանի ռամկավար-ազատական կուսակցությունը» (ՀՌԱԿ): Դրանցում ընդգրկված պատգամավորների թիվը հաստատուն չէր և հաճախ փոփոխվում էր՝ կապված պատգամավորների կուսակցական պատկանելության փոփոխությունների հետ: Ընդդիմադիր կուսակցությունները (ՀՅԴ, ՀՌԱԿ, ԱԺՄ, ՀԴԿ, ՀԿԿ և այլն) չկարողացան միավորվել և վճռական ուժ դառնալ: Իսկ ՀՀՇ-ն, իր շուրջը համախմբելով մեծ թվով պատգամավորների, խորհրդարանում սկսեց վճռորոշ դեր խաղալ[171]:

Ներքին և արտաքին քաղաքականության սկզբունքային հարցերի շուրջը խորհրդարանական խմբակցությունների միջև բավականին սուր պայքար էր գնում, որն առավել խորացավ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո: Դա պայմանավորված էր նրանով, որ Հայաստանի քաղաքական կուսակցությունները, միաձայն քվեարկելով անկախության հռչակման օգտին,

---

[170] Տե՛ս «Մարդկային զարգացման ազգային զեկույց. անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», Երևան, 2001, էջ 46, ՀՀ արդարադատության նախարարության ընթացիկ արխիվ:

[171] Տե՛ս Տ. Թորոսյան, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 149, 154-155:

բավականին տարբեր մոտեցումներ ունեին երկրի հետագա զարգացման ուղիների և արցախյան խնդրի լուծման միջոցների նկատմամբ: Քաղաքական պայքարն անընդհատ սրվում էր տնտեսական ծանր կացության, էներգետիկ ճգնաժամի, շրջափակումների և Արցախում ընթացող պատերազմի հետևանքով: Անժխտելի էր, որ հանրապետությունում անդառնալիորեն հաստատվել էր ընտրական բազմակուսակցական համակարգ, որը, չնայած ամենաբազմազան խոչընդոտներին, հնարավորություն էր տալիս Հայաստանի քաղաքացիներին մասնակցելու պետական կառավարման գործընթացին: Այդ հանգամանքով էր պայմանավորված խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների և հասարակական-քաղաքական այլ հաստատությունների թվի աճը: Եթե համեմատաբար արդարացի ընտրությունների արդյունքում 1990 թ. մայիս-հունիսին ձևավորված ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդում ներկայացված էին 12 կուսակցություններ ու խմբակցություններ, ապա 1995 թ. համամասնական ընտրություններին մասնակցեցին 13 կուսակցություններ, միավորումներ ու հասարակական-քաղաքական այլ կազմակերպություններ, իսկ 1999 թ. կայացած ԱԺ պատգամավորների ընտրություններին արդեն մասնակցում էին 21 կուսակցություններ ու հասարակական-քաղաքական այլ կազմակերպություններ[172]:

1991 թ. Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորներ, որոնք հեռացել էին ՀՀԾ-ից, կազմեցին իրենց առանձին պատգամավորական խմբակցություն, որի անդամները իրենց կոչեցին ազգային-ժողովրդավարներ: Այս խմբակցության հիման վրա 1991 թ. սեպտեմբերին Երևանում ձևավորվեց «Ազգային ժողովրդավարական միություն» (ԱԺՄ) կուսակցությունը, որի նախագահ ընտրվեց Վազգեն Մանուկյանը[173]:

1991 թ. մայիսին Երևանում տեղի ունեցավ ՀԴԿ (Հայաստանի դեմոկրատական կուսակցություն) հիմնադիր համագումարը: Մայրա-

---

[172] Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999». Մարդկային զարգացման 5 տարին Հայաստանում, Երևան, 1999, էջ 66:
[173] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 հոկտեմբերի, Երևան, 1991:

քաղաքում երկու նոր կուսակցություններ հիմնադրեցին ՀՌԱԿ պատգամավորական խմբակցությունից հեռացած մի խումբ գործիչներ: Դրանցից մեկը կոչվեց «Ռամկավար-ազատական (լիբերալ-դեմոկրատական) կուսակցություն», մյուսը՝ «Ժողովրդական կազմակերպություն», որը շուտով իրեն հռչակեց «Արևելահայ լիբերալների կուսակցություն»՝ «Հայ ժողովրդական կուսակցության» գաղափարախոսության ժառանգորդ: «Առաքելություն» կոչվող կուսակցությունը հիմնադրեցին «Ղարաբաղ կոմիտեի» Գյումրիի կազմակերպությունների գործիչները: 1994 թ. գրանցվեցին «Ազգային պետություն», «Հայաստանի գիտաարդյունաբեական և քաղաքացիական միություն» հասարակական-քաղաքական կազմակերպությունները: 1995 թ. Երևանում խորհրդարանական ընտրություններից առաջ գրանցվեց նաև «Շամիրամ» կանանց միավորումը, որը դարձավ հայ կանանց առաջին քաղաքական կազմակերպությունը: Մայրաքաղաքում նոր հիմնադրված կուսակցություններից էին նաև «Հայաստանի ագրարային ժողովրդավարական» կուսակցությունը, «Հայաստանի քրիստոնեադեմոկրատական միությունը», իսկ 1998-1999 թթ.՝ «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը», «Հզոր հայրենիք», «Օրինաց երկիր» կուսակցությունները և այլն[174]: Սակայն պետք է նշել, որ Հայաստանի նորաստեղծ կուսակցությունների մեծ մասը դեռևս չուներ կազմակերպչական ամուր կառույցների լայն ցանց, փոքրաթիվ էին, և դրանցից շատերը ձևական բնույթ ունեին:

2001 թ. ՀՀ-ում գրանցված էր շուրջ 100 կուսակցություն և քաղաքական միավորում: Ստեղծվել էին նաև փախստականների, զանգվածային լրատվության, մարդասիրական օգնության, բարեգործական, գիտության և կրթության, մարդու իրավունքների, մշակույթի ու սպորտի և այլ բնագավառների բազմաթիվ հասարակական կազմակերպություններ: Սոցիալ-տնտեսական դժվարին վիճակում մայր հայրենիքին մեծ աջակցություն և օգնություն ցուցաբերեցին «Հայ բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲԸՄ), «Հայ օգնության միությունը» (ՀՕՄ), «Հայ օգնության ֆոնդը» (ՀՕՖ), «Հայաստան

[174] Տե՛ս Գ. Պողոսյան, Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան, 2006, էջ 142-143:

համահայկական» ու «Լինսի», «Շուշիի» և այլ հիմնադրամներ ու բազմաթիվ այլ կազմակերպություններ: Նրանց օժանդակությամբ կառուցվեցին մշակութային, տնտեսական նշանակության հիմնարկություններ, ճանապարհներ, բնակավայրեր թե՛ Հայաստանի Հանրապետությունում, և թե՛ Արցախում:

Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունների ուժերի փոխհարաբերության պատկերը որոշակի տեսք ընդունեց 1995 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո: Հայաստանի նոր խորհրդարանի՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցում էին 13 կուսակցություններ և կուսակցությունների նախընտրական դաշինքներ: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով 1994 թ. դեկտեմբերի 28-ին ժամանակավորապես կասեցվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության» գործունեությունը, և նա չկարողացավ մասնակցել առաջիկա ընտրություններին: Մինչ այդ ՀՅԴ-ն խորհրդարանում բավական ակտիվ և ազդեցիկ գործունեություն էր ծավալել: Հասարակական կյանքից նրա մեկուսացումը բացասաբար անդրադարձավ դեմոկրատական վերափոխումների վրա: Կասեցումից անմիջապես հետո սկսվեց, այսպես կոչված, «Դրո» գաղտնի կառույցի դատավարությունը, որը շարունակվեց շուրջ երկու տարի[175]:

Այսպիսով՝ ՀՅԴ կասեցումը և ընտրություններին չմասնակցելը մեծապես ազդեցին Հայաստանում ժողովրդավարության հետագա ծավալման գործընթացի վրա՝ երկրում ստեղծելով քաղաքական լարված իրավիճակ:

Անկախացումից հետո Հայաստանի բազմակուսակցականության պատմությունը կրում է ոչ միանշանակ և անհամաչափ բնույթ և ունի երկու արտահայտված փուլ: Առաջին փուլն անվանվում է ժողովրդավարության զարգացման շրջան և ընդգրկում է 1990-1994 թվականները, երբ կուսակցությունների, ինչպես և քաղաքացիական հասարակության մյուս հաստատությունների (այդ թվում՝ ընդդիմադիր) կայացումն ու զարգացումը չէին կասեցվում, սկզբում նույնիսկ

[175] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N23-24 (1075-1076), դեկտեմբեր, 1994, էջ 10-11:

խրախուսվում էին պետության կողմից: Շատ կուսակցություններ պետական օգնություն ստացան գրասենյակային և այլ պայմանների ապահովման համար, հնարավորություն ունեցան կուսակցական մամուլ հրատարակելու:

Երկրորդ փուլը կարելի է անվանել ժողովրդավարության ճգնաժամի շրջան, որն ընդգրկում է 1994 թ. դեկտեմբերից 1998 թ. փետրվարը, երբ կասեցվեց «Հայ հեղափոխական դաշնակցության» գործունեությունը Հայաստանում: Կուսակցությունը չկարողացավ մասնակցել ընթացիկ խորհրդարանական ընտրություններին: Հասարակական կյանքից քաղաքական ուժի մեկուսացումը և անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծումը բացասաբար անդրադարձան երկրում ժողովրդավարական վերափոխումների ընթացքի և քաղաքական իրավիճակի վրա:

1995 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած խորհրդարանական նոր ընտրությունները հիմնականում ընթացան նկատելի ընտրակեղծիքներով և ընտրախախտումներով: Դրանք «ավանդույթի ուժով» կրկնվեցին հետագա խորհրդարանական և նախագահական ընտրությունների ժամանակ՝ մեծապես ազդելով երկրի միջազգային հեղինակության վրա: Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ամենակարևոր իրադարձություններից էր ՀՀ Սահմանադրության ընդունումը, որը տեղի ունեցավ 1995 թ. հուլիսի 5-ին խորհրդարանական ընտրությունների հետ միաժամանակ համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Նոր սահմանադրությունը դրեց ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավար պետության անցնելու իրավական հիմքերը: Այն իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, սահմանեց ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:

Հետագայում՝ 21-րդ դարասկզբին, ՀՀ Սահմանադրությունը երկու անգամ փոփոխության ենթարկվեց: ՀՀ սահմանադրական փոփոխությունների առաջին տարբերակը հաստատվեց 2005 թ. նոյեմբերի 27-ին կայացած համաժողովրդական հանրաքվեով, որով նախագահական կառավարման համակարգից անցում կատարվեց կիսանախագահական համակարգի: Սահմանադրական երկրորդ փո-

փոխությունները հաստատվեցին 2015 թ. դեկտեմբերի 6-ի համաժողովրդական հանրաքվեով, որով անցում կատարվեց կառավարման կիսանախագահական համակարգից խորհրդարանական համակարգին :

Սկսվեց նոր դատական համակարգի կազմավորումը, որի առաջին փուլն ավարտվեց 1999 թ.: Այդ ուղղությամբ կարևոր քայլեր էին առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ դատարանների, ինչպես նաև սահմանադրական, տնտեսական, վարչական դատարանների հիմնումը, դատախազության համակարգի վերափոխմանն ուղղված միջոցառումները: Դատական բարեփոխումների առաջին փուլի շրջանակներում ընդունվեցին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական դատավարության», «ՀՀ քրեակատարողական» օրենսգրքերը, «Դատարանակազմության», «Դատավորի կարգավիճակի», «Արդարադատության խորհրդի», «Դատախազության», «Փաստաբանական ծառայության» և այլ օրենքներ[176]: Դատահիրավական բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ օրենսգրքերի և օրենքների ընդունումը նպաստեց դատական համակարգի կայացմանը[177]:

Դատահիրավական վերափոխումները կոչված էին ամրագրելու լիարժեք հարաբերություններ պետական իշխանության և հասարակության միջև և ստեղծելու անկախ ու արդյունավետ գործող, մարդու իրավունքների պատշտպանությունն ապահովող դատական համակարգ: Այս գործում մեծ էր ՀՀ Սահմանադրական դատարանի դերը, որը ձևավորվեց մայրաքաղաք Երևանում 1996 թ. փետրվարի 6-ին:

---

[176] Տե՛ս «Դատահիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրություն» («Միջնորդ դատարանների և դատավարության մասին», «ՀՀ դատախազության մասին», «ՀՀ դատարանակազմության մասին», «Վճռաբեկ դատարանի գործունեության մասին», «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքներում), Երևան, 1998, էջ 43-134:

[177] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Երևան, հ. 17 (50), 10 օգոստոսի, Երևան, 1998, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հ. 20(53), 9 սեպտեմբերի, Երևան, 1998, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հ. 22(55), 21 սեպտեմբերի, Երևան, 1998, Դատավորի կարգավիճակի մասին, Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքները:

Նրա նախագահ նշանակվեց Գ. Հարությունյանը[178]: ՀՀ Սահմանադրական դատարանն իրավասու էր որոշելու օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների, ինչպես նաև միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, լուծելու հանրաքվեների, ՀՀ նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներին առնչվող վեճերը, որոշում կայացնելու կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին: Համաձայն Սահմանադրության՝ Սահմանադրական դատարանում նորմատիվ ակտերի սահմանադրականությունը վիճարկելու իրավունքը վերապահվում է միայն հանրապետության նախագահին և Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/3-ին:

Նշված իրավական ակտերը ուժի մեջ մտնելուց հետո՝ 1999 թ. հունիսի 12-ին, ներդրվեց եռաստիճան դատական համակարգը, սկսեց գործել վերաքննության ինստիտուտը, որպիսին չէր եղել խորհրդային ժամանակաշրջանում: Սակայն դատական համակարգը, ըստ էության, ամբողջությամբ չդարձավ օրինապաշտ ու անկախ: Կատարվեցին սահմանադրության և ժողովրդավարության ոգուն համապատասխան այլ բարեփոխություններ ևս:

Հասարակական-քաղաքական կյանքը հանրապետությունում աշխուժացավ 1995 թ. հուլիսի 5-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ընտրություններն անցկացվեցին ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ընտրական համակարգով: Ընդդիմադիր հիմնական կուսակցություններն առաջադրեցին իրենց թեկնածուներին, իսկ ՀՀԾ-ն, իր շուրջ համախմբելով մի շարք կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ, ձևավորեց «Հանրապետական միավորումը»: Նախընտրական պայքարը հիմնականում ընթանում էր ընդդիմության և «Հանրապետություն» միավորման միջև: Տեղի ունեցած ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփումից հետո, ըստ Կենտրոնական ընտրական

[178] Տե՛ս Հ. Խաչատրյան, Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1977, էջ 283:

հանձնաժողովի (ԿԸՀ) հրապարակած պաշտոնական տվյալների, Ազգային ժողովում կուսակցական ուժերի փոխհարաբերությունը ընդունեց հետևյալ տեսքը[179].

1. «Հանրապետություն» միավորումը (ՀՀԾ-ից բացի՝ նրա մեջ մտնում էին «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը», «Հայաստանի քրիստոնեադեմոկրատական միությունը», «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը», «Մտավորական Հայաստան» միությունը և «Ռամկավար-ազատական» (Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը) ստացավ 20 մանդատ:

2. «Շամիրամ»՝ 8 մանդատ:

3. «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը»՝ 6 մանդատ:

4. «Ազգային ժողովրդավարական միությունը»՝ 3 մանդատ:

5. «Ազգային ինքնորոշում միավորումը»՝ 3 մանդատ:

Մեծ մասամբ անկուսակցական պատգամավորների միավորման հետևանքով կազմվեց «Բարեփոխումներ» անունը կրող խումբ, որը խորհրդարանում ուներ 35 տեղ[180]: Ինչպես ցույց են տալիս ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալները, կառավարող «Հայոց համազգային շարժման» կողմից գլխավորվող «Հանրապետություն» միավորումը բացարձակ մեծամասնություն ուներ բարձրագույն օրենսդիր իշխանության մեջ (190 պատգամավորներից 114-ը): Նրանցից 65-ը ՀՀԾ անդամներ էին, 6-ը՝ ՌԱ(ԼԴ)Կ, 4-ը՝ ՀՀԿ, 3-ը՝ ՀՔԴՄ, 3-ը՝ «Մտավորական Հայաստան» (ՄՀ) և 2-ը՝ ՍԴՀԿ խմբակցության, մնացյալ 31 անդամներն անկուսակցականներ էին [181]: Արտաքին և ներքին քաղաքականության սկզբունքային հարցերում նրան էին պաշտպանում «Բարեփոխումներ» պատգամավորական խումբը և «Շամիրամ» խմբակցությունը, ինչպես նաև մի քանի անկախ պատգամավորներ[182]: Երեք ընդդիմադիր կուսակցություններ (ՀԿԿ, ԱԺՄ, ԱԻՄ) միասին ունեին ընդամենը 15 տեղ, որը նրանց զրկում էր

---

[179] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8 հունիսի, 1995:
[180] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 166, գ.456, թ. 1:
[181] Տե՛ս Գ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 148:
[182] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996, Երևան, էջ 223-224:

խորհրդարանի գործունեության վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորությունից: Սակայն նրանց գործունեությունը խորհրդարանում զգալիորեն նպաստում էր բնակչության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը և նրանց համապետական հարցերին մասնակից դարձնելուն[183]:

1995 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ այն ժամանակ Հայաստանի Հանրապետության առաջատար և առավել ազդեցիկ կուսակցություններն էին «Հայոց համազգային շարժումը», «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը», «Ազգային ժողովրդավարական միությունն» ու «Ազգային ինքնորոշման միավորումը»:

Վերոնշյալ ընտրությունները, որոնք պետք է ապահովեին հանրապետությունում քաղաքական ուժերի դասավորության իրական պատկերը խորհրդարանում, ինչպես տեղական, այնպես էլ աշխարհի 18 երկրներից ժամանած դիտորդների մեծ մասի համոզմամբ անցան օրենքի խախտումների, անարդարությունների ու ճնշումների մթնոլորտում[184]: Հետագայում հանրապետությունում բոլոր մակարդակներով անցկացվող ընտրությունները վերածվում էին ձևական միջոցառումների՝ նախապես հայտնի արդյունքներով:

Այսպիսով՝ խորհրդարանում առավել շատ տեղեր ստանալու ձգտումով իշխող կուսակցությունները, որպես կանոն (ՀՀՇ-ն սկզբում, իսկ ապա մյուսները՝ հետագայում), խախտում էին օրինականությունը, կատարում անարդար ու անթույլատրելի գործողություններ, որով ժողովրդի աչքում կորցնում էին վստահությունն ու հեղինակությունը:

ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովը կազմված էր 190 պատգամավորից, որից 150-ը ընտրված էին մեծամասնական ընտրական համակարգով՝ միամանդատ ընտրատարածքներից, իսկ 40-ը՝ համամասնական ընտրական համակարգով՝ հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարած-

---

[183] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996, Երևան, էջ 223-224:

[184] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8 հուլիսի, Երևան, 1995, «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998», Պետության դերը, Երևան, 1998, էջ 21-22:

քից: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ խորհրդարանն ընտրվում է չորս տարի ժամկետով: Հայաստանի Ազգային ժողովի առաջին գումարման նստաշրջանի աշխատանքներն սկսվեցին մայրաքաղաք Երևանում՝ Բաղրամյան պողոտայում գտնվող Ազգային ժողովի շենքում[185]: Այն ուներ վեց մշտական հանձնաժողով, վեց խմբակցություն ու պատգամավորական խումբ: Ընտրությունների արդյունքներով համամասնական ընտրակարգով օրենքով սահմանված 5 %-ի սահմանագիծը հաղթահարեցին 5 կուսակցություններ, որոնց միջև պատգամավորական տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ 1. «Հանրապետություն» միավորում՝ 114 պատգամավոր, որից 68-ը ընտրված են մեծամասնական ընտրակարգով, «Շամիրամ» կանանց միավորում՝ 8, 3. ՀԿԿ՝ 7, որից 1-ը՝ մեծամասնական ընտրակարգով, 4. ԱԺՄ՝ 5, որից 2-ը՝ մեծամասնական ընտրակարգով և 5. ԱԻՄ՝ 3[186]:

Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Բաբկեն Արարքցյանը: Այս խորհրդարանը բազում հարցերի քննարկման և որոշումների ընդունման շրջանակներում գլխավոր ուշադրությունը նվիրեց դատական համակարգի բարեփոխումներին, վավերացրեց միջազգային բազում պայմանագրեր, փորձեց կարգավորել հարկային վարչարարությունը:

Բնակչության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը նպաստող կարևոր իրադարձություններից էին 1996 թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունները, որոնք անցան ակտիվ քաղաքական պայքարի պայմաններում:

Հայաստանում սկսվեց ժողովրդավարության նոր փուլ, երբ հասարակությունը, ի դեմս ընդդիմադիր կուսակցությունների, համախմբվեց իր քաղաքացիական ազատությունները պաշտպանելու համար:

Ելնելով առաջին նախագահական ընտրությունների փորձից՝ ընդդիմադիր 5 քաղաքական կուսակցությունները (ԱԺՄ-ն, ԱԻՄ-ը,

---

[185] Մինչև 1991 թվականը այս շենքում է գործել Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն: 1991 թ. մայիսի 1-ին շենքը հատկացվել է ՀՀ Գերագույն խորհրդին (1995 թվականից՝ Ազգային ժողով):

[186] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996, էջ 205-206:

ՀԴԿ-ն, ՀՅԴ և ՍԻՄ-ը) միավորվեցին «Ազգային համաձայնություն» դաշինքի մեջ և առաջադրեցին Վազգեն Մանուկյանի թեկնածությունը[187]: Ընդդիմադիր կուսակցությունների դաշինքի ստեղծումը և 4 թեկնածուների միանալը ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյանի հետ ստեղծեցին նոր իրավիճակ, կտրուկ աճեց ընտրողների ակտիվությունը: ՀԿԿ-ն առաջարկեց Սերգեյ Բաղալյանի, ԳիԱրՔՄ-ն՝ Աշոտ Մանուչարյանի, իսկ «Հանրապետություն» միավորումը (ՀՀԾ-ն, ՀՀԿ-ն, ՔԴՄ-ն, ՌԱ(ԼԴ)Կ, ՍԴՀԿ «Մտավորական Հայաստանը»)՝ հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը[188]: Չափազանց մարդաշատ պայմաններում (հանրահավաքներ և ցույցեր) ընթացան նախընտրական քարոզչությունները:

Սեպտեմբերի 22-ին կայացան նախագահական ընտրությունները: Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 1996 թ. սեպտեմբերի 25-ին պաշտոնապես հրապարակված արդյունքներով ընտրություններին մասնակցել է ընտրողների 60 %-ը՝ 1 մլն 333 հազար 204 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը կազմել է 1 մլն 249 հազար 893, որից 79.347-ը քվեարկել է հանրապետության նախագահի թեկնածուներ Սերգեյ Բաղալյանի (6.34 %), 7.529-ը՝ Աշոտ Մանուչարյանի (0,6 %), 646.888-ը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի (51.75 %), 516.129-ը՝ Վազգեն Մանուկյանի օգտին (41.29 %)[189]: Ընդ որում՝ մայրաքաղաք Երևանում քվեարկության մասնակցած ընտրողներից ավելի շատ ձայներ են ստացել Վազգեն Մանուկյանը (54.59 %), Լևոն Տեր-Պետրոսյանը (40.19 %), Սերգեյ Բաղալյանը (4.53 %), Աշոտ Մանուչարյանը (0.69 %)[190]:

Այսպիսով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ (16 կողմ, 2 դեմ) 1996 թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ երկրորդ անգամ ՀՀ նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Նույն թվականի նոյեմբերի 11-ին Ազգային ժողո-

---

[187] Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1997», Երևան, 1997, էջ 28, Վ. Մանուկյան, Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002, էջ 345:
[188] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1 հոկտեմբերի, 1996:
[189] Տե՛ս նույն տեղում:
[190] Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, Երևան, 2008, էջ 127:

վի հատուկ նիստում տեղի ունեցավ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի երդման հանդիսավոր արարողությունը: Դժգոհելով նախագահական ընտրությունների արդյունքներից՝ մարդիկ դուրս եկան հանրահավաքների: «Ազգային համաձայնություն» դաշինքը և նրան հարող կուսակցություններն ու կազմակերպությունները կազմակերպեցին հանրահավաքներ և ցույցեր՝ պահանջելով անցկացնել կրկնակի քվեարկություն: Արդարություն պահանջող հանրահավաքի մասնակիցները սեպտեմբերի 25-ին ներխուժեցին խորհրդարանի շենք: Սկսվեցին ընդդիմության առաջնորդների և շարժման ակտիվիստների ձերբակալություններ, արգելվեցին հանրահավաքներն ու ցույցերը:

1996 թ. սեպտեմբերի 26-ին գումարված ԱԺ արտահերթ նիստը լսեց «Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդությունների մասին» հարցը, դատապարտեց կատարված միջադեպը և որոշեց մի խումբ ընդդիմադիր ակտիվիստների հետ միասին ԱԺ պատգամավորների, ընդդիմադիր կուսակցությունների 8 ներկայացուցիչների ևս ենթարկել քրեական պատասխանատվության[191]: Չնայած այս ամենին՝ ընդդիմության ներկայացուցիչները՝ հանրապետության նախագահի թեկնածուներ Վազգեն Մանուկյանն ու Աշոտ Մանուչարյանը, 1996 թ. սեպտեմբերի 26-ին հայց ներկայացրին ՀՀ Սահմանադրական դատարան՝ 1996 թ. սեպտեմբերի 22-ին կայացած Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրական արդյունքները վիճարկելու վերաբերյալ: Ընտրությունների արդյունքների իրավազորությունը քննության առնելով՝ ՀՀ Սահմանադրական դատարանը մերժեց ընդդիմության լրջորեն փաստարկված հարցը: Դրանով ավելի խորացավ ներքաղաքական ճգնաժամը[192]:

1990-ական թթ. սկզբին իշխանության փոփոխման և ընդհանուր ոգևորության մթնոլորտում ընդդիմության գործունեության համար ասպարեզ չկար: Սակայն հետագայում, երբ ձևավորվեցին պետական հիմնական հաստատությունները, և սկսվեց տնտեսական վերա-

---

[191] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, N17-18, սեպտեմբեր, Երևան, 1996, էջ 10-12:
[192] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 27 սեպտեմբերի, 1996:

փոխումների գործընթացը, բնականաբար, որոշ չափով ընդլայնվեց նաև ընդդիմության դաշտը: Պետք է նշել, որ հետագայում ևս Հայաստանում ընդդիմությունը թույլ էր և քաղաքական ասպարեզում չկարողացավ ստեղծել անհրաժեշտ հիմքեր: Լավագույն դեպքում նա բավարարվեց խորհրդարանում խմբակցություններ ստեղծելով և իշխանությունների քաղաքականության այս կամ այն բնագավառը քննադատելով:

Փաստորեն՝ 1995 թ. խորհրդարանական և նախագահական ընտրությունների ժամանակ թույլ տրված խախտումներից և կեղծիքներից հետո ընտրական գործընթացի նկատմամբ ընտրողների վստահության աստիճանը շեշտակի նվազեց: 1996 թ. նոյեմբերին ընտրողների միայն 12 %-ն էր օբյեկտիվ համարում գործող ընտրական համակարգը: 1996 թ. ընտրություններից մինչև 1998 թ. փետրվարը տեղի ունեցավ Հայաստանի իշխանությունների և հասարակության լիակատար օտարացում:

1996 թ. նախագահական ընտրություններից հետո ժողովրդի և պետության տնական առճակատումն ավելի խորացավ: Մեկուկես տարվա ժամանակահատվածը անչափ ծանր անդրադարձավ ինչպես հասարակության ներքաղաքական և հոգեբանական վիճակի, այնպես էլ երկրի միջազգային հեղինակության վրա: Այդ քաղաքական ճգնաժամը տևեց մինչև 1998 թ. փետրվարը, երբ Լ. Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց:

1997 թ. նոյեմբերին Լ. Տեր-Պետրոսյանի հրավերով Երևան տեղափոխվեց Արցախի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը և նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ:

Ի վերջո տնական առճակատումը հանգեցրեց գործող նախագահի հրաժարականին: Այս շրջանում Ղարաբաղը դարձավ Հայաստանի ներքին կայունության գրեթե միակ ու փխրուն երաշխիքը: Ղարաբաղյան հարցում Լ. Տեր-Պետրոսյանի զիջողական քաղաքականությամբ ստեղծվեց այն իրավիճակը, որը երկու ամսվա ընթացքում հանգեցրեց համազգային շարժման կարգախոսներով ստեղծված կուսակցության՝ ՀՀՇ տասնամյա իշխանության փլուզմանը: Դրան նպաստեց նաև Արցախյան հիմնահարցի վերաբերյալ իրարամերժ

տեսակետների առկայությունը և հիմնահարցի չլուծված մնալը:

Արցախի հարցում ՀՀՇ-ական իշխանության ըստ էության զիջողական տրամադրություններն արտահայտվեցին Հայաստանի պաշտոնական մամուլում 1997 թ. նոյեմբերի 1-ին լույս տեսած ՀՀ նախագահ Լ. Տեր Պետրոսյանի «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն: Լրջանալու պահը» հոդվածում[193]: Հեղինակն իր հոդվածում պաշտպանել էր հիմնախնդրի կարգավորման փուլային տարբերակը, որը ավելի շատ հնարավորություններ էր ընձեռում զիջումների քաղաքականության համար, քան փաթեթային տարբերակը: Հենց ղարաբաղյան կարգավորման հարցի շուրջ Հայաստանի իշխանական կառույցներում ծագած հակամարտության արդյունքում ՀՀ առաջին նախագահը 1998 թ. փետրվարի 3-ին հայտարարեց իր հրաժարականի մասին:

1998 թ. փետրվարին՝ ՀՀ նախագահի հրաժարականից հետո, հետևեցին նաև Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի և նրա երկու տեղակալների հրաժարականները: Ընտրվեց ԱԺ-ի նոր նախագահ՝ Խոսրով Հարությունյանն իր երկու տեղակալներով[194]:

ՀՀ նախագահի հրաժարականին նախորդեց նաև պատգամավորական խմբակցությունների և խմբերի կտրուկ փոփոխություն, որն արտահայտվեց առաջին հերթին «Երկրապահ» պատգամավորական խմբի զգալի աճով:

Հայաստանում 1998 թ. արտահերթ նախագահական ընտրությունները նշանակվեցին մարտի 16-ին: Այդ ընտրություններին մասնակցեց 12 թեկնածու: Այն ընթացավ երկու փուլով և ավարտվեց մարտի 30-ի քվեարկությամբ[195]:

Տեղական և միջազգային դիտորդների վկայությամբ այդ ընտրությունները կարելի է բնութագրել ազատ ու արդար, չնայած ընթացան ընտրախախտումներով, որոնք, ըստ ԵԱՀԿ փորձագետների, «չազդեցին վերջնական արդյունքների վրա»:

Ըստ ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների՝ ՀՀ նա-

---

[193] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1 նոյեմբերի, 1997:

[194] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N4 (37), 24 փետրվարի, Երևան, 1998, էջ 33:

[195] Տե՛ս նույն տեղում:

խագահի ընտրության առաջին փուլի վերջնական տվյալներով ընտրողների ընդհանուր թվից՝ 2 մլն 293 հազար 636-ից, ընտրություններին մասնակցեց 1 մլն 455 հազար 605-ը: Թեկնածուների միջև ձայները բաժանվեցին հետևյալ ձևով՝ Ռոբերտ Քոչարյան՝ 38,76 %, Կարեն Դեմիրճյան՝ 30,67 %, իսկ մյուսները՝ 12 % և դրանից պակաս ձայներ[196]:

Այսպիսով՝ երկրորդ փուլ դուրս եկան Ռ. Քոչարյանն ու Կ. Դեմիրճյանը: Երկրորդ փուլում, ըստ ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների, ստանալով ձայների 59.49 %-ը՝ հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը[197]: Եթե մայրաքաղաք Երևանում նախագահական արտահերթ ընտրությունների առաջին փուլում ընտրողների 36.02 %-ը ձայները տվեց Ռոբերտ Քոչարյանին, 39 %-ը՝ Կարեն Դեմիրճյանին, ապա երկրորդ փուլում ընտրողների 56.38 %-ը ձայները տվեց Ռ. Քոչարյանին, իսկ 43.62 %-ը՝ Կ. Դեմիրճյանին [198]:

Հայաստանի նորընտիր իշխանության գործունեության սկիզբը նշանավորվեց քաղաքացիական ազատությունների և ՀՅԴ պաշտոնական կարգավիճակի վերականգնմամբ: Նախագահ Ռ. Քոչարյանի առաջին քայլերը վկայում էին հասարակության համախմբման և ազգային համաձայնության հասնելու իր յուրովի ծրագրի մասին: «Արհեստավարժների կառավարություն» ստեղծելու կարգախոսով նոր իշխանությունները ձեռնամուխ եղան ընդդիմության լայն ընդգրկմանը երկրի կառավարման գործընթացում: Նրանց հիմնական հենարանը դարձավ «Երկրապահը» և դրա հիմքի վրա ձևավորված «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը»: ՀՀ նախագահին առընթեր ստեղծված Քաղաքական խորհուրդը որոշ դեր կատարեց բազմակուսակցական կապերն ամրապնդելու ուղղությամբ:

Ընդդիմադիր պայքարի հարուստ փորձից հրաժարվելով՝ ՀՅԴ-ն դաշնակցեց նախագահի հետ: Բավական ակտիվ քաղաքական պայքարի մթնոլորտում անցան 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանա-

---

[196] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N10 (43), 15 մայիսի, Երևան, 1998, էջ 22: «Հայաստանի Հանրապետություն», 7 մարտի, 1998:
[197] Տե՛ս նույն տեղում:
[198] Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, էջ 128:

կան ընտրությունները: Նախընտրական շրջանում ձևավորվեց «Միասնություն» դաշինքը, որի մեջ մտան «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» (ՀՀԿ), «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը» (ՀԺԿ) և «Երկրապահների միությունը»: Ընդդիմադիր կուսակցությունները չկարողացան միավորվել և լուրջ ուժ ստեղծել:

1999 թ. հունվարի 29-30-ին ավարտվեց հանրապետականների և «երկրապահների» քաղաքականացված մասի միաձուլման գործընթացը՝ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ: Դրանից հետո ակնհայտ դարձավ, որ սկսում է ուրվագծվել «Հայաստանի Հանրապետական կուսակցության» (ՀՀԿ) և Կարեն Դեմիրճյանի գլխավորած «Հայաստանի ժողովրդական կուսակցության» (ՀԺԿ) դաշինքը, որը վերջնականապես ձևավորվեց խորհրդարանի պատգամավորության թեկնածուների առաջադրման վերջին օրը և կոչվեց «Միասնություն»:

Մեծամասնական ընտրակարգով վիճարկվող 75 պատգամավորական մանդատների համար հայտ էին ներկայացրել 808 թեկնածուներ, որոնցից 243-ը՝ մայրաքաղաք Երևանում, մնացածը՝ հանրապետության տարբեր մարզերում: Այս ընտրակարգով առավել շատ պատգամավորության թեկնածուներ էր առաջադրել ՀԿԿ-ն՝ 63, ՀՀԿ-ն՝ 62, ԱԺՄ-ն՝ 45, ՀՅԴ-ն՝ 41, ՀԺԿ-ն՝ 39, ԻՄ-ը՝ 36, ՀՀՇ-ն՝ 12 և այլն[199]:

Ըստ ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների՝ մայիսի 30-ի քվեարկության արդյունքներով «Միասնություն» դաշինքը լիակատար հաղթանակ էր տարել: Երբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ամփոփեց և պաշտոնապես հրապարակեց քվեարկության արդյունքները, պարզվեց, որ համամասնական ընտրակարգով ԱԺ ընտրություններին մասնակցած 21 կուսակցություններին, դաշինքներին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ. «Միասնություն» դաշինքը ստացավ ձայների 41.69 %-ը, ՀԿԿ-ն՝ 12.09 %-ը, «Իրավունք և միաբանություն» դաշինքը՝ 7.96 %-ը, ՀՅԴ-ն՝ 7.84 %-ը, «Օրինաց երկիրը»՝ 5.28 %-ը, ԱԺՄ-ն՝ 5,17 %-ը, «Արժանապատիվ ապագան»՝ 3.27 %-ը, «Հզոր հայրենիքը»՝ 2.31 %-ը, «Կոմունիստական և սոցիա-

[199] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 մայիսի, 1999:

լիստական կուսակցությունների միություն» դաշինքը՝ 2.49 %-ը, «ԱԻՄ» (դաշինքը՝ 2.29 %-ը, «Հայրենիք» դաշինքը՝ 1.23 %-ը, ՀՀՇ-ն՝ 1.17 %-ը, «Ազատություն» կուսակցությունը՝ 1.03 %-ը, իսկ մնացած կուսակցությունները և դաշինքները՝ «Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը», «Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը», «Ազատ Հայք առաքելությունը», «Ազգային պետություն», «Առաքելություն», «Շամիրամ» հասարակական-քաղաքական կազմակերպությունները, «Սոցիալիստական ուժերի և մտավորականների միություն» դաշինքը՝ 1 %-ից էլ պակաս ձայներ[200]:

Հունիսի 10-ին տեղի ունեցավ Ազգային ժողովի ղեկավարության ընտրությունը: Նախագահ ընտրվեց Կարեն Դեմիրճյանը, փոխնախագահներ՝ Ա. Բազեյանն ու Ռ. Միրոյանը: Հաջորդ օրը ընտրվեցին ԱԺ մշտական 6 հանձնաժողովների նախագահները: Ռ. Քոչարյանն ընդունեց Ա. Դարբինյանի հրաժարականը և նույն օրը՝ հունիսի 11-ին, նոր վարչապետ նշանակեց պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին: Կառավարության կազմը նախագահի կողմից հաստատվեց հունիսի 15-ին[201]:

Մայիսի 30-ից մինչև հոկտեմբերի 27-ն ընկած հինգ ամիսների ընթացքում Հայաստանն ապրում էր ներքաղաքական կյանքի բարդ ու հակասական մի շրջան: Վ. Սարգսյանի հետևողականությունն ու պահանջկոտությունը հույս էին ներշնչում, որ կարվեն անհրաժեշտ քայլեր երկիրը սոցիալ-տնտեսական և բարոյաքաղաքական ծանր վիճակից դուրս բերելու համար: Կտրուկ ակտիվացավ հանրապետության արտաքին քաղաքականությունը: Բայց զարգացումները հետ շրջվեցին 1999 թ. հոկտեմբերի 27-ի նախադեպը չունեցող ահաբեկչությամբ: Այդ օրը ահաբեկիչների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, մուտք գործեց խորհրդարան և հրազենով «գլխատեց» օրենսդիր ու գործադիր իշխանությունների ղեկավարությանը: Սպանվեցին Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը, նրա

---

[200] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, երկրորդ գումարում, Երևան, 2001, էջ 28-29, 42-44, Է. Մինասյան, ՀՀ, ԼՂՀ Ազգային ժողովի և նախագահական ընտրությունները, Հայաստանի ազգային ատլաս, հատոր Բ, Երևան, 2008, էջ 129:

[201] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 հունիսի, 1999:

տեղակալներ Յուրի Բախշյանը և Ռուբեն Միրոյանը, պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը, Միքայել Քոթանջյանը, նախարար Լեոնարդ Պետրոսյանը: Ոճրագործների գնդակների զոհ դարձավ գործադիր իշխանության ղեկավար, վարչապետ Վազգեն Սարգսյանը:

Շուրջ երեք տարի տևեց «Հոկտեմբերի 27-ի» քրեական գործի դատաքննությունը: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թ. դեկտեմբերի 2-ի դատավճռով ահաբեկիչները դատապարտվեցին ցմահ ազատազրկման[202]:

Հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Արմեն Խաչատրյանը, վարչապետ նշանակվեց Վ. Սարգսյանի եղբայրը՝ Արամ Սարգսյանը:

2000 թ. սկզբին հանրապետության ղեկավարությունը կարողացավ խուսափել ներքաղաքական ցնցումներից և աստիճանաբար կայունացնել քաղաքական իրավիճակը: Դարասկզբին իրականացվեցին մի շարք բարեփոխումներ: 2001 թ. դեկտեմբերին ընդունվեցին «Հասարակական կազմակերպությունների մասին»[203], իսկ 2002 թ. օգոստոսին՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքները[204]: Այս նոր օրենքներով ոչ բոլոր կուսակցությունները կարողացան քննություն բռնել ու վերագրանցվել: Եթե 2002 թ. հանրապետությունում կուսակցությունների թիվը հասել էր 116-ի, որոնց մեծ մասը իրականում ստեղծված էին թղթի վրա: Օրենքի կիրառումից հետո՝ 2004 թ. հունվարին, հանրապետությունում կուսակցությունների թիվը հասնում էր 52-ի, իսկ 2005 թ.՝ 71, 2011 թ.՝ 77[205]: Կուսակցությունների ակտիվությունը դրսևորվեց հատկապես նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

ՀՀ նախագահական չորրորդ ընտրություններն անցկացվեցին

---

[202] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 փետրվարի, 2008:

[203] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2001, գիրք Դ, էջ 771:

[204] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2002, գիրք Ե, էջ 648:

[205] Տե՛ս Գ. Պողոսյան, Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան, 2006, էջ 134:

2003 թ. փետրվարի 19-ին: Երկրորդ փուլ դուրս եկան գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը և միացյալ ընդդիմության թեկնածու Ստեփան Դեմիրճյանը: Ըստ ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների՝ մարտի 5-ին երկրորդ փուլով ՀՀ նախագահ վերընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Ընդդիմությունը, ընտրությունների արդյունքները համարելով կեղծված, բողոքարկեց Սահմանադրական դատարանում, որն էլ, մի կողմից, հաստատեց ընտրությունների արդյունքները՝ հայտարարելով, որ արձանագրված արդյունքները չէին կարող ազդել քվեարկության ելքի վրա, և ուժի մեջ թողեց Ռոբերտ Քոչարյանի ընտրվելու մասին ԿԸՀ որոշումը, մյուս կողմից՝ առաջարկեց մեկ տարի անց նախագահի վստահության հանրաքվե անցկացնել, ընտրություններից հետո հասարակության մեջ խորացած հակասությունները հարթելու համար[206]: Մեկ տարի անց՝ 2004 թ. ապրիլի 9-12-ը, Երևանում ընդդիմությունը՝ «Արդարություն դաշինքի» և «Ազգային միաբանություն» կուսակցության և քաղաքական այլ ուժերի ղեկավարությամբ ու մասնակցությամբ բողոքի ցույցեր կազմակերպեց նախագահի հրաժարականի պահանջով: Ապրիլի 12-ին մայրաքաղաքի Բաղրամյան պողոտան շրջափակվեց ցուցարարների կողմից: Իշխանությանը հաջողվեց ոստիկանության օգնությամբ, ռետինե մահակներով, ձայնային նռնակներով, ջրցան մեքենաներով և այլ միջոցներով ցրել ցույցը[207]:

2003 թ. մայիսի 25-ին տեղի ունեցան Ազգային ժողովի հերթական ընտրությունները. փաստորեն՝ կուսակցություններից և ոչ մեկին չհաջողվեց բացարձակ մեծամասնություն ստանալ խորհրդարանում և միայնակ ձևավորել կառավարություն: Ընտրությունները կայացան 75 համամասնական և 56 մեծամասնական ընտրակարգով: Ինչպես Ազգային ժողովի նախորդ, այնպես էլ այս ընտրություններն անցան ընտրախախտումներով: Ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցած 21 կուսակցություններից ու դաշինքներից 5 %-ի սահմանագիծը հաղթահարեց, և պատգամավորական մանդատները բաշխվեցին հետևյալ կուսակցությունների միջև. «Հայաս-

[206] Տե՛ս Ռ. Քոչարյան, Կյանք և ազատություն, Երևան, 2019, էջ 399-400:
[207] Տե՛ս նույն տեղում, էջ 402, «Հայաստանի Հանրապետություն», 14 ապրիլի, 2004:

տանի Հանրապետական կուսակցությունը»՝ 23, «Արդարություն» դաշինքը՝ 14, «Օրինաց երկիրը»՝ 12, ՀՅԴ-ն՝ 11, «Ազգային միաբանությունը»՝ 9 և «Միավորված աշխատանքային կուսակցությունը»՝ 6 մանդատներ[208]:

Մայրաքաղաքում համամասնական ընտրակարգով ամենաշատ ձայներ ստացան «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» (21, 43%), «Արդարություն» դաշինքը (20,11%), «Ազգային միաբանությունը» (11, 62%), «Օրինաց երկիրը» (10,62%), մյուս կուսակցությունները և դաշինքները ստացան 10 %-ից ցածր ձայներ[209]:

ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովն իր առաջին նստաշրջանը գումարեց 2003 թ. հունիսի 12-ին: ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրվեց «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը:

Առաջին անգամ Հայաստանի անկախ հանրապետության պատմության մեջ այդ ընտրություններին առավել շատ ձայներ ստացած երեք կուսակցությունները՝ «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» (ՀՀԿ)-ն, «Օրինաց երկիրը» (ՕԵԿ) և «Հայ հեղափոխական դաշնակցությունը» (ՀՅԴ), կազմեցին քաղաքական կոալիցիա և համատեղ ձևավորեցին կառավարություն[210]: Վարչապետ նշանակվեց 2000 թվականից այդ պաշտոնում գտնվող ՀՀԿ խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը (1951-2007): 2006 թ. կոալիցիայից դուրս եկավ «Օրինաց երկիր» (ՕԵԿ) կուսակցությունը, որը կարճ ժամանակով դարձավ ընդդիմություն: Քաղաքական կոալիցիա ստեղծելու մշակույթը շարունակվեց նաև Ազգային ժողովի հաջորդ խորհրդարանական ընտրություններից հետո:

Հասարակության ակտիվության պայմաններում ընթացան Ազգային ժողովի չորրորդ գումարման 2007 թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունները: Ըստ ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների՝ համամասնական ընտրակարգով սահմանված շեմը

---

[208] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 հունիսի, 2003:
[209] Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, էջ 129:
[210] Տե՛ս Տ. Թորոսյան, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 157:

հաղթահարեցին 5 կուսակցություններ: Մանդատները բաժանվեցին հետևյալ կերպ. ՀՀԿ-ից՝ 65, «Հայ հեղափոխական դաշնակցությունից»՝ 16, «Օրինաց երկրից»՝ 8 և «Ժառանգությունից»՝ 7 պատգամավոր: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Տիգրան Թորոսյանը[211]: Համամասնական ընտրակարգով մեծամասնություն ստացավ «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» (ՀՀԿ), որին հաջորդեցին «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ) և «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ) կուսակցությունները: ԿԸՀ հրապարակած պաշտոնական արդյունքներով մայրաքաղաքում համամասնական ընտրակարգով ՀՀԿ-ն ստացավ քվեարկողների ձայների 28,13%-ը, «Բարգավաճ Հայաստանը»՝ 14,76%-ը, «Ժառանգությունը»՝ 13,80%-ը, ՀՅԴ-ն՝ 9,03%-ը, ՕԵԿ-ը 7,45%-ը, մյուս կուսակցությունները ստացել են 5-ից ավելի ցածր տոկոսով ձայներ[212]:

Ընտրությունների արդյունքից ելնելով՝ ՀՀ նախագահի աջակցությամբ մայրաքաղաքում ստորագրվեց համաձայնագիր՝ «Հայաստանի հանրապետական» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների միջև քաղաքական կոալիցիա ստեղծելու վերաբերյալ: Քաղաքական կոալիցիան իր հերթին «Հայ հեղափոխական դաշնակցության» հետ ստորագրեց համագործակցության համաձայնագիր: Այս երեք կուսակցություններն էլ ձևավորեցին Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը: Հունիսի 7-ին վարչապետ նշանակվեց դեռևս 2007 թ. ապրիլի 4-ից այդ պաշտոնը վարող Սերժ Սարգսյանը: Ընդդիմությունը ներկայացնող նախկին քաղաքական ուժերին այնպես էլ չհաջողվեց միավորվել և անհրաժեշտ թվով ձայներ գրավել նոր խորհրդարանում:

Հայաստանի Հանրապետության նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվեցին 2008 թ. փետրվարի 19-ին: Ընտրություններին մասնակցեց 9 թեկնածու: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, օրենքով նախատեսված կարգով ամփոփելով ընտրության արդյունքները, պաշտոնապես արձանագրեց, որ Սերժ

---

[211] Տե՛ս Հ. Աբրահամյան, Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009, էջ 70:
[212] Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, էջ 130:

Սարգսյանը ստացել է 52, 82 %, Լևոն Տեր-Պետրոսյանը 21,51 %, Արթուր Բաղդասարյանը՝ 16,69 %, Վահան Հովհաննիսյանը՝ 6,18 % ձայն և այլն: Մայրաքաղաք Երևանում ամենաշատ ձայներ էր ստացել Սերժ Սարգսյանը՝ քվեարկողների ձայների 45,49%-ը, Լևոն Տեր-Պետրոսյանը՝ 29,24%-ը, Արթուր Բաղդասարյանը՝ 13, 20%-ը, Վահան Հովհաննիսյանը 7,34%-ը, Վազգեն Մանուկյանը՝ 2,81%-ը, իսկ մյուս թեկնածուները՝ Արտաշես Գեղամյանը, Տիգրան Կարապետյանը, Արամ Հարությունյանը և Արման Մելիքյանը ստացել են 1%-ից էլ պակաս ձայներ[213]:

Մերժելով ընտրությունների արդյունքները՝ ընդդիմությունը Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ փետրվարի 21-ից Երևանում 10 օր շարունակ խաղաղ հանրահավաքներ կազմակերպեց:

Չնայած գերլարված այս իրավիճակը պետք է հաղթահարվեր խաղաղ ճանապարհով՝ իշխանության ու ընդդիմության միջև հանդուրժողականության ու փոխհամաձայնության միջոցներ գտնելով, բայց նրանց փոխադարձ անհանդուրժողականությունը և փոխզիջման որոնման անհնարինությունը հանգեցրին մարտի 1-ի ողբերգական դեպքերին: Մարտի 1-ի առավոտյան Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցավ ոստիկանության և ցուցարարների բախում, որից հետո Երևանի քաղաքապետարանին հարող տարածքում՝ Գրիգոր Լուսավորչի փողոցից դեպի Պարոնյանի և Լեոյի փողոցների խաչմերուկում, հավաքվեցին հազարավոր մարդիկ: Կատարված գործողությունների արդյունքում կիրառված հրազենից զոհվեց 10 մարդ՝ 8 քաղաքացի, 2 ոստիկան, վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ, տասնյակ մարդիկ բանդարկվեցին: Սկսվեցին ընդդիմության առաջնորդների և ակտիվիստների հետապնդումներն ու ձերբակալությունները[214]:

---

[213] Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, էջ 130:

[214] Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը, էջ 128-129 (http://www.parliament.am/committee_docs_ 4/LegalCom/-15.09.2009(01.03).pdf), ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի «Արտահերթ հրապարակային զեկույցը» 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ (http://www.ombuds.am/library/-library/page/101/type/3):

Մարտի 1-ի երեկոյան Հայաստանի Հանրապետության գործող նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով Երևան քաղաքում 20 օրով հայտարարվեց արտակարգ դրություն[215]: Սպանված անձանց գործի քննության համար հարուցվեց քրեական գործ: Ազգային ժողովը մարտի 1-ի լույս 2-ի գիշերը հրավիրեց արտահերթ նիստ, որում ընդունվեց հայտարարություն: 2008 թ. հունիսի 16-ին Ազգային ժողովում ստեղծվեց մարտի 1-ի իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ժամանակավոր հանձնաժողով[216], որը տվեց կատարված դեպքերի իր գնահատականը, սակայն լիովին չբացահայտեց ողբերգական դեպքերի մանրամասները:

2008 թ. հոկտեմբերի 23-ին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ ստեղծվեց նույն իրադարձությունների պատճառների վերհանման և բացահայտմանն ուղղված փորձագետների փաստահավաք խումբ: Փաստահավաք խումբը կազմվեց 5 անձից, այդ թվում՝ 2 ներկայացուցիչ իշխող քաղաքական կոալիցիայից, մեկական ներկայացուցիչ «Ժառանգություն» կուսակցությունից, Լ. Տեր-Պետրոսյանի կողմից ղեկավարվող քաղաքական ուժից և մարդու իրավունքների պաշտպանից: Նախագահի կարգադրությամբ խումբը լուծարվեց 2009 թ. հունիսի 6-ին[217]:

2009 թ. սեպտեմբերի 16-ին և 17-ին ժամանակավոր հանձնաժողովը Ազգային ժողովում հրապարակեց շուրջ 138 էջից բաղկացած իր եզրակացությունը[218]: Եզրակացության վերաբերյալ հատուկ կարծիք ներկայացրին ժամանակավոր հանձնաժողովի ՀՅԴ ներկայացուցիչները[219]: Կատարվեց մեծածավալ աշխատանք, բայց հիմնական մեղավորները չհայտնաբերվեցին:

2008 թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները բացասական բարոյահոգեբանական ազդեցություն թողեցին հայ ժողովրդի տարբեր շերտերի վրա: Ծանր

---

[215] Տե՛ս նույն տեղում, «Հայաստանի Հանրապետություն», 6 մարտի, Երևան, 2008:
[216] Տե՛ս http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3285&lang=arm:
[217] Տե՛ս http://www.arlis.am/:
[218] Տե՛ս http://www.parliament.am/committee_docs_4/LegalCom/15.09.2009(01.03). pdf:
[219] Տե՛ս http://www.parliament.am/transcript.php?AgendaID=1887&day=17&month=09&-year=2009&lang=arm#17.09.2009:

հարված հասցվեց Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավար պետության միջազգային վարկանիշին: Քանի որ մարտիմեկյան դեպքերը լիովին և հանգամանորեն չեն բացահայտվել, ուստի 2018 թ. մինչ այժմ շարունակվում է մարտիմեկյան դեպքերի բացահայտման գործընթացը:

Անժխտելի է մնում քաղաքական կուսակցությունների դերը, որոնք կոչված են նպաստելու երկրում ժողովրդավարության հաստատմանը, ժողովրդի քաղաքական մշակույթի, ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, պետական մտածողության ձևավորմանը: XXI դարասկզբին հիմնված նոր կուսակցություններից կարելի է առանձնացնել 2002 թ. ստեղծված «Ժառանգություն» կուսակցությունը, որն իր շարքերում ուներ 6 հազարից ավելի անդամ և տարածքային 43 ստորաբաժանումներ: «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը, ձևավորվելով ավելի ուշ (2004 թ.), շատ կարճ ժամանակամիջոցում մեծ ճանաչում ստացավ: Բավական է նշել, որ 2007 թ. Ազգային ժողովի ընտրությունների նախօրյակին կուսակցությունն իր շարքերում ուներ 300 000-ից ավելի անդամ, տարածքային 41 ստորաբաժանումներ և այլն: Ազգային ժողովի 4-րդ գումարման (2007 թ.) ընտրություններին կուսակցությունը համամասնական ընտրակարգով առաջադրել էր 112 թեկնածու, իսկ մեծամասնականով՝ 13 թեկնածու, և, ի վերջո, Ազգային ժողովում ունեցավ 25 պատգամավոր, իսկ իշխող «Հայաստանի հանրապետական կուսակցության» և «Օրինաց երկիր» ու «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունների հետ կազմեց կոալիցիա, ինչը փաստում է լայն զանգվածների վստահության մասին: Սակայն ճշմարտությունը նաև այն է, որ մարդկանց մի զգալի մասը ոչ այնքան գնում էր կուսակցության ծրագրային դրույթների ետևից, այլ ավելի շատ հավատում և վստահում էր կուսակցության առաջնորդին:

Հանրապետության ընդդիմադիր դաշտի շուրջ 2 տասնյակ կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ միավորվելով կազմեցին «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ) կուսակցությունների դաշինքը, որը ձևավորվեց 2008 թ. օգոստոսին՝ ՀՀ առաջին նախա-

գահի ղեկավարությամբ[220]: Կուսակցությունների այս դաշինքը միավորում էր «ՀՀՇ», «Ազատություն», «ՀԺԿ», «Հանրապետություն», «Հայոց հայրենիք», «Պահպանողական» և կուսակցական այլ խմբեր:

2008 թ. մարտի 21-ին նորընտիր նախագահի նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողովում մեծամասնություն կազմող չորս կուսակցություններ՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՕԵԿ-ն ու ՀՅԴ-ն, ստորագրեցին քաղաքական կոալիցիայի համաձայնագիր՝ ստանձնելով երկրի կառավարման պատասխանատվությունը: Վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը[221]:

Պատճառաբանելով, թե իշխանությունների՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված քաղաքականությունը չի բխում Հայաստանի շահերից՝ կապված հայ-թուրքական ճանապարհային քարտեզի համաձայնագրի ստորագրման հետ, ՀՅԴ-ն 2009 թ. ապրիլի 22-ին դուրս եկավ կոալիցիայից և հայտարարեց, որ ծավալում է կառուցողական ընդդիմադիր գործունեություն[222]:

Ընդդիմությունը միավորվեց և հիմնեց «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ) դաշինքը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ: ՀՀ նորընտիր նախագահի նախաձեռնությամբ ՀՀ քաղաքական կյանքում սկսեց ձևավորվել նոր, փոխադարձաբար ավելի հանդուժող մթնոլորտ: Հասարակության հուզող հարցերը վերհանելու, քննարկումներ կազմակերպելու, դրանց լուծման ուղիները մատնանշելու և իրականացնելու նպատակով ՀՀ նախագահի առաջարկով 2008 թ. աշնանը ստեղծվեց Հանրային խորհուրդ, որի կազմում ընդգրկվեցին հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող մասնագետներ, մտավորականության ներկայացուցիչներ: Հանրային խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀ նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանը[223]: Նա ակտիվ գործունեություն ծավալեց հասարակությանը հուզող շատ հիմնահարցեր բարձրացնելու, քննարկելու և նախագահին ու կառավարությանը ներկայացնելու համար:

---

[220] Տե՛ս Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 67-68:
[221] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22 մարտի, 2008:
[222] Տե՛ս նույն տեղում:
[223] Տե՛ս նույն տեղում, 22 նոյեմբերի, 2008:

ՀԱԿ-ը մարտիմեկյան ողբերգական դեպքերից որոշ ժամանակ անց նորից կազմակերպեց հանրահավաքներ, որտեղ հիմնական պահանջը նախագահական և խորհրդարանական արտահերթ ընտրություններն էին, նաև ձերբակալված ակտիվիստներին՝ որպես քաղաքական բանտարկյալների ազատելը:

ՀՀ նախագահի նախաձեռնությամբ 2008 թ. մարտի դեպքերից հետո առաջարկվել էր՝ «քանդել անհանդուրժողության պատը», և երկխոսություն սկսվեց քաղաքական ուժերի միջև: 2009 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ առաջին անգամ ձևավորվեց ՀՀ կուսակցությունների համատեղ խորհրդակցությունների ավանդույթ: 2011 թ. մայիս-սեպտեմբեր ընկած շրջանում մի քանի անգամ տեղի ունեցան ՀԱԿ-ի և քաղաքական կոալիցիայի ներկայացուցիչների երկխոսություններ, որոնք քաղաքական մշակույթի ձևավորման առումով շատ կարևոր էին, քանի որ ցանկացած դեպքում դրական ազդեցություն կարող էին ունենալ երկրի ներքին կայունության վրա:

Դեռևս երկխոսությունը սկսելուց առաջ՝ 2011 թ. մայիսի 28-ին, ՀՀ նախագահի կողմից համաներման իրավունքով Երևանի և հանրապետության այլ վայրերի բանտերից ազատ արձակվեցին ՀԱԿ մի շարք ակտիվիստներ ու հավաքների կազմակերպիչներ[224], ինչպես նաև նրանց հանրահավաքները թույլատրվեց անցկացնել Ազատության հրապարակում: Այդ ամենը, անշուշտ, նպաստեց երկխոսության կայացմանը: Ուստի պատահական չէ, որ երկու փուլով իրականացվեց երկխոսությունը մի կողմից ՀԱԿ-ի, մյուս կողմից՝ իշխող կոալիցիայի ներկայացուցիչների միջև՝ հունիս-հուլիսից սկսած մինչև օգոստոս-հոկտեմբեր ամիսներ:

2012 թ. փետրվարին «Հայաստանի Հանրապետական», «Օրինաց երկիր» և «Ժառանգություն» կուսակցությունները դարձան եվրոպական ժողովրդական կուսակցության անդամ՝ դիտորդ-անդամի կարգավիճակով: Սա նշանակում է, որ նրանք ամբողջությամբ մասնակցելու են ԵԺԿ քաղաքական կյանքին, որը մեծ կարևորություն ու-

[224] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 մարտի, 2011:

նի Հայաստանի Հանրապետության համար: Հետագայում «Օրինաց երկիր» կուսակցությունը դուրս եկավ ԵԺԿ անդամակցությունից, քանզի վերափոխվել էր «Հայկական վերածնունդ» կուսակցության:

Կուսակցությունները ակտիվ աշխատանքներ տարան 2012 թ. մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար:

Հասարակության ակտիվության պայմաններում ընթացան Ազգային ժողովի հինգերորդ գումարման 2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները՝ համամասնական 90, մեծամասնական 41 պատգամավորների տեղերի համար: Ընտրություններին մասնակցեցին 8 կուսակցություններ և մեկ դաշինք: Խորհրդարանական այս ընտրություններին հանրապետությունում պաշտոնապես գրանցված 77 կուսակցություններից վերը նշված կուսակցությունների և դաշինքի կազմում մասնակցեցին 31-ը՝ իրենց ներկայացուցիչներով: Այսինքն՝ հայաստանյան քաղաքական կուսակցությունների կեսից ավելին ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չէին մասնակցելու ընտրություններին:

Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրություններում, ըստ ԿԸՀ պաշտոնական տվյալների, բացարձակ հաղթանակ տարավ ՀՀԿ-ն՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ՝ 44.02 % (69 պատգամավորական մանդատ): ԲՀԿ-ն երկրորդն էր՝ 30.12 % (37 մանդատ): Մյուս կուսակցություններից 5-7 %-ի շեմը հաղթահարեցին և խորհրդարան մտան ՕԵԿ-ը՝ 5,51 %՝ (6 մանդատ), ՀՅԴ-ն՝ 5,67 %՝ (5 մանդատ), «Ժառանգությունը»՝ 5,76 % (5 մանդատ) և ՀԱԿ-ը՝ որպես կուսակցությունների դաշինք՝ 7,8 % (7 մանդատ): Մայրաքաղաքում ամենաշատ ձայներ ստացան ՀՀԿ-ն՝ 37.51%, ԲՀԿ-ն՝ 27.07 %, ՀԱԿ-ը՝ 11.64 %, ԺԿ-ն՝ 9.86 %, ՀՅԴ-ն՝ 6.16 %, ՕԵԿ-ը՝ 15.28 %, ՀԿԿ-ն՝ 1.34 % : Մյուսները ստացել են 1%-ից էլ պակաս ձայներ: ԲՀԿ-ն հրաժարվեց կոալիցիայի մեջ մտնելուց: ՀՀԿ-ն ՕԵԿ-ի հետ ձևավորեց նոր կառավարություն: Կրկին վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը, իսկ ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Հովիկ Աբրահամյանը[225] : Վերջինս 2016 թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ կառավա-

[225] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 մայիսի, 2012:

ության նիստում հրաժարական տվեց: Նրան փոխարինեց Երևանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը:

2014 թ. ապրիլից ՕԵԿ-ը դուրս եկավ կոալիցիոն կառավարությունից՝ ընդունելով ընդդիմադիր կեցվածք: Այն 2015 թ. փոխեց իր անվանումը՝ դառնալով «Հայկական վերածնունդ» կուսակցություն, որը համախմբեց մի քանի տասնյակ կուսակցություններ և հասարակա-քաղաքական կազմակերպություններ՝ խնդիր դնելով հաջողության հասնել Ազգային ժողովի առաջիկա ընտրություններում:

2015 թ. ապրիլին ՀՀ նախագահի կողմից հայ-թուրքական արձանագրությունների հետկանչումը խորհրդարանից, ինչպես նաև ՀՀ սահմանադրական փոփոխություններով խորհրդարանական համակարգին անցումը, որը բխում էր ՀՅԴ առաջարկներից, հնարավորություն ընձեռեց կուսակցությանը հանուն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական ու իրավական պետության 2016 թ. փետրվարի 25-ին քաղաքական համագործակցության համաձայնագիր ստորագրելու ՀՀԿ-ի հետ և մտնելու կոալիցիայի մեջ՝ ստանձնելով կառավարման պատասխանատվությունը[226]:

ՀՀ նախագահական վեցերորդ ընտրություններն անցկացվեցին 2013 թ. փետրվարի 19-ին: Ըստ ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների՝ ՀՀ նախագահի յոթ թեկնածուներից առավել շատ ձայներ հավաքեցին ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը՝ 58,64 %, «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ 36,74 %: Մյուս թեկնածուներից (Հրանտ Բագրատյանը, Պարույր Հայրիկյանը, Անդրիաս Ղուկասյանը, Արման Մելիքյանը, Վարդան Սեդրակյանը) ոչ մեկը չհաղթահարեց 5 %-ի շեմը: ՀՀ նախագահ վերընտրվեց Սերժ Սարգսյանը[227]: Մայրաքաղաքում նախագահական ընտրություններում քվերակության արդյունքներով, ըստ ԿԸՀ տվյալների, ամենաշատ ձայներ են ստացել ՀՀ գործող նախագահ Ս. Սարգսյանը՝ 44, 42 %, Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ 42, 94 % : Մյուս թեկնածուներից Հրանտ Բագրատյանը ստացել է 4,12 %, Պարույր Հայրիկյանը 1, 65 %, Անդրեաս Ղուկասյանը 1,04 %, իսկ մնացած

[226] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11, 26 փետրվարի, Երևան, 2016, էջ 1, 3:
[227] Տե՛ս նույն տեղում, 26.02.2013:

թեկնածուները ստացել են 1 %-ից ավելի ցածր ձայներ[228]:

2013 թ. նախագահական ընտրությունների արդյունքներից դժգոհող ընդդիմությունը Ռաֆֆի Հովհաննիսյանի ղեկավարությամբ հանրահավաքներ էր կազմակերպում : Ընտրությունները համարելով կեղծված՝ նախագահ Սերժ Սարգսյանին հայտարարում էին ոչ լեգիտիմ, ընտրախախտումներով ընտրված և պահաջում էին նոր ընտրություններ[229]: Շուրջ 2 ամիս շարունակվող ցույցերը աստիճանաբար մարեցին՝ որևէ արդյունք չտալով[230]:

2016 թ. հուլիսի 17-ի վաղ առավոտյան «Սասնա ծռեր» խումբը, «Հիմնադիր խորհրդարան» շարժման մի խումբ զինյալ անդամներ գրավեցին Երևանի Էրեբունու ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքը՝ պահանջելով ՀՀ նախագահի հրաժարականն ու Ժիրայր Սեֆիլյանի ազատ արձակումը[231]:

Հարձակման ժամանակ սպանվեց ոստիկանության սպա՝ գնդապետ Արթուր Վանոյանը: «Սասնա ծռեր» խումբը պատանդ վերցրեց գնդում գտնվող ոստիկաններին և որպես բանագնաց ժամանած ոստիկանապետներ Վարդան Եղիազարյանին ու Վալերի Օսիպյանին: Զինված հարձակումը տևեց 15 օր: Հուլիսի 21-ի երեկոյան Խորենացու փողոցում ցուցարարների և ոստիկանների միջև բախում եղավ: Գնդի տարածքում հուլիսի 27-ին տեղի ունեցավ փոխհրաձգություն: Նույն օրը գնդում նոր պատանդներ հայտնվեցին՝ շտապօգնության չորս բուժաշխատող: Հուլիսի 30-ին սպանվեց ևս մեկ ոստիկան՝ Յուրի Տեփանոսյանը: Զինյալները հանձնվեցին հուլիսի 31-ին գեներալ Վիտալի Բալասանյանի միջնորդությամբ: Օգոստոսի 13-ին մահացավ ՊՊԾ գնդի գրավման առաջին օրը վիրավորված ավագ ենթասպա Գագիկ Մկրտչյանը[232]: Օգոստոսի 3-ին ՊՊԾ գունդը գրա-

---

[228] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 մայիսի, 2012:

[229] Տե՛ս Է. Մինասյան, Մայրաքաղաք Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը անկախության տարիներին // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2019, N1, էջ 84-85:

[230] Տե՛ս նույն տեղում:

[231] Տե՛ս Անկախության հատընտիր, Երևան, 2016, էջ 125-126, Հայաստանի անկախության 25-ամյակի ժամանակագրություն (1990-2016), «Մենք մեր մասին» ամսագիր, Երևան, 2016, էջ 175:

[232] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11, 26 փետրվարի, էջ 1, 3:

ված անձանց նկատմամբ հարուցվեց քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 219րդ (շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը) և 235-րդ (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրականացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հոդվածներով: Ձերբակալվեց կամ կալանավորվեց ընդհանուր առմամբ 47 անձ, այդ թվում՝ ՊՊԾ գունդը գրաված 31 անձ: Նրանց մեծ մասը ազատ արձակվեց, մյուսների նկատմամբ հարուցված քրեական գործերի շրջանակներում 2017 թ. վերջին և մինչ այժմ շարունակվում է դատավարությունը:

2017 թ. ապրիլի 2-ին տեղի ունեցան ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունները: Ըստ ԿԸՀ պաշտոնական տվյալների՝ քվեարկության մասնակիցների 1 577 323 հոգուց ամենաշատ ձայներ են ստացել ՀՀԿ-ն՝ 49, 14 %, «Ծառուկյան դաշինքը»՝ 27,36 %, ՀՅԴ-ն՝ 6,58 %, «Ելքը»՝ 7,79 %: Մյուս կուսակցությունները և դաշինքները՝ ԱԴԿ-ն, ՀՎԿ-ն, «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքը[233], ՀԿԿ-ն ու «ՕՐՕ» դաշինքը 5 %-ից էլ ցածր ձայներ են ստացել[234]:

ԿԸՀ պաշտոնական տվյալներով մայրաքաղաքում ԱԺ ընտրություններում ամենաշատ ձայներ են ստացել ՀՀԿ-ն՝ 49.03 %, «Ծառուկյան դաշինքը»՝ 21.18 %, «Ելքը»՝ 14.13 %, ՀՅԴ-ն՝ 4.99 %, ՀՎԿ-ն 3.23 %: Մյուսները 3 %-ից էլ պակաս ձայներ են ստացել:

2018 թ. փետրվարին լրանում էր ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի պաշտոնավարման ժամկետը: Հայաստանի Հանրապետության չորրորդ նախագահի պաշտոնում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը «Հայաստանի հանրապետական կուսակցության» կողմից առաջարկեց Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանի թեկնածությունը: ՀՀ նորացված Սահմանադրության ընդունումից հետո առաջին անգամ ՀՀ նախագահը ընտրվեց ՀՀ օրենսդիր մարմնի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից: 2018 թ. մարտի 2-ին Ազգային ժողովի կողմից 7 տարի ժամկետով ՀՀ նախագահ ընտրվեց

[233] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11, 26 փետրվարի, էջ 1, 3:
[234] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 ապրիլի, 2017:

ՀՀ նախկին վարչապետ Արմեն Վարդանի Սարգսյանը[235]: 2018 թ. ապրիլի 9-ին մայրաքաղաքի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամալիրում հրավիրված Ազգային ժողովի հատուկ նիստում տեղի ունեցավ նորընտիր նախագահի պարտականությունները ստանձնելու երդման արարողությունը[236]:

Նորընտիր նախագահը, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, ընդունեց հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի և կառավարության հրաժարականը և ստորագրեց առաջին հրամանագիրը, որով այդ պահից Կարեն Կարապետյանն ու կառավարությունը շարունակելու էին իրենց գործունեությունը՝ որպես գործող կառավարության պաշտոնակատարներ մինչև նոր վարչապետի առաջադրումը և կառավարության կազմումը: Փոփոխված Սահմանադրության 6-րդ գլխի համաձայն՝ վարչապետի և կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցությունները իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

Քանի որ նորացված Սահմանադրությամբ անցում էր կատարվում կիսանախագահական կառավարման համակարգից խորհրդարանական հանրապետության, որտեղ ընդլայնվել էին վարչապետի իրավունքները, ուստի խիստ կարևորվում էր վարչապետի թեկնածուի առաջադրումը: ՀՀ վարչապետի պաշտոնակատար Կ. Կարապետյանը «Հանրապետական կուսակցության» կողմից ՀՀ վարչապետի թեկնածու առաջադրեց կուսակցության նախագահ Ս. Սարգսյանին:

Վերջնականապես 2018 թ. ապրիլի 16-ին իշխող կուսակցության՝ ՀՀԿ խորհրդի նիստում քննարկվեց այդ հարցը, հավանություն տրվեց առաջարկին, որոշվեց ՀՀ վարչապետի պաշտոնում առաջա-

---

[235] Տե՛ս Է. Մինասյան, Հասարակական-քաղաքական գործընթացները մայրաքաղաքում, տե՛ս Երևանի պատմություն, Երևան, 2018, էջ 271:
[236] Տե՛ս նույն տեղում:

դրել ՀՀԿ ղեկավար, ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի թեկնածությունը: Այս առաջարկությունը հավանություն էր ստացել նաև ՀՀ ԱԺ ՀՀԿ և ՀՅԴ խմբակցությունների կողմից: Դեռևս 2014 թ. ապրիլի 10-ին՝ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների հետ հանդիպման ժամանակ, ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանը հայտարարեց, որ այլևս երբեք չի առաջադրվելու ՀՀ նախագահի պաշտոնի համար, իսկ խորհրդարանական կառավարման համակարգի դեպքում չի հավակնելու նաև վարչապետի պաշտոնին: Հակառակ այս հայտարարության՝ Ս. Սարգսյանը առաջադրվեց ՀՀ վարչապետի պաշտոնում: Այս հանգամանքը խիստ դժգոհություն առաջացրեց ընդդիմության, հատկապես Ազգային ժողովի «Ելք» խմբակցության ղեկավար, ընդդիմադիր գործիչ Նիկոլ Փաշինյանի և նրա համախոհների շրջանում: Այս հանգամանքն օգտագործելով և հաշվի առնելով ժողովրդի դժգոհությունը իշխող համակարգից՝ Նիկոլ Փաշինյանը նախաձեռնեց «Իմ քայլը» շարժումը, որը վերածվեց թավշյա հեղափոխության՝ իր շարքերում ընդգրկելով տասնյակ ու հարյուր հազարավոր մարդկանց: Ըստ սոցիոլոգ Գևորգ Պողոսյանի դիտարկման՝ ժողովրդի 70 տոկոսի դժգոհության հիմնական պատճառները բնակչության սոցիալ-տնտեսական վիճակն է, ցածր աշխատավարձերը, կենսաթոշակները, գործազրկությունը, մենաշնորհները, հովանավորչությունը, արդարության պակասը. կոռուպցիան, զանգվածային արտագաղթը և այլն[237]: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ որոշեց քայլարշավը սկսել մարզերից, առաջին հերթին՝ Շիրակի և Լոռու մարզերից: Շարժումը սկսվեց ապրիլի սկզբին բողոքի ակցիաներով, հանրահավաքների տեսքով, «Քա՛յլ արա, մերժի՛ր Սերժին» կարգախոսով: Այն դարձավ ավելի բազմամարդ ապրիլի 13-ին, երբ քայլարշավի մասնակիցները հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ հասան մայրաքաղաք Երևան: 10 օր ապրիլի

[237] Տե՛ս Գ. Պողոսյան, Հայաստանի Հանրապետության 25 տարին // Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2017, էջ 10-11:

13-23-ը մայրաքաղաքում շարունակվող բողոքի բազմամարդ հանրահավաքները, ցույցերն ու երթերը անճանաչելիորեն փոխեցին Հայաստանը: Երևանյան ցույցերի կենտրոնում շարժման շարժիչ ուժը երիտասարդությունն էր հիմնականում՝ ուսանողները[238]:

Անկախության սերունդն այլևս չէր ուզում կառավարվել նախկին ձևով և փորձում էր թելադրել իր խաղի կանոնները: «Քա՛յլ արա, մերժի՛ր Սերժին» շարժումը ընթանում էր սիրո և համերաշխության կոչերով՝ աստիճանաբար վերածվելով անհավանական թվացող ալիքի: «Իմ քայլը» նախաձեռնության մասնակիցները, քայլերթով անցնելով Երևանի փողոցներով, դասադուլների և գործադուլների կոչեր էին անում, մտնելով բուհեր և ձեռնարկություններ՝ առաջարկում էին իրենց միանալ: Հավաքների մասնակիցները Երևանի տարբեր փողոցներում երթեր էին անցկացնում՝ ձգտելով փակել խաչմերուկները, երթևեկելի հատվածները, կամուրջները և այլն, կաթվածահար անելով մայրաքաղաքի երթևեկությունը: Ցուցարարների գլխավոր նպատակն էր թույլ չտալ ՀՀ վարչապետության թեկնածու Սերժ Սարգսյանին ապրիլի 17-ին ՀՀ ԱԺ հատուկ նիստում ընտրվելու վարչապետ: Այս նպատակով նրանք Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ փորձեցին շրջափակել ՀՀ ԱԺ շենքը, սակայն դա նրանց չհաջողվեց: Վերոնշյալ հատուկ նիստում բաց քվեարկությամբ 77 կողմ, 18 դեմ ձայներով վարչապետ ընտրվեց Սերժ Սարգսյանը[239]:

ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը նույն օրը հրամանագիր ստորագրեց Ս. Սարգսյանին վարչապետ նշանակելու մասին: Վերջինս ձեռնամուխ եղավ նոր կառավարություն կազմելու աշխատանքներին: Սակայն այս ամենից դժգոհ ցուցարարների քանակը գնալով ավելի ստվարացավ: Այդ պահին, երբ խորհրդարանում պարզ դարձավ, որ վարչապետ է ընտրվել Ս. Սարգսյանը, Նիկոլ Փաշինյանի որոշում կայացրեց երթի ուղղությունը մայրաքաղաքում փոխելու ոչ թե Բաղրամյան պողոտա, որտեղ ոստիկանական մեծ ուժեր ու հատուկ

---

[238] Տե՛ս Գ. Պողոսյան, Հայաստանի Հանրապետության 25 տարին // Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2017, էջ 10-11:
[239] Տե՛ս նույն տեղում, էջ 272:

տեխնիկա էր կուտակված, այլ դեպի պետական գերատեսչություններ, դրանց մուտքերը որոշ ժամանակով շրջափակելու՝ աշխատանքը կաթվածահար անելու նպատակով[240]:

Նիկոլ Փաշինյանը, ապրիլի 20-ի բազմահազարանոց հանրահավաքում անդրադառնալով իշխանական ճամբարից հնչեցված երկխոսության կոչերին, նշեց, որ իշխանությունն այսուհետ անվերադարձ պատկանում է Հայաստանի Հանրապետության ժողովրդին և երկխոսելն արդեն ուշ է: Այդ հայտարարությունից հետո նա հանրահավաքում կետերով ներկայացրեց հետագա քայլերի տեսլականը, որին սպասում էին բողոքի մասնակիցները ու հայ հանրությունը:

1. «Սերժ Սարգսյանը հրաժարական է տալիս վարչապետի պաշտոնից:

2. Ազգային ժողովը վարչապետ է ընտրում ժողովրդի թեկնածուին:

3. Ձևավորվում է ժամանակավոր կառավարություն:

4. Հայաստանի օրենսդրությամբ վարչապետ նշանակվելուց հետո՝ 20 օրվա ընթացքում, պետք է Ազգային ժողովը հավանություն տա կառավարության ծրագրին»[241]:

Ապրիլի 22-ին առավոտյան տեղի ունեցավ Ս. Սարգսյանի ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար, շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում: Հանդիպումը տևեց մի քանի րոպե և ավարտվեց անարդյունք: Այդուհետ ցուցարարները՝ Ն. Փաշինյանի ղեկավարությամբ, երթերը շարունակեցին Էրեբունի վարչական շրջանում: Այստեղ ոստիկանությունը ուղղակի առևանգեց ԱԺ պատգամավորներ Նիկոլ Փաշինյանին, Սասուն Միքայելյանին և Արարատ Միրզոյանին: Բերման ենթարկվեցին նաև բազմաթիվ մասնակիցներ: Շարժման առաջնորդներին ձերբակալե-

[240] Տե՛ս Գ. Պողոսյան, Հայաստանի Հանրապետության 25 տարին // Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2017, էջ 272:
[241] Նույն տեղում:

լուց հետո օրվա ընթացքում ցույցերը ոչ միայն չդադարեցին, այլև ծավալվեցին[242]:

Ապրիլի 23-ը քաղաքական ճգնաժամի, նոր իրավիճակում հանգուցալուծման օր դարձավ: Շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանի հետ համաձայնության հասնելու նպատակով նրան այցելեցին ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը, այնուհետև՝ ՀՀ առաջին փոխվարչապետ Կարեն Կարապետյանը[243]: Վերջինս դիմել էր գլխավոր դատախազին՝ ետ կանչելու պատգամավորներին կալանավորելու թույլտվություն տալու միջնորդությունը և գնացել էր հանդիպելու Ն. Փաշինյանի հետ: Որոշ ժամանակ անց «Ելք» խմբակցության պատգամավորները ազատ արձակվեցին: Այդ ընթացքում ցուցարարները շարունակեցին բազմահազարանոց երթերը մայրաքաղաքի փողոցներում: Այդ նույն օրը համաժողովրդական շարժման միանալու մասին հայտարարությամբ հանդես եկան «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, ԱԺ «Ծառուկյան դաշինք» խմբակցությունը և «Հայ հեղափոխական դաշնակցությունը»: Կեսօրից հետո հրաժարական ներկայացրեց վարչապետ Սերժ Սարգսյանը: Ազգային միասնականության ու համերաշխության գիտակցությունը հաղթեց: Իրավիճակն արագ լիցքաթափվեց և, բարեբախտաբար, անարյուն:

Երեկոյան ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը ընդունեց կառավարության հրաժարականը: Վարչապետի պարտականությունները ժամանակավորապես ստանձնեց առաջին փոխվարչապետ Կարեն Կարապետյանը: «Իմ քայլը» նախաձեռնության անդամները հայտարարեցին շարժման հաղթանակի մասին և տոնեցին այն: Ապրիլի 25-ից շարունակվեցին հանրահավաքները որոշ ընդհատումներով մինչև մայիսի 1-ը ներառյալ: Համաժողովրդական բազմահազարանոց հանրահավաքներում որպես ժողովրդի կողմից առաջադրված վարչապետի թեկնածու հնչում էր շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանի անունը: Այդ օրերին ամենուրեք ընդգծվում էր, որ Հայաստանում ճգնաժամային իրավիճակի կարգավորումը պետք է տեղի ունենա բացառապես իրավական դաշտում՝ Սահմանադրության շրջանակ-

[242] Տե՛ս Ս. Գրիգորյան, Հայկական թավշյա հեղափոխություն, Երևան, 2018, էջ 109:
[243] Տե՛ս Ս. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 109:

ներում: ՀՀ վարչապետի պաշտոնի համար ընտրության առաջին փուլի՝ մայիսի 1-ի նախօրյակին «Ելք» խմբակցությունն առաջադրեց համաժողովրդական շարժման առաջնորդ Ն. Փաշինյանի թեկնածությունը: ԱԺ «Ծառուկյան» և ՀՅԴ խմբակցություններն իրենց աջակցությունը հայտնեցին «Ելք» խմբակցության կողմից առաջադրված թեկնածու Նիկոլ Փաշինյանին՝ հայտարարելով, որ քվեարկելու են նրա վարչապետության օգտին[244]: Խորհրդարանական ՀՀԿ խմբակցությունը հայտարարեց, որ որոշում կկայացնի Ն. Փաշինյանի հետ հարցուպատասխանից հետո:

Մայիսի 1-ին խորհրդարանական մեծամասնությունը՝ ՀՀԿ խմբակցությունը, 56 ձայնով մերժեց Ն. Փաշինյանին ՀՀ վարչապետի պաշտոնում ընտրելու առաջարկը: Ն. Փաշինյանը ստացավ 45 կողմ ձայն: Այս ամենն առաջացրեց հանրահավաքի մասնակիցների խիստ դժգոհությունը՝ հարյուր հազարների հասցնելով նրանց շարքերը: Հաջորդ երկու օրերին ևս շարունակվեցին բողոքի ցույցերը:

Նորացված Սահմանադրության համաձայն՝ ՀՀ ԱԺ հատուկ նիստից հետո՝ մայիսի 3-ին, երկրորդ փուլում վարչապետի թեկնածությունը պետք է առաջադրվեր ԱԺ 1/3-ի կողմից: Մայիսի 8-ին ՀՀ վարչապետի ընտրության օրակարգով տեղի ունեցավ ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստը: ՀՀ ԱԺ 45 պատգամավորների ստորագրությամբ կրկին ՀՀ վարչապետի թեկնածու առաջադրվեց ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար Ն. Փաշինյանը[245]: ՀՀԿ խմբակցությունը հայտնեց, որ վարչապետի նոր թեկնածու չի առաջադրի և կաջակցի, որպեսզի առաջադրված թեկնածուն դառնա վարչապետ:

ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստում գրանցված 101 պատգամավորներից Ն. Փաշինյանի օգտին քվեարկեցին «Ելք», ՀՅԴ և «Ծառուկյան դաշինք» խմբակցության բոլոր ներկա պատգամավորները, իսկ ՀՀԿ-ից՝ միայն 13 պատգամավոր: ՀՀ ԱԺ հատուկ նիստում 59 կողմ, 42 դեմ ձայների հարաբերակցությամբ Նիկոլ Փաշինյանն ընտրվեց ՀՀ 16-րդ վարչապետ: Այսպես հաղթանակեց ժո-

---

[244] Տե՛ս Է. Մինասյան, Հասարակական-քաղաքական գործընթացները մայրաքաղաքում // Երևանի պատմություն, էջ 273:
[245] Տե՛ս նույն տեղում, էջ 274:

ղովրդական ոչ բռնի, խաղաղ, Թավշյա հեղափոխությունը, և ավարտվեց քաղաքական ճգնաժամը: Նույն օրը ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը ստորագրեց հրամանագիր, որով Ն. Փաշինյանը նշանակվեց ՀՀ վարչապետի պաշտոնում:

Ժողովրդավարության նոր էջ բացվեց երրորդ հանրապետության պատմության մեջ: Այն ապագայի նկատմամբ վստահություն և սեփական ուժերի նկատմամբ հավատ ներշնչեց հայ ժողովրդին: Ըստ էության, ընդդիմության ղեկավարի՝ Ն. Փաշինյանի և նրա թիմի կողմից նախաձեռնված ակտիվ պայքարի ծավալումը, սկսած քայլարշավից, վերջացրած մայրաքաղաքի փողոցների փակմամբ, մի տեղում չկենտրոնանալով, դժվարություններ ստեղծեց ոստիկանական ուժերի գործողություններում, ինչպես նաև սմարթֆոնների և սոցցանցերի ակտիվ օգտագործումն ու դրանց միջոցով գործողությունների համակարգումը, լավ մտածված քաղտեխնոլոգիայի այլ մեթոդների կիրառումը ապահովեցին հեղափոխության խաղաղ հաղթանակն ու իշխանափոխության անցնցում փոխանցումը: Փաստորեն՝ Ս. Սարգսյանի և ՀՀԿ-ի 20-ամյա իշխանության դեմ սկսված բողոքի աննախադեպ գործողություններն ավարտվեցին բողոքարարների՝ ընդդիմության հաղթանակով: Անարյուն, ոչ բռնի ժողովրդական հեղափոխության հաղթանակը բարձրացրեց Հայաստանի՝ իբրև ժողովրդավար երկրի և նրա ժողովրդի հեղինակությունը միջազգային ասպարեզում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Անկախության տարիներին էական փոփոխությունների ենթարկվեց նաև Երևանը՝ որպես անկախ հանրապետության մայրաքաղաք: Այն պահպանեց իր հիմնական գործառույթները, այդ թվում՝ վարչականը: Անկախ պետության մայրաքաղաք լինելը Երևանին տվեց նաև նոր գործառույթներ: Այսօր մայրաքաղաքում են կենտրոնացված պետական և քաղաքական կառավարման համակարգերը, բոլոր կարևոր հաստատությունները՝ նախագահը, Ազգային ժողովը, կառավարությունը, ինչպես նաև միջազգային կառույցների հայաստանյան գրասենյակները: Երևանում են գտնվում նաև տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցչությունները՝ դեսպանությունները, հյուպատոսությունները և այլն: Մայրաքաղաքում է կենտրոնացված ոչ միայն հանրապետության վարչական, այլև ֆինանսական և մտավոր ներուժը, որը Երևանին դարձնում է ինքնուրույն, որոշ դեպքերում՝ նաև հանրապետության այլ մարզերից ու բնակավայրերից էապես տարբերվող լայն հնարավորություններ ունեցող քաղաք: Խորհրդային շրջանում մայրաքաղաքը ղեկավարում էր ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարը, Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահի հետ միասին: Մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր, այդ թվում մշակութային առաջընթացը ուղղորդվել ու ղեկավարվել է Հայաստանի կոմկուսի Երևանի քաղաքային կոմիտեի և կուսակցության շրջանային կոմիտեների կողմից: ՀԿԿ Երևանի քաղկոմի և շրջկոմների անմիջական ղեկավարությամբ են աշխատել քաղաքային բոլոր կազմակերպությունները, այդ թվում՝ մայրաքաղաքի խորհրդային մարմինները՝ աշխատավորների, դեպուտատների Երանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն և շրջանային խորհուրդների գործկոմները: Հատկանշական է, որ մայրաքաղաքի խորհրդային մարմինների բոլոր ղեկավարները երաշխավորվում, նշանակվում կամ հաստատվում էին կուսակցության Երևանի քաղկոմի և շրջկոմների կողմից և իրենց գործունեությամբ՝ մայրաքաղաքի բարեկարգման, բնակչության կոմունալ, կենցաղային պայմանների բարելավման և մյուս հարցերի

լուծման ուղղությամբ տարվող աշխատանքների համար հաշվետու էին մայրաքաղաքի կուսակցական կոմիտեներին՝ քաղկոմի առաջին քարտուղարի գլխավորությամբ: ՀՀ անկախության շրջանի սկզբից, հատկապես ԽՍՀՄ կազմալուծումից հետո կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարի գործառույթներն անցան աշխատավորների, դեպուտատների Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահին: Խորհրդային իշխանության վերջին տարում քաղխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնում եռանդուն և արդյունավետ գործունեություն են ծավալել այնպիսի ճանաչված կազմակերպիչներ, ինչպիսիք են Արտաշես Մամիկոնի Գեղամյանն ու Համբարձում Փայլակի Գալստյանը:

Սահմանադրության ընդունումից հետո իրականացվեցին պետահիրավական և վարչական մի շարք բարեփոխումներ: ՀՀ տարածքային կառավարման կառուցվածքի բարելավման և տեղական ինքնակառավարման խորացման նպատակին էին ծառայում 1995 թ. դեկտեմբերին կատարված վարչատարածքային փոփոխությունները և վարչական նոր միավորումների՝ մարզերի ու համայնքների հիմնումը: 1995 թ. նոյեմբերի 7-ին Ազգային ժողովն ընդունեց «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքը[246], որի համաձայն՝ հանրապետության 37 վարչական շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 10 մարզեր՝ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Տավուշի: Մարզի կարգավիճակ ստացավ քաղաքամայր Երևանը: Մարզերը բաժանվեցին 930 համայնքների, որոնցից 47-ը՝ քաղաքային, 12-ը՝ թաղային և 871-ը՝ գյուղական[247]:

ՀՀ վարչատարածքային բաժանման արդյունքում գոյացած համայնքները զգալիորեն տարբերվում են միմյանցից բնակչության թվով, աշխարհագրական դիրքով, զարգացածության աստիճանով և այլ հատկանիշներով[248]:

---

[246] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Ա, Երևան, 1999, էջ 51-73:
[247] Տե՛ս նույն տեղում:
[248] Տե՛ս Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում, քաղաքականության տարբերակներ ու ուղիներ, գիրք 1, Երևան, 2004, էջ 6:

1996 թ. հունիսի 30-ին Ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, որին հաջորդեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին» օրենքը[249]: Հստակորեն չէին տարանջատվում մարզպետների, Երևանի քաղաքապետի ու համայնքապետների միջև իշխանության գործառույթների, տարածքի, գույքի, սեփականության հաստատման հարցերը:

Տեղական կառավարման համակարգի վերափոխման նպատակը լիազորությունների և պատասխանատվության ոլորտների սահմանազատումն էր մի կողմից պետության՝ ի դեմս կառավարության նշանակած մարզպետների, Երևանի քաղաքապետի, մյուս կողմից՝ տեղական համայնքների միջև՝ ի դեմս նրանց ընտրովի մարմինների ու ղեկավարների: Մարզպետն ու Երևանի քաղաքապետը օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում պետք է իրականացնեին կառավարության տարածքային քաղաքականությունը: Նախագահի հրամանագրով նրանց վերապահվեցին ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության ու շրջակա միջավայրի պահպանության ոլորտները:

1997 թ. մայիսի 6-ին ընդունվեցին ՀՀ նախագահի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» և «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» հրամանագրերը[250]: Այս հրամանագրերին նախորդել էին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները հանրապետական, մարզային, քաղաքային և գյուղական համայնքների գույքերի ցանկերը հաստատելու վերաբերյալ[251]:

---

[249] Տե՛ս Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում, քաղաքականության տարբերակներ ու ուղիներ, էջ 423-443:

[250] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ. 11, 20 մայիսի, Երևան, 1997, էջ 21-42:

[251] Տե՛ս ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, հ. 7-8, հուլիս, օգոստոս, Երևան, 1996, էջ 38-39, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ. 6, 31 մարտի, Երևան, 1997, էջ 78-90:

Ըստ 1995 թ. ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի՝ Երևան քաղաքն ուներ մարզի կարգավիճակ: Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում էր հանրապետության նախագահը: Տեղական ինքնակառավարումը Երևանում իրականացվում էր թաղային համայնքներում[252]: «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համաձայն՝ մարզերի և Երևան քաղաքի սահմանները նկարագրվում են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 1-ում և տեղաբաշխվում օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 1:200000 մասշտաբի տեղագրական կից քարտեզի վրա: Օրենքում արձանագրվեց, որ Երևան քաղաքի թաղամաս և բնակավայր ընդգրկող համայնքները կոչվում էին թաղային համայնքներ[253]: Երևան քաղաքի թաղային համայնքի սահմանները որոշվում են դրանց մեջ ընդգրկված բնակավայրերի և թաղամասերի սահմաններով:

«Տեղական ինքնակառավարման մասին» 1996 թ. հունիսի 30-ին Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ համայնքներում 3 տարի ժամկետով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար: Եթե համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընտրված ներկայացուցչական մարմին է, որն իրականացնում է սահմանադրությամբ և սույն օրենքով նախատեսված լիազորությունները, ապա համայնքի ղեկավարը քաղաքային համայնքում քաղաքապետերը, Երևանի թաղային համայքնում թաղապետը, գյուղական համայնքում գյուղապետը, օրենքով սահմանված կարգով ընտրված համայնքի գործադիր մարմինն է, որն իրականացնում է սահմանադրությամբ և սույն օրենքով նախատեսված լիազորությունները[254]: Մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր պարտականությունների ստանձնումը վարչապետը նշանակում է քաղաքային, Երևանում թաղային, իսկ մարզպետը գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Օրենքի 56-րդ հոդվածը վերաբերում է

---

[252] Տե՛ս ՀՀ սահմանադրություն, հիմնական օրենք, Երևան, 1995, էջ 8:
[253] Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, խմբագիր՝ Է. Հ. Օրդյան, Երևան, 2000, էջ 374:
[254] Տե՛ս նույն տեղում, էջ 349:

Երևանի խորհրդին, ըստ որի՝ նրա կազմի մեջ մտնում են Երևանի քաղաքապետը և թաղային համայանքների ղեկավարները: Երևանի քաղաքապետը խորհրդի ղեկավարն է: Երևանի խորհուրդը Երևանի քաղաքապետի ներկայացմամբ հաստատում է Երևան քաղաքի համար օրենքով սահմանված աղբյուրներից ձևավորվող եկամուտների սահմաններում ծախսերի նախահաշիվը՝ բյուջեն, ինչպես նաև այն թույլտվությունները տալու կարգը, որոնց համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի գանձում: Երևանի քաղաքապետը Երևանի խորհրդի մեծամասնությամբ՝

1. անվանում և վերանվանում է Երևանի փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, քաղաքային ենթակայության կրթական, մշակութային և այլ ձեռնարկություններն ու կազմակերպությունները,

2. օրենսդրությանը համապատասխան՝ կանոնակարգում է առևտրի և սպասարկման ոլորտի, ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությունը,

3. հաստատում է ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը:

Երևանի խորհրդի աշխատակարգը հաստատում է քաղաքապետը: Երևանի խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստի ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդի անդամների կեսից ավելին: Երևանի խորհրդի գործունեությունը կարգավորվում էր սույն օրենքով և նախագահի հրամանագրով[255]:

ՀՀ կառավարության՝ 1996 թ. փետրվարի 23-ի «Պատգամավորների շրջանային, Երևանի քաղաքային և Երևանի քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների լուծարման գործընթացն ապահովող միջոցառումների մասին» Ն 78 որոշման համաձայն՝ լուծարվեց նաև Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն, և 1996 թ. մարտից իր գործունեությունը սկսեց Երևանի քաղաքապետարանը:[256]

---

[255] Տե՛ս Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, խմբագիր՝ Է. Հ. Օրդյան, էջ 361:
[256] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե257 ց. 1, գ. 339, թ. 1:

Երևանի քաղաքապետարանը ապահովում է Երևանի քաղաքապետի կողմից ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը Երևան քաղաքի տարածքում: Երևանի քաղաքապետարանը ստեղծման ժամանակ ունեցել է 7 տարածքային բաժիններ՝ 1. Խորհրդային, 2. Էրեբունու, 3. Կենտրոնական, 4. Շենգավիթի, 5. Շահումյանի, 6. Մաշտոցի և 7.Արաբկիրի: Նշված 7 տարածքային բաժինները 1997 թ. լուծարվել են, և ստեղծվել են 12 թաղային համայնքներ՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն[257]:

ՀՀ կառավարության 1996 թ. մարտի 23-ի որոշմամբ հաստատվեց Երևանի ժամանակավոր կանոնադրությունը, իսկ 1997 թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ՝ հիմնական կանոնադրությունը: Այդ ժամանակահատվածում քաղաքապետարանի աշխատակազմը ենթարկվել է բազմաթիվ կառուցվածքային փոփոխությունների: ՀՀ վարչապետի՝ 1997 թ. սեպտեմբերի 4-ի Ն 420 որոշմամբ հաստատվել է Երևանի քաղաքապետարանի հետևյալ կառուցվածքը՝ ղեկավարություն, ֆինանսատնտեսագիտական, կոմունալ տնտեսության, բարեկարգման և շինարարության, ճարտարապետության, քաղաքաշինության և արտաքին ձևավորման, առողջապահության և սոցիալական պաշտպանության, հողի, գույքի և կադաստրի, կրթության, առևտրի, սպասարկումների և տրանսպորտի, վերահսկողության, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի, գործերի կառավարման, ճարտարապետաշինարարական և հողօգտագործման վերահսկողության վարչություններ, արտաքին կապերի, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ծրագրերի, լրատվության և հասարակայնության հետ կապերի, նամակների և քաղաքացիների ընդունելության բաժիններ, քաղաքապետի աշխատակազմ[258]:

Հետագայում ևս քաղաքապետարանը կրել է բազմաթիվ կառուցվածքային փոփոխություններ, իսկ կառուցվածքային ստորաբաժանումները՝ անվանական փոփոխություններ[259]:

---

[257] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե257 ց. 1, գ. 339, թ. 2:
[258] Տե՛ս նույն տեղում, թ. 3:
[259] Տե՛ս նույն տեղում, թ. 4:

Երևանի քաղաքապետարանի՝ 1996 թ. մարտի 23-ին ընդունված ժամանակավոր կանոնադրության համաձայն՝ ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը Երևանի քաղաքապետն իրականացնում է քաղաքապետարանի միջոցով, որը հաշվետու և պատասխանատու է Երևանի քաղաքապետի առջև:

Երևանի քաղաքապետարանն իրավաբանական անձ է, որն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր անվամբ կնիք, դրոշմակնիք, բանկային հաշիվ և ձևաթղթեր: Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի հաշվին: Երևանի քաղաքապետարանի կազմի մեջ են մտնում Երևանի քաղաքապետի տեղակալը, քաղաքապետարանի քարտուղարը և բաժինները: Երևանի քաղաքապետի քննարկման հարցերը ներկայացնում են քաղաքապետի տեղակալը, քաղաքապետարանի քարտուղարը և բաժինների ղեկավարները իրենց իրավասության սահմաններում Երևանի քաղաքապետարանի քարտուղարի միջոցով: Նշված կանոնադրությանը հաջորդեց ՀՀ նախագահի 1997 թ. մայիսի 6-ի հրամանագիրը՝ «Երևան քաղաքում պետական կառավարման մասին», որտեղ քաղաքում պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով որոշվեց Երևանի կառավարումն իրականացնել տարածքային քաղաքականության և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով:

Երևանի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունը իրականացվում է ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, առևտրի, հանրային սննդի և սպասարկման, գյուղատնտեսության և հողօգտագործման, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում: Այն կենսագործվում է Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և քաղաքային ենթակայության կազմակերպու-

թյունների ու ձեռնարկությունների միջոցով, Երևանի քաղաքապետի ղեկավարությամբ[260]:

Նախագահի հրամանագրով Երևանում պետական կառավարումը իրականացվում է պետական, Երևանի քաղաքային ու թաղային համայնքների շահերի ներդաշնակման, ինչպես նաև Երևանի քաղաքապետի և հանրապետական գործադիր մարմինների ու Երևան քաղաքում նրանց տարածքային ծառայությունների համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա: Հրամանագրով ընդլայնվում են Երևանի քաղաքապետի լիազորությունները: Նա օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովում է ՀՀ օրենքների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերի կատարումը: Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կառավարության նիստերին, առաջարկություններ է ներկայացնում կառավարություն՝ Երևան քաղաքում պետական կառավարման իրականացման համար պետական բյուջեից անհրաժեշտ ամենամյա հատկացումների վերաբերյալ, համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ և դրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող, Երևան քաղաքին առնչվող հարցերը, ամենամյա գործունեության հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն իր ու Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակի մասին և այլն: Երևանի քաղաքապետը քաղաքապետարանի միջոցով իրականացնում է պետական կառավարումը քաղաքում: Նրան վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում է հանրապետության նախագահը: Երևանի քաղաքապետը հաշվետու և պատասխանատու է կառավարության առջև[261]:

ՀՀ կառավարության 1997 թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի կանոնադրությունում ա-

---

[260] Տե՛ս ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, Ն 3, մարտ, Երևան, 1996, էջ 8-9, 10-12:

[261] Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Ն 11, 20 մայիսի 1997, Երևան 1997, էջ 21-31:

ռանձին կետով նշվում է քաղաքապետարանի գործունեության կազմակերպումը, որտեղ քաղաքապետարանի կազմակերպչական կառուցվածքում առանձնացվում են քաղաքապետի աշխատակազմը և քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումները, վարչություններն ու նրանց բաժինները[262]:

2002 թ. մայիսի 7-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որում տրված է համայնքի՝ որպես տեղական ինքնակառավարումն իրականացնող մարմնի բնութագիրը, որը պետական համակարգի ժողովրդավարական հիմքն է: Համայնքն իրավաբանական անձ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, այն ինքնուրույն տնօրինում է իր սեփականությունը, ունի բյուջե, ինչպես նաև ՀՀ կամ համայնքի զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք:

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու, համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է: Ըստ օրենքի՝ համայնքի ղեկավարը քաղաքային համայնքում քաղաքապետն է, Երևանի թաղային համայնքում՝ թաղապետը, որոնք պաշտոնապես ներկայացնում են համայնքը և համայնքի գործադիր մարմինն են: Համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Օրենքը սահմանում է համայնքի ղեկավարի գործունեությունը սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական բոլոր ոլորտներում:

Օրենքի իններորդ գլխի 82-րդ հոդվածը վերաբերում է Երևանի խորհրդի կառուցվածքին և լիազորություններին:

Երևանի քաղաքապետարանը ապահովում է Երևանի քաղաքապետի կողմից ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը Երևան քաղաքի տարածքում[263]:

---

[262] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե257, ց. 1, գ.339, թ. 1-3

[263] Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, Ն 21, 196, 21 հունիսի 2002, էջ 5-6, 10, 43;

2008 թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց Երևան քաղաքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որի առաջին բաժնում ներկայացված են Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը, տարածքային կառավարումը, տեղական ինքնակառավարման մարմինները, ավագանին, քաղաքապետը, Երևանի բյուջեն, Երևանի զարգացման ծրագրերը, երկրորդ բաժնում՝ Երևանի վարչական շրջանները, վարչական շրջանի ղեկավարները, վարչական հսկողությունը, անցումային եզրափակիչ դրույթները և այլն:

Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին, Երևանի քաղաքապետը: Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները գործում են իրենց նստավայրում՝ Արգիշտիի փողոց 1 հասցեում: Ավագանու որոշմամբ ավագանին իր գործունեությունը, ներառյալ նիստերի անցկացումը, կարող է կազմակերպել այլ վայրում: Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների: Այս օրենքի համաձայն՝ ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ: Նա ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և գործում է ի շահ Երևանի և նրա անունից: Սահմանված են ավագանու լիազորությունները, կազմը, ընտրության կարգը և այլն: Երրորդ գլուխը նվիրված է քաղաքապետի գործունեությանը, իսկ չորրորդը՝ Երևանի բյուջեին և զարգացման ծրագրերին:

Հինգերորդ գլուխը վերաբերում է Երևանի վարչական շրջաններին, վեցերորդը՝ վարչական շրջանի ղեկավարին ներկայացվող պահանջներին: Յոթերորդ գլուխը վերաբերում է վարչական հսկողությանը: Երրորդ բաժինը՝ ութերորդ և իններորդ գլուխներով, վերաբերում է անցումային, եզրափակիչ դրույթներին: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը լրացվել է ՀՀ նախագահի 2009-2017 թթ. իրականացրած 18 որոշումներով:

Դեռևս 1995 թ. դեկտեմբերին վերացվել են նախկին շրջանային միավորումները, և ստեղծվեցին վարչական նոր բաժանումներ՝ մարզեր: Մարզի կարգավիճակ տրվեց նաև Երևանին: 1996 թ. փետրվարի 19-ին ՀՀ կառավարության նիստում նշանակվեցին ՀՀ մարզպետները: Նույն թվականի փետրվարի 23-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվեց նաև Երևանի քաղաքապետը՝ շինարար Աշոտ Միրզոյանը: Վերջինս նախկինում զբաղեցրել էր կրթության և սոցիալական ապահովության հարցերի փոխնախարարի պաշտոնը: Նա աշխատեց մինչև նոյեմբեր ամիսը: Հուլիսին Երևանը բաժանվեց 12 թաղային համայնքների, բնակավայրերի և թաղամասերի: Փաստորեն՝ Երևանի 8 շրջանները բաժանվեցին 12 համայնքների. Լենինյան շրջանը ընդգրկում էր ներկայիս Շենգավիթի համայնքի տարածքը, Շահումյանը՝ այժմյան Մալաթիա-Սեբաստիա և Աջափնյակ համայնքները, Մյասնիկյանը՝ Կենտրոն և Նորք Մարաշ, Օրջոնիկիձեի շրջանը՝ Էրեբունի և Նուբարաշեն, Սպանդարյանը՝ Կենտրոն, 26 կոմիսարներինը՝ այժմյան Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն, Մաշտոցինը՝ Աջափնյակ և Դավիթաշեն, Խորհրդայինը՝ Նոր Նորք, Ավան և Զեյթուն համայնքները[264]:

Համայնքների վարչական սահմանները այբբենական կարգով ունեն հետևյալ տեսքը[265] :

1. Աջափնյակ համայնքն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավիթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Ընդգրկում է Նորաշեն, Վահագնի, Սիլիկյան, Անաստասավան 16-րդ բնակելի զանգվածները: Բնակչության թիվը կազմում է 109,6 հազար մարդ, տարածքը՝ 2582 հա: 1996թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ է ընտրվել Թորգոմ Մաղոյանը: Նրան հաջորդել են Պարույր Կարապետյանը, Ռաֆիկ Մկրտչյանը, Արծրուն Խաչատրյանը, Ռուբեն

---

[264] Տե՛ս Գ. Բաղդասարյան և ուրիշներ, Երևան, 2002, էջ 48:

[265] Տե՛ս նույն տեղում, էջ 61-68, Է. Մինասյան, Երևանը Հայաստանի անկախ պետականության վարչաքաղաքական համակարգում // «Պատմություն և մշակույթ» հանդես, Երևան, 2018, էջ 9-10:

Հովսեփյանը, Արտավազդ Սարգսյանը, Գևորգ Բաբայանը և Թելման Թադևոսյանը[266]:

2. Ավան համայնքն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Նոր Նորքի, Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Ընդգրկում է Ավան-Առինջ, Նարեկացի, Հովհաննիսյան, Իսահակյան, Թումանյան բնակելի համալիրները, Աղի հանք և Ավան թաղերը: Բնակչության թիվը կազմում է 53.1 հազար մարդ, տարածքը՝ 812 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում թաղապետ է ընտրվել Ռուբեն Հայրապետյանը: Նրան հաջորդել են Հարություն Մարգարյանը, Տարոն Մարգարյանը և Մանվել Ջավադյանը և Արա Դանիելյանը:[267]:

3. Արաբկիր համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Ավան, Դավիթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Բնակչության թիվը կազմում է 117,7 հազար մարդ, տարածքը՝ 1324 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ է ընտրվել Հայկ Հովհաննիսյանը: Նրան հաջորդել են Ֆելիքս Յայլոյանը, Լևոն Հարությունյանը, Հովհաննես Շահինյանը, Համլետ Մարգարյանը, Էդուարդ Մուշեղյանը և Հովհաննես Վարդանյանը [268]:

4. Դավիթաշեն համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ և Արաբկիր համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Բնակչության թիվը կազմում է 42.2 հազար մարդ, տարածքը՝ 651.8 հա: 1996 թ. հոկտեմբերին թաղապետ է ընտրվել Ռուբեն Գևորգյանը: Նրան հաջորդել են Սուրեն Ղուկասյանը, Արթուր Գևորգյանը, Ռուսլան Բաղդասարյանը և Միքայել Թումասյանը[269]:

5. Էրեբունի համայնքն ընդհանուր սահմաններ ունի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Շենգավիթ, Նուբարաշեն համայնքների

---

[266] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 10:
[267] Տե՛ս «Հայկական ժամանակ», 19 փետրվարի, 2020:
[268] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 10:
[269] Տե՛ս նույն տեղում:

հետ: Ընդգրկում է Նոր Բութանիան, Նոր Արեշը, Արգիշտի, Էրեբունի բնակելի համալիրները, Սարի թաղը, Մուշավանը և Ջրաշենը: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին: Բնակչության թիվը կազմում է 126,3 հազար մարդ, տարածքը՝ 4850 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ է ընտրվել Արարատ Խրիմյանը, որին հաջորդել են Միեր Սեդրակյանը, Արմեն Հարությունյանը, Դավիթ Գևորգյանը և Արման Աբրահամյանը[270]:

6. Կենտրոն համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Ընդգրկում է Կոնդ, Ձորագյուղ և Այգեստան թաղերը: Բնակչության թիվը կազմում է 126.6 հազ. մարդ, տարածքը՝ 1335 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ է ընտրվել Արարատ Զուրաբյանը: Նրան հաջորդել են Գագիկ Բեգլարյանը, Գագիկ Գյանջումյանը, Արա Սադոյանը, Վիկտոր Մնացականյանը և Ավետ Պողոսյանը[271]:

7. Մալաթիա-Սեբաստիա համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ համայնքների հետ: Ընդգրկում է Անդրանիկ, Արարատյան զանգված բնակելի համալիրները, Նոր Սեբաստիան, Նոր Մալաթիան, Նոր Կիլիկիան, Հաղթանակ, Սպանդարյան թաղերը: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին: Բնակչության թիվը կազմում է 142,6 հազար մարդ, տարածքը՝ 2516 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել՝ Վահան Զատիկյանը[272]: Նրան հաջորդել են Աղվան Գրիգորյանը, Դավիթ Օհանյանը, Արտակ Ալեքսանյանը և Դավիթ Կարապետյանը:

8. Նորք-Մարաշ համայնքն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն և Նոր Նորք համայնքների հետ: Ընդգրկում է Նորք

---

[270] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 10, «Հայկական ժամանակ», 24 հոկտեմբերի, 2018:
[271] Տե՛ս նույն տեղում:
[272] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 66, նույն տեղում, էջ 10:

և Մարաշ թաղերը, բնակչության թիվը կազմում է 11,3 հազար մարդ, տարածքը՝ 470 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Արմենակ Արմենակյանը: Նրան հաջորդել են Վարազդատ Մկրտչյանը, Վաղինակ Մկրտչյանը, Հովհաննես Մանուկյանը և Էդմոնդ Ղազարյանը[273] :

9. Նոր Նորք համայնքն ընդհանուր սահմաններ ունի Ավան, Էրեբունի, Կենտրոն, Նորք Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Բնակչության թիվը կազմում է 129,4 հազար մարդ, տարածքը՝ 1449 հա: 1996թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Մկրտիչ Մինասյանը: Նրան հաջորդել են Դավիթ Պետրոսյանը, Մելիք Գասպարյանը, Արմեն Ուլիխանյանը, Հայկ Միերյանը և Հովհաննես Մանուկյանը[274]:

10.Նուբարաշեն համայնքն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի և Շենգավիթ համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին: Բնակչության թիվը կազմում է 9,7 հազար մարդ, տարածքը՝ 1724 հա[275]: 1996թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Ռոբերտ Ասատրյանը: Նրան հաջորդել են Միեր Հովհաննիսյանը, Արթուր Կիրակոսյանը, Թելման Թադևոսյանը և Անդրանիկ Գասպարյանը:

11.Շենգավիթ համայնքն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին: Բնակչության թիվը կազմում է 137,4 հազար մարդ, տարածքը՝ 4090 հա[276]: 1996 թ. կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Բագրատ Անդրեասյանը, որին հաջորդել են Մարտին Սարգսյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Արմեն Սարգսյանը և Ռազմիկ Մկրտչյանը:

12.Քանաքեռ-Զեյթուն համայնքն ընդհանուր սահմաններ ունի Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք համայնքների հետ: Բնակ-

---

[273] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 10:
[274] Տե՛ս նույն տեղում, էջ 67:
[275] Տե՛ս նույն տեղում, «Հայկական ժամանակ», 19 փետրվարի, 2020:
[276] Տե՛ս «Հայկական ժամանակ», 19 փետրվարի, 2020:

չության թիվը կազմում է 74.4 հազար մարդ, տարածքը 760 հա[277]: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Ռուբեն Սինոյանը, որին հաջորդել են Արայիկ Քոթանջյանը, Գևորգ Ղազարյանը, Արթուր Ստեփանյանը և Կարեն Հակոբյանը:

1996 թ. հոկտեմբերին կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, այդ թվում՝ Երևանի 12 թաղապետերի ընտրությունները՝ 3 տարի ժամկետով: Նույն ժամկետով նույն մարմինների ընտրություններ կայացան նաև 1999, 2002 և 2005 թվականներին, իսկ 2008 թվականից՝ 4 տարի ժամկետով, 2016 թվականից՝ բարովոխված նոր սահմանադրությամբ արդեն 5 տարի ժամկետով:

1996 թ. նոյեմբերի 14-ին ՀՀ նախագահի հրամանագրով Երևանի քաղաքապետ է նշանակվել գրող Վանո Սիրադեղյանը[278]: Նրա հրաժարականից հետո (1998 թվականի փետրվարի 2)՝ նույն թվականի մայիսի 6-ին, ՀՀ նախագահի հրամանագրով Երևանի քաղաքապետ է նշանակվել Սուրեն Աբրահամյանը[279]: Ս. Աբրահամյանը աշխատել է մինչև 1999 թ. մայիսի 15-ը: 1999 թ. օգոստոսի 9-ին ՀՀ նախագահի հրամանագրով մայրաքաղաքի քաղաքապետ է նշանակվել

---

[277] Տե՛ս «Հայկական ժամանակ», 19 փետրվարի, 2020:

[278] Տե՛ս նույն տեղում, էջ 167 (Վանո Սիրադեղյանը ծնվել է 1946 թ. Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1969 թ. ընդունվել, իսկ 1974 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: «Ղարաբաղ» կոմիտեի անդամ լինելով՝ 1989 թ. դեկտեմբերին ձերբակալվել է: Մայիսին ազատվել է Մոսկվայի Բուտիրյան բանտից: 1990 թ. ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, եղել ՀՀՇ խմբակցության անդամ: 1992 թ. նշանակվել է ՀՀ ՆԳ նախարար: 1996-1998 թթ. եղել է Երևանի քաղաքապետը: 1997 թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, 1999 թ. մայիսից մինչև 2001 թ. նոյեմբերը՝ ԱԺ պատգամավոր: Վ. Սիրադեղյանը եղել է ՀՀՇ վարչության անդամ, ապա՝ նախագահ):

[279] Տե՛ս նույն տեղում, էջ 169 (Սուրեն Աբրահամյանը ծնվել է 1947 թ. Երևանում: Ավարտել է թիվ 45 միջնակարգ դպրոցը, ապա Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի բաժինը: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել ՆԳ համակարգում: 1993 թ. ստացել է միլիցիայի գեներալ-մայորի կոչում: 1995 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, 1996-1998 թթ, աշխատել է Սյունիքի մարզպետ: 1998 թ. մայիսին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Երևանի քաղաքապետ: 1998 թ. ընտրվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ: 1999 թ. հունիսից մինչև հոկտեմբեր եղել է ՀՀ ՆԳ նախարար):

Ալբերտ Բազեյանը[280]: Ա. Բազեյանը քաղաքապետի պաշտոնում աշխատել է մինչև 2001 թ. հունվարի 10-ը: Նրան հաջորդել է Ռոբերտ Նազարյանը[281], որը 2001 թ. հունվարի 11-ին նախագահի հրամանագրով նշանակվել է Երևանի քաղաքապետ և աշխատել մինչև 2003 թ. հուլիսի 1-ը: Նա ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը ինժեներ-շինարար մասնագիտությամբ: Աշխատել է որպես ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ, ՀՀ տրանսպորտի և կապի նախարար: 2003 թ. հուլիսի 2-ից ՀՀ նախագահի հրամանագրով մայրաքաղաքի քաղաքապետ է նշանակվել Երվանդ Զախարյանը[282], որը պաշտոնավարել է մինչև 2009 թ. մարտը:

ՀՀ նախագահի 2009 թ. մարտի 4-ի հրամանագրով Երևանի քաղաքապետ նշանակվեց Գագիկ Բեգլարյանը:

ՀՀ կառավարությունը, հիմնվելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական

---

[280] Տե՛ս նույն տեղում, էջ 171 (Ալբերտ Բազեյանը ծնվել է 1956 թ., Կամոյի շրջանի (Գավառ) Լանջաղբյուր գյուղում: 1976 թ. ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը: 1984 թ. Մոսկվայում ավարտել է ասպիրանտուրան, մանկավարժական գիտությունների թեկնածու է: 1989 թվականից մասնակցել է Արցախի և ՀՀ սահմանամերձ շրջանների պաշտպանությանը: 1996 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, ղեկավարել է ԱԺ «Երկրապահ» պատգամավորական խումբը: 1998 թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ: 1999 թ. օգոստոսից մինչև 2001 թ. հունվարը եղել է Երևանի քաղաքապետը: 2001թ. մարտից Ա. Բազեյանը եղել է «Հանրապետություն» կուսակցության նախագահը):

[281] Տե՛ս նույն տեղում, էջ 173 (Ռոբերտ Նազարյանը ծնվել է 1956 թ. Երևանում: 1973 թ. ավարտել է Երևանի թիվ 46 միջնակարգ դպրոցը: 1973-1978 թթ. սովորել է Երևանի պոլիտեխիկական ինստիտուտում, որակավորումը՝ ինժեներ-շինարար: 1990 թ. աշխատանքի է անցել Երևանի քաղաքային խորհրդի գործկոմում: 1997-2000 թթ. Ռ. Նազարյանը նշանակվել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ, 2000 թ. փետրվարի 28-ից մինչև մայիսի 20-ն աշխատել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարար, մայիսի 24-ից՝ ՀՀ էներգետիկայի նախարարի առաջին տեղակալ: 2001 թ. հունվարի 11-ից մինչև 2003 թ. հուլիսի 1-ը եղել է Երևանի քաղաքապետ):

[282] Տե՛ս նույն տեղում, էջ 175 (Երվանդ Զախարյանը ծնվել է 1946 թ. մայիսի 14-ին ծառայողի ընտանիքում: 1968 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1991թ. ավարտել է Մոսկվայի Կույբիշևի անվան ինժեներաշինարարական ինստիտուտի ասպիրանտուրան: 1992-1993 թթ. եղել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ, 1998-2000 թթ. փետրվարին՝ ՀՀ տրանսպորտի նախարար, 1999 թ.՝ Տրանսպորտի միջազգային ակադեմիայի իսկական անդամ, 2000-2001 թթ.՝ ՀՀ պետական եկամուտների նախարարի տեղակալ, մաքսային վարչության պետ, 2001 թ.՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար, 2002-2003 թթ. հուլիսին՝ ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետ: 2003 թ. հուլիսի 2-ից մինչև 2009 թ. մարտի 3-ը՝ Երևանի քաղաքապետ):

ինքնակառավարման մասին» և 2002 թ. մայիսի 7-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների վրա, 2009 թ. փետրվարի 19-ին ընդունեց N 148 որոշումը, ըստ որի՝ մայիսի 31-ը նշանակվեց Երևանի ավագանու անդամների ընտրության օր: Ընտրություններին մասնակցեցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, «Ժողովրդական կուսակցությունը», Հայ ազգային կոնգրես» դաշինքը, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը, «Հայաստանի աշխատավորական-սոցիալիստական» կուսակցությունը, «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» և «Օրինաց երկիր» կուսակցությունը: Ըստ ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների՝ անցողիկ նվազագույն շեմը հաղթահարեց ՀՀԿ-ն՝ 47,93 %՝ 35 մանդատ, ԲՀԿ-ն՝ 22,71 %՝ 17 մանդատ, ՀԱԿ-ը՝ 17,41 %՝ 13 մանդատ: Շեմը չհաղթահարեցին ՕԵԿ-ը՝ 5,22 %, ՀՅԴ-ն՝ 4,65 %, ԺԿ-ն՝ 2,14 % և ՀԱՍԿ-ն՝ 0,49 %[283]:

Այսպիսով՝ համաձայն վերոնշյալ օրենքի և 2009 թ. մայիսի 7-ի N 546 որոշման՝ ՀՀԿ-ից ամենաշատ մանդատներ ստացած 65 ավագանու անդամները մայիսի 31-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքով 2009 թ. հունիսի 8-ին՝ ավագանու գումարած առաջին նիստի ժամանակ, Երևանի քաղաքապետ ընտրեցին ավագանու անդամների «Հանրապետական կուսակցության» ցուցակի առաջին համարին՝ Գագիկ Բեգլարյանին[284]: Ընտրությունների ընթացքում ա-

---

[283] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 հունիսի, 2009, էջ 1-2:

[284] Տե՛ս նույն տեղում, էջ 46: Գագիկ Բեգլարյանը ծնվել է 1964 թ. հունվարի 1-ին Երևանում: 1971-1978 թթ. սովորել է Մ. Նալբանդյանի անվան թիվ 33 միջնակարգ դպրոցում: 1978-1981 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանին կից ֆիզիկամաթեմատիկական դպրոցը: 1981-1985 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական-ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ տնտեսագետի որակավորմամբ: 1985-1986 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1993 թ. ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի առաջին գումարման պատգամավոր: 2002 թ. ընտրվել է Կենտրոն համայնքի թաղապետ: Վերընտրվել է 2005 թ. և 2008 թ.: ՀՀ նախագահի 04. 03. 2009 թ. թիվ ՆՀ-58-Ա հրամանագրով նշանակվել է Երևանի քաղաքապետ: 2009 թ. մայիսի 31-ին տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքում դարձել է Երևանի առաջին ընտրված քաղաքապետը: 2007 թ. նոյեմբերի 10-ին ընտրվել է «Հայաստանի հանրապետական կուսակցության» խորհրդի անդամ: 2009 թ. նոյեմբերի 28-ին ընտրվել է ՀՀկ գործադիր մարմնի անդամ: 2004 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գի-

ռանձին տեղամասերում արձանագրվել էին որոշ խախտումներ, որոնց հիման վրա ՀԱԿ-ը դիմել էր Երևանի ավագանուն՝ ընտրություններն անվավեր ճանաչելու համար, սակայն ԿԸՀ-ն մերժեց դիմումը ընտրությունները անվավեր ճանաչելու հիմքեր չլինելու պատճառաբանությամբ՝ նշելով, որ Երևանի ավագանու ընտրություններում չեն արձանագրվել այնպիսի թերություններ, որոնք կարող են ազդել դրանց վերջնարդյունքների վրա[285]: ԿԸՀ որոշման մեջ ընդգծված էր, որ խախտումների մի մասը վերացվել է հենց ընտրության օրը, ընտրական հանձնաժողովի կողմից, օպերատիվ միջոցներ ձեռնարկելու արդյունքում, մյուսների վերաբերյալ ընդունվել են համապատասխան որոշումներ և ներկայացվել գլխավոր դատախազություն: 2009 թ. հունիսի 11-ին հանդիսավոր պայմաններում Երևանի քաղաքապետարանում առաջին անգամ տեղի ունեցավ քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի երդման արարողությունը[286]: Հնչեց ՀՀ օրհներգը, ապա՝ քաղաքապետի երդումը:

Երդումից հետո Երևանի ավագանու անդամ մայրաքաղաքի պատվավոր քաղաքացի Մարտին Վարդազարյանը նորընտիր քաղաքապետին հանձնեց խորհրդանշական ոսկեձույլ լանջաշղթան, երգչախմբի կատարմամբ հնչեց մայրաքաղաքի օրհներգը: Հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ նախագահը, Ամենայն հայոց կաթողիկոսը, Ազգային ժողովի նախագահը, վարչապետն ու կառավարության անդամներ, նախկին քաղաքապետերը, պատգամավորներ, քաղաքական և հասարակական գործիչներ[287]: Նոր քաղաքապետը պաշտոնավարեց մինչև 2010 թ. դեկտեմբերի 8-ը: Նրան հաջորդեց Կարեն Կարապետյանը, որը ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրվել էր Երևան քաղաքի ավագանու անդամ: 2010 թ. դեկտեմբերի 17-ին Երևան քաղաքի ավագանու կողմից Կարեն Կարապետյանը ընտրվեց Երևանի քաղաքապետ[288]: Դեկտեմբերի 20-ին

տական աստիճան: Կենտրոն համայնքի մտավորականների «Նարեկ» ակումբի պատվավոր նախագահն է: Պաշտոնավարել է մինչև 2010 թ. դեկտեմբերի 8-ը:

[285] Տե՛ս «Հայաստանի հանրապետություն», 9 հունիսի, 2009:

[286] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հունիսի, 2009:

[287] Տե՛ս նույն տեղում:

[288] Կարեն Կարապետյանը ծնվել է 1963 թ. օգոստոսի 14-ին: 1970-1980 թթ. սովորել և ավարտել է Երևանի Լ. Տոլստոյի անվան միջնակարգ դպրոցը: 1980-1985 թթ. սովորել

տեղի ունեցավ Երևանի 53-րդ քաղաքապետի երդմնակալության արարողությունն այն նույն ընթացակարգով, ինչը իրականացվել էր նախորդ քաղաքապետի ժամանակ: Նոր քաղաքապետը երդվեց իրագործել երևանցիների նվիրական գաղափարները: Նա պաշտոնավարեց մինչև 2011 թ. հոկտեմբերի 28-ը: Նրա հրաժարականից հետո՝ նույն թվականի նոյեմբերի 15-ին, Երևանի ավագանու քվեարկությամբ միաձայն Երևանի 54-րդ քաղաքապետ ընտրվեց ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրված ավագանու անդամ, փոխքաղաքապետ Տարոն Մարգարյանը[289]: Շուտով տեղի ունեցավ Տարոն Մար-

---

և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: 1985-1996 թթ. աշխատել է ՀՀ պետպլանի հաշվողական կենտրոնում, գիտության և մշակույթի գործիչների ասոցիացիայում: Միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում: 1996-1998 թթ. աշխատել է «Հայէներգո» ՊՁ-ում որպես գլխավոր տնօրենի տեղակալ: 1998-2001 թթ. աշխատել է «Հայէներգո» ՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն: Նա քաղաքապետ է ընտրվել 17.10.2010 թ., պաշտոնավարել է մինչև 2011 թ. հոկտեմբերի 28-ը, ապա աշխատել է Մոսկվայում, իսկ 2016 թ. սեպտեմբերին նշանակվել է ՀՀ վարչապետ, տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.11.2017 թ.:

[289] Տարոն Մարգարյանը ծնվել է 1978 թ. ապրիլի 17-ին Երևանում: 1995 թ. էքստեռն կարգով ավարտել է Ավանի № 177 դպրոցը և նույն թվականին ընդունվել Հայկական գյուղատնտեսական ակադեմիա: 2001թ. ավարտել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի մագիստրատուրան և ստացել ճարտարագիտության մագիստրոսի աստիճան՝ գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտությամբ: 2001-2003 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորքի տարածքային ստորաբաժանումում որպես առաջատար մասնագետ, այնուհետև՝ բաժնի պետ: 2003 թ. նշանակվել է ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ: 2005 թ. ընտրվել է Երևան քաղաքի Ավան համայնքի ղեկավար: 2008 թ. վերընտրվել է Երևան քաղաքի Ավան համայնքի ղեկավարի պաշտոնում: 2009 թ. մայիսի 31-ին ընտրվել է Երևանի ավագանու անդամ: 2009 թ. հուլիսի 7-ին ընտրվել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ: 2011 թ. նոյեմբերի 15-ին Երևան քաղաքի ավագանու կողմից ընտրվել է Երևանի քաղաքապետ: 2013 թ. մայիսի 5-ին և 2017 թ. մայիսի 14-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներով վերընտրվել է Երևանի քաղաքապետ: 2005 թվականից «Խուլ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է: 2010 թվականից ԵԿՄ վարչության և նախագահության անդամ է: 1996 թվականից «Հայաստանի հանրապետական կուսակցության» անդամ է, իսկ 2006 թվականից՝ ՀՀԿ խորհրդի անդամ: 1998-2011 թթ. ղեկավարել է «Հայաստանի հանրապետական կուսակցության» Ավանի տարածքային կազմակերպության խորհուրդը: 2012 թվականից ՀՀԿ գործադիր մարմնի անդամ է: 2017 թվականից Երևան քաղաքի ՀՀԿ տարածքային կազմակերպության աշխատանքները համակարգողն է: 2012 թ. ընտրվել է ԵՃՇՊՀ խորհրդի նախագահ: 2013 թ. դեկտեմբերին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2014 թ. սեպտեմբերին ընտրվել է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգա-

գարյանի երդմնակալության արարողությունը այն նույն ընթացակարգով, ինչպես նախորդներինն էր: Նա երդվեց հավատարմորեն իրագործել մայրաքաղաքի բնակիչների կողմից քաղաքի զարգացմանն նվիրված գաղափարները և շեշտեց ՏԻՄ համակարգում իր աշխատանքի 7 տարիների փորձը՝ ընդգծելով, որ ոգևորությամբ ու սրտացավությամբ է վերաբերում իր աշխատանքին[290]:

Երևանի ավագանու հերթական ընտրությունները տեղի ունեցան 2013 թ. մայիսի 5-ին: Այդ ընտրություններն անցան ակտիվության պայմաններում: Ընտրություններին մասնակցեց 7 քաղաքական ուժ՝ «Առաքելություն կուսակցությունը», «Հայաստանի հանրապետական կուսակցությունը», «Բարգավաճ Հայաստան», «Հայ ազգային կոնգրես» «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Օրինաց երկիր» կուսակցությունները և «Բարև, Երևան» կուսակցությունների դաշինքը»:

Երևանի ավագանու ընտրությունների վերջնական արդյունքով հաղթեց «Հայաստանի Հանրապետական» կուսակցությունը: ՀՀԿ-ն, ստանալով 255513 ձայն, մայրաքաղաքում քվեարկության մասնակիցների ձայների 55.86 %-ը, վաստակեց 42 մանդատ: ՀՀԿ-ին հաջորդեցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 17 մանդատ, ձայների քանակով երրորդ տեղը գրավեց «Բարև, Երևան» դաշինքը՝ 6 մանդատ: Անցողիկ անհրաժեշտ ձայները չհավաքեցին մյուս քաղաքական ուժերը՝ «Հայ ազգային կոնգրեսը»՝ 39 %, «Հայ հեղափոխական դաշնակցությունը»՝ 3,79 %, «Օրինաց երկիր» կուսակցությունը»՝ 3.73 %, «Առաքելությունը»՝ 0,64 %[291]:

Վերոնշյալ արդյունքների հիման վրա ՀՀԿ համամասնական ցուցակը գլխավորող Տարոն Մարգարյանը վերընտրվեց Երևանի քաղաքապետ: Նույն թվականի հունիսի 12-ին տեղի ունեցավ Տարոն Մարգարյանի երդմնակալության արարողությունը նույն կանոնակարգով, ինչպես եղել էր նախորդ անգամ[292]:

բարձունների խորհրդի նախագահ: Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահի տեղակալն է և Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահը: Տե՛ս նույն տեղում:

[290] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16 նոյեմբեր, 2011:

[291] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 14 մայիսի, 2013:

[292] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հունիսի, 2013:

2017 թ. ապրիլին խորհրդարանական ընտրություններում քաղաքական դաշտը ենթարկվեց լիարժեք փորձության: Սահմանադրական փոփոխություններից հետո նոր ընտրական օրենսգրքի դրույթների ներքո անցկացված ՀՀ ազգային ժողովի ընտրությունների ընտրական բազմապնակը եզրափակվեց Երևանի ավագանու ընտրություններով, որը վկայեց հասարակական-քաղաքական, ժողովրդավարական և պետականաշինության գործընթացներում մի քանի քայլ առաջ գնալու մասին: 2017 թ. մայիսի 14-ին կայացան Երևանի ավագանու նոր հերթական ընտրությունները: «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում նախընտրել էր բակային հանդիպումները: 100-ից ավելի հանդիպումների ընթացքում ներկայացվել էին առաջիկա 5 տարիների անելիքները և վերջին 4 տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Երևանի քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցեց երեք քաղաքական ուժ՝ «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը», «Ելք» կուսակցությունների դաշինքը և «Երկիր ծիրանի» կուսակցությունը: Ընտրությունների մասնակիցների ընդհանուր թիվը 842 151 էր, քվեարկության մասնակիցների թիվը՝ 345.158 կամ 40,99 %-ը: «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը» ստացավ 240.036 ձայն, քվեարկությանը մասնակցած ձայների 71,25 %-ը, 46 մանդատ, «Ելք» կուսակցությունների դաշինքը ստացավ 70731 քվե, 14 մանդատ, ձայների 21 %-ը, իսկ «Երկիր ծիրանի» կուսակցությունը՝ 26109 քվե, 7,75 %, 5 մանդատ[293]:

Ընտրությունների արդյունքներով Տարոն Մարգարյանը երրորդ անգամ վերընտրվեց քաղաքապետի պաշտոնում: 2017 թ. հունիսի 12-ին Երևանի ավագանու հատուկ նիստում տեղի ունեցավ Տարոն Մարգարյանի երդմնակալության հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, ՀՀ Աժ նախագահ Արա Բաբլոյանը, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, Սահմանադրական դատա-

[293] «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի, 2017:

րանի նախագահ Գ. Հարությունյանը, Երևանի նախկին քաղաքապետեր, բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական ու մշակութային գործիչներ: Տարոն Մարգարյանը երդվեց քաղաքապետի լիազորություններն իրականացնելու ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, Երևանի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել Երևանի քաղաքապետի լիազորությունները, ծառայել Երևանի բգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների: Այնուհետև Երևանի պատվավոր քաղաքացի, Երևանի ավագանու անդամ Մարտին Վարդազարյանը Երևանի քաղաքապետի խորհրդանիշ լանջաշղթան հանձնեց նորընտիր քաղաքապետին: ՀՀ նախագահը շնորհավորեց Տարոն Մարգարյանին, Երևանի նորընտիր ավագանու բոլոր անդամներին Հայաստանի մայրաքաղաքի կառավարման պատասխանատվությունը ստանձնելու կապակցությամբ և բարեմաղթեց բեղմնավոր աշխատանք հանուն 12-րդ մայրաքաղաքի բարգավաճման, հանուն Հայաստանի առաջընթացի: Նա ընդգծեց. «Հիշե՛ք, որ Երևանը համայն հայության մայրաքաղաքն է, հայրենիքի խորհրդանիշը ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերի համար: Այո՛, Երևանը հինավուրց մայրաքաղաք է, բայց միևնույն ժամանակ այն անընդհատ արդիականանում է, ձևավորվում են համակեցության նոր կանոններ: Մեր նպատակն է, որ դարերի խորքից եկող Երևանը ժամանակին համընթաց քայլի» [294]:

Թավշյա հեղափոխության հաղթանակից հետո Երևանի ավագանու «Ելք» խմբակցությունը պարբերաբար տարբեր բողոքի ցույցեր էր անցկացնում քաղաքապետարանի շենքի մոտ՝ պահանջելով ՀՀԿ-ական քաղաքապետ Տարոն Մարգարյանի հրաժարականը: Մայիս, հունիս ամիսներին քաղաքապետը հայտարարում էր, որ հրաժարական տալու մտադրություն չունի: Մայիսի 16-ին «Մերժենք Տարոնին» նախաձեռնության բողոքի ցույցին «խառնվեցին» նաև քաղաքապետի համակիրները՝ իրենց աջակցությունը հայտնելով գործող պաշտոնյային:

[294] «Հայաստանի Հանրապետություն», 13 հունիսի, 2017, էջ 3:

Քաղաքապետի հրաժարականը պահանջողները որպես իրենց պահանջի իրական հիմք մատնանշում էին քաղաքապետարանի շենքի դիմաց՝ Մյասնիկյանի արձանի հարակից այգում տեղի ունեցող շինարարությունը, որի արդյունքում կտրվել էին ծառեր, ոչնչացվել էր այգին: Քաղաքապետարանը պարզաբանել էր, որ այգու տարածքի շինարարությունը կատարվում է «Վարդանյան» հիմնադրամի կողմից և նվիրված է մայրաքաղաքի 2800-ամյակին: Չբավարարվելով նշված պատասխանով՝ ցուցարարները պարբերաբար շարունակեցին իրենց բողոքի ցույցերը: Դրանք պարբերաբար կրկնվեցին հունիսին և հուլիսի սկզբներին: Այս ամենի արդյունքում Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը 2018 թ. հուլիսի 9-ին դիմեց համաքաղաքացիներին՝ հայտարարելով զբաղեցրած պաշտոնից հրաժարվելու մասին:

2018 թ. հուլիս 12-ին հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի հրաժարականը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 46-րդ հոդվածի 1-ին մասով՝ քաղաքապետի առաջին տեղակալ, պաշտոնակատար Կամո Արեյանը Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացրել քաղաքապետի արտահերթ ընտրությունների օրը 2018 թ. հուլիսի 16-ին սահմանելու մասին որոշման նախագիծը: Առաջարկ է եղել՝ օգոստոսի 8-ը սահմանելու որպես քաղաքապետի արտահերթ ընտրությունների օր: Երևանի ավագանին ձայների մեծամասնությամբ հավանություն է տվել Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրությունների օրը հուլիսի 16-ին՝ ժամը 11:00-ին սահմանելու մասին նախագծին: Սակայն Երևանի ավագանու հուլիսի 16-ի արտահերթ նիստը չի կայացել քվորումի բացակայության պատճառով. ավագանու 65 անդամներից ներկա է եղել միայն 5-ը, ուստի նիստը համարվել է չկայացած: Ըստ գործող կանոնակարգի՝ նման դեպքերում նախատեսվում է ավագանու կազմի լուծարում և նոր ընտրությունների նշանակում: Երևան քաղաքի ավագանու և նոր քաղաքապետերի արտահերթ ընտրությունը գործող կանոնակարգով նախատեսվեց անցկացնել 2018 թ. սեպտեմբերին:

ՀՀ կառավարության 2018 թ. օգոստոսի 16-ի N899-ն որոշմամբ կրճատվեց ավագանու լիազորությունների ժամկետը: Երևան քաղա-

քի նոր ավագանու արտահերթ ընտրության օրը նշանակվեց 2018 թ. սեպտեմբերի 23-ը[295]: Այդ օրը Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցեց 12 քաղաքական ուժ՝ 4 կուսակցությունների դաշինք և 8 կուսակցություն[296]: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ ընտրությունների արդյունքում «Իմ քայլը» դաշինքի օգտին քվեարկել էր 294 հազար 109 քաղաքացի կամ ընտրողների 81,06 %-ը՝ 57 մանդատ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին՝ 25 հազար 219 ընտրող կամ 6,95 %-ը՝ 5 մանդատ, «Լույս» դաշինքի օգտին՝ 18 հազար 112 ընտրող կամ 4,99 %-ը՝ 3 մանդատ, ՀՅԴ-ի օգտին քվարկել էր 5882 ընտրող կամ 1,62 %-ը, ՕԵԿ-ի օգտին՝ 3948 ընտրող կամ 1,09 %-ը, «Երկիր ծիրանի» կուսակցության օգտին՝ 5 հազար 59 մարդ կամ 1,39 %-ը, «Ժառանգության» կուսակցության օգտին՝ 2709 ընտրող կամ 0,75 %-ը և այլն[297]: Երևանի ավագանու կազմում ընդգրկվեցին «Իմ քայլը» դաշինքը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը և «Լույս» դաշինքը: Այսպիսով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների վերջնական արդյունքներով, որոնք ստացվել էին Երևանի բոլոր 475 ընտրատեղամասերից, ձայների ճնշող մեծամասնությամբ առաջատարը «Իմ քայլը» դաշինքն էր: Համաձայն «Երևան քաղաքում ՏԻՄ մասին» օրենքի՝ դաշինքի ցուցակը գլխավորող Հայկ Մարությանը համարվում էր իրավունքի ուժով ընտրված քաղաքապետ: Երևանի 55-րդ քաղաքապետը դարձավ ՀՀ ռեժիսոր և դերասան Հայկ Մարությանը[298]: Նրա երդման արարողությունը տեղի ունեցավ 2018 թ. հոկտեմբերի 13-ին քաղաքապետարանում՝ հանդի-

---

[295] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25 սեպտեմբերի, 2018:

[296] Տե՛ս նույն տեղում:

[297] Տե՛ս նույն տեղում, «Հայաստանի Հանրապետություն», 2 հոկտեմբերի, 2018:

[298] Հայկ Մարությանը ծնվել է1976 թ. դեկտեմբերի 18-ին Երևանում: 1983-90 թթ. սովորել է Երևանի թիվ 83 միջնակարգ դպրոցում: 1993 թ. ավարտել է Անանիա Շիրակացու անվան ճեմարանը: 1997 թ. ավարտել է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը, 1997-1998 թթ. ծառայել է ՀՀ ԶՈՒ-ում: 1998-2002 թթ. աշխատել է «Շարմ» ընկերությունում որպես սցենարիստ, ռեժիսոր և դերասան: Խաղացել է «Հայկական նախագիծ» ՈՒՀԱ թիմում: 2004 թ. հանդիսացել է «Կարգին ստուդիա» ընկերության համահիմնադիր, որտեղ աշխատել է որպես պրոդյուսեր, ռեժիսոր, դերասան, սցենարիստ: 2018 թ. հունվարից «քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է: 2018 թ. սեպտեմբերի 23-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներով ընտրվել է Երևանի քաղաքապետ:

սավոր պայմաններում: Արարողության ներկա էին ՀՀ փոխվարչապետեր, կառավարության անդամներ, Արարատյան թեմի հոգևոր առաջնորդը և այլք: Նորընտիր քաղաքապետը երդվեց գործել ՀՀ Սահմանադրության, օրենքների և մայրաքաղաքի ընտրված ավագանու ընդունած որոշումների հիման վրա, բարեխղճորեն կատարել Երևանի քաղաքապետի լիազորությունները, հիմնական ուշադրության կենտրոնում պահել քաղաքի բնակիչների հոգսերը, նպաստել մայրաքաղաքի բնակչության բարեկեցության բարձրացմանը, ապա ընդգծեց, որ պատրաստ է ամեն օր, ամեն ժամ, րոպե ու վայրկյան ծառայել մայրաքաղաքի քաղաքացիներին, որպեսզի «մեր Երևանը միասին դարձնենք մեր երազանքների քաղաք»[299]: Այնուհետև Երևանի պատվավոր քաղաքացի Տիգրան Մանսուրյանը և Երևանի ավագանու անդամ Արթուր Իսպիրյանը Երևանի քաղաքապետի խորհրդանիշը՝ լանջաշղթան հանձնեցին նորընտիր քաղաքապետին: ՀՀ վարչապետը շնորհավորեց Հայկ Մարությանին և Երևանի նորընտիր ավագանու բոլոր անդամներին մայրաքաղաքի կառավարման պատասխանատվությունը ստանձնելու կապակցությամբ և բարեմաղթեց բեղմնավոր աշխատանք հանուն Երևանի բարգավաճմանը: Շարունակելով իր միտքը ֆեյսբուքյան ուղիղ եթերում՝ նա շեշտեց, որ երկրում նոր քաղաքական մշակույթ է ձևավորվում՝ ընտրություններին մասնակցած ուժերը շնորհավորել են հաղթող ուժին: Վերջին տարիների ընտրություններից հետո նման դեպք դժվար է հիշել»[300]:

Շուտով Երևանի ավագանու հոկտեմբերի 29-ի նիստի քննարկմանը դրվեցին և հաստատվեցին նորընտիր քաղաքապետի առաջարկած փոխքաղաքապետերի պաշտոններում առաջադրված Հրաչյա Սարգսյանի, Հայկ Սարգսյանի, Սերգեյ Հարությունյանի և Տիգրան Վիրաբյանի թեկնածությունները: Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը կատարեց նաև կադրային մի շարք փոփոխություններ, նշանակեց մայրաքաղաքի վարչական շրջանների նոր ղեկավարներ[301]:

---

[299] «Հայաստանի Հանրապետություն», 16 հոկտեմբերի, 2018:
[300] «Հայկական ժամանակ», 25 սեպտեմբերի, 2018, «Հայաստանի Հանրապետություն», 16 հոկտեմբերի, 2018:
[301] «Հայաստանի Հանրապետություն», 19 փետրվարի, 2020:

Նույն թվականի հոկտեմբերի 21-ին Երևանը շուքով նշեց իր տոնը՝ հիմնադրման 2800-ամյակը: Հոկտեմբերի 19-ին Երևանի «Մետրոնոմ» կենտրոնում տեղի ունեցավ Երևանի 2800-ամյակին նվիրված «Հին ու նոր Երևան» մայրաքաղաքի հին ու նոր շենքերը լուսանկարներում ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը[302]:

Ցուցահանդեսը նախաձեռնել էին «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը և Երևանի պատմության թանգարանը: Ներկայացված էին լուսանկարներ՝ «Տեսարան Ս. Սարգսի փողոցից», «Տեսարան հին Երևանից», «Տեսարան Կոնդից», «Հաղթանակի կամուրջը», «Միտինգ-ընդվզում 1988» և այլն: «Մեր թանգարանում պահվում են 15000-ից ավելի լուսանկարներ, որոնք թվագրվում են XIX դարի վերջից մինչև մեր օրերը, և այդ հավաքածուն անընդհատ համալրվում է[303],– նշել է Երևանի պատմության թանգարանի տնօրեն Արմինե Սարգսյանը»:

Երևանի 2800-ամյակի տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքի պատմության թանգարանում բացվեց «Երևան 2800» խորագրով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվել է Երևանի պատմության թանգարանի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի հետ միասին: Նստաշրջանին մասնակցեցին 30-ից ավելի գիտնականներ: Նրանց մեջ էին նաև Հյուսիսային Կովկասից, Ռուսաստանից հրավիրված գիտնականները[304]:

Քննարկվեց ու անդրադարձ կատարվեց Երևանի պատմության հին, նոր և նորագույն ժամանակներին: Թանգարանի հոբելյանական՝ 5-րդ գիտաժողովը համընկել էր Երևանի 2800-ամյակի տոնակատարությունների հետ[305]:

Երևանի ծննդյան օրը 2800-ամյակը խորհրդանշող տոնական միջոցառումներն ամփոփվեցին Հանրապետության հրապարակում՝ գալա համերգով: Հազարավոր երևանցիներ, քաղաքի հյուրեր,

---

[302] «Հայաստանի Հանրապետություն», 20 հոկտեմբերի, 2018, էջ 6:
[303] Նույն տեղում, էջ 6:
[304] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն», 24 հոկտեմբերի, 2018:
[305] Տե՛ս նույն տեղում:

օրենսդիր ու գործադիր իշխանության ներկայացուցիչներ, Երևանի ավագանու անդամներ, Երևանի քաղաքապետն ու աշխատակազմը մասնակցել են տոնական երեկոյի գալա համերգին[306]: Շնորհավորելով բոլորին երևանցիներին 2800-ամյակի առթիվ՝ քաղաքապետ Հայկ Մարությանը մասնավորապես նշեց. «Սիրելի երևանցիներ, մեր մայրաքաղաքն այսօր դարձավ 2800 տարեկան: Ինձ համար մեծագույն պատիվ է այս պատմական օրը կանգնած լինել Ձեր առջև և ներկայացնել Երևանը, ներկայացնել Ձեզ: Իրականում, հարգելինե՛րս, մենք չենք գիտակցում, թե որքան բախտավոր ու երջանիկ մարդիկ ենք: Մենք բախտավոր ու երջանիկ ենք, որովհետև երևանցի ենք: Բազմիցս նշել եմ, որ երևանցի են բոլոր նրանք, ովքեր Երևանը համարում են իրենց հարազատ վայրը»[307]:

Քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն շատ ավելի մեծ շուքով կարելի էր նշել մայրաքաղաքի հոբելյանական տոնը՝ 2800-ամյակը, սակայն նորընտիր իշխանությունները ավելի շատ ժամանակ չունեի տոնին նախապատրաստվելու համար: Նրանք Երևանի հոբելյանական տոնակատարության օրերին կիրառեցին նոր քաղաքական մշակույթ՝ այն է մայրաքաղաքի կենտրոնական հատվածներից բացի, տոնական հանդիսություններ անցկացվեցին նաև վարչական շրջանների կենտրոնական հրապարակներում և այգիներում: Տեղի ունեցան փողային նվագախմբերի շքերթ, ժողովրդական, դասական, ջազային և այլ բնույթի համերգներ, ցուցադրություններ, հեծանվավազք: Երևանի քաղաքապետարանի և «Արմ մարաթոն» մարզակրթական հիմնադրամի ու «Կոկա-կոլա Հելլենիկ Արմենիա» ընկերության ջանքերով մայրաքաղաքում անցկացվեց «Երևան մարաթոն» վազքի մրցույթ [308]: Երեկոյան հանրապետության հրապարակում կայացավ վերոնշյալ գալա համերգը, որը ավարտվեց շքեղ հրավառությամբ: Տոնական այս միջոցառումներից հետո մայրաքաղաքի նոր իշխանությունները ձեռնամուխ եղան քաղաքի առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծմանը:

---

[306] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 հոկտեմբերի, 2018:
[307] Նույն տեղում:
[308] «Հայաստանի Հանրապետություն», 20, 21 հոկտեմբերի, 2018:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ա. Սոցիալ-տնտեսական վիճակը մայրաքաղաքում 1990-ական թվականներին

Խորհրդային պետության փլուզումից հետո նախկին հանրապետությունները ներքաշվեցին հակամարտություններում, և Հայաստանը, բացի առանձին երկրներից շարունակվող ոչ մեծ օգնությանը, մնաց միայնակ իր ծանրագույն հոգսերի հետ: Հայաստանի Հանրապետությունը լիակատար շրջափակման ենթարկվեց Ադրբեջանի կողմից, իսկ 1993 թվականից՝ նաև Թուրքիայի կողմից: Պատերազմը Լեռնային Ղարաբաղում, Սպիտակի 1988 թ. աղետալի ծանր հետևանքները, 1990 թվականից Հայաստան բռնագաղթված փախստականների ծանր վիճակն ու էներգետիկ ճգնաժամը բացասաբար անդրադարձան մայրաքաղաք Երևանի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Այդ վիճակից դուրս գալու նպատակով մայրաքաղաքում մի շարք բարեփոխումների իրականացվեցին:

Սկզբնական շրջանում տրանսպորտային շրջափակման պայմաններում կարևորագույն խնդիրը տնտեսության արտադրական ներուժի առավելագույն օգտագործումն էր և այս ճանապարհով բնակչության կենսապահովման նվազագույն պայմանների ստեղծումը: Խնդրի լուծումն ավելի էին դժվարացնում տնտեսական ճգնաժամը խորացնող արտաքին գործոնները, հատկապես նախկին տնտեսական կապերի խզումը, նորանկախ պետությունների կողմից հովանավորչական առևտրային պայմանների սահմանափակումը, ֆինանսական հաշվանցումների վատթարացումը, պայմանագրային պարտավորությունների զանգվածային խախտումները, միջպետական տնտեսական հարաբերությունների կանոնակարգման օրենսդրական դաշտի բացակայությունը: Նման իրավիճակում Հայաստանի ղեկավարության առջև ծառացած հիմնական հարցը մնում էր շրջափակման վերացման միջոցով տնտեսական դրության բարելա-

վումը: Այս ծանր պայմաններից դուրս գալու նպատակով նորանկախ հանրապետությունում, այդ թվում՝ մայրաքաղաքում, մի շարք բարեփոխումներ իրագործվեցին: Հայաստանի անկախության հռչակագրի դրույթներից ելնելով՝ ծրագրվեց տնտեսությունը ենթարկել արմատական վերափոխումների: Հիմնականում նախատեսվում էր՝ անցում կատարել դեպի շուկայական հարաբերություններ հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր պահանջները հաշվի առնելով: Հանրապետությունում տնտեսական բարեփոխումների և անկախության աստիճանական կայացման գործընթացը հայտարարվեց «անցումային ժամանակաշրջան»:

1990-1991 թթ. Հայաստանի Գերագույն խորհուրդը մի շարք որոշումներ ընդունեց, որոնք ուղղված էին տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Այս առումով կարևոր նշանակություն ուներ խորհրդարանի՝ 1990 թ. սեպտեմբերի 10-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» օրենքը, ըստ որի՝ հանրապետության տարածքում գտնվող պետական բոլոր ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց Հայաստանի Հանրապետության սեփականություն: Հոկտեմբերի 31-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքը: Սրանք պետական մենատիրության վերացմանը և շուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված առաջին քայլերն էին[309]:

Հարկ է նշել, որ հանրապետության շուկայական տնտեսության հետևողական անցումն ապահովելու, ձեռներեցության հիմքեր ստեղծելու համար ՀՀ առաջին կառավարությունը 1990 թ. հոկտեմբերին որոշում ընդունեց ստեղծելու «ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման գծով պետական հանձնաժողով» [310]: Այդ հանձնաժողովի նախագահն էր հանրապետության վարչապետ Վազգեն Մանուկյանը, իսկ տեղակալը՝ ՀՀ էկոնոմիկայի պետական կոմիտեի նախագահ Հրանտ Բագրատյանը: Հանձնաժո-

[309] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 259, թ. 1, 2:
[310] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 426, թ. 12, 13:

ղովի գլխավոր խնդիրը տնտեսական արմատական վերափոխումների գիտական հիմունքների ու սկզբունքների մշակումն էր, բազմակացութաձև տնտեսության անցնելու, ձեռներեցության և սեփականության բոլոր ձևերը զարգացնելու, մենաշնորհային երևույթները վերացնելու մեխանիզմների ապահովումը: 1991 թ. նոյեմբերին Վ. Մանուկյանի հրաժարականից հետո նրան փոխարինեց Գ. Հարությունյանը, իսկ 1992 թ. հուլիսին վերջինիս փոխարինեց Խ. Հարությունյանը, որը 1993 թ. փետրվարին նույնպես հրաժարվեց այդ պաշտոնից՝ չհամաձայնելով տնտեսական արմատական վերափոխումների ծրագրի իրագործմանը: Նրան փոխարինած Հ. Բագրատյանն իր վրա վերցրեց շուկայական տնտեսական բարեփոխումները կենսագործելու պատասխանատվությունը՝ ստանալով համաշխարհային միջազգային ֆինանսական կազմակերպությունների օգնությունը: Այդ ծրագիրը, սակայն, լայն մասշտաբով կենսագործվեց միայն 1994 թ. դեկտեմբերին՝ ԼՂՀ-ում պատերազմը դադարելուց 7 ամիս անց[311]:

Դեռևս տնտեսական բարեփոխումների իրականացման սկզբնական փուլից պետությունը ձգտում էր կտրուկ կրճատել արտադրության մեջ իր դերը՝ մասնավոր բաժինը դարձնելով տնտեսական զարգացման հիմնական աղբյուր: Այս բնագավառում իրականացվող հետևողական քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ արդեն 1995 թ. համախառն ներքին արտադրանքի կեսից ավելին անցավ մասնավոր անձանց ձեռքը: Դա կատարվեց ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհման և մասնավոր գործարարության շուկա թափանցման հաշվին:

Հանրապետությունում վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ թույլ տրվեցին որոշ սխալներ: Շուկայական տնտեսությանն անցնելու հիմնական բաղադրիչը համարվեց գների ազատականացումը: Բայց այդ գործընթացը հանգեցրեց ապրանքների գների կտրուկ աճին, հետևաբար նաև բնակչության սոցիալական դրության վատթարացմանը: Խորհրդային Միությունում հաստատագրված գների գործող համակարգը Հայաստանի հա-

[311] Տե՛ս Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, Երևան, 2018, էջ 132:

մար ապահովում էր արտաքին առևտրի բարենպաստ պայմաններ: Խորհրդային կարգերի պայմաններում հանրապետությունը հնարավորություն ուներ ձեռք բերելու վառելիքաէներգետիկ ու հումքային էժան պաշարներ և փոխարենը ավելի թանկ գներով արտահանել պատրաստի արտադրանք: Բայց անկախությունից հետո նախկին միութենական հանրապետությունները սկսեցին արտահանվող արտադրանքի գներն արագորեն մոտեցնել միջազգային գներին: Այս պայմաններում էապես կրճատվեցին հանրապետություն ներմուծվող ապրանքների ծավալները: Ներմուծվող էներգակիրների և կարևորագույն հումքատեսակների գների կտրուկ աճի պայմաններում խիստ նվազեցին հանրապետության արդյունաբերական արտադրանքի մրցակցության հնարավորությունները ավանդական շուկաներում, առաջին հերթին՝ Ռուսաստանի Դաշնությունում: Գների և առաջարկի անհամապատասխանության հետևանքով պետական ձեռնարկությունների զգալի մասը հատկապես մայրաքաղաքում հայտնվեց կաթվածահար վիճակում և կանգնեց փակման եզրին: Ապրանքների և ծառայությունների մեծ մասի գների ու սակագների ազատ արձակման պատճառով, օրինակ՝ 1992 թ. դեկտեմբերին 1991 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական ապրանքների գներն աճեցին 13,4 անգամ[312]: 1991-1995 թթ. աստիճանաբար բարձրացան նաև հեղուկ գազի, օդային փոխադրումների, արտաքին հեռախոսային և փոստային կապի ծառայությունների, հացի և էլեկտրաէներգիայի ընդունված սակագները: Ազատ գների՝ վերևից վարչական ռեժիմով ներդրումը փոխեց բոլոր մակարդակներում գործընկերների միջև փոխհարաբերությունների և վճարումների սկզբունքները: Գների ազատականացումը համահունչ չէր տնտեսության նախկինում գոյություն ունեցող պետական-մենաշնորհային համակարգին:

Եթե 1988-1990 թթ. ՀՆԱ-ում պետական ձեռնարկությունների բաժինը գերակշռող էր (ավելի քան 90 %), ապա 1993 թվականից մասնավոր ոլորտի արտադրանքի ծավալը սկսեց գերազանցել պետականին: ՀՀ-ում, այդ թվում՝ Երևանում, շուկայական, ազատական

[312] Տե՛ս Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, 2003, էջ 73:

տնտեսությանն անցման սկզբնական փուլում տեղի ունեցան կառուցվածքային էական տեղաշարժեր: Ժամանակագրական առումով այն բաժանվեց երկու փուլի:

Առաջին փուլն ընդգրկում է 1990-1993 թվականները: Այն կարելի է անվանել վաղ անցումային ժամանակաշրջան, որը բնութագրվում է տնտեսական խոր ճգնաժամով՝ էներգետիկ տագնապ, արդյունաբերության ճյուղերի արտադրանքի կտրուկ անկում, բնակչության եկամուտների և խնայողությունների նվազում, տնտեսության կառուցվածքային փոփոխություններ:

Երկրորդ փուլը ընդգրկում է 1994-1997 թվականները: Նշված փուլը կայունության հաստատման ու մասնավոր հատվածի ձևավորման ժամանակաշրջան էր և աչքի էր ընկնում դրամավարկային, հարկաբյուջետային կոշտ քաղաքականության իրականացմամբ, բանկային համակարգի ձևավորմամբ, գների ազատականացմամբ, արտադրական միջոցների լայնածավալ մասնավորեցմամբ կամ սեփականաշնորհման գործընթացներով:

Ծանր վիճակ ստեղծվեց Հայաստանի նորաստեղծ հանրապետության արդյունաբերության բնագավառում, որի մեծագույն մասը բաժին էր հասնում Երևանին: Այն խոշոր արդյունաբերական կենտրոն էր, որտեղ գտնվում էր արդյունաբերական ներուժի գրեթե կեսը: Մինչ անկախացումը Խորհրդային Միության կազմում Երևանը հռչակ է ձեռք բերել արդյունաբերության այնպիսի ճյուղերով, ինչպիսիք են մեքենաշինությունը՝ էլեկտրատեխնիկական մեքենաների և հաստոցների արտադրությունը, քիմիական արդյունաբերությունը, սննդի և թեթև արդյունաբերությունը: Քաղաքում գործում էին այդ ճյուղերի հզոր գործարաններ ու ամբողջ համալիրներ, որոնք հատկապես արտադրական սերտ կապերի մեջ էին ԽՍՀՄ բոլոր տնտեսական շրջանների և մեծաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների հետ:

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձությունները ամբողջ հանրապետության, մասնավորապես Երևանի արդյունաբերության մեջ կտրուկ փոփոխությունների հանգեցրին:

Ընդհատվեցին Երևանի բոլոր արտադրական կապերը: Զրկվելով հումքից և էլեկտրաէներգիայից՝ խոշոր գործարաններն ու կոմբինատները դադարեցին աշխատանքը, կազմալուծվեցին աշխատանքային կոլեկտիվները: Սկսված սեփականաշնորհման արդյունքում շատ գործարանների սարքավորումները մաս առ մաս վաճառվեցին, փոխվեց արտադրական մասնագիտացումը, գործարանների մեծ մասը դադարեց գործելուց:

1992 թ. մայրաքաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմեց նախորդ տարվա 51,8 %-ը: Անկում ապրեցին հատկապես մետաղագործությունը, շինանյութերի արտադրությունն ու մեքենաշինությունը: Անկախ հանրապետությունն ու նրա մայրաքաղաքը այժմ արդեն ինքնուրույն պետք է լուծերին իրենց առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրները[313]:

Մեծ դժվարություններ առաջացան արդյունաբերական արտադրանքի իրացման գործում, օրինակ՝ 1994 թ. իրացվեց Երևանի արդյունաբերական ամբողջ արտադրանքի միայն 50 %-ը[314]: Դա, անշուշտ, պայմանավորված էր նրանով, որ հայկական արտադրանքը միջազգային շուկայում դեռևս մրցունակ չէր: Լավագույն դեպքում հանրապետության արդյունաբերական արտադրանքը կարող էր սպառվել ԱՊՀ երկրներում, ինչին, սակայն, խանգարում էր շրջափակումը:

Արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության անկման հիմնական պատճառներից մեկը էներգետիկ ճգնաժամն էր, որն արդյունք էր Հայկական ատոմակայանի փակման, շրջափակման հետևանքով մազութի ու բնական գազի մատակարարման ընդհատումների: Ճգնաժամի առաջին ձմեռվանից սկսած (1991-1994 թթ.)՝ խափանվեց բնակչության ջերմամատակարարումը, հատկապես բնակարանային ջեռուցումը: Որպես հետևանք՝ հատկապես 1993-1994 թթ. անտառների և զբոսայգիների ամբողջ զանգվածներ անհսկելիորեն հատվեցին՝ օգտագործվելով իբրև վառելափայտ:

---

[313] Տե՛ս Է. Մինասյան, Երևանը նորագույն ժամանակաշրջանում, սոցիալ-տնտեսական վիճակը // Երևանի պատմություն, Երևան, 2018, էջ 285:
[314] Տե՛ս նույն տեղում:

Տրանսպորտը, փաստորեն, դադարեց գործել: 1993-1994 թթ. կենցաղային կարիքների համար միայն 2-3 ժամ էներգիա էր տրվում: Ազգաբնակչության համար կիրառվեցին էլեկտրաէներգիայից օգտվելու խիստ սահմանափակումներ: Ֆինանսական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով բազմաթիվ ենթակայաններ և բաշխիչ ցանցեր ենթարկվեցին քայքայման: Էլեկտրաէներգիայի պակասի պայմաններում էներգիայի գողությունը դարձավ համատարած երևույթ: Այսպիսի պայմաններում կենսական խնդիր էր Հայկական ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) վերագործարկումը, որը տեղի ունեցավ 1996 թ., Հրազդանջէկի 5-րդ բլոկը նաև հետագայում, ավելի ուշ՝ 2011 թ., ամբողջական շահագործման հանձնվեց: Հայկական ատոմակայանը վերագործարկվեց Ռուսաստանի Դաշնության տնտեսատեխնիկական ներդրումներով: Երևանի արդյունաբերության կառուցվածքում կարևոր դեր էր խաղում էներգետիկ տնտեսությունը: Այստեղ էին գտնվում Երևանջէկը՝ 550 000 կՎտ հզորությամբ, Երևանի ու Քանաքեռի ջրէկները և այլն:

Արդյունաբերության վերակենդանացման առաջին նշանները երևացին 1990-ական թթ. կեսերից միայն: 1996 թ. Երևանում առկա արդյունաբերական 251 ձեռնարկություններից իրենց հզորության տարբեր չափերով գործում էր 200-ը[315]: Դա նշանակում էր, որ մայրաքաղաքի ձեռնարկությունները դեռևս աշխատում էին ոչ լրիվ հզորությամբ, իսկ մի մասն էլ բոլորովին չէր աշխատում: Զգալիորեն նվազել էր արդյունաբերության ոլորտում զբաղվածների բացարձակ թիվը և բաժինը ընդհանուր զբաղվածության մեջ:

1992 թ. օգոստոսին ընդունվեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը[316], որով սկիզբ դրվեց հանրապետությունում արդյունաբերական ոլորտի սեփականաշնորհման գործընթացին: Օրենքն ամեն տարի լրացվում էր նոր որոշումներով: Համաձայն այդ օրենքի սահմանված կարգի՝ ՀՀ քաղաքացիներին

---

[315] Տե՛ս Մ. Մանասյան, Հ. Սայադյան, Հայաստանի աշխարհագրություն, Երևան, 2016, էջ 286:
[316] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 41, թ. 1,3:

տրվում էին, այսպես կոչված, սեփականաշնորհման սերտիֆիկատներ (վաուչերներ), իսկ պետական ձեռնարկության գույքի արժեքի 20 %-ը անհատույց սեփականաշնորհվում էր տվյալ ձեռնարկության աշխատակիցներին:

Սերտիֆիկատների (վաուչերների) միջոցով արդյունաբերական ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհման արդյունքում նախկին պետական ձեռնարկությունները հիմնականում վերածվեցին բաց և փակ բաժնետիրական ընկերությունների: Իրականացվեցին վաճառքի տարբեր սխեմաներ՝ բաժնետոմսերի բաժանորդագրություն, աճուրդ, մրցույթով վաճառք, ունեցվածքի վաճառք վարձակալին, բաժնեմասերի հատկացում կոլեկտիվի անդամներին:

Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումն իրականացվեց երկու փուլով: 1992-1993 թթ. սկսվեց փոքր ձեռնարկությունների, իսկ 1995 թվականից՝ միջին ու խոշոր ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհումը: Այդ գործընթացները գլխավորելու նպատակով 1996 թ. նոյեմբերին կառավարության կազմում ստեղծվեց սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարություն, որը 2000 թ. փետրվարից անվանվեց Պետական գույքի կառավարման նախարարություն: Նշված օրենքի հիման վրա 1993 թ. հանրապետությունում սեփականաշնորհվեց 500 ձեռնարկություն, իսկ 1994-1995 թթ.՝ մոտ 800[317]:

1994 թվականից հետո արդյունաբերության անկմանը աստիճանաբար փոխարինեցին տնտեսական աճի ու զարգացման ցուցանիշները: Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ մայրաքաղաք Երևանում արդյունաբերական ձեռնարկությունների ապապետականացումը, որը շարունակվեց նաև հետագա մի քանի տարիներին, ուղեկցվեց օբյեկտիվ դժվարություններով և սուբյեկտիվ բնույթի որոշ սխալներով ու չարաշահումներով:

Մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես և առողջապահական, կրթական ու այլ հաստատություններ հապճեպ սեփականաշնորհվեցին և աներևակայելի ցածր գներով

[317] Տե՛ս Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, 2003, էջ 113:

վաճառվեցին: Սեփականաշնորհված ձեռնարկությունների մեծագույն մասը դադարեցրեց իր գործունեությունը: Հազարավոր բանվորներ և մասնագետներ դարձան գործազուրկ: Ապապետականացման գործընթացում ամեն ինչ թողնվեց մասնավորի ձեռներեցությանը, իսկ պետությունը շատ դեպքերում մնաց դիտողի դերում[318]:

1990 թ. մայիսից Ադրբեջանը շրջափակել էր ՌՍՖՍՀ-ից Հայաստան եկող գազամուղը: Մայրաքաղաքը սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու, վառելիքաէներգետիկ առկա ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ ՀՀ կառավարությունն ու Երևանի քաղխորհրդի գործկոմը, դեռևս 1990 թ. աշնանից սկսած, բազմաթիվ միջոցառումներ ձեռնարկեցին:

ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1990 թ. հոկտեմբերի 2-ի «1990/91 թ. ձմռան սեզոնին նախապատրաստման աշխատանքների մասին» N 433 որոշման մեջ նշվում էր, որ ժողովրդական պատգամավորների Երևանի քաղխորհրդի գործկոմի գծով վերանորոգման ենթակա 79 կաթսայատնից, 45 կենտրոնական ջերմակետերից վերանորոգվել են միայն 44 կաթսայատուն, 20 ջերմակետ և 83 կմ երկարությամբ ջերմացանցեր: Անբավարար են կատարվել շենքերի ապակեպատման և մուտքերի տաքացման աշխատանքները: Չեն ավարտվել քաղաքային և շրջանային խորհուրդների գործկոմների կողմից եղած տարողությունները հնոցային մազութով լցնելու աշխատանքները» [319]:

Ղազախ–Երևան գազատարի անջատման հետևանքով ծայրաստիճան վատ վիճակում են հայտնվել բնական գազի պահեստավորման աշխատանքները, անբավարար է եղել նաև շինարարական և վառելիքաքսայուղային նյութերի մատակարարման վիճակը: Որոշվել է կրճատել փողոցային և գովազդային լուսավորությունը 50 տոկոսով: Նախատեսվել է մինչև նոյեմբերի 15-ը ավարտել քաղաքների և շրջկենտրոնների ճանապարհների ու մայթերի վերանորոգման և կոյուղու մաքրման աշխատանքները[320]:

Որոշման մեջ արձանագրվում էր, որ ՀՀ սոցիալ-տնտեսական ծանր վիճակը 1990 թ. աշնան և ձմռան ամիսներին ստեղծվել էր

---

[318] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 113-226:
[319] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 572, թ. 50:
[320] Տե՛ս նույն տեղում, թ. 51:

շրջափակման, տրանսպորտային վառելանյութերի պակասի, վառելանյութերի վատ և ոչ ժամանակին մատակարարման պատճառով: 1990 թ. ստացվել էր կարբիտ «կալցիումի» նախատեսվածի 54 %-ը, հեղուկ բիտումի 53 %-ը, պինդ բիտումի 16%-ը, կանվեկտորի 45%-ը[321]:

1990 թ. վերջին և 1991 թ. սկզբին շրջափակման, գազի ճնշման ցածր լինելու պատճառով ասֆալտբետոնի գործարանները աշխատել են ոչ լրիվ հզորությամբ, բացի այդ՝ համապատասխան շինանյութերի պակասի պատճառով շինարարական աշխատանքների զգալի մասը կազմել են ստորգետնյա կոմունիկացիաների փոխման և հիմնական վերանորոգման աշխատանքները, որոնց հետևանքով քաղաքի փողոցներում դեռևս կային չավարտված ու չասֆալտապատված խրամուղիներ, որոնց վերանորոգումը ընթացքի մեջ էր:

Երքազգործկոմի հաշվետվության մեջ նշված է, որ 1990-1991 թթ. ձմռանը քաղաքային տնտեսությունում պատրաստ է սանմաքրման մասնագիտացված ավտոտնտեսություններում եղած 144 մեքենա-մեխամիզմներից 138-ը: Կցումներ են կատարվել նաև հիմնարկ-ձեռնարկությունների ձմեռային աշխատանքների համար պիտանի մեքենա-մեխանիզմներից: Կուտակվել են շուրջ 2000 տոննա աղ, 700 խմ ավազ: Ձեռք են բերվել 1780 հատ ջարդիչ, 1450 հատ քերիչ հարմարանքներ և գործիքներ:

Բոլոր ավտոտնտեսություններում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն: Միջոցներ են ձեռնարկվել ձմռանը մեքենա-մեխանիզմները անվադողերով, չսառչող հեղուկով և համապատասխան քսայուղերով ապահովելու ուղղությամբ[322]:

ՀՀ նախարարների խորհրդին ուղղված գրությամբ Երևանի քաղխորհրդի գործկոմը հայտնում է, որ Երևանի հ. 3 (Դավթաշեն) և հ. 5 (Նորք-2) շրջանային ջերմակայանները լրացուցիչ հզորություններով, համապատասխանաբար 100 հ. կալ. ժամ և 50 հ. կալ. ժամ, պետական ընդունող հանձնաժողովի ակտով շահագործման են հանձնվել 1990 թ. դեկտեմբերին:

---

[321] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 572, թ. 55:
[322] Տե՛ս նույն տեղում, թ. 56:

Նշված ջերմային հզորությունները ջեռուցման սեզոնի սկզբին շահագործման չհանձնելը բացատրվում էր նյութատեխնիկական մատակարարմանն առնչվող հայտնի դժվարություններով, ինչպես նաև կապալառու և ենթակապալառու կազմակերպությունների անհամաչափ աշխատանքով:

Խիստ վերահսկողություն էր սահմանվել վառելիքաէներգետիկ պաշարների սպառման սահմանաչափերի նվազեցման վրա, ինչպես նաև խնդիր էր դրվել 10-15 տոկոսով ապահովելու էլեկտրաէներգիայի հզորությունների խնայողությունները:

Վառելիքաէներգետիկ ճգնաժամի պայմաններում մայրաքաղաքում ավտոտրանսպորտի ոչ համաչափ աշխատանքի դժվարություններից ելնելով՝ Երևանի քաղգործկոմը դիմել է ՀՀ նախարարների խորհրդին քաղաքի ավտոտրանսպորտի կառավարումը կենտրոնացնելու առաջարկով:

Իր հերթին ՀՀ նախարարների խորհուրդը, 1991 թ. մայիսի 30-ին «Երևան քաղաքի ուղևորատար տրանսպորտի կառավարումը կենտրոնացնելու մասին» N 247 որոշմամբ հիմք ընդունելով Ժողովրդական պատգամավորների Երևանի քաղխորհրդի գործկոմի առաջարկությունը մայրաքաղաքի վերգետնյա ուղևորատար տրանսպորտի (ավտոբուս, տրամվայ, տրոլեյբուս) կառավարումը մեկ համակարգում կենտրոնացնելու նպատակով, Երևանի քաղաքային էլեկտրանսպորտի վարչությունը հանձնեց ՀՀ ավտոմոբիլային տրանսպորտի նախարարությանը: Երևանի քաղխորհրդի գործկոմը քաղաքային ուղևորատար տրանսպորտի աշխատանքի կազմակերպման գործում որպես պատվիրատու պայմանագիր կնքեց ՀՀ ավտոմոբիլային տրանսպորտի նախարարության հետ՝ քաղաքային ուղևորափոխադրումներ կատարելու համար: Որոշման մեջ ընդգծվում էր, որ քաղաքային տրանսպորտի աշխատանքները խրախուսելու նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր տարի լրացուցիչ հատկացնել 25 մարդատար ավտոմեքենա[323]:

ՀՀ կառավարությունը և Երևանի քաղխորհրդի գործկոմը շարունակում էին միջոցառումներ ձեռնարկել մայրաքաղաքը ճգնաժամից

[323] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 572, թ. 6:

դուրս բերելու ուղղությամբ: 1991 թ. հուլիսի 5-ին ՀՀ նախարարների խորհուրդը ընդունեց N456 որոշումը «Վառելիքաէներգետիկ համալիրի ճգնաժամային իրավիճակի պայմաններում արտակարգ միջոցառումների մասին», որով հաստատվեցին գազամատակարարման և էլեկտրաէներգիայի արտադրության կողմնորոշիչ ռեժիմները, և խիստ հսկողություն սահմանվեց դրանց կատարման նկատմամբ[324]: Որոշմամբ նախատեսվում էր գազամատակարարման և էլեկտրական հզորությունների գործարկման 4-րդ և 5-րդ ռեժիմներին անցնելու դեպքում հիդրոէլեկտրոկայանների Սևան-Հրազդան կասկադում էլեկտրաէներգիայի արտադրման նպատակով Սևանա լճից օրական բաց թողնել 4 մլն խորանարդ մետր ջուր, յուրաքանչյուր դեպքում՝ կառավարության համապատասխան որոշում ընդունելուց հետո[325]:

Երքաղխորհրդի և շրջանային խորհուրդների գործկոմին հանձնարարվում էր միջոցներ ձեռնարկել սահմանված սահմանաքանակներին համապատասխան գազի և հնոցային մազութի մատակարարումների ապահովման համար, անձնական հսկողություն իրականացնել կիրառվող ռեժիմներին համապատասխան գազի և էլեկտրաէներգիայի ծախսման սահմանված սահմանաքանակների և դրանց օգտագործման դիմաց ժամանակին վճարման հարցերի կարգավորման նկատմամբ:

1991 թ. հոկտեմբերի 22-ին մայրաքաղաքում էլեկտրաէներգիայի խնայողության նպատակով ժամանակավորապես հեռուստահաղորդումները եթեր արձակվեցին ժամը 20:00-ից մինչև 23:00-ը, իսկ կիրակի օրերին՝ նաև ժամը 11:00-ից մինչև 14:00-ը: Փողոցների լուսավորության համար էլեկտրաէներգիայի ծախսը սահմանափակվեց 70%-ով[326]:

Վառելիքաէներգետիկ ճգնաժամի պայմաններում ջեռուցման համակարգի կարգավորման ուղղությամբ ևս քաղաքային կազմակերպությունները որոշակի միջոցառումներ ձեռնարկեցին նկատված

---

[324] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 572, թ. 41, 42:
[325] Տե՛ս նույն տեղում, թ. 42:
[326] Տե՛ս Երևանի տարեգրությունը (հնագույն ժամանակներից մինչև 2009 թ. վերջ), Երևան, 2009, էջ 199:

թերությունները այս ոլորտում շտկելու՝ իրենց տրամադրության ներքո գտնվող կենտրոնական և շրջանային ջերմային կայաններից ապահովելով մայրաքաղաքի բնակչության ջերմամատակարարումը: Ահա թե ինչու 1991 թ. նոյեմբերի 29-ին ՀՀ նախարարների խորհրդի Հ607 կարգադրության մեջ նշվում է, որ «Հայէներգո» ԱՄ և պատգամավորների Երևանի քաղխորհրդի գործկոմի Երևան քաղաքի ջրամատակարարման օբյեկտները 1991-1992 թթ. ջեռուցման ժամանակաշրջանին անբավարար նախապատրաստվելու հետևանքով «Հայէներգո» ԱՄ ենթակայության մազութով աշխատող շրջանային ջերմակայաններից (ՇՋԿ), 182 կենտրոնական ջերմային կետերից (ԿՋԿ), Երևանի քաղխորհրդի գործկոմի 3 ջեռուցման կաթսայատներից և 27 կենտրոնական ջերմային կետերից 1991 թ. նոյեմբերի 28-ի դրությամբ գործարկվել են «Հայէներգո» ԱՄ 6 շրջանային ջերմակայաններ և դրանցից սնվող 106 կենտրոնական ջերմային կետեր, պատգամավորների Երևանի քաղխորհրդի գործկոմի 3 կաթսայատներ և 2 կենտրոնական ջերմային կետեր, ինչի հետևանքով նշված ջերմային աղբյուրներից միացված 2991 բնակելի շենքերից, առողջապահական, լուսավորության և այլ օբյեկտներից ջերմություն էին ստանում միայն 1953 շենքեր[327]:

Որոշվել է նշված աշխատանքների համակարգումը դնել պատգամավորների Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալներ Ս. Բայբուրթյանի և Ս. Մավիսակալյանի վրա:

Հանձնարարվել է «Հայէներգո» ԱՄ-ին և Երևանի քաղխորհրդի գործկոմին շրջանային ջերմային կայանների, կաթսայատների, կենտրոնական ջերմային կետերի և ջերմային ցանցերի անխափան աշխատանքն ու Երևան քաղաքի բնակչության նորմալ ջերմամատակարարումն ապահովելու համար կազմակերպել համապատասխան ստորաբաժանումների շուրջօրյա աշխատանք:

«Հայէներգո» ԱՄ գլխավոր տնօրեն Ֆ. Հակոբջանյանը նախազգուշացվել է, որ 1991/1992 թվականների ջեռուցման ժամանակաշրջանի ջերմամատակարարման օբյեկտների ժամանակին նախապատրաստման աշխատանքները վիժեցվել են և պարտավորեց-

[327] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 573, թ. 65, 66:

րել են նրան մինչև 1991 թ. նոյեմբերի 30-ը լուծել ջերմային ցանցերի ձեռնարկության ղեկավարությունը համապատասխան կադրերով ապահովելու հարցերը[328] :

ՀՀ և հատկապես մայրաքաղաքի վառելիքաէներգետիկ ճգնաժամի դժվարությունները հաղթահարելու նպատակով, որոշ չափով հաշվի չառնելով բնապահպանական խնդիրները, դեռևս ՀԽՍՀ ԳԽ նախագահության 1990 թ. ապրիլի 18-ի որոշման կատարման նպատակով ՀԽՍՀ մինիստրների խորհուրդը 1990 թ. ապրիլի 25-ին N 254 «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման քիմիական նյութերի մնացորդների վերացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին որոշումն էր ընդունել, որով խնդիր էր դրվել կարճ ժամանակամիջոցում վերացնելու թերությունները «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում և վերահսկողություն դնելու Երքաղխորհրդի գործկոմի վրա[329]:

Ելնելով այս որոշումների կատարման անհրաժեշտությունից՝ ՀՀ նախարարների խորհուրդը 1991 թ. մայիսի 8-ին որոշում էր ընդունել «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման արտադրությունների գործարկման մասին» [330]:

Ի կատարումն ՀՀ Գերագույն խորհրդի 1991 թ. փետրվարի 6-ի և ապրիլի 17-ի որոշումների՝ ՀՀ նախարարների խորհուրդը որոշել է հանձնարարել.

1. «Նաիրիտ» ԳԱՄ-ին՝

ա. 1991 թ. մայիսից վերսկսել միավորման արտադրությունների աշխատանքները՝ ապահովելով դրանց անվտանգությունը և գործող բնապահպանական նորմաների պահպանումը[331],

բ. մինչև 1991 թվականի մայիսի 12-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բնության պահպանության պետական կոմիտեի հաստատմանը ներկայացնել սահմանային թույլատրելի արտանետումների և արտահոսքերի նախագծերը,

---

[328] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 573, թ. 66, 67:
[329] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 572, թ. 24:
[330] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 574, թ. 12, 13, 14:
[331] Տե՛ս նույն տեղում:

գ.1991 թ. օգոստոսի 6-ին ՀՀ նախարարների խորհուրդը կարգադրություն է արել նշված որոշման իրականացման նպատակով[332] քլորոպրենային կաուչուկների և լատեքսների մատակարարումների առաջադրանքների կատարումը ապահովելու համար 1991 թ. դեկտեմբերին այդ արտադրանքի թողարկման ծավալը հասցնել ամսական ոչ պակաս, քան 4 հազար տոննայի[333]: Թույլատրել է «Նաիրիտ» գիտաարտադրական միավորմանը 1991 թ. պետական կարիքների համար արտադրանքի մատակարարման սահմանված առաջադրանքներից ավելի թողարկված քլորոպրենային կաուչուկի արտահանման վաճառք՝ այդ արտադրանքի արտահանությունից ստացված արժույթային հասույթը բաշխելով ըստ կանոնակարգի[334]:

Պատգամավորների Երևանի քաղխորհրդի գործկոմին հանձնարարվել է ապահովել 1991 թ. Երևանի մեխանիկական գործարանի կողմից «Նաիրիտ» գիտաարտադրական միավորմանը լատեքսի արտադրության համար 6 հազար հատ 200-լիտրանոց մետաղյա տակառների մատակարարումը: Երքաղխորհրդի գործունեությամբ իրականացվել էին «Նաիրիտ» ԳԱՄ վերամասնագիտացման համապատասխան միջոցառումներ[335]:

1991 թ. դեկտեմբերի 10-ից վառելիքաէներգետիկ ճգնաժամի պատճառով փակվեցին մանկապարտեզները, դպրոցներն ու պրոֆտեխուսումնարանները: 1992 թ. հունվարից էլ ավելի վատացավ մայրաքաղաքի վառելիքաէներգետիկ վիճակը: Մայրաքաղաքի ղեկավարությունը ուղիներ էր փնտրում վառելիքի ներկրումն հանրապետությունում արտերկրից իրականացնելու ուղղությամբ: Այս գործում առավել մեծ էր Իրանի իսլամական հանրապետության դերակատարումը: Շրջափակման պայմաններում վառելիքի սարքավորումներ, վառարաններ, զանազան ու յուրատեսակ էներգիայի աղբյուրներ, սպիրտայրոցներ ու այլն ներկրվեցին հարևան Իրանից[336]:

---

[332] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 573, թ. 37-41:
[333] Տե՛ս նույն տեղում, թ. 37:
[334] Տե՛ս նույն տեղում:
[335] Տե՛ս նույն տեղում, թ. 42:
[336] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 572, թ. 24, 35:

1992 թ. հունվարի 14-ին Երքաղգործկոմի նախագահ Հ. Գալստյանը դիմել է ՀՀ պետնախարար Ռ. Չիֆթալարյանին գրությամբ. հանրապետությունում ստեղծված էներգետիկ ճգնաժամի պայմաններում Երևանի քաղաքային տնտեսության էլեկտրամատակարարման վիճակը բարելավելու, մեծ թվով վթարներն արագորեն վերացնելու և քաղաքի էներգատնտեսության մեքենայական բազան հզորացնելու նպատակով խնդրել է նրա հանձնարարությամբ Երքաղխորհրդի գործկոմին հատկացնել ֆինանսական միջոցներ, մեքենամեխանիզմներ ու նյութեր, էքսկավատորներ, ավտոկռունկներ, ավտոմեքենաներ, կոմպրեսատորներ և այլն[337]:

Սոցիալ-տնտեսական նման ծանր իրավիճակում վառելիքաէներգետիկ ճգնաժամի պայմաններում շարունակվում էին մայրաքաղաքի կառուցապատման, նոր գործարանների կառուցման, կամուրջաշինության, տոնավաճառներ հիմնելու, շինարարական որոշ աշխատանքներ: Այսպես, օրինակ, 1991 թ. մարտի 19-ին Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի որոշմամբ Երևան քաղաքում 1991 թ. ապրիլի 3-5-ը կազմակերպվեց ավելցուկ ապրանքների վաճառքի մեծածախ տոնավաճառ: ՀՀ առևտրի նախարարության հայտով 1991 թ. մարտի 30-ից մինչև ապրիլի 7-ը տրամադրվեց Երևան քաղաքի հյուրանոցներում 300 տեղ՝ տոնավաճառի մասնակիցներին տեղավորելու համար[338]: Միջոցներ ձեռնարկվեցին հանրապետական մաքսատունը մայրաքաղաք տեղափոխելու գործը կազմակերպելու ուղղությամբ: Բազմաթիվ դիմումներից հետո՝ 1991 թ. մայիսի 3-ին, ՀՀ նախարարների խորհրդի «ՀՀ տարածքում մաքսային ծառայության կատարելագործման մասին» N 322 որոշմամբ հանձնարարվեց ժողպատգամավորների Երքաղգործկոմին 1991 թ. 1-ին կիսամյակում լուծել Երևան քաղաքում հայկական հանրապետական մաքսատան տեղափոխման հարցը[339]:

ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. ապրիլի 4-ի N 165 կարգադրությամբ ՀՀ նախարարների խորհրդի և «Հայ-ամերիկյան բա-

---

[337] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 2:
[338] Տե՛ս նույն տեղում, գ. 573, թ. 8:
[339] Տե՛ս ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, N5 մայիս, Երևան, 1991, էջ 489-490:

ռեկամության կամուրջ» կազմակերպության՝ Երևան քաղաքում երկաթբետոնե բազմախոռոչ ծածկի պանելների արտադրության գործարան կառուցելու մասին 1991 թ. փետրվարի 15-ի համատեղ արձանագրության հիման վրա հանձնարարվեց ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեին մեկամսյա ժամկետում հատկացնել հողատարածություն «Հայ-ամերիկյան բարեկամության կամուրջ» կազմակերպության ներկայացուցչության վարչական և բնակելի շենքերի կառուցման համար[340]: Խնդիրը լուծվեց երկկողմանի ջանքերով:

1991 թ. դեկտեմբերի 20-ին Աբովյան փողոցում տեղի ունեցավ ծաղկավաճառ Կարաբալայի հուշարձանի բացման արարողությունը (քանդակագործ՝ Լ. Թոքմաջյան)[341]:

Երևանի քաղխորհրդի գործկոմը միջոցներ ձեռնարկեց նաև քաղաքում կամրջաշինության աշխատանքների կազմակերպման ոլորտում, սակայն տնտեսական շրջափակման և վառելիքաէներգետիկ ճգնաժամով պայմանավորված աշխատանքները ձգձգվում էին: Դրա վկայությունն էին Դավիթաշենի կամրջի կառուցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը: Այսպես, օրինակ, ՀՀ երքաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Ս. Բայբուրքյանը ՀՀ նախարարների խորհրդին 1992 թ. փետրվարի 2-ին գրված գրությամբ հայտնում էր, որ Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդի 1989 թ. սեպտեմբերի 7-ի հ. 464 որոշմամբ հանձնարարած էր Երքաղխորհրդի գործկոմի կառույցներից շահագործման հանձնել Երևանի Դավիթաշենի կամուրջը 1991 թ. 4-րդ եռամսյակում (գլխավոր կապալառու՝ հ. 107 կամրջաջոկատ) և Սարալանջի ուղետարը 1990 թ. 1-ին եռամսյակում (գլխ. կապալառու՝ «Հայտրանսշին տրեստ»)[342]: Այդ կապակցությամբ Երքաղխորհրդի գործկոմին տրված (պատվիրատուի) հանձնարարականները կատարվել էին Դավթաշեն կամրջի և Սարալանջի ուղետարի վերաբերյալ, սակայն կապալառու կազմակերպությունների վատ նյութամատակարարման ու աշխատանքների

[340] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 174, թ. 22, 23:
[341] Տե՛ս Երևանի տարեգրություն, էջ 199:
[342] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 69:

կազմակերպման հետևանքով ձախողվել էին հիշյալ կառույցների շահագործման հանձնման ժամկետները:

Կամրջի շինարարությունը ավարտելու վերաբերյալ Երքաղխորհրդի գործկոմը ՀՀ նախարարների խորհուրդ էր ներկայացրել որոշման նախագիծ, որի ընդունման դեպքում հնարավոր կլիներ այն շահագործման հանձնել 1993 թ.՝ կամրջի ու տրանսպորտային հանգույցի մասնակի սխեմայով, եթե սրանց համար ֆինանսավորեր 8.6 մլն ռուբլու չափով[343]: Դավիթաշենի կամրջի շինարարությունը, պայմանավորված տարբեր պատճառաբանություններով, այդ թվում՝ տնտեսական շրջափական հետևանքներով, երկաթբետոնե կոնստրուկցիաների բերելու դժվարություններով և այլ հանգամանքներով, ձգձգվեց, ընդունվեցին բազմաթիվ որոշումներ՝ կամրջի աշխատանքների կատարման վերաբերյալ, սակայն այն շահագործման հանձնվեց միայն 2000 թ.:

Վառելիքաէներգետիկ ճգնաժամի պայմաններում շատ հաճախ քաղաքային իշխանությունները չէին կարողանում իրականացնել պլանով նախատեսված բնակարանային շինարարությունը ֆինանսական միջոցների բացակայության և տնտեսական շրջափակման պատճառով:

ՀՀ նախարարների խորհրդին ուղղված գրությամբ Երքաղխորհրդի գործկոմը 1992 թ. սկզբին հայտնում էր, որ 1988-1991 թթ. կապիտալ շինարարության ծրագրի թերակատարումը խիստ բացասաբար անդրադարձավ քաղաքային տնտեսության կոմունալ-բնակարանային և սոցիալ-կուլտուրական նշանակության օբյեկտների կառուցման ու հանձնման պարտավորությունների իրականացման վրա: Նույնպիսին էր վիճակը նաև կոոպերատիվ բնակարանային, կոմունալ, ժողովրդական կրթության և առողջապահության բնագավառների կառույցների շինարարության և շահագործման հանձնման ուղղությամբ:

Երքաղխորհրդի գործկոմը պետական կապիտալ ներդրումների հաշվին բաշխված բնակմակերեսների գծով առաջացած պարտքը

[343] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 69:

մասնակիորեն մարելու, անավարտ և նոր կազմավորված կոոպերատիվ բնակելի տների, ինչպես նաև կոմունալ-կենցաղային և սոցիալ-կուլտուրական բնագավառների կառույցների շինարարությունը լայն թափով իրականացնելու նպատակով հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացրել 1992 թ. կապիտալ շինարարության կառույցների՝ կապալառու կազմակերպությունների հետ համաձայնեցված տիտղոսացուցակները՝ միաժամանակ ընդգծելով, որ հատկացված կապիտալ ներդրումները խիստ անբավարար են[344]:

1992 թ. փետրվարի 5-ին Հայաստանի Հանրապետության փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանին ուղղված Երքաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Հ. Գալստյանի գրությամբ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1991 թ. օգոստոսի 20-ի «Առևտրի» հասարակական սննդի, վճարովի ծառայությունների փոքր օբյեկտների, ինչպես նաև անավարտ շինարարությամբ օբյեկտների սեփականաշնորհման գործընթացի կարգավորման լրացուցիչ միջոցառումների մասին հ. 523 որոշման 20-րդ կետի համաձայն՝ խնդիր է դրվում հանձնարարելու Երևան քաղաքում 01.02.1992 թ. դրությամբ սեփականաշնորհումից գոյացած միջոցներից սահմանված չափով (12+3%) փոխանցել Երքաղխորհրդի գործադիր կոմիտեի արտաբյուջետային հաշվին[345]:

ՀՀ կառավարությունը, 1992 թ. փետրվարի 29-ին քննարկելով Երևանի քաղխորհրդի գործկոմի խնդրանքը, որոշում ընդունեց 1992 թ. բնակարանային, կոմունալ և սոցիալ-կուլտուրական օբյեկտների շինարարության կարիքների համար լրացուցիչ հատկացնել 2230 մլն ռուբլի պետական կապիտալ ներդրումներ և 680 մլն ռուբլի կոոպերատիվ բնակարանային շիանարարության նպատակով քանդված տների փոխհատուցման համար: Էկոնոմիկայի նախարարությունը հայտնում էր, որ Հանրապետությունը գտնվում է բավականին ծանր տնտեսական ճգնաժամի մեջ, որի հետևանքով բյուջեն խիստ սահմանափակ էր, և շինարարության կարիքների համար հնարավոր էր հատկացնել չնչին կապիտալ ներդրումներ: Նման պայմաններում

[344] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 78:
[345] Տե՛ս նույն տեղում, թ. 81:

կառավարությունը հարկադրված էր միջոցներն ուղղել միայն պետական նշանակություն ունեցող օբյեկտների շինարարության վրա, ուստի Երևանի քաղխորհրդի գործկոմի խնդրանքը անհնարին էր բավարարել[346]:

1992 թ. փետրվարի 24-ին Հայաստանի Հանրապետության փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանին ուղղված, Երքաղխորհրդի գործկոմի ներկայացրած մեկ այլ գրությամբ տեղեկացվում էր, որ 1988-1991 թթ. կապիտալ շինարարության պլանների խիստ թերակատարման հետևանքով այդ տարիների շինարարության պլաններում ընդգրկված ու Երևան քաղաքի կազմակերպություններին բաշխելու համար 206991 մ^2 նախատեսված ընդհանուր մակերեսով 2843 բնակարաններ չեն կառուցվել:

ՀՀ նախարարների խորհրդին 1992 թ. հունիսի 4-ին ուղղված գրության մեջ Երքաղխորհրդի գործկոմը հայտնում էր, որ տնտեսության շուկայական հարաբերությունների և ազատ գների ու սակագների անցման և դրա հետևանքով գների աննախադեպ աճի ու շինարարության ինքնարժեքի թանկացման պայմաններում էապես դժվարացել էին պետական կապիտալ ներդրումների հաշվին ու պետական պատվերներով մայրաքաղաքում բնակարանային, սոցիալ-մշակութային, կոմունալ-կենցաղային և ոչ այլ արտադրական օբյեկտների շինարարության հնարավորությունները և դրա ֆինանսավորման համար բյուջետային հատկացումների ծավալները[347]: Քաղաքում մեծ չափերի էր հասել վերը նշված բնագավառների ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ներդրումների հաշվին կառուցվող շինարարությամբ անավարտ օբյեկտների քանակը, որոնք ավարտին հասցնելու համար անհրաժեշտ էր ներդնել ֆինանսական ու նյութական խոշոր միջոցներ: Այդ կապակցությամբ Երքաղխորհրդի գործկոմը նպատակ ուներ տեղական բյուջեի օգուտների գերակատարման, միջոցների ազատ մնացորդի ու արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող, սակայն ստեղծված իրավիճակում դրանց հետագա շինարարությունը գործա-

[346] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 41:
[347] Տե՛ս նույն տեղում, թ. 162, 163:

դիր կոմիտեի համար աննպատակահարմար համարվող օբյեկտները վարձակալությամբ տալու կամ կատարված ծախսերի փոխհատուցման պայմանով հանձնելու պետական, հասարակական, կոոպերատիվ այլ կազմակերպություններին և հասույթից գոյացած միջոցները նպատակաուղղելու բացառապես քաղաքում բնակարանային շինարարության ֆինանսավորմանը[348]:

Երքաղգործկոմը, ելնելով նշված իրավիճակից, առաջարկում էր քաղաքում սեփական միջոցներով բնակարանային, սոցիալ-մշակութային, կոմունալ-կենցաղային և ոչ արտադրական այլ օբյեկտների շինարարությանը մասնակցել ցանկացող հիմնարկ-ձեռնարկություններից, կազմակերպություններից (անկախ սեփականության ձևից) քաղաքացիներից միջոցների հավաքագրում:

1992 թ. հոկտեմբերին Երևանի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի, վառելիքաէներգետիկ ճգնաժամի պատճառով Երևանի քաղխորհրդի որոշմամբ մայրաքաղաքում մտցվեց հացի, հացամթերքների ու պարենի որոշ տեսականու բաշխման կտրոնային համակարգ:

1993 թ. հունվարին զանգվածային ծառահատումներ կատարվեցին քաղաքի «կանաչ գոտում»[349]: Չնայած ապրիլի 3-ին համաքաղաքային շաբաթօրյակի շրջանակներում մայրաքաղաքում տնկվեց 20190 ծառ, ինչն էապես չփոխեց իրավիճակն այդ բնագավառում:

Նույն թվականի ապրիլի 12-ից սկսվեցին Մեծամորի ատոմակայանի վերագործարկման աշխատանքները, իսկ հոկտեմբերի 1-ից, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ մայրաքաղաքում սահմանվեցին նոր սակագներ էլեկտրաէներգիայի սպառողների համար (8 դրամ՝ նախկին 4 դրամի փոխարեն): Նման պայմաններում մայրաքաղաքի քաղաքային խորհրդի գործկոմի նախաձեռնությամբ 1993 թ. մայիսի 30-ին կազմակերպվեց Երևանի 2775-ամյակի և հայոց պետականության վերականգնման 75-ամյակին նվիրված «Երևան-93» միջազգային ֆիլատերիստական ցուցահանդեսը:

Մեկ տարի անց մայրաքաղաքի ղեկավարության նախաձեռնությամբ վերագործարկվեց Երևանի մանկական երկաթուղին, իսկ հոկ-

---

[348] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 371, թ. 164:
[349] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևան, 2009, էջ 202:

տեմբերին Նորքի 4-րդ զանգվածի շենքերից մեկի բակում բացվեց Սուրբ Գևորգ մատուռը, որը կառուցել էր մայրաքաղաքի բնակչուհի Սիլվա Եղիազարյանը[350]:

1994 թ. դեկտեմբերի 30-ին բացվեց Երևանի «Կասկադը»՝ մայրաքաղաքի ճարտարապետական, մշակութային և տրանսպորտային կարևոր կառույցներից մեկը (ճարտարապետներ՝ Ջիմ Թորոսյան, Ասլան Մխիթարյան)[351]:

«Տաք ձմեռ» ծրագրի շրջանակներում մայրաքաղաքում կատարվեցին գազի, վառելիքի ներկրման, վառարանների ձեռքբերման և այլ աշխատանքներ: 1993 թ. վերջերին տարափոխիկ հիվանդությունների համաճարակի կանխարգելման նպատակով ձեռնարկվեցին քաղաքի ջրատար համակարգի նորոգման, փողոցների սանմաքրման և բարեկարգման միջոցառումներ[352]: Այդ նույն տարում՝ հուլիսին, «Երազ» գործարանի կոնստրուկտորների ջանքերով ստեղծվեցին և փորձարկվեցին «Երազ-37-30» մոդելի նոր տարբերակները՝ երթուղային տաքսիներ, բեռնատար-ուղևորատար մեքենաներ: Օգոստոսի 19-ին «Ցեղասպանության դեմ պայքարող պատերազմի և աշխատանքի վետերանների միության» դիմումխնդրանքի արդյունքում ՀՀ ԳԱԱ կազմ մտավ «Ցեղասպանության թանգարանը»[353]:

1994 թ. մայիսի 30-31-ը Երևանում տեղի ունեցավ գործարար մարդկանց միջազգային 4-րդ համաժողովը, որը հրավիրել էր «Հայ գործարարների ֆորում» միջազգային կազմակերպությունը՝ ՀՀ կառավարության հովանավորությամբ: Համաժողովը որոշեց միջոցառումներ ձեռնարկել Երևանի արդյունաբերական որոշ ձեռնարկություններ վերականգնելու ուղղությամբ և խնդիր դրեց կազմակերպելու հանրապետության և հատկապես Երևանի քաղաքային տնտեսության մեջ ներդրումների գործը[354]:

---

[350] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևան, 2009, էջ 203:
[351] Տե՛ս նույն տեղում, էջ 204:
[352] Տե՛ս նույն տեղում:
[353] Տե՛ս նույն տեղում, էջ 203:
[354] Տե՛ս նույն տեղում:

1995 թ. հեկտեմբերի 28-ին Երևանի պետական համալսարանի կենտրոնական մուտքի հրապարակում բացվեց Մովսես Խորենացու արձանը (քանդակագործ՝ Աշոտ Պողոսյան):

1995 թ. մայրաքաղաքում գործում էր էլեկտրամատակարարման երկժամյա գրաֆիկ[355]:

Ելնելով արդյունաբերական պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման մասին օրենքից՝ մայրաքաղաքում ևս սկսվեց պետական (փոքր, միջին և խոշոր) ձեռնարկությունների ապապետականացման գործընթացը: Այն մեծ չափերով իրականացվեց հատկապես 1995 և 1996 թվականներին: 1995 թ. օգոստոսին սեփականաշնորհվեցին Երևանի «Լուսին», «Լույս», պետական ձեռնարկությունները, «Երասխ» հանքային ջրերի գործարանը, սեպտեմբերին՝ Երևանի «Զեյթուն-սառցարան», «Էրեբունի» ԳԱԶ-ի «Արագիլ» դուստր ձեռնարկությունները[356]:

Նույն տարում՝ փետրվարի 23-24-ին, սեփականաշնորհվեցին և մասնավոր անձանց վաճառվեցին Երևանի «Կոմպրեսորների», «Ամրանների», «Քիմոռեակտիվների» գործարանները, հրուշակեղեն-մակարոնեղենի կոմբինատը, «Երազ», «Էլեկտրաապարատ», «Պոմպերի», «Տոսպ» գործարանները, իսկ ապրիլի 10-ին՝ «Ռետինատեխնիկական իրերի գործարանը», Երևանի կարի ֆաբրիկանները, ձեթօճառի կոմբինատը, «Պոլիվինալացետատ», «Քիմիա-դեղագործական» գործարանները, ապրիլի 23-ին և 28-ին՝ «Երևանի կահույքի ֆաբրիկան», «Երևանի տեխնոլոգիական սարքավորումների գործարանը», «Նուբարաշենի թռչնաբուծական ֆաբրիկան»[357], մայիսի 19-ին՝ «Երևանի ժամացույցերի գործարանը», իսկ մայիսի 30-ին՝ Երևանի պահածոների, էլեկտրաչափիչ սարքերի, Շամպայն-գինիների, հուլիսի 6-ին՝ Երևանի «Զովք», «Ջերմոքիմիկ» գործարանները, Երևանի «Հայէլեկտրամեքենա» միավորումը, «Երկգունմետ» ձեռնարկությունը: Հետագա տարիներին սեփականաշնորհվեցին նաև

[355] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 203:
[356] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 174, թ. 12, գ. 40, թ. 17, գ. 41, թ. 16, գ. 44, թ. 12, գ. 45, թ. 11, գ. 46, թ. 9:
[357] Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 13, գ. 86, թ. 11, գ. 87, թ. 8, գ. 88, թ. 6, գ. 89, թ. 18, գ. 90, թ. 16, գ. 91, թ. 14, գ. 92, թ. 17, գ. 94, թ. 2:

ռելեի, ջրապոմպերի, անվադողերի, կաբելի, էլեկտրալամպերի գործարանները, գինու կոմբինատը և այլն[358]:

1997 թ. հունիսին Երևանի կոնյակի գործարանի տերը դարձավ ֆրանսիական «Պեռնո-Ռիկար» ֆիրման[359]: Մայրաքաղաքում սկսվեց նաև պետական բնակարանների սեփականաշնորհման գործընթացը: Երևանում պետական բնակարանային ֆոնդում գտնվող բնակարանների սեփականաշնորհումը սկզբում կատարվում էր շրջխորհրդի գործկոմի կողմից, իսկ հարցերի նախապատրաստմամբ զբաղվում էին բնակարանային ֆոնդի հաշվառման և բաշխման ծառայությունները: Պետական բնակարանները սեփականաշնորհվելուց հետո հանվեցին պետական հաշվեկշռից, այնուհետև որպես քաղաքացիների սեփականություն պետական տեխնիկական հաշվառման ենթարկվեցին ԾԾԱԳ վարչության կողմից: Հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 03.06.92 թ. հ. 330 որոշման համաձայն՝ Երևանի քաղխորհուրդը սեփականատեր էր Երևան քաղաքում գտնվող պետական ողջ բնակֆոնդի նկատմամբ (անկախ գերատեսչական պատկանելությունից):

Երևանի քաղգործկոմի նախագահ Վ. Խաչատրյանը դիմեց ՀՀ կառավարություն՝ նպատակահարմար գտնելով քաղաքում բնակարանների սեփականաշնորհման գործառույթները շրջգործկոմներից տեղափոխել Երքաղխորհրդի գործկոմ: Առաջարկվող փոփոխությունը հնարավորություն կտար քաղաքացիներին խուսափելու բնակարանները սեփականաշնորհելիս շրջգործկոմի տարբեր ծառայություններին առնչվելուց, որն առաջացնում էր որոշակի բարդություններ, այդ հարցերը լուծել առավել արդյունավետ և ամբողջ քաղաքում կիրառել միասնական գործընթաց: Հարցը շուտով դրական ընթացք ստացավ[360]:

Երևանի քաղգործկոմը, 1993 թ. հունիսի 26-ին դիմելով ՀՀ կառավարությանը, հայտնում էր, որ պետական և հանրային բնակարա-

---

[358] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 175, գ. 259, թ. 15, գ. 278, թ. 14, գ. 301, թ. 19, գ. 320, թ. 11, գ. 324, թ. 25, գ. 508, թ. 15, գ. 512, թ. 16, գ. 513, թ. 14:
[359] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևան, 2009, էջ 207:
[360] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 563, թ. 51:

նային ֆոնդի սեփականաշնորհմանն առնչվող փաստաթղթերի ձևակերպման նպատակով առաջարկվում է գանձել վարձը և մուծման կարգի վերաբերյալ սահմանել սեփականաշնորհման ընթացքը՝ սկսած դիմում ներկայացնելուց մինչև գույքագրման ավարտը, ինչպես նաև նկատի առնել սեփականաշնորհման ենթակա բնակֆոնդի քանակը (Երևան քաղաքում՝ մոտ 170 000 բնակարան), իրականացման ժամկետը (2 տարվա ընթացքում) և մեկ աշխատողի միջին աշխատանքային հնարավորությունները գործնականում հաշվի առնելու հանգամանքը[361]:

Նկատի ունենալով, որ սեփականաշնորհման իրականացումը կատարվելու է կամավորության սկզբունքով, ուստի քաղաքացիները համապատասխան շրջանային խորհրդի, իսկ նշված աշխատանքները կենտրոնացնելու դեպքում քաղխորհրդի գործկոմի պետք ներկայացնեն դիմում, որի սահմանվող ձևում նշվելու է անհրաժեշտ տվյալներ՝ բնակարանի, գրանցված և դուրս գրված անձանց, ինչպես նաև սեփականաշնորհման նախընտրվող ձևի (օրենքի 19-րդ հոդված) վերաբերյալ: Դիմումից կից ներկայացվելու են նաև ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնությունները և քաղվածք անձնական ֆինանսական հաշվից (վարձակալական քարտից)[362]:

Ելնելով սեփականաշնորհվող բնակարանի սենյակների թվից և հանրապետությունում սահմանվող նվազագույն աշխատավարձի չափից՝ առաջարկվում է կիրառել հետևյալ մեխանիզմը: Մեկ բնակարանի սեփականաշնորհման դեպքում որպես մատուցվող ծառայությունների վճարման վարձաչափ սահմանել հանրապետությունում հետևյալ ժամանակաընթացքում նվազագույն աշխատավարձի 25 %-ի չափով՝ սենյակների թվի համեմատ ավելացնելով ևս 5 %, քանի որ արդարացի չի լինի մեկ սենյակի և չորս սենյակի սեփականաշնորհման դեպքում հավասար վարձավճարի մուծումը[363]:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Բագրատյանին 1994 թ. մայիսի 30-ին գրած գրությամբ Երքաղգործկոմի նախագահ

---

[361] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 563, թ. 57:
[362] Տե՛ս նույն տեղում:
[363] Տե՛ս նույն տեղում, թ. 58:

Վ. Խաչատրյանը հայտնում էր, որ Երևանի քաղխորհրդի գործկոմը, ծանոթանալով ՀՀ կառավարության նախաձեռնությամբ սեփականաշնորհվող ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների ցանկին, իր առաջարկություններն ու նկատառումներն է ներկայացրել՝ նշելով, որ մայրաքաղաքում կան տեղակայված բազմաթիվ ժամանակավոր՝ բնակչության կենցաղ սպասարկման, մանրածախ առևտրի հասարակական սննդի օբյեկտներ (տաղավարներ, կրպակներ և այլն), որոնք չեն գտնվում բնակելի ֆոնդում կամ այլ հիմնական կառույցներում: Դրանք իրենց էությամբ օժանդակ շինություններ են և անհարիր մայրաքաղաքի գեղագիտական տեսքին: Սեփականաշնորհել դրանք, երբ սեփականատիրոջ մշտական օգտագործման կանցնի նաև այդ շինությունների զբաղեցրած հողատարածքները՝ հետագա վերակառուցման պահանջով, համարվում էր ոչ նպատակակարմար[364]: Առաջարկվում էր դրանք տալ վարձակալության:

Տարբեր նշանակության նման ժամանակավոր օբյեկտներ կային նաև մայրաքաղաքի զբոսայգիներում, իսկ վերջիններս ամբողջական համալիրներ էին՝ իրենց գրաված տարածքով: Զբոսայգիներում և ժամանցի համար առանձնացված կանաչ գոտիներում գտնվող ժամանակավոր օբյեկտների սեփականաշնորհման փոխարեն առաջարկվում էր դրանք ապապետականացնել և տալ վարձակալության: Աննպատակահարմար էր համարվում նաև Երևանում գտնվող ավտոկանգառների սեփականաշնորհումը: Տաք ջրամատակարարման բացակայության պայմաններում հաշվի առնելով բնակչության սպասարկման նվազագույն պահանջների բավարարումը, երբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ մեծ դժվարություններով շահագործվում էին բաղնիքները, դրանց սեփականաշնորհումը նույնպես համարվում է աննպատակահարմար[365], առաջարկվում էր դրանք տալ վարձակալության:

Երևանում գործում էին մի քանի տասնյակի հասնող ոչ պետական գրավատներ, և պետական սեկտորում երկու գրավատուն ունե-

[364] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց .15, գ. 364, թ. 15:
[365] Տե՛ս նույն տեղում:

նալը համարվում էր նպատակահարմար, իսկ դրանց սեփականաշնորհումը՝ ոչ նպատակահարմար: Հյուրանոցների մի մասում դեռևս ապրում էին փախստականներ, և դրանք կառավարվում էին այն վարձակալած ձեռնարկության կողմից: Ցանկալի էր նշված հյուրանոցների սեփականաշնորհումը տեղափոխել հաջորդ փուլ:

Պետական կրկեսի սեփականաշնորհումը նպատակահարմար չէր, քանի որ այն իր տեսակի մեջ միակն է հանրապետությունում:

Էլեկտրական տրանսպորտի ենթակառուցվածքում բնակչության սպասարկման գործում իր համեստ բաժինն ունի նաև Նորքի ճոպանուղին, որի սեփականաշնորհման փոխարեն նպատակահարմար էր համարվում այն տալ վարձակալության:

Սեփականաշնորհման ցանկում ընդգրկվել էին բազմաթիվ մանրածախ առևտրի խանութներ, որոնց միջոցով կատարվում էր նաև կտրոնով տրվող մթերքների ու հացի վաճառք: Հաշվի առնելով հացի մասնագիտացված խանութների պակասը Երևանի տարբեր շրջաններում՝ հացի վաճառքի բարելավման գործում Երքաղխորհրդի գործկոմը ցանկալի էր համարում, որ մանրածախ առևտրի սեփականաշնորհման ենթակա օբյեկտների յուրաքանչյուր ցանկ մինչև հաստատման ներկայացնելը համաձայնեցվեր Երքաղխորհրդի գործկոմի հետ[366]:

Երքաղխորհրդի գործկոմի 06.09.91 թ. հ.3/12 որոշմամբ հանձնարարվել էր շրջխորհուրդների գործկոմներին բնակելի շենքի տեխնիկական վիճակի հետազոտման, վթարայնության աստիճանը որոշելու և տեխնիկական անձնագրեր կազմելու համար տեղական բյուջեի հաշվին գումարներ հատկացնել: Շրջխորհրդի գործկոմները համապատասխան գումարներ չունենալու պատճառով 1991 թ. կազմեցին ընդամենը 116 բնակելի շենքերի տեխնիկական անձնագրեր՝ 114.0 հազ. ռուբ. գումարով: 1992 թ. կազմվել էին թվով 36 բնակելի շենքերի և քաղաքի մշակույթի օբյեկտների տեխնիկական անձնագրեր[367]:

---

[366] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց .15, գ. 364, թ. 16:
[367] Տե՛ս նույն տեղում:

Երքաղխորհրդի գործկոմի 1994 թ. մարտի 25-ի հ.12/1 որոշմամբ հանձնարարվել էր համակարգի բոլոր կազմակերպություններին կատարելու պարտադիր անձնագրավորման աշխատանքներ, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով պայմանագրեր չէին կնքվել գործկոմի շենքերի, շինությունների անձնագրավորման աշխատանքները կատարելու համար: Անձնագրավորման աշխատանքների կատարումը կարևոր նշանակություն ուներ հատկապես շենքերի և շինությունների սեփականաշնորհման գործում:

Երքազգործկոմի նախագահ Վ. Խաչատրյանի՝ ՀՀ վարչապետ Հ. Բագրատյանին 1994 թ. դեկտեմբերի 8-ին ուղղված գրությունից պարզվում է, որ մայրաքաղաքի բնակֆոնդի վիճակը բարվոք չէ: Ելնելով հանրապետության նոր տնտեսական բարեփոխումների ծրագրից՝ Երևան քաղաքում նոր սկսվող օբյեկտների շինարարություն մոտակա տարիներին չէր նախատեսվում, քանզի Երևանում կային սկսված կառույցներ, որոնց շինարարության շարունակությունն ու ավարտը անհետաձգելի պահանջ էր մայրաքաղաքի համար: Դրանք էին՝ Երևան քաղաքում բնակարանային և այլ սոցիալական կարևոր կառույցների շինարարության նպատակով 1988 թ. իրականացված տարածքներից 522 անօթևան մնացած ընտանիքների համար կառուցվող 14 բնակելի շենքերը (35.2 հազ. քառ. մետր ընդհանուր մակերեսով) և 1986 թ. մինչև 1991 թ. սկսված 22 կոոպերատիվ բնակելի շենքներից 19-ի շինարարությունը (92.2 հազ. քառ. մետր), որոնք մնացել էին անավարտ[368]:

Գների ազատ արձակման կապակցությամբ հիշյալ շենքերի շինարարության թանկացման հատուցումը ՀՀ կառավարության 15.06.92 թ. հ. 221 կարգադրությամբ հանձնարարված էր իրականացնել հանրապետական բյուջեի հաշվին, իսկ շինարարության նախարարությունը դրանց շահագործման հանձնումը պետք է ապահովվեր 1992-1993 թթ.[369]: Սակայն կապիտալ ներդրումների ու ֆինանսական անբավարար հատկացման պատճառով դրանք մնացել էին անավարտ: Սրա հետ մեկտեղ, 1991 թ. սկսած, 19 կոոպերատիվ շենքերի

[368] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց .15, գ. 364, թ. 18:
[369] Տե՛ս նույն տեղում, թ. 35:

(փայատերերը մուծել էին փայմասնակցության գումարները) ֆինանսավորման հարցը լուծված չլինելու պատճառով դրանք նույնպես մնացել էին անավարտ:

1994 թ. տվյալներով անավարտ էին մնացել նաև 47 կիսակառույց շենքեր, որոնք վաղօրոք բախշվել էին քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում բնակարանի կարիքավոր հերթագրվածներից 1928 ընտանիքի վրա: Եվ վերջապես 4-րդ կարգի վթարային 35 բնակելի շենքերի (որից 12-ը՝ առավել վտանգավոր) բնակիչների վերաբնակեցման համար անհրաժեշտություն էր առաջացել կառուցելու շուրջ 103 հազ. քառ. մետր ընդհանուր մակերեսով նոր բնակելի շենքեր[370]:

ՀՀ վարչապետի՝ 1996 թ. դեկտեմբերի 3-ի «Երևանի քաղաքապետարանի 1996 թ. գործունեության մասին» հ. 639 որոշմամբ ստեղծվել էր համապատասխան հանձնաժողով՝ ըստ բնագավառների՝ քաղաքապետարանի ընթացիկ գործունեությունն ուսումնասիրելու համար: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա հաշվի առնելով, որ հողհատկացումների ժամանակ խախտվել էին ՀՀ կառավարության 18.07.1996 թ. «Պետական սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման, հանձնման ժամանակավոր լիազորությունների սահմանման մասին» հ. 216 և քաղաքապետի 19.08.1996 թ. հ. 192 որոշումներով սահմանված կարգի պահանջները՝ չեղյալ էր համարվել 1996 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսների ընթացքում հողհատկացումների թվով 34 որոշումը[371]:

Նկատի ունենալով, որ վարձակալության տրված մի շարք զբոսայգիների հողամասեր օգտագործվել են ոչ նպատակային, խախտվել են զբոսայգիների էկոլոգիական անվտանգությունը, ինչպես նաև պատշաճ ձևով չեն կատարվել պայմանագրային լիազորությունները, քաղաքապետի կարգադրությամբ ուժը կորցված են ճանաչվել Երևանի 8 զբոսայգիների տարածքների վարձակալության հանձնելու մասին որոշումները (Օղակաձև զբոսայգի, Սարյանի արձանին

[370] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց .15, գ. 364, թ. 36:
[371] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 1, թ. 10, 11:

հարող պուրակ, Էրեբունու տարածքի մանկական զբոսայգի, Սունդուկյանի անվան թատրոնի հարակից և այլ տարածքներ):

Չեղյալ է համարվել նաև քաղաքապետի՝ 11.09.1996 թ. Խորհրդային շրջանի մանկական զբոսայգուն պատկանող Նորքի 1-ին զանգվածի Գայի պողոտային հարող տարածքը և Միասնիկյանի պողոտայի վրա գտնվող անավարտ լճակներն ու դրանց հարող անտառային զանգվածը «Հրաշք» ՍՊԸ ընկերությանը վարձակալությանը հանձնելու մասին» հ. 290 որոշումը: Հանձնարարվել է քաղաքապետարանի իրավաբանական բաժնին օրենքով սահմանված կարգով լուծարել նշված որոշումների հիման վրա կնքված պայմանագրերը[372]:

Երևանի քաղաքապետի 17.12.1996 թ. հ. 367 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել է քաղաքապետարանի «Երևան-Ինվեստ» պետական ձեռնարկության ֆինանսական գործունեության առանձին հարցեր:

Հաշվի առնելով, որ նախատեսվում է անցկացնել Երևանի Կենտրոնի մանրամասն հատակագծման նախագծի մրցույթ, չեղյալ է համարվել նաև քաղաքապետի 31.05.1996 թ. հ. 4/3 որոշումը՝ «ԳՆԱՄ» ՍՊԸ ընկերությանը Նորագյուղ թաղամասին կից «Սարդարի այգի» կոչվող տեղամասում տոնավաճառի շինարարության թույլտվության մասին[373]:

1996 թ. հուլիսի 13-18-ը «Պարմանի» ուսանողական համազգային բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ և հովանավորությամբ Երևանում կայացավ առաջին համահայկական ուսանողական վեհաժողովը՝ «Հայաստանը համայն հայության հայրենիքն է» նշանաբանով[374]:

Նույն թվականի սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 2-ը Երևանում տեղի ունեցավ շախմատի համաշխարհային 32-րդ օլիմպիադան: Իսկ 1997 թ. սեպտեմբերի 22-ին Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում մեկնարկեց մինչև 16-18 տարեկան տղաների և աղջիկների շախմատի աշխարհի առաջնությունը, որին մասնակցում էին աշխարհի 65 երկրների շախմատիստներ և շախմատիստուհիներ[375]:

---

[372] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 1, թ. 9,10:
[373] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 1, գ. 338, թ. 2:
[374] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 205:
[375] Տե՛ս նույն տեղում, էջ 206:

1996 թ. հոկտեմբերի 25-ին մայրաքաղաքում գործարկվեց մետրոյի «Չարբախ» կայարանը:

1997 թ. մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները թողարկել են 78,3 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք, որից 38,9 մլրդ դրամը կամ 49,7 %-ը՝ սպառողական ապրանքներ, 9,7 %-ով և 36,7%-ով աճել էին թեթև արդյունաբերության և օղու, գինու և գարեջրի արտադրության ֆիզիկական ծավալները: Իրացվել էր 76,2 մլրդ դրամի արտադրանք: Արդյունաբերական համալիրում 1997 թ. հունվար-դեկտեմբերին արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմել էր 73,5 հազար մարդ[376]:

Աճի տեմպեր էին գրանցվել մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում: 1997 թ. այն կազմել էր 132,1 մլրդ դրամ կամ 10,6 %-ով ավելի, քան նախորդ տարի: 25,3 %-ով աճել էր բնակչությանը մատուցվող վճարովի ծառայությունների ծավալը, և այն 1997 թ. կազմել էր 94,4 մլրդ դրամ[377]:

Բնակելի ֆոնդի հիմնական նորոգման աշխատանքներ էին կատարվել 158,8 միլիոն դրամի չափով: Բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման և բարեկարգման հարցերը թաղային համայնքներից շատերում (9) կատարվել էին նորաստեղծ 188 համատիրությունների միջոցով: Համաձայն «ՀՀ պետական և հանրային բնակելի ֆոնդի սեփականաշնորհման մասին» օրենքի՝ 1997 թ. մայրաքաղաքում սեփականաշնորվել էր 1037,5 հազ. քմ ընդհանուր մակերեսով 16424 բնակարան, սեփականաշնորհված բնակարանների թիվը կազմում էր 159710 կամ ընդհանուր քանակի 87,95 %-ը[378]:

Միաժամանակ թաղապետարանների հետ համատեղ աշխատանքներ էին տարվել Պռոշյան փողոցի բարեկարգման, մետրոյի «Երիտասարդական» կայարանի մոտ առևտրի կրպակների տեղափոխման, Կոզեր թաղամասի անօրինական կառուցված շինությունների քանդման ուղղությամբ[379]:

1997 թ. ջեռուցման շրջանում քաղաքապետարանի ջերմային տնտեսության պետական ձեռնարկության կողմից Երևան քաղաքում

---

[376] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց.1, գ. 367, թ. 1:
[377] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց.1, գ. 367, թ. 1:
[378] Տե՛ս նույն տեղում:
[379] Տե՛ս նույն տեղում, թ. 10:

շահագործվել էին 5 շրջանային ջերմակայան, Արարատյան կենտրոնական կաթսայատունը, 431 կմ մայրուղի և 1823 կմ ներքաղամասային ցանցերով և 110 կենտրոնական ջերմային հանգույց[380]:

Քաղաքապետի 23.06.97 թ. Ն. 579 որոշմամբ քաղաքի զբոսայգիները մոտ 150 հա տարածքով անցան «Երևանյան այգիներ» ՓԲԸ-ին: Տարվա ընթացքում ձեռնարկության կողմից փաստացի սպասարկվել էր 12500 հա քաղաքային նշանակության տարածք, որի ընդհանուր ծավալը կազմում էր 163,7 մլն դրամ[381]:

ՀՀ վարչապետի 1997 թ. դեկտեմբերի 15-ի Ն. 582 որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետի առաջարկությամբ և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համաձայնությամբ Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի Տերյան 66 հասցեում գտնվող մասնաշենքը հանձնվում էր Երևանի քաղաքապետարանի տնօրինությանը[382]:

1997 թ. հունվարի 13-ին եթեր դուրս եկավ առաջին մասնավոր հեռուստաընկերությունը՝«ԱՐ»-ը:

1997 թ. փետրվարին սկսվեցին Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման աշխատանքները:

Նույն թվականի ապրիլի 7-ին Հայկական կարմիր խաչի երիտասարդական բաժնում ծնունդ առավ «Մաքուր Երևան» կամավորական շարժման ծրագիրը, որի ուղղությամբ Երևանի քաղաքապետարանը զգալի աշխատանք իրականացրեց փողոցների, այգիների և բակերի մաքրման գործում:

1997 թ. մայիսի 2-ին նշվեցին Երևանի Նոր Նորք (նախկինում՝ Խորհրդային շրջան) թաղամասի 25-ամյակը, իսկ հոկտեմբերին՝ Զեյթուն թաղամասի հիմնադրման 50-ամյակը[383]:

1997 թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ազգային հեռահաղորդակցության «Արմենտել» ընկերության բաժնետոմսերի 90 %-ը վաճառվեց հունական «OTE» ընկերությանը:

1997 թ. մայրաքաղաքում տեղի ունեցած նշանակալի իրադարձություններից էին Օղակաձև զբոսայգում բացված Կարո Հալաբյա-

---

[380] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց.1, գ. 367, թ. 2:
[381] Տե՛ս նույն տեղում, թ. 3:
[382] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց.1, գ. 338, թ. 3:
[383] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 206:

նի հուշարձանը՝ նվիրված անվանի ճարտարապետի ծննդյան 100-ամյակին (ճարտ.՝ Ռ. Զուլիակյան), նորաձևության «Զատիկ» կենտրոնի հիմնադրումը, թիվ 125 դպրոցի անվանակոչվումը եղեռնազոհ բանաստեղծ Սմբատ Բյուրատի անունով, Պարոնյան փողոցից Հրազդանի կիրճ տանող ճանապարհին գտնվող հրապարակի անվանակոչումը Ուրուգվայի հրապարակ: Նույն թվականին Կոմայգին կրկին վերանվանվեց Անգլիական այգու[384]:

1998 թ. հունվար-դեկտեմբերին մայրաքաղաքում արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 76087,3 մլն դրամի արտադրանք: Այդ նույն ժամանակաշրջանում իրացվել է 76008, 1 մլն դրամի պատրաստի արտադրանք[385]:

1998 թ. հունվար դեկտեմբերի մայրաքաղաքի ջէկի կողմից արտադրվել է 638,2 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 84, 1 %-ը: Ջերմային էներգիայի արտադրությունը նվազել էր նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի (86,3%) համեմատությամբ[386]:

1998 թ. զարգացման և վերակառուցման Եվրոպական բանկի կողմից տրամադրված վարկի հաշվին գործարկվել է «Զվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիրը՝ 12,0 հազ. քմ արտադրական մակերեսով, որից պահեստային տարածքը 10 հազար քմ է, պետական բյուջեի միջոցների հաշվին «Զորավար Անդրանիկ» կայարանի ստորերկրյա ջրերի իջեցման համակարգի երկրորդ հերթը՝ 1,4 կմ երկարությամբ, Արզական գյուղից մինչև Գետամեջ-2 պոմպակայան՝ 17, 52 կմ երկարությամբ ջրատար 2 պոմպակայաններով[387]:

1998 թ. մայրաքաղաքում սեփականաշնորհվել է 193,9 հազ. քմ ընդհանուր մակերեսով 3302 բնակարան, այդ թվում՝ 1087 մեկսենյականոց, 1364 երկուսենյականոց, 851 երեքսենյականոց և այլն[388]:

---

[384] Տե՛ս Է. Մինասյան, Մայրաքաղաք Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը անկախության տարիներին// «Պատմության և մշակույթ», հայագիտական հանդես, 2019, N1, էջ 82:
[385] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 1, գ. 379, թ. 3:
[386] Տե՛ս նույն տեղում, թ. 4:
[387] Տե՛ս նույն տեղում, թ. 9:
[388] Տե՛ս նույն տեղում, թ.10:

ՀՀ վարչապետի 1998 թ. հունիսի 17-ի Ն. 343 որոշմամբ Երևանի համար 18 մասնագիտական տեխնիկական ուսումնարանը ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությունից հանձնվեց Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը[389]:

ՀՀ վարչապետի 1998 թ. հունվարի 19-ի Ն. 32 որոշմամբ ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության օժանդակ տնտեսության գույքը (Երևան, Իսակովի պող. 23) հանձնվեց Երևանի քաղաքապետարանի տնօրինությանը[390]:

1998 թ. հունիսի 5-ին Երևանում բացվեց «Սիմենս» ընկերության հայաստանյան ներկայացուցչությունը: 1998 թ. մարտի 7-ին ստորագրվեցին Ռուս-հայկական առևտրի տան հիմնադրման փաստաթղթերը, իսկ հուլիսի 1-ին Ռուսատանի կրթության և ՀՀ ԿԳՆ ստորագրեցին համատեղ հրաման՝ Երևանում Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան հիմնելու մասին:

1998 թ. օգոստոսին ստորագրվեցին «Արմենիա» և «Անի» հյուրանոցների սեփականաշնորհման փաստաթղթերը:

1998 թ. մարտին կայացավ Երևանի մասին փաստավավերագրական ֆիլմի պրեմիերան (սցենարի հեղինակ՝ Հ. Հովեյան, ռեժիսոր՝ Ռ. Երկանյան, օպերատոր՝ Ա. Մովսիսյան): Ապրիլին լույս տեսավ «Հայացք Երևանից» ամսագրի առաջին համարը (խմբագիր՝ Վ. Այդինյան): Մայրաքաղաքային մշակութային կյանքի կարևորագույն իրադարձություններից էր նաև նոյեմբերի 10-11-ը Լևոն Մալխասյանի նախաձեռնությամբ անցկացված երևանյան 1-ին ջազ փառատոնը:

Նույն տարվա ապրիլի 16-ին Երևանում բացվեց «Սիլ պլազա» կենտրոնը:

1998 թ. հոկտեմբերի 23-ին Վահագն Հովնանյանը պայմանագիր կնքեց Երևանի քաղապետարանի հետ՝ մայրաքաղաքի մերձակայքում բնակելի ավան կառուցելու համար:

1998 թ. սեպտեմբերի 3-ին Կիրովի անվան թիվ 12 դպրոցը մեծ հանդիսավորությամբ վերանվանվեց Վիկտոր Համբարձումյանի անունով:

---

[389] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 1, գ. 338, թ. 4:
[390] Տե՛ս նույն տեղում, թ. 5:

1998 թ. շրջանառության մեջ դրվեցին 50 և 100-դրամանոց թղթադրամները, Աջափնյակ վարչական շրջանում բացվեց Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկներին նվիրված հուշարձանը, «Զվարթնոց» օդանավակայանում՝ Հայաստանի ավիացիայի պատմության թանգարանը, ստեղծվեց Ոսկրային պաթոլոգիայի հանրապետական կենտրոնը, և օծվեցին Մալաթիայի Սուրբ Աստվածածին և Եռաբլուրի Սուրբ Նահատակաց Վարդանանց եկեղեցիները:

ՀՀ կառավարության 1999 թ. հուլիսի 21-ի Ն. 475 որոշմամբ «Երևանի ոսկերչական գործարան» ՓԲԸ կազմից հանվեց ու առանձնացվեց Երևանի Մ. Խորենացու փողոցի Ն. 16 հուշարձան շենքը (նախկին Սպանդարյանի շրջխորհրդի), և այն հանձնվեց Երևանի քաղաքապետարանի տնօրինությանը[391]:

Երևանի ներքաղաքային երթուղիներն սպասարկող ավտոտրանսպորտային ընկերությունների շարժակազմի շահագործման և արտադրատեխնիկական բազայի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարության 1999 թ. դեկտեմբերի 2-ի Ն. 736 որոշմամբ երկամսյա ժամկետում Երևանի քաղաքապետարանի «Երևանի ուղևորատար ավտոտրանսպորտային Ն. 1», «Երևանի ուղևորատար ավտոտրանսպորտային Ն. 6» և «Երուղևորտրանս» Երևանի ուղևորափոխադրումների պետական փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլմամբ վերակազմակերպվեց «Ավտոբուսային Ն. 1» փակ բաժնետիրական ընկերությունը[392]:

1999 թ. հունվարի 13-ին եթեր մտավ «Արմենիա» հեռուստաընկերությունը: Նույն ամսվա ընթացքում որոշվեց միջազգային մրցույթներով սեփականաշնորհել 211 օբյեկտ, դրանց թվում՝ «Նաիրիտ», «Պոլիվինիլացետատ», «Լույս», «Մարս» և այլ ձեռնարկություններ:

1999 թ. ապրիլի 20-ին օղակաձև զբոսայգում տեղադրվեց «Ի հիշատակ հրեաների ցեղասպանության հուշակոթողի» հուշաքարը:

1999 թ. ապրիլի 23-ին թիվ 126 դպրոցը կոչվեց Հենրի Մորգենթաուի անունով, իսկ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հիշատակի

---

[391] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 1, գ. 338, թ. 5:
[392] Տե՛ս նույն տեղում, թ. 7:

պատի մեջ ամփոփվեց վերջինիս աճյունասափորը: Այդ տարվա մայրաքաղաքային տնտեսական կյանքի կարևորագույն իրադարձություններից էր մայիսի 5-ին Մարզահամերգային համալիրում բացված բուլղարական արտադրանքի ցուցահանդեսը՝ «Էքսպո Բուլղարիա–99»:

1999 թ. Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում բացվեց Ս. Փարաջանովի բրոնզաձույլ կիսանդրին (քանդ.՝ Ա.. Շիրազ), իսկ հունիսի 5-ին՝ Շենգավիթում ազատամարտիկ Արշակ Ղամբարյանի հուշաղբյուրը: Հուլիսի 31-ին Արամ Խաչատրյան համերգասրահի առջև բացվեց Արամ Խաչատրյանի արձանը (քանդ.՝ Յուրի Պետրոսյան, ճարտ.՝ Ռոմիկ Մարտիրոսյան, հովանավոր՝ մոսկվաբնակ Սենիկ Գևորգյան):

Մայրաքաղաքային կյանքի այդ տարվա կարևորագույն իրադարձություն դարձան օգոստոսի 28-սեպտեմբերի 5-ը տեղի ունեցած Համահայկական 1-ին խաղերը: Հանդիսավոր բացումը տեղի ունեցավ «Հրազդան» մարզադաշտում, իսկ կրակը բերվեց Գառնիից:

1999 թ. սեպտեմբերի 22-23-ը անցկացվեց Հայաստան-Սփյուռք 1-ին խորհրդաժողովը:

1999 թ. հոկտեմբերի 17-ին Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 2 փողոցը անվանակոչվեց Զեյթունի ազգային-ազատագրական շարժման հերոս Արամ Չոլագյանի անունով: Նոյեմբերի 21-ին բացվեց ազատամարտիկ Վահան Զատիկյանի կիսանդրին (քանդ.՝ Ռ. Սարգսյան, ճարտ.՝ Ա. Սմբատյան), իսկ Մալաթիա-Սեբաստիա համայնքում՝ Վահան Զատիկյանի անվան զբոսայգին: Թիվ 194 դպրոցը կոչվեց հերոս-ազատամարտիկ Արմեն Հովհաննիսյանի անունով, իսկ Նորք-Մարաշում բացվեց Արմենակ Արմենակյանի արձանը (քանդ.՝ Մ. Շահինյան):

Երևանի քաղաքապետ Ա. Բազեյանի՝ ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանին 2000 թ. հուլիսի 25-ին հասցեագրած գրությամբ առաջարկեց ՀՀ կառավարության հ. 350-րդ որոշման մեջ, հատկապես սոցիալական աջակցության խորհուրդների կազմում փոփոխություններ մտցնել: «ՀՀ աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կարգի մասին» ՀՀ կա-

ռավարության 03.07.2000 թ. հ. 350 որոշման 2-րդ կետով պահանջվում էր ստեղծել սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններին կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության խորհուրդներ[393]:

Որոշմամբ սահմանված էր խորհրդի կազմի ի պաշտոնե ձևավորման կառուցվածքը: Միաժամանակ նախատեսված էր խորհրդի կանոնադրության անհրաժեշտությունը, որի մշակման և հաստատման լիազորությունը տրվում էր ՀՀ սոցիալական ապահովության նախարարությանը: Որոշմամբ սոցիալական աջակցության խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկված չէր համայնքի ղեկավարը:

Երևան քաղաքում յուրաքանչյուր թաղային համայնքում գործում էր Երևանի քաղաքապետարանի ենթակա սոցիալական ծառայության տարածքային մեկ կենտրոն, ինչը և հնարավորությունն էր ստեղծում կենտրոնի և թաղային համայնքի ղեկավարի անմիջական համագործակցությամբ միասնական սոցիալական ծրագրերի իրականացման համար: Այս առումով նախընտրելի էր Երևանում ստեղծել սոցիալական աջակցության համայնքային ինքնուրույն, հասարակական հիմունքներով գործող խորհուրդներ, որոնց կազմում ի պաշտոնե կընդգրկվեին թաղային համայնքի ղեկավարը, սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի տնօրենը և գործադիր իշխանության համապատասխան տարածքային կառույցների ներկայացուցիչները, սոցիալական ապահովության համակարգի տարածքային կառույցների ղեկավարները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ըստ այդմ էլ՝ այդ խորհուրդը կիրականացներ համայնքի տարածքում սոցիալական աջակցության պետական և ոչ պետական բոլոր ծրագրերի համակարգումը, սոցիալական աջակցության հասցեականության մշտադիտարկումը, սոցիալական բազայի հաշվառումը և համագործակցությունը հասարակական ու բարեգործական կազմակերպությունների հետ:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ առաջարկվում էր ՀՀ կառավարության 03.07.2000 թ. հ. 350 որոշման 2-րդ կետում կատարել լրացում 2.ա) ենթակետով՝ հետևյալ շարադրությամբ[394].

---

[393] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, գ. 1, գ. 338, թ. 8, 9:
[394] Տե՛ս նույն տեղում, թ. 9, 10:

ա) Երևան քաղաքում, ըստ թաղային համայնքների, ստեղծել հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության համայնքային խորհուրդներ, որոնց կազմում ի պաշտոնե ընդգրկվում էին թաղային համայնքի ղեկավարը, սոցիալական ծառայության, կենսաթոշակային ապահովագրության տարածքային կենտրոնների տնօրենները, ըստ անհրաժեշտության՝ գործադիր իշխանության համապատասխան տարածքային կառույցների՝ համայնքի ավագանու, կրթական, առողջապահական հիմնարկների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նրա առաջարկը ընդունվեց համապատասխան փոփոխմամբ[395]:

ՀՀ կառավարությունը 2000 թ. նոյեմբերի 25-ի Ն. 774 որոշմամբ հավանություն տվեց Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրին:

2000 թ. հունիսի 8-ին Երևանի գլխավոր ճարտարապետի նախաձեռնությամբ քաղաքաշինության խորհրդին ներկայացվեց Հյուսիսային պողոտայի կառուցապատման քաղաքաշինական և կազմակերպչական նոր ռազմավարությունը, որի նպատակն էր, պայմանավորված հին, խարխուլ բնակելի ֆոնդի վատթար, հակասանիտարահիգենիկ պայմաններով, Երևանի բուն կենտրոնում արևելյան հետնախորշերով վերակառուցման անհրաժեշտությամբ, քաղաքական նոր պայմաններում համայն հայությանը նոր հազարամյակի շեմին համազգային կառույցի գաղափարի հիմքի վրա նորովի վերամիավորելու անհրաժեշտությամբ, ներդրումների խթանման և հազարավոր աշխատատեղերի ստեղծման պահանջով, Երևանին հաղորդել գեղագիտական և ճարտարապետական նոր փայլ և ավարտել թամանյանական Երևանի քաղաքաշինական հիմնակմախքի ձևավորումը[396]:

2000 թ. փետրվարի 18-ին Զորավար Անդրանիկի աճյունը տեղափոխվեց Երևան, իսկ 2 օր անց նրա աճյունը հողին հանձնվեց

[395] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, գ. 1, գ. 338, թ. 9:
[396] Տե՛ս նույն տեղում, թ. 9, 10:

Եռաբլուրում: Նույն թվականին Բոստոնից Երևան տեղափոխվեց նաև Դրաստամատ Կանայանի աճյունը[397]:

2000 թ. մայիսի 19-ին Երևանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը ստորագրեց «Երևանի մի շարք տեղանունների անվանակոչության մասին» որոշումը, ըստ որի՝ Արաբկիրի Ռաֆֆու փողոցը վերանվանվեց Այգեկցու փողոցի, իսկ Աջափնյակի թաղային համայնքի Գ–3 թաղամասը՝ Նազարբեկյանի թաղամաս՝ ի պատիվ Սարդարապատի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի ընդհանուր ղեկավար, Հայաստանի առաջին հանրապետության սպարապետ, գեներալ Թովմաս Նազարբեկյանի: Նույն որոշման համաձայն՝ Երևանի «Հրազդան» համալիրի թենիսի խաղադաշտին հարող հրապարակը անվանակոչվեց «Բրազիլիա» հրապարակ: Հոկտեմբերի 7-ին՝ հիմնովին վերակառուցումից հետո, վերաբացվեց Վ. Սարգսյանի անվան «Հանրապետական մարզադաշտը, իսկ արդեն նոյեմբերի 18-ին շահագործման հանձնվեց Դավիթաշենի կամուրջը:

2000 թ. նոյեմբերի 28-ին բացվեց Արզական-Երևան ջրատարը: Նույն թվականի մայրաքաղաքային կարևոր իրադարձություններից էր նաև Հ. Թումանյանի, Ղ. Փարպեցու և Ա. Սպենդիարյանի փողոցների միջև ընկած հրապարակի անվանակոչումը Մխիթար Սեբաստացու անունով, իսկ հետագայում տեղի ունեցան նաև Վազգեն Սարգսյանի և Բեյրութի փողոցների անվանակոչման հանդիսավոր արարողությունները:

Այսպիսով՝ մայրաքաղաքում իրականացված սոցիալ-տնտեսական միջոցառումները նպաստեցին այդ ոլորտի զարգացմանը, որը վերելք ապրեց XXI դարասկզբին և նշանավորվեց նոր աշխատանքներով:

բ. Սոցիալ-տնտեսական վիճակը XXI դարասկզբին

2001 թ. հունվարի 9-ին հիմնադրվեց Կարեն Դեմիրճյանի թանգարանը: 2000 թ. փետրվարի 24-ին սեփականաշնորհվեցին Մանկա-

[397] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 338, թ. 9, 10:

կան հանրապետական օրթոպեդիկ հիվանդանոցը և Միքայելյան վիրաբուժության ինստիտուտը: Արդեն ապրիլի 22-ին հանդիսավոր կերպով բացվեց Վահագնի թաղամասը[398]:

Նույն թվականի հունվարի 10-ին «Անի» հյուրանոցում կայացավ Հայաստանում զբոսաշրջության զարգացման խնդիրներին նվիրված համաժողով, որտեղ քննարկվեցին նաև մայրաքաղաք Երևանի զբոսաշրջության խնդիրներին նվիրված հարցեր[399]:

2001 թ. կարևորագույն մշակութային իրադարձություններից էր մայիսի 6-12-ը Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում անցկացված համաշխարհային երաժշտության երկրորդ փառատոնը:

2001թ. մայիսի 30-ին բացվեց «Արմպրոդէքսպո 2001» ցուցահանդեսը, իսկ հուլիսի 24-ին՝ նախկին «Տրանզիստոր» գործարանի տարածքում հայ-ամերիկյան «Վիյասվեր» տեխնոպարկը[400]:

Մայրաքաղաքի հոգևոր կյանքում կարևոր իրադարձություն էր սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու օծման արարողությունը: Տարին նշանավոր էր նաև կրոնական այլ իրադարձություններով, որոնցից ուշագրավ էր սեպտեմբերի 25-ին Հռոմի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Հովհաննես Պողոս Երկրորդի ժամանումը Երևան: Սա կաթոլիկ եկեղեցու առաջնորդի առաջին այցն էր Հայաստան:

Նույն թվականի սեպտեմբերի 26-ին Ծիծեռնակաբերդում՝ Լռության պատի վրա, դրվեց Հռոմի Բենեդիկտոս 15-րդ պապի հուշաքարը, նաև Հովհաննես Պողոս Երկրորդի անունով քար՝ «Հիշի՛ր, Տե՛ր, այս ազգի որդիների տառապանքը և օրհնի՛ր Հայաստանը» արձանագրությամբ: Պապի անունից տնկվեց նաև եղևնի:

2001 թ. նոյեմբերի 23-26-ին կայացավ «Արդյունաբերական Հայաստան-2001» առաջին ազգային ցուցահանդեսը:

2001 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ կառավարության և արգենտինահայ Է. Էռնեկյանին պատկանող «Կորպորացիոն Ամերիկա» ընկե-

---

[398] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 209:
[399] Տե՛ս նույն տեղում:
[400] Տե՛ս նույն տեղում:

ության միջև ստորագրվեց Երևանի «Զվարթնոց» օդանավակայանը ընկերության կառավարմանը հանձնելու մասին պայմանագիր:

2001 թ. բացվեցին հետևյալ հուշարձանները՝ «Զարթոնք» (Փ. Բուզանդի փող., քանդ.՝ Յու. Պետրոսյան), «Ալեքսանդր Թամանյան» (ճարտարապետության թանգարանի առջև, քանդ.՝ Ա. Հովսեփյան), խաչքար-կոթող՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին (Դավիթաշեն համայնք, քանդ.՝ Ռ. Հարությունյան), «Արծիվ» (կենդանաբանական այգի, քանդ.՝ Խ. Միրիջանյան), «Զրահարս» («Զրաշխարհ», քանդ.՝ Խ. Միրիջանյան), «Ավետիք Իսահակյան» (Ավան, քանդ.՝ Ա. Ավետիսյան), Մալաթիա-Սեբաստիա համայնքում՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ» (քանդ.՝ Ռ. Բալայան), «Լինում է, չի լինում» (քանդ.՝ Է. Պետրոսյան), «Գարուն» (քանդ.՝ Ռ. Բալայան), «Բարու և չարի պայքարը» (քանդ.՝ Գ. Նահապետյան), «Սասունցի Դավիթ» (քանդ.՝ Գ. Ղազարյան), «Տիրամայրը մանկան հետ» (քանդ.՝ Ս. Մեհրաբյան), «Սուտասանը» (քանդ.՝ Ա. Քոչարյան), «Կենաց ծառ» (քանդ.՝ Ս. Մարտիրոսյան), «Կռնատ աղջիկը» (քանդ.՝ Գ. Գևորգյան), «Առյուծն ու կապիկը» (քանդ.՝ Ս. Մեհրաբյան), «Հազարան բլբուլը» (քանդ.՝ Բ. Սարգսյան), «Վիշապին հաղթողը» (քանդ.՝ Ս. Հովսեփյան), «Անհաղթ աքլորը» (քանդ.՝ Հ. Մատինյան), «Մկների ժողովը» (քանդ.՝ Ա. Բաղալյան), «Արծվածիններ» (քանդ.՝ Ռ. Սարգսյան)[401]: 2001 թ. «Մոսկվա» կինոթատրոնի հարակից հրապարակը կոչվեց Շառլ Ազնավուրի անունով:

2002 թ. հունվարին բացվեց «Արարատ» հյուրանոցը: Նույն թվականի փետրվարի 9-ին կնքվեց համաձայնագիր, որի համաձայն՝ «Նաիրիտ-1»-ի բաժնետոմսերի 98 %-ը փոխանցվեց բրիտանական «Ransat-PLC» ընկերությանը[402]:

2002 թ. փետրվարի 15-ին վերաբացվեց «Նաիրի» կինոթատրոնը: Նույն տարվա ապրիլին կազմակերպվեց ծառատունկ Ազգային ժողովի այգում, անցկացվեց համաքաղաքային շաբաթօրյակ և ծառատունկ, բացվեց Արգավանդի տրանսպորտային հանգույցը[403]:

---

[401] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 211:
[402] Տե՛ս նույն տեղում:
[403] Տե՛ս նույն տեղում, էջ 212:

Մայիսին Երևանի քաղաքապետարանը ընդունեց որոշում՝ տրամվայից հրաժարվելու մասին, իսկ 2004 թ. հունվարի 21-ին շահագործումից հանվեց վերջին տրամվայը[404]:

2002 թ. հունիսի 12-ին «Այաս» ակումբի շնորհիվ Հանրապետության հրապարակ բերվեց «Կիլիկիա» նավը, որը շուտով պետք է դուրս գար շուրջերկրյա նավարկության:

Հոկտեմբերին կայացավ տեղեկատվական տեխնոլոգիաների 2-րդ մասնագիտացված ցուցահանդեսը, իսկ նոյեմբերին անցկացվեց «Որակ-2002» մրցանակաբաշխությունը, և կազմակերպվեց «Աղքատության վիճակագրական մոնիթորինգը հետխորհրդային տարածքում» միջազգային գիտաժողովը[405]:

Միայն 2002-2003 թթ. «Լինսի» հիմնադրամի միջոցների հաշվին մայրաքաղաքում հիմնանորոգվել է 17 փողոց: Այդ աշխատանքներին մեծապես նպաստել է նաև ճապոնական դրամաշնորհների միջոցներով Երևանում 2003 թ. գործարկված Ասֆալտ-բետոնե գործարանը[406]:

Դեկտեմբերին Մաշտոցի պողոտայի և Խորենացի փողոցի անկյունում բացվեց արցախյան պատերազմի հերոս-ազատամարտիկ Լեոնիդ Ազգալդյանի հուշարձանը (քանդ.՝ Տ. Արզումանյան):

2002 թ. բացվեցին հետևյալ հուշարձանները՝ «Մեսրոպ Մաշտոց-Սահակ Պարթև» (ԵՊՀ-ի առջև, քանդ.՝ Ա. Սարգսյան), «Նոյ Նահապետ» (նախագահի նստավայր, քանդ.՝ Լևոն, Վահե, Հայկ Թոքմաջյաններ), «Տրդատ 1-ին» (նախագահի նստավայր, քանդ.՝ Լևոն, Վահե, Հայկ Թոքմաջյաններ), «Երազ» (Մալաթիա-Սեբաստիա համայնք, քանդ.՝ Հրանտ Հովսեփյան), «Կատու» («Կասկադ», քանդ.՝ Ֆ. Բոթերո), «Մոխիրներից հառնած մայրը» (Ծիծեռնակաբերդ, քանդ.՝ Ռ. Ավետիսյան), Հուշաքար՝ «Սիեր Սկրտչյան» (Կոմիտասի պող., քանդ.՝ Ֆ. Առաքելյան): Նույն տարում բացվեց նաև հայկական «Կենտրոն» հեռուստաընկերությունը[407]:

---

[404] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 7, գ. 664, թ. 22:
[405] Տե՛ս Երևանի տարեգրությունը, էջ 213:
[406] Տե՛ս Երևանի քաղաքապետարանի գործունեությունը 2003-2007 թթ., տե՛ս ՀԱԱ, Ե. 257, ց. 7, գ. 64, թ. 11:
[407] Տե՛ս նույն տեղում:

Ըստ պաշտոնական տվյալների՝ 1998-2007 թթ. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերել է զարգացման արագ աճի տեմպեր, որն ուղեկցվել է հաստատուն ցածր սղաճով:

Կառավարության կողմից իրականացված կառուցվածքային բարեփոխումների և նպատակային տնտեսական քաղաքականության զուգորդման պայմաններում զգալի տնտեսական աճ է նկատվել 1998-2007 թթ. ընթացքում: Այդ տնտեսական աճը հանգեցրել է իրական աշխատավարձի ավելացմանը, զբաղվածության մակարդակի կայունացմանը և հնարավորություն է ընձեռնել համախմբված բյուջետային ծախսերում ավելացնելու սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը:

Կայուն տնտեսական աճի պայմաններում XXI դարասկզբին ավելացել են նաև պետական եկամուտների մուտքերը: Դրան նպաստել են հարկային վարչարարության բարելավումը, մասնավորապես ձեռնարկությունների գրանցման և գործունեության արտոնագրերի տրամադրման գործառույթների պարզեցման ուղղությամբ կատարված դրական քայլերը, ինչպես նաև սոցիալական քարտերի ներդրումը և այլն:

Մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր ոլորտներում էական առաջընթաց է արձանագրվել, և մայրաքաղաքը ներկայացել է որպես արդյունաբերական, տնտեսական, մշակութային կենտրոն, որի զարգացումը նպաստում էր նաև հանրապետության մյուս մարզերի բարգավաճմանը՝ հատկապես հանդիսանալով սպառողական խոշորագույն միավոր: Երևան քաղաքի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ ծավալներում 2001-2003 թթ. միջինը եղել է 44%[408], իսկ 2003-2006 թթ.՝ 45 %[409]:

Փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1998-2007 թթ. Երևան քաղաքի տնտեսական գործունեության բնագավառում առա-

---

[408] Երևան քաղաքը 1998-2001 թթ., տեղեկատվություն, 1998-2007 թթ. ընթացքում Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման մասին, տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 2:

[409] Երևանի քաղաքապետարանի գործունեությունը 2003-2007 թթ., տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 64, թ. 5:

վել արագ զարգացող ոլորտներն են եղել շինարարությունը, ծառայությունները, առևտուրը, արդյունաբերությունը[410] և այլն:

Երևանի արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալը 1998 թ. համեմատությամբ 2006 թ. աճել է 172.6 մլրդ դրամով, միջին տարեկան բացարձակ հավելաճը կազմել է 21.6 մլն դրամ[411]:

Երևանում արտադրվել է ամբողջ հանրապետության արդյունաբերական արտադրանքի 44,5%-ը: Արձանագրված աճի մեծ մասը ապահովվել է աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, իսկ մնացած մասը բաժին է ընկել աշխատողների թվաքանակի աճին:

Պաշտոնական տվյալներով մշակող արդյունաբերության ցուցանիշը 2006 թ. ամբողջ արդյունաբերության մեջ կազմել է 87% (248941.1 մլն դրամ): Միջին տարեկան բացարձակ հավելաճը կազմել է 29395.2 մլն դրամ, իսկ աճի միջին տարեկան տեմպը՝ 117.3%[412]: Մայրաքաղաքում էներգետիկական հզորությունների վերազինման և ավելացման արդյունքում աճել են նաև էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրության ու բաշխման ծավալները՝ 2006 թ. կազմելով 35059.7 մլն դրամ կամ Երևանի ամբողջ արդյունաբերության 12.2%-ը: Միջին տարեկան բացարձակ հավելաճը կազմել է 2012.7 մլն դրամ, իսկ աճի միջին տարեկան տեմպը՝ 106.7 %: 2006 թ. ամբողջ արդյունաբերության կառուցվածքում չնչին տոկոս է կազմել (0.8%) հանքագործական արդյունաբերությունը կամ 2285.2 մլն դրամ: Միջին տարեկան բացարձակ հավելաճը կազմել է 233.9 մլն դրամ, իսկ աճի միջին տարեկան տեմպը՝ 114.1 %[413]:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ արդյունաբերական հզորությունների վերազինման, շուկայական պայմանների թելադրանքով նոր ճյուղերի զարգացման, ենթակառուցվածքների արդիականացման և նորանոր ներդրումների ներգրավման շնորհիվ կարևոր

---

[410] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 3:
[411] Տե՛ս նույն տեղում:
[412] Տե՛ս նույն տեղում, թ. 4:
[413] Տե՛ս նույն տեղում:

հիմքեր էին ստեղծվել մայրաքաղաքի հետագա համաչափ ու դինամիկ զարգացման համար:

1998-2007 թթ. ընթացքում առավել բարձր աճի տեմպեր են նկատվել սպառողական ապրանքների արտադրության ցուցանիշի գծով՝ 279.5%: Սպառողական ապրանքների արտադրության աճի միջին տարեկան տեմպը կազմել է 113.7 %, իսկ բացարձակ հավելաճը՝ 82620.8 մլն դրամ: 2006 թ. այն կազմել է Հայաստանի Հանրապետության նույն ցուցանիշի կեսից ավելին՝ 55.7%[414]:

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունները ու զարգացման հիմնական ուղղությունները, հատկապես քաղաքի շինարարության և բարեկարգման առումով, գլխավորապես պայմանավորված էին Հայաստանի Հանրապետության զարգացման առաջնահերթություններով: Ըստ պաշտոնական տվյալների՝ իրականացված շինարարության ծավալը 2006 թ. աճել էր 137 անգամ 1998 թ. համեմատությամբ, իսկ շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը բացարձակ մեծությամբ աճել էր 171411,0 քմ-ով կամ 234.9 %-ային կետով[415]:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների դիտարկելիս՝ դրական պետք է համարել այն, որ այդ տարիների միտմանը համապատասխան՝ շարունակում էին աճել բնակչության միջոցներով իրականացվող շինարարության ծավալները և դրա կշիռն ամբողջ շինարարության մեջ: Շատ ավելի բնութագրական է 2004 թվականից օտարերկրյա ներդրումների հաշվին իրականացվող շինարարության ծավալների տեսակարար կշռի անկումը, ինչը նշանակում է, որ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկի համար արտաքին ֆինանսավորումը դադարում էր վճռորոշ լինելուց: Ակնհայտ էր դառնում, որ շինարարության ոլորտում կատարվող աշխատանքները առավել կազմակերպված բնույթ էին ձեռք բերել:

Պաշտոնական տվյալներով այդ տարիներին մասնավոր ներդրումների հաշվին ամբողջ հանրապետության մասշտաբով իրականացվել է շինարարության մոտ 80 %-ը[416], սակայն 2003-2007 թթ.

---

[414] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 5:
[415] Տե՛ս նույն տեղում:
[416] Տե՛ս նույն տեղում, թ. 6:

զգալիորեն ավելացել են նաև պետական միջոցների հաշվին կատարվող շինարարության ծավալները, ինչն առաջին հերթին պայմանավորված է եղել հենց Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի իրականացմամբ: Հատկանշական են մայրաքաղաքում իրականացված խոշոր ներդրումային շինարարական ծրագրերը, որոնք նպաստել են բնակֆոնդի թարմացմանը և ավելի բարեկարգ ու հարմարավետ քաղաքի ստեղծմանը: Այդ տարիների շինարարության և բարեկարգման ոլորտում թերևս կարևորագույն խնդիրներից էին 4-րդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքերի քանդումը և դրանց բնակիչների փոխհատուցումը նորակառույց բնակարաններով: 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների խնդիրը լուծելու առաջին քայլերը ձեռնարկվել էին 2000 թ.: Համաձայն կառավարության որոշման՝ նախատեսվում էր 4-րդ աստիճանի վթարային շենքերի օրինական վարձակալներին և այդտեղ բնակվող փախստականներին տալ կա՛մ դրամական փոխհատուցում, կա՛մ բնակարան: 2004 թ. Երևանում 4-րդ աստիճանի վթարային համարվեց 15 շենք, 2005 թվականից կառավարությունը փոխեց մոտեցումը. որոշվեց վերոհիշյալ շենքերի բնակիչների համար նոր բնակարաններ կառուցել: Պետական բյուջեով հաստատվեց 750 մլն դրամ՝ մեկ շենք կառուցելու համար, և տարեվերջին 4-րդ աստիճանի վթարային 2 շենքերի 43 ընտանիքներ նոր բնակարան ստացան Արզումանյան փողոցի նորակառույց շենքում[417]: 2006 թ. պետական բյուջեով նախատեսվել էր 1.569 մլրդ դրամ՝ արդեն 2 շենքի համար: Դրանք կառուցվեցին Լենինգրադյան փողոցին հարող տարածքում: Նոր շենքերում բնակարան ստացավ 100 ընտանիք: Բացի այդ՝ Նոր Նորքում վերակառուցվեց «Ալգորիթմ» վարժարանի շենքը (300 մլն դրամ), որտեղ բնակարան ստացավ ևս 36 ընտանիք: Իսկ 2007 թ. առաջին կիսամյակում իրականացվեցին 563.5 մլն դրամի բնակարանային շինարարական աշխատանքներ[418]:

2006 թ. և 2007 թ. I կիսամյակում կատարվել են 1140,4 մլն դրամի աշխատանքներ 3-րդ աստիճանի վնասվածության բազմաբնակա-

[417] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 7:
[418] Տե՛ս նույն տեղում, թ. 7:

րան վթարային շենքերի վերականգնման-ամրացման աշխատանքների առումով:

1998-2007 թթ. ընթացքում կրճատվեցին գերփոքր և փոքր առևտրի օբյեկտների քանակն ու առևտրաշրջանառության ծավալները: Մեծացվել է միջին և խոշոր առևտրի օբյեկտների քանակը: 2006 թ. խանութների միջոցով իրականացվող առևտրաշրջանառությունում մեծ տեսակարար կշիռ ձեռք բերվեց: Խոշոր (31 և ավելի աշխատող ունեցող) կազմակերպությունները՝ 52.4 %, իսկ 2006 թ. կրպակների առևտրի շրջանառությունը 2005 թ. համեմատությամբ նվազել է 14.6%-ով[419]:

Երևանում մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2006 կազմել է 706078.4 մլն դրամ 1998 թ. 25803.2 մլ դրամի դիմաց: Աճի միջին տարեկան տեմպը կազմել է 113.4%[420]:

1998-2006 թթ. Երևանի ՀՆԱ-ի մեջ զգալիորեն աճեց ծառայությունների տեսակարար կշիռը: Իրականացվող ծառայությունների մեջ Երևան քաղաքում տեսակարար կշիռը համապատասխան կազմում էր 87.5%[421]:

Հանրապետության բանկային համակարգը նույնպես ցուցաբերեց աճի տեմպեր: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են 21 բանկ (հիմնականում Երևանում) և 304 մասնաճյուղ:

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների միջին տարեկան աճի տեմպը 2007 թ. կազմել էր 20.1%:

Շատ կարևոր է հետևել Երևանում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի բարձրացման տեմպերին: Ըստ պաշտոնական տվյալների՝ 1998-2006 թթ. ընթացքում միջին ամսական անվանական աշխատավարձի իրական աճը գերազանցել է 21%-ի մակարդակը: Պետական հատվածի համեմատությամբ մասնավոր հատվածում միջին ամսական աշխատավարձը բավական

---

[419] Տե՛ս Է. Մինասյան, Մայրաքաղաք Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը անկախության տարիներին // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2019, N1, էջ 82:
[420] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 11:
[421] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

բարձր էր և շարունակում էր պահպանել իր առաջանցիկ աճը: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում բարձր է եղել նաև պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններում միջին աշխատավարձի աճը: Դեռևս ցածր էր վարձատրության մակարդակը սոցիալական ոլորտներում:

2006 թ. աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը Երևան քաղաքում կազմել է 69920.0 դրամ 1998 թվականի 15166.0 դրամի դիմաց: Չնայած այն մնում էր բավականին ցածր մակարդակի վրա, այնուհանդերձ 2006 թ. մայրաքաղաք Երևանում միջին ամսական աշխատավարձը 8,6 %-ով գերազանցում էր հանրապետության համապատասխան ցուցանիշին[422]:

Կենսաթոշակների միջին չափը 1998 թվականից մինչև 2008 թ. ավելացել էր մոտ 3.8 անգամ:

Զբաղվածության և գործազրկության մակարդակը, աշխատուժի կառուցվածքն ու գինը, լինելով աշխատաշուկայի հիմնական ցուցանիշները, տնտեսության զարգացման մակարդակը և միտումները բնութագրող կարևորագույն ցուցանիշներից են: Այդ տարիներին տնտեսական զարգացումները փոքր-ինչ մեղմեց աշխատաշուկային բնորոշ լարվածությունը: Այնուամենայնիվ, Երևանում աշխատաշուկային դեռ բնորոշ էր արտադրական ոլորտում ցածր զբաղվածության մակարդակը, մինչդեռ տնտեսության մասնավոր հատվածում այն ավելի բարձր էր: Մայրաքաղաք Երևանը դեռևս ուներ թաքնված գործազրկության բարձր մակարդակ և աշխատանքի վարձատրության խիստ արտահայտված անհամամասնություններ:

Երևանի աշխատանքի շուկան ուներ հետևյալ պատկերը. մայրաքաղաքում աշխատանքային ռեսուրսների միջին թվաքանակը 2006 թ. կազմել էր 677.8 հազ. մարդ, տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը՝ 324.1 հազ. մարդ, որոնցից 304.0 հազ. մարդ կամ տնտեսապես ակտիվ բնակչության 93.8%-ը զբաղված էր տնտեսության մեջ, իսկ 20.1 հազ. մարդ չուներ աշխատանք (կամ գործազրկության մակարդակը կազմել է 6.2%) և գրանցված էր ՀՀ աշխա-

[422] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 664, թ .12, 13:

տանքի և սոցիալական հարցերի նախարարության «Հայաստանի Հանրապետության զբաղվածության պետական ծառայության» գործակալության Երևանի տարածքային կենտրոններում ու ստացել էր գործազուրկի կարգավիճակ[423]:

2006 թ. Երևան քաղաքի տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը ՀՀ համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 27%, իսկ պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին թվաքանակը՝ ՀՀ-ի 22.6%-ը[424]:

1998-2007 թթ. Երևանի և ընդհանրապես հանրապետության տնտեսական որոշակի աճը նպաստել է աղքատության ցուցանիշի որոշակի նվազմանը: Տնտեսական աճը, աշխատաշուկայի որոշակի կայունացումը և աշխատավարձերի, կենսաթոշակների և սոցիալական այլ տրանսֆերտների բարձրացումը, ինչպես և արտասահմանում աշխատողներից ստացվող մասնավոր փոխանցումների աճը կրճատեցին եկամուտների ու սպառման բաշխվածության անհավասարությունը: Ըստ պաշտոնական տվյալների՝ աղքատ բնակչության թվաքանակը 2007 թ. տվյալ ժամանակաշրջանում 54.7 %-ից նվազել է մինչև 27.3 %-ի, իսկ ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ 21.0 %-ից մինչև 3.5 %-ի[425]: Անշուշտ, այս թվական տվյալների նկատմամբ չի կարելի տածել լիակատար վստահություն, քանի որ դրանք կարող են նաև չափազանցված լինել:

Մայրաքաղաքի խնդիրը կարգավորելու և ուղևորափոխադրումների սպասարկման որակը բարձացնելու նպատակով այդ տարիներին ձեռք են բերվել մոտ 250 նոր քաղաքային մոդիֆիկացիայի ավտոբուսներ: Միայն 2006 թ. և 2007 թ. I կիսամյակում ձեռք են բերվել համապատասխանաբար 77 և 40 նոր մոդիֆիկացիայի ավտոբուս և շուրջ 20 տրոլեյբուսներ, որոնց մեջ էին նաև 2005-2006 թթ. մայրաքաղաք ներկրված ֆրանսիական 11 տրոլեյբուսները[426]:

2007 թվականից Երևանի քաղաքապետարանի կողմից սկսվեցին մետրոպոլիտենի վերանորոգման ու բարեկարգման կապիտալ

---

[423] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 14:
[424] Տե՛ս նույն տեղում:
[425] Տե՛ս նույն տեղում:
[426] Տե՛ս ՀԱԱ, Ե. 257, ց. 7, գ. 64, թ. 17:

աշխատանքներ, որոնք եղան շարունակական և ուղղվեցին ստորգետնյա տրանսպորտի առավել ապահով շահագործմանը, ինչպես նաև զարգացմանն ու ընդարձակմանը:

Մայրաքաղաքի գազաֆիկացման բնագավառում գրանցվեցին որոշակի հաջողություններ, հայտնի է, որ Երևան քաղաքի գոյություն ունեցող գազամատակարարման համակարգը իր ամբողջ կարողությամբ գործել է մինչև 1990 թվականը: Սակայն գազաֆիկացված չեն եղել այն բնակելի թաղամասերի շենքը, որոնք ունեցել են կենտրոնացված տաք ջրամատակարարում (ՀԱԹ (Հարավարևմտյան թաղամաս), Ավան, Ավան-Առինջ, Դավթաշեն և Էրեբունի բնակելի զանգվածներում): 1992 թվականից հետո ամբողջովին դադարեցվեց հանրապետության, այդ թվում՝ մայրաքաղաքի գազամատակարումը: Այս ոլորտում աստիճանաբար արդյունավետ աշխատանքներ իրականացվեցին: 2003 թ. համեմատությամբ 2007 թ. 5 անգամ աճել էր բաժանորդների թիվը: 1998-2006 թթ. գրանցվեցին հետևյալ արդյունքները. գազի բաշխիչ միագիծ երկարությունը 210,7 կմ-ից աճել էր մինչև 937,3 կմ-ի. իսկ վերագազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը բացարձակ արտահայտությամբ աճել էր 104353-ով՝ 5545 միավորից հասնելով 109898 միավորի, փաստորեն՝ այն աճել է այդ ժամանակամիջոցում մոտ 20 անգամ[427]:

2007 թ. գազամատակարարման ոլորտում կապիտալ ներդրումները կազմել են շուրջ 550 մլն դրամ, ինչի արդյունքում հաջողվել էր մայրաքաղաքի բոլոր թաղամասերը գազաֆիկացնել[428]:

Ջրամատակարարման բնագավառում Երևանի ջրատարի միագիծ երկարությունը 746.3 կմ-ից հասավ 803.8 կմ-ի, իսկ փողոցային ցանցի 215,9 կմ-ը ամբողջովին նորացվեց[429]:

Մայրաքաղաքի բուժսպասարկման ոլորտը մինչև 2002 թվականը բնութագրվում էր հետևյալ ցուցանիշներով. Երևանի հիվանդանոցների մահճակալների քանակը 1995-2002 թթ. կրճատվել էր 35.8%-ով: Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների հաճախում-

---

[427] Տե՛ս ՀԱԱ, Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 16:
[428] Տե՛ս ՀԱԱ, Ե. 257, ց. 7, գ. 670, թ. 8, 9:
[429] Տե՛ս նույն տեղում, թ. 9, 10:

ների քանակը 1 բնակչի հաշվով նվազել էր 68.7 %-ով: 2000-2003 թթ. ընթացքում 7 մանկական պոլիկլինիկաներ միացվեցին մեծահասակների պոլիկլինիկաներին, իսկ 15 ընկերություն մասնավորեցվեց: Հիվանդանոցների մահճակալային հզորության 58,2 %-ը հանրապետական նշանակության էին, իսկ 41.8 %-ը՝ քաղաքային: Սակայն հաջորդող տարիներին համակարգի օպտիմալացման և վերազինման արդյունքում հաջողվեց բարելավել իրավիճակը և հիմքեր ստեղծել հետագա առավել հարմարավետ, ժամանակին և որակյալ առողջապահական ծառայությունների տրամադրման համար[430]:

Հարկ է նշել, որ 2007 թ. Երևան քաղաքի առողջապահական կազմակերպություններում աշխատում էին 8366 բժիշկ և 8006 բուժքույր, որից Երևանի քաղաքապետարանի ենթակա ընկերություններում՝ 2266 բժիշկ, 3125 բուժքույր: Նույն թվականին հիվանդանոցային բուժօգնություն է ստացել շուրջ 158 հազ. հիվանդ[431]:

Երևանում հիվանդանոց ընդունվածների համեմատական բարձր ցուցանիշներն արդյունք են նրա, որ այդտեղ հիվանդանոցների հագեցվածությունն ավելի արդիական է, բուժսպասարկման որակը՝ ավելի բարձր, անհրաժեշտ դեղամիջոցների ձեռքբերումը՝ ավելի հեշտ: Այդ իսկ պատճառով հիվանդների մի մասը, իսկ Երևանին մոտ գտնվող բնակավայրերի հիվանդ բնակիչների զգալի մասը գերադասում են բուժվել Երևանում:

2006 թվականից, կապված անվճար պոլիկլինիկական սպասարկման հետ, գրեթե կրկնակի աճել էր հաճախումների քանակը:

Երևանի քաղաքապետարանի կողմից սոցիալական ոլորտում, 2005 թվականից սկսած, իրականացվեցին մի շարք մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես համակարգվեց ու բարելավվեց աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ օգնության նշանակման ու վճարման գործընթացը:

Կրթության բարձր մակարդակը, դրա հասանելիության ապահովումը հասարակության բոլոր խավերին այսօր հանրապետության

---

[430] Երևանի քաղաքապետարանի գործունեությունը 2003-2007 թթ., տե՛ս ՀԱԱ, Ե. 257, ց. 7, գ. 64, թ. 22, 23:
[431] Տե՛ս նույն տեղում, թ. 23:

գերխնդիրներից են: Այս տեսանկյունից բացառություն չէ նաև մայրաքաղաք Երևանը, ուր հետևողական աշխատանքներ են տարվել ինչպես շենքային պայմանների բարելավման, այնպես և կրթական ծրագրերը արդի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Երևանում այդ տարիներին շարունակել են գործել բազմաթիվ մշակույթային օջախներ, թանգարաններ, պատկերասրահներ, անվանի ստեղծագործողների տուն-թանգարաններ, երաժշտական և պարային խմբեր: Ներգրավելով նաև բարեգործական միջոցներ՝ ամբողջովին նորոգվեցին մայրաքաղաքի մշակութային հիմնական ֆոնդի մեծ մասը թանգարանները, պատկերասրահները, Օպերայի շենքը: Միաժամանակ դա նպաստեց մշակութային միջոցառումների հաճախականության մեծացմանը, բովանդակության և ներկայացման ոճի հարստացմանը, բնակչության համար հանգստի կազմակերպմանը և հայրենական ու արտասահմանյան մշակութային արժեքներին ծանոթանալուն:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակույթային հաստատությունների թիվը տարեցտարի աճել է. 2006 թ. գործել են 34 մշակութային կազմակերպություններ, այդ թվում՝ 8 երաժշտական, 3 արվեստի, 1 ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցներ, 6 մարզադպրոցներ, Երևան քաղաքի պատմության, ժամանակակից արվեստի, Պատմահնագիտական և «Կարեն Դեմիրճյան» թանգարաններ, Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա, մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն, Երևանի կենդանաբանական այգի, «Առնո Բաբաջանյան» համերգասրահ, Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա, «Երևան փողային նվագախումբ», Պատանի հանդիսատեսի, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոններ և «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոն, պետական ոչ առևտրային կազմակերպություններ, «Հայարտ» և «Ձևավորում» ՊՓԲԸ-ներ[432]:

---

[432] Տեղեկատվություն 1998-2007 թթ. ընթացքում Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման մասին, տե՛ս Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 21, 22:

Ավանդական էր դարձել նաև համընդհանուր ընդունելություն գտած այնպիսի համաքաղաքային միջոցառումների անցկացումը, ինչպիսիք են՝ Ամանորին և Սուրբծննդյան տոնին նվիրված ավանդական միջոցառումներ, Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված միջոցառում Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված գեղանկարչական ցուցահանդես Ազատության հրապարակում, հանրակրթական դպրոցների շրջանավարտների «Վերջին զանգին» նվիրված միջոցառումներ, պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոն՝ նվիրված Արամ Խաչատրյանին, ՀՀ անկախությանը նվիրված միջոցառումներ, «Երևանի օր» տոնակատարություն[433]:

Մայրաքաղաքում գործել են շուրջ հինգ տասնյակ սպորտային կազմակերպություններ, որոնցում ընդգրկված մարզիկների թիվը հասնել է 17000-ի[434]:

Երևան քաղաքի մարզական կառույցների, մարզասրահների և դահլիճների շարունակական վերանորոգումը, կահավորումն ու արդի պահանջներին համապատասխանեցումը առաջնահերթություն էին, և ուստի պատահական չէ, որ հայրենական մարզիկները հասնում են թե՛ քանակական և թե՛ որակական բարձր արդյունքների միջազգային ու տարածաշրջանային սպորտային միջոցառումներում:

Այն, ինչ Երևանում կատարվեց XXI դարասկզբին, նախորդ շրջանի օրգանական շարունակությունը լինելով՝ միաժամանակ դարձավ սկիզբ: Դա քաղաքի կառավարման մեջ նոր, ժամանակակից գաղափարների համարձակ ներդրման, քաղաքային տնտեսության մեջ արմատական փոփոխությունների կատարման, ճարտարապետական-ճարտարագիտական լուծումներով իրենց նախադեպը չունեցող քաղաքաշինական ծրագրերի իրականացման շրջանի սկիզբն էր, մեծ շրջադարձի սկիզբը[435]:

Հաճախ են Երևանը համեմատել հսկայական շինհրապարակի հետ: Այնուամենայնիվ, 2000-ական թթ. Երևանը տեսնելով նախորդ

---

[433] Տե՛ս Ե. 257, ց. 7, գ. 664, թ. 22:
[434] Տե՛ս նույն տեղում:
[435] Տե՛ս Գ. Բաղդասարյան, Երևանի քաղաքապետեր, Երվանդ Զախարյան, Երևան, 2013, էջ 29:

տասնամյակներում քաղաքի կառուցապատման թեկուզև ամենաթեժ տարիների համապատկերում՝ չի կարելի չարձանագրել, որ այնպիսի հսկայածավալ շինարարություն, ինչպիսին այդ շրջանում ծավալվեց Երևանում, վաղուց չէր եղել: Շինարարական ծավալները 2009 թ. 1998 թ. համեմատությամբ ավելացան ավելի քան 15 անգամ, և դրա հիմնական մասը՝ 2001-2009 թթ.:

Երևան քաղաքում կառուցված բազմաբնակարան շենքերի մակերեսները 2010 թ. 2000 թ. համեմատ աճեցին շուրջ 20 անգամ, առանձին տարիներին ճանապարհային շինարարության աճի տեմպերը ավելացան 20-30 անգամ[436]:

Անշուշտ, այն գործը, որ Երևանում կատարվեց XXI դարասկզբին, պետք է դիտել երկրի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության համատեքստում: Այդ քաղաքականությունն ուներ իր առաջնահերթությունները, և դրանցից մեկը Երևանի՝ որպես անկախ Հայաստանի մայրաքաղաքի կառուցապատումն էր նոր արդիական չափանիշներով: Այն երկրի դեմքն էր ու այնպիսին էլ կմնա ոչ միայն իր տնտեսական, գիտական ու մշակութային ներուժով, այլև արտաքին տեսքով, այսպես ասած՝ իր մայրաքաղաքային ձևով ու բովանակությամբ ու գրավչությամբ[437]:

Փաստորեն՝ դեռևս խորհրդային տարիներին կազմված վերջին գլխավոր հատակագիծը շուրջ մեկ տասնամյակ չէր գործում և, ըստ էության, ուժը կորցրած կարելի էր համարել: Երևանը անկախ հանրապետության մայրաքաղաք էր, և այն չէր կարող համապատասխանել ստեղծված քաղաքական ու տնտեսական նոր իրողություններին և պահանջներին: Ուստի անհրաժեշտ էր նոր գլխավոր հատակագծի կառուցումը: Դրա մասին Երևանի քաղաքապետարանը որոշումներ էր ընդունել XX դարավերջին և XXI դարասկզբին, սակայն այն իրականություն դարձավ միայն քաղաքապետ Երվանդ Զախարյանի օրոք:

Մայրաքաղաքի նոր գլխավոր հատակագծի կազմումը քաղաքապետի համար միայն ներքին համոզմունք չէր, այլև կոնկրետ գոր-

---

[436] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 30:
[437] Տե՛ս նույն տեղում:

ծողության ելակետ, որը ենթակա չէր փոփոխման: Առավել ևս, որ նա ուներ համախոհների մի ստվար խումբ և ճարտարապետ-նախագծողների մի հիանալի կազմ, որը պատրաստ էր այդ գործին: Նշված գործը վիճակված էր իրագործել հեղինակային մի ստվար խմբի, որը ղեկավարելու էին հիանալի ճարտարապետ-նախագծողները՝ Գուրգեն Մուշեղյանի ղեկավարությամբ[438]:

Երևանը պետք է լինի ժանակակից քաղաք, բայց երբեք չկորցնի իր ազգային դիմագիծը. սա էր հատակագծի հետ կապված բոլոր քննարկումների ընդհանուր տրամաբանությունը: Մայրաքաղաքի նոր գլխավոր հատակագծի կազմման մեկնարկը տրվեց 2003 թ., և արդեն 2005 թ. հոկտեմբերի 3-ին ընդունվեց Երևանի խորհրդի թիվ 19 որոշումը՝ դրան հավանություն տալու և անհրաժեշտ եզրակացությամբ կառավարության հաստատմանը ներկայացնելու մասին[439]: Կառավարությունը հաստատեց այն, և նոր գլխավոր հատակագծի գործադրման սկիզբ սահմանվեց 2006 թ. հունվարի 1-ը: Երևանի նոր գլխավոր հատակագիծը, որը թվով 5-րդն էր 1924 թ. թամանյանական հատակագծից հետո, կոչված էր մայրաքաղաքի համակարգված զարգացումն ապահովելու մինչև 2020 թվականը, նախատեսված էր 1 միլիոն 200 հազար բնակչի համար՝ շուրջ 20 հազար հեկտար տարածքը թողնելով անփոփոխ[440]:

Նոր գլխավոր հատակագծի ընդունումից հետո քաղաքապետի հանձնարարությամբ և անմիջական հսկողությամբ գոտիավորման նախագծեր մշակվեցին Կենտրոն, Նորք-Մարաշ, Դավիթաշեն, Աջափնյակ, Արաբկիր, Շենգավիթ, վարչական շրջանների, քաղաքի այլ առանձին հատվածների համար, և այդ աշխատանքները շարունակվեցին հետագայում[441]:

2003 թ. Երևանում նշանավորվեց մի շարք կարևորագույն իրադարձություններով: Մասնավորապես ընդունվեց «Երևանի 2004-2007 թթ. զարգացման ծրագիրը»: Սկսեց լույս տեսնել «Երևան. 7 օր»

---

[438] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 39:
[439] Տե՛ս նույն տեղում, էջ 40:
[440] Տե՛ս նույն տեղում:
[441] Տե՛ս նույն տեղում, էջ 45-46:

պարբերականի առաջին համարը: Կարապի լճի հարևանությամբ տեղադրվեց կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի արձանը (հեղինակ՝ Դավիթ Բեջանյան), իսկ «Լինսի» հիմնադրամի «Մշակույթ» ծրագրի շրջանակներում վերանորոգվեցին Երևանի մշակութային մի շարք օջախներ:

Երևանի քաղաքապետարանի նոր շենքի շինարարությունը սկսվել էր 1991 թ., սակայն կիսավարտ էր մնացել 12 տարի՝ մինչև 2003 թվականը, երբ շինարարությունը վերսկսվեց: Բացառիկ կարճ ժամանակամիջոցում՝ մեկ տարվա ու երեք ամսվա ընթացքում, կատարվեցին հսկայածավալ աշխատանքներ, և ոչ միայն քաղաքապետարանն ունեցավ իրեն վայել շենք, այլև քաղաքը հարստացավ ևս մեկ ճարտարապետական արժեքով, որը հիացմունք էր պատճառում և՛ արտաքին, և՛ ներքին բովանդակությամբ, գերազանց որակով ու տեսքով[442]: Դա կապալառուի՝ «Միջազգային բիզնես կենտրոնի», «Երևան-նախագիծ» ինստիտուտի, շինարարությանն առնչվող մյուս կազմակերպությունների հետ քաղաքապետի համագործակցած աշխատանքի արդյունքն էր: Եվ պատահական չէր, որ 2007 թ. կառույցի հեղինակային խումբն արժանացավ պետական մրցանակի[443]:

Քաղաքապետարանի նոր շենքի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 2004 թ. նոյեմբերի 26-ին[444]:

Երևանի պատմության թանգարանը իր մշտական գրանցումը ստացավ քաղաքապետարանի նորակառույց շենքի առանձին մասնաբաժնում «Երևանը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» վերտառությունը կրող ցուցադրությամբ: Բացման հանդիսավոր արարողությանը տեղի ունեցավ 2007 թ. ապրիլի 3-ին[445]:

Քաղաքապետարանի շենքի և հարակից շինությունների կառուցմամբ տարածքում ձևավորվեց նոր հրապարակ, որը 2008 թ. հոկտեմբերի 21-ին՝ ՌԴ նախագահի Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, կոչվեց Ռուսաստանի անունով[446]: Տեղի ունեցավ հրա-

---

[442] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 50:
[443] Տե՛ս նույն տեղում, էջ 53:
[444] Տե՛ս նույն տեղում:
[445] Տե՛ս նույն տեղում:
[446] Տե՛ս նույն տեղում, էջ 55:

պարակի բացման հանդիսավոր արարողություն՝ Հայաստանի ու Ռուսաստանի նախագահներ Դմիտրի Մեդվեդևի և Սերժ Սարգսյանի մասնակցությամբ: Երևանի քաղաքապետը հրապարակեց քաղաքապետարանի որոշումը՝ հրապարակը Ռուսաստանի անունով անվանակոչության մասին: Նման որոշման ընդունումը հաշվի էր առնում «հայ-ռուսական բազմադարյա բարեկամությունը, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ռազմավարական և գործընկերային հարաբերությունները, ինչպես նաև երկու երկրների հետագա բեղմնավոր համագործակցության ձգտումը»[447]:

Հրապարակը երիզում է Մոսկվայի տունը, որի շինարարությունն սկսվեց քաղաքապետարանի շենքի կառուցումից անմիջապես հետո անհրապույր կացարանների տեղում և ավարտվեց ռեկորդային կարճ ժամկետում՝ մեկ տարուց մի փոքր ավելի ժամանակամիջոցում: Հիմքը դրել էին Ե. Զախարյանն ու Մոսկվայի այն ժամանակվա քաղաքապետ Յու. Լուժկովը, որոնք էլ արդեն 2007 թ. մարտի 24-ին մասնակցեցին Մոսկվայի տան բացման հանդիսավոր արարողությանը: Կառույցը նախատեսված էր դեռևս 2003 թ. Երևանի և Մոսկվայի միջև ստորագրված համագործակցության ծրագրով[448]:

Այս կարևորագույն իրադարձությունների կողքին 2004 թ. Երևանում տեղի ունեցան մշակութային, սպորտային, տնտեսական մի շարք կարևոր իրադարձություններ: «Երևանի օր» տոնակատարությունը տեղի ունեցավ հոկտեմբերի 13-ին: Նույն թվականին բացվեց նաև հայկական մամուլի հիմնադիր Հարություն Շմավոնյանի արձանը: Վերաբացվեցին Քանաքեռի վերակառուցված ռուսական եկեղեցին և ՀՀ բնության պետական թանգարանը: Գրիգոր Լուսավորչի և Բեյրութի փողոցների հատման մասից մինչև Հաղթանակի կամուրջ ձգվող հատվածը վերակոչվեց Էրեբունի բերդաքաղաքի հիմնադիր Արգիշտի Առաջին արքայի անվամբ՝ Արգիշտիի փողոց: Գ-3 և Գ-1 թաղամասերի համար կատարվեց ճանապարհային ցանցի մշակում: Ուլնեցու և Բաբայան փողոցներին հարող և «Կասկադ» համալիրի ձախակողմյան հատվածի բնակելի թաղամասերի համար մշակվե-

[447] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 55:
[448] Տե՛ս նույն տեղում, էջ 59:

ցին ճանապարհային և հաղորդակցական ցանցի նախագծեր: Ծարավ Աղբյուրի, Աճառյան և Բաբաջանյան փողոցներով պարփակված Բուսաբանական այգուն հարակից տարածքի համար կազմվեց էսքիզային նախագիծ, իսկ Բագրևանդի և Մոլդովական փողոցներով պարփակված միջանկյալ հատվածի համար մշակվեց գոտևորման սխեմա:

2004 թ. Երևան քաղաքում մշակվեց և ներդրվեց տեղեկատվական բազա, իրականացվեց Երևանի կառուցապատման փաստացի վիճակի տիեզերական լուսանկարում[449]:

2005 թ. ընթացքում մշակվեց Հրազդանի կիրճի բարեկարգման փուլային ծրագիր, որի առաջին փուլի արդյունքում ամբողջությամբ վերակառուցվել էին Կիևյան կամրջից մինչև Դավիթաշենի կամուրջ, երկրորդ փուլում՝ 2006 թ.՝ Դավիթաշենի կամրջից մինչև Վաղարշյան փողոց ընկած հատվածները: Հիմնանորոգվեց և բարեկարգվեց Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնը:

Աջափնյակ համայնքի չորրորդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար կառուցվեց և շահագործման հանձնվեց Արզումանյան 43 հասցեի տասնհարկանի շենքը՝ 43 բնակարանով:

2005 թ. իրականացվեց «Փոքր դաշտեր» ծրագիրը, որի շրջանակներում մայրաքաղաքի 9 համայնքում հիմնվեցին 2 տասնյակից ավելի փոքր բազմագործառութային ժամանակակից խաղադաշտեր:

2005 թ. «Արմենիա» հեռուստատեսությամբ ամեն շաբաթ սկսեց եթեր հեռարձակել քաղաքապետարանի աշխատանքային շաբաթն ամփոփող ու քաղաքային տնտեսության բոլոր ոլորտներին վերաբերող «Երևանյան ժամ» հաղորդաշարը:

Նույն տարվա մշակութային կարևորագույն իրադարձություններից էին Նիկոլայ Ռիժկովի կիսանդրու բացումը և Հրանտ Մաթևոսյանի արձանի տեղադրումը: Անդրանիկի թաղամասում տեղադրվեց Հովհաննես Շիրազի հուշարձանը, իսկ Քանաքեռ-Զեյթուն համայնքի Մինաս Ավետիսյանի անվան զբոսայգում՝ մեծանուն նկարչի կիսանդրին:

---

[449] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 107-108:

2005 թ. Նոր Նորքի 2-րդ զանգվածի թիվ 139 դպրոցը կոչվեց Կ. Դեմիրճյանի անունով, իսկ դպրոցի բակում տեղադրվեց նրա քարե արձանը: Այդ տարվա ընթացքում հիմնանորոգվեց նաև Կիևյան կամուրջը[450]:

Հաջորդ՝ 2006 թ. մայրաքաղաքում շարունակվեցին քաղաքաշինական ու մշակութային միջոցառումները: Հիմնովին վերակառուցվեց Իսակովի պողոտայի 10-կիլոմետրանոց ճանապարհահատվածը, որի վրա կառուցվեցին 8 հետիոտնային անցումներ: Լենինգրադյան փողոցում կառուցվեցին երկու նոր շենք՝ 100 բնակարանով: Հատուկ ծրագրով հաստատվեց կրպակների արդիականացման ծրագիրը: Քաղաքապետարանին ենթակա բոլոր բուժհաստատությունների համար մշակվեցին և քաղաքապետի կողմից հաստատվեցին զարգացման եռամյա ծրագրեր:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ մշակվեց կենդանաբանական այգու բարեկարգման քառամյա ծրագիր:

2006 թ. Երևանի քաղաքապետարանում և նրա բոլոր ստորաբաժանումներում ներդրվեցին «Մեկ պատուհան» աշխատակարգն ու էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ավտոմատացված համակարգը (ԷԼՓԱՍ):

Քաղաքամայր Երևանում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններից էր Սողոմոն Թեհլերյանի արձանի և Ֆրանսիայի հրապարակի, իսկ Դավիթաշեն համայնքում՝ Տիգրան Պետրոսյանի արձանի բացումը: Նույն տարում Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում բացվեց Զորավար Անդրանիկի թանգարանը[451]:

Առանցքային էր մայրաքաղաք Երևանի Հրազդանի կիրճի բարեկարգման փուլային ծրագիրը: Այն հնարավորություն տվեց նախկին արահետի տեղում կառուցելու 4.5 կմ երկարությամբ նոր, ասֆալտապատ ճանապարհ և տրանսպորտային հոսքեր ուղղելու այստեղ՝ զգալիորեն թեթևացնելով երթևեկությունը Կոմիտասի փողոցից դեպի Աջափնյակ, ապա՝ «Հաղթանակ» կամրջի մոտով՝ դեպի Էջմիածնի խճուղի[452]:

---

[450] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 108-109:
[451] Տե՛ս նույն տեղում, էջ 111:
[452] Տե՛ս նույն տեղում, էջ 60:

2008 թ. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը Երևանում հասավ 832 հեկտարի. տնկվեց ավելի քան 330 հազար ծառ և 170 հազար թուփ[453]: Ընդհանուր առմամբ 2003-2008 թթ. մայրաքաղաքում ստեղծվեց շուրջ 30 նոր զբոսայգի և պուրակ: Երևանում մեկ շնչին ընկնող հանրային նշանակության կանաչ տարածքը, որը 1990-ական թթ. սկզբին կազմում էր 4.9 քմ, 2008 թ. դարձավ 7.2 քմ[454]: 2008 թ. շահագործման հանձնվեց Երևանի քաղաքային տնկարանը ջերմային տնտեսությամբ: Դրա շնորհիվ հնարավոր եղավ մայրաքաղաքի կանաչապատումն իրականացնելու տեղում աճեցված հատուկ բուսատեսակներով: Փոքրիկ երևանցիների համար հիանալի նվեր եղավ «Փոքր դաշտեր» մեծ ծրագիրը, որը կյանքի կոչվեց 2005 թվականին[455]: Ծրագրի շրջանակներում մայրաքաղաքի 9 համայնքներում բացվեցին երկու տասնյակից ավելի խաղադաշտեր՝ ժամանակակից հարմարություններով և բազմագործառույթային նշանակությամբ: Հիշարժան էր նաև մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան դպրոցի հիմնումը 2004 թ. հոկտեմբերին[456]: Ըստ էության, որպես այդպիսին այն նորություն էր մայրաքաղաքի կյանքում:

Կարևոր նշանակություն ուներ արհեստական սահադաշտի ստեղծումը Կարապի լճի մի հատվածում: Սահադաշտի բացումը տեղի ունեցավ 2007 թ. դեկտեմբերի 14-ին: 2007-2008 թթ. մայրաքաղաքում շարունակվեցին իրականացվել մի շարք շինարարական աշխատանքներ: Շահագործման հանձնվեց Մոսկվայի տունը (ճարտարապետ՝ Լևոն Վարդանյան): Բացվեցին հասարակական-քաղաքական գործիչ Կարեն Դեմիրճյանի և մեծ հայասեր Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանները: Տեղադրվեցին Վահան Տերյանի և «Տղամարդիկ» ֆիլմի հերոսների արձանները: Շահագործման հանձնվեց Հյուսիսային պողոտայի առաջին 128 գծամետրանոց հատվածը՝ Թամանյան փողոցից մինչև Լալայանց փողոց: Խանջյան–Վարդա-

---

[453] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 60:
[454] Տե՛ս նույն տեղում:
[455] Տե՛ս նույն տեղում, էջ 61:
[456] Տե՛ս նույն տեղում:

նանց փողոցների խաչմերուկում կառուցվեցին հետիոտնային գետնուղի և ստորգետնյա տրանսպորտային անցում: Շահագործման հանձնվեց Նալբանդյան–Իսահակյան–Ալեք Մանուկյան փողոցների խաչմերուկի անցումի հետիոտնային հատվածը: Շահագործման հանձնվեցին Կասյան փողոցը Մարշալ Բաղրամյան պողոտային միացնող էստակադան և նույն պողոտայից դեպի Օրբելի եղբայրների փողոց տանող տրանսպորտային թունելը: Շահագործման հանձնվեց Միասնիկյան պողոտայի գետնուղին, ինչպես նաև Ազատության պողոտայի գետնանցումը «Հաղթանակ» զբոսայգու դիմաց: Մայրաքաղաքում առաջին անգամ իրականացվեցին ասֆալտբետոնե ծածկույթի ճաքալցումներ, և սկսվեցին մայրաքաղաքի բոլոր ջրային կառույցների հիմնանորոգման աշխատանքները:

Գործարկվեց Հանրապետության հրապարակի շատրվանային համալիրը՝ հագեցած ժամանակակից համակարգերով: Նոր Նորքի 7-րդ, 8-րդ, 9-րդ զանգվածների միջնամասում ստեղծվեց սքեյթբորդի հրապարակը:

Մալաթիա-Սեբաստիա և Դավիթաշեն համայնքներում շահագործման հանձնվեց 4 նոր շենք՝ 210 բնակարանով: Մայրաքաղաք ներկրվեց «Լիազ» մակնիշի 18 նոր տրոլեյբուս: Հաստատվեց եռամյա ծրագիր, որի համաձայն՝ մինչև 2011 թ. ջեռուցվելու էին մայրաքաղաքի դպրոցները և մանկապարտեզները:

2008 թ. քաղաքային կյանքի կարևորագույն բաղադրիչները դարձան մի շարք գործընթացներ: Եզնիկ Կողբացու, Աբովյան, Արամի և Բուզանդի փողոցներով պարփակված մոտ 2.2 հա մակերեսով տարածքում կառուցվեց «Հին Երևան» պատմամշակութային թաղամասը (ճարտարապետ՝ Լևոն Վարդանյան): Շահագործման հանձնվեցին Սարալանջի մայրուղին, որի բացմամբ ստեղծվեց քաղաքի ծանրաբեռնված կենտրոնը շրջանցելու հնարավորություն, նաև Խանջյան–Տիգրան Մեծ–Ագաթանգեղոս խաչմերուկի ճանապարհային ստորգետնյա հանգույցը և Աբովյան պուրակը Միասնիկյան պողոտային կապող տրանսպորտային թունելը:

Հիմնովին վերանորոգվեցին Միասնիկյան–Աճառյան փողոցների 2 ուղետարները և Երևան–Սևան ավտոմայրուղու էստակադան:

Արտաքին լուսավորության ցանցն ընդլայնվեց ավելի քան 500 կմ-ով: Լուսավոր փողոցների, այգիների ու հրապարակների թիվը հասավ 571-ի[457]:

2004-2008 թթ. Երևանի փողոցներում սկսվեցին հիմնանորոգման և վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, Ճապոնիայի կառավարության նվիրած ասֆալտբետոնի արտադրության գործարանի և սարքավորումների օգնությամբ կատարվել են տարեկան ավելի քան 420 հազար քմ ասֆալտապատման աշխատանքներ:

2005-2008 թթ. Երևանում անցկացվեց ընդհանուր առմամբ 135 կմ ոռոգման ջրագիծ: Բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքներ կատարվեցին Պանթեոնում, Ծորբուլախի, Արինբերդի, Կարմիր բլուրի և այլ գերեզմանատներում: Կատարվեց գերեզմանատների սահմանների ճշտում, կազմվեցին դրանց հատակագծերը: Կառուցվեցին Ծուշիի ազատագրման 15-ամյակի և Երևան-Սոչի չվերթի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողները:

2006-2008 թթ. մայրաքաղաքի փողոցներում տեղադրվեցին նոր կանգառասրահներ և կանգառանշաններ: Այդ շրջանում մայրաքաղաքում արդեն կար 213 նոր կանգառասրահ: Պետական բյուջեի միջոցներով վերանորոգվեցին արվեստի և երաժշտական մի շարք դպրոցներ:

2007-2008 թթ. Երևանի փողոցներում տեղադրվեցին ճանապարհային նշաններ, դիոդային նոր ու ժամանակակից լուսացույցներ, 1500 ճանապարհային նշաններ փոխարինվեցին նորերով: «Հաղթանակ» զբոսայգու դիմացի՝ Սարալանջի մայրուղուն հարող հատվածի հուշակոթողի հարևանությամբ գտնվող համալիրը վերակառուցվեց որպես հայ բռնադատված զոհերի հիշատակի հուշահամալիր: 2008 թ. դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ հուշահամալիրի հանդիսավոր բացումը, որին մասնակցում էին ՀՀ նախագահն ու Երևանի քաղաքապետը, բարձրաստիճան պաշտոնյաներ, նաև այն մարդիկ, որոնք անձնապես զգացել էին ստալինյան բռնապետության ռեժիմի դաժան հետևանքները:

---

[457] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 114:

2003-2009 թվականները Երևանի կյանքում նշանավորվեցին մի շարք խոշոր ներդրումային ծրագրերի իրականացմամբ, որոնց թվում իր կարևոր տեղն ունեցավ Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի վերաբացումը: 2005 թ. այն ձեռք բերեց «ԲԱՄՕ» ընկերությունների խումբը, որը պարտավորվեց համալիրում կատարել 4,5 մլրդ դրամի ներդրումներ՝ պահպանելով նրա անվանումն ու գործառութային նշանակությունը: Արժանին պետք է մատուցել «ԲԱՄՕ»-ի ղեկավար Մ. Մուրադյանին, որը հանդես բերեց ոչ միայն գործարարին բնորոշ, այլև խորապես հայրենասիրական հատկանիշներ՝ ձեռնամուխ լինելով ՄՀՀ-ի նման խոշոր շինության վերակառուցմանը[458]:

Անկախության շրջանում կյանքի կոչված ամենամեծ քաղաքաշինական ծրագիրը Հյուսիսային պողոտայի կառուցումն էր, մի ծավալուն և համարձակ նախաձեռնություն, որը յուրահատուկ ճակատագիր ունեցավ: Այն նախատեսել էր դեռևս մեծն Թամանյանը 1924 թ. հաստատված իր գլխավոր հատակագծով, սակայն անցան տասնամյակներ, և նրա հիանալի մտահղացումն այդպես էլ մնաց թղթի վրա մեկ հիմնական պատճառաբանությամբ. պողոտայի կառուցումը ծախսատար էր, կապված էր մեծածավալ ֆինանսական հնարավորությունների հետ:

Նորանկախ հանրապետությունը, որն առանց այդ էլ խրված էր տնտեսական ու սոցիալական բազմաթիվ խնդիրների մեջ, իր մեջ ուժ գտավ. վերջապես ձեռնամուխ եղավ այնքան երազելի պողոտայի կառուցմանը: Մայրուղու կառուցումը ձգձգվեց տասնամյակներ շարունակ և օրակարգի հարց դարձավ միայն 1999 թ.՝ հանրապետության նախագահի հետ Երևան քաղաքի նորանշանակ գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանի հանդիպման ժամանակ[459]:

2000 թ. կառավարությունն ընդունեց մի շարք կարևոր որոշումներ՝ կապված նախագահի հանձնարարականի իրականացման հետ: Գործում ներգրավվեցին Երևան քաղաքի նախկին գլխավոր ճարտարագետները՝ Ջիմ Թորոսյանը, Ռոմեո Ջուլհակյանը, Գուրգեն

---

[458] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 63:
[459] Տե՛ս նույն տեղում, էջ 68:

Սուշեղյանը, և բոլոր նրանք, ովքեր երբևէ գբաղվել էին պողոտայի կառուցման խնդրով և լավ գիտեին այն: Նախագծողների հեղինակային խումբը, որը ղեկավարում էր Ն. Սարգսյանը, աշխատում էին անընդմեջ[460]: Շինարարության առաջին երկու տարիներին աշխատանքներն ընթանում էին դանդաղ, 2004 թ. տեմպերն արագացան: Պողոտայի շինարարությունը տևեց շուրջ հինգ տարի և ավարտվեց սահմանված ժամկետում: Հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 2007 թ. նոյեմբերի 16-ին հանրապետության ղեկավարության, պետական և հասարակական կազմակերպությունների, հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Աննախադեպ էին կառուցապատման աշխատանքների ծավալները. կառուցված ընդհանուր մակերեսը 320 հազար քառակուսի մետր էր: Հանրապետության և Ազատության հրապարակներն անկյունագծով իրար միացնող ճեմուղին՝ շուրջ 500 մետր երկարությամբ, եզրագծվում է մոտ երկու տասնյակ շենքերով, որոնք կազմում են հնի և նորի գեղեցիկ համադրություն:

Հյուսիսային պողոտան ունեցավ այլ «գործառույթ» ևս: 27 մետր լայնությամբ կենտրոնական ճեմուղին դարձավ երևանցիների սիրված հանգստավայրերից մեկը, բացի այդ՝ պողոտայի կառուցմամբ Տերյան փողոցը դարձավ շարունակական և անընդմեջ երթևեկություն ապահովեց Գրիգոր Լուսավորչի փողոցից մինչև Աբովյանի պուրակ: Հյուսիսային պողոտան, կառուցվելով Երևանի նոր գլխավոր հատակագծին համապատասխան, դարձավ նրա իրականացման կարևորագույն քայլերից մեկը և առանցքային դեր ստանձնեց մայրաքաղաքի կենտրոնի գոտիավորման նախագծում[461]:

Սարալանջի ճանապարհի կառուցման շինարարությունը սկսվեց 2007 թ. գարնանը «Լինսի» հիմնադրամի միջոցներով: Աշխատանքներն ընթանում էին միանգամից 4 հատվածում: Հատկանշական է, որ քաղաքապետարանը հնարավորություն գտավ սեփական միջոցներով վերակառուցելու մայրուղու շարունակությունը հանդիսացող Ավետիսյան և Ռիգայի փողոցները: Այսպիսով՝ քա-

[460] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 69:
[461] Տե՛ս նույն տեղում:

ղաքն ունեցավ Հերացու փողոցից մինչև Արաբկիր ձգվող շուրջ 6 կմ երկարությամբ արագընթաց ճանապարհ, որի շինարարությունը տևեց երկու տարի: Սարալանջային ճանապարհի հետ միաժամանակ 2008 թ. սեպտեմբերի վերջին շահագործման հանձնվեց Աբովյան պուրակը Միասնիկյան պողոտային կապող տրանսպորտային թունելը, որի շինարարությունն ավարտվեց ընդամենը մի քանի ամսում[462]: Քաղաքաշինական խոշոր ձեռքբերում պետք է համարել 2008 թ. օգոստոսի 1-ին շահագործման հանձնված Տիգրան Մեծի պողոտա–Խանջյան–Ագաթանգեղոսի փողոցների խաչմերուկի տրանսպորտային հանգույցը, որի շինարարությունն սկսվել էր 2007 թ. հունիսին[463]: Այս հանգույցի շահագործմամբ մայրաքաղաքի կենտրոնական չորս ճանապարհներով՝ Տիգրան Մեծի, Արշակունյաց պողոտաներով, Խանջյան և Ագաթանգեղոսի փողոցներով, լուծվում էր տրանսպորտային հոսքերի անխոչընդոտ երթևեկության խնդիրը[464]:

Մայրաքաղաքի տարեգրության մեջ հիշարժան էր 2008 թ. դեկտեմբերի 3-ը, երբ շահագործման հանձնվեց համաքաղաքային նշանակության արագընթաց մայրուղու վերջին հանգույցը, որը Խանջյան, Թումանյան փողոցներից ձգվում էր մինչև Ալեք Մանուկյան փողոց, հասնում Կորյունի, Նալբանդյան, Չարենցի փողոցների խաչմերուկը և շարունակվում Հերացու փողոցով[465]:

Երևան քաղաքի տնտեսական զարգացման գործում մեծ է հատկապես արդյունաբերության դերը: Եթե XXI դարասկզբին Երևանի բաժինը արդյունաբերության մեջ կազմում էր հանրապետության միջին մակարդակի 59 %-ը, ապա 2009 թ.՝ արդեն 80 %-ը[466]: Ճիշտ է՝ 2010-2011 թթ. այդ ցուցանիշը շինարարության ծավալների կրճատման պատճառով բավականին նվազեց՝ կազմելով 65-70 %, սակայն

---

[462] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 83:
[463] Տե՛ս նույն տեղում, էջ 84:
[464] Տե՛ս նույն տեղում, էջ 85:
[465] Տե՛ս նույն տեղում:
[466] Տե՛ս Տ. Մարգարյան, Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, Ը.00.02, «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2013, էջ 9:

դարձյալ մնաց նկատելիորեն բարձր: Այս իրավիճակի հիմնական պատճառներն են մինչև տնտեսական վերջին ճգնաժամն ամենաարագ աճող ճյուղի՝ շինարարության ծավալների շարունակական կենտրոնացումը Երևանում (2007 թ. ք. Երևանի շինարարության բաժինը ՀՀ նույն ցուցանիշում կազմել է 87.2 %, 2011 թ.՝ 53.1 %, իսկ 2016 թ. ՝ 61,0 %[467]: Այն պարզորոշ երևում է վերոնշյալ աղյուսակում[468]:

Աղյուսակ 1

Երևանի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում 2005-2016 թթ. (տոկոսերով):

Ցուցանիշները	Տարիները						
	2005	**2007**	**2009**	**2010**	**2011**	**2015**	**2016**
Արդյունաբերություն	**47.2**	**48,5**	**49.0**	**45.3**	**42.4**	**41,2**	**40,9**
Գյուղատնտեսություն	**1,2**	**0,9**	**0,9**	**0,9**	**1,1**	**1,1**	**1,2**
Շինարարություն	**81.5**	**87,2**	**87.6**	**68.5**	**53.1**	**63,7**	**61,0**
Մանրածախ առևտուր	**86.3**	**84,8**	**84.5**	**81.7**	**83.8**	**76,4**	**74,0**
Ծառայություններ	**86.3**	**90,4**	**90.9**	**86.6**	**86.4**	**81,4**	**80,6**

Բերված աղյուսակի տվյալներից երևում է, որ Երևանը հանրապետության խոշորագույն արդյունաբերական կենտրոնն է: 2008-2009 թթ. Երևանին բաժին է ընկել հանրապետության արդյունաբերական արտադրանքի 49.0 %-ը, 2011 թ.՝ 42.4 %-ը, իսկ 2016 թ.՝ 40,9 %-ը[469]:

1998 թ. Երևանում արտադրված արդյունաբերական արտադրանքի բաժինը կազմել է ՀՀ-ում թողարկված արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 43,5 %-ը, 2000 թ.՝ 46,2 %-ը, 2001 թ.՝ 49,3 %-ը, 2005՝ 47,2 %-ը, 2006 թ.՝ 44.5 %-ը, 2008 թ.՝ 49,0 %-ը, 2011 թ.՝ 42.4 %-ը, 2012 թ. ՝ 40,2 %-ը, 2013 թ.՝ 40,9 %-ը, 2014 թ.՝ 42,1 %-ը, 2015 թ. ՝ 41,2 %-ը, 2016 թ.՝ 40,9 %-ը[470]:

---

[467] Տվյալները հաշվարկվել են Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, Երևան, 2006, էջ 192, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, Երևան, 2012, էջ 233: ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերվ 2011-2015, Երևան, 2016, էջ 238, ՀՀ մարզերը թվերով, 2003-2007, Երևան, 2008, էջ 197, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, էջ 206: Վիճակագրական ժողովածուների տեղեկատվության հիման վրա:

[468] Նույն տեղում:

[469] Տե՛ս նույն տեղում:

[470] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 1998-2001, Երևան, 2002, էջ 37: ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011-2015, Երևան, 2016, էջ 27: Հայաս-

Երևանի բաժնի նվազումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջին տարիներին, կապված Սյունիքի մարզում հանքարդյունաբերության ծավալների մեծացմամբ, ընդլանվել է այդ մարզի տեսակարար կշիռը ՀՀ արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում:

2011 թ. Երևան քաղաքում արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալը ճգնաժամային 2009 թ. համեմատությամբ ավելացել է գրեթե 40 %-ով, իսկ ՀՀ-ում՝ 49 %-ով: 2009 թ. Երևան քաղաքում արդյունաբերության արտադրանքի ծավալը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 8.3 %-ով, մանածագործական արտադրատեսակների արտադրության ծավալի նվազումն ամենամեծն է եղել և կազմել է գրեթե 60 %, իսկ ծխախոտի և հագուստի արտադրության ծավալներն ավելացել են[471]: Փաստացի 1997-2007 թթ. և 2005-2011 թթ. Երևան քաղաքում արդյունաբերական արտադրության աճի միջին տարեկան տեմպն ավելի բարձր է եղել, քան ՀՀ-ում: Ընդ որում՝ 2005-2011 թթ. աճի միջին տեմպը ՀՀ համանուն ցուցանիշին գերազանցում է գրեթե 1.5 անգամ, իսկ 1997-2007 թթ. ցուցանիշին՝ 1.2 անգամ[472]:

2011 թ. մեկ շնչին ընկնող արդյունաբերական արտադրանքի քանակով Երևանը գրավում էր 3-րդ տեղը՝ Սյունիքի (1122.4 հազ. դրամ) և Կոտայքի (373.7 հազ. դրամ) մարզերից հետո, և հանրապետության միջինը գերազանցում է գրեթե 24 %-ով[473]:

Երևանի արդյունաբերության հիմնական տեսակներն են մշակող արդյունաբերությունը, այդ թվում՝ սննդամթերքի (ներառյալ

տանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012-2016, Երևան, 2017, էջ 29:

[471] Տվյալները հաշվարկվել են Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, էջ 25-33: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010, էջ 26-37: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 26-37:

[472] Տե՛ս Տ. Մարգարյան, Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, ատենախոսություն, Ը.00.02, «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 2013, էջ 64:

[473] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008, էջ 270, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2012, էջ 286:

խմիչքները) արտադրությունը, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը, հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեությունը, քիմիական արդյունաբերությունը:

Եթե ՀՀ-ում 2015 թ. մշակվող արդյունաբերությունը կազմվել է ամբողջ արդյունաբերության 62,5 %-ը, ապա՝ մայրաքաղաքում 79,6 %-ը, ավելի բարձր, քան հանրապետությունում է: 2011 թ. Երևանում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը 2009 թ. համեմատ ավելացել է 76,2 %-ով, այն դեպքում, երբ հանրապետությունում այն աճել է 36,8 %[474]: 2015 թ. էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման արդյունքի ֆիզիկական ծավալի ցուցանիշը կազմել է 119,2 %[475]:

Քաղաք Երևանում մշակող արդյունաբերության բաժինը միշտ էլ բարձր է եղել՝ միջինը մոտ 84%, իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման բաժինը՝ մոտ 14 %:

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում մեծ է նաև կապիտալ շինարարության դերը: Բավական է նշել, որ 2011 թ. Երևան քաղաքին բաժին էր ընկնում ՀՀ հիմնական միջոցների գործարկման, մոնտաժային աշխատանքների և շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի գերակշիռ մասը: Այդ ցուցանիշները կազմում էին ՀՀ համանուն ցուցանիշների համապատասխանաբար 70.9 %, 54,7%, 85.4 %-ը[476]:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ 2005-2008 թթ. ընթացքում հիմնական միջոցների գործարկման ցուցանիշը և՛ ՀՀ-ում, և՛ Երևան քաղաքում ունեցել է աճման միտում:

2008 թ. հիմնական միջոցների գործարկման ծավալները և՛ ՀՀ-ում, և՛ Երևան քաղաքում 2005 թ. համեմատ աճել են ավելի քան 2.2 անգամ (ՀՀ-ում՝ 115 %-ով, Երևանում՝ 123 %-ով): Աճման միտումներ են գրանցվել շինարարության, այդ թվում՝ շինմոնտաժային աշ-

---

[474] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007, էջ 270, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2012, էջ 33-35, էջ 270:

[475] Տե՛ս ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 32:

[476] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2012, էջ 286:

խատանքների ծավալներում գրեթե նույն օրինաչափությամբ: 2009-2010 թթ. շինարարության հիմնական ցուցանիշների դրսևորել են կտրուկ նվազման միտում՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով, որը հատկապես բացասաբար անդրադարձավ շինարարության ոլորտի վրա: 2011 թ. Երևան քաղաքի շինարարության ոլորտի վիճակը փոքր-ինչ բարելավվել է, սակայն 2005 թ. մակարդակը դեռևս չի ապահովվել բացառությամբ բնակելի շենքերի գործարկման ցուցանիշի[477]: Երևան քաղաքում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը 2011 թ. կազմել է 487850 քառ. մ, որը ՀՀ-ում շահագործման հանձնված շենքերի ընդհանուր մակերեսի 85.4 %-ն է[478]:

Դիտարկվող ժամանակաշրջանում բնակչության միջոցների հաշվին շահագործված բնակելի շենքերի տարածքները կրճատվել են 2005 թ. 305000 քառ. մ՝ 2011 թ. հասնելով 59865 քառ. մ[479]: Այդ նույն ժամանակահատվածում կտրուկ աճել են կազմակերպությունների միջոցների հաշվին գործարկված բնակելի տարածքները՝ 2005 թ. 64342 քառ. մ՝ 2011 թ. հասնելով 145904 քառ. մ[480]: Կրճատվել են նաև պետական բյուջեի միջոցների հաշվին շահագործվող տարածքները: Սա մեկ անգամ ևս փաստում է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մասին, մասնավորապես բնակչության եկամուտների կտրուկ նվազման ուղղությամբ: Մայրաքաղաքում շահագործված բնակելի շենքերի տարածքների կառուցվածքում կտրուկ ավելացել է կազմակերպության միջոցների հաշվին շահագործված բնակելի տարածքների տեսակարար կշիռը, դրան հակառակ՝ կտրուկ նվազել է բնակչության միջոցների հաշվին շահագործված բնակելի տարածքների տեսակարար կշիռը:

2011 թ. Երևանում բնակելի տների թիվը կազմել է 54726 միավոր, որը 2006 թ. ցուցանիշը գերազանցել է 42.4 %-ով, այսինքն՝ 2006-2011

---

[477] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2012, էջ 286:
[478] Տե՛ս ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 44:
[479] Տե՛ս նույն տեղում:
[480] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 169-190: ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2002-2006, էջ 142-161:

թթ. ընթացքում տարեկան միջին հաշվով մայրաքաղաքում կառուցվել է 3261 բնակելի տուն: Բնակելի տների քանակը 2006 թ. Երևանում կազմում էր ՀՀ քաղաքային բնակավայրերի հաշվարկով նույն ցուցանիշի 31.2 %-ը, 2009 թ.՝ 33.6 %-ը, 2011թ.՝ 35.8 %-ը: Այդ միտումը հատկապես նկատելի էր 2014, 2015 և 2016 թվականներին[481]:

2006 թ. ՀՀ բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսի 27.3%-ը գտնվում էր Երևան քաղաքում, իսկ 2011 թ. այդ ցուցանիշը կազմում էր 25.3%-ը: Այդ նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2006-2011 թթ. ՀՀ-ում բնակարանային ֆոնդի ավելացման միջին տարեկան տեմպերն ավելի բարձր են եղել, քան Երևան քաղաքում (համապատասխանաբար 4.3 % և 2.5 %)[482]: 2012 թ.՝ 38, 5%-ը, 2013 թ.՝ 65,3%, 2014 թ.՝ 77,6%, 2015 թ.՝ 76,5%, իսկ 2016 թ.՝ 77,7%-ը[483]:

Երևանի սոցիալ-տնտեսական վիճակի բնութագիրը թերի կլիներ, եթե չանդրադառնայինք քաղաքաշինության բնագավառում իրականացվող ծրագրերին և դրանց իրականացման վիճակին:

Մայրաքաղաքի մի շարք փողոցներում 2004-2009 թթ. կատարվել են 720.0 մլն դրամի հենապատերի նորոգման և նոր հենապատերի կառուցման աշխատանքներ:

Քաղաքաշինության բնագավառում 2006-2011 թթ. մշակվել և ներդրվել են ոլորտի ներդրումային գրավչությանը և գործարար միջավայրի բարելավմանն ուղղված համալիր ծրագրեր՝ նպատակ ունենալով Երևան քաղաքի համաչափ տարածական զարգացման առաջնահերթության սկզբունքի արմատավորումը:

Մայրաքաղաքի երթևեկության խնդիրների բարելավման նպատակով 2010 թ. իտալական «Ռենկո Արմէստեյտ» ընկերության ներդրումներով Երևանի Ազատության հրապարակում շահագործման է հանձնվել ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղի (500 տեղ):

2010-2011 թթ. վերգետնյա հետիոտն անցումներ են կառուցվել Կենտրոն և Սալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում, Ազա-

---

[481] Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, էջ 55:
[482] Տե՛ս նույն տեղում:
[483] Տե՛ս Տ. Մարգարյան, նշվ. ատենախոսության սեղմագիր, էջ 14:

տության պողոտայում՝ Լ. Տոլստոյի անվան հ.128 դպրոցի մոտ, Դավիթ Անհաղթ փողոցում՝ Եվրոպական համալսարանի շենքի մոտ, և Շիրազի փողոցի հ.26 շենքի դիմաց:

2009-2011 թթ. Երևանում իրականացվել են նաև մի շարք այլ նախագծեր՝ բակային տարածքներում բնակչության հանգստի և ժամանցի կազմակերպման և բարեկարգման ծրագրի շրջանակներում բակերում տեղադրվել են խաղային սարքավորումներ (240 հատ լրակազմ հավաքածու), լուծվել են արտաքին լուսավորության խնդիրները, վարչական շրջանների առաջարկությամբ նշված հասցեներում «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից կատարված նախագծով տեղադրվել են թվով 11 փոքր ֆուտբոլի դաշտեր, կառուցվել են բացօթյա փոքրիկ շուկաներ, «Զվարթնոց» օդանավակայանի նոր տերմինալը, Իսակովի պողոտայում՝ հեծանվահրապարակը, Շառլ Ազնավուրի տուն-թանգարանը: Սկսվել է Կաթողիկե եկեղեցու համալիրի (Աբովյան փող. հ.15 հասցեում) շինարարությունը, Սիսակյան փողոցի հ. 22 շենքի շինարարությունը (վթարային շենքերից բնակիչների վերաբնակեցման նպատակով կառուցվող շենք)[484]:

Մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը բնութագրվում է նաև տրանսպորտի և կապի ոլորտի զարգացման վիճակով: Ավտոմոբիլային տրանսպորտը կազմում է Երևանի տրանսպորտի հիմնական տեսակը:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2006-2011 թթ. Երևանի տրանսպորտի տեսակարար կշիռը ՀՀ ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական ցուցանիշների մեջ աստիճանաբար նվազել է: Միևնույն ժամանակ, եթե 2011 թ. ՀՀ-ում 2006 թ. համեմատ գրեթե 15 %-ով ավելի շատ բեռներ են փոխադրվել, ապա Երևան քաղաքում աճը նշանակալի է՝ մոտ 44.5%: Նույն ժամանակահատվածում ուղևորաշրջանառության ծավալը ՀՀ-ում ավելացել է 0.8%-ով, իսկ Երևանում նվազել է գրեթե 3%-ով, ինչը կարող է անուղղակիորեն վկայել բնակչության եկամուտների մակարդակի անկման և ակտիվ բնակչության արտագաղթի մասին[485]:

---

[484] Տե՛ս Տ. Մարգարյան, նշվ. ատենախոսության սեղմագիր, էջ 14:

[485] Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, էջ 47-51, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 50-56:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Երևանում, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2006-2011 թթ. զգալիորեն աճել է: Ե՛վ ՀՀ-ում, և՛ Երևանում ավելացել է մանրածախ առևտրի օբյեկտների թիվը: 2011 թ. դրանց թիվը 2006 թ. համեմատ ՀՀ-ում ավելացել է 31 %-ով, իսկ Երևանում՝ 37 %-ով: Եթե 2014 թ. մայրաքաղաքում եղել են 9124 մանրածախ առևտրի օբյեկտներ, ապա 2016 թ. դրանք ավելացել են (9735)[486]:

2011 թ. միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը ՀՀ-ում կազմել է 264.8 հազ. դրամ, Երևանում՝ 663.7 հազ. դրամ, իսկ 2016 թ. ՀՀ-ում այն կազմել է 424,4 հազ. դրամ, իսկ մայրաքաղաք Երևանում՝ 951,5 հազ. դրամ: Մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը հանրապետության միջին նկատմամբ կազմել է 224,4%[487]:

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրվում է նաև կոմունալ ոլորտի զարգացման այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են գազաֆիկացումն ու ջրամատակարարումը, ջրահեռացումն ու ոռոգման ցանցի երկարությունը ՀՀ-ում և քաղաք Երևանում տարեցտարի ավելացել են գազաֆիկացված բնակարանների, բնակելի տների քանակն ու տեսակարար կշիռը: Ընդ որում, ինչպես զարգացման մյուս ցուցանիշների գծով, այնպես էլ գազաֆիկացման մակարդակի ցուցանիշով Երևան քաղաքում ավելի բարվոք վիճակ է: 2011 թ. դրությամբ գազաֆիկացված էր Երևանի ողջ բնակելի մակերեսի մոտ 89 %-ը, իսկ ՀՀ-ում՝ 72%-ը: Երևան քաղաքում 2011 թ. գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների տեսակարար կշիռը ՀՀ նույն ցուցանիշում կազմում է գրեթե 40 % այն դեպքում, երբ այդ ցուցանիշը 2006 թ. մոտ 31 % էր[488]:

2017 թ. գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Երևանում կազմում էր՝ 2013 թ.՝ 1608,19 կմ, իսկ 2017 թ.՝ 1750,87 կմ:

---

[486] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2017, էջ 269: Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, 2009-2011 թթ. տարեգրությունը:

[487] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2017, էջ 84:

[488] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, էջ 170: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 149:

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը համապատասխանաբար կազմել է 2013 թ.՝ 252767, իսկ 2017 թ.՝ 272001 միավոր[489]:

2011 թ. Երևան քաղաքին սպառողներին մատակարարվել է մատակարարված գազի՝ 1509.3 մլն մ^3-ի ավելի քան 31 %-ը, 2006 թ.՝ 27 %-ը:

XXI դարասկզբին բարելավվել են և՛ հանրապետության, և՛ Երևան քաղաքի ջրամատակարարման ոլորտին առնչվող ցուցանիշները: 2011 թ. ջրատարների միագիծ երկարությունը Երևան քաղաքում 2007 թ. համեմատությամբ ավելացել է գրեթե 12 կմ-ով, իսկ ողջ հանրապետությունում՝ 293 կմ-ով: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ վերջին տարիներին հանրապետությունում գյուղական բնակավայրերի ջրմուղ տնտեսության զարգացման և մասնավորապես ջրատարների կառուցման ուղղությամբ բավական աշխատանքներ են կատարվել: Մայրաքաղաքում ջրամատակարարման միջին տևողությունը 2011 թ. կազմել է 21-26 ժամ՝ օրվա տևողության 88.6%-ը (2009 թ.՝ 80.3%-ը)[490]: Եթե 2013 թ. սպառողներին տրված ջուրը կազմել է մայրաքաղաքում 59,3 մլն^3, ապա՝ 2016 թ. 66,2 մլն մ^3:[491]

Երկրում իրականացվող սոցիալական քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է բնակչության բարեկեցության և կենսամակարդակի բարձրացմամբ, որոնք ներառում են աղքատության մակարդակը, կյանքի պայմանների բարելավումը, սոցիալական պաշտպանվածությունը և այլն:

Բնակչության կենսամակարդակի փոփոխությունները մեծապես կախված են եկամուտների փոփոխություններից: Այս նկատառումով դիտարկենք Հայաստանում և Երևանում միջին ամսական անվանական աշխատավարձի փոփոխությունները:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2006-2011 թթ. անընդհատ ավելացել է. Երևանում՝ 71 %-ով, իսկ ՀՀ-ում՝ 73 %-ով:

---

[489] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2017, էջ 221:
[490] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 199: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, էջ 170:
[491] Տե՛ս նույն տեղում, էջ 230:

2011 թ. միջին անվանական ամսական աշխատավարձը Երևանում գրեթե 10 %-ով բարձր էր հանրապետության միջինից: Ե՛վ ՀՀ-ում, և՛ Երևանում աշխատավարձն ավելի բարձր էր տնտեսության ոչ պետական հատվածում: Մայրաքաղաքում ոչ պետական հատվածում միջին անվանական աշխատավարձը 2011 թ. ընդհանուր միջինից բարձր էր 7 %-ով, իսկ ՀՀ- ում՝ 16%-ով[492]: Այս միտումը որոշ փոփոխություններով շարունակվեց նաև հետագայում:

2009 թ. ՀՀ-ում միջին ամսական զուտ եկամուտները կազմել են 67326 դրամ, մայրաքաղաքում՝ 84713 դրամ, 2011 թ.՝ համապատասխանաբար 78408 դրամ և 92817 դրամ[493]:

ՀՀ-ում միջին ամսական իրական աշխատավարձը 2006 թ. կազմում էր գրեթե 59 հազար դրամ, 2011 թ.՝ 101 հազար դրամ, իսկ 2016 թ.՝ 184 հազար դրամ, իսկ Երևանում՝ համապատասխանաբար 67.5, 111 և 198[494] հազար դրամ: Այսինքն, եթե միջին ամսական անվանական աշխատավարձը 2011 թ. Երևանում ավելացել է 71%-ով 2006 թ. համեմատ, ապա միջին ամսական իրական աշխատավարձը՝ ընդամենը 64 %-ով:

Այժմ դիտարկենք բնակչության սոցիալական վիճակը բնութագրող մյուս ցուցանիշների փոփոխությունները: Բնականաբար, աղքատության մակարդակի փոփոխությունները բնակչության կենսամակարդակի փոփոխությունների բնութագրման ու գնահատման հիմնական ցուցանիշներից են:

2006-2011 թթ. և՛ ՀՀ-ում, և՛ քաղաք Երևանում տնային տնտեսության 1 շնչի հաշվով սպառողական ծախսերը գնալով ավելացել են: 2011 թ. ՀՀ-ում 2006 թ. համեմատ աճը կազմել է գրեթե 40 %, իսկ ճգնաժամային 2009 թ. նկատմամբ՝ 18 %, քաղաք Երևանում՝ համապատասխանաբար 45 % և 26 %[495]:

---

[492] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, ՀՀԱՎԾ 2011, էջ 81: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, ՀՀԱՎԾ 2012, էջ 90-91:

[493] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 80-93:

[494] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թ. հունվար-փետրվար, Երևան, 2016, էջ 84-85:

[495] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Երևան, 2012, ՀՀԱՎԾ, էջ 103-114:

2011 թ. Երևանում սննդամթերքի վրա կատարված միջին ամսական ծախսերը կազմել են 18835 դրամ, որը գրեթե 4000 դրամով ավելի է 2006 թ. մակարդակից և 8 %-ով գերազանցում է հանրապետության միջինը: Նույն թվականին տնային տնտեսության մեկ շնչի հաշվով սննդամթերքի վրա կատարված ծախսերը միջին ամսական սպառողական ծախսերում Երևանում կազմում են մոտ 45%, իսկ ՀՀ-ում՝ 53%[496]:

Տվյալները ցույց են տալիս, որ չնայած տնտեսական զարգացման գրանցված դրական միտումներին՝ աղքատության մակարդակը և՛ ՀՀ-ում, և՛ Երևանում 2006-2011 թթ. շարունակում է բարձրանալ, 2008-2010 թթ. Երևանում աղքատության մակարդակի ցուցանիշները ավել են գրեթե 1.3 անգամ, ՀՀ-ում՝ 35 %-ով:

Երևանում աղքատների սպառման մակարդակը 2008-2011 թթ. նվազել է ավելի բարձր տեմպերով, քան ընդհանուր սպառումը: 2011 թ. Երևանում շատ աղքատների մակարդակն ամենացածրն է՝ 14.5%, իսկ այլ քաղաքներում՝ 28.7%:

Մայրաքաղաքի սոցիալական ոլորտի ցուցանիշները վերլուծելիս չի կարելի անտեսել կենսաթոշակառուներին և նպաստառուներին վերաբերող տվյալները, քանզի այդ ցուցանիշները ևս սերտորեն առնչվում են բնակչության կենսամակարդակին ու բնութագրում դրա փոփոխությունները:

Երևանի տեսակարար կշիռը Հայաստանի կենսաթոշակառուների ընդհանուր թվում 2006 թ. կազմել է 33.8%, 2011 թ.՝ 34.6 %: 2011 թ. Երևանում 1000 բնակչի հաշվով կենսաթոշակառուների թիվը մոտ 3 %-ով նվազել է: 2005-2008 թթ. նպաստառու ընտանիքների թիվը Երևանում նվազել է: Այս միտումը շարունակվել է նաև 2009-2011 թթ.: Այսպես Երևանում նպաստառու ընտանիքների թիվը 2011 թ. 2009 թ. համեմատ նվազել է գրեթե 6000 միավորով, իսկ ՀՀ-ում՝ 27 հազ. միավորով:

Երևանում ՀՀ միջինի համեմատ բարձր է նաև կենսաթոշակի միջին չափը, որը 2011 թ. կազմում է 29290 դրամ, 2006 թ. մակարդակը գերազանցում է մոտ 2.1 անգամ, իսկ 2011 թ. ՀՀ նույն ցուցանիշը՝ 8.2 %:

---

[496] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Երևան, 2012, ՀՀԱՎԾ, էջ 103-114:

Երևան քաղաքում զգալի դրական տեղաշարժեր են կատարվել նաև առողջապահության ոլորտում: Երևան քաղաքի առողջապահական հաստատություններում աշխատում են 9285 բժիշկ, միջին բուժանձնակազմի թվաքանակը կազմել է 8772 մարդ: 2011 թ. Երևան քաղաքում առողջապահական ծառայություններ են մատուցվել 7486 հիվանդանոցային մահճակալներով, 137 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներով: 2011 թ. գրանցվել է 4770.7 հազ. այց: Երևան քաղաքի առողջապահական հաստատություններում աշխատում են հանրապետության բժիշկների 68.8 %-ը, միջին բուժանձնակազմի 46.6 %-ը: Հիվանդանոցային մահճակալների 61.2 %-ը, ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկներում հաճախումների 41.5 %-ը նույնպես բաժին է ընկնում Երևան քաղաքին:

Օրինաչափությունների բացահայտման տեսանկյունից կարևոր է նաև 10.000 բնակչի հաշվով առողջապահության ոլորտի ցուցանիշների շարժընթացների ուսումնասիրությունը: 10.000 բնակչի հաշվով առողջապահության ոլորտի բոլոր ցուցանիշների գծով Երևան քաղաքը շուրջ 1.5-2 անգամ գերազանցում է հանրապետական ցուցանիշները՝ բացառությամբ 10.000 բնակչի հաշվով ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակի ցուցանիշի: Այս ամենը պարզորոշ երևում է վերոնշյալ աղյուսակի տվյալներից:

Աղյուսակ 2

ՀՀ և Երևանի առողջապահության ոլորտի հիմնական ցուցանիշները[497]*:*

	2000	**2005**	**2006**	**2007**	**2008**	**2009**	**2010**	**2011**	**2015**
Բժիշկների թվաքանակը (մարդ) Երևան քաղաք	**17892**	**366**	**8457**	**8253**	**849**	**9039**	**9421**	**9285**	**9084**
Տեսակարար կշի-	**64,3**	**68.0**	**68.3**	**67.4**	**68.4**	**68.6**	**69.3**	**68.8**	**69,2**

[497] Աղյուսակը՝ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010, էջ 95-97: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 100-102: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2016, Երևան, 2016:

ոը ՀՀ բժիշկնե-րի ընդ-հանուր թվաքա-նակում, %									
Միջին բուժանձ-նակազմի թվաքա-նակը (մարդ)	**9146**	**8006**	**8192**	**8375**	**8438**	**8510**	**8662**	**8772**	**5877**
Տեսակա-րար կշի-ռը ՀՀ մի-ջին բու-ժանձնա-կազմի ը-նդհանուր թվաքա-նակում, %	**40,4**	**43.6**	**44.1**	**45.0**	**45.4**	**46.0**	**46.4**	**46.6**	**48,6**
Հիվան-դանո-ցային մահ-ճակալնե-րի քանա-կը (հատ)	**9762**	**7435**	**7393**	**7340**	**7352**	**7304**	**7370**	**7486**	**7880**
Տեսակա-րար կշի-ռը ՀՀ հի-վանդա-նոցային մահճա-կալների ընդհա-նուր թվա-քանա-կում %	**46,9**	**51.8**	**51.8**	**55.9**	**59.5**	**60.5**	**60.6**	**61.2**	**62,8**
Ամբուլա-տոր-պո-լիկլինի-կական հիմնարկ-ների քա-նակը (մի-ավոր)	**88**	**98**	**7**	**10**	**17**	**127**	**135**	**137**	**145**

Տեսակարար կշիռը ՀՀ ամբուլ.- պոլիկլ. հիմնարկների քանակը ընդհանուր թվաքանակում %	**17,4**	**21.4**	**21.1**	**23.6**	**24.7**	**26.1**	**26.8**	**27.1**	**28,9**
Հաճախումների քանակը ամբուլ.- պոլիկլ. հիմնարկներում (հազար)	**3018,4**	**3078.3**	**3277.2**	**3975.7**	**4400.8**	**4860.2**	**4687.7**	**4770.7**	**5179,0**
Տեսակարար կշիռը ՀՀ հաճախումների ընդհանուր թվաքանակում %	**38,6**	**40.1**	**38.5**	**41.8**	**42.3**	**43.3**	**41.4**	**41.5**	**43,1**

Դիտարկվող ժամանակաշրջանում 10 000 բնակչի հաշվով Երևան քաղաքի առողջապահության ոլորտը բնութագրող ցուցանիշները հիմնականում աճի միտումներ են դրսևորել: Երևան քաղաքի տնտեսական և սոցիալական զարգացման վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տնտեսական աճի միջին տեմպը Երևան քաղաքում զգալիորեն բարձր է եղել, քան ՀՀ-ում: Նշված զարգացումների անմիջական արդյունք է Երևանի և մարզերի միջև կենսամակարդակների աստիճանաբար աճող ճեղքվածքը: Ձևավորված տարածքային զարգացման միտումների հետագա շարունակության դեպքում խզումը Երևան քաղաքի և մարզերի միջև էլ ավելի կխորանա:

2017 թ. տվյալներով Երևանին բաժին էր ընկնում ՀՀ արդյունաբերության արտադրանքի, շինարարության, մանրածախ առևտրի և ծառայությունների ընդհանուր ծավալի զգալի մասը: Անկախության

տարիներին, հատկապես 1990-ական թթ. երկրորդ կեսին, Երևանի բաժինը արդյունաբերության մեջ նորից սկսեց ավելանալ և արդեն 1999 թ. կազմեց 46,7 %, իսկ 2001 թ.՝ 49,3 %, իսկ ավելի ուշ, կապված ՀՀ այլ մարզերում հանքագործական, սննդի, շինանյութերի և այլ ճյուղերի զարգացման հետ, Երևանի մասնաբաժինը սկսեց կրկին նվազել՝ 2014 թ. կազմելով 42,1 %, իսկ 2016 թ.՝ 41,2 %: Այդ նույն թվականին ՀՀ մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են շինարարության 61,0 %-ը, մանրածախ առևտրի 74,0 %-ը, գյուղատնտեսության 1,2%-ը և ծառայությունների 80,6 %-ը:

2014 թ. փետրվարի 20-ին բացվել է «Երևան մոլը» (ճարտարապետ «Արխանգել» ճարտարապետական ընկերություն): Բացվել է նաև «Սլավմեդ» բժշկական կենտրոնը: Նույն թվականի ապրիլի 30-ին «Կասկադ» համալիրի տարածքում նշվել է ջազի միջազգային օրը, իսկ հուլիսի 12-19-ը կայացել է «Ոսկե ծիրան 2014» 11-րդ միջազգային կինոփառատոնը: Դեռևս հունիսի 14-ին կայացել է Լենինգրադյան փողոցից մինչև Ծովակալ Իսակովի պողոտաձգվող քաղաքային ներ ավտոմայրուղու բացման հանդիսավոր արարողությունը: Հոկտեմբերի 11-12-ին կայացել է մայրաքաղաք Երևանի «Էրեբունի-Երևան 2796» տոնակատարությունը[498]:

Նոր Նորք վարչական շրջանի Ֆրիտյոֆ Նանսեի անվան զբոսայգում կայացել է Նանսենի թանգարանի և Սուրբ Աստվածածին եկեղեցի-հուշահամալիրի բացման հանդիսավոր արարողությունը: Նույն օրը տեղի է ունեցել մայրաքաղաքի գլխավոր պողոտայի Նալբանդյան-Հանրապետության փողոցների միջև ընկած այգու հանդիսավոր բացման արարողությունը:

Նոյեմբերի 27-ին բացվեց Երևանի կայարանի շուկան, իսկ դեկտեմբերին իր գործունեությունն է սկսել լիբանանյան «Սանիթեք» ընկերությունը, որ կազմակերպում էր մայրաքաղաքի աղբահանության գործը: Նույն ամսի 25-ին շահագործման է հանձնվել Արշակունյաց

[498] Տե՛ս Գ. Բաղդասարյան, Երևան, 2018, էջ 175:

պողոտայի Աշխատանքի հրապարակից մինչև Շիրակի փողոցն ընկած ճանապարհատվածը: Շահագործման է հանձնվել Վիլնյուսի Նոր Նորքի 8-րդ զանգվածը 9-րդին միացնող ճանապարհատվածը[499]:

2015 թ. հունվարի 29-ին բացվեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտը (ճարտարապետ Ա. Մեշչյան), ապրիլի 4-ին մայրաքաղաքում կայացավ ֆրանսիահայ նշանավոր կինոբեմադրիչ Անրի Վեռնոյի անունը կրող փողոցի հանդիսավոր արարողությունը: Հունիսի 1-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում վերաբացվել է «Հայաստան» կինոթատրոնը: Հուլիսի 12-19-ը կայացել է «Ոսկե ծիրան 2015» 12-րդ միջազգային փառատոնը, իսկ օգոստոսի 2-13-ը անցկացվեցին 6-րդ ամառային խաղերը[500]:

Նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ «Էրեբունի-Երևան 2797» տոնակատարությունը: Դեկտեմբերի 5-ին Վ. Սարգսյան 3 հասցեում բացվել է կառավարական-վարչական նորակառույց համալիրը[501]:

2016-2017 թթ. մայրաքաղաք Երևանում ակտիվորեն շարունակվեցին ճանապարհաշինարարական աշխատանքները, որոնք ընդգրկեցին մի շարք շրջանցիկ ճանապարհահատվածների, քաղաքային կարևորագույն այլ ճանապարհների կառուցում ու բարեկարգում:

2016 թ. շահագործման հանձնվեց Արշակունյաց պողոտա–Շիրակի փողոց–Արտաշատ 5կմ երկարությամբ և 24-28 մետր լայնությամբ ճանապարհահատվածը[502]: Նորակառույց ճանապարհահատվածը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ կազմում էր Երևան քաղաքի՝ 2014 թ. մեկնարկած շրջանցիկ ճանապարհի կառուցման համալիր ծրագրի մասը: Ճանապարհահատվածը նախագծվել և կառուցվել է միջազգային չափորոշիչներին համապատասխան, ճանապարհի երթևեկելի հատվածից դուրս են բերվել կո-

---

[499] Տե՛ս Գ. Բաղդասարյան, Երևան, 2018, էջ 175:
[500] Տե՛ս նույն տեղում, էջ 176:
[501] Տե՛ս նույն տեղում, էջ 179:
[502] Տե՛ս 2016 թ. Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետությունը, Երևան քաղաքապետարանի ընթացիկ արխիվ, թ. 4, 5:

մունալ ենթակառուցվածքները: Ճանապարհահատվածում կառուցված վերգետնյա հետիոտնային անցումը վերելակով համալրված առաջին անցումն է Երևանում: Այն բնակչության բոլոր խմբերին թույլ է տալու ազատորեն և անվտանգ տեղաշարժվել:

2016 թ. սկսվեցին շրջանցիկ ճանապարհի՝ Շիրակի փողոցից դեպի Արգավանդի հատված տանող ճանապարհի շինարարական աշխատանքները: Հրազդան գետի վրա նախատեսված է կառուցել 252 մ երկարությամբ կամուրջ, որը պետք է կրեր «Էրեբունի-Երևան 2800» անունը[503]:

«Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի» շրջանակներում 2017 թ. մեկնարկեց Արգավանդ–Շիրակ նոր ճանապարհահատվածի շինարարությունը: Մինչ աշխատանքների մեկնարկը տարածքում իրականացվեցին լայնածավալ պեղումներ՝ ստուգելու պատմամշակութային ժառանգություն համարվող Կարմիր բլուրի տարածքի հնագիտական շերտերը:

2013-2016 թթ. վերկառուցվեցին 12,1 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ և ընդհանուր 17,3 կմ երկարությամբ ճանապարհահատված, որոնց ճանապարհային հատվածների կանաչ մակերեսը կազմել է 6,83 հա տարածք[504]:

2016-2017 թթ. մայրաքաղաքում կառուցվեցին, բարեկարգվեցին, կահավորվեցին մի շարք բակային տարածքներ, ֆուտբոլի փոքր դաշտեր, տեղադրվեցին մանկական խաղեր ու մարզասարքեր[505]:

2018 թ. հունվարի 31-ին սկսվեց Բաբաջանյան–Աշտարակ խճուղաճանապարհատվածի կառուցման աշխատանքների մեկնարկը[506]: Մայիսի 12-ին մայրաքաղաքում նշվեց գինու տոնը: Գինու մասնագիտացված բարերներ տեղակայվեցին Սարյան փողոցում, որը ստացել էր «գինու փողոց» անվանումը[507]: Մայիսի 28-ին մեծ շուքով նշվեց Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակը:

---

[503] Տե՛ս 2016 թ. Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետությունը, Երևան քաղաքապետարանի ընթացիկ արխիվ, թ. 6, 7:
[504] Տե՛ս նույն տեղում, թ. 10:
[505] Տե՛ս նույն տեղում, թ. 12:
[506] Տե՛ս «Հայկական ժամանակ», 28 փետրվարի, 2018:
[507] Տե՛ս նույն տեղում:

Հունիսի 1-ին մեկնարկեց «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագիրը: Նույն օրը անցկացվեց «Երևան՝ երազանքների քաղաք» միջոցառումը, իսկ հունիսի 10-ին՝ «Համով Երևան» տոնածիսական ուտեստների չորրորդ փառատոնը:

Երևանի 2018 թ. զարգացման ծրագրում, որը հաստատել էր ավագանին, անդրադարձ էր արվում վերելակների խնդրին՝ նշելով, որ 2018 թ. նախատեսված է պետություն-համայնք մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մշակել վերելակային տնտեսության արդյունավետ կառավարման ծրագիր, որով նախատեսվում է վերելակային տնտեսական ամբողջական արդիականացում և միջազգային չափորոշիչներին համապատասխան անվտանգ սպասարկում: Նշվել է նաև, որ Երևանի բազմահարկ բազմաբնակարան շենքերի 4428 վերելակները սպասարկում և շահագործում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունները և համատիրությունները: Գրեթե ամեն տարի վերելակներում դժբախտ պատահարներ են լինում, երբեմն մահվան ելքով, որի պատճառը անսարքություններն են և մաշվածությունը: Վերելակային ֆոնդի խնդիրները վերհանելու և լուծելու հետ Ասիական զարգացման բանկը 2018 թ. Երևանի քաղաքապետարանին տրամադրեց 225 հազար դոլարի դրամաշնորհ[508]:

2018 թ. հուլիսի 8-ին «Ոսկե ծիրան» երևանյան 15-րդ միջազգային կինոփառատոնի մեկնարկն ազդարարվեց, որը նշանավորվեց ֆրանսիահայ ռեժիսոր, դերասան, պրոդյուսեր և սցենարիստ Ռոբերտ Գեղիկյանի «Առանձնատունը» ֆիլմի ցուցադրմամբ: Հուլիսի 14-ին Երևանի Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ կինոփառատոնի փակման հանդիսավոր արարողությունը: «Ոսկե ծիրան» պատվո մրցանակի արժանացավ աշխարհահռչակ օպերայի երգչուհի Հասմիկ Պապյանը: Խաղարկային ֆիլմերի միջազգային մրցույթում ոսկե ծիրանի արժանացավ Ռոման Բոնդարչուկի «Հրաբուխ» ֆիլմը, արծաթե ծիրանը տրվեց Ժերմինալ Ռոոյի «Ֆորտունա» կինոժապավենին: «Լավագույն ֆիլմ» անվանակար-

[508] Տե՛ս Գ. Բաղդասարյան, Երևան, 2018, էջ 186: «Հայաստանի Հանրապետություն», 31 հունվարի, 2019:

գում Հայաստանի ազգային կինոակադեմիայի «Անահիտ» մրցանակին արժանացավ ռեժիսոր Անահիտ Աբաղի «Եվա» ֆիլմը (Հայաստան-Իրան):

Փարաջանովյան մրցանակներ հանձնվեցին հանրաճանաչ ռեժիսոր-Ջանֆրանկո Ռոզիին ու Ասղար Ֆարհադիին: Մյուս անվանակարգում ևս մրցանակներ շնորհեցին արժանավորներին[509]:

2018 թ. հուլիսի 17-ին բացվել է Արամ Մանուկյանի հուշարձանը (քանդակագործ՝ Դ. Մինասյան):

2018 թ. սկզբին մայրաքաղաքում սկսվեցին, իսկ 2019 թ. շարունակվեցին Երևանի քաղաքապետարանի դիմացի այգու կառուցման աշխատանքները, որը նվիրված էր Երևանի 2800-ամյակին: Այգին կառուցվեց 1,5 տարվա ընթացքում «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից: Երևանի 2800-ամյակի այգու բացումը տեղի ունեցավ 2019 թ. մայիսի 10-ին: Այն հրաշալի նվեր է երևանցիներին, համարվում է Երևան համայնքի սեփականությունը, այգու տարածքում արգելվում է որևէ ձեռնարկատիրական գործունեություն: Բացի կառուցապատումից՝ հիմնադրամը, 2019 թվականից սկսած, 99 տարի իր միջոցներով հոգալու է նաև այգու խնամքի ու պահպանման ծախսերը: Այգում տնկվել են բացառիկ ծառատեսակի ծառեր, տեղադրվել է շուրջօրյա կաթիլային ու ցնցուղային ավտոմատ ոռոգման համակարգ: Այգու կենտրոնական հատվածում տեղադրվել է Երևանի քարտեզը, կառուցվել է Երևանի քարտեզի տեսքով փորագիր հրապարակ: Տեղադրվել են շատրվաններ, հին հայկական գորգերի զարդանախշերով սալահատակ, բրոնզաձույլ արձաններ, նստարաններ, աղբամաններ և լուսասյուներ[510]:

Դեռևս 2018 թ. ընթացքում մայրաքաղաքի Շենգավիթ վարչական շրջանում սկսվեցին «Գրանդ Հոլդինգ» ընկերության կողմից կազմակերպած բնակելիշենքիկառուցման աշխատանքները, որը իրականացվում էր ընկերության կողմի մեջ ընդգրկված ձեռնարկությունների աշխատակիցների բնակարանային խնդիրների լուծման համար: Բնակելի շենքի բացման արարողությունը տեղի ունեցավ

[509] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10 հուլիսի, 2018, 17 հուլիսի, 2018:
[510] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 մայիսի, 2019:

2019 թ. մարտի 18-ին: Շենքում առկա էին 104 բնակարան և 92 ավտոկայանատեղի: Շենքի շինարարության համար ծախսվել էր մոտ 7 մլն դոլար[511]:

2017 և 2018 թթ. «Սանիթեք» ընկերությունը աղբահանման գործում սկսել էր թերանալ, որը ավելի ցայտուն էր դարձել 2018 և 2019 թվականներին, մասնավորապես 2019 թ. օգոստոսի 29-ից սկսած՝ ամբողջությամբ դադարեցրել է աղբահանումը: Երևանի քաղաքապետը 2019 թ. հոկտեմբերի 3-ին միակողմանիորեն խզել է «Սանիթեք» ընկերության հետ ունեցած պայմանագրերը: Այդ գործով զբաղվեց քաղաքապետարանի աղբահանության համայնքային հիմնարկը[512]:

2018-2019 թթ. մայրաքաղաք Երևանն հակասական օրեր էր ապրում: Մի կողմից մեծաքանակ զբոսաշրջիկներ են այցելել մայրաքաղաք, զբոսաշրջային եռուն շրջան էր, օտարերկրյա հյուրերը ծանոթանում էին մեր ճարտարապետությանն ու թանգարաններին, խոհանոցին ու ավանդույթներին: Մյուս կողմից՝ երևանաբնակների համար դեռևս չլուծված են մնում մի շարք խնդիրներ՝ աղբահանություն, հասարակական տրանսպորտ, կանաչ տարածքների պակաս և այլն: 2019 թ. հուլիսի 17-ին մայրաքաղաքի խնդիրներին, անելիքներին, զարգացման ծրագրերին ծանոթանալու նպատակով Երևանի քաղաքապետարան այցելեց Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը: Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը նախագահին ներկայացրեց Երևանի սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված ընթացիկ ու առաջիկա ծրագրերը[513]:

2018 թ. վերջերից սկսվեցին մայրաքաղաք Երևանի հրապարակի տակ գտնվող հին Երևանի պատմական շերտի բացման և այն թանգարանային հատված վերածելու քննարկումները: Դեռևս մայրաքաղաքի հրապարակի վերանորոգման ժամանակ նրա տակ 2003 թ. հայտնաբերվել էր հին Երևանը, երբ ասֆալտի վերին շերտը հանվել էր, հայտնաբերվել էին քարքարոտ պատեր, կավե սափորներ, կավի ջրատար խողովակներ և այլն, բացված շինությունները

[511] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 մարտ, 2019:
[512] Տե՛ս «Հայկական ժամանակ», 4 հոկտեմբերի, 2019:
[513] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 հուլիսի, 2019:

թվագրվում էին XVII դարով: Սակայն նույն տարում ստորգետնյա այդ քաղաքը նորից ասֆալտապատվել է: 2018 թ. վերջերից սկսած և 2019 թ. ընթացքում ՀՀ գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունում, ապա կառավարությունում շարունակվեցին քննարկումները հին Երևանի պատմական շերտի հարցերը: ՀՀ ԳԱԱ հնագիտության ինստիտուտի մասնագետների հետ որոշվեց պեղումներ իրականացնել, մինչև 6-7 մետր խորանալուց հետո բացել շինարարությամբ լի տարածքները: Մասնագետները նկատել են, որ «պեղումների ենթակա հատվածում XIX դարի Երևանն է, այսինքն՝ բացելու են մինչ թումանյանական Երևանի նկուղային հարկերը, որոնք շատ լավ են պահպանվել և կարող են օգտագործվել նաև որպես տաղավարներ և փոքրիկ սրճարաններ: Այն մեծ հաճույք կարող է պատճառել զբոսաշրջիկներին և նպաստել մայրաքաղաքի զբոսաշրջության զարգացմանը»[514]: Ըստ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի՝ «պետք է բացել Աբովյան փողոցից մինչև հրապարակ մտնող տարածքը», շարունակելով իր միտքը՝ նա ընդգծեց, որ «եթե որոշում կայացվի և անհրաժեշտ գումարներ լիեն, ապա աշխատանքը այնքան էլ ժամանակատար չի լինի, հնարավոր է շատ արագ վերջացնել: Վերականգնման համար մեծ ծավալի աշխատանք չկա, ուղղակի բարդ տեղանքի հետ է կապված»[515]:

Այսպիսով՝ մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախության տարիներին մեծածավալ աշխատանքներ են կատարվել մայրաքաղաքային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, սակայն մինչ օրս դեռևս կան չլուծված հիմնախնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հասարակական տրանսպորտի, աղբահանության և սանմաքրման, բնակչության աղքատության հաղթահարման, կանաչ տարածքների պակասի և այլ խնդիրներ ու հարցեր, որոնք հրատապ լուծում են պահանջում:

---

[514] Տե՛ս «Հայկական ժամանակ», 10 հունվարի, 2020:
[515] Տե՛ս նույն տեղում:

Ժողովրդագրություն

XX դարի վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական վերափոխությունները զգալի ազդեցություն թողեցին Երևանի ժողովրդագրական իրավիճակի վրա. ոչ միայն նվազեց բնակչության թիվը, այլև առանձնակի փոփոփություններ կրեց բնակչության էթնիկական, լեզվական, կրոնական կազմը և այլն: Նման փոփոխությունների արդյունքում ներկայումս Երևանի ժողովրդագրական բնութագիրը որոշակի առանձնահատկություններ ունի խորհրդային ժամանակաշրջանի Երևանի համեմատությամբ:

1990-2000 թթ. Երևանի բնակչությունը նվազել է մոտ 200 հազարով, ինչը պայմանավորված է բնակչության ոչ թե բնական, այլ մեխանիկական շարժով, այսինքն՝ միգրացիայով: Խորհրդային Միության փլուզման նախօրյակին Երևանի բնակչության թիվը հատել է 1,3 միլիոնի սահմանը, սակայն 1990-ական թթ. սոցիալ-տնտեսական ծանր պայմանների արդյունքում գրանցվել է Երևանի բնակչության թվի կտրուկ անկում. մի քանի հարյուր հազար մարդ արտագաղթել է արտերկիր, որոնց տեղը լրացնելու են եկել ՀՀ մարզերից տեղափոխվածներն ու Ադրբեջանից եկած փախստականների մի մասը: 2000-ական թթ. արտագաղթի ծավալները կրճատվել են, և շարունակվել է ՀՀ մարզերից բնակչության ներհոսքը Երևան: Արդյունքում 1990-2011 թթ. ընդհանուր առմամբ շուրջ 500 հազար մարդ արտագաղթել է Երևանից, և Երևանում բնակություն է հաստատել շուրջ 300 հազար մարդ, որը չի ծնվել Երևանում:

1990-2001 թթ. Երևանի բնակչության թվի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է եղել բացառապես բնական աճով և որոշ չափով միգրացիոն գործընթացներով: 1990-2000 թթ. մայրաքաղաքում բնակչության թվաքանակի գրեթե կայուն մակարդակի պահպանումը տեղի է ունեցել բացառապես բնական աճի հաշվին, որի համար հիմնական գործոններ են հանդիսացել մայրաքաղաքի բնակչության ժողովրդագրական այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ծնելիությունը և մահացությունը: Եթե 1990 թ. ծնվածների թիվը

կազմել է 22, 328 մարդ, մահացածների թիվը՝ 8431, ապա բնական աճը կազմել է 13897[516]: 1995 թ. ծնվածների թիվը՝ 13616, մահացածների թիվը՝ 8847, բնական աճը կազմել է 4769, իսկ 2000 թ. ծնվածների թիվը՝ 10917, մահացածների թիվը՝ 8433, բնական աճը 2484 է[517]: Վիճակագրական սույն տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչության ծնելիության նվազմանը զուգընթաց աճել է բնակչության մահացությունը: Այսպես, եթե 1990 թ. բնակչության ծնելիության գործակիցը 1000 բնակչի հաշվով կազմել է 18,2, մահացությունը՝ 6,9, ապա՝ 1995 թ.՝ համապատասխանաբար 10,9 և 7,1, իսկ 2000 թ.՝ համապատասխանաբար 8,2 և 6,6[518]: Ծնելիության մակարդակի նվազման միտումը իր արտահայտությունն է գտել նաև կանանց ծնելիության տարիքային գործակիցներում: 2001-2017 թթ., բացի միգրացիայից, բնակչության թվաքանակը փոփոխվել է նաև բնական շարժով: Հենց այս պատճառով էլ Երևանի բնակչության թիվը վերջին տասնամյակում զերծ է մնացել կտրուկ փոփոխություններից:

Անհրաժեշտ է նշել, որ 2009-2011 թթ. Երևանում ծնելիության գործակիցը առավելագույնն է եղել ՀՀ-ում, մասնավորապես 2009 թ.՝ 1,38 %, 2010 թ.՝ 1,39%, 2011 թ. հունվար-սեպտեմբերին՝ 1,4%, իսկ ՀՀ միջինը 2011 թ. հունվար-սեպտեմբերին 1,31% էր[519]: 2017 թ. հունվար-դեկտեմբերին բնական հավելաճը կազմել է 5,1 %[520]: Նման ցուցանիշը, իհարկե, ամենևին էլ չի կարող ապահովել բնակչության ընդլայնված վերարտադրություն, սակայն այն կարելի է ընդհանուր առմամբ նորմալ համարվել միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաքային բնակավայրի համար: Միևնույն ժամանակ ցածր է եղել մահացության գործակիցը՝ 0,81%, 2011 հունվար-սեպտեմբերի դրությամբ: Ըստ էության, Երևանում բնակչության բնական շարժը դրա-

---

[516] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 415, թ. 6, 7:
[517] Տե՛ս նույն տեղում:
[518] Տե՛ս ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009, ԱՎԾ, Երևան, 2010, էջ 219: ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2006-2010 վիճ. ժողովածու, Երևան, 2011, էջ 232:
[519] Տե՛ս նույն տեղում:
[520] Տե՛ս ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012-2016 վիճ. ժողովածու, Երևան, 2017, էջ 264-265: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-դեկտեմբեր, Երևան, 2018, էջ 137:

կան է եղել՝ 0,59 %: Ներկայումս ծնելիության ցածր գործակցի պատճառներն էլ շարունակական բնույթ են կրում: 2001-2017 թթ., բացի միգրացիայից, բնակչության թվի փոփոխությունը պայմանավորված է եղել նաև բնական շարժով: Հենց այդ պատճառով էլ Երևանի բնակչության թիվը վերջին տասնամյակում զերծ է մնացել կտրուկ փոփոխություններից: Ներքոհիշյալ աղյուսակում ներկայացված է Երևանի բնակչության թվի փոփոխությունը 2001-2018 թթ.:

Աղյուսակ 3

Երևանի մշտական բնակչության թիվը 1996-2018 թթ.[521]

հունվարի 1-ի դրությամբ/հազ. մարդ

1996	1249.4	2001	1103.5	2006	1103.8
2007	1104.9	2008	1107.8	2009	111.3
2010	1116.6	2011	1121.9	2012	1061.0
2013	1066.3	2014	1068.3	2015	1071.5
2016	1073.7	2017	1076.4	2018	1075.8

Երևանում ծնելիության գործակցի ցածր լինելու հիմնական պատճառները հետևյալներն են[522].

1) Երևանում 1 075,8 մլն մարդ էր բնակվում 2018 թ. հունվարի 1-ի տվյալներով, իսկ խոշոր քաղաքային բնակավայրերում և հատկապես միլիոնանոց քաղաքներում սովորաբար ծնելիության մակարդակը ցածր է լինում կրթվածության բարձր մակարդակի, սոցիալական ինստիտուտների յուրահատկությունների, սոցիալ-հոգեբանական ուրույն գիտակցության և այլ պատճառներով: Երևանում զգալիորեն բարձր է կանանց կրթվածության մակարդակը, իսկ դրանով պայմանավորված էլ՝ նրանց հասարակական գիտակցությունն ու դերը: Հասարակության մեջ իր որոշակի դերը գիտակցող ու աշխատանքային զբաղվածությամբ տարված կանանց մեծ մասը մեկ երեխայից ավել չի ցանկանում ունենալ: Այս երևույթը բնորոշ է ոչ միայն Երևանին, այլև ողջ հանրապետությանը:

---

[521] Տե՛ս Է. Մինասյան, ժողովրդագրական իրավիճակը, տե՛ս Երևանի պատմությունը, 2018, էջ 295:

[522] Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1917 թ. հունվար, դեկտեմբեր, էջ 137:

2) ՀՀ-ում, մասնավորապես Երևանում հասարակական գիտակցության մեջ զգալի դեր ունի երեխայի բարեկեցության ապահովման խնդիրը: Ծնողներն իրենց երեխաների քանակը հիմնականում նախապես պլանավորում են՝ կապված նյութական բարեկեցության մակարդակի հետ: Եվ քանի որ Երևանի բնակչության մեծ մասն ունի նյութական որոշ դժվարություններ, ուստի շատ ընտանիքներ ստիպված են լինում հրաժարվել երկրորդ կամ երրորդ երեխան ունենալու մտքից[523]:

3) 1990-2000-ական թթ. ՀՀ-ում և հատկապես Երևանում ընթանում էր սոցիալական ինստիտուտների և հասարակական գիտակցության ակտիվ գործընթաց, ինչն ուղղակիորեն ազդեցություն էր թողնում ժողովրդագրական գործընթացների վրա: Այս պարագայում բազմազավակության որոշակի ավանդույթներ պահպանվում են նաև ազգային եկեղեցու կողմից ներկայացվող նախնյաց ավանդույթի ազդեցությամբ:

4) ՀՀ-ում ժողովրդագրական նոր քաղաքականության մշակման խիստ անհրաժեշտություն կա, որի շրջանակներում հաշվի կառնվեն ծնելիության գործակցի մակարդակը Երևանում ու յուրաքանչյուր մարզում և նման գործակցի պատճառները: Սրա շնորհիվ հնարավոր կլինի մշակել առավել արդյունավետ ժողովրդագրական քաղաքականություն:

5) Երևանի բնակչությունը աստիճանաբար ծերանում է: Տղամարդկանց միայն 19,3 %-ը և կանանց 15,2 %-ն են կազմում 0-14 տարիքային խմբին պատկանող անձինք, իսկ 65 և ավելի տարիքային խումբը՝ համապատասխանաբար 8,8 %-ը և 12,3 %-ը[524]: Այսպիսով՝ մի շարք հանգամանքներ խոչընդոտում են Երևանում ծնելիության մակարդակի բարձրացմանը: Եթե մինչև ՀՀ անկախությունը տեղի էր ունենում ամուսնությունների թվի աճ, ապա ՀՀ անկախության տարիներին այն աստիճանաբար նվազել է: 1990 թ. կազմել է 9388, 1995 թ.՝ 4749, իսկ 2000 թ. համապատասխանաբար 4595 և 926: Գրանց-

---

[523] Տե՛ս Մ. Մալխասյան, Պատմաժողովրդական ուսումնասիրություններ, Երևան, 2015, էջ 135, 137, 138-140:
[524] Տե՛ս Մ. Մալխասյան, նշվ. աշխ., էջ 140:

ված ամուսնությունները 1000 ամուսնությունների հաշվով Երևանում 2012-2014 թթ. եղել է 229, իսկ 2015-2017 թթ.՝ 240[525]: Բնակչության մահացության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում մանկամահացությունը: Չնայած 1990-ական թթ. վերջին տարիներին նկատվում էր մինչև 1 տարեկան հասակում երեխաների մահացության նվազում, սակայն այն դեռևս բարձր է միջազգային չափանիշներից: Այսպես, 1990 թ. 1000 ծնվածի հաշվով մանկամահացության գործակիցը կազմել է 31,0, 1995 թ.՝ 15,2, 1998 թ.՝ 17,6, իսկ 2000 թ. այն կազմել է 17,0, իսկ 2017 թ. 0-1 տարեկան մահացածները ՀՀ-ում կազմել են 1000 բնակչի հաշվով 8,1, իսկ Երևան քաղաքում՝ 6,2[526]: Պետք է նշել, որ մայրաքաղաքում մայրամահացության ցուցանիշի (100000 կենդանածիններ-ի հաշվով) նվազման պայմաններում այն դեռևս շարունակում է գերազանցել Եվրոպայի համար նախատեսված ցուցանիշից՝ ոչ ավելի 25/100000-ից: Այսպես, եթե 1990-1992 թթ. մայրամահացության ցուցանիշը 100000 կենդանածնի հաշվով կազմել է 38,5, 1993-1995 թթ.՝ 36,2, 1996-1998 թթ.՝ 28,3, ապա՝ 1999 թ.՝ 27,5, իսկ 2000 թ.՝ 50,9, իսկ մայրական մահացության գործակիցը 2017 թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 7,2 միավոր 100000 կենդանի ծնվածի հաշվով[527]:

Վերոնշյալ ժողովրդագրական գործընթացների հետևանքով Երևանի վարչական շրջաններից 2-ում՝ Արաբկիրում և Նորք-Մարաշում, շուրջ մեկ տասնամյակ՝ 2001-2011 թթ., նկատվեց համապատասխանաբար -0,17% (2010), -0.2% (2009) բնական շարժով[528]: Բարեբախտաբար, 2010 թ. Նորք Մարաշում բնակչության թվաքանակի նվազումը (դեպոպուլյացիան) հաղթահարվեց, սակայն Արաբկիրում այն դեռևս շարունակվում էր: Փաստորեն, Երևանի նորագույն պատմության մեջ առաջին անգամ նրա մի հատվածում XXI դարասկզբին նկատելի էր բնակչության բացասական բնական շարժ[529]: Բնակչու-

---

[525] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, էջ 264-267, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1917 թ., հունվար-դեկտեմբեր, էջ 139:
[526] Տե՛ս նույն տեղում, ՀԱԱ, ֆ. ե.257, զ. 1, գ. 415, թ. 9:
[527] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը, 2017, էջ 266, 267:
[528] Տե՛ս Մ. Մալխասյան, Պատմաժողովրդական ուսումնասիրություններ, էջ 140:
[529] Տե՛ս նույն տեղում:

թյան թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է նաև միգրացիոն տեղաշարժով: Ըստ Երևան քաղաքի բնակչության 1990-ական թթ. հաշվառման տվյալների՝ այդ տարիներին մայրաքաղաքից մեկնել են 100,6 հազար մարդ, մայրաքաղաք են եկել 56,8 հազարը, միգրացիայի սալդոն կազմել է -43,7 հազար մարդ:

Քանի որ 1990-ական թթ. թուլացել էր անձնագրային ռեժիմի պահպանումը, շատերը մեկնելիս դուրս չեն գրվել և իրենց նոր բնակավայրում չեն հաշվառվել, հետևաբար դուրս են մնացել վիճակագրական հաշվառման տեսադաշտից: Ուստի մայրաքաղաքում առկա բնակչության թվաքանակը միգրացիոն տեղաշարժերի թերհաշվառման հետևանքով զգալիորեն պակասել է: 1990-ական թթ. այլ վայրեր մշտական բնակության մեկնողների թվաքանակը գերակշռում է մայրաքաղաք եկողներին: Ըստ 1998-1999 թթ. ՀՀ ազգային վիճակագրության կողմից իրականացված «Միգրացիայի ընտրանքային հետազոտության» տվյալների՝ միգրացիայի հիմնական դրդապատճառներն են աշխատատեղերի բացակայությունը, բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը, սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը և այլն:

Ստորև ներկայացվում է մայրաքաղաքի բնակչության միգրացիայի դինամիկան 1990-2000 թթ.[530]

Աղյուսակ 4

Տարիներ	Մայրաքաղաք եկողներ	Մայրաքաղաքից մեկնողներ	Մեխանիկական աճ
1990	20149	16418	+3731
1995	4536	10645	-6109
1996	1511	4806	-3295
1997	1048	5340	-4292
1998	2037	6511	-4474
1999	1875	4852	-2977
2000	1121	3278	-2157

[530] Տե՛ս ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ք. Երևանի ցուցանիշները), Երևան, 2003, էջ 49:

Ինչպես ցույց է տալիս վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը, հանրապետությունում, ինչպես նաև մայրաքաղաքում, 1990-ական թթ. նկատվել է ծնելիության և ամուսնությունների թվի նվազում, մահացության և ամուսնալուծությունների թվաքանակի աճ, որոնք հետևանք են ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանների (վճարովի բուժումը առողջապահական հիմնարկներում, դեղորայքի և սննդամթերքի օրեցօր աճող գները, վճարովի ծառայությունների կողմից ոչ պարբերաբար վճարվող աղքատիկ աշխատավարձը, ինչպես նաև բնակչության արտահոսքը և այլն):

XXI դարասկզբի առաջին տասնամյակում, ըստ ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային ծառայությունների տվյալների, ինչպես 1990-ական թթ., այնպես էլ 2000-ական թթ. միգրացիոն գործընթացներում առավել զգալի է եղել արտագաղթը, սակայն չնչին տարբերությամբ, մասնավորապես՝ -0,05%, 2009 թ. և -0.12% 2010 թ.[531]:

Այսպիսով՝ Երևանի բնակչության շարժը 2010 թ. հունվարի 1-ից մինչև 2011 թ. հունվարի 1-ը 0,47% (0.59%+(-0.12%)=0.47) է կազմել[532]:

Բնակչության բաշխումը՝ ըստ վարչական շրջանների: Աղյուսակ 5-ում ներկայացվում է բնակչության թիվը 1996 թ. և 2001 թ. մարդահամարների 2011 թ., 2015 թ., 2017 թ. տվյալներով:

Աղյուսակ 5

Երևանի մշտական բնակչության բաշխումն՝ ըստ վարչական շրջանների[533]

Վարչական շրջանը	**Բնակչության թիվը, հազ. մարդ**				
	1996	**2001**	**2011**	**2015**	**2017**
Մալաթիա-Սեբաստիա	159,6	142,4	142,6	135,2	136,7
Նոր Նորք	131,2	141,9	148,3	129,5	131,0

[531] Տե՛ս ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ք. Երևանի ցուցանիշները), Երևան, 2003, էջ 10, ՀԱԱ, ֆ.ե. 257, ց. 1, գ. 415, թ. 10, 11:

[532] Տե՛ս Մ. Մալխասյան, Պատմաժողովրդական ուսումնասիրություններ, էջ 141:

[533] Ե՛ՀԱԱ. ֆ.257, գ.1, գ.415, թ.6, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ք. Երևանի ցուցանիշները), Ե. 2003, էջ 49. ՀՀ մարզերը և Երևանը քաղաքը թվերով, 2017, էջ 264:

Շենգավիթ	154,1	140,4	148,2	137,8	139,6
Արաբկիր	151,6	132,5	130,3	116,2	115,4
Կենտրոն	181,0	130,8	131,4	125,8	125,6
Էրեբունի	127,5	119,2	123,2	125,8	127,2
Աջափնյակ	125,7	106,7	108,6	108,9	109,2
Քանաքեռ-Զեյթուն	102,5	77,7	79,8	74,2	74,0
Ավան	50,5	50,1	50,9	53,1	53,0
Դավիթաշեն	50,8	40,6	41,3	42,5	42,5
Նորք-Մարաշ	14,6	12	11,3	11,9	11,8
Նուբարաշեն	9,3	9,2	9,7	9,7	9,8
Ընդհանուր	1249,4	1103,5	1125,6	1071,5	1075,8

Բնակչության էթնիկական, լեզվական և կրոնական կազմը

2001 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Երևանի բնակիչների 98,6%-ը՝ ավելի քան 1,088 մլն մարդ, հայեր էին: Երևանում ապրում էին նաև ազգային փոքրամասնությունների մոտ 15 հազար ներկայացուցիչներ՝ ռուսներ, եզդիներ, ուկրաինացիներ, հույներ, ասորիներ, հրեաներ և այլն[534]: 6-րդ աղյուսակում ներկայացվում է Երևանի բնակչության էթնիկական կազմը՝ ըստ 2001 թ. մարդահամարի արդյունքների:

Աղյուսակ 6

Երևանի մշտական բնակչության էթնիկական կազմը 2001 թ.[535]

	Էթնիկական հանրություն	**Թիվը**	**Տոկոս**
1	հայեր	1088389	98,63
2	ռուսներ	6684	0,61
3	եզդիներ	4733	0,43
4	ուկրաինացիներ	876	0,08
5	հույներ	308	0,03
6	ասորիներ	239	0,02
	այլք	2259	0,2

[534] Տե՛ս ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ք. Երևանի ցուցանիշները), էջ 166-167:
[535] Տե՛ս, նույն տեղում, էջ 167:

2001-2011 թթ. Երևանի բնակչության էթնիկական կազմը, ըստ էության, լուրջ փոփոխություններ չի կրել: Միայն թե նկատելի է Իրանի Իսլամական Հանրապետության մի քանի հարյուր քաղաքացիների ոչ մշտական բնակություն, սակայն նրանք և Երևանում առկա զբոսաշրջիկները չեն հաշվառվում որպես ՀՀ մշտական բնակիչներ[536]: 2001 թ. մարդահամարի արդյունքների համաձայն՝ Երևանի բնակչության մոտ 98,12%-ը հայախոս է: Մեծ թիվ են կազմում նաև ռուսախոսները՝ 1,36%: Երևանի բնակչության էթնիկական փոքրամասնությունների մայրենի լեզուներից տարածված է նաև եզդերենը՝ 0,32%[537]: 2009-2011 թթ. անցկացված սոցիոլոգիական հարցումները փաստում են, որ բնակչության շուրջ 90 %-ը որպես երկրորդ լեզու կարող է օգտագործել ռուսերենը: Զգալի թիվ են կազմում նաև անգլերեն, ինչպես նաև ֆրանսերեն տիրապետողները[538]: 7-րդ աղյուսակում ներկայացվում է Երևանի բնակչության լեզվական կազմը՝ ըստ 2001 թ. մարդահամարի արդյունքների:

Աղյուսակ 7

Երևանի մշտական բնակչության լեզվական կազմը[539]

	լեզուն	**%**
1	հայերեն	98,12
2	ռուսերեն	1,36
3	եզդերեն	0,32
4	ուկրաիներեն	0,03
	այլ	0,17

Երևանի բնակչության մոտ 95 %-ը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հետևորդ է: Մայրաքաղաքում գործում են նման 16 եկեղեցիներ: Գործող եկեղեցիներ չկան 12 վարչական շրջաններից 3-ում՝ Աջափնյակում, Էրեբունիում և Նոր Արեշում, այսինքն՝ շուրջ 260 հազար մարդ հոգևոր կարիքները (մայրաքաղաքի բնակչության մոտ մեկ երրորդ մասի) չի հոգում հենց իր վարչական շրջա-

[536] Տե՛ս Մ. Մալխասյան, նշվ. աշխ., էջ 142:
[537] Տե՛ս նույն տեղում:
[538] Տե՛ս նույն տեղում:
[539] Տե՛ս նույն տեղում, էջ 143:

նում[540]: Բնակչության մոտ 4%-ը կազմում են բողոքականները (Հայաստանյանց ավետարանական եկեղեցի նն) և զանազան կրոնական կազմակերպությունների հետևորդները, որոնք ևս ունեն իրենց ժողովարաններն ու աղոթարանները: Բնակչության 0,5%-ից մի փոքր ավելին կազմում են ռուս ուղղափառ եկեղեցու հետևորդները (ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ), որոնց համար գործում են մայրաքաղաքի Քանաքեռի Ս. Աստվածածնի վերափոխման ուղղափառ և Երևանյան լճի հարևանությամբ գտնվող եկեղեցիները[541]: Փոքր թիվ են կազմում կաթոլիկ քրիստոնյաները (հայ կաթողիկներ, լեհեր, ուկրաինացիներ), գործում են Քանաքեռի Ս. Գրիգոր Նարեկացի (Հայ կաթողիկի ժողովրդապետություն) և Մխիթարյանների միաբանության Ավանի մատուռները, Հռոմի կաթոլիկ եկեղեցու Նորք-Մարաշ Մայր Թերեզայի քույրերի մանկատան աղոթարանը: Մաշտոցի պողոտայում գործում է պարսկական Կապույտ մզկիթը, որը իսլամական մշակույթի և պարսկերենի ուսումնասիրության կարևոր կենտրոնն է: Նար-Դոսի փողոցում գործող հրեական սինագոգը Երևանի շուրջ 500 հրեաների կրոնական և մշակութային կենտրոններից է[542]:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ 2011 թ. տվյալներով Երևանում է ապրում ՀՀ բնակչության 34,4 %-ը, իսկ 2017 թ.՝ 36 %-ը, ՀՀ քաղաքային բնակչության 53,7%-ը, իսկ 2017 թ.՝ 57 %-ը, ՀՀ հայերի 33,9%-ը և աշխարհի հայերի ավելի քան 11%-ը[543]:

Այսպիսով՝ XXI դարասկզբին Երևանի ժողովրդագրական բնութագրի հիմնական առանձնահատկություններն են ընդգծված մոնոէթնիկությունը և մշտական բնակչության վերարտադրության գերազանցապես բնական շարժով պայմանավորված լինելը: Անհրաժեշտ է արձանագրել, որ ժողովրդագրական բազմաթիվ խնդիրներ ունեցող Երևանը շարունակում է մնալ ՀՀ սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և հասարակական-քաղաքական կյանքի խթանող կենտրոնը: Բավական է ընդգծել միայն այն փաստը, որ յուրաքան-

---

[540] Տե՛ս Մ. Մալխասյան, նշվ. աշխ., էջ 143:
[541] Տե՛ս նույն տեղում, էջ 144:
[542] Տե՛ս նույն տեղում:
[543] Տե՛ս նույն տեղում, էջ 144, ՀՀ մարզերում ու Երևան քաղաքը, 2017 թ., էջ 264:

չյուր օր՝ առավոտյան, Երևան է մուտք գործում և երեկոյան Երևանից դուրս է գալիս մի քանի հարյուր հազար մարդ: Եթե հաշվի առնենք նաև ժամանակավորապես բնակվողներին ու զբոսաշրջիկներին, ապա կստացվի, որ աշխատանքային ցերեկային բազմազբաղ ժամերին Երևանում կա 1,5-1,7 մլն մարդ:

Միջոցառումներ սոցիալ-տնտեսական ոլորտում

2012 թ. ապրիլի 5-7-ը Երևանում անցկացվեցին Մոսվկայի օրեր: Նույն ամսին Երևանը պաշտոնապես ստանձնեց «Գրքի համաշխարհային մայրաքաղաք» տիտղոսը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու միջոցառումներին մասնակցելու նպատակով Երևանում գտնվող պաշտոնական պատվիրակությունների անդամներն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Նույն տոնակատարությունների շրջանակներում Մոսկովյան-Տերյան խաչմերուկի հարակից տարածքում բացվեց «Մշո ճառընտիր» հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագրին նվիրված «Վարք հավերժության» բրոնզաձույլ կոթողը:

2013 թ. սկզբին տեղի ունեցավ ԱԻՆ նորակառույց շենքի հանդիսավոր բացումը: Նույն թվականի ապրիլի 30-ին մեծանուն կոմպոզիտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Արամ Խաչատրյանի 110-ամյակի առթիվ Արաբկիր վարչական շրջանի Խաչատրյան–Փափազյան փողոցների հատման հարակից հատվածում բացվեց հայ մեծանուն կոմպոզիտորի կիսանդրին:

2013 թ. հուլիսին կայացան բողոքի բազմաթիվ ակցիաներ Երևանում տրանսպորտի սակագնի բարձրացման որոշման դեմ, որի արդյունքում կասեցվեց Երևանում տրանսպորտի ուղեվարձը 50 դրամով բարձրացման որոշումը:

2013 թ. հոկտեմբերի 11-ին «Էրեբունի-Երևան 2795» տոնակատարության շրջանակում Երևանի քաղաքապետարանում կազմակերպված ընդունելությանը մասնակցեցին մայրաքաղաքի տոնին, նաև Եվրոպայի խորհրդի անդամ երկրների մայրաքաղաքների քա-

ղաքապետերի միջազգային խորհրդաժողովին մասնակից 17 երկրների Երևան ժամանած 31 պատվիրակությունների անդամները: «Էրեբունի-Երևան 2795» տոնակատարության միջոցառումներին, ինչպես նաև «Եվրոպայի խորհրդի անդամ երկրների մայրաքաղաքների միջազգային համաժողովին» մասնակցելու նպատակով Երևանում գտնվող Մոսկվայի կառավարության պաշտոնական պատվիրակության անդամների հետ հանդիպման շրջանակում քննարկվեցին երկու մայրաքաղաքների միջև առկա համագործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր: Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հանդիպեց «Էրեբունի-Երևան 2795» տոնակատարություններին մասնակցելու նպատակով Երևան ժամանած Ռ. Դ. Ստավրոպոլի քաղաքապետ Գ. Կոլյագինի հետ: Այցի շրջանակում Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը և Ստավրոպոլի քաղաքապետ Գ. Կոլյագինը ստորագրեցին եղբայրացման մասին համաձայնագիր, ըստ որի՝ կողմերը պարտավորվեցին ամրապնդել և զարգացնել բարեկամական հարաբերությունները երկու մայրաքաղաքների միջև:

2013 թ. հոկտեմբերի 29-ին մայրաքաղաքի թիվ 44 դպրոցի անվանակոչվեց պոլսահայ նշանավոր լրագրող, հրապարակախոս Հրանտ Դինքի անունով:

2013 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ ժամանեց Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը: Այցի շրջանակներում Երևանի Մոսկովյան–Նալբանդյան–Իսահակյան փողոցներով պարփակված տարածքում բացվեց հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը խորհրդանշող «Միացյալ խաչ» անունը կրող հուշարձանը (քանդ.՝ Ֆ.Վ. և Մ. Սողոյաններ, ճարտ.՝ Ռ. և Տ. Մանուկյաններ):

2014 թ. հոկտեմբերի 12-ին շահագործման հանձնվեց Գլխավոր պողոտայի՝ Նալբանդյան–Հանրապետության փողոցների միջև ընկած այգին:

2014 թ. նոյեմբերի 8-ին համաքաղաքային շաբաթօրյակի շրջանակում կազմակերպվեց ծառատունկ, որի ժամանակ տնկվեց 20 հազար ծառ և 500 թուփ:

2015 թ. ապրիլը Երևանում նշանավորվեց մի շարք միջոցառումներով, որոնք վերաբերում էին Հայոց ցեղասպանության 100-ամյա

տարելիցին: Մասնավորապես բացվեց Անրի Վեռնոյի (Աշոտ Մալաքյան) անունը կրող փողոցը: Բացման արարողությանը ներկա էին Երևանի քաղաքապետը, ֆրանսահայ նշանավոր կինոբեմադրիչի որդին՝ Պատրիկը, դուստրը՝ Սոֆին և ընտանիքի այլ անդամներ[544]:

Մեծ հանդիսավորությամբ բացվեց Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) շենքը: Ապրիլի 9-ին ԱԺ բակում տեղի ունեցավ Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հուշարձանի բացումը: Երևան քաղաքի պատմության թանգարանի ցուցասրահում բացվեց Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված «Հայաստանը օտարերկրյա նկարիչների աչքերով» ցուցահանդեսը:

Ապրիլի 21-23-ը Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ-ում կայացավ համաժողով՝ «Ընդդեմ ցեղասպանության» խորագրով, որին մասնակցեցին 600 մասնակից 50 երկրներից: Ապրիլի 22-ին Կոմիտասի անվան զբոսայգում՝ պանթեոնի հարևանությամբ, մեծ հանդիսավորությամբ կատարվեց կառուցվելիք Սրբոց նահատակաց եկեղեցու հողօրհնության արարողությունը[545]:

Մայրաքաղաքի հոգևոր կյանքում կարևոր իրադարձությունն էր Սուրբ Աննա եկեղեցու օծումը, որը տեղի ունեցավ 2015 թ. ապրիլի 30-ին: 2015 թ. հունիսի 19-ին սկսվեց նստացույցի բողոք էլեկտրաէներգիայի թանկացման դեմ, իսկ հունիսի 22-29-ը Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքող ցուցարարների կողմից փակվեց Երևանի կենտրոնական պողոտաներից մեկը՝ Մարշալ Բաղրամյանը:

2015 թ. գոստոսի 2-13-ը տեղի ունեցան Համահայկական 6-րդ ամառային խաղերը, որի գլխավոր միջոցառումները անցկացվեցին Երևանի մարզական համալիրներում: Բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ օգոստոսի 2-ին Երևանի Հանրապետական մարզադաշտում: Խաղերին մասնակցեցին 6352 մարզիկ 36 երկրների 175 քաղաքներից: Թիմային հաշվարկով Երևանը զբաղեցրեց առաջին հորիզոնականը[546]:

---

[544] Տե՛ս Երևան քաղաքապետարանի տարեկան հաշվետվությունը 2015 թ., Երևան, 2015, էջ 28, Գ. Բաղդասարյան, Երևան, 2018, էջ 176:
[545] Տե՛ս Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 22, 176:
[546] Տե՛ս նույն տեղում, էջ 176:

2015 թ. դեկտեմբրի վերջին բացվեց Հյուսիս–հարավ ճանապարհի առաջին՝ Երևան–Արտաշատ և Երևան–Աշտարակ հատվածը:

2016 թ. նկարազարդվել է 340 բակային տարածք: Կառուցվել է ֆուտբոլի արհեստական խոտածածկով 9 փոքր դաշտ, ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել նախորդ տարիներին կառուցված ֆուտբոլի դաշտերում: Բարեկարգված բակային տարածքներում տեղադրվել են 107 մանկական խաղեր և 315 մարզասարքեր: 2017 թ. մայրաքաղաքում կառուցվել և բարեկարգվել է 256 բակային տարածք: Մայրաքաղաքի փողոցների և բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի պահպանման և բարեկարգման նպատակով 2016-2017 թթ. իրականացվել են շուրջ 1,550,000 քմ ընթացիկ վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ[547]:

Միաժամանակ 2016 թ. իրականացվել են շուրջ 10 000 քմ հողային պաստառով ճանապարհների հիմնանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ: Նույն տարվա ընթացքում սալիկապատվել է 3 825 քմ մայթ 67 հասցեներում, և նորոգվել է 1316 գծմ եզրաքար 53 հասցեներում[548]:

Մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի պահպանման և շահագործման աշխատանքներին զուգահեռ 2016 թ. պատրաստվել են Երևանի քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման ծրագրերի մրցութային փաստաթղթերը: Միաժամանակ նույն թվականին համայնքային միջոցներով լուսավորվել են 149 չլուսավորված փողոց-բակային հատված, այգի, ստորգետնյա անցում, ինչպես նաև ՄԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում Մաշտոց պողոտայի բոլոր լուսատուները փոխարինվել են էլեկտրախնայող LED լուսատուներով: 2016 թ. ընդհանուր առմամբ անցկացվել է 39.8 կմ լուսավորության նոր ցանց[549]:

Քաղաքապետարանի ուշադրությունից չեն վրիպել նաև բազմաբնակարանային շենքերի վերանորոգման և տարածքի բարեկարգման հարցերը: 2016 թ. համատիրությունների հետ համագոր-

---

[547] Տե՛ս 2016 և 2017 թթ. Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվությունները, Երևանի տարեգրությունը, Երևանի թանգարան, ընթացիկ արխիվ:
[548] Տե՛ս նույն տեղում, էջ 13:
[549] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

ծակցության շրջանակներում շարունակվել են Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Ընդհանուր առմամբ մայրաքաղաքում հիմնանորոգվել է 1897 շենքերի շուրջ 138 000 քմ տանիք: Հարկ է նշել, որ 2013-2016 թթ. նույն ուղղությամբ կատարված աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմել է 538 847 քմ, իսկ աշխատանքները կատարվել են 7002 շենքերում[550]:

2016 թ. շարունակվել են մայրաքաղաքում մատչելիության և հարմարավետության ապահովմանն ուղղված ծրագրերը, որոնք հատկապես կարևոր են՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող բնակիչների հարմարավետությունը քաղաքում ապահովելու համար:

Նուբարաշենի կենտրոնական բարեկարգված այգու տարածքը համալրվել է 7 թեքահարթակներով, և այն դարձել է հարմար վայր բոլոր քաղաքացիների ազատ տեղաշարժի ու հանգստի համար: Նույն տարում համայնքային բյուջեի միջոցներով մայրաքաղաքում կառուցվել է ևս 275 թեքահարթակ: Երևանի 73 հատվածներում տեղադրվել են մայթերի ավարտի մասին զգուշացնող հատուկ գոգավորությամբ դեղին սալահատակներ՝ տեսողության խնդիրներ ունեցող քաղաքացիների համար: Այս ուղղությամբ կատարվել են աշխատանքներ նաև քաղաքային տրանսպորտը բարելավելու համար: 2016 թ. համատիրությունների հետ համագործակցության շրջանակներում շարունակվել են Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Ընդհանուր առմամբ մայրաքաղաքում հիմնանորոգվել է 1897 շենքերի շուրջ 138 000 քմ տանիք: Հարկ է նշել, որ 2013-2016 թթ. նույն ուղղությամբ կատարված աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմել է 538 847 քմ, իսկ աշխատանքները կատարվել են 7002 շենքերում[551]:

Այդ նույն տարում շարունակվել են ջրամատակարարման և ջրահեռացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ֆրանսիայի կառավարության կողմից տրամադրված վարկային ծրագրի շրջանակներում ամբողջությամբ արդիականացվել է 23 փողոցնե-

---

[550] Տե՛ս Տե՛ս 2016 և 2017 թթ. Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվությունները, Երևանի տարեգրությունը, Երևանի թանգարան, ընթացիկ արխիվ, էջ 20:
[551] Տե՛ս նույն տեղում:

րի 5,2 կմ կոյուղու ցանցը, կառուցվել է 94 կմ նոր ջրագիծ, իրականացվել են 6344 անհատական ջրաչափական հանգույցների կառուցման աշխատանքներ: Միաժամանակ վերակառուցվել է «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանը՝ ապահովելով առաջնային մեխանիկական մաքրումը և տիղմի մշակումը: Ներդրվել է ջրամատակարարման ամբողջ ցանցի հեռակառավարման ՍԿԱԴԱ համակարգ, որի արդյունքում բարելավվելու են խմելու ջրի հոսքերի կառավարման և մատակարարման արդյունավետությունն ու անվտանգությունը: Մեկնարկել է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման բարելավման ծրագիրը, որի շրջանակներում կառուցվել և շահագործման է հանձնվել 30 բակային նոր պոմպակայան՝ համապատասխան տարածքներում ապահովելով շուրջօրյա ջրամատակարարում: Մեկնարկել են 152 կմ ջրամատակարարման ցանցի կառուցման և 13000 անհատական ջրաչափական հանգույցների ու դիտահորերի կառուցման աշխատանքները: Բոլոր նշված ծրագրերը ուղղված են եղել մայրաքաղաքում հատկապես մասնավոր տնատիրությունների և բազմաբնակարան շենքերի ջրամատակարարումը հուսալի ու անվտանգ դարձնելուն[552]:

Երևանում տարիներ շարունակ հիմնախնդիր համարվող աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտը 2016 թ. ընթացքում որոշ կարգավորման հասավ միջազգային օպերատորի՝ «Սանիթեք» ընկերության՝ բոլոր վարչական շրջաններում սպասարկման իրականացմամբ: Տարին նշանակալի էր նաև ձնամաքրման տեխնիկայի թվաքանակի աճով[553]:

2016 թ. ևս շարունակվեցին հանգստյան գոտիների, կանաչ տարածքների պահպանման և վերանորոգման աշխատանքները, որի արդյունքում մայրաքաղաքում կանաչ տարածքներն ընդհանուր առմամբ ավելացան 6,5 հեկտարով: Նուբարաշեն վարչական շրջանում կառուցվեց նոր այգի, որի ընդհանուր մակերեսը կազմում է 2 հա[554]: Հարկ է նշել, որ 2012-2016 թթ. ընթացքում Երևանում վերակառուցվե-

---

[552] Տե՛ս Տե՛ս 2016 և 2017 թթ. Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվությունները, Երևանի տարեգրությունը, Երևանի թանգարան, ընթացիկ արխիվ, էջ 21:
[553] Տե՛ս նույն տեղում, էջ 22:
[554] Նույն տեղում:

ցին 16 հանգստի գոտիներ մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում:

Երևանի քաղաքապետարանի՝ կրթության ոլորտում իրականացված ծրագրերի հիմքում 2016 թ. ընկած էին մայրաքաղաքի նախադպրոցական տարիքի երեխաների անվճար կրթության ապահովման խնդիրները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կրթական կազմակերպություններում ուսուցման համար անհրաժեշտ պայմանների բարելավումը: 2016 թ. երևանաբնակ 30295 երեխաների համար մայրաքաղաքի 160 մանկապարտեզներում ապահովվել է անվճար կրթություն, այդ թվում՝ 168 երեխայի ներառական կրթությունը 8 կենտրոններում և սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 80 երեխայի կրթությունը՝ գիշերակացով: Փոքրիկ երևանցիների նախադպրոցական կրթության համար ավելի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով 2016 թ. շարունակվել են մանկապարտեզների հիմնանորոգման, նորոգման և գույքի թարմացման աշխատանքները: Հիմնանորոգվել է 4 և նորոգվել 52 նախադպրոցական կրթական հաստատություն, տրամադրվել է 8744 նոր գույք[555]:

Պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակում Երևանի 159 դպրոցներում կազմակերպվել է 94 354 աշակերտների կրթությունը, այդ թվում՝ 2077 աշակերտների ներառական կրթությունը: Դպրոցներում սովորող սոցիալապես անապահով 4768 աշակերտ ապահովվել է անվճար դասագրքերով: 2016 թ. Երևանի քաղաքային առօրյան լի էր մշակութային և մարզական իրադարձություններով, որոնք նախատեսված էին տարբեր նախասիրությունների և հետաքրքրությունների խմբերի մարդկանց համար: 2016 թ. մայրաքաղաքում հիմնվել է շախմատի 2 դպրոց. այդպիսով համանման դպրոցների թիվը Երևանում հասավ 12-ի: Մայրաքաղաքում 2016 թ. ընթացքում կազմակերպվել է մարզամշակութային ավելի քան 86 միջոցառում, այդ թվում՝ փառատոներ, բացօթյա համերգներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մարաթոն-

[555] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, 2016 թ. քաղաքապետարանի հաշվետություն, էջ 28-32:

ներ, որոնց զգալի մասն ունեցել է նաև զբոսաշրջային նշանակություն[556]:

Առողջապահության ոլորտում քաղաքային իշխանությունների հիմնական խնդիրը յուրաքանչյուր երևանցու համար որակյալ և մատչելի բժշկական օգնություն ստանալու պայմանների ապահովումն է: այդ նպատակով 2016 թ. շարունակվեցին առողջապահական կազմակերպությունների բժշկական սարքավորումների համալրման, շենքային պայմանների բարելավման, ինչպես նաև բժշկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստման ծրագրերը: Մայրաքաղաքում ամբողջությամբ լուծվեց պոլիկլինիկաների ջեռուցման խնդիրը: 2016 թ. Երևանի քաղաքապետարանի ենթակայության պոլիկլինիկաներում գրանցվել է շուրջ 1 800 000 հաճախում[557]: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ բժշկական օգնության սպասարկման ծրագրի շրջանակներում բուժման ուղեգիր է ստացել սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված 1 047 երևանցի, առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր է տրամադրվել 366 քաղաքացու:

Սոցիալական ապահովության ոլորտում 2016 թ. Երևանի քաղաքապետարանի ռազմավարությունն ուղղվել է մայրաքաղաքի բնակիչների սոցիալական երաշխիքների պաշտպանությանն ու իրականացմանը: Քաղաքապետի հանձնարարականով շարունակվել են քաղաքացիների հասցեական սոցիալական աջակցության ծրագրերը՝ հոգածության և ուշադրության կենտրոնում պահելով կարիքավոր ընտանիքներին և խոցելի սոցիալական խմբերին:

Գիտելիքի օրվան ընդառաջ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների ավարտական խմբերի շուրջ 10 000, ինչպես նաև սոցիալապես առավել կարիքավոր ընտանիքների 1-4-րդ դասարաններ հաճախող 5 697 երեխաների տրամադրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ: Կազմակերպվել է սոցիալապես անապահով ընտանիքների 7-13 տարեկան 1 170 երեխաների

---

[556] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, 2016 թ. քաղաքապետարանի հաշվետություն, էջ 33-39:
[557] Տե՛ս նույն տեղում, 2018 թ. քաղաքապետարանի հավելվածում, թ. 39-47:

ամառային հանգիստը մանկական առողջարարական ճամբարներում: Սիրիահայ ավելի քանի 1 200 ընտանիքի տրամադրվել է դրամական, նյութական և պարենային աջակցություն[558]:

Նոր բնակարաններ են տրամադրվել զոհված և հաշմանդամ զինծառայողների և ազատամարտիկների 7 ընտանիքների, որոնցից 4-ը՝ ապրիլի սկզբին առաջնագծում զոհված զինծառայողների և կամավորների ընտանիքներ: Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ երևանաբնակ զինծառայողների 1 200 ծնող հնարավորություն է ստացել տեսակցելու ՀՀ սահմանամերձ և Արցախի զորամասերում ծառայող իրենց զավակներին[559]:

Երևանը շարունակում է մնալ Հայաստանի գլխավոր զբոսաշրջային կենտրոնը, և քաղաքային իշխանությունների ջանքերը մշտապես ուղղված են պահպանելու մայրաքաղաքի զբոսաշրջային կենտրոնի դերն ու նշանակությունը ազգային և միջազգային մակարդակներում: 2016 թ. իրականացված ծրագրերը նպաստել են մայրաքաղաքում իրադարձային զբոսաշրջության զարգացմանը, Երևան ժամանող զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցության ապահովմանը, զբոսաշրջային արդյունաբերության ենթակառուցվածքների հետ համագործակցության զարգացմանը: Երևանի քաղաքապետարանը մշակել է առաջարկներ՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման գործում ներդրողներ ներգրավելու նպատակով:

2016 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետություն է ժամանել 969 010 զբոսաշրջիկ, որոնք առնվազն մեկ օր անցկացրել են Երևանում: Երևանում զբոսաշրջիկների հոսքը տարվա ընթացքում ակտիվացել է Նորին սրբություն Հռոմի պապ Ֆրանցիսկոսի այցի օրերին Մայրաքաղաքի օրվան նվիրված տոնակատարությունների և այլ միջոցառումների օրերին: 2015 թ. նույն ժամանակահատվածի համեմատ զբոսաշրջիկների այցելությունների թիվը Երևան աճել է 3.6 %-ով[560]: Տպագրվել և հյուրանոցներին, զբոսաշրջային ընկերություններին, թանգարաններին են տրամադրվել երկ-

---

[558] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, 2016 թ. քաղաքապետարանի հաշվետություն, թ. 49-51:
[559] Տե՛ս նույն տեղում, թ. 58-63:
[560] Տե՛ս նույն տեղում, էջ 33-34, թ. 67-69:

լեզու (ռուսերեն-անգլերեն լեզուներով) զբոսաշրջային քարտեզներ, ամենօրյա առցանց տեղեկատվություն է տրամադրվել տուրիզմի բաժին դիմող զբոսաշրջիկներին: Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում ստեղծվել է «Միջոցառումների օրացույց» բաժինը, որի միջոցով ներկայացվում են մայրաքաղաքում կազմակերպվող մարզական, մշակութային և զբոսաշրջային-իրադարձային միջոցառումները: ՀԲԸՄ-ի հետ համատեղ մշակվել է «Բացահայտենք Երևանը. հայացք քաղաքի անցյալին և ներկային» զբոսաշրջային էլեկտրոնային գիրքը: Իրադարձային զբոսաշրջության զարգացման նպատակով տարվա ընթացքում անցկացվել են ավանդական դարձած Ջազի օր, «Համով-հոտով Երևան», «Երևան ՏԱՐԱՁ ֆեստ», «Ձմերուկի» և «Երևանի գա- րեջրի» փառատոնները[561]:

«Երևան Սիթի Տուր» զբոսաշրջային առաջարկից 2016 թ. օգտվել է շուրջ 4000 այցելու: «Երևան Սիթի Տուր» շրջայց է կազմակերպվել ԼՂՀ-ում զոհված զինծառայողների ընտանիքների երեխաների, մարզերի երեխաների և տարեցների համար[562]:

Շարունակվում է Երևանի կենդանաբանական այգու արդիականացման ծրագիրը, որի նպատակներից մեկը այգին տարածաշրջանում գրավիչ ու հետաքրքիր զբոսաշրջային վայր դարձնելն է: Զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում մասնավոր ներդրողների գրավելու նպատակով մշակվել են ներդրումային փաթեթ-առաջարկներ: Այդ փաթեթները ներառում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Շենգավիթ հնավայրի, Կարմիր բլուր հնավայրի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման, «Հաղթանակ» զբոսայգու, Հրազդանի կիրճի տարածքների վերակառուցման ու արդիականացման և այլ ծրագրեր: Ավարտվել է «Վերնիսաժի» վերակառուցման և արդիականացման ծրագիրը: Տարածքի կանաչ մակերեսը կազմում է 6 000 քմ, անցկացվել է ոռոգման նոր ցանց, Հանրապետության և Խանջյան փողոցների կողմից կառուցվել են շատրվաններով հրապարակներ, իսկ միջնամասում՝ 7 ցայտաղբյուրներով հրա-

[561] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, 2016 թ. քաղաքապետարանի հաշվետություն, թ. 72-75:
[562] Տե՛ս նույն տեղում, թ. 9-11:

պարակ: Այգու կահավորանքն ամբողջությամբ փոխարինվել է նորով՝ տաղավարներ, նստարաններ, աղբամաններ: Նորացվել է լուսավորության ցանցը[563]:

Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում կառուցվել է «Ազատամարտիկների» պուրակը:

2017 թ. Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների և ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի վրա տեղադրվող գովազդները կանոնակարգելու մասին ընդունվել է Երևանի քաղաքապետի որոշումը: Կազմված գովազդային անձնագրերում նշված են շենքերի ճակատային հատվածներում գովազդների տեղադիրների նկարագիրը, արտաքին չափերը, նյութը և ձևը: 2017 թ. երկրորդ անգամ Հայաստանում անցկացվեց Երևանի արտաքին գովազդի փառատոնը: Այն իր շուրջ համախմբեց արտաքին գովազդի ոլորտում աշխարհի առաջատար մասնագետներին՝ գովազդի հայկական շուկա բերելով միջազգային լավագույն պրակտիկան և խթանելով փորձի փոխանակումը[564]:

2017 թ. մայրաքաղաքում կազմակերպվել է գյուղմթերքի վաճառքի 3 շուկա՝ Կասյան փողոցի սկզբնամասում, Սարյան փողոցին հարող տարածքում և Գայի պողոտան հատող տարածքում: Կենդանիների զբոսանքի համար յուրաքանչյուր վարչական շրջանում առանձնացված է մեկական վայր: 2016-2017 թթ. Երևանում ապամոնտաժվել է առևտրի և սպասարկման չգործող 287 կրպակ[565]:

2014 թ. դեկտեմբերին Երևանի քաղաքապետի հատուկ հանձնարարությամբ սկսվել են Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումներին ուղղված աշխատանքները: Բազմակողմանի բանակցային և նախապատրաստական տեխնիկական աշխատանքներից հետո՝ 2017 թ. ապրիլի 20-ին, սկսվել է գործընթացի գործնական փուլը: Մեկնարկը տրվել է աշխատանքային խմբի առա-

---

[563] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, 2016 թ. քաղաքապետարանի հաշվետություն, թ. 38-41:
[564] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, քաղաքապետարանի 2017 թ. հաշվետվություն, թ. 62-68:
[565] Տե՛ս նույն տեղում, թ. 76-79:

ջին նիստով, որի ընթացքում «WYG International» խորհրդատվական ընկերությունը ներկայացրել է իր պատրաստած փաթեթն ու մեկնարկային հաշվետվությունը: Դրանից հետո շարունակվել են աշխատանքային քննարկումները բարեփոխումների փաթեթի և դրա առանձին բաղադրիչների շուրջ: Բարեփոխման՝ «Նոր ավտոբուսային երթուղային ցանցի, ինտեգրված սակագնի և տոմսային համակարգի» ծրագիրը մշակում են «WYG International» ընկերությունն ու «Ամերիա» ՓԲԸ-ն համատեղ՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և Երևանի քաղաքապետարանի վերահսկողությամբ[566]:

Երևան քաղաքի հասարակական բարեփոխումների գործընթացը կարևոր էր անկախ Հայաստանի պատմության մեջ, քանի որ նախատեսվում էր վերափոխել հասարակական տրանսպորտի ամբողջ համակարգն իր բոլոր բաղադրիչներով՝ տնտեսական և կառավարման մոդելով, շահագործվող տրանսպորտային միջոցներով, օժանդակ ենթակառուցվածքներով և այլն: Բարեփոխման հիմքը նոր, ավելի օպտիմալ երթուղային ցանցն է, որի պարագայում տրանսպորտային միջոցները գործելու են փոխլրացման սկզբունքով՝ բացառելով կրկնվող երթուղիների առկայությունը:

Նոր տրանսպորտային համակարգը նախատեսում էր միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի, ֆինանսական շրջանառության թափանցիկության, կառավարման էլեկտրոնային համակարգի, ժամանակակից ու հարմարավետ տրանսպորտային միջոցների շահագործման ապահովում քաղաքացիների համար:

Հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխման արդյունքում կտրուկ նվազելու է տրանսպորտային միջոցների թիվը, որն իր հերթին նպաստելու է նաև քաղաքային կյանքի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք հարակից խնդիրների լուծմանը, ինչպիսիք են օդի աղտոտվածության մակարդակի և ճանապարհների Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի գործող աղբավայրի հարակից տարածքում կառուցել նոր՝ միջազգային չափորոշիչներին

[566] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, քաղաքապետարանի 2017 թ. հաշվետվություն, թ. 83-86:

համապատասխան աղբավայր, ներառյալ հոսքաջրերի հավաքման համակարգ, գազի հավաքման և այրման կայան, հոսանքի գեներատոր, վարչական շենք, ցանկապատ, սպասարկման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներ: Ծրագրի շրջանակներում նաև նախատեսվում է կոնսերվացնել Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերը: Ծրագրի մրցութային գործընթացն ու մեկնարկը սկսվել է 2018 թ.[567]:

Աղբի վերամշակման գործընթացը դիտարկվում է որպես կոշտ թափոնների կառավարման գործընթացի 3-րդ բաղադրիչ, որը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում մասնավոր ներդրումների հաշվին:

2017 թ. դեկտեմբերին Երևանի քաղաքապետարանը Եվրոպական ներդրումային բանկի հետ կնքեց Էներգաարդյունավետության ֆինանսական պայմանագիր, որի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներ: Ծրագրի արդյունքում կկրճատվեն հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, ինչպես նաև կնվազի արտանետվող CO2 գազը[568]:

Ծրագրի շրջանակներում մանկապարտեզների շուրջ 30%-ը կհիմնավերանորոգվի, կիրականացվեն էներգախնայողությանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև շենքերի սեյսմիկ ամրացում: Երևանի քաղաքապետարանը, կարևորելով այս ծրագիրը, մասնակցելու է գործընթացին ապահովելով մանկապարտեզների ամբողջական հիմնանորոգումը:

Մայրաքաղաքի Կենտրոն համայնքում 2018 թ. ապրիլի 2-ին բացվել է «Ալեքսանդր» հյուրանոցային համալիրը, որը պատկանում է «Սթար Վուդ» հյուրանոցային խմբի լյուքս շարքին: Հյուրանոցային համալիրի բացման արարողությանը ներկա է եղել ՀՀ նախագահը: Համաշխարհային չափանիշներին համապատասխանող հյուրանո-

[567] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, քաղաքապետարանի 2017 թ. հաշվետվություն, թ. 43-47:
[568] Տե՛ս նույն տեղում, թ. 39-43:

ցային համալիրի կառուցման նպատակով կատարված ընդհանուր ներդրումները կազմել են 53.9 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Հյուրանոցային համալիրը միաժամանակ կարող է ընդունել 230 այցելու: Արդյունքում ստեղծվել է նաև 280 հազար ՀՀ դրամ միջին աշխատավարձով 144 աշխատատեղ, որը նախատեսվում է հետագայում հասցնել 170-ի: Գործարար, հյուրանոցային համալիրի հիմնադիր Սերգեյ Համբարձումյանը կարևորել է հայրենիքում ներդրումներ անելու անհրաժեշտությունը[569]:

Մայրաքաղաքի միջազգային կապերն ու արտաքին հարաբերությունները

ՀՀ անկախության վերականգնման առաջին տարիներինց սկսած՝ ակտիվացան մայրաքաղաքի արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքները, առանցքային տեղ գրավեց այլ քաղաքների ու շրջանների, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների հետ համագործակցությունը: Այդ տարիները դարձան Երևանի գործնական համագործակցության ընդլայնման, նոր գործարարական ծրագրերի մշակման, իրագործման, միջազգային ճանաչման, նրա վարկի հեղինակության բարձրացման ժամանակաշրջան: 1991-2018 թթ. մայրաքաղաքի միջազգային և արտաքին կապերի զարգացումն ու ամրապնդումը իրականացվել են հիմնականում երեք ուղղությամբ.

1) ուղղակի կապեր արտասահմանյան քաղաքների, այդ թվում՝ քույր քաղաքների, հայկական համայնքների և տեղական իշխանությունների հետ,

2) կապեր արտասահմանյան ընկերությունների հետ,

3) Երևանի քաղաքապետարանի հիմնական գործունեության նպատակաուղղումը մայրաքաղաքի մշակութային, առևտրատնտեսական, գիտական և այլ կապերի հաստատմանն արտաքին աշխարհի հետ:

ա) 1991-2018 թթ. իրականացվել են Երևանի և արտասահմանյան քաղաքների միջև, ինչպես նաև միջազգային ծրագրերի շրջա-

[569] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 ապրիլի, 2018:

նակներում, առևտրատնտեսական, մշակութային, կրթական, գիտատեխնիկական, առողջապահության և զբոսաշրջության բնագավառներում համագործակցության ամրապնդումն ու զարգացումը:

բ) Քաղաքապետարանի կողմից իրագործվող արտաքին առևտրատնտեսական և ինվեստիցիոն ծրագրերի շրջանակներում կատարվել են աշխատանքների կազմակերպում ու օժանդակում, որը ներկայացնում է քաղաքապետարանի կողմից տարվող քաղաքականությունը՝ ուղղված անհրաժեշտ պայմանների և մեխանիզմների ստեղծմանը, մասնավորապես ներդրումների խրախուսմանն ու ներգրավմանը:

գ) Մայրաքաղաքի ձեռնարկությունների և կազմակերպությունների համար իրականացվել է միջազգային տնտեսական գործունեության բնագավառում տեղեկատվական, խորհրդատվական և մեթոդական օգնություն:

1991-1992 թթ. Հայաստանի անկախ հանրապետության միջազգային ճանաչմանը հաջորդեց դիվանագիտական հարաբերությունների հաստատումը աշխարհի բազմաթիվ երկրների, այդ թվում՝ ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ: Հայ ռուսական բարեկամական հարաբերությունների ամրապնդման զուգահեռ մայրաքաղաք Երևանի և ՌԴ քաղաքների միջև կնքվեցին համաձայնագրեր՝ հետագա համագործակցության մասին:

Առաջին համաձայնագիրը ՌԴ-ի հետ ստորագրվել է Ստավրոպոլ քաղաքում 1994 թ. հոկտեմբերի 29-ին Ստավրոպոլ (Ռուսաստանի Դաշնություն) քաղաքի վարչակազմի և Երևանի (Հայաստանի Հանրապետություն) մայրաքաղաքի գործադիր կոմիտեի միջև[570], որով Երևանն ու Ստավրոպոլը հայտարարվեցին քույր քաղաքներ: 1995 թ. հունիսի 11-ին ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում Երևան քաղաքի գործադիր կոմիտեի և քույր քաղաք, ՌԴ մայրաքաղաք Մոսկվայի ղեկավարության միջև ստորագրվեց համաձայնագիր՝ տնտեսական, գիտատեխնիկական և կրթության ոլորտներում համագործակցության մասին: Դրան հաջորդեց 1996 թ. ապրիլի 3-ի և մայիսի 25-ի

[570] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 498, թ. 21, 22:

արձանագրությունների ստորագրումը Երևանի և Մոսկվայի հյուսիսարևելյան մարզի միջև, որի պատվիրակությունը այցելել էր Երևան: Շուտով՝ 1997 թ. հունիսի 16-ին, առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին նոր համաձայնագիր ստորագրվեց քույր քաղաքներ հռչակած Սանկտ Պետերբուրգի և Երևանի միջև[571]: Դրան հետևեց 1998 թ. մայիսի 29-ին ՌԴ հերոս քաղաք Վոլգոգրադի և ՀՀ մայրաքաղաք Երևանի միջև համագործակցության մասին նոր համաձայնագրի ստորագրումը, որը վերաբերում էր արդյունաբերական գործունեությանը, գիտության և տեխնոլոգիաների բնագավառներին: Այս համաձայնագրով երկու քաղաքները հռչակվեցին քույր քաղաքներ: Ի լրումն նշված համաձայնագրի՝ արձանագրություն ստորագրվեց ռուս-հայկական «Արարատ-Վոլգա» համատեղ բաժնետիրական ընկերության ստեղծման մասին[572]:

1990-1995 թթ. Երևանի և արտասահմանյան մի շարք քաղաքների միջև ստորագրված պայմանագրերը Ֆրանսիայի Լիոն և Մարսել, ԱՄՆ Քեմբրիջ, Հունաստանի Աթենք, Հարավսլավիայի (Սերբիա) Տիտոգրադ (այժմ՝ Պոդգորիցա) քաղաքների, Մոսկվայի, Օդեսայի, Կիևի և Ստավրոպոլի հետ եղել են բարեկամական և համագործակցության բնույթի՝ հիմնականում շոշափելով մշակութային և կրթական հարցեր: 1996 թ. ընթացքում նույնպես հանդիպումներ են տեղի ունեցել վերը նշված քաղաքների պատվիրակությունների և ներկայացուցիչների հետ, որոշ քաղաքների հետ ստորագրվել են նոր համաձայնագրեր և արձանագրություններ (Մոսկվա, Քեմբրիջ), ընդ որում՝ շեշտը դրվել է տնտեսական փոխշահավետ համագործակցության վրա: Քեմբրիջ-Երևան ասոցիացիայի ղեկավարների հետ համատեղ նախապատրաստվել է երկտարյա համագործակցության համաձայնագիր, որը կնքվեց 1996 թ. օգոստոսի 1-ին[573]:

1998 թ. հունիսի 16-ին Մասաչուսեց նահանգի Քեմբրիջ քաղաքը՝ ի դեմս քաղաքապետ Ֆ. Դուհեյի, և ՀՀ Երևան մայրաքաղաքը՝ ի

---

[571] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 498,, թ. 24:
[572] Տե՛ս նույն տեղում, թ. 25, 26:
[573] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 502, թ. 1, 2:

դեմս քաղաքապետ Ս. Աբրահամյանի, հիմնվելով 1987 թ. հոկտեմբերի 5-ի «Բարեկամության և համագործակցության մասին» պայմանագրի և 1996 թ. օգոստոսի 1-ին կնքված համագործակցության և փոխանակումների երկտարյա համաձայնագրի վրա և հաշվի առնելով Երևան և Քեմբրիջ քույր քաղաքների օրըստօրե աճող փոխադարձ հետաքրքրությունը միմյանց նկատմամբ, ստորագրեցին համագործակցության և փոխանակումների երկտարյա ծրագրի մասին համաձայնագիր:

1998 թ. հունիսի 16-ին Մասաչուսեց նահանգի Քեմբրիջ քաղաքը՝ ի դեմս քաղաքապետ Ֆ. Դուհեյի, և Հայաստանի Հանրապետության Երևան մայրաքաղաքը՝ ի դեմս քաղաքապետ Ս. Աբրահամյանի, հիմնվելով 1987 թ. հոկտեմբերի 5-ի «Բարեկամության և համագործակցության մասին» պայմանագրի և 1996 թ. օգոստոսի 1-ին կնքված համագործակցության ու փոխանակումների երկտարյա համաձայնագրի վրա և հաշվի առնելով Երևան և Քեմբրիջ քույր քաղաքների օրըստօրե աճող փոխադարձ հետաքրքրությունը միմյանց նկատմամբ, ստորագրեցին համագործակցության և փոխանակումների երկտարյա ծրագրի մասին համաձայնագիրը, որով կողմերը պայմանավորվում են շարունակել տեղեկատվության փոխանակումը և պատվիրակների փոխադարձ այցերը մշակույթի, պատմության, կրթության, գիտության, տնտեսության, շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, բժշկության, հոգեբանության, մարդու իրավունքների պաշտպանության, կոնֆլիկտների կառավարման, համայնքի կյանքի, հնէաբանության, սպորտի, զբոսաշրջության, ինչպես նաև քաղաքների կառավարման և զարգացման, քաղաքապետարանների ստորաբաժանումների գործունեության հետ կապված այլ բնագավառներում: Նշված առաքելությունները լիազորվում են նաև երկու հասարակական կազմակերպությունների՝ Քեմբրիջում՝ Քեմբրիջ-Երևան, իսկ Երևանում՝ Երևան-Քեմբրիջ քույր քաղաքների ասոցիացիաների կողմից՝ փոխհամաձայնեցնելով քաղաքապետարանների հետ[574]:

---

[574] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 500, թ. 12, 13:

1996 թ. հունիսի 4-ին Թբիլիսիում կնքվեց համաձայնագիր՝ Երևանը և Թբիլիսին քույր քաղաքներ հռչակելու վերաբերյալ[575]:

1996 թ. հուլիսի 23-ին 5 տարով Իտալիայի Տոսկանա մարզի հետ ստորագրվեց համագործակցության համաձայնագիր, և մարզի Ֆլորենցիա քաղաքը Երևանի հետ հայտարարվեց քույր քաղաք: Քաղաքապետարանի պատվիրակության՝ Իտալիա կատարած այցի ժամանակ արվեցին առաջին քայլերը տնտեսական կապերն ամրապնդելու ուղղությամբ: Երևանի քաղաքապետարանի պատվիրակության կողմից 1996 թ. սեպտեմբերին Մոսկվա կատարած այցի ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց հաստատելու բազմակողմանի համագործակցություն: 1997 թ. վերականգնվեցին կապերը Հունաստանի մայրաքաղաք Աթենքի հետ, որը դեռևս 1993 թ. հռչակվել էր Երևանի քույր քաղաք[576]:

1997 թ. ապրիլի 27-ին բարեկամական կապերի հաստատման և ամրապնդման ուղղությամբ ստորագրվեցին համաձայնագրեր մայրաքաղաք Երևանի և Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի ու Չինաստանի Ցյանին քաղաքների հետ: Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսը հայտարարվեց Երևանի քույր քաղաք: Այդ համաձայնագրի հիման վրա 1998 թ. Երևանում կազմակերպվեց Սիրիայի Արաբական Հանրապետության ապրանքների ցուցահանդես-վաճառք[577]:

Չինական կողմի հետ համաձայնագիրը ստորագրվեց 1997 թ. գարնանը՝ քաղաքապետի Չինաստան կատարած այցի ժամանակ: Նույն թվականին՝ Երևանի քաղաքապետի կատարած այցի ժամանակ, եղբայրական և բարեկամական կապեր հաստատվեցին Եգիպտոսի Կահիրե մայրաքաղաքի հետ:

Երևանի քաղաքապետարանը դարձավ «Քույր-քաղաքներ ասոցիացիա», «Հարավռուսական քաղաքների ասոցիացիա» միջազգային կազմակերպությունների անդամ: 1996 թ. ընթացքում քաղաքա-

---

[575] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 502, թ. 1, 2:

[576] Տե՛ս Է. Մինասյան, Մայրաքաղաք Երևանի արտաքին կապերը, համագործակցությունը միջազգային կառույցների և քույր քաղաքների հետ // Մ. Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, 2018, էջ 198:

[577] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 502, թ. 19, 20:

պետարանն ընդգրկվել է մի շարք միջազգային ծրագրերում: Մայրաքաղաք Երևանը ընդգրկվեց ՏԱՍԻՍ զույգ քաղաքների ընդհանուր ծրագրում, որն առաջարկվել էր Եվրոմիության կողմից և ընդգրկել է բազմաթիվ ոլորտներ (քաղաքային տնտեսության կառավարում, էներգամատարակարում, բնապահպանություն): Նախապատրաստվել և իրականացվել է ծրագիր «Երևանում խմելու ջրի կառավարման բարելավում» թեմայով: Այս ծրագրի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել էին ֆրանսիական կողմին (Մարսել): NANCIE ջրի միջազգային կենտրոնի հետ նախապատրաստվել էր տեխնիկական համագործակցության նախագիծ, որի համաձայն՝ Երևանում անցկացվեցին սեմինարներ ֆրանսիացի մասնագետների մասնակցությամբ: Լիոնի քաղաքապետարանի հետ միասին իրականացվեց ՏԱՍԻՍ զույգ քաղաքների նախագիծ: 1996 թ. օգոստոսի 13-ին քաղաքապետարանը համաշխարհային բանկ ներկայացրեց «Փոխըմբռնման հուշագիր», որով քաղաքապետարանն իր հետաքրքրությունն հավաստիացրել առաջարկված մունիցիպալ զարգացման նախագծի վերաբերյալ և այլ ներկայացրեց փուլ առ փուլ:

1998 թ. Երևան մայրաքաղաքը դարձավ ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների, Միջազգային Ասամբլեայի կազմակերպության անդամ: Նույն թվականին ՀՀ մայրաքաղաքը դարձավ Ֆրանսախոս քաղաքների միջազգային ասոցիացիայի (AIMF) լիիրավ անդամ և Սևծովյան մայրաքաղաքների ասոցիացիայի և Քույր քաղաքների միջազգային ասոցիացիայի անդամ[578]:

Լիոն-Երևան ասոցիացիայի ղեկավարների հետ համատեղ նախապատրաստվեց նոր համագործակցության ծրագիր, որը իրականացվեց 1997 թ-ին և շարունակվեց մինչև 1998 թվականը: 1998 թ. սեպտեմբերին Լիոնի քաղաքապետարանի պատվիրակության Երևան կատարած այցի ընթացքում քննարկվեցին իրականացվող համատեղ աշխատանքների (1998-1999) հիմնական ուղղությունները, մասնավորապես աղբահանության, քաղաքային լուսավորման, քաղաքաշինության բնագավառներում, որոնք հաջողությամբ իրենց

[578] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 507, թ. 16-18:

լուծումն ստացան: 1998 թ. մայիսի 29-ին ստորագրվել է 2 համաձայնագիր Կանադայի Մոնրեալ և Ֆրանսիայի Փարիզ քաղաքի հետ, որոնք հաջողությամբ իրենց լուծումն ստացան: Երևանի քաղաքապետի գլխավորությամբ քաղաքապետարանի Կանադայի Մոնրեալ քաղաք կատարած այցի ժամանակ քննարկվեցին համագործակցության ծրագրեր: Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը այցելեց նաև (քաղաքապետի գլխավորությամբ) Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզ: Այդ ընթացքում ստորագրված համաձայնագրով իրականացվեցին մշակութային և տեխնիկական փոխանակումներ երկու մայրաքաղաքների միջև[579]:

Նույն թվականին վերականգնվեցին խզված կապերը Հունաստանի Աթենք քաղաքի հետ, որը մայրաքաղաք Երևանի հետ քույր քաղաք էր հռչակվել1993 թվականին:

Դեռևս 1988-1989 թթ.՝ Իտալիայի Կառռաա և Երևանի քաղաքային պատվիրակությունների փոխադարձ այցելություններից հետո, երկու քաղաքները՝ Երևանն ու Կառռաան, հռչակվեցին քույր քաղաքներ, և այդ պատվիրարկությունների բանակցությունների արդյունքում ստորագրվեց փոխադարձ համագործակցության և բարեկամության համաձայնագիր[580]:

Երեք տարի անց դրան հաջորդեցին դեռևս 1974 թ. և 1981 թ. մայրաքաղաք Երևանի քույր քաղաքներ հռչակված Սերբիայի՝ Տիտոգրադի (Պոգդորիցա) և Մադագասկարի Անտանանարիվու քաղաքների ու Երևանի միջև ստորագրված համագործակցության համաձայնագրերը: Նմանատիպ համաձայնագիր ստորագրվեց նաև 1987 թ. Երևանի քույր քաղաք հռչակված Քեմբրիջ քաղաքի (ԱՄՆ) հետ[581]:

ՀՀ անկախության առաջին տարիներին՝ 1992 թ., Երևանի քույր քաղաք հռչակվեցին հայաշատ Մարսելը (Ֆրանսիա), իսկ 1993 թ. ֆրանսիական մեկ այլ քաղաք՝ Լիոնը, 1994 թ.՝ Ստավրոպոլը (Ռուսաստանի Դաշնության) քաղաքներից:

---

[579] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 503, թ. 2-3:
[580] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 502, թ. 16, 17:
[581] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. հոդված, էջ 198:

1990-ական թթ. սկզբին Երևանի քաղաքապետարանի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ստորագրվեց պայմանագիր՝ համագործակցության մասին: 1991 թ. փետրվարի 2-ին ստորագրվեց համաձայնագիր՝ Երևանի քաղխորհրդի և Իրանի արդյունաբերության և արհեստագործության վարչության հետ համատեղ վերականգնելու կապույտ մզկիթը: Մզկիթի հետ կապված հարցերը քննարկվել են քաղաքապետի և Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի միջև հանդիպման ժամանակ (31.07.1996): Պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ մշակվեր շինարարական աշխատանքների նախագիծ և այն հաստատվեր քաղաքապետարանի կողմից: Քաղաքապետի կողմից նույն թվականի օգոստոսի 2-ին հանձնարարականներ տվեցին քաղաքապետարանի ստորաբաժանումներին կարգավորելու (Կապույտ մզկիթի) հետ կապված հարցերը և թույլատրել իրականացնել շինարարական աշխատանքները: Իրանական կողմը նույն ժամանակ խնդրել էր հատկացնել տարածք դեսպանատան նոր շենքի կառուցման համար: Երքաղխորհրդի գործկոմի 1995 թ. դեկտեմբերի 29-ի N 49-34 որոշումով Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան համալիրի շինարարության համար Դավիթ Բեկ փողոցի մոտ հատկացվել էր 5,0 հա հողատարածք:

1995 թ. մայիսի 5-ին ստորագրվեց համագործակցության նոր համաձայնագիր Երևանի և Իրանական Իսլամական Հանրապետությունների հետ: Համաձայնագիրը ներառեց մշակույթի, կրթության, տնտեսության, սպորտի և քաղաքների կառավարման բնագավառները: Այդ ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկվեցին ոչ միայն 1990-ական թթ. երկրորդ կեսին, այլև 2000-ական թթ. նույնպես: Պատահական չէ, որ Սպահանը 2000 թ. հռչակվեց մայրաքաղաք Երևանի քույր քաղաք: 2000 թ. ապրիլի 25-ից մայիսի 2-ը Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Ա. Բազեյանի գլխավորությամբ, մեկնեց Իրանի Իսլամական Հանրապետություն՝ Թեհրան և Սպահան քաղաքներ: Այցի ընթացքում կնքվեց եղբայրացման ու համագործակցության մասին համաձայնագիր[582]:

[582] Տե՛ս ՀԱԱ, ֆ.. 257, ց. 1, գ. 506, թ. 1, 2:

1998 թ. համաձայնագրեր ստորագրվեցին և բարեկամական կապեր հաստատվեցին Հնդկաստանի Կալկաթա, ՌԴ Նիժնի Նովգորոդ և ԱՄՆ Լոս Անջելես քաղաքների հետ: Վերջինս 2005 թ. հռչակվեց մայրաքաղաք Երևանի քույր քաղաք[583]:

1999 թ. Երևանի քույր քաղաք հռչակվեցին Բրազիլիայի Սան-Պաուլո քաղաքը, 2000 թ.՝ Բրատիսլավան (Սլովակիա), Քիշնևը (Մոլդովա), Բեյրութը (Լիբանան), 2001 թ.՝ Կիևը (Ուկրաինա), Մոնրեալը (Կանադա), 2002 թ.՝ Մինսկը (Բելառուս), 2005 թ.՝ Ռիո դե Ժանեյրոն (Բրազիլիա), Լոս Անջելեսը (ԱՄՆ), 2006 թ.՝ Դոնի Ռոստովը (Ռուսաստանի Դաշնություն) և 2007 թ .՝ Նիցցան (Ֆրանսիա) [584]:

2001 թ. փետրվարի 1-2-ը Երևանի քաղաքապետը ՀՀ նախագահի գլխավորությամբ Կիև կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրեց Երևան և Կիև քաղաքների միջև համագործակցության պայմանագիր, որով երկու հանրապետությունների մայրաքաղաքները հռչակվեցին քույր քաղաքներ[585]:

2001 թ. մարտի 16-18-ը տեղի ունեցավ քաղաքապետ Ռ. Նազարյանի ղեկավարությամբ քաղաքապետարանի պատվիրակության այցը Թբիլիսի: Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը պաշտոնապես հրավիրել էր Թբիլիսիի քաղաքապետ Ի. Զողելավան: Այցի նպատակն էր 2 քաղաքների միջև տնտեսական և մշակութային կապերի վերականգնման և ավելի խոր ինտեգրացման ծրագրերի ու տեղի հայկական համայնքին վերաբերող խնդիրների քննարկումը: Պատվիրակությանը ընդունեց նաև Վրաստանի նախագահ Է. Շևարնաձեն: Երևանյան կողմը իր հետ տարել էր Խոջիվանքի պանթեոնի վերակառուցման նախագիծ, որը տեղում ներկայացվեց Ի. Զողելավային: Նա խոստացավ 3 ամսվա ընթացքում լիովին վերակառուցել պանթեոնը և ցանկապատել: ՀՀ դեսպանատանը տեղի ունեցավ քաղաքապետ Նազարյանի հանդիպումը հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Քննարկվեց Թիբլիսիի հայկական թատրոնի խնդիրները: Քաղաքապետը խոստացավ ցույց տալ հնարավոր օգնություն:

---

[583] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. հոդվածը, էջ 199:
[584] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 506, թ. 1,2:
[585] Տե՛ս նույն տեղում:

2006 թ. հոկտեմբերի 22-ից 23-ը քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցեց Թբիլիսի քաղաքի օրվա տոնակատարություններին: Հաջորդ տարվա հոկտեմբերի սկզբին տեղի ունեցավ Թբիլիսիի քաղաքապետի ղեկավարած պատվիրակության փոխադարձ այցը Երևան՝ մասնակցելով Երևան քաղաքի օրվա տոնակատարություններին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև հայկական եկեղեցին վերականգնելու համար: Կողմերը որոշեցին Երևանում բացել վրացական ապրանքների և Թբիլիսիում հայկական ապրանքների վաճառքի խանութներ:

2000 թ. մարտի 25-30-ը Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ փոխքաղաքապետ Վ. Վարդապետյանի գլխավորությամբ, պաշտոնական այցով այցելեց Մոլդովայի հանրապետության Քիշինև քաղաք, որի ժամանակ կնքվեց համաձայնագիր Քիշինև և Երևան քաղաքների միջև բարեկամական կապերի հաստատման մասին: Երկու քաղաքները հռչակվեցին քույր քաղաքներ[586]:

2000 թ. ապրիլի 27-30-ը Երևանում էր գտնվում Բրատիսլավիայի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ փոխքաղաքապետ Մինարիկի գլխավորությամբ, որի ժամանակ կնքվեց համաձայնագիր եղբայրացման և համագործակցության մասին, որով Բրատիսլավիան և Երևանը հռչակվեցին քույր քաղաքներ[587]:

Նույն թվականի հուլիսի 27-29-ը Երևանում էր գտնվում 1995 թ. երևանի քույր քաղաք հռչակված Օդեսայի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Ռուսլան Բոդելանի գլխավորությամբ: Այցի ընթացքում ստորագրվեց եղբայրացման ու համագործակցության հանաձայնագիր:

2000 թ. մայիսի 18-ին քաղաքապետ Ա. Բազեյանի գլխավորությամբ քաղաքային պատվիրակության Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրես կատարած այցելության արդյունքում ստորագրվեց համաձայնագիր Երևան քաղաքի (Հայաստան) և Բուենոս Այրես քաղաքի (Արգենտինա) միջև բարեկամության և համագործակցության մասին: 13 հոդվածից բաղկացած համաձայնագրի 1-ին հոդվածում

---

[586] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 506, թ. 2:
[587] Տե՛ս նույն տեղում:

Երևանն ու Բուենոս Այրեսը պաշտոնապես հռչակվում էին քույր քաղաքներ՝ որպես երկու ժողովուրդների ազատության, համագործակցության և ներդաշնակ գոյակցության ընդհանուր զգացմունքի արտահայտություն: Համաձայնագրով համագործակցությունն ընդգրկում էր տնտեսական զարգացման, քաղաքաշինության զբոսաշրջության, առողջապահության, սոցիալական ծառայությամբ, գիտության ու կրթության, մշակույթի և այլ ոլորտները[588]:

2001 թ. հուլիսի 5-9-ը Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանի հրավերով Երևանում էր գտնվում Մոնրեալի քաղաքապետարանի պաշտոնական պատվիրակությունը՝ քաղաքապետ Պ. Բուրքի գլխավորությամբ: Բացի ճանաչողական և մշակութային ծրագրերից՝ նրանք քննարկեցին տնտեսական, զբոսաշրջության և այլ ոլորտների համագործակցության հարցեր: Մոնրեալի քաղաքապետին ընդունեցին հանրապետության նախագահը, վարչապետը և Ամենայն հայոց կաթողիկոսը:

Հուլիսի 5-ին քաղաքապետարանում ստորագրվեց համագործակցության պայմանագիր, որով Մոնրեալը և Երևանը հռչակվեցին քույր քաղաքներ: Մոնրեալից ժամանած գործարարների համար կազմված էր հատուկ ծրագիր: Նրանք ունեցան բազմաթիվ հանդիպումներ մայրաքաղաքի հայ գործարարների հետ, և ձեռք բերվեցին նախնական պայմանավորվածություններ[589]:

1990-ական թթ. երկրորդ կեսից մայրաքաղաքը ընդգրկվեց մի շարք միջազգային ծրագրերում:

1998 թ. Երևանը դարձավ «Խոշոր քաղաքների և մայրաքաղաքների միջազգային ասամբլեա» միջազգային կազմակերպության անդամ: Նույն թվականին ՀՀ մայրաքաղաքը դարձավ «Ֆրանսախոս քաղաքների միջազգային ասոցիացիայի» (AIMF) լիիրավ և «Սևծովյան մայրաքաղաքների ասոցիացիայի» և «Քույր քաղաքների միջազգային ասոցիացիայի» անդամ[590]:

2000 թ. մարտի 13-14-ը Լիժեում (Բելգիա) կայացավ AIMF տարեկան համաժողովը, որի աշխատանքներին Երևանի քաղաքապե-

---

[588] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 505, թ. 1,2,3,4,5,6:
[589] Տե՛ս նույն տեղում, թ. 64, 65:
[590] Տե՛ս նույն տեղում, թ. 18:

տարանի կողմից մասնակցեցին Ն. Սարգսյանն ու Հ. Ահարոնյանը[591]:

Նույն թվականի հունիսի 15-16-ը Փարիզում կայացած AIMF 20-րդ գլխավոր ասամբլեայի նիստին մասնակցեց քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Ա. Բազեյանի գլխավորությամբ:

2000 թ. սեպտեմբերի 5-6-ը Անկարայում տեղի ունեցավ «Սևծովյան մայրաքաղաքների ասոցացիայի» առաջին գլխավոր ասամբլեան, որի ընթացքում ստորագրվեց հռչակագիր:

2001 թ. հունվարի 2-ին Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը ճապոնական «Ջայկա» ֆիրմայի ներկայացուցիչ Ջունկո Հարայի հետ ստորագրեց համագործակցության համաձայնագիր: Հանդիպման քննարկման առարկան էր ճապոնական կառավարության կողմից Երևանի քաղաքապետարանին տրամադրվող «Երևանի ճանապարհների վերանորոգում» դրամաշնորհային ծրագրի իրականացումը: Հանդիպման ժամանակ Ջունկո Հարան հավաստեց, որ դրամաշնորհման գործընթացը բնականոն ընթացքի մեջ է: 2001 թ. ապրիլ-մայիսին Երևան ժամանեցին «Ջայկայի» մասնագետները, որին հետևեց կառավարության որոշումը 8 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարի տրամադրումը Երևանի քաղաքապետարանին՝ ճանապարհաշինարարական մեխանիզմներ ձեռք բերելու նպատակով[592]:

2001 թ. փետրվարի 1-2-ը ՀՀ նախագահի գլխավորությամբ Կիև կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվեց Երևան և Կիև քաղաքների միջև համագործակցության պայմանագիր, որով երկու հանրապետությունների մայրաքաղաքները հռչակվեցին քույր քաղաքներ[593]:

2001 թ. հունիսի 12-ից 27-ը Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը, արտաքին կապերի վարչության պետի հետ միասին գործուղվել է Մոսկվա և Աստանա քաղաքներ՝ ՔՄԱ 5-րդ նստաշրջանին մասնակցելու: Այցի ընթացքում քննարկվել են «Էլեկտրոնային Պորտալ» և «Քաղաքը քաղ աքին» ծրագրերի շրջանակներում երկու քաղաքնե-

---

[591] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 505, թ. 2, 5:
[592] Տե՛ս նույն տեղում, թ. 1-6:
[593] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 507, թ. 18-19:

րի համագործակցության խնդիրները: Զեկուցումներով հանդես են եկել Երևանի և Մոսկվայի քաղաքապետերը[594]:

Քույր քաղաքների քաղաքապետերը Երևանի քաղաքապետի հրավերով 2001 թ. հունիս ամսին Հայաստանում մասնակցեցին քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված տոնակատարություններին:

2002 թ. Երևանը դարձավ միջազգային քաղաքային համայնքների լուսավորում (LUCI) ասոցացիայի, իսկ 2005 թ.՝ համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության անդամ: Երևանի քաղաքապետարանը 1998 թ. անդամակցեց «Խոշոր քաղաքների և մայրաքաղաքների միջազգային ասամբլեա» միջազգային կազմակերպությանը: Այդ նույն թվականի նոյեմբերի 27-29-ը Երևանի քաղաքապետարանը (փոխքաղաքապետ Կ. Արեյանի գլխավորությամբ) մասնակցեց Թունիսում կայացած AIMF ամենամյա ժողովին: Հոկտեմբերին Երևան ժամանեցին AIMF մի խումբ փորձագետներ: Այցի նպատակն էր տեղում ծանոթանալ Երևանի առջև ծառացած խնդիրներին հետագա փոխհամագործակցության հաստատման ու աջակցության ցուցաբերման համար:

Դեռևս 1998 թ. ընթացքում քաղաքապետարանն ընդգրկվել էր հետևյալ միջազգային ծրագրերում:

Առաջին. 1998 թ. Համաշխարհային բանկի կողմից հաստատվել էր ծրագրային վարկը մունիցիպալ զարգացման նախագծի վերաբերյալ: Ծրագիրն ընդգրկում էր հիմնականում կառուցվածքային զարգացման, բնակեցման, ջրի և ջրային թափոնների խնդիրները: Քաղաքապետարանը մասնակցեց ծրագրերին ընդհանուր ներդրման արժեքի 20 %-ի չափով՝ վերցնելով երկարաժամկետ անտոկոս վարկ: Ստորագրվեց ՀԲ-ի հետ համապատասխան համաձայնագիրը:

Երկրորդ. Շարունակվեցին աշխատանքները ճապոնական կառավարության դրամաշնորհի հաշվին Երևանում ժամանակակից աղբահավաքման համակարգի բարելավման, Դավթաշենի կամուրջի շինարարական աշխատանքների ավարտման, Երևանի ճանապարհների վերականգնման վերաբերյալ:

---

[594] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 257, ց. 1, գ. 507, թ. 61, 62:

1990-ական թթ. արտասահմանյան ֆիրմաների հետ կապերի շրջանակներում իրականացվեցին աշխատանքներ ֆրանսիական ONYX միջազգային կազմակերպության և քաղաքապետարանի միջև ստորագրվեց «Փոխըմբռնման հուշագիր»՝ Երևանում համատեղ աղբավերամշակման գործարան կառուցելու և ժամանակակից աղբահանման համակարգ ստեղծելու վերաբերյալ: Հոկտեմբերին կատարվեց մի խումբ փորձագետների այց Երևան: Վերջիններս քաղաքապետարանի հետ կազմեցին համատեղ ձեռնարկություն ստեղծելու նախագիծ: Աշխատանքները իրականացվեցին ժամանակին:

1998-2000 թթ. նույն ուղղությամբ աշխատանքներ տարվեցին նաև գերմանական «Ալտֆատեր» ֆիրմայի հետ, որի հետ իրականացվեց մեկ այլ նախագիծ:

2003 թ. դեկտեմբերի 3-9 քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունը Լիոնում (Ֆրանսիա) մասնակցեց տեղեկատվական հասարակության մեծ քաղաքների համաշխարհային համաժողովին, իսկ դեկտեմբերի 10-12-ին մասնակցեց քաղաքապետարանների ղեկավարների համաժողովին, որտեղ ընդունվեց հռչակագիր՝ ուղղված պետությունների ղեկավարներին:

Ամրապնդվեցին ու ընդլայնվեցին մայրաքաղաքի կապերը ՌԴ մի շարք քաղաքների հատկապես Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի միջև: 2004թ. հունիսի 24-26-ը տեղի ունեցավ Մոսկվայի քաղաքապետարանի քաղաքաշինության կոմիտեի և Մոսկվայի կենտրոնական վարչական շրջանի պատվիրակությունների այցը Երևան, որի ընթացքում ձեռք բերվեցին գործնական համաձայնություններ՝ համատեղ ծրագրերի իրագործման նպատակով: Նույն թվականի սեպտեմբերի 15-18-ին քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայում մասնակցեց Աշխարհի քաղաքապետերի 3-րդ համաժողովին[595]: Դեկտեմբերի 2-3-ին Մոսկվայի քաղաքապետ Յու. Լուժկովի գլխավորած պատվիրակությունն այցելեց Երևան: Ստորագրվեց Երևանի և Մոսկվայի 2005-2007 թթ. համագործակցության պայմանագիր, որն ընդգրկում էր տնտեսության, ճարտարապետության և քաղաքաշինության, կրթության և գիտության

[595] Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 203:

ոլորտները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Մոսկվայում կառուցելու Երևանի առևտրի և հյուրանոցագործարարական կենտրոններ, ինչպես նաև մեծածախ բաշխման համալիր: Միայն առևտրի կենտրոնի շինարարությունն արժեր մոտ 60 մլն դոլար[596]:

Պատվիրակությունն այցելեց նաև Մոսկվայի կառավարության ջանքերով Երևանում կառուցված Մոսկովյան ծառուղին:

2005-2009 թթ. նույնպես շարունակվեցին համագործակցության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները: 2005 թվականի հունիսի 15-16-ին Երևան այցելեց Մոսկվայի քաղաքապետի առաջին տեղակալ Վլադիմիր Ռեսինը՝ ծանոթանալու Մոսկվայի և Երևանի շինարարների միասնական ուժերով բնակելի շենքերի շինարարության ընթացքին: Այնուհետև հյուրերն այցելեցին Երևանի քաղաքապետարան, որտեղ Մոսկվայի փոխքաղաքապետ Վլադիմիր Ռեսինին հանդիսավորությամբ շնորհվեց «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում[597]:

Սեպտեմբերի 13-14-ին քաղաքապետ Ե. Զախարյանի հրավերով Երևան այցելեց Սանկտ Պետերբուրգի քաղաքապետ Վ. Մատվիենկոյի գլխավորած պատվիրակությունը:

Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ընդլայնելու ապրանքաշրջանառության ծավալը, համագործակցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ինչպես նաև Երևանում կառուցելու Սանկտ Պետերբուրգի, իսկ Սանկտ Պետերբուրգում՝ Երևանի տուն:

2005 թ. հոկտեմբերի 7-8-ին քաղաքապետ Ե. Զախարյանի հրավերով Երևան այցելեց Յու. Լուժկովի գլխավորած պատվիրակությունը: Երևանում անցկացվեցին Սանկտ Պետերբ ուրգ և Մոսկվա քաղաքների օրեր: Այդ նույն ժամանակ Երևանում անցկացվեցին նաև հայ-իտալական բարեկամության օրեր: 2006 թ. սեպտմեբերի 9-12-ը քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցեց Մոսկվայում Երևանի օրեր տոնակատարություններին:

---

[596] Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 203:
[597] Նույն տեղում, էջ 204:

ԵՐԵՎԱՆԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Երևանի խորհրդի 2004 թ. սեպտեմբերի 27-ի նիստում փոփոխություն կատարվեց Երևանի քաղաքային խորհրդի 1995 թ. ապրիլի 26-ի «Երևանի զինանշանի մասին» հ. 1/8-2 որոշման մեջ. փոփոխվեց Երևանի զինանշանի նկարագրական մասը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝ Երևան քաղաքի ավագանու 12.04.2010 թ. «Երևան քաղաքի խորհրդանիշների մասին» N 85-Ն որոշման համաձայն՝ զինանշանն ունի հետևյալ նկարագիրը. կապույտ ֆոնին հայերեն բրոնզագույն մեծատառերով մակագրված «ԵՐԵՎԱՆ» պատվանդանին կանգնած, գլուխը ետ շրջած, իշխանության խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է՝ մեջտեղից բարձրացող Կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով: Առյուծի կրծքին՝ հավերժության նշանի վրա, Արարատ լեռան պատկերն է: Ողջ պատկերը երիզված է ուղղանկյունաձև վահանակով: Գործածված են բրոնզագույն և կապույտ գույները: Երևանի զինանշանի հեղինակն է Ալբերտ Սոխիկյանը:

ԵՐԵՎԱՆԻ ԴՐՈՇԸ

2004 թ. իրականացված մրցույթի արդյունքում, որն ամփոփվեց 2004 թ. սեպտեմբերի 27-ին՝ Երևանի խորհրդի նիստում, խորհրդի N 12/1 որոշմամբ հաստատվեց Երևանի դրոշը՝ որպես Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի խորհրդանիշ: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝ Երևան քաղաքի ավագանու 12.04.2010թ. «Երևան քաղաքի խորհրդանիշների մասին» N 85-Ն որոշման համաձայն՝ դրոշն ունի հետևյալ նկարագիրը. դրոշի ուղղանկյուն խաղապատկերն ընտրված է սպիտակ՝ որպես մաքրության, պարզության, անաղարտության միացյալ խորհրդանիշ: Կենտրոնում Երևանի զինանշանն է՝ շրջապատված 12 կարմիր եռանկյունիներով, որոնք խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները: Զինանշանի երանգը ծիրանագույն և բրոնզագույն է՝ կապույտով երիզված: Ազգային դրոշի գույները համահեղինակներն օգտագործել են՝ ընդգծելու դրոշի մայրաքաղաքային նշանակությունը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1:2-ի: Լայնության և երկարության հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաև փոքր կամ մեծ չափի դրոշ: Երևանի դրոշի հեղինակներն են Կարապետ Աբրահամյանը և Կարապետ Փաշյանը: Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թ. ապրիլի 12-ի «Երևան քաղաքի խորհրդանիշների մասին» N 85-Ն որոշումը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Երևան քաղաքի ավագանու 18.06.2010թ. թիվ 118-Ն որոշմամբ սահմանվել են Երևան քաղաքի խորհրդանիշների պարտադիր օգտագործման այլ դեպքերը և կարգը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐ (1989-2020)

Արտաշես
Գեղամյան
10.11.1989-02.10.1990

Համբարձում
Գալստյան
04.12.1990-22.12.1992

Վահագն
Խաչատրյան
22.12.1992-22.02.1996

Աշոտ
Միրզոյան
23.02.1996-07.11.1996

Վանո
Սիրադեղյան
14.11.1996-02.02.1998

Սուրեն
Աբրահամյան
06.05.1998-15.06.1999

Ալբերտ
Բազեյան
09.08.1999-10.01.2001

Ռոբերտ
Նազարյան
11.01.2001-30.06.2003

Երվանդ
Զախարյան
02.07.2003-04.03.2009

Գագիկ
Բեգլարյան
31.05.2009-08.12.2010

Կարեն
Կարապետյան
17.12.2010-28.10.2011

Տարոն
Մարգարյան
15.11.2011-09.07.2018

Հայկ
Մարուքյան
10.10.2018-ից

Աստաֆյան փողոցը, 1920 թ.

Ալավերդյան-Կնունյանց փողոցների խաչմերուկ, 1937 թ.

Պետ. թատրոնի շենքը, 1920 թ.

«Գրանդ Հոթել» հյուրանոցը Կրեպոստնայա,
այժմ՝ Վ. Սարգսյանի փողոցում, 1920-ական թթ.

Աբովյան փողոցի սկզբնամասը, 1921 թ.

Սբ Աննա՝ Նիկոլաևյան ռուսական եկեղեցին Բերդի, այժմ՝ Վ. Սարգսյանի փողոցում, 1920-ական թթ.

Տեսարան Թումանյան փողոցից, 1967 թ.

Երևանի ընդհանուր տեսարան, 1974 թ.

Մատենադարան, 1975 թ.

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը

Երիտասարդական պալատը (Կուկուռուզնիկ), 1979 թ.

Երևանի պետհամալսարանը, 1970 թ.

Երևանի Լենինի անվան հրապարակը, 1968 թ.

Տեսարան Նոր- Նորքից

Հրազդանի կիրճում

Կառավարության շենքին եռագույն դրոշի բարձրացման արարողություն

Հայաստանի պատմության թանգարանի և Հայաստանի ազգային պատկերասրահի շենքը

Հանրապետության հրապարակի շատրվանները

Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը

Գիշերային Երևան

Կարապի լիճը

«Էրեբունի-Երևան 2796» տոնակատարությունը

Տեսարան Երևան քաղաքից

Երևանի կայարանամերձ հրապարակը

2007 թ. մարտի 24-ին Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի մասնակցությամբ Մոսկվայում տեղի ունեցավ «Երևան» առևտրի տան բացման արարողությունը: Նույն թվականին մարտի 23-ին Երևան ժամանեց Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի գլխավորած պատվիրակությունը:

Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու մայրաքաղաքների միջև 2005-2007 թթ. համագործակցության ծրագրով նախատեսված աշխատանքները: Ապա Երևանի և Մոսկվայի քաղաքապետերի մասնակցությամբ տեղի ունեցավ Երևանում Մոսկվայի տան բացման հանդիսավոր արարողությունը: Այն երկու մայրաքաղաքների միջև համագործակցության խոշոր նախագծերից էր: Սա 2003 թ. ստորագրված Մոսկվայի և Երևանի միջև ճարտարապետության, քաղաքաշինության, կրթության, տնտեսության տարբեր բնագավառներում համագործակցության ծրագրային փաստաթղթերի հիմնական նախագծերից էր: Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչները Ե. Զախարյանի աշխատասենյակում նրան հանձնեցին պատվոգիր համայնքին ցուցաբերած աջակցության համար: Հյուսիսային պողոտայում Ե. Զախարյանն ու Յու. Լուժկովը մասնակցեցին հիմնաքարի տեղադրման արարողությանը: Շենքը կառուցեց մոսկովյան «Մոնարխ» ընկերությունը, որով կյանքի կոչվեց Երևանի և Մոսկվայի համատեղ նախագծերից մեկը: Այցի ընթացքում տեղի ունեցավ Յու. Լուժկովի «Պատմության վերակերտումը» գրքի (հայերեն թարգմանությամբ) շնորհանդեսը: Գրքի թարգմանությունն ու հրատարակությունն իրականացվել են «Ռուսաստանի հայեր» համառուսաստանյան հասարակական կազմակերպության և նրա նախագահ Արա Աբրահամյանի նախաձեռնությամբ[598]:

Մարտի 25-27-ը Սանկտ Պետերբուրգում Երևան և Սանկտ Պետերբուրգ քաղաքների միջև ստորագրվեց 2007-2009 թթ. համագործակցության ծրագիր:

2007 թ. դեկտեմբերի 6-8-ը քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունը այցելեց Մոսկվա: Մոսկվայի և

[598] Տե՛ս Երվանդ Զախարյան, Երևան, 2013, էջ 101:

Երևանի քաղաքապետերը Մոսկվայում վավերացրին համագործակցության նոր ծրագիր 2008-2011 թթ. համար, որով նախատեսվեց Մոսկվայում հիմնել Երևանի տուն[599]:

2007 թ. ապրիլի 15-20-ը քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունը այցելեց Գերմանիա, որտեղ տեղի ունեցան հանդիպումներ Բադեն Բյուրթենբերգ երկրամասի վարչապետ Օթինգերի և Կարլս Ռուհերի քաղաքապետ Հայնց Ֆենրիխի հետ: Երևանը քույր քաղաքների համագործակցության հուշագիր վավերացրեց Ռիո դե Ժանեյրո (Բրազիլիա) և Նիցցա (Ֆրանսիա) քաղաքների հետ:

2007 թ. սեպտեմբերի 20-ին Երևան ժամանեց Ֆրանսիայի Նիցցա քաղաքի քաղաքապետ, սենատոր Ժակ Պեյրայի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպումից հետո տեղի ունեցավ Երևանը և Նիցցան քույր քաղաքներ հռչակելու մասին համաձայնագրի ստորագրման պաշտոնական արարողությունը: Համաձայնագրով Նիցցան և Երևանը պաշտոնապես հայտարարվեցին քույր քաղաքներ: Երևանում 2007 թ. սեպտեմբերի 30-ին բացվեց «Ֆրանսիայի հրապարակ» հուշատախտակը Սայաթ-Նովա–Բաղրամյան–Մաշտոցի պողոտաների խաչմերուկում: Ներկա էին ՀՀ և Ֆրանսիայի նախագահներ Ռ. Քոչարյանը և Ժ. Շիրակը: Բացման արարողությանը ելույթ ունեցավ Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանը:

Նույն թվականի նոյեմբերի 22-25-ը Նիցցայի քաղաքապետ Ժ. Պեյրայի հրավերով Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Ֆրանսիա: Նիցցայում երկու քաղաքապետերը վավերացրեցին համաձայնագիր, որով նախատեսվեց սերտ համագործակցություն կրթության, առողջապահության, մշակույթի, տնտեսության և այլ ոլորտներում: 2007 թ. հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ Մարսելի քաղաքապետ Ժ. Գողենի պաշտոնական այցը Երևան: Ստորագրվեց երկու քաղաքների բարեկամության և համագործակցության պայմանագիրը, որով Երևանն ու Մարսելը հռչակվեցին քույր քաղաքներ:

2007 թ. սեպտեմբերի 4-6-ը Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի հրավերով Երևան այցելեց Հնդկաստանի Դելի նահանգի

[599] Տե՛ս Երվանդ Զախարյան, Երևան, 2013, էջ 101:

գլխավոր նախարար տիկին Շ. Դիքշիթը: 2008 թ. սեպտեմբերին Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Հնդկաստանի Հանրապետության մայրաքաղաք Դելի՝ Հայկական փողոցի բացման արարողությանը մասնակցելու և երկու քաղաքների միջև բարեկամության համաձայնագիր ստորագրելու նպատակով: Հնդկաստանի մայրաքաղաք Դելիի փողոցներից մեկն անվանակոչվեց «Արմենիա»: Արարողությանը ներկա էր Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանը: Ստորագրվեց համագործակցության պայմանագիր[600]:

2008 թ. մայիսին Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Սոֆիա (Բուլղարիա)՝ Երևանի անունը կրող այգում խաչքարի բացման արարողությանը մասնակցելու և երկու քաղաքների միջև բարեկամության համաձայնագիր ստորագրելու նպատակով[601]:

Սոֆիայի «Երևան» պուրակում տեղադրվեց խաչքար, որը Երևանի քաղաքապետի նվերն էր Բուլղարիայի մայրաքաղաքին: Բացման արարողությանը ելույթներ ունեցան քաղաքապետեր Բ. Բորիսովը և Ե. Զախարյանը[602]:

2006 թ. հուլիսի 15-18-ը պաշտոնական այցով Դոնի Ռոստովում էր գտնվում Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակությունը: Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի և Ռոստովի մարզի նահանգապետ Վլադիմիր Չուբի սյ Դոնի Ռոստովի քաղաքապետ Միխայիլ Չեռնիշևի հետ պաշտոնական հանդիպումների ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր: Դոնի Ռոստովի քաղաքապետ Մ. Չեռնիշևի հետ պաշտոնական հանդիպման ժամանակ երկուստեք կարևորվեց համագործակցության զարգացումը: Հուլիսի 16-ին ստորագրվեց երկու քաղաքների միջև համագործակցության պայմանագիր, որով Դոնի Ռոստովը հռչակվում էր Երևանի քույր քաղաք: Ստորագրվեց նաև 2006-2008 թթ. համագործակցության ծրագիր Երևանի և Դոնի Ռոստովի քաղաքապետարանների միջև, որը նախատեսում էր համագործակցություն

---

[600] Տե՛ս Երևանի քաղաքապետեր, Երվանդ Զախարյան, էջ 100-101:
[601] Տե՛ս նույն տեղում:
[602] Տե՛ս նույն տեղում:

առևտրատնտեսական, գիտակրթական, մշակութային, հասարակական տրանսպորտի, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության ոլորտներում[603]:

2009-2017 թթ. Երևանի քաղաքի արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքներում շարունակել է առանցքային տեղ գրավել այլ քաղաքների և շրջանների, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների հետ համագործակցությունը: Դրանք էլ ավելի ակտիվացան 2001 թվականից սկսած: Հաստատվեցին ու ընդլայնվեցին մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունները:

2014 թ. ընթացքում Երևանի և Ամմանի միջև ստորագրվեց քույր քաղաքներ հռչակելու մասին համաձայնագիր: Երևանում այդ ամսվա կարևորագույն իրադարձություններից էր նաև հայ առաջին օլիմպիական չեմպիոն Հ. Շահինյանի (քանդ.՝ Գ. Շահվերդյան) և Գյուլբենկյան փողոցում մեծանուն բարերար Գ. Գյուլբենկյանի արձանների (քանդ.՝ Գ. Դավթյան) բացումը:

2015 թ. դրությամբ Երևանի քաղաքապետարանը համագործակցում էր ավելի քան 50 քաղաքների ու շրջանների հետ[604]: 2017 թ. այդ քաղաքաներին ու շրջաններին ավելացավ 8 միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Ընդլայնվեցին գործընկերային հարաբերությունները եվրոպական, ասիական և ԱՊՀ տասնյակ կազմակերպությունների հետ: 2015 թ. Վոլգոգրադ քաղաքի հետ ստորագրվեց համագործակցության համաձայնագիր, ինչպես նաև միջնաժամկետ համագործակցության ծրագրեր՝ Սանկտ Պետերբուրգ և Դոնի Ռոստով քաղաքների հետ[605]: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում մայրաքաղաքում հյուրընկալվեցին գործընկեր քաղաքների պատվիրակություններ, ինչպես նաև որոշ քաղաքներում կազմակերպվեցին ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներ: Այդ նույն ժամանակ ապահովվեց Երևանի վարչական շրջանների ակտիվ համագործակցությունը ՀՀ մարզերի և Լեռնային Ղարաբաղի մի շարք

---

[603] Տե՛ս Երևանի քաղաքապետեր, Երվանդ Զախարյան, էջ 104:
[604] Տե՛ս Երևանի քաղաքապետարանի 2015 թ. տարեկան հաշվետվություն, Երևան, 2015, էջ 27:
[605] Տե՛ս նույն տեղում:

քաղաքների հետ: Երևանում կազմակերպվեց «Լավ կառավարումը սևծովյան տարածաշրջանում» տարածաշրջանային միջազգային կոնֆերանսը Վիեննայի քաղաքապետարանի և Go-Governance ինստիտուտի հետ համատեղ: 2015 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը, որին մասնակցեցին շուրջ 50 գործընկեր քաղաքների պատվիրակություններ[606]: Ընդլայնվեցին մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունները մի շարք քաղաքների և միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև միջազգային ու տարածաշրջանային կառույցների հետ: 2016 թ. ավելի քան 30 գործընկեր քաղաքների պատվիրակություններ համագործակցության շրջանակներում այցելեցին Երևան:[607] Այդ նույն ժամանակ քաղաքապետ Տարոն Մարգարյանի հրավերով Երևան ժամանեց Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոն[608]:

2016 թ. մայիսի 18-20-ը Երևան ժամանեցին շուրջ 20 գործընկեր քաղաքաների պատվիրակություններ[609]: Երևանում անցկացվեցին Մոսկվա և Սանկտ Պետերբուրգի օրեր:

2016 թ. մայիսի 18-ին Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հանդիպում ունեցավ Սանկտ Պետերբուրգի Պետրոգրադսկի շրջանի ղեկավար Յուրի Գլադունովի և Մոսկովսկի շրջանի ղեկավար Վլադիմիր Ուշակովի հետ: Երևանի քաղաքապետ նշեց, որ Երևանի և Սանկտ Պետերբուրգի միջև ձևավորված համագործակցությունը իսկապես արդյունավետ է և հաջողված, ինչը տարեցտարի գործնական նոր որակ է հաղորդում երկու քաղաքների միջև կառուցողական ծրագրերի իրականացմանը: Առանձնակի կարևորելով համագործակցության ընդլայնումը նաև Երևանի վարչական շրջանների և Սանկտ Պետերբուրգի շրջանների միջև՝ քաղաքապետը համոզմունք հայտնեց, որ այն ևս կլինի հաջողված ու կառուցողական[610]: «Երկու քաղաքաների միջև ստորագրված համագործակցության 2015-2018

---

[606] Տե՛ս Երևանի քաղաքապետարանի 2015 թ. տարեկան հաշվետվություն, Երևան, 2015, էջ 27:
[607] Տե՛ս Երևանի քաղաքապետարանի 2016 տարեկան հաշվետվություն, Երևան, 2016, էջ 48:
[608] Տե՛ս նույն տեղում:
[609] Տե՛ս նույն տեղում:
[610] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 մայիս, 2016, էջ 1:

թթ. ծրագիրը մեկ անգամ ևս փաստում է, որ գործընկերային մեր հարաբերությունները իսկապես արդյունավետ են ու հեռանկարային: Այս հարցում, անշուշտ, իր դերակատարումն ունի մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը և, իհարկե, երկու քաղաքաների միջև հաստատված փոխգործակցության ծրագրի արդյունավետ կյանքի կոչման ուղղությամբ իմ գործընկերոջ՝ նահանգապետ Գեորգի Պոլտավչենկոյի հետևողականությունը: Շարունակական համագործակցության շրջանակում առանձնակի կարևորվում է նաև Երևանի վարչական շրջանների և Սանկտ Պետերբուրգի շրջանների միջև փոխգործակցության ծրագրերի հաստատումը, ինչը, վստահ ենք, որ կունենա արդյունավետ զարգացում» [611],– ընդգծել է քաղաքապետը:

Երևանի և ՌԴ հյուսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգի միջև հաստատված համագործակցության շրջանակում Երևանի Էրեբունի վարչական շրջանի և Սանկտ Պետերբուրգի Պետրոգրադսկի շրջանի միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր: Փաստաթուղթը ստորագրեցին Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Արմեն Հարությունյանը և Պետրոգրադսկի շրջանի ղեկավար Յուրի Գլադունովը: Համագործակցության համաձայնագիր ստորագրվեց նաև Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Սանկտ Պետերբուրգի Մոսկովսկի շրջանի միջև, որը ստորագրեցին վարչական շրջանների ղեկավարներ Արտակ Ալեքսանյանը և Վլադիմիր Ուշակովը: Ստորագրված համաձայնագրերով համագործակցություն էր ծավալվելու քաղաքային տնտեսության կառավարման, սոցիալական, առողջապահական, մշակութային, կրթական, սպորտի և երիտասարդության հարցերի, զբոսաշրջության զարգացման, ինչպես նաև տնտեսական կապերի հաստատման ու մի շարք այլ ուղղություններով: Կողմերը պարտավորվեցին ամրապնդել և զարգացնել վարչական շրջանների միջև բարեկամական հարաբերություններն փորձի և տեղեկատվության փոխանակումների իրականացումը: Սանկտ Պետերբուրգի պատվիրակության անդամները այցելեցին մայրաքաղաքի Արաբկիր վարչական շրջան և ծաղիկներ խո-

[611] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 մայիս, 2016, էջ 1:

նարհեցին պաշարված Լենինգրադի երեխաներին նվիրված հուշարձանին[612]:

2016 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Երևանում առաջին անգամ կազմակերպվեց արտաքին գովազդի միջազգային «YOAF16» փառատոնը, որը համախմբել էր տարբեր քաղաքների ոլորտի պատասխանատուներին, գովազդի ոլորտում հայաստանյան և միջազգային փորձագետների, խոշոր կազմակերպությունների տնօրենների: Փառատոնի շրջանակներում կազմակերպվեցին համաժողովներ, կլոր սեղաններ, վարպետության դասեր: Այդ նույն թվականին միջազգային «Ֆիչ Ռեյթինգս» գործակալության հանրային ֆինանսների բնագավառում Երևանին շնորհել է B+ (կայուն վարկանիշ): Նման վարկանիշի առկայությունը միջազգային խոշոր ներդրողների կողմից Երևանում ուղղակի ներդրումներ կատարելու վերաբերյալ որոշումներ ընդունելիս կարևոր խթան հանդիսացավ:

2016 թ. ակտիվացավ Երևանի համագործակցությունը ԼՂՀ քաղաքների, շրջանների և ՀՀ մարզերի ու համայնքների հետ: Երևանը շարունակեց տարբեր ոլորտներում համագործակցության ծրագրերը ԼՂՀ շրջանների ու քաղաքների հետ, որի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում կառուցվեց «Ազատամարտիկների» պուրակը: Երևան քաղաքի արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների գլխավոր նպատակը շարունակում էր մնալ ՀՀ մայրաքաղաք Երևանի ճանաչելիության բարձրացումը, հեղինակության աճը տարբեր երկրների ու նրանց բնակչության շրջանում: Այդ համատեքստում տարբեր քաղաքների ու շրջանների, ինչպես նաև միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ Երևանը շարունակեց ակտիվ համագործակցել նաև 2017 և 2018 թթ.: 2017թ. Երևանի հետ համագործակցության շրջանակներում մայրաքաղաք այցելեց գործընկեր քաղաքների շուրջ 30 պատվիրակություն[613]: Նույն թվականի հոկտեմբերին «Էրեբունի-Երևան-2799» տոնակատարության շրջանակներում

---

[612] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 մայիս, 2016, էջ 1:

[613] Տե՛ս Երևան քաղաքապետարանի 2017 տարեկան հաշվետվություն, Երևան, 2017, էջ 43:

Երևանը հյուրընկալեց 13 երկրի 23 քաղաքների պատվիրակություն-ների[614]:

2017 թ. նոյեմբերի 27-29-ը Մարսելի քաղաքապետ Ժան-Կլոդ Գոդենի հրավերով Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը եղավ Մարսելում, որտեղ նշվեց Երևան և Մարսել քաղաքների համագործակցության 25-ամյակը: Տարոն Մարգարյանը, շնորհակալություն հայտնեց գոր-ծընկերոջը հրավերի և ջերմ ընդունելության համար, ընդգծեց. «Ինձ համար իսկապես մեծ պատիվ է այսօր լինել մեր բարեկամների կող-քին ու միասին նշել մեր հաջողված համագործակցության 25-րդ տա-րեդարձը: Անցած ավելի քան երկու տասնամյակները թե՛ սերտ հա-մագործակցության, թե՛ տնտեսական, մշակութային, կրթական և թե՛ այլ բնագավառներում նշանավորվել են հայ-ֆրանսիական հարաբե-րությունների վերընթաց զարգացմամբ: Մարսել քաղաքի հետ մենք փոխգործակցության հաջողված փորձ ունենք: Երկկողմ կապերի հաստատման հենց սկզբից բազմաթիվ համատեղ ծրագրեր ենք իրա-կանացրել՝ ի շահ բարեկամ մեր երկու քաղաքների բնակիչների: Ան-ցյալ տարի Երևանը հյուրընկալեց հայ-ֆրանսիական համագործակ-ցության երրորդ համաժողովի մասնակիցներին: Գոհունակությամբ պետք է փաստեմ, որ Երևան-Մարսել համագործակցության ծավալ-ներն այդ համաժողովի համատեքստում իսկապես ներկայանալի է-ին»[615]: Ապա Երևանի քաղաքապետը հավելել է, որ Երևանի քաղա-քապետարանը կարևորում է տարբեր ուղղություններով ու ոլորտնե-րում համագործակցության խորացումը ֆրանսիական գործընկեր քաղաքների և ռեգիոնների հետ, ինչպես նաև եվրոպական ծրագրերի շրջանակներում: Առանձնակի կարևորելով հայ-ֆրանսիական ներ-կայիս բարձր մակարդակով հարաբերություններում Ֆրանսիայի ու մասնավորապես Մարսել քաղաքի հայ համայնքի դերը՝ քաղաքապե-տը համոզմունք է հայտնել, որ այս հանգամանքը լրացուցիչ խթան է երկու քաղաքների միջև տարիներ ի վեր հաստատված կապերն էլ ա-

[614] Տե՛ս Երևան քաղաքապետարանի 2017 տարեկան հաշվետվություն, Երևան, 2017, էջ 43:
[615] «Հայաստանի Հանրապետություն», 28 նոյեմբերի 2017, էջ 4:

վելի զարգացնելու և խորացնելու համար: Երևանի քաղաքապետը իր ելույթում անդրադարձել է նաև 2018 թ. Երևանի հիմնադրման 2800-ամյակի միջոցառումներին և Երևանում անցկացվելիք Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովին: Առիթն օգտագործելով՝ նա Մարսելի քաղաքապետին հրավիրել է Երևան՝ մասնակցելու վերնշյալ տոնակատարությանը: Երևանի և Մարսելի միջև բարեկամական կապերի ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի և համագործակցության 25-րդ տարեդարձի առթիվ Երևանի քաղաքապետը Մարսելի քաղաքապետ, Երևանի պատվավոր քաղաքացի Ժան-Կլոդ Գոդենին պարգևատրել է Երևանի քաղաքապետի ոսկե մեդալով[616]: Այցի ընթացքում Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը մասնակ ցեց Հայ-ֆրանսիական տնտեսական 10-րդ ֆորումին, ներկայացվեցին Երևանի զբոսաշրջային ոլորտի ներուժն ու զարգացումը, տեղի ունեցան պաշտոնական հանդիպումներ, քննարկումներ: Վերաստորագրվեց Երևանի «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի և Մարսելի հանրային աջակցության կլինիկայի միջև համագործակցության համաձայնագիրը, ստորագրվեցին համագործակցության հուշագրեր զբոսաշրջության և կրթության ոլորտներում:

2017 թ. Երևանի քաղաքապետը հանդիպումներ ունեցավ Փարիզի, Լիոնի իր գործընկերների, ինչպես նաև Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի նախագահի հետ: Նա հանդիպեց նաև ֆրանսիական Արտելիա, Ալստոմ, ՄԴՊ ընկերությունների ներկայացուցիչներին, որոնց հետ քննարկվեցին Երևանում առաջնահերթ հետաքրքրություն ներկայացնող ներդրումային ուղղությունների վերաբերյալ հարցեր: Զարգանում են հարաբերությունները նաև մայրաքաղաք Երևանի և Չինաստանի քաղաքների միջև: 2017 թ. սեպտեմբերին ստորագրվեց ՀՀ Երևան և ՉԺՀ Ցինդաո քաղաքների միջև բարեկամական համագործակցային հարաբերությունների վերաբերյալ «Մտադրությունների հուշագիր»:[617]

2017թ. սեպտեմբերի 7-10-ը Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով

[616] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 նոյեմբերի 2017, էջ 4:
[617] Տե՛ս Երևան 2017 տարեկան հաշվետվություն, Երևան, 2017, էջ 43:

եղավ Սանկտ Պետերբուգում, որտեղ անցկացվեցին Երևանի օրեր: Միջոցառման շրջանակներում տեղի ունեցան Երևանի պատմական և մշակութային ժառանգությունը ներկայացնող բազմաթիվ մշակութային միջոցառումներ[618]: Երևանի քաղաքապետը այցելեց Պիսկարովյան հուշահամալիր՝ մասնակցելով Բլոկադայի զոհերի հիշատակի օրվա հանդիսավոր արարողությանը: Նա ՌԴ հյուսիսային մայրաքաղաքի բարձրաստիճան այլ պաշտոնյաների, երևանյան պատվիրակության անդամների և բազմաթիվ պետերբուգցիների հետ միասին ծաղիկներ խոնարհեց պաշարված Լենինգրադում զոհվածների հիշատակը հավերժացնող Մայր հայրենիք հուշարձանին և հարգանքի տուրք մատուցեց Բլոկադայի անմեղ զոհերի հիշատակին: Երևանյան պատվիրակության անդամները քաղաքապետի ղեկավարությամբ այցելեցին նաև հուշահամալիրի արևելյան հատվածում գտնվող Հիշատակի ճեմուղի, որտեղ ծաղիկներ խոնարհեցին Լենինգրադի պաշտպանության ժամանակ իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակը հավերժացնող հուշաքարին[619]: Երևանի քաղաքապետն այցելեց նաև Սանկտ Պետերբուրգի «Տաղանդների ակադեմիա» և Հայ առաքելական Սուրբ Կատարինե եկեղեցի: Առանձնակի կարևորելով կրթական կենտրոնի գործունեությունը՝ նշվել է, որ այն հրաշալի հնարավորություն է տալիս պատանիներին՝ ստանալու նեղ մասնագիտական լավ կրթություն ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով[620]: Սուրբ Կատարինե եկեղեցու այցելության ժամանակ քաղաքապետը շնորհակալություն հայտնեց հոգևոր հովիվ Պողոս աբեղա Վարդանյանին՝ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի համախմբման գործում ցուցաբերվող նախաձեռնողության համար: Երևանի քաղաքապետը ընդգծել է, որ հայոց եկեղեցին Սանկտ Պետերբուրգում բնակվող շուրջ 25.000 հայերի համար նաև ազգային մշակույթի հոգևոր կենտրոն է [621]: «Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում» շրջանակում տեղի ունեցավ նաև երկու քաղաքների զբոսաշրջության զարգացմանը նվիրված հանդիպում-քննարկում: Քննարկման շրջանակում հաստատվեց Երևանի քաղաքապետարա-

[618] Տե՛ս Երևան 2017 տարեկան հաշվետվություն, Երևան, 2017, էջ 44:
[619] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 սեպտեմբեր, 2017, էջ 4:
[620] Տե՛ս նույն տեղում, էջ 4:
[621] Տե՛ս նույն տեղում:

նի տուրիզմի բաժնի և Սանկտ Պետերբուրգի զբոսաշրջության զարգացման կոմիտեի 2017-2019 թթ. ծրագիրը[622]: Մեկ ամիս անց տեղի ունեցավ Սանկտ Պետերբուրգի քաղաքապետարանի աշխատակիցների այցելությունը Երևան, որի շրջանակներում Երևանում անցկացվեցին Սանկտ Պետերբուրգի օրեր, կազմակերպվեցին մշակութային միջոցառումներ, թեմատիկ քննարկումներ և կլոր սեղաններ:

2017 թ. սեպտեմբերի 22-ին Երևանի քաղաքապետը ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանի, Մոսկվայում Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչության, Մոսկվայի կառավարության և երևանյան պատվիրակության անդամների հետ միասին ներկա է գտնվել «Երևանի օրերը Մոսկվայում» ծրագրի գալահամերգին: Երեկոյի ընթացքում հայ և ռուս հանդիսատեսին ողջունել է ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի պատվավոր քաղաքացի, հայտնի ջազմեն Լևոն Մալխասյանի ղեկավարած «Մալխաս» ջազբենդը[623]: Մոսկվայի միջազգային միասնության տանը կայացած համերգի շրջանակում հնչել են ջազային հայտնի կատարումներ, այդ թվում՝ նաև հայկական ջազի մոտիվներով: ՌԴ մայրաքաղաքի Ս. Տ. Կոնյոնկովի թանգարան-արվեստանոցում բացվեց «Երևանյան էսքիզներ» խորագրով շուրջ 90 լուսանկարներից կազմված ցուցահանդեսը: Լուսանկարներում պատկերված են Երևանի հին ու նոր փողոցները, թաղամասերը, հասարակական շենքերը, հուշարձանները համաքաղաքային և տոնական միջոցառումները, ինչպես նաև այն մարդիկ, որոնք կարևոր դերակատարում են ունեցել Երևանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Միջոցառման շրջանակներում Մոսկվայի առևտրաարդյունաբերական պալատի հետ համատեղ կազմակերպվեց «Երևանի և Մոսկվայի առևտրատնտեսական և հումանիտար կապերի հեռանկարները» խորագրերով համաժողով, որի շրջանակում երկուստեք կապերի ամրապնդման, ոլորտային համագործակցության և փորձի փոխանակման համաձայնագրեր ստորագրվեցին Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի և Մոսկվայի Գնեսինների անվան

[622] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8 սեպտեմբերի, 2017, էջ 3:
[623] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 դեկտեմբերի, 2017, էջ 5:

երաժշտական միջնակարգ հատուկ դպրոցի միջև: Համանման համաձայնագրեր ստորագրվեցին Երևանի կամերային և Մոսկվայի «Մոստ» թատրոնների, Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի և Մոսկվայի «Կենտրոնական վարչական շրջանի» կենտրոնացված գրադարանային համակարգի, ինչպես նաև Երևանի և Մոսկվայի Մայակովսկու անվան դպրոցների միջև:

«Էրեբունի» պատմահանրագիտական արգելոց թանգարանն ու Երևան քաղաքի պատմության թանգարանն էլ համագործակցության համաձայնագրեր են կնքել Մոսկվայի պատմության թանգարանի հետ: Մոսկվայի առևտրաարդյունաբերական պալատի հետ համատեղ կազմակերպված «Երևանի և Մոսկվայի առևտրատնտեսական և հումանիտար կապերի հեռանկարները» խորագրով համաժողովի շրջանակում ներկայացվել են «Երևան՝ խելացի քաղաք» ծրագրի ռազմավարությունն ու նպատակները: Տեղի է ունեցել «Երևանի և Մոսկվայի քաղաքային զբոսաշրջության զարգացման հեռանկարները» խորագրով կլոր սեղան-քննարկումը: Քննարկման արդյունքում հաստատվել են այդ ոլորտի համագործակցության ուղղությունները[624]:

Երևան քաղաքի արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների գլխավոր նպատակները շարունակում էին մնալ ՀՀ մայրաքաղաք Երևանի ճանաչելիության բարձրացումը և հեղինակության աճը տարբեր երկրների ու դրանց բնակչության շրջանում: Նշված համատեքստում տարբեր քաղաքների ու շրջանների, ինչպես նաև միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ Երևանը շարունակեց ակտիվ համագործակցել նաև 2018 թ.: 2018 թ. Երևանի հետ համագործակցության շրջանակներում մայրաքաղաք այցելեցին գործընկեր քաղաքների շուրջ 30 պատվիրակություններ:

Վարդագույն Երևանում միջազգային այս գագաթնաժողովի և մայրաքաղաքի 2800-ամյակի միջոցառումների շրջանակներում Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի գլխավորությամբ տեղի ունեցավ հանդիպումներ բազմաթիվ երկրների և միջազգային կազ-

[624] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 դեկտեմբերի, 2017, էջ 5:

մակերպությունների ղեկավարների հետ, որոնք նպաստեցին մայրաքաղաքի միջազգային կապերի էլ ավելի ամրապնդմանն ու զարգացմանը:

Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացման նպատակով 2018 թ. Երևանը ներկայացվել է 18-րդ Կովկասյան զբոսաշրջային ցուցահանդեսին Թբիլիսիում և Չինաստանում կայացած Քաղաքապետերի 5-րդ միջազգային զբոսաշրջային ֆորումին: Քույր և գործընկեր քաղաքների համագործակցության շրջանակներում համաձայնագրեր են կնքվել Երևան և Սանկտ Պետերբուրգ, Երևան և Կազան քաղաքների միջև զբոսաշրջության զարգացման համատեքստում: Փորձի փոխանակման նպատակով համագործակցության ծրագրեր են իրականացվել ֆրանսիական Լիոն և Փարիզ քաղաքների հետ[625]:

Մայրաքաղաքի կյանքում միջազգային խոշորագույն իրադարձություն էր 2018 թ. հոկտեմբերի 11-ին մեկնարկած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովը[626]: Բացումը տեղի ունեցավ մայրաքաղաքի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում «Ապրել միասին՝ հարգելով համերաշխությունը մարդասիրական արժեքներն ու բազմազանությունը՝ իբրև խաղաղության և բարօրության հիմք ֆրանկաֆոն տարածաշրջանում» կարգախոսի ներքո:

Գագաթնաժողովին մասնակցելու համար Երևան էին ժամանել աշխարհի 84 երկրների և մոտ երկու տասնյակ միջազգային կազմակերպությունների պատվիրակություններ: Գագաթնաժողովի նիստը մեկնարկել է ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի ելույթով: Նրան հաջորդել են ՖՄԿ գլխավոր քարտուղար Միկաել Ժանը, Ֆրանսիայի նախագահ Էմանուիլ Մակրոնը, Կանադայի վարչապետը, Լիբանանի նախագահը, Մոնակոյի արքայազնը և այլք: Գագաթնաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետն և Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը մասնակցել են ֆրանկոֆոն երկրների պաշտոնական պատվի-

[625] Տե՛ս Երևանի տարեգրությունը, Երևանի պատմության թանգարանի ընթացիկ արխիվ, 2016 թ. քաղաքապետարանի հաշվետություն, էջ 33-3, թ. 98-102:
[626] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հոկտեմբերի, 2018:

ռակությունների ղեկավարների լիագումար նիստին, որի ընթացքում կազմակերպության նախագահությունը Մադագասկայից փոխանցվել է Հայաստանին: Երեկոյան մայրաքաղաքի հանրապետության հրապարակում տեղի է ունեցել գալա-համերգ, որի ավարտական մասը նվիրված էր աշխարհահռչակ շանսոնյե Ծառ Ազնավորի հիշատակին[627]:

Կարող ենք ասել, որ այս իրադարձությունը, որը մեր անկախությունից ի վեր ամենախոշոր միջազգային իրադարձությունն է մեր երկրում միանշանակորեն ծառայում է մեր երկրի միջազգային հեղինակության բարձրացմանը, ինչպես նա Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ամրապնդման ու հեղինակության բարձրացմանը[628]:

Այսպիսով՝ օրեցօր ընդլայնվում և ամրապնդվում էին մայրաքաղաքի արտաքին կապերը միջազգային կառույցների, աշխարհի տարբեր քաղաքների, հատկապես քույր քաղաքների հետ:

[627] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հոկտեմբերի, 2018:
[628] Տե՛ս Երևանի հանրագիտարան, 13 հոկտեմբերի, 2018:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

ա. Գրական և գիտակրթական կյանքը 1990-ական թվականներին

Առկա սոցիալ-տնտեսական ծանր իրադրությունը բացասական ազդեցություն ունեցավ հոգևոր կյանքի վրա: Պետական անհրաժեշտ օգնության ու հոգածության բացակայության պատճառով հայոց մշակույթը մեծ անկում ապրեց: Խիստ ճգնաժամ ապրեցին հայ թատրոնը և կինոն, կրճատվեց գրքերի տպագրությունը, խաթարվեցին մշակութային կապերը: Մամուլի զարգացման հնարավորությունները հանրապետությունում սահմանափակ էին. թերթերի մեծամասնությունն ուներ ընդամենը 2-3 հազար տպաքանակ և տարածվում էր հիմնականում մայրաքաղաքում: Արվեստի բազմաթիվ կոթողներ, ճարտարապետական հուշարձաններ, թատրոնի և կինոյի շենքեր հայտնվեցին անմխիթար վիճակում: Մշակութային շատ հիմնարկների սեփականաշնորհման հետևանքով ստեղծագործական բազմաթիվ կոլեկտիվներ, զրկվելով ստեղծագործելու հնարավորությունից, անգործության մատնվեցին: Չնայած շարունակվող սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամին և շատ ցածր վարձատրությանը՝ արվեստի աշխատողներն ամեն կերպ ձգտում էին համընթաց քայլել ժամանակի հետ: Հաջողություններ են արձանագրում Հայաստանի թատրոնները, երգի և պարի համույթները, ստեղծագործող բազմաթիվ կոլեկտիվներ: ԽՍՀՄ գոյության պայմաններում Հայաստանի գիտությունը և կրթությունը Միության երբեմնի հզոր ու միասնական գիտական համալիրի օրգանական բաղադրիչն էին: Այստեղ, ըստ էության, գոյություն չունեին ֆինանսավորման կամ նյութատեխնիկական ապահովման խնդիրներ: Մինչև ԽՍՀՄ փլուզումը Հայաստանը գիտության զարգացման ցուցանիշներով առաջնակարգ դիրքեր էր զբաղեցնում նախկին միութենական հանրապետությունների գիտական հանրությունների շրջանում: Հայաստանի գիտության համար լուրջ ձեռքբերում եղավ ակադեմիական համակարգչային տեղեկատվական ցանցի ստեղծումը: 1994 թ. ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի աշխատանքները թույլ տվե-

ցին ստեղծել Հայաստանում առաջին ռադիոմոդելային ցանցը և «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ պատրաստված վերգետնյա արբանյակային հանգույցի միջոցով ապահովել ինստիտուտների ելքը դեպի ինտերնետ[629]: Առաջին ինտերնետային կապի միջոցով կառավարության, հայկական բարեգործական կազմակերպությունների և միջազգային դրամաշնորհների օժանդակությամբ հաջողվեց մի քանի տարվա ընթացքում ստեղծել ՀՀ ԳԱԱ տեղեկատվական ցանց: Հայ գիտնականները սկսեցին ավելի շատ դրամաշնորհներ շահել միջազգային գիտական ծրագրերի, տեղեկատվական աջակցության, գիտական աշխատությունների հրապարակման, գիտական նոր սարքավորումների ձեռքբերման և այլ ասպարեզներում: Անկախության պայմաններում գիտական համակարգի վերափոխմանը նպաստեցին այն կանոնակարգող մի շարք օրենքներն ու որոշումները, որոնցից իր կարևոր նշանակությամբ հատկապես անհրաժեշտ է առանձնացնել 2000 թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքը[630]: Զգալի աշխատանքներ էին տարվում հայագիտության զարգացման ուղղությամբ: Անհրաժեշտ էր հաղթահարել խորհրդային դարաշրջանի գաղափարական կապանքները: Հայոց պատմության մի շարք թեմաներ ենթարկվեցին ավելի խոր ու համակողմանի ուսումնասիրության, հայ պատմաբանները հնարավորություն ստացան անաչառ լուսաբանելու պատմական իրողությունները: Կարևոր էր հայոց պետականության վերականգնման, հայ ժողովրդի անկախության համար մղվող պայքարի պատմության ուսումնասիրությունը, որը ներառում էր նաև հայ ազգային-ազատագրական շարժումը, Հայկական հարցը, Հայ դատը: Հրատարակվեցին ֆիդայական շարժման նշանավոր գործիչներին, ազատագրական պայքարի ազատամարտիկներին, ազգային հերոս Անդրանիկին, տաղանդավոր զորավարներ Նժդեհին, Դրոյին և ուրիշներին նվիրված աշխատություններ, փաստաթղթերի ժողովա-

[629] Տե՛ս Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, Երևան, 2018, էջ 208:
[630] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000), գիրք Գ, Երևան, 2001, էջ 624:

ծուներ: Լայն ծավալ ստացավ Հայաստանի նոր և նորագույն շրջանի պատմության, Ղարաբաղյան ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության և մի շարք այլ թեմաների ուսումնասիրությունը: Միաժամանակ զարգանում էին հնագիտությունը, ազգագրությունը, տնտեսագիտությունը, գրականագիտությունը և հումանիտար այլ ուղղություններ: Նոր խնդիրներ դրվեցին բնական, ճշգրիտ գիտությունների առջև: Անհրաժեշտություն էր հանրապետությունում հնարավորինս նախ պահպանելու եղած գիտական ներուժը, ապա նպաստելու Հայաստանի արտադրողական ուժերի զարգացմանը, ներքին բնական ռեսուրսների հայտնաբերմանը և խելացի օգտագործմանը:

Սկսվեցին կրթամշակութային ոլորտի կատարելագործման ուղիների որոնումները: Խորհրդային իշխանության օրոք հայ ժողովուրդը ձեռք էր բերել կրթական բարձր մակարդակ, բայց անկախությունից հետո այն էապես վտանգվել էր: 1991-1995 թթ. այս ոլորտը դիտարկվում էր որպես պետական ու տնտեսական գերակայությունից դուրս գտնվող բնագավառ, ուստի նրա հոգսերը դրվեցին տեղական իշխանության մարմինների և հասարակության վրա: Հետագա տարիներին փոփոխություններ կատարվեցին կրթական համակարգում, որոնք ամրագրվեցին 1999 թ. «Կրթության մասին» Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքում[631]: Պետությունը չէր խոչընդոտում տարբեր տիպի դպրոցների, այդ թվում՝ մասնավոր դպրոցների ստեղծմանը: 2000 թ. նման դպրոցների թիվը հասավ 40-ի: Ընդունված որոշումների համաձայն՝ Հայաստանում հայ երեխաները պետք է սովորեին միայն հայկական դպրոցներում: Հրատարակվեցին ուսումնական նոր ծրագրերով դասագրքեր, որոնց մեծ մասը անորակ լինելու պատճառով չէր համապատասխանում հայ ազգային դպրոցի առջև դրված խնդիրներին: Ուսուցիչների արտահոսքը (բարձրագույն կրթությամբ շատ ուսուցիչներ, հիմնականում՝ տղամարդիկ, սոցիալական ծանր վիճակից ելնելով, հեռանում էին դպրոցից), դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականության պակասը, գրենական պիտույքների

[631] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999), գիրք Բ, էջ 887:

թանկությունը և այլն խոչընդոտում էին ժողովրդական կրթության զարգացմանը: Ծանր վիճակում էր գտնվում նյութատեխնիկական բազան, դպրոցական շինությունները չէին վերանորոգվում, և դրանց հետագա շահագործումը դառնում էր վտանգավոր: Այս երևույթներն առկա էին նաև նախադպրոցական հիմնարկներում: Փոփոխություններ կատարվեցին հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում: Բուհերի ուսումնական ծրագրերից հանվեցին անցյալում բոլոր բուհերի համար պարտադիր առարկաները՝ «ԽՄԿԿ պատմությունը», «Մարքս-լենինյան փիլիսոփայությունը», «Գիտական կոմունիզմը», «Գիտական աթեիզմը»:

Համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելուն էր միտված ՀՀ կառավարության 1995 թ. հունիսի 12-ի որոշումը բուհերում ուսուցման նոր՝ եռաստիճան համակարգին անցնելու մասին: Այդ համակարգը բաղկացած էր բակալավրիատից՝ 4 տարի (որը տալիս է բարձրագույն կրթություն), մագիստրատուրայից՝ 2 տարի (բարձր որակավորման մասնագետների պատրաստում) և ասպիրանտուրայից (կադրերի պատրաստում բուհերի և գիտահետազոտական հիմնարկների համար)[632]: 1995 թվականից ԵՊՀ-ն և Երևանի գյուղատնտեսական ակադեմիան անցան այդ համակարգին, որը, սակայն, շատ կողմերով զիջում էր ուսուցման նախկին համակարգին: Փորձեր ձեռնարկվեցին բուհերի ինքնուրույնությունն ընդլայնելու ուղղությամբ, ընդարձակվեց դրանց համագործակցությունն արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների հետ:

Որոշ ինստիտուտներ (բժշկական, պոլիտեխնիկական և այլն) ոչ համոզիչ պատճառաբանություններով վերանվանվեցին համալսարաններ կամ ակադեմիաներ: Մայրաքաղաքում 1991 թ. հիմնադրվեց Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ)՝ որպես Կալիֆոռնիայի (ԱՄՆ) համալսարանի մասնաճյուղ: Ավելի ուշ Երևանում բացվեցին Ֆրանսիական և Եվրոպական համալսարանները, իսկ 1998 թ.՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը[633]:

---

[632] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 207:
[633] Տե՛ս նույն տեղում, էջ 208:

Եթե 1990-1991 ուսումնական տարում Հայաստանում (մեծ մասը՝ Երևանում) գործում էր պետական 14 բուհ՝ 68,4 հազար ուսանողներով, որտեղ կադրեր էին պատրաստվում 103 մասնագիտությունների գծով, ապա 2000-2001 ուսումնական տարում՝ 19 պետական բուհ՝ ավելի քան 158 մասնագիտությունների գծով, 60,7 հազար ուսանողներով: 1990 թվականից Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում ներդրվեց վճարովի ուսուցման համակարգը: Մայրաքաղաք Երևանում բացվեցին բազմաթիվ մասնավոր համալսարաններ ու քոլեջներ, որոնց մեծ մասի մակարդակը շատ հեռու էր բուհերին ներկայացվող պահանջներից:

Անկախության հռչակումից հետո գրականությունը Հայաստանում զարգանում էր նոր հասարակարգի թելադրած օրինաչափություններով, թեև այն ընդհանուր առմամբ հայ դասական գրականության ժառանգորդն էր: Գրական ստեղծագործությունը վերջնականապես ազատագրվում էր պետական գաղափարախոսության պարտադրանքից և գրաքննությունից: Ստեղծագործական աշխատանքի կազմակերպումը շարունակում էր իրականացնել «Հայաստանի գրողների միությունը», որը վերջին երկուսուկես տասնամյակներին հաջորդաբար ղեկավարել են Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, Ռազմիկ Դավոյանը, Հրանտ Մաթևոսյանը, Լևոն Անանյանը, Էդուարդ Միլիտոնյանը:

Որոշ դժվարություններով և ընդհատումներով լույս են տեսնում գրական հին պարբերականները՝ «Գրական թերթ», «Գարուն», «Նորք», որոնցից բացի՝ հրատարակվում են նաև նոր, երբեմն ոչ տնական կյանք ունեցող հանդեսներ և թերթեր: Հայաստանի երրորդ հանրապետության շրջանում ստեղծագործական ակտիվ ընթացքի մեջ էին ինչպես ավագ, այնպես էլ միջին սերունդների ներկայացուցիչներ և երիտասարդ հեղինակներ:

Չափածո նոր ժողովածուներով կամ շարքերով հանդես եկան նշանավոր երևանաբնակ բանաստեղծներ Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը, Ռազմիկ Դավոյանը: Գրական շարժման մեջ առավել զգալի դեր խաղացին 1960-ական թթ. վերջին ասպարեզ իջած մի շարք բանաստեղծներ:

Փիլիսոփայական-գեղագիտական հարցադրումներով, աշխարհի և մարդու ճակատագրի պատկերային զննումներով աչքի ընկան երևանաբնակներ Հովհաննես Գրիգորյանի «Հրեշտակներ մանկության երկնքից» և «Երկու ջրհեղեղի արանքում», Արմեն Մարտիրոսյանի «Շարակնոց», Հենրիկ Էդոյանի «Հարյուր սոնետ» և «Հետգրություն», Արտեմ Հարությունյանի «Նամակ Նոյին» և «Հուդայի արձակուրդը», Դավիթ Հովհաննեսի «Նոր քրոնիկոն» գրքերը, որոնցից մի քանիսը արժանացան պետական մրցանակների[634]:

Գրական նոր շարժմանը բնորոշ են սեռերի և տեսակների բազմազան համադրությունները, հատկապես պոեզիայի ու արձակի ներթափանցումները: Անկախության տարիներին բանաստեղծական և արձակ գործերով հանդես եկավ Արմեն Շեկոյանը («Անտիպոեզիա», «Հայկական ժամանակ» և այլն): Բուն արձակի զարգացմանը մասնակցություն են բերում Երևանում ապրող և ստեղծագործող ավագ սերնդի ականավոր ներկայացուցիչներ Հրանտ Մաթևոսյանը, Աղասի Այվազյանը, Զորայր Խալափյանը և ուրիշներ: Ժամանակակից մարդու հոգեբանությանը, հասարակական բարդ խնդիրների քննությանն են նվիրված Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր», Գուրգեն Խանջյանի «Շարժասանդուղք» և «Ստվերներ խամաճիկների փողոցում», Արմեն Շեկոյանի «Մետաքսի ճանապարհը» ժողովածուները, որոնք առավելապես բաղկացած են պատմվածքներից[635]:

Անկախության շրջանում բուռն զարգացում է ապրում վեպի ժանրը: Ազգային, հասարակական և հոգեբանական խնդիրներ են շոշափում Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոց», «Սպանել փրկչին», «Նստիր Ա գնացքը», Լևոն Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպերը: Վերջինս մասամբ նվիրված է Արցախի գոյամարտին և արժանացել է պետական մրցանակի[636]:

Լույս են տեսել մի շարք պատմավեպեր, որոնք շարունակում և զարգացնում են հայ դասական պատմավեպի հարուստ ավանդները (Լևոն Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի», Զորայր

[634] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 208:
[635] Տե՛ս նույն տեղում, էջ 209:
[636] Տե՛ս նույն տեղում:

Խալափյանի «Վասիլ Մեծ», Պերճ Զեյթունցյանի «Գողացված ձյունը»)[637]:

Ժամանակակից արձակագիրներին շարունակում էր հուզել Մեծ եղեռնի թեման: Գրվել են մի քանի վեպեր, որոնցից մեկը՝ Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» ստեղծագործությունը, արժանացել է պետական մրցանակի: Աշխուժություն է տիրում թատերգության ասպարեզում: Պիեսներով հանդես են եկել Աղասի Այվազյանը, Նորայր Ադալյանը, Պերճ Զեյթունցյանը, Գուրգեն Խանջյանը և ուրիշներ[638]: Հրատարակվում է «Դրամատուրգիա» հանդեսը: Դրամատուրգիական որոշ գործեր բեմադրվել են հանրապետության թատրոններում: 1990-2000-ական թվականները հայաստանյան թարգմանական գրականության լավագույն տասնամյակներից են: Առանց գաղափարական-գեղագիտական կաշկանդումների, առավելապես բնագրերից թարգմանվել են եվրոպական, ԱՄՆ, ռուս, լատինամերիկյան գրականությունների նախկինում չթարգմանված լավագույն ստեղծագործություններ, որոնք տպագրվել են ինչպես առանձին գրքերով, այնպես էլ մամուլում: Հրատարակվում է նաև «Արտասահմանյան գրականություն» հանդեսը:

Երրորդ հազարամյակի սկզբին հիմք դրվեցին ու նախանշվեցին կրթական բարեփոխումների առաջին ուղղությունները կրթական բոլոր աստիճաններում՝ նախադպրոցականից մինչև մասնագիտական: 2001-2015 թթ. նաև լայնածավալ բարեփոխումների ժամանակահատված էին միջնակարգ կրթության արդիականացման, որակի բարելավման, մատչելիության մեծացման, կառավարման ապակենտրոնացման և արդյունավետության բարձրացման առումով: 2001 թվականից 10-ամյա կրթությունը դարձավ 11-ամյա, իսկ 2006 թվականից՝ 12-ամյա (տարրական՝ 4 տարի, հիմնական՝ 5 տարի և ավագ դպրոց՝ 3 տարի): Այդ ամենը ամրագրվեց 2009 թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում: Եթե 1990-1991 ուստարում պետական հանրակրթական դպրոցների թիվը հանրապետությունում 1347 էր (դրանց մեծ մասը Երևանում էին)՝

[637] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 209:
[638] Տե՛ս նույն տեղում:

590,8 հազար աշակերտներով և 55,5 հազար ուսուցիչներով, ապա 2006-2007 ուստարում 1427 դպրոցներում սովորում էր 471,3 հազար աշակերտ, և այդ դպրոցներն ունեն 41,7 հազար ուսուցիչներ, իսկ 2012-2013 ուստարում դպրոցների թիվը կազմում էր 1435՝ 368,7 աշակերտով և 40,8 հազար ուսուցիչներով: 2014-2015 ուստարում հանրակրթական դպրոցների թիվը 1437 էր՝ 359,6 աշակերտով և 39.000 ուսուցիչներով[639]:

Երևան քաղաքում էական զարգացում է ապրել նաև կրթության ոլորտը: Երևանում կրթական ծառայություններ մատուցվում են նախադպրոցական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, երաժշտական արվեստի և դեղարվեստի դպրոցներում, բուհերում:

Աղյուսակ 8

Երևան քաղաքի նախադպրոցական կրթության ոլորտի ցուցանիշների շարժընթացը 2000-2015 թթ.[640]

	2000	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2015
Նախադպրոցական հաստատությունների քանակը	**214**	**197**	**194**	**192**	**192**	**189**	**198**	**206**	**219**
Հաճախող երեխաների քանակը	**21982**	**22413**	**22078**	**22887**	**23977**	**24453**	**26373**	**30247**	**32289**
Մանկավարժների թվաքանակը	**2446**	**2165**	**2074**	**2141**	**2203**	**2199**	**1970**	**2003**	**2192**
մեկ ՆԴՀ միջին հաշվով հաճախող երեխաների թվաքանակը	**103**	**114**	**114**	**119.2**	**124.9**	**124.9**	**133.8**	**146.8**	**147,4**
մեկ մանկավարժին բաժին ընկնող երեխաների քանակը	**9,0**	**10.4**	**10.6**	**10.7**	**10.9**	**11.1**	**13.4**	**15.1**	**14,7**

[639] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, ՀՀ ԱՎԾ 2007, էջ 97-98, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 106, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 101, ՀՀ մարզերը թվերով, 1999-2003, Երևան, 2004, էջ 120,121, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան, 2016, էջ 115:

[640] Տե՛ս նույն տեղում:

2011 թ. Երևան քաղաքում գործել են 206 նախադպրոցական հիմնարկներ (ՀՀ նախադպրոցական հիմնարկների 31.2%-ը)՝ 231148.5 քառ. մետր ընդհանուր մակերեսով, որոնցից 117-ը մանկապարտեզներ էին, 74-ը՝ մսուր-մանկապարտեզ, 15-ը՝ կրթահամալիր: Այդ հաստատություններ հաճախել են 30247 երեխա, որոնց համապատասխան կրթական-դաստիարակչական ծառայություններ է մատուցել 2003 մանկավարժ: Եթե ՀՀ-ում միջին հաշվով մեկ նախադպրոցական հաստատություն հաճախել է 96,3 երեխա, և մեկ մանկավարժին բաժին է ընկել 11.8 երեխա, ապա Երևան քաղաքում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 147 և 15.1 երեխա:

2011 թ. հանրակրթական ծառայություններ են մատուցվել ՀՀ հանրակրթական դպրոցների 17.8 %-ը կազմող 255 հանրակրթական դպրոցներում 10832 մանկավարժների կողմից: Հանրակրթական դպրոցներ են հաճախել 117626 աշակերտ, եթե ՀՀ-ում միջին հաշվով մեկ դպրոց է հաճախում 268.2 սովորող, և մեկ մանկավարժին բաժին է ընկնում 9.3 աշակերտ, ապա Երևան քաղաքում միջին հաշվով մեկ դպրոց է հաճախում 461.3 սովորող (գրեթե 2 անգամ գերազանցում է հանրապետական ցուցանիշը), և մեկ մանկավարժին բաժին է ընկնում 10.9 աշակերտ[641]:

Աղյուսակ 9

Երևան քաղաքի հանրակրթական ոլորտի ցուցանիշների շարժընթացը 2000-2016 թթ.[642]

	2000/ 2001	2006/ 2007	2007/ 2008	2008/2 009	2009/ 2010	2010/ 2011	2011/ 2012	2015/ 2016
Հանրակրթական դպրոցների քանակը	**204**	**263**	**260**	**268**	**263**	**259**	**255**	**259**
Աշակերտների քանակը	**154671**	**136265**	**130450**	**126458**	**120622**	**113445**	**117626**	**117822**
Մանկավարժների թվաքանակը	**14783**	**11708**	**10715**	**10791**	**10662**	**10503**	**10832**	**10324**

[641] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, ՀՀ ԱՎԾ 2007, էջ 105-106, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 117-118, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 122-123, ՀՀ մարզերը թվերով, 1999-2003, Երևան, 2004, էջ 128, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան, 2016, էջ 124:

[642] Նույն տեղում:

Մեկ դպրոց միջին հաշվով հաճախող սովորողների քանակը	**758**	**518.1**	**501.7**	**471.9**	**458.6**	**438**	**461.3**	**454,9**
Մեկ մանկավարժին բաժին ընկնող աշակերտների թվաքանակը	**10**	**11.6**	**12.2**	**11.7**	**11.3**	**10.8**	**10.9**	**11,4**

Նախնական մասնագիտական կրթական ծառայություններ մատուցող 44 հաստատություններից 11-ը տեղակայված է Երևան քաղաքում, որտեղ աշխատում են 327 մանկավարժներ և ապահովում են 1986 ուսանողների նախնական մասնագիտական կրթությունը: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Երևան քաղաքում 2008-2010 թթ. գրանցվել է ուսանողների և մանկավարժների թվաքանակի աճ: Մանկավարժների թվաքանակի առաջանցիկ աճը ուսանողների թվաքանակի համեմատ դիտարկվող ժամանակահատվածում ապահովել է մեկ մանկավարժին բաժին ընկնող ուսանողների թվաքանակի կրճատում՝ 2008 թ. 8.2-ից 2011 թ. հասցնելով 6.1-ի[643]:

2011/2012 ուս. տարում ՀՀ-ում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի 227 դպրոցներից 51-ը գործել է Երևան քաղաքում, որտեղ հաճախել է 18606 աշակերտ (ՀՀ-ում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ հաճախող աշակերտների 46.5%-ը):

Աղյուսակ 10

Երևան քաղաքի միջին մասնագիտական կրթության ոլորտի ցուցանիշների շարժընթացը 2000-2015 թթ.

	2000	**2005**	**2006**	**2007**	**2008**	**2009**	**2010**	**2011**	**2015**
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	**28**	**40**	**39**	**39**	**37**	**35**	**35**	**34**	**36**
Ուսանողների թվաքանակը	**10857**	**14490**	**14749**	**15224**	**16002**	**15059**	**15109**	**16036**	**12785**

[643] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 128-134, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 133-138:

Մանկավարժ-ների թվաքա-նակը	1919	1943	1876	1737	1680	1650	1857	1945	2212
Ուսանողների թվաքանակը մեկ մանկա-վարժի հաշվով	5,7	7.5	7.9	8.8	9.5	9.1	8.1	8.2	5,8

2011 թ. ՀՀ-ում գործող 97 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից 34-ը կամ 35 %-ը կրթական ծառայություններ են մատուցում Երևան քաղաքում 16036 ուսանողի[644]: Դիտարկվող ժամանակաշրջանում Երևան քաղաքում միջին մասնագիտական հաստատություններում սովորողների թվաքանակը կայուն տեմպերով աճել է՝ բացառությամբ 2009 թվականի: 2011թ. ուսանողների թիվը 2005 թ. 14490-ից հասել է 16036-ի՝ աճելով 10.6%-ով՝ չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակահատվածում ՀՀ միջին մասնագիտական հաստատություններում սովորողների թաքանակը կրճատվել է 5.2%-ով: Արդյունքում, եթե 2005 թ. Երևան քաղաքի միջին մասնագիտական հաստատություններում սովորել է ՀՀ նման հաստատություններում սովորողների 47 %-ը, ապա 2011թ. այդ ցուցանիշը աճել է շուրջ 8 տոկոսային կետով՝ կազմելով 54.9 %: 2011թ. ՀՀ-ում մեկ մանկավարժին բաժին է ընկել 7.7 ուսանող, Երևանում՝ 8.2[645]:

Ի տարբերություն կրթական ծառայություններ մատուցող մյուս հասատությունների՝ բուհերի գերակշիռ մասը գտնվում է Երևան քաղաքում (ՀՀ-ում 2011 թ. 68 բուհերից 53-ը գտնվում է Երևան քաղաքում): Բուհերում սովորողների թվաքանակը դիտարկվող ժամանակաշրջանում աճել է՝ բացառությամբ 2011-2012 ուստարվա ավարտական դասարան չունենալու պատճառով, երբ ուսանողների թվաքանակը կրճատվել է նախորդ տարվա համեմատ 14.1 %-ով՝ չապա-

[644] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 128-134, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 133-138:

[645] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, ՀՀ ԱՎԾ 2007, էջ 117-123, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 134-138, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 139-143: ՀՀ մարզերը թվերով, 1999-2003, Երևան, 2004, էջ 143,144, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան, 2016, էջ 142,144:

հովելով նույնիսկ 2005 թ. մակարդակը: ՀՀ բուհերում ուսանողների 79.1%-ը սովորում է Երևան քաղաքի բուհերում, իսկ պրոֆեսորադասախոսական անձնակազմի 82.7 %-ը աշխատում է մայրաքաղաքի բուհերում[646]:

Աղյուսակ 11

Երևան քաղաքի բարձրագույն կրթության ցուցանիշների շարժընթացը 2001-2016թթ.[647]

	2001/ 2002	2006/ 2007	2007/ 2008	2008/ 2009	2009/ 2010	2010/ 2011	2011/ 2012	2015/ 2016
Բուհերի քանակը	**17**	**68**	**67**	**71**	**60**	**59**	**53**	**48**
Ուսանողների թվաքանակը	**47374**	**85195**	**89397**	**91806**	**92892**	**90614**	**75416**	**70931**
Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի թվաքանակը	**6750**	**10594**	**10205**	**10051**	**10130**	**10740**	**10435**	**9598**

Մայրաքաղաքում կրթական համակարգի արդյունքում 2007 թ. քաղաքապետարանի ենթակայությամբ գործել են 189 հանրակրթական, 10 հատուկ, 5 ավազ (արհեստագործական ուսուցման գծով պետպատվեր) և 1 երեկոյան դպրոցներ: Մայրաքաղաքում են գործել բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, վերականգնվել են նաև արհեստավարժական դպրոցներ, որոնք հիմք են հանդիսացել աճող սերնդի համար որակյալ և այդ ժամանակվա պահանջներին բավարարող գիտելիքների մատուցման համար[648]:

---

[646] Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, ՀՀ ԱՎԾ 2007, էջ 117-123, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 134-138, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 139-143: ՀՀ մարզերը թվերով, 1999-2003, Երևան, 2004, էջ 143,144, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան, 2016, էջ 142,144:

[647] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, ՀՀ ԱՎԾ 2007, էջ 117-123, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 134-138, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 139-143:

[648] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, ՀՀ ԱՎԾ 2007, էջ 117-123, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 134-138, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 139-143:

Երևան քաղաքում կրթական մակարդակի հետագա բարձրացման առումով առաջնային քայլերից կարելի էր համարել համակարգի համալրումը նոր տեխնոլոգիաներով, համակարգիչներով և համացանցի հասանելիությամբ, շենքային պայմանների արդի պահանջներին համապատասխանեցումը, նյութատեխնիկական բազայի ապահովումը, թարմացումը, անհատական ջեռուցման համակարգերի կառուցումը կրթական գործընթացների անխափան ու կանոնավոր իրականացման համար, տեխնիկապես հագեցված լաբորատորիաների ստեղծումը և այլն[649]:

Կրթության ոլորտում 2008 թ. աշխատում էր շուրջ 45.000 մանկավարժ: Կրթության որակի ապահովման տեսանկյունից հատուկ կարևորելով ուսուցիչների դերը՝ պետությունը հետևողականորեն իրականացրեց աշխատավարձերի բարձրացման քաղաքականություն: Եթե 2003 թ. «ուսուցիչների տարեկան աշխատավարձ-շնչային ՀՆԱ հարաբերությունը կազմում էր 1.0, ապա 2008 թ. այն դարձավ 0.49: Ընդլայնվեց ուսուցիչների վերապատրաստման ծավալը: Եթե մինչև 2003 թվականը տարեկան վերապատրաստում անցել է ուսուցիչների միայն 4-5 %-ը, 2005 թվականից ամեն տարի վերապատրաստվում էր նրանց 20 %-ը, ինչը հնարավորություն էր տալիս ապահովելու ուսուցիչների ողջ համակազմի վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը[650]:

2002 թ. կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ ծրագրի շրջանակներում հաջողվեց արմատապես լուծել աշակերտներին դասագրքերով ապահովելու կարևորագույն խնդիրը: Միջնակարգ կրթության ծախսերը տարեցտարի ավելացել են՝ 2008 թ. կազմելով կրթության բնագավառի ընդհանուր ծախսերի 78.2 %-ը: Ֆինանսավորման ծավալների աճը հնարավորություն տվեց էականորեն բարելավելու ոլորտի վիճակը: Այս տարիներին կրթության՝ որ-

---

[649] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2006, ՀՀ ԱՎԾ 2007, էջ 117-123, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 134-138, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012, էջ 139-143:

[650] Տե՛ս Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), էջ 349:

պես աղքատության հաղթահարման և սոցիալ-տնտեսական առաջընթացի հիմնական գործոնի զարգացման գլխավոր նպատակներն են եղել կրթության որակի բարելավումը և սոցիալական բոլոր խավերի համար որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ու մատչելիության ապահովումը՝ կրթության թե՛ համակարգային, թե՛ բովանդակային բարեփոխումների ուղղությամբ: Հայաստանի Հանրապետության 43 հազար ուսուցիչներ օգտվում էին 2012 թ. բյուջեում ներառված սոցիալական փաթեթից: Դա վերաբերում է հանրակրթական, հատուկ դպրոցների ուսուցիչներին և արհեստագործնական ուսումնարանների ուսուցիչներին:

2008-2011 թթ. ընթացքում կրթական ծրագրերը նպատակաուղղել են համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի բարձրացմանն ու շարունակական կրթության ապահովմանը:

2012-2013 թթ. ՀՀ-ում գործել են հանրակրթական ծրագրեր իրականացնող 1435 հանրակրթական դպրոցներ, որից 1388-ը կամ 96,7 %-ը՝ պետական, իսկ 47-ը, կամ 3,3 %-ը՝ ոչ պետական: 2011-2012 ուստարվա համեմատությամբ՝ հանրակրթական դպրոցների ընդհանուր թվաքանակը նվազել է 0,4 %-ով: Դա բացատրվում է դպրոցների օպտիմալացման արդյունքում Երևանի Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց ձորի և Արագածոտնի մի քանի դպրոցների փակմամբ և 2 ավագ դպրոցների միավորմամբ: Հայաստանում գործել են 13 մասնագիտացված (1 ոչ պետական) և 27 պետական հատուկ հանրակրթական դպրոցներ, որոնց քանակը նախորդ տարվա համեմատությամբ մնացել էր անփոփոխ: ՀՀ-ում գործել է 12 տարրական դպրոց, որոնցից 11-ը պետական էին և գտնվում էին մարզերում, իսկ 1-ը՝ ոչ պետական, որը գտնվում էր Երևանում: Հանրապետությունում գործել է 461 հիմնական դպրոց, ինչը կազմում է դպրոցների ընդհանուր թվաքանակի 32,2 %-ը: Նրանցից 306-ը գործել է մարզերում: Վերոնշյալ ուստարում ՀՀ-ում գործում էր 109 ավագ դպրոց, որից 44-ը՝ Երևանում, մյուսները՝ մարզերում: Դրանցից 10-ը ոչ պետական հանրակրթական հաստատություն էր: 109 ավագ դպրոցները կազմում էին դպրոցների ընդհանուր թվաքանակի 7,6 %-ը: Նախորդ տարվա 18-ի փոխարեն հանրապետությունում 2013 թ. գործել էին 16 վարժա-

րան և 837 միջնակարգ դպրոց, որը կազմում էր ընդհանուրի 58 %-ը, ընդ որում՝ դրանցից 790-ը մարզերում էր: Միջնակարգ դպրոցների ընդհանուր քանակը աճել էր 4,8 %-ով[651]:

Ըստ էության, կատարված բարեփոխումները համակարգում դեռևս ամբողջությամբ չեն արդարացրել արդյունավետ և որակյալ կրթություն ապահովելու հույսերը: Նախադպրոցական կրթության ոլորտում կազմվել էր նախադպրոցական խմբերի ստեղծման ծրագիր, որի փորձարկումն սկսվել էր 2010 թ. հունիսից Արագածոտնի և Արարատի մարզերի 41 համայնքներում: 2011 թ. վերջին ծրագիրը ներդրվեց ևս չորս մարզում՝ ընդգրկելով 130 համայնք և 5-6 տարեկան 2334 երեխա[652]:

Հանրակրթության ոլորտում իրականացվել են շուրջ 400 դպրոցների հիմնանորոգում, վերակառուցում, ժամանակակից աշակերտական գույքով կահավորում, ինչպես նաև այդ դպրոցներն ապահովվել են համակարգչային տեխնիկայով և համացանցային կապով՝ ընդլայնելով Հայաստանի դպրոցների համացանցային հնարավորությունները: Այժմ համացանցում ընդգրկված է 944 դպրոց կամ դպրոցների ընդհանուր թվի 79.5 %-ը: 2011 թ. 461 դպրոցների՝ այդ ցանցին միանալու շնորհիվ հանրապետության դպրոցների 93.2 %-ն համացանցային կապով կապվել է միմյանց և արտաքին աշխարհին[653]: Բոլոր դպրոցներում հիմնվել են էլեկտրոնային գրադարաններ՝ 19 էլեկտրոնային ձեռնարկներով: Այժմ Հայաստանի դպրոցները հագեցված են 16761 համակարգիչով, «համակարգիչ-աշակերտ» հարաբերակցությունը հասել է 22.5-ի, իսկ մեկ դպրոցին բաժին ընկնող համակարգիչների քանակը 2008 թ. 4.0-ի փոխարեն 12 է: Դպրոցների տեխնիկական վերազինմանը համահունչ՝ իրականացվել է նաև դրանց կառավարման և դասավանդման բարելավումը: Մասնավորապես ներդրվել են ուսուցիչների ատեստավորման և դպրոցի տնօրենների հավաստագրման ու վերապատրաստման նոր կարգեր: Ներկայիս ավելի քան 1400 դպրոցի տնօրեններից հավաստագիր է

---

[651] Տե՛ս Հանրակրթությունը Հայաստանում 2012-2013 ուս. տարում, վիճակագրական տեղեկագիր, Երևան, 2013, էջ 41-63:
[652] Տե՛ս նույն տեղում:
[653] Տե՛ս նույն տեղում:

ստացել միայն 679-ը: Քննությունների արդյունքում հավաստագրվել են նաև 194 տնօրենի պաշտոնակատար ու 279 փոխտնօրեն և ուսուցիչ[654]: Հավաստագրված անձանց թույլատրվում է մասնակցել դպրոցի տնօրենի մրցույթներին, որոնց ընթացակարգը կառավարությունն արդեն հաստատել է՝ ներառելով մրցույթների անցկացման թափանցիկության և հրապարակայնության ապահովման մեխանիզմներ: Ավագ դպրոցների ձևավորման նպատակով ընդլայնվել է դեռևս 2008 թ. մեկնարկած փորձնական 10 ավագ դպրոցների ստեղծման ծրագիրը՝ վերջիններիս թիվը հասցնելով 109-ի, յուրաքանչյուր նորաստեղծ ավագ դպրոց նորոգվել է և համալրվել անհրաժեշտ տեխնիկայով ու սարքավորումներով, գործածության են երաշխավորվել 37 անուն դասագիրք և 12 անուն ուսումնական ձեռնարկ: 2003 թվականից միջին մասնագիտական նախնական (արհեստագործական) կրթության համակարգը սկսեց վերակազմավորվել: Միջին մասնագիտական և նախնական կրթության ոլորտում իրականացվել է եվրոպական կրթական հիմնադրամի «Թուրինի գործընթացում» 2010 թ. ներգրավվելու և վերջինիս պահանջներին համապատասխան մասնագիտական կրթությունը բարեփոխելու աշխատանք: Մասնավորապես յուրաքանչյուր մարզում և մայրաքաղաքում ստեղծվել է 12 տարածաշրջանային քոլեջ, նորոգվել և վերակառուցվել են այդ քոլեջների շենքերն ու կառույցները, ամբողջովին նորացվել և վերազինվել է դրանց նյութատեխնիկական բազան: Միաժամանակ հաստատված օպտիմալացման ծրագրով 2010-2011 թթ. ընթացքում միավորվել և վերակազմավորվել են 20 միջին մասնագիտական հաստատություն և արհեստագործական ուսումնարան, ևս 4 վարժարան-քոլեջ՝ որպես հաստատություն, միացվել է համապատասխան բուհերին[655]:

ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. ընդունված «Բուհական և հետբուհական կրթության մասին» օրենքը: Մասնագիտական որակավորման բարձրացման, առաջավոր փորձի փոխանակման, կրթության բովանդակության ու

[654] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 350-351:
[655] Տե՛ս նույն տեղում, էջ 351:

մեթոդների արդիականացման շատ հարցեր սկսեցին լուծվել Բոլոնիայի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միացման, եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու շնորհիվ: Բարձրագույն կրթության բարեփոխումներն իրականացվեցին այդ գործընթացի սկզբունքներին համապատասխան, հաստատվեց բարձրագույն կրթության որակավորման ազգային շրջանակը, մշակվեց և ընդունվեց բուհերի ֆինանսավորման ռազմավարությունը, վերանայվեցին մասնագիտական կրթական ծրագրերի արտոնագրման պայմաններն ու պահանջները, կարգավորվեց ուսանողների շարժունության հիմնահարցը, ներդրվեց հետազոտողի հետբուհական կրթական ծրագրի կրեդիտային համակարգը՝ սահմանելով ասպիրանտների համար 180 կրեդիտի պարտադիր պահանջ: Կատարված քայլերի շնորհիվ հաջողվեց ձերբազատվել շուկայում անորակ կրթական ծառայություն մատուցող 30-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններից՝ արտոնագրից զրկելու, մասնակիորեն կասեցնելու կամ այլ բուհերի հետ դրանք միավորելու ճանապարհով[656]: 2005 թ. Նորվեգիայի Բերգեն քաղաքում Հայաստանի Հանրապետությունը ստորագրեց նաև Բերգենի հռչակագիրը՝ միանալով Բոլոնիայի գործընթացին: Նպատակը ՀՀ մասնագիտական կրթական համակարգի ինտեգրումն էր բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքին: 2005 թ. հուլիսին հաստատվեց «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը»:

2006 թ. հունիսին որոշվեց «ՀՀ պետական բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը», որով ուսանողական նպաստը փոխհատուցվում է (լրիվ կամ մասնակի) ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, բարձրագույն ուսումնական հաստատության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

2006 թ. սեպտեմբերից առաջին անգամ ՀՀ պետական բուհերում կիրառվել է մրցակցային կրթության գաղափարը՝ ըստ առաջադիմու-

[656] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 351:

թյան ուսանողների փոխատեղումը վճարովի ուսուցման համակարգից անվճար և հակառակը: Ստեղծվել է բարձրագույն կրթության որակի ապահովման, հավաստագրման համակարգի հայեցակարգ, ուրվագծվել են դրա իրականացման հիմնական սկզբունքներն ու ուղենիշները[657]:

2012-2013 ուստարում հանրապետությունում գործել են 23 բարձրագույն պետական ուսումնական հաստատություններ և 12 մասնաճյուղեր, որոնցում սովորել է 76730 ուսանող, նրանցից 64905-ը կամ 84,6 %-ը սովորել է վճարովի ուսուցմամբ, իսկ 11825-ը կամ 15,4 %-ը՝ անվճար[658]:

Ոչ միայն հանրապետության, այլև աշխարհի առաջավոր բուհերի շարքում իր որակյալ կրթական ու գիտական մակարդակով առաջնակարգ տեղ է զբաղեցնում մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանը: 2012-2013 ուստարում հանրապետությունում գործել են 42 բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատություններ, որտեղ սովորող ուսանողների թվաքանակը կազմել է 13415: Տարեցտարի ավելի շատ օտարերկրացիներ և սփյուռքահայեր են դիմում՝ ՀՀ-ում բարձրագույն կրթություն ստանալու համար: 2007-2008 ուստարվա տվյալներով հայաստանյան պետական և ոչ պետական բուհերում սովորել են մոտ 2300 օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողներ, որոնց թիվը 2012-2013 ուստարում կիսով չափ կրճատվել է: ՀՀ-ում գործող ծրագրերը հնարավորություն են տալիս ոչ միայն կադրեր պատրաստելու Սփյուռքի հայկական համայնքի համար, կապ ապահովելու Սփյուռքի և Հայաստանի միջև, այլև բազմաթիվ ընտանիքների համար ազդեցիկ գործոն է՝ Հայաստան վերադառնալու կամ Հայաստանում մշտական բնակություն հաստատելու համար: Երիտասարդների համար ստեղծվել է արտասահմանյան կրթօջախներում որակյալ կրթություն ստանալու հնարավորություն:

XXI դարասկզբին ՀՀ գիտության ոլորտում առաջնային խնդիր էր օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի կարգավորումը: 2001 թ. ապրիլին ՀՀ կառավարության կողմից հավանության արժա-

---

[657] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 352:
[658] Տե՛ս նույն տեղում:

նացավ «Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման հայեցակարգը», որը նախանշում էր ոլորտի զարգացման ուղիները[659]:

2001 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային (պայմանագրային), թեմատիկ, նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգերը: ՀՀ կառավարության կողմից 2002 թ. ընդունվեց «ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» որոշումը, իսկ 2006 թ.՝ «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգերի դրույթները»: Դրանցում ոչ միայն նշված էին գիտական ու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրները, այլև հայրենի գիտության գերակա ուղղությունները: Նշված որոշումներում հատկապես կարևորվում էին հայագիտությունը, կիրառական արժեքավոր հետազոտությունների զարգացումը խթանող հիմնարար հետազոտությունները, տեղեկատվական ու առաջատար տեխնոլոգիաները (կենսատեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա), էներգիայի նոր աղբյուրների ուսումնասիրումը և այլն[660]:

2006-2007 թթ. ընթացքում մշակվեց և ՀՀ կառավարության հավանությանը արժանացավ «ՀՀ գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը», որի հիմնական նպատակն էր գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը: Հայեցակարգը նախանշում էր համակարգի զարգացումը 2008-2011 թթ. և ամրագրում հետևյալ հիմնական նպատակները. առաջին՝ համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմամբ գիտության ոլորտի կառավարման պետական միասնական մարմնի ստեղծում՝ հանձին Գիտության պետական կոմիտեի, երկրորդ՝ անկախ փորձաքննության համակարգի ստեղծում, երրորդ՝ գիտական աստիճանաշնորհման համակարգի վերափոխում և Գիտության պետական հիմնադրամի ստեղծում:

Բնական գիտությունների բնագավառում աշխատանք է կատարվել հետևյալ հիմնական ուղղություններով. հիմնադրվել է Ա. Ի.

---

[659] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2001, գիրք Դ, էջ 922:
[660] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 353:

Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան, որին կից ստեղծվել է «Տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկայի նորարարության համալիր ծրագիր»՝ երիտասարդ գիտնականների ու ասպիրանտների համար: Այսօր արդեն ծրագրում ընդգրկված են 11 երիտասարդներ, որոնք կառավարության ֆինանսավորմամբ մասնակցել են Շվեյցարիայի և ԱՄՆ համաշխարհային ճանաչում ունեցող գիտակրթական կենտրոնների նախագծերին, տասնյակ միջազգային գիտաժողովների՝ ներկայացնելով բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառում իրենց կատարած գիտական-նորարարական աշխատանքները[661]:

Գործի է դրվել միջուկային բժշկության ծրագիրը, որի շրջանակում Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում կազմակերպվել է «տեխնեցիում» ռադիոիզոտոպի արտադրությունը: Հայաստանում գործող երկու գամմա-խցիկներում այս ռադիոիզոտոպի կիրառմամբ հնարավոր է դարձել ավելի ճշգրիտ ախտորոշել օնկոհիվանդներին: Զուգահեռաբար հիմնադրվել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ը, որը բելգիական «ԱյԲիէյ մոլեկուլյար» ընկերության հետ համատեղ սկսել է կառուցել ռադիոիզոտոպ արտադրող նոր ցիկլոտրոնը: Վերջինս թույլ կտա Հայաստանում ստեղծել քաղցկեղի ախտորոշման և բուժման գերժամանակակից կենտրոն: Այս նպատակին արդեն հատկացվել է շուրջ 5.2 միլիոն եվրո: Կրթություն-գիտություն կապն ամրապնդելու համար կառավարությունը սկսել է գիտահետազոտական ինստիտուտների միացման գործընթացը:

Որոշակի զարգացում նկատվեց հայագիտության ոլորտում: Նրա գլխավոր խնդիրը դարձավ բոլոր ուղղությունների ըստ ամենայնի զարգացումը, համընթաց քայլելը համաշխարհային գիտության հետ և հայագիտության նվաճումները հայոց պետության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը ի սպաս դնելը: Արդի պայմաններում հայագիտության մտահոգիչ վիճակի թելադրանքով և նրա աշխատանքները համակարգելու համար 2003 թ. սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ-ն և Երևանի պետական համալսարանը կազմակերպեցին հա-

[661] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 354:

յագիտության արդի վիճակին և զարգացման հեռանկարներին նվիրված միջազգային համաժողով՝ արտերկրի հայագետների մասնակցությամբ: Համաժողովը եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է ստեղծել հայագիտական հիմնադրամ, լույս ընծայել տեղեկատվական պարբերական, հիմնել հայագիտական աշխատանքները համակարգող կենտրոն՝ Հայաստանի և արտերկրի գիտնականների մասնակցությամբ: Չնայած չստեղծվեց այդ կենտրոնը, սակայն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Երևանի Մատենադարանի և հայագիտական մյուս օջախների ակտիվ աշխատանքների համագործակցության շնորհիվ զգալի նվաճումներ ձեռք բերվեցին այս ոլորտում: 2013 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ Հայագիտական 2-րդ միջազգային համաժողովը, որը ձեռնամուխ եղավ վերոնշյալ հիմնախնդիրների լուծմանը[662]:

Արդի պայմաններում հայագիտության կարևորագույն նվաճումներից պետք է համարել «Հայոց պատմության» քառահատորյակի (յուրաքանչյուրը՝ 2 գրքով) հրատարակումը, 3-րդ և 4-րդ հատորների առաջին գրքերը հրատարակվեցին 2010 թ.: Դրանց հաջորդեցին նույն հատորների 2-րդ գրքերը և 2-րդ հատորի 2-րդ գիրքը: Վերջին երկու տարիներին ավարտվեցին «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի (16 հատորով), «Հայ ժողովրդական հեքիաթների» (17 հատորով), «Հայաստանի ազգային ատլասի» (2 հատորով), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլասի» (եռալեզու՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն), Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» (4 հատորով վերահրատարակումը 2010 թ.), Պ. Բեղիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանի» հրատարակությունները[663]:

XXI դարասկզբին (2001-2004 թթ.) իրականացվեցին հանրագիտարանի համառոտ քառահատոր հրատարակությունը (2003 թ.), «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» (5 հատորով, արժանացել է պետական մրցանակի, 2001 թ.), «Հայ-

[662] Տե՛ս Երևանի պատմություն, Երևան, 2018, էջ 310:
[663] Տե՛ս նույն տեղում:

կական Սփյուռք» (2003 թ.), «Քրիստոնյա Հայաստան» (2002 թ.), «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994 թթ.)» (2004 թ.) և հանրագիտարանային այլ հրատարակություններ[664]:

Հրատարակվել են հայագիտության տարբեր բնագավառները ներկայացնող մենագրություններ ու հոդվածների ժողովածուներ՝ նվիրված հայ պատմագիտության, աղբյուրագիտության, լեզվաբանության, գրականագիտության հիմնախնդիրներին, նաև մի քանի հազար մենագրություններ ու հոդվածներ՝ հայագիտության տարաբնույթ խնդիրներին վերաբերող, «Բանբեր Մատենադարանի» ժողովածուի մի քանի տասնյակի հասնող հատորները, «Բազմավեպն» ու «Հանդես ամսօրյան», «Պատմաբանասիրական հանդես» ու «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականները և այլն:

Հայագիտական ակտիվ հետազոտություններ է իրականացնում 2008 թվականից ԵՊՀ-ում ստեղծված Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որի գիտաշխատողների ջանքերով հրատարակվում են հայագիտության տեսանկյունից բազմաթիվ մեծարժեք գրքեր, մեթոդական ձեռնարկներ, հոդվածներ, քարտեզներ:

Կարևոր նվաճում է հայ մատենագրության ու դասական գրականության թվանշանային գրադարանի և www.digilib.am կայքի ստեղծումը, որը լայն հեռանկարներ է բացում ազգային գիտամշակութային արժեքների պահպանման, միջազգայնացման և հայագիտական ուսումնասիրությունների դյուրացման ու զարգացման առջև[665]:

Որոշակի նվաճումներ են ձեռք բերվել հնագիտական հետազոտությունների ասպարեզում: Հայ հնագետները արտասահմանյան հնագիտական արշավախմբերի հետ համատեղ ՀՀ-ում կատարեցին բազմաթիվ պեղումներ, որոնց արդյունքները անակնկալ էին ամբողջ աշխարհի մակարդակով: Հայաստանի «Արենի 1» քարանձավային համալիրում 2010 թ. կատարված պեղումներով հայտնաբերվեց եղինջի մանրաթելից պատրաստված կանացի հագուստ, որը թվագրվում է Ք. ա. 39-րդ դարով (Ք. ա. 3800 թ.), այսինքն՝ մոտ 5900 տա-

---

[664] Տե՛ս Երևանի պատմություն, Երևան, 2018, էջ 310:
[665] Տե՛ս նույն տեղում:

րեկան է: Հագուստի տարիքը որոշվել է Կալիֆոռնիայի համալսարանում կատարված հետազոտությամբ: Բացի դրանից՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագետների ուժերով նույն «Արենի 1» քարանձավային համալիրում հայտնաբերվեցին նաև 5000-ամյա ոտնաման և աշխարհի ամենահին գինեգործարանը:

Հայագիտության նվաճումներն ի մի են բերվել ՀՀ ԳԱԱ-ի և ԵՊՀ-ի կողմից հրավիրված միջազգային մի շարք գիտաժողովներում: Հիշատակության արժանի են Մովսես Խորենացու ծննդյան 1500-ամյակին, Գլաձորի համալսարանի 700-ամյակին, քրիստոնեության պետական կրոնի հռչակման 1700-ամյակին (2001) ու հայ գրերի ստեղծման 1600-ամյակին (2005) նվիրված գիտաժողովները և այլն:

Հայագիտության՝ իբրև գերակա ուղղության զարգացումը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը 2012 թ. հունվարի 12-ին ընդունեց «Հայագիտության զարգացման հայեցակարգը, ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը»: Փաստաթղթի հիմնական նպատակն է պետության և հայ մտավորականության ջանքերով հայագիտությունը վերածել հայության ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոնի: Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ հայագիտությունը կխթանի անկախ պետականության ամրապնդումը ու կնպաստի ազգային ինքնագիտակցության ուժեղացմանը:

Երևան քաղաքը մեծ հաջողությունների է հասել նաև մշակույթի զարգացման բնագավառում: 2011 թ. ՀՀ-ում գործում էր 28 թատրոն, որոնցից 18-ը՝ Երևանում: Դրանցից 13-ը գտնվում են ՀՀ մշակույթի նախարարության, 4-ը՝ համայնքների, 1-ը իրավաբանական անձանց ենթակայության տակ: 2011 թ. իրենց գործունեությամբ Երևան քաղաքի թատրոնները ապահովել են 353784.8 հազ. դրամի հասույթ, որը 2005 թ. նկատմամբ աճել է 60.8%-ով: Թատրոնի անփոփոխ թվաքանակի պայմաններում նկատվել է ներկայացումների քանակի 20.8 % աճ 2005 թ. նկատմամբ, հատկապես 2010 թ. համեմատ կտրուկ աճ է գրանցվել 2011 թ.: Գովելի է այն, որ ներկայացումների քանակը ավե-

լացել է ոչ միայն Երևան քաղաքում, այլև մարզերում, և մեկ ներկայացմանը հաճախողների թվաքանակը Երևանում հանրապետական ցուցանիշից ցածր է[666]:

2011 թ. Երևան քաղաքում գործող 61 թանգարաններից 17-ը պատմական բնույթի են, 1-ը՝ երկրագիտական, 8-ը՝ հուշային, 32-ը գրական և արվեստի, 3-ը ճյուղային: Կտրուկ աճել է վերականգված նմուշների քանակը: ՀՀ -ում 2011 թ. վերականգնվել է 7717 նմուշ, որոնցից 7439-ը՝ Երևանում: Համեմատության համար նշենք, որ 2010 թ. ՀՀ-ում վերականգնվել է 2582 նմուշ, որոնցից 2025-ը՝ Երևանում[667]:

2011 թ. Երևան քաղաքում գործել է 34 գրադարան՝ 8991.4 հազ. օրինակ գրքային ֆոնդով, 13 համերգային կազմակերպություն: Ոլորտն ավելի ամբողջական ներկայացնելու նկատառումով փաստենք, որ Երևան քաղաքում են գործում ՀՀ թատրոնների 64.3%-ը, ՀՀ թանգարանների 61.6 %-ը, ՀՀ գրադարանների 3.6 %-ը, ՀՀ համերգային կազմակերպությունների 81.3 %-ը[668]:

Պայքարը ազգային արժեքների պահպանման համար 2000-ական թթ. առանձնահատուկ ուշադրություն սևեռեց բնակչության մշակութային կյանքի աշխուժացմանը, մշակութային ծառայությունների մատչելիությանը և որակի ապահովմանը, մշակութային ենթակառուցվածքների համաչափ զարգացմանը (ըստ ոլորտների ու մարզերի): ՀՀ մշակույթի նախարարությունը ֆինանսավորեց երաժշտական, թատերական, կինոարվեստի բազում փառատոներ, ցուցահանդեսներ, աշխարհահռչակ մշակութային գործիչների հյուրախաղեր: Ժամանակակից արվեստի զարգացման ուղղությամբ 2009 թվականից սկսվեց «Դեբյուտային ծրագրերին պետական աջակցություն» ծրագիրը, որի շրջանակում օժանդակություն ցուցաբերվեց երիտասարդական թատերական արվեստի 15 ներկայացումների, 47 լավագույն երիտասարդ կոմպոզիտորների դասական ստեղծագործությունների, 28 կինոֆիլմերի ստեղծմանը (12 դեբյուտային, 16 ու-

---

[666] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011, էջ 142-143:
[667] Տե՛ս նույն տեղում, էջ 57:
[668] Տե՛ս նույն տեղում, էջ 63:

սանողական): Հովանավորչական ֆինանսական ներդրումների, միջազգային կառույցների և արտասահմանյան երկրների դրամաշնորհների հաշվին (մոտ 2 մլրդ դրամին համարժեք տարադրամ) որակական փոփոխության են ենթարկվել մշակութային միջոցառումները, համալրվել է մշակութային կառույցների նյութատեխնիկական բազան, պայմաններ են ստեղծվել մշակութային ժառանգության պահպանության կառույցների ձևավորման համար:

Միջազգային համագործակցության ոլորտում աջակցություն ցույց տրվեց միջազգային կառույցների հետ երկկողմ, բազմակողմ կապերի ամրապնդմանը: Արտերկրում հայ մշակույթի տարածման ուղղությամբ լուրջ աշխատանքներ տարվեցին: Ապահովվեց մշակութային կոլեկտիվների, անհատների մասնակցությունը շուրջ 120 միջազգային միջոցառումների՝ հյուրախաղերի, փառատոնների, մրցույթների, ցուցահանդեսների և այլն, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակում մրցույթում հաղթելով՝ Երևանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012 թ. հայտարարվեց գրքի համաշխարհային մայրաքաղաք:

բ. Արվեստը 1991-2018 թվականներին

Երաժշտական արվեստ: Երևանի երաժշտական կյանքն արմատական փոփոխությունների ենթարկվեց 1990-ականներին:

Երևանում իր գործունեությունն է շարունակում Հայաստանի կոմպոզիտորների միությունը (նախագահներ՝ Ռոբերտ Ամիրխանյան (1991-2013) և Արամ Սաթյան (2013-ից)): 1994 թվականից վերականգնվում են Միության գարնանային և աշնանային համերգաշարերը, տպագրվում են Միության անդամների բազմաթիվ ստեղծագործություններ: 1996 թ. Միության շենքում գործող ձայնագրման ստուդիայում ձայնագրվում են Միության անդամների ստեղծագործությունները, 1994 թվականից արտասահմանյան բարերարների աջակցությամբ կազմակերպվում են հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ամենամյա մրցանակաբաշխություններ: 2013 թվա-

կանից Հայաստանի կոմպոզիտորների միությունը ստանձնում է հայ ժամանակակից երաժշտության պրոպագանդման գործը. Երևանում կազմակերպվում են Հայ ժամանակակից երաժշտության առաջին (2014), երկրորդ (2015), երրորդ՝ «Պրեմիերա» (2016) և չորրորդ՝ ՀԿՄ 85-ամյակին նվիրված (2017) փառատոները, Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների փառատոները (2014, 2015, 2016, 2017)[669]:

Վերականգնվում է երբեմնի բազմակողմանի համագործակցությունը երևանցի և օտարազգի կոմպոզիտորների միջև: «Համագործակցություն» նախագծի շրջանակներում տեղի են ունենում հայ և ռուս երիտասարդ կոմպոզիտորների, հայ-վրացական և հայ-չինական ժամանակակից երաժշտության համերգները: Կարևորվում է աշխատանքը երիտասարդ ստեղծագործողների բացահայտման և խրախուսման ուղղությամբ: Դրա վկայությունն են ՀՀ մշակույթի նախարարության և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ իրականացվող Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթները (2014, 2015, 2016, 2017, 2018), որոնց մասնակցում են ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի 8-18 տարեկան պատանի ստեղծագործողները: Մրցույթը նպատակ ուներ բացահայտելու և սատարելու պատանի տաղանդներին[670]:

1994 թ. Երևանում հիմնադրվեց Հայկական երաժշտական համաժողովը (հիմնադիր-նախագահ՝ կոմպոզիտոր Լևոն Չաուշյան), որի նպատակը հայ արդի դասական երաժշտության զարգացմանն ու տարածմանը նպաստելն էր հայրենիքում և արտասահմանում, իսկ 2010 թ. ստեղծվեց «Հայ երիտասարդ կոմպոզիտորների ու կատարողների միավորումը» (ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր և երգիչ Արսեն Բաբաջանյան)[671]:

Հայ կոմպոզիտորները շարունակում են իրենց բեղմնավոր բազմաժանր ստեղծագործությունը. հրապարակ են իջնում ավագ և մի-

---

[669] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 310-311:
[670] Տե՛ս նույն տեղում, էջ 311:
[671] Տե՛ս նույն տեղում:

ջին սերնդի ճանաչված կոմպոզիտորներ Էդվարդ Միրզոյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Էդգար Հովհաննիսյանի, Ադամ Խուդոյանի, Վլադիլեն Բալյանի, Գեղունի Չթչյանի, Տիգրան Մանսուրյանի, Գագիկ Հովունցի, Ստեփան Շաքարյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, Մարտին Վարդազարյանի, Մելիք Մավիսակալյանի, Երվանդ Երզնկյանի, Արեգ Լուսինյանի, Մարտուն Իսրայելյանի, Աշոտ Զոհրաբյանի, Արզաս Ոսկանյանի, Յուրի Հարությունյանի, Արամ Սաթյանի, Լևոն Չաուշյանի, Վահրամ Բաբայանի, Երվանդ Երկանյանի, Ռուբեն Սարգսյանի, Միխայիլ Կոկժաևի, Ռուբեն Ալթունյանի, Էդուարդ Սաղոյանի, Վաչե Շառաֆյանի, Յուրի Գալստյանի, Վարդան Աճեմյանի, Ստեփան Լուսիկյանի, Արմեն Սմբատյանի, Ստեփան Ռոստոմյանի, Վարդ Մանուկյանի, Ստեփան Բաբաթորոսյանի, Էդուարդ Հայրապետյանի, Սուրեն Զաքարյանի, Աշոտ Բաբայանի, Աշոտ Ղազարյանի, Ստեփան Սուքիասյանի, Նարինե Զարիֆյանի, Սոֆա Ազնաուրյանի, Արմենուհի Կարապետյանի, Աննա Գարսոյանի, Անահիտ Կոստանյանի, Նաիրա Դիվանյանի, Սվետլանա Ալեքսանյանի և էլի շատ-շատերի սիմֆոնիկ, կամերային, գործիքային, խմբերգային, ինչպես նաև երաժշտական թատրոնի համար գրված opus-ները, որոնք աչքի են ընկնում ոճական և ժանրային բազմազանությամբ[672]:

Ստեղծվում են Էդվարդ Միրզոյանի «Հանդիսավոր շեփորները» պղնձյա փողայինների և հարվածայինների համար՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին (1993), և «Պոեմը» թավջութակի և դաշնամուրի համար՝ նվիրված Մեղեա Աբրահամյանին (1996, երկրորդ խմբագրություն՝ 2001), Ալեքսանդր Հարությունյանի Տրոմբոնի և նվագախմբի կոնցերտը (1991), Տուբայի և նվագախմբի կոնցերտը, տրիո-սյուիտները (1992, 1998 ևն), Էդգար Հովհաննիսյանի «Գողգոթա» սիմֆոնիկ պասակալիան (1994), «Գրիգոր Նարեկացի» օրատորիան (1995) և «Սոնատը»՝ մենանվագ ջութակի համար (1997), Տիգրան Մանսուրյանի «Գարնան երգերը» (1993, խոսք՝ Հ. Թումանյանի), Ալտի և նվագախմբի կոնցերտը (1995), «Արվեստ

[672] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 311:

Քերթության»՝ երգչախմբի համար (1997-1999, խոսք՝ Ե. Չարենցի), «Հավատով խոստովանիմ» ձայնի՝ ալտի և տղամարդկանց երգչախմբի համար (1999), «Կտակարանը»՝ լարային քառյակի համար (2004), «Ռեքվիեմ» (2011) և այլն, Ռոբերտ Ամիրխանյանի «Երևանյան ռապսոդիան»՝ դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2005), կանտատները՝ «Կանտատ սիրո» (2012, պրեմիերան՝ Գերմանիայում՝ Հայդենհայմի սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի կատարմամբ), «Պոետի սիրտը»՝ նվիրված Միսաք Մանուշյանին (պրեմիերան՝ 2015, ՀԱՖՆ և երեք երգչախմբեր), Երաժշտական նովելների շարը (2016), Ռուբեն Ալթունյանի «Սիմֆոնիետը»՝ կամերային նվագախմբի համար (1997), «Թափուր անդաստանը»՝ դուդուկի, զուռնայի և կամերային նվագախմբի համար (1998), հիմն-օրհներգը՝ խառը երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1999)՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, «Կոնցերտ-սիմֆոնիան»՝ ջութակի, ալտի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2000), «Հարազատ մեղեդիները» (2001), «Հոգևոր նախերգանքը» (2001) և «Խաչատրիանան» (2013)՝ կամերային նվագախմբի համար, «Մատյան ողբերգության» բալետ-օրատորիան (ըստ Գրիգոր Նարեկացու, 2010), «Հորովելը», «Ասերգերը» և «Կոմիտասիանան»՝ ժողովրդական գործիքների նվագախմբի համար (2011), դաշնամուրային տրիոն (2012) և այլն[673]:

Երաժշտական թատերական ժանրերում է ստեղծագործում Էդուարդ Սաղոյանը. ստեղծվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» օպերան (2003), «Նարեկացի՝ ձայն առ Աստված» բալետը (2008), «Մաշտոց» օպերան (2014), «Հրաշքների երազ» մանկական բալետը (2012) ևն[674]:

Երևանում է ստեղծվում հայկական առաջին ու դեռևս միակ փոփ-օպերան՝ Արամ Սաթյանի «Լիլիթը» (1997), որը բեմադրվել է 2003 թ.: «Լիլիթը» նոր խոսք էր հայ երաժշտության մեջ: Հետաքրքիր է օպերայի գաղափարական բովանդակությունը. արվեստն ի զորու է

[673] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 311:
[674] Տե՛ս նույն տեղում, էջ 312:

ազնվացնել մարդուն, արվեստագետը կարողանում է տեսնել մարդու մեջ եղած բարին, լավն ու մաքուրը և իր ազդեցությամբ վերափոխել նրան: «Լիլիթը» ձոն է արվեստին ու արվեստագետին: Ուշագրավ է, որ արվեստի, ստեղծագործ մարդու փառաբանումը Ա. Սաթյանը կատարեց 1990-ականներին, երբ Հայաստանը հայտնվել էր սոցիալ-տնտեսական ու բարոյահոգեբանական ճգնաժամի մեջ, երբ կտրուկ փոխվել, գլխիվայր շուռ էր եկել մարդկանց արժեհամակարգը, հասարակության մեջ երբեմնի հարգանք վայելող մտավորականության ներկայացուցիչները, հատկապես արվեստագետներն ու գիտնականները անտեսվել էին պետության և իշխանությունների կողմից և մատնվել անուշադրության ու մոռացման: Եվ ահա Ա. Սաթյանն իր փոփ-օպերայով հանդես է գալիս արվեստի փառաբանությամբ: «Լիլիթ»-ից առաջին անգամ առանձին հատվածներ հնչեցին 1997 թ.՝ կոմպոզիտորի՝ Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցած հեղինակային համերգի ժամանակ[675]:

Փոփ-օպերայում (ի դեպ, այդ անվանումն առաջին անգամ օգտագործել է Արամ Սաթյանը) միաձուլված են ժողովրդական, արդիական ու փոփ երաժշտության ինտոնացիաներն ու ռիթմերը: Սիմֆոնիկ նվագախմբի դասական գործիքների միջոցով Ա. Սաթյանն ստեղծել է էլեկտրոնային գործիքների հնչողություն և փոփ երաժշտության մեջ կիրառել սիմֆոնիզմի սկզբունքները:

Անկախության տարիներին շարունակում է իր առաջատար դիրքերը պահպանել սիմֆոնիկ և կամերային-գործիքային երաժշտությունը: Այս ասպարեզի նվաճումներից են Արամ Սաթյանի «Համլետ» սիմֆոնիկ պոեմը՝ Շեքսպիրի համանուն ողբերգության մոտիվներով (2007), և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Դրվագ կյանքից» վալսը՝ նվիրված Ռավելի հիշատակին: «Համլետն» արդեն ունի բեմական հարուստ կենսագրություն: «Դրվագ կյանքից» վալսը (2009-2010) նույնպես ծրագրային գործ է՝ մեր օրերի մասին: Այն ասք է քնարական հերոսի կայացման մասին. հերոսը մահանում է, բայց վալսը չի ընդհատվում, քանի որ կյանքը շարունակվում է: Կոմպոզի-

[675] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 312:

տորը միաժամանակ զուգակցում է 7 վալս, այդ թվում՝ Շտրաուսի, Արամ Սաթունցի վալսերը, ինչպես նաև «Кружится, вертится шар голубой» վալսը: «Վալսը» հնչել է Ռուբեն Ասատրյանի, Էդուարդ Թոփչյանի և Սերգեյ Սմբատյանի մեկնաբանությամբ: 2011 թ. սեպտեմբերի 14-ին՝ Ա. Սաթյանի ստեղծագործական երեկոյի ժամանակ, «Վալսը» հնչեց օպերային թատրոնի նվագախմբի կատարմամբ՝ Ռ. Ասատրյանի ղեկավարությամբ, և իրականացվեց բալետային բեմադրություն (բալետմայստեր՝ Ռուդոլֆ Խառատյան)[676]:

Կամերային երաժշտության ժանրերն են գերակշռում Լևոն Չաուշյանի ստեղծագործության մեջ. նկատի ունենք Լարային չորրորդ (1994), հինգերորդ (2012) և վեցերորդ (2015) կվարտետները, «Դաշնամուրային տրիոն» (2000), «Սոնատը»՝ մենակատար ջութակի համար (1997), «Երկխոսություն» պիեսը՝ դաշնամուրի և ալտի համար (2008), դաշնամուրային Երրորդ՝ «Պատկերներ առանց ցուցահանդեսի» (2004) սոնատը և «Երկրորդ սոնատի» երկրորդ խմբագրությունը (2014), «Urbit et Orbit» (1997), «Deja-vu» (2008) դաշնամուրային պիեսները և այլն: Սիմֆոնիկ երաժշտության ժանրը ներկայացնում են «Ջութակի կոնցերտի երկրորդ խմբագրությունը» (2011) և «Տոնական շեփորներ» նախերգանքը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար (2003): Խմբերգային ժանրին են պատկանում a cappella խառը երգչախմբի համար գրված «Պոեմը»՝ ըստ Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» «Ի խորոց սրտի խոսք Աստծո հետ ՁԹ» (2003), «Տաղ ծննդյան» և «Տաղ խաչի վերցման» (2005) խառը երգչախմբերի համար գրված խմբերգերը: «Լարային վեցերորդ կվարտետը» և «Սրբազան Հայաստան» վոկալ սիմֆոնիկ ստեղծագործությունը (2014) նվիրվել են Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին[677]:

Երվանդ Երկանյանի ստեղծագործական որոնումներն իրենց մարմնավորումը գտան այնպիսի ստեղծագործություններում, ինչպիսիք են «Կայսր» օպերան (2008), «Ավագ շաբաթ» օրատորիան

---

[676] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 313:
[677] Տե՛ս նույն տեղում, էջ 312-313:

(1995), «Հարության կանտատը» (1998), «Նահատակաց հրապարակը Բեյրութում» սիմֆոնիկ պոեմը (2001, 2-րդ խմբ.՝ 2006), «Օգոստինոս Երանելու խոստովանությունները» կանտատը (2008), «Բաալբեկի ավերակները» սիմֆոնիկ պոեմը (2008), «Առանձնացյալի երգերը» վոկալ-սիմֆոնիկ շարքը մեներգիչների և նվագախմբի համար (2010), «Յայտնութիւնն ըստ Յովհաննու» օրատորիան՝ 3 մեներգչի, 3 երգչախմբի, երգեհոնի, պղնձյա և հարվածային գործիքների համար (2011), Հինգերորդ սիմֆոնիան՝ «Խաչված երազներ» (2011), «Հերոսական ռապսոդիան»՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին (2011), «Էպիտաֆիան»՝ Ճապոնիայում երկրաշարժից և ցունամիից զոհվածների հիշատակին (2011), «Շուշի» սիմֆոնիկ սյուիտը (տրիպտիխ)՝ նվիրված Շուշիի ազատագրման 20-ամյակին (2012), «Միստերիան»՝ սիմֆոնիկ նվագախմբի համար (2012), «Եռաձայն պատարագ» օրատորիան՝ սամունքողի, երգչախմբի, մանկական երգեցիկ խմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2013), «Տեսիլք» կոնցերտ-պոեմը՝ ջութակի և նվագախմբի համար (2006), «Կոնցերտը»՝ ֆագոտի և սիմֆոնիկ նվագախմբի համար («Concerto elevato», 2010), «CAPRICCIO ELEVATO» ջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2011), «PIETA»-ն՝ գալարափողի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2012), «SALOMEA»-ը՝ ջութակի և նվագախմբի համար (2012), «Քրոնիկոնը»՝ կամերային (լարային) նվագախմբի համար (2007), «Հումորեսկը»՝ մենակատարների անսամբլի համար (2008), «Մանկան ամենօրյա երազը»՝ կոնցերտը երկու ֆլեյտայի, հարվածայինների և կամերային նվագախմբի համար (2011), «Խաչելությունը»՝ ալտի և կամերային նվագախմբի համար (2011) և այլն[678]:

Վարդան Աճեմյանի ստեղծագործության մեջ առանձնանում են «Տասներկուերորդ գիշեր» մյուզիքլը (ըստ Վ. Շեքսպիրի, 1999), սիմֆոնիաները (2004, 2014), «Տոնական նախերգանքը» (1995, 2000), «Սայաթ-Նովա» նախերգանքը՝ լարային նվագախմբի համար, «Տաղ գարնան և սիրո» (ըստ Գրիգորիս Աղթամարցու տաղերի, 2001)՝ սոպրանոյի և լարային նվագախմբի համար, «Որմնանկարները» (2001,

[678] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 312-313:

նվիրված Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին)՝ դաշնամուրի համար, «Rubato» դաշնամուրի համար (2000), «Հնչյունի թատրոն» կոնցերտային պոեմները՝ դաշնամուրի և լարային նվագախմբի համար (2001, 2011), «Բալլադ զինվորի մասին»՝ ձայնի և կամերային նվագախմբի համար (1998), Թավջութակի և նվագախմբի կոնցերտը (1994), Դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտը (2006), Կոնցերտ-ֆանտազիան (1996, Ա. Տերտերյանի հիշատակին), «Նովելը» ջութակի և դաշնամուրի համար (2014) և այլն[679]:

Ստեղծվում են Ստեփան Ռոստոմյանի Չորրորդ սիմֆոնիան (2 տարբերակ, 1998), «Մուտք» օպերան՝ նվագախմբի, ժողովրդական գործիքների (դուդուկ, զուռնա, պկու), շոտլանդական պարկապզուկի, ավստրալիական դիջիրիդուի համար (2002), «Տաղ ավետման»՝ ֆլեյտայի, հոբոյի, ջութակի, թավջութակի, սոպրանոյի, դաշնամուրի, հարվածային գործիքների համար (2008), «Տաղ սուրբ երրորդության»՝ ֆլեյտայի, հոբոյի, ջութակի, թավջութակի, սոպրանոյի, դաշնամուրի, հարվածային գործիքների համար (2012) և այլն[680]:

Երաժշտական տարբեր ժանրերում է ստեղծագործում Վահրամ Բաբայանը. նշենք «Liramlarum» (2002), «Երգ սիրո և գեղեցկության մասին» (2003) և «Մուսա լեռան 40 օրը» (ըստ Ֆ. Վերֆելի, 2004) օպերաները, «Դեպի լույս» (1995, պրեմիերան՝ 1995, Բալթիմորում (ԱՄՆ)) և «Փոքրիկ իշխանը» (ըստ Ա. Սենտ Էքզյուպերիի, 1998) բալետները, «Հիսուսն է խոսում» (1991) և «Քրիստոսի կյանքից» (1995) օրատորիաները, «1915 թիվ» կանտատը՝ սոպրանոյի, բարիտոնի, խառը երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար (1995), սիմֆոնիաները, կոնցերտները՝ դաշնամուրի (2003), թավջութակի (1992), կոնտրաբասի (1997), ջութակի (2005), լիտավրների և նվագախմբի համար (2015), կամերային (3-րդը՝ «Կապույտ երկինք և պարզ արև», 2009 ևն), խմբերգային («Սա դեռևս վերջը չէ, սա միայն սկիզբն է», 2001, «Լեռան քարոզը», 2008) և հարվածայինների համար (2001)

---

[679] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 312:
[680] Տե՛ս նույն տեղում:

սիմֆոնիաները և այլն[681]:

1990-ականների սկզբին Երևանում բնակություն հաստատած Միխայիլ Կոկժանը ստեղծում է «Սիմֆոնիան» (1998), «Նմանակելով Ալեքսանդր Հարությունյանին» աղաջոն՝ նվիրված է Ա. Հարությունյանին (2008), «Garden of Stones-2» պարաֆրազը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար՝ ըստ ճապոնացի կոմպոզիտոր Գադասի Գուինոյի թեմայի (2010), «Նահատակներին»՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակին (1991), «Սուրբ Գրիգոր Նարեկացու լուսավորումն ու ողբը» (2001), «Insomnia»-ն՝ բարիտոնի և կամերային նվագախմբի համար՝ Շեքսպիրի տեքստով (2011), «Concerto Grosso» (2004), «Նվագախմբի փորձ» Concerto Buff (2006), «Մոխրոտիկի առաջին պարահանդեսը» (2010), «Պարզ մեղեդի»՝ ջութակի և լարային նվագախմբի համար՝ նվիրված Բ. Լիվշիցին, «Պավանան»՝ թավջութակի և լարային նվագախմբի համար (2008) և այլն[682]:

Վաչե Շառաֆյանի ստեղծագործության մեջ առանձնանում են «Աբգար թագավոր» օպերան (2010), «Երկրորդ լուսին» բալետը՝ սրբազան ժեստերով (2013), Երկրորդ սիմֆոնիան՝ «կոնցերտային» դուդուկի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2007), «Զարթիք փառք իմ» կոնցերտը՝ ալտի, դուդուկի, դիսկանտի, բարիտոնի և նվագախմբի համար (2005), «Կոնցերտը»՝ լարային նվագախմբի համար (1992), «Կոնցերտ-սերենադը»՝ ջութակի և լարային նվագախմբի համար (1998), «Հրավառությունը» սիմֆոնիկ նվագախմբի համար (2016), «Ակացիաների երգի առավոտյան բուրմունքը»՝ դուդուկի և լարային կվարտետի համար (2001), «Տենոր սաքսոֆոնի և սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտը» (2003), «Թավջութակի և նվագախմբի N 1» (2004), «Ջութակի և նվագախմբի N 2» “CON-COR-D-ANCE” կոնցերտները (2008) և այլն[683]:

Հիշատակության են արժանի նաև Արզաս Ոսկանյանի «Մենախոսություն» սոնատը թավջութակի համար (1993), «Նվիրում Կաթո-

---

[681] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 312-313:
[682] Տե՛ս նույն տեղում:
[683] Տե՛ս նույն տեղում:

ղիկոս Վազգեն Ա-ի հիշատակին» եղերերգը՝ չորս թավջութակի համար (1994), «Սիրո քնար» (ժողովրդական թեմաներով) երաժշտական ներկայացումը (1995), «Հույզեր»՝ ֆանտազիան դաշնամուրի և լարային նվագախմբի համար (2004), «Օքրոյական» երաժշտական ներկայացումը՝ մենակատար տենորի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2005), «Ոգու թռիչք» պատկերը՝ դուդուկի և լարային նվագախմբի համար (2008), «Աշնան հրաշք» վոկալ շարքը՝ մենակատարի և լարային նվագախմբի համար (խոսք՝ Զ. Կասյանի, 2010) և այլն[684]:

Ստեղծագործական ակտիվությամբ են աչքի ընկնում կին կոմպոզիտորները: Գեղունի Չքչյանը հանդես է գալիս նոր ստեղծագործություններով, որոնց մեջ առանձնանում են «Անձրևը տեղաց» վոկալ ցիկլը՝ ձայնի և դաշնամուրի համար (1993), «Հայ արի զինվորը»՝ երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1993), «Հայրենի երկիրը»՝ երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1994), «Սուրբ հոգի» վոկալ ցիկլը՝ ձայնի և դաշնամուրի համար (1995), «Աղոթքներ» տրիպտիխը՝ խառը երգչախմբի համար (2000), «Հայկական էսքիզը», «Հումորեսկը»՝ շեփորի և դաշնամուրի համար (2001), «Սոնատը»՝ կլառնետի և դաշնամուրի համար (2006), «Ժանյակները»՝ ֆլեյտայի և դաշնամուրի համար (2007), «Նովելլետը», «Բուռլեսկը»՝ ֆագոտի և դաշնամուրի համար (2007), «Էստամպներ» դաշնամուրային տրիոն (2012) են:

Վարդ Մանուկյանը ստեղծում է «Կրկնակի կոնցերտը»՝ ջութակի, ալտի և լարային նվագախմբի համար (2014), «Կվինտետը»՝ ձայնի և անսամբլի համար, «Տրիպտիխը»՝ ձայնի և լարային քառյակի համար, «Խոստովանություն» սիմֆոնիան (2012), «Նվիրում Սայաթ-Նովային» սյուիտը՝ լարային քառյակի համար (2015), «Էլեգիան»՝ ալտի և նվագախմբի (2017) համար և այլն[685]:

---

[684] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 312-313:
[685] Տե՛ս նույն տեղում:

* * *

Երևանում իրենց գործունեությունն են շարունակում Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնն ու Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը:

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում բեմադրվում են Գ. Դոնիցետտիի «Պոլիկտոս» (1993), Ռ. Լեոնկավալլոյի «Հտպիտներ» (1996), Ջ. Վերդիի «Օթելլո» (1995), «Տրավիատա», «Տրուբադուր» (երկուսն էլ՝ 2000) և «Այիդա» (2010), Վ. Բելլինիի «Նորմա» (2001), Ժ. Բիզեի «Կարմեն» (2001), Ս. Ռախմանինովի «Ալեկո» (2005), Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» (2007), Ա. Տերտերյանի «Երկրաշարժ» (2008), Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» (2009) օպերաները: Վերականգնվում Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի» (1992), Ա. Տիգրանյանի «Անուշ» (1994) օպերաները, համերգային կատարումներով հնչում են Վ. Ա. Մոցարտի «Առնանգում հարեմից» (1993) և Ա. Վիվալդիի «Տիգրան» (2001) օպերաները: Բեմական կյանքի ուղեգիր են ստանում Տ. Մանսուրյանի «Ձյունե թագուհին» (1990), Լ. Ճգնավորյանի «Օթելլո» (1993), Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ» (1999, երկուսն էլ՝ բալետմայստեր՝ Վ. Գալստյան), Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը» (1998), Ժ. Բիզե-Ռ.Շչեդրինի «Կարմեն-սյուիտը» (1998), Ա. Խաչատրյանի «Հավերժություն» (2003, բալետմայստեր՝ Մ. Մարտիրոսյան), «Սպարտակ» (2009, բալետմայստեր՝ Յու. Գրիգորովիչ), Է. Հովհաննիսյանի «Վարդանանք» (2008), «Բախի կրքերը» (ըստ Յ. Ս. Բախի երաժշտության, 2010, երկուսն էլ՝ բալետմայստեր՝ Ռ. Խառատյան) բալետները են[686]:

1990-ականներին և ավելի ուշ համալրվում է թատրոնի ստեղծագործական կազմը (մեներգիչներ՝ Ռ. Օջախյան, Է. Պապիկյան, Բ. Թումանյան, Հ. Հացագործյան, Հ. Պապյան, Ա. Մխիթարյան, Գ. Գրիգորյան, Ս. Թորոսյան, Մ. Մկրտչյան, Լ. Գրիգորյան, Վ. Խաչատրյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Դեմուրչյան, Ա. Սեյրանյան, Մ. Դեհնյան, Գ. Հակոբյան, Պ. Քարազյան, Լ. Ավետիսյան, Ս. Աղամա-

[686] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 313:

լյան, դիրիժորներ՝ Հ.Ոսկանյան, Ա. Քաթանյան, Յ. Դավթյան, Վ. Չարչօղլյան, Օ. Դուրյան, Կ. Դուրգարյան, Ռ. Ասատրյան, Ա. Առաքելյան, Հ. Արզումանյան): Թատրոնի գեղարվեստական ղեկավարներն էին Տիգրան Լևոնյանը (1990-1999), Գեղամ Գրիգորյանը (1999-2016՝ ընդմիջումով), Կոնստանտին Օրբելյանը (2016 թվականից) են[687]:

Հարուստ ու հետաքրքիր է եղել Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի (տնօրեն՝ Կարո Շահբազյան) կյանքը 1989-1993 թթ., երբ թատրոնի գեղարվեստական ղեկավարն էր Արմեն Էլբակյանը: Բեմադրվել են երաժշտական տարբեր ժանրերի ներկայացումներ:

Թատրոնի ստեղծագործական կյանքում շրջադարձային էր 1992 թվականը: Տարիներ շարունակ զրկված սեփական շենքից ու բեմից, թատրոնը հանդես էր գալիս տարբեր թատերաբեմերում: Իր 50-րդ թատերաշրջանը թատրոնը դիմավորեց հարազատ հարկի տակ՝ սեփական բեմում: 1992թ. սեպտեմբերի 20-ին ներկայացվել է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» մյուզիքլը՝ Արմեն Էլբակյանի բեմադրությամբ, որի երաժշտության հեղինակն էր Ստեփան Լուսիկյանը:

1993 թ. թատրոնի ղեկավարությունն ստանձնել է Երվանդ Ղազանչյանը, որի գործունեությունն էապես նպաստեց թատրոնի առաջընթացին: Թատրոնը, հավատարիմ իր կոչմանը, դիմեց երաժշտական-թատերական բոլոր ժանրերին: Խաղացանկ մտան շուրջ 50 նոր բեմադրություն (օպերետ, մանկական օպերետ, մյուզիքլ, օպերետ-վոդևիլ, երաժշտական կատակերգություն, երաժշտական պամֆլետ, երաժշտական սատիրա, հերոսական կատակերգություն), այդ թվում՝ Ա. Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան» (1993, 2002), Ա. Այվազյանի և Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» (1995, 2009, 2015), Տ. Չուխաճյանի «Կարինե» (2014)[688]:

Ե. Ղազանչյանի ջանքերով սերտացավ թատրոնի ստեղծագործական համագործակցությունը կոմպոզիտորներ Մարտին Վարդա-

---

[687] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 313:
[688] Տե՛ս նույն տեղում:

զարյանի (Ե. Օտյան՝ «Զվարճալի պատերազմ կամ վտանգավոր օտարամոլություն», 2016), Վլադիլեն Բալյանի (Վ. Տերյան, Ս. Կապուտիկյան՝ «Սիրո անհուն առեղծվածը», 2005), Ստեփան Լուսիկյանի (Հ. Պարոնյան՝ «Մեծապատիվ մուրացկաններ», 1992, Հ. Պարոնյան՝ «Շողոքորթը», 1995, Արիստոփանես՝ «Լիսիստրատե», 1997), Ռոբերտ Պետրոսյանի (Գ. Վոլչեկ՝ «Արքայադուստրը և փայտահատը», 1995), Ստեփան Բաբաթորոսյանի (Գ. Ֆիգերեյդո՝ «Աղվեսն ու խաղողը» (Եզոպոս), 1998), Արամ Սաթյանի (Ա. Շիրվանզադե՝ «Մորգանի խնամին», 2012, արժանացավ «Լավագույն ռեժիսուրա» անվանակարգի «Արտավազդ» մրցանակին, Գ. Սունդուկյան՝ «Ձեր աստվածը փողն է», 2015) հետ: Թատրոնի դիրիժորական վահանակը վստահվել է դիրիժորներ Վիլեն Չարչօղլյանին, Յուրի Դավթյանին, Հարություն Արզումանյանին[689]:

2014 թ. հունվարի 25-ին Երվանդ Ղազանչյանի բեմադրությամբ, Յուրի Դավթյանի երաժշտական ղեկավարությամբ, Ռոբերտ Էլիբեկյանի բեմանկարչությամբ բեմ բարձրացավ Տ. Չուխաճյանի «Կարինե» օպերետը՝ հայացված «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» կոմիկական օպերան: Ներկայացման մեջ ընդգրկվել էին թատրոնի հիմնականում երիտասարդ ուժերը: «Կարինեի» բեմադրությունն իր պատմաքաղաքական ու ռազմավարական նշանակությամբ և պրոֆեսիոնալ բարձր մակարդակով դարձավ երևույթ Հայաստանի մշակութային կյանքում, և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով ՀՀ նախագահի 2014 թվականի մրցանակը շնորհվեց «արվեստի բնագավառում՝ Երվանդ Ղազանչյանին, Լալա Պուլուզյանին, Ավետիք Խալաթյանին, Արսեն Գևորգյանին և Վահագն Մարգարյանին՝ Տիգրան Չուխաջյանի «Կարինե» օպերետի համար»[690]:

* * *

Համայն հայության մայրաքաղաքում բնակություն են հաստատում մի շարք սփյուռքահայ երաժիշտներ: Դիրիժոր և կոմպոզիտոր

---

[689] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, 313:
[690] Տե՛ս նույն տեղում, էջ 313:

Լորիս Ճգնավորյանը 1989-2000 թթ. ղեկավարել է Հայաստանի ֆիլ-հարմոնիկ նվագախումբը, կազմակերպել սիմֆոնիկ երաժշտության փառատոներ («Աշխարհը և մենք», «Արամ Խաչատրյան-90», «Եղեռնից մինչև անկախություն...»), «Հոգևոր երաժշտության ժամ» համերգաշարը ևն: Դիրիժոր Օհան Դուրյանը 1991-1994 թթ. եղել է ՀՀ հեռուստառադիոպետկոմի սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիր-գեղարվեստական ղեկավարը, 1999-2002 թթ.՝ Երևանի օպերայի և բալետի թատրոնի գլխավոր դիրիժորը և իր բարձր արվեստով մեծապես նպաստել է թատրոնի առաջընթացին: Դիրիժոր և կոմպոզիտոր Արամ Ղարաբեկյանի ղեկավարությամբ (1997-2011) Հայաստանի կամերային նվագախումբը հասել է կատարողական բարձր մակարդակի, աչքի ընկել ինքնատիպ մեկնաբանություններով[691]:

Երևանում շարունակում են գործունեություն ծավալել ինչպես ավագ սերնդի կատարողական արվեստի ներկայացուցիչները, այնպես էլ երիտասարդ սերնդի երաժիշտ-կատարողները. բազմահմուտ դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը, դիրիժորներ Կարեն Դուրգարյանը, Սերգեյ Սմբատյանը, Էդուարդ Թոփչյանը, Վահան Մարտիրոսյանը, Ռուբեն Ասատրյանը, Տիգրան Հեքեքյանը, Ռոբերտ Մլքեյանը, Հարություն Թոփիկյանը, Հարություն Արզումանյանը, Սոնա Հովհաննիսյանը և ուրիշներ, երգիչներ Գեղամ Գրիգորյանը, Բարսեղ Թումանյանը, Հասմիկ Պապյանը, Հասմիկ Հացագործյանը, Էմմա Պապիկյանը, Անահիտ Մխիթարյանը, Գևորգ Հակոբյանը, Պերճ Քարագյանը, Մագդա Մկրտչյանը, Քրիստինե Սահակյանը, Հայկ Տիգրանյանը, Նարինե Անանիկյանը, Արծվիկ Դեմուրճյանը, Աննա Մայիլյանը, Իրինա Զաքյանը և ուրիշներ, դաշնակահարներ Սվետլանա Նավասարդյանը, Անահիտ Ներսիսյանը, Արմեն Բաբախանյանը, Արմինե Գրիգորյանը, Հայկ Մելիքյանը, Արուս Աճեմյանը, Գայանե Մարգարյանը, Լիլիթ Արտեմյանը, Անահիտ Մարգարյանը և ուրիշներ, ջութակահարներ Կարեն Շահգալդյանը, Սյուզի Երիցյանը և ուրիշներ, ալտահար Վաչե Հովեյանը, թավջութակահարներ Արամ Թալալյանը, Կարեն Քոչարյանը, Հասմիկ Վարդանյանը և այլք, եր-

[691] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 313:

գեհոնահարներ Վահագն Ստամբոլցյանը, Հովհաննես Մանուկյանը, սաքսոֆոնահարներ Արմեն Հյուսնունցը և Դավիթ Մելքոնյանը, ֆագոտահար Շմավոն Գրիգորյանը, կլառնետահար Դավիթ Գյուլամիրյանը և ուրիշներ[692]:

Երևանում շարունակում են իրենց կատարողական գործունեությունը ծավալել խորհրդային շրջանում ստեղծված երաժշտական կոլեկտիվները՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Երևանի պատվավոր քաղաքացի Հովհաննես Չեքիջյան), Կոմիտասի անվան լարային քառյակը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, Երևանի պատվավոր քաղաքացի Էդուարդ Թաղևոսյան), Հայկական ժողովրդական երգիպարի անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Ժիրայր Ալթունյան), Հայաստանի ազգային ռադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի պատվավոր քաղաքացի Երվանդ Երզնկյան), Հայաստանի ազգային ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների պետական անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, Երևանի պատվավոր քաղաքացի Ռուբեն Մաքեոսյան)[693], Հայաստանի ազգային ռադիոյի կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ ՀՀ վաստակավոր մանկավարժ Տիգրան Հեքեքյան), Հայաստանի գուսանական և ժողովրդական երգի պետական անսամբլը (հիմնադիր-գեղարվեստական ղեկավար՝ Ռուբեն Ալթունյան), Հայաստանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռոբերտ Մլքեյան) «Երևան» փողային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր՝ Հայկ Հովակիմյան) են[694]:

Խորհրդային տարիներին Երևանում հաջողությամբ գործած

---

[692] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 313-314:
[693] Տե՛ս նույն տեղում, էջ 314:
[694] Տե՛ս նույն տեղում:

երաժշտական կոլեկտիվներից մի քանիսն էլ, ստեղծված պայմաններում չկարողանալով շարունակել իրենց գործունեությունը, կա՛մ լուծարվեցին, կա՛մ վերակազմակերպվեցին այլ կոլեկտիվների հետ: 1992 թ. դադարեցրեց իր գործունեությունը 1938 թ. հիմնադրված Հայաստանի պետական էստրադային նվագախումբը (մինչև 1948 թվականը՝ Հայաստանի ջազ-նվագախումբ):

Երևանում 1977 թ. կազմակերպված Հայաստանի ժողովրդական գործիքների պետական նվագախումբը (հիմնադիր՝ Կարլեն Միրզոյան, 1977-1980 թթ.՝ նաև գլխավոր դիրիժոր ու գեղարվեստական ղեկավար, 1981-1986 թթ.՝ Վլադիլեն Բալյան, 1987 թվականից՝ Հենրի Մանգասարյան) 1998 թ. միացվեց Հայկական ժողովրդական երգիպարի անսամբլին: Երևանում 1962 թ. հիմնադրված Հայաստանի պետական կամերային նվագախումբը (հիմնադիր-գեղարվեստական ղեկավար՝ Զարեհ Սահակյանց (1962-1975), 1975-1983 թթ.՝ Կ. Բաղդասարյան, 1983-1997 թթ.՝ Ռուբեն Ահարոնյան, 1997 թվականից՝ Արամ Ղարաբեկյան) 1997 թ. միավորվեց Երևանի կամերային նվագախմբի հետ՝ Ա.Ղարաբեկյանի ղեկավարությամբ: 2003 թվականից դադարեց գործել Հայաստանի ազգային ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը նն:

Մյուս կողմից վերստեղծվեցին խորհրդային տարիներին հաջողությամբ գործած որոշ երաժշտական կոլեկտիվներ: Նշենք դրանցից երկուսը[695]:

Երևանում 1982 թ. Զարեհ Սահակյանցը հիմնադրել էր Արամ Խաչատրյանի անվան պետական քառյակը, որը ղեկավարել էր մինչև 1985 թվականը: 1985 թվականից քառյակի ղեկավարը Արտաշես Սկրտչյանն էր: Քառյակը լայն ճանաչում էր ձեռք բերել ՍՍՀՄ-ում, մասնակցել բազմաթիվ միջազգային փառատոների ԱՄՆ-ում, միութենական հանրապետություններում, Եվրոպայում, Աֆրիկայում և այլուր: 2004 թ. քառյակը վերակազմավորել է արվեստագիտության թեկնածու, տաղանդավոր ալտահար Վաչե Հովեյանը, որը մինչ օրս կվարտետի ալտահարն է ու գեղարվեստական ղեկավարը: Քառյակի

[695] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 314:

կազմում են Մարի Մարգարյանը (առաջին ջութակ), Հայկ Վարդանյանը (երկրորդ ջութակ) և Արամ Թալալյանը (թավջութակ): Քառյակը, որի նվագացանկում ընդգրկված են հայ և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունները, հյուրախաղերով շրջագայել է Մերձավոր Արևելքում, Կիպրոսում, Իտալիայում և այլուր, մասնակցել միջազգային փառատոների[696]:

Շարա Տալյանը 1927 թ. ստեղծել էր «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլը, որը 1942-1972 թթ. ղեկավարել էր ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Վաղարշակ Սահակյանը: 1972 թ. անսամբլը դադարեցրեց իր գործունեությունը: 20 տարի անց՝ 1992 թ., Թովմաս Պողոսյանը վերստեղծեց անսամբլը, որի երգացանկն ընդգրկում է անցյալի և ներկայումս ստեղծագործող աշուղների ավելի քան 400 երգեր: Անսամբլը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, Իրանում, Սիրիայում, ԱՄՆ-ում և այլուր[697]:

Հաջողությամբ աշխատող երաժշտական կոլեկտիվների կողքին Երևանում ստեղծվեցին մի շարք նոր կոլեկտիվներ, այդ թվում՝ Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբը (2005 թ., Արա Գևորգյանի և Նորայր Դավթյանի նախաձեռնությամբ), Հայաստանի պետական ջազ-նվագախումբ (1997 թ., գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Հյուսնունց), «Սերենադ» կամերային նվագախումբը (1991 թ., հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան), Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը (2005 թ., հիմնադիր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան), «Հովեր» պետական կամերային երգչախումբը (1992 թ., հիմնադիր և գեղարվեստական ղեկավար՝ Սոնա Հովհաննիսյան, 2009 թվականից՝ պետական), «Սպեղանի» մանկական (1996 թ., Սարինա Ավթանդիլյան), «Ավետիս» (2004 թ., Լևոն Բարդակչյան) երգչախմբերը, «Արամ Խաչատրյան» տրիոն (2003 թ.), Էդվարդ Միրզոյանի անվան

---

[696] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 314:
[697] Տե՛ս նույն տեղում:

լարային քառյակը (2013 թ.), «Վարպետներ» վոկալ անսամբլը (2000 թ., հիմնադիր ղեկավար՝ Աննա Մայիլյան), «Նազանի» ժողգործիքների անսամբլը (2004 թ., հիմնադիր ղեկավար՝ Արուս Գուլանյան), «Հայ փոքրիկ երգիչներ միջազգային ընկերակցությունը» (1993 թ., հիմնադիր-նախագահ՝ Տիգրան Հեքեքյան, նաև՝ համանուն մանկական երգչախումբը), «Սաղմոս մշակութային կենտրոնը» (2000 թ., հիմնադիր ղեկավար՝ Աննա Մայիլյան), «Նարեկացի» արվեստի միությունը (2004 թ.), «Գաֆեսճյան» արվեստի կենտրոնը (2009 թ.) ևն[698]:

Երևանում 2005 թ. ծնունդ առավ Հայաստանի պետական (2008 թվականից) երիտասարդական սիմֆոնիկ նվագախումբը (ներկայումս՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, տնօրեն՝ արվեստագիտության թեկնածու Սարգիս Բալբաբյան): Նվագախմբի հիմնադիր, երիտասարդ տաղանդավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, որն առ այսօր կոլեկտիվի գեղարվեստական ղեկավարը և գլխավոր դիրիժորն է, իր շուրջը համախմբեց երիտասարդ ու շնորհալի երաժիշտների, որոնք կարճ ժամանակահատվածում ապահովեցին կոլեկտիվի միջազգային ճանաչումը: Նվագախումբը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Հայաստանում և դրա սահմաններից դուրս՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Բելգիայում, Չինաստանում, Նիդերլանդներում, Իտալիայում, Լիբանանում և այլուր, մասնակցել միջազգային փառատոների, հանդիսացել միջազգային հեղինակավոր միջոցառումների պաշտոնական նվագախումբ[699]:

2010 թվականից նվագախմբի նախաձեռնությամբ, ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո անց է կացվել Հայ կոմպոզիտորական արվեստի ամենամյա փառատոնը, իսկ 2013 թվականից՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Արամ Խաչատրյանի ամենամյա միջազգային փառատոնը: Նվագախմբի

---

[698] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 314:
[699] Տե՛ս նույն տեղում, էջ 315:

նվագացանկն ընդգրկում է դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Կարևորելով Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի (տնօրեն՝ Դավիթ Թերզյան) դերն ու նշանակությունը մայրաքաղաքի և առհասարակ հայ երաժշտության համայնապատկերում 2007 թ. մայիսի 16-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ Կապելլայի պատմությանը նվիրված անդրանիկ գիտաժողովը, որ կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը: Իսկ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ ստեղծված կառավարական հոբելյանական հանձնաժողովի կողմից հաստատված հոբելյանական միջոցառումների շարքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ 2014 թ. սեպտեմբերի 26-27-ին գումարեց Հ. Չեքիջյանին նվիրված անդրանիկ գիտական նստաշրջանը, որի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը[700]: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն:

Ի գնահատանք հայ խմբերգային արվեստի միջազգային գործիչ արդյունաշատ գործունեության՝ ՀՀ նախագահի հրամանագրով 2016 թ. տարեմուտին Հովհաննես Չեքիջյանն արժանացավ «ՀՀ ազգային հերոսի» կոչման՝ դառնալով երևանաբնակ միակ ՀՀ ազգային հերոսը[701]:

2000 թվականից Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Էդուարդ Թոփչյանն էր: Նվագախումբը համերգներով հանդես էր եկել թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Լյուքսեմբուրգում, Լիբանանում, Իսպանիայում, Պոր-

---

[700] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 315:
[701] Տե՛ս նույն տեղում:

տուգալիայում, Միացյալ Թագավորությունում, Հունաստանում, Իրանում, Կիպրոսում, Թուրքիայում, Ռուսաստանում, ՄԱԷ-ում, Ճապոնիայում, Իտալիայում, Ավստրիայում, Լեհաստանում, Սկանդինավյան երկրներում, Մեքսիկայում, Ռուսաստանում և այլուր:

ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո նվագախումբն իրականացրել է Երևանյան միջազգային երաժշտական ամենամյա փառատոնը: Փառատոնին որպես մենակատարներ հրավիրվել են միջազգային հռչակ ունեցող երաժիշտներ, որոնք նաև վարպետության դասեր են անցկացնում հայ երիտասարդ երաժիշտների համար:

Երևանում հաճախ են կազմակերպվում հնագույն և հոգևոր երաժշտության համերգներ, որոնց ընթացքում հանդես են գալիս «Տաղարանը» (1981, 1994 թվականից՝ գեղարվեստական ղեկավար Սեդրակ Երկանյան) և «Շարականը» (1991, հիմնադիր, գեղարվեստական ղեկավար՝ Դանիել Երաժիշտ): 2007 թ. ՀՀ մշակույթի նախարարությանը կից ստեղծված Հոգևոր երաժշտության կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել են հոգևոր երաժշտության համերգաշարեր[702]:

Էստրադային երաժշտության զարգացմանը նպաստեց 1994 թ. Հայաստանի երգի պետական թատրոնի՝ որպես երաժշտական, մշակութային կրթօջախի, հիմնադրումը Երևանում: Թատրոնի հիմնադիր-ղեկավարն է Արթուր Գրիգորյանը: Թատրոնում իրենց երաժշտական մկրտությունն է ստացել երգիչների մի քանի սերունդ՝ Շուշան Պետրոսյան, Գրիգոր Աղախանյան, Անահիտ Մանուկյան, Էմմա Պետրոսյան, Արամո, Ֆորշ, Զարուհի Բաբայան, Վարդուհի Վարդանյան, Արսեն Սաֆարյան, Անդրե, Ալլա Լևոնյան, նաև «Կանաչ գոտին» և «Արցախի ձայնը» նախագծի մասնակիցները: Թատրոնին կից գործում է թատրոն-ստուդիան, որը պատրաստում է փոփ և էստրադային երգիչներ: Փոփ երաժշտության զարգացման մեջ մեծ ներդրում ունեն «Էմի-Բի» պրոդյուսերական կենտրոնը (1999), երգիչներ Ֆորշը (Վահան Գևորգյան), Արամոն (Արամ Գևորգյան), Էմ-

[702] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 315:

մա Պետրոսյանը, Շուշան Պետրոսյանը, Նունե Եսայանը, Հայկոն (Հայկ Հակոբյան)[703]:

Զարգացման նոր փուլ են թևակոխել նաև ջազը և ռոքը:

Երևանը դարձել է ջազային երաժշտության կենտրոն: 1990-ականների սկզբին ստեղծվել է Արմեն (Չիկո) Թութունջյանի ջազային խումբը՝ «Չիկոն և ընկերները», որը խթանում է Երևանում ջազի հետագա զարգացումը (երկացանկում՝ դասական ջազի գործեր): Դասական ստեղծագործությունների ջազային մշակումներով հանդես է գալիս «Ուլիխանյան հնգյակը», ճանաչում է ձեռք բերում էթնո-ջազ ուղղության «Թայմ Ռիփորթ» («Time Report») հնգյակը՝ սաքսոֆոնահար Արմեն Հյուսնունցի և կոմպոզիտոր, դաշնակահար Խաչատուր Սահակյանի ղեկավարությամբ, «Կատուներ», «Ջեզլ» (փոփ-ջազ), «Արտ Վոյսիս» և այլ խմբերը[704]:

1998 թ. Երևանում կազմակերպվել է ջազային երաժշտության առաջին միջազգային փառատոնը՝ «Ջազ արտ» («Jazz art») ակումբի ղեկավար Լևոն Մալխասյանի և պրոդյուսեր Արթուր Ասատրյանի ջանքերով: 2000 թ. փառատոնի հյուրն էր ամերիկացի աշխարհահռչակ դաշնակահար Չիկ Կորեան, որի հետ իր առաջին ելույթն է ունեցել 13-ամյա, այժմ հանրաճանաչ դաշնակահար Տիգրան Համասյանը: 2005 թվականից Երևանում կազմակերպվում են ջազի ամենամյա փառատոներ:

2012 թ. ապրիլի 30-ին «Կասկադ» համալիրում առաջին անգամ անցկացվեց «Ջազի միջազգային օրվան» նվիրված տոնական համերգային ծրագիր, որին մասնակցում էին Երևանի լավագույն ջազային նվագախմբերը: Միջոցառումը դարձավ ավանդական, և ամեն տարի նույն օրը նույն տեղում մեկտեղվում են ջազի սիրահարները[705]:

Հայկական ռոքի ինքնատիպ կատարողներից են 1990-ականներից իբրև անհատ ռոք երաժիշտ իր արվեստը ներկայացնող և միաժամանակ «Առաքյալներ» խմբի ավանդույթները շարունակող Վա-

---

[703] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 315-316:
[704] Տե՛ս նույն տեղում, էջ 316:
[705] Տե՛ս նույն տեղում:

հան Արծրունին, ինչպես նաև Սարգիս Մանուկյանը, Գոռ Սուջյանը, ռեփերներ Միշոն (Միքայել Աբրահամյան), Հ. Տ. Հայկոն (Հայկ Մարգարյան) և ուրիշներ: Ճանաչում են վայելում «Բամբիռ», «Ոստան հայոց», «Որդան կարմիր», «Նաիրի», «Էմփիրեյ», «Դորիանս» և այլ խմբեր[706]: 2000-ական թթ. ծնվեց առաջին հայկական ռոք-օպերան՝ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված «Գրիգոր Լուսավորիչը», որի պրեմիերան տեղի ունեցավ Երևանում 2001 թ.: Օպերայի երաժշտության հեղինակն էր Արման Էլբերտը, իսկ սցենարի հեղինակը և բեմադրող ռեժիսորը՝ Արամ Սուքիասյանը:

Երևանում հեղինակային երգի ինքնատիպ ստեղծագործություններով ու երաժշտական կատարումներով հանդես են գալիս Ռուբեն Հախվերդյանը, Արթուր Մեսչյանը, Վահրամ Թաքիկյանը, Էդուարդ Զորիկյանը, Լիլիթ Պիպոյանը և ուրիշներ[707]:

* * *

Երևանն իր երաժիշտ-կատարողների և կոմպոզիտորների շնորհիվ դարձել է աշխարհի հայտնի երաժշտական կենտրոններից մեկը: Դրա վառ վկայությունն են Երևանում պարբերաբար անցկացվող միջազգային փառատոները, որոնց շրջանակներում հանդես են գալիս աշխարհահռչակ երաժիշտներ:

Հայաստանի նորագույն շրջանի կատարողական արվեստի զարգացման են միտված Երևանում ծնունդ առած և արդեն ավանդական դարձած հանրապետական և միջազգային մրցույթները՝ Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը (2003-ից), Ա. Բաբաջանյանի անվան դաշնակահարների մրցույթը (հանրապետական մրցույթ, 1996 թ., միջազգային մրցույթ, 2011 թ.), Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական ամենամյա մրցույթը (2014, 2015, 2016, 2017, 2018 թթ.) և փառատոները՝ «21-ի հեռանկարներ» միջազգային փառատոնը (հիմնադրել է

[706] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 316:
[707] Տե՛ս նույն տեղում:

Ստեփան Ռոստոմյանը, 2000 թ. վերանվանվել է «Երևանյան հեռանկարներ» միջազգային փառատոնի, 2010 թ.), «Երևանյան» միջազգային փառատոնը (հիմնադիր՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ, 2007 թ.), Հայ ժամանակակից երաժշտության փառատոնը (հիմնադիր՝ Հայաստանի կոմպոզիտորների միություն, 2014 թ.) «Արամ Խաչատրյան» միջազգային փառատոնը (հիմնադիր՝ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ, 2013 թ.)[708], Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոն (հիմնադիր՝ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ, 2010 թ.), «Արվեստների պատկերասրահ» միջազգային փառատոնը (հիմնադիրներ՝ Մարիամ Շահինյան, Գարիկ Ղազարյան, 2005 թ.), «Վերադարձի փառատոնը» (հիմնադիրներ՝ Մարիամ Շահինյան, Գարիկ Ղազարյան, 1999) և, իհարկե, ՀՀ մշակույթի նախարարության և Մշակութային աջակցության եվրոպական հիմնադրամի հետ համատեղ Երևանում 2017 թվականից անցկացվող «Արմենիա» միջազգային երաժշտական ամենամյա փառատոնը (գեղարվեստական ղեկավար՝ Սերգեյ Սմբատյան), որոնք ակտիվ գործունեություն են ծավալում առ այսօր:

Երևանյան երաժշտական համայնապատկերում իր ուրույն տեղն է զբաղեցնում Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը, որի ստեղծման գաղափարը դիրիժոր Սերգեյ Սմբատյանինն է: Փառատոնի նպատակն է հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների պրոպագանդումը, հայ կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների պահպանումն ու դրա արդի նվաճումների ներկայացումը աշխարհի տարբեր երկրներում: Փառատոնի ընթացքում թվայնացվում են դրա շրջանակներում հնչող բոլոր ստեղծագործությունները, և իրականացվում է բոլոր համերգների ձայնագրությունը, ինչի շնորհիվ ապահովվում է դրանց հետագա պահպանումն ու փոխանցումը ապագա սերունդներին: Կարևորելով փառատոնի դերն ու նշանակությունը երևանյան ու հայաստանյան երաժշտական խճանկարում՝ ստեղծման առաջին իսկ օրից այն անց

[708] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 316:

է կացվել ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո և կառավարության աջակցությամբ: Ամենամյա փառատոնը յուրաքանչյուր տարի նվիրվում է հայ անվանի կոմպոզիտորներից մեկին՝ Սարյան-ֆեստ (2010 թ.), Բաբաջանյան-ֆեստ (2011 թ.), Չուխաջյան-ֆեստ (2012 թ.), Ռոմանոս Մելիքյան-ֆեստ (2013 թ.), Տերտերյան-ֆեստ (2014 թ.), Էդգար Հովհաննիսյան-ֆեստ (2015 թ.), Միրզոյան-ֆեստ (2016 թ.), Հարո Ստեփան-ֆեստ (2017 թ.) և Գրիգոր Եղիազարյան-ֆեստ (2018 թ.): Փառատոնի համերգները, որոնց ընթացքում Հայաստանում գործող երգչախմբերի, նվագախմբերի և կամերային անսամբլների կատարմամբ հնչել է ավելի քան 300 ստեղծագործություն (սկսած կամերային երկերից մինչև մեծակտավ ստեղծագործություններ), հիմք դարձան առցանց ռադիոյի ստեղծման համար[709]:

Երևանյան երիտասարդ միջազգային փառատոների շարքում ուշագրավ է նաև Ալեքսանդր Հարությունյանի անվան փողային գործիքների միջազգային փառատոնը (2017, 2018), որը նախաձեռնել և կազմակերպել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի աջակցման հիմնադրամը (հիմնադրամի տնօրեն՝ Շմավոն Գրիգորյան և Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Կարեն Դուրգարյան): Փառատոնի համերգների ընթացքում հանդես են գալիս վիրտուոզ կատարողներ Հայաստանից և աշխարհի տարբեր երկրներից: Փառատոնը ոչ միայն իր շուրջը կհամախմբի տաղանդավոր կատարողներին, հնարավորություն կստեղծի նրանց փոխադարձ շփումների ու փորձի փոխանակման համար, այլև կնպաստի Հայաստանում փողային գործիքների կատարողական արվեստի զարգացմանը, խթան կդառնա փողային գործիքների համար նոր ստեղծագործությունների ստեղծման համար[710]:

* * *

[709] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 316:
[710] Տե՛ս նույն տեղում:

Երաժշտական Երևանի կարևոր ձեռքբերումներից է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ստեղծումը (տնօրեն՝ արվեստագիտության թեկնածու Նիկոլայ Կոստանդյան), որը դարձավ երևանյան երաժշտական երրորդ թանգարանը՝ Ալեքսանդր Սպենդիարյանի (տնօրեն՝ Մարինե Օթարյան) և Արամ Խաչատրյանի (տնօրեն՝ Արմինե Գրիգորյան) տուն-թանգարանների կողքին: 2013 թ. մայիսի 30-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի ընթացքում ՀՀ նախագահի առաջարկով որոշվեց կառուցել Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, որի պաշտոնական բացումը կայացավ 2015 թ. հունվարի 29-ին[711]:

* * *

Մենք հաճախ ենք առիթներ ունենում հպարտանալու հայրենական կոմպոզիտորական դպրոցի նվաճումներով, հայկական կատարողական արվեստի բարձր մակարդակով, երաժշտագիտական հետազոտություններով, երաժշտական կոլեկտիվների արդյունավետ համերգային գործունեությամբ: Սակայն ոչ միշտ ենք նկատում, որ այդ ամենի հիմնաքարը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան է, որի դիմորդը ձևավորվում է ոչ թե ավագ դպրոցում, ինչպես մնացած դեպքերում է, այլ 6-7 տարեկան հասակում:

Ներկայումս Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 15 երաժշտական և 11 արվեստի դպրոցներ, որոնցում ընդգրկված են հազարավոր երեխաներ: Տարիներ առաջ կաթվածահար եղած մեր մանկական երաժշտական դպրոցները վերջին շրջանում նոր շունչ են առել: Մայրաքաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների նկատմամբ առանձնահատուկ ուշադրության դրսևորումներից են դրանց վերանորոգումը, դրանց արդյունավետ գործունեության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Հատկանշական էր 2016 թ. օգոստոսի 30-ին Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում կազմակերպված համայնքային երաժշտական և արվեստի դպրոցներին երաժշտական նոր գործիքնե-

[711] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 316:

րի հանձնման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էր Երևանի քաղաքապետը: Նոր ուսումնական տարվանն ընդառաջ արդեն իսկ նորոգված ու հարմարավետ պայմաններով ապահովված մայրաքաղաքի կրթամշակութային օջախները սաներին դիմավորեցին նոր ու ժամանակակից երաժշտական գործիքներով, որը, ի դեպ, աննախադեպ ծրագիր էր: Առանձնակի կարևորելով մայրաքաղաքի մշակութային օջախների պայմանների բարելավմանն ուղղված աշխատանքները՝ նշվեց, որ վերջին տարիներին հետևողականորեն կյանքի կոչվող բոլոր ծրագրերը լինելու են շարունակական:

Վերջին տարիներին Երևանում իրականացվել են բազմաթիվ երաժշտական միջոցառումներ, որոնց մի ստվար մասն անցկացվել է «Առաջին անգամ» խորագրի ներքո և դարձել շարունակական, ինչոր չափով՝ նաև ավանդական:

Մայրաքաղաքի ծննդյան օրվա՝ «Էրեբունի-Երևանի» ամենամյա տոնակատարությունների ընթացքում տեղի են ունենում երաժշտական բազմաթիվ միջոցառումներ ու համերգներ: Ստեղծվում են Երևանի մասին նորանոր երգեր[712]:

* * *

Հայ երաժշտագիտության կենտրոնը շարունակում է մնալ Երևանը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (տնօրեն՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյան)՝ իր երաժշտության և ժողովրդական երաժշտության բաժիններով: Երաժշտագիտությունը զարգացրել 3 հիմնական ուղղություններով՝ հայ երաժշտության պատմության և տեսության հարցեր, երաժշտական ժառանգության գիտական հրատարակություն ու ժողովրդական ստեղծագործության ուսումնասիրություն: Շարունակվել են աշխատանքները հայ երաժշտության պատմությունն ընդհանրացնող աշխատությունների ստեղծման ուղղությամբ, գրվել են հայ երաժշտության խոշոր դեմքերին, տեսական կարևոր ու հանգուցային հարցերի լուսաբանմանը նվիրված աշխատություններ: Կարևորվել են երաժշտական արևելագիտության,

[712] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 317:

սփյուռքահայ երաժշտության, երաժշտական կոլեկտիվների անցած ուղու ուսումնասիրության ոլորտները, ինչպես նաև հայերենով բուհական դասագրքերի ստեղծման աշխատանքները[713]:

Երաժշտական ժառանգության գիտական հրատարակության բնագավառում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հրատարակել է Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 7-14-րդ (1997-2006) հատորները, որոնք հրատարակության է պատրաստել Գ. Գյոդակյանը: Հրատարակվել են Ռ. Մելիքյանի «Աշնան տողեր» շարքը (2009) և Գրիգոր Սյունիի խմբերգերի ժողովածուն, ինչպես նաև Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Ա. Խաչատրյանի, Է. Հովհաննիսյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Ղ. Սարյանի նամականիները, հուշագրությունը, հոդվածների ժողովածուները են:

Շարունակվել են աշխատանքները երաժշտական ֆոլկլորագիտության ասպարեզում: Լույս են տեսել «Հայ ավանդական երաժշտություն» (գլխավոր խմբագիր՝ Կ. Խուդաբաշյան) (I-XIII պրակներ, 2008-2015) և «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» (գլխավոր խմբագիր՝ Ա. Փահլևանյան) մատենաշարերը են[714]:

Երևանում կազմակերպվել են հայ երաժշտության պատմության ու տեսության հարցերին նվիրված հանրապետական և միջազգային մի շարք հեղինակավոր գիտական նստաշրջաններ:

Ասպարեզ է իջել երիտասարդ հետազոտողների խոստումնալից սերունդ, որն էլ ապահովելու է սահուն սերնդափոխությունը (արվեստագիտության թեկնածուներ Մարիաննա Տիգրանյան, Լուսինե Սահակյան, Արուսյակ Թամրազյան, Տաթևիկ Շախկուլյան, Աննա Ադամյան, Լիլիթ Արտեմյան, Գայանե Ամիրաղյան)[715]:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, այդ թվում՝ երաժշտության բաժնի անցած ուղին ամփոփվել է Աննա Ասատրյանի «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50» (2010) մենագրության մեջ:

Երաժշտագետ կադրեր է շարունակում պատրաստել Երևանի

---

[713] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 317:
[714] Տե՛ս նույն տեղում:
[715] Տե՛ս նույն տեղում:

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (ռեկտոր՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Շահեն Շահինյան), որի գործունեության մասին է Արմեն Բուդաղյանի «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա - 85» (ռուս., 2008) աշխատությունը:

Այսօր Երևանում են իրենց երաժշտագիտական գործունեությունը ծավալում արվեստագիտության տասը դոկտորները՝ երևանցիներ Աննա Ասատրյանը, Աննա Արևշատյանը, Լիլիթ Երնջակյանը, Կարինե Ջաղացպանյանը, Մարգարիտա Ռուխկյանը և Նազենիկ Սարգսյանը, ինչպես նաև երևանաբնակներ Իրինա Զոլոտովան, Ժաննա Զուրաբյանը, Միեր Նավոյանը և Սվետլանա Սարգսյանը[716]:

Կերպարվեստը

Անկախության հռչակումից հետո Երևանում գրեթե «կաթվածահար» եղած քաղաքաշինությունն ու ճարտարապետությունն անզոր էին ապահովել մոնումենտալ-դեկորատիվ նկարչության և քանդակի նույնիսկ թերարժեք գոյությունը: Տուժեցին կերպարվեստի առավել մեծաշխատ, պետական օժանդակության կարիքն ունեցող մոնումենտալ-դեկորատիվ ձևերն ու տեսակները:

Գրքարվեստի, գրքի գեղարվեստական ձևավորման ու պատկերազարդման զարգացումը կասեցրեց պոլիգրաֆիական համակարգի քայքայումն ու տպագրական արտադրանքի ծավալի կտրուկ կրճատումը: Խաթարվում է դրամատիկական և երաժշտական թատրոնների բնականոն գործունեությունը, սակավաթիվ ներկայացումների համար նախատեսված չնչին հատկացումների պատճառով զգալիորեն նվազում է թատրոններում աշխատող, դրանց հետ համագործակցող նկարիչների թիվը: Որպես դրա հետևանք՝ ընկնում է բեմանկարչության գեղարվեստական մակարդակը:

Նկարիչների և քանդակագործների ճնշող մեծամասնությունը ստիպված էր սահմանափակվել հաստոցային արվեստով. վերանում էին խորհրդային շրջանում կիրառվող պետական պատվերները,

[716] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 317:

պարտադիր գնումները, փակվում էին Հայաստանի նկարիչների միությանը պատկանող սալոն-խանութները, դադարում են գործել Նկարիչների միության գեղարվեստական արտադրամասերը:

Մարտիրոս Սարյանի հուշարձանի շուրջ, այսպես կոչված, «վերնիսաժում» է կենտրոնանում Երևանում տարերայնորեն ձևավորվող գեղարվեստական շուկան: Նկարիչներից ոմանք, նրանց թվում՝ ճանաչված վարպետներ Արտաշես Հունանյանը, Ռաֆայել Բաբայանը, Սուրեն Նազարյանը, Աշոտ Մելքոնյանը, Ռաֆայել Աթոյանը, Մարտին Պետրոսյանը, Վան Սողոմոնյանը, Նոնա Գաբրիելյանը և ուրիշներ, հեռանում են հայրենիքից[717]:

1990-ական թթ. կազմակերպվում են հատուկենտ խմբային ցուցահանդեսներ, որոնցից էին Նկարչի տանը բացված «12-ի ցուցահանդեսը» (1992), «Աբստրակցիոնիզմը Հայաստանում» (1994), մեկական աշխատանքի և աշնանային ցուցահանդեսները (1997), Հայաստանի ազգային պատկերասրահում Մեծ հայրենադարձության 50-ամյակի կապակցությամբ տեղի ունեցած «Հայ ոգու կամուրջներ» ցուցահանդեսը (1996) են:

Գեղարվեստական կյանքում որոշ աշխուժություն են մտցնում մասնավոր պատկերասրահները («Գոյակ», «Ակադեմիա», «Ականաթ», «Առաջին հարկ», «Արամե», «Բաքոս», «ԹԱԱԿ», «Չառլի Խաչատրյան (Ex-voto)», «Մկրտչյան», «Նոյյան տապան», «Սթիլ» են), որոնց նպատակն էր այդ ասպարեզում միջազգային փորձին ընտելանալը, արևմտյան արտշուկայի մեջ աստիճանաբար ներգրավվելը[718]:

Իրանահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախաձեռնությամբ Երևանում 1994 թ. կազմավորվում է, 1995 թ.՝ պաշտոնապես գրանցվում, իսկ մեկ տարի անց՝ դռները բացում Նորարար փորձառական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ)՝ սեփական պատկերասրահով: Իր գործունեության ընթացքում ՆՓԱԿ-ը կազմակերպել է տասնյակ ցուցահանդեսներ, մասնակցել ավանգարդիզմի փառատոներին:

---

[717] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 317:
[718] Տե՛ս նույն տեղում, էջ 318:

ՆՓԱԿ պրակտիկ գործունեությունն ու որդեգրած գեղարվեստական քաղաքականությունն առաջ բերեցին երևանաբնակ արվեստագետների, արվեստաբանների և արվեստասերների հակասական-իրարամերժ, երբեմն էլ՝ ծայրահեղ կարծիքներ: Մի կողմից ողջունելի էին կենտրոնի հռչակած նպատակները, իսկ մյուս կողմից՝ ակնհայտ էր, որ ՆՓԱԿ-ի շուրջ համախմբված արվեստագետներից շատերի աշխատանքները ազգային հողից օտարված, ազգային պատմությունը ժխտող կամ ծաղրող, դիմազուրկ երևույթներ էին[719]:

Ավանգարդային արվեստի պրոպագանդմամբ էր զբաղված 1986 թ. որպես ժամանակակից արվեստի թանգարան հիմնադրված, իսկ 1996 թ.՝ «Հայարտ» վերանվանված մշակութային կենտրոնը, որը կազմակերպել է մի շարք ցուցահանդեսներ: Դրանցից են հայ-գերմանական «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» (1998), հայ-ռուսական «Փակ քաղաք» (1999 թ.), հայ-ավստրիական «Ջուգահեռ իրականություն» (2000 թ.), «Ցտեսություն, Փարաջանով»՝ հայ արդի կերպարվեստի վերջին քսան տարվա համապատկերը ներկայացնող (Վիեննա, 2003 թ.), «Սարգիսը Երևանում» (2004 թ.)՝ ֆրանսիական Անտիբ քաղաքի Պիկասոյի թանգարանի հետ համատեղ ձեռնարկած ցուցահանդեսները: Կենտրոնը կապեր է հաստատել ԱՊՀ, Եվրոպայի տարբեր երկրների և Ամերիկայի ժամանակակից արվեստի թանգարանների և մշակութային այլ հաստատությունների հետ, մասնակցել ավանգարդիզմի միջազգային ստուգատեսներին՝ «Մանիֆեստա-3» (Լյուբլյանա, 2000), Ժամանակակից արվեստի փառատոն (Վիեննա, 2001) և այլն[720]:

Ներկայումս «Հայարտ» մշակութային կենտրոնում (տնօրեն՝ Ռիտա Շառոյան) կազմակերպվում և ներկայացվում են կերպարվեստի ցուցահանդեսներ, գրական, երաժշտական միջոցառումներ, թատերական մանրապատումներ, երիտասարդ արվեստագետների և ավագ սերնդի ստեղծագործական հանդիպումներ: Սեփական նախաձեռնությամբ հաջողությամբ շարունակվում է «Հնագույն նվագա-

---

[719] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 318:
[720] Տե՛ս նույն տեղում:

բաններ» և «Խոսի՛ր ինձ հետ» վավերագրական ֆիլմաշարերի ստեղծագործական ընթացքը[721]:

Ի տարբերություն ՆՓԱԿ-ի՝ «Հայարտի» և մասնավոր մի շարք պատկերասրահների կողմից «օժանդակվող» և «քաջալերվող» նորարար արվեստագետների, Հայաստանի նկարիչների միության անդամների գերակշռող մասը, այդ թվում՝ երիտասարդներից շատերը, մերժելով «սոցիալիստական ռեալիզմի» դրույթները, թարմացնելով սեփական արվեստի արտահայտչական լեզուն, միևնույն ժամանակ հավատարիմ մնացին ազգային ավանդույթներին: Դա պարզորոշ նկատվում էր 1990-ական թթ. և վերջերս Նկարչի տանը բացված խմբային ցուցահանդեսներում: Դրանցից ամենախոշորն ու ներկայանալին Հայաստանի նկարիչների միության 70-ամյակի առիթով 2002 թ. կազմակերպված ժամանակակից կերպարվեստի հոբելյանական ցուցահանդեսն էր, որին մեկական աշխատանքներով, առավելապես երփնագիր գործերով, մասնակցեցին տարբեր տարիքի 400 արվեստագետներ[722]:

1999 թ. Նկարչի տանը «Մեկ ազգ-մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում կազմակերպվեց քանդակի ցուցահանդեսը, ուր ներկայացված էին Ռավեննայում Դանթեին նվիրված քանդակի միջազգային բիեննալեին 1979 թվականից հաջողությամբ մասնակցած Լևոն Թոքմաջյանի, ինչպես նաև Աշոտ Բաղդասարյանի, Գետիկ Բաղդասարյանի, Թոմ (Թադևոս) Գևորգյանի, Գարեգին Դավթյանի, Նունե Թումանյանի, Մարիամ Հակոբյանի, Գագիկ Ղազարյանի, Սամվել Ղազարյանի, Էդուարդ Շախիկյանի, Էմին Պետրոսյանի, Արմենակ Վարդանյանի, Լևոն Վարդանյանի և Միքայել Օհանջանյանի մանրաքանդակներն ու բրոնզե արձանիկները[723]:

Երևանում իր գործունեությունն է շարունակում Հայաստանի պետական պատկերասրահը. 1991 թ. ՀՊՊ տնօրեն է նշանակվել արվեստաբան Շահեն Խաչատրյանը, և Հայաստանի գեղարվեստա-

---

[721] Տե՛ս նույն տեղում:

[722] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 318:

[723] Տե՛ս նույն տեղում, էջ 319:

կան խոշորագույն օջախը վերանվանվել է Հայաստանի ազգային պատկերասրահ: Ու չնայած ստեղծված դժվարին ու բարդ պայմաններին, երբ պատկերասրահի գիտաշխատողները հնարավորություն չունեին մասնակցելու նախկին ԽՍՀՄ խոշոր կենտրոններում անցկացվող կոնֆերանսներին և վերապատրաստման դասընթացներին, խզվել էր կապը արտասահմանյան թանգարանների և մշակութային օջախների միջև, Ազգային պատկերասրահի աշխատակազմը շարունակում էր իր առաքելությունը: 1992 թ. պատկերասրահը ներկայացավ մշտական նոր, փոփոխված ցուցադրությամբ, իսկ մինչև 2000 թթ. կազմակերպված շուրջ 130 ցուցահանդեսներում ներկայացվել են թանգարանի տարբեր հավաքածուները, նաև ժամանակակից արվեստագետների անհատական ցուցադրությունները[724]:

ՀԱՊ տնօրեն, գեղանկարիչ, պրոֆեսոր, ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանի (2002-2018) եռանդուն ջանքերի շնորհիվ զարգացման նոր փուլ է թևակոխել պատկերասրահի գիտաֆոնդային, գիտակրթական, հանրահռչակման գործունեությունը: «Լինսի» հիմնադրամի օժանդակությամբ իրականացված վերանորոգումից հետո Հայաստանի ազգային պատկերասրահը 2004 թ. մայիսի 18-ին նոր մշտական ցուցադրությամբ իր դռներն է բացել այցելուների առջև: Պատկերասրահը, առաջնորդվելով ակադեմիական թանգարանային գործունեության սկզբունքներով, այն է՝ հավաքել, պահպանել, ուսումնասիրել, ցուցահանդեսների և կատալոգների միջոցով հանրահռչակել գեղարվեստական արժեքները, ընդլայնել է իր գործունեության շրջանակները: Թանգարանի մշտական ցուցադրությունը համալրվել է նոր՝ Հին Հունաստանի և Հին Եգիպտոսի դեկորատիվ-կիրառական արվեստի, Էդգար Շահինի գրաֆիկական ստեղծագործությունների, Արևելքի արվեստի (Չինաստան, Ճապոնիա, Իրան, Հնդկաստան), XVIII-XX դարերի Արևմտաեվրոպական ժամացույցների և քանդակագործ Հակոբ Գյուրջյանի ստեղծագործությունների նոր բաժիններով[725]:

---

[724] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 319:
[725] Տե՛ս նույն տեղում:

Խոշորամասշտաբ է դառնում ՀԱՊ ցուցահանդեսային գործունեությունը. Հայաստանում, և արտերկրում պատկերասրահը կազմակերպել է շուրջ 230 ցուցահանդես: Առավել լայնորեն են ներկայացվել պահպանվող հարուստ հավաքածուները, կազմակերպվել են նշանավոր արվեստագետների հոբելյանական ցուցահանդեսներ և այլն: Հատկապես նշելի են Հակոբ Հովնաթանյանի (2006 թ.), Գևորգ Բաշինջաղյանի, Գառզուի (երկուսն էլ՝ 2007 թ.), Վարդգես Սուրենյանցի (2009 թ.), Ռիշար Ժերանյանի, բրազիլահայ լուսանկարիչների գործերի (երկուսն էլ՝ 2011 թ.), ինչպես նաև «Ռուսական ավանգարդը. ակունքներ, զարգացում» (2007 թ.), «Հայաստան-Ռումինիա. մշակութային կապեր», «Արևմտաեվրոպական ժամացույցներ, XVIII-XX դդ.» (երկուսն էլ՝ 2008), «Դալին և սյուրռեալիզմը. սյուրռեալիզմը և հայ գեղանկարիչները», «Հայկական գեղանկարիչները պատկերասրահին» (նվիրված էր Հայաստանի անկախության 20-ամյակին, երկուսն էլ՝ 2011) ցուցահանդեսները և այլն[726]:

Շարունակվում է հայ դասական կերպարվեստը օտար հանդիսատեսին ներկայացնելու աշխատանքը պարբերաբար կազմակերպվող միջազգային տարբեր ցուցահանդեսների միջոցով: Հաճախակի են դառնում նաև օտարերկրյա ճանաչված արվեստագետների ստեղծագործությունների ցուցադրությունները: Այս շարքում առավել հաջողվածներից մեկը պետք է համարել, թերևս, ՀՀ մշակույթի նախարարության կողմից 2011 թ. կազմակերպված «Դալին և սյուրռեալիստները» ցուցահանդեսը, որն աննախադեպ արձագանք և հետաքրքրություն առաջացրեց հայ արվեստասերների շրջանում:

Ընդլայնվել է հրատարակչական գործունեությունը: Ֆոնդային յուրաքանչյուր ցուցահանդես ուղեկցվել է ալբոմով կամ կատալոգով, որոնցից հիշարժան են «Հայաստանի ազգային պատկերասրահ» (2008), «Վարդգես Սուրենյանց» (2010), «Գեորգի Յակուլով» (2011) ալբոմները, «Գեորգի Յակուլով» (2011) մենագրությունը և այլն[727]:

Սկսած 2005 թվականից՝ ՀԱՊ որմնանկարների սրահում կազմակերպվում է «Ազգային պատկերասրահ» դասական երաժշտու-

---

[726] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 319:
[727] Տե՛ս նույն տեղում:

թյան ամենամյա փառատոնը (փառատոնի հիմնադիր՝ Մարիամ Շահինյան)՝ մեկտեղելով երաժշտությունն ու կերպարվեստը[728]:

2015 թվականից ՀԱՊ տնօրենն է արվեստաբան, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Արման Ծատուրյանը, որը ձեռնամուխ է եղել պատկերասրահի գիտական ու ցուցահանդեսային գործունեության ակտիվացմանը և համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին: Մի կողմից կազմակերպվել են հայ և սփյուռքահայ նկարիչների ու քանդակագործների՝ Սարգիս Խաչատուրյանի (2016), Արփենիկ Նալբանդյանի հոբելյանական (2016 թ.), բուլղարահայ նկարիչ Պետիկ Պետրոսյանի «Նավամատույցներ» (2017 թ.), Արա Շիրազի հետահայաց (2017 թ.) ցուցահանդեսները, մյուս կողմից՝ ներկայացվել արտասահմանյան նկարիչների ստեղծագործությունը՝ «Բարեկամության կամուրջ. Բորիս Կլեմենտև. գեղանկարչություն, գրաֆիկա» (2016 թ.), իտալացի նկարիչ Միրո Պերսոլյայի «Արտացոլանքից անդին» (2016 թ.), «Իրանական արվեստ» (2016 թ.), լեհ նկարիչ Հենրիկ Չեշնիկի «Վտանգավոր խաղեր» (2017 թ.), ինչպես նաև Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյա հոբելյանին նվիրված ցուցահանդեսները նն[729]:

2005 թվականից Երևանում իր գործունեությունն է սկսել «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնը՝ «Շեղեր» պատկերասրահով, որի նպատակն է հայ արվեստի պրոպագանդան արտասահմանում, մասնակցությունը միջազգային ֆորումներին, նաև ցուցահանդեսների կազմակերպումը: 2015 թ. «Բարձր արվեստ» կենտրոնի կազմակերպած մի շարք ցուցահանդեսների նպատակն էր Թութունջյանի արվեստի պրոպագանդումը Հայաստանում և արտասահմանում: Ապրիլի 10-մայիսի 10-ը տեղի ունեցավ Թութունջյանի «Դեղին դիմակ» սյուրռեալիստական կտավի, գրաֆիկական 3 ստեղծագործությունների և մեկ քանդակի ցուցադրումը Կոմիտասի թանգարան-ինստիտուտում՝ Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված «Ծաղկած ծիրանի» ցուցահանդեսի շրջանակներում: Մայիսի 24-հունիսի

---

[728] Տե՛ս նույն տեղում:

[729] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 319:

14-ը կազմակերպվեց Լևոն Թութունջյանի ստեղծագործությունների առաջին անհատական բացառիկ ցուցահանդեսը Հայաստանում՝ Հայաստանի ազգային պատկերասրահում: Ցուցադրվեցին Հայոց ցեղասպանությանը նվիրված հանրահայտ «Դեղին դիմակ» սյուրռեալիստական ստեղծագործությունը, 24 գրաֆիկական աշխատանքներ և արվեստի տարառոճ 3 քանդակ[730]:

1990-ական թթ. Երևանում կանգնեցվել են հատուկենտ հուշարձաններ: Պետական կրկեսի դիմաց տեղադրվեց Լեոնիդ Ենգիբարյանի հուշարձանը (բրոնզ, բազալտ, 1998, քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան, ճարտարապետ՝ Ասլան Մխիթարյան), Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում՝ Սերգեյ Փարաջանովի մահարձանը (բրոնզ, տրավերտին, 1999 թ., քանդակագործ՝ Արա Շիրազ, ճարտարապետ՝ Ա. Մխիթարյան), «Արամ Խաչատրյան» համերգասրահի առաջ՝ կոմպոզիտորի բրոնզե անդրին (1999 թ., քանդակագործ՝ Յուրի Պետրոսյան, ճարտարապետ՝ Ռոմեն Մարտիրոսյան), Օղակաձև զբոսայգում՝ «Վահան Տերյանը» (բազալտ, 2000 թ., քանդակագործ՝ Նորայր Կարգանյան, ճարտարապետ՝ Համլետ Խաչատրյան), ՀՀ նախագահի նստավայրի մոտ՝ Նոյի (մարմար, բազալտ, 2000 թ., քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան) և Տիգրան Մեծի (մարմար, 2000 թ., քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան) արձանները և այլն:

Երևանում որոշակի աշխուժություն նկատվեց XXI դարասկզբին. կանգնեցվեցին Տ.Արզումանյանի «Ակադեմիկոս Անդրեյ Սախարովը» (կոփածո պղինձ, բազալտ, 2001 թ., ճարտարապետ՝ Լևոն Ղալումյան, դրվագող՝ Ն. Չարխչյան), Ա. Շիրազի «Զորավար Անդրանիկ» (բրոնզ, բազալտ, 2002 թ., ճարտարապետ՝ Ա. Մխիթարյան) և Ն. Կարգանյանի «Հովհաննես Բաղրամյան» (բրոնզ, գրանիտ, 2003 թ., ճարտարապետ՝ Էդուարդ Արևշատյան) ձիարձանները, Դավիթ Բեջանյանի «Առնո Բաբաջանյանը» (բրոնզ, գրանիտ, 2002 թ., վերափոխվել ու վերաբացվել է 2003 թ., ճարտարապետ՝ Լևոն Իգիթյան), Յու. Պետրոսյանի «Հովհաննես Այվազովսկին» (բրոնզ, գրանիտ, 2003 թ., ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքչյան), Լ. Թոք-

[730] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 319:

մաջյանի՝ Տիգրան Մեծի երկրորդ արձանը (վարդագույն մարմար, գրանիտ, 2004 թ., Նորքի 2-րդ զանգվածում: Արձանի նյութը վարդագույն մարմար, գրանիտ, ճարտարապետ՝ Ռազմիկ Օհանյան), Դավիթ Երևանցու՝ Վիլյամ Սարոյանի (2008 թ.) և «Վարք հավերժության» (2012 թ., ճարտ.՝ Ռուբեն Հասրաթյան), ինչպես նաև Արա Ալեքյանի՝ երկաթե թափոններից պատրաստած «Ցուլ» (2007 թ. թ.), «Սարդ», «Կինոխցիկ» (երկուսն էլ՝ 2008) քանդակները և հայ բարերարների արձանախումբը (Ալեքսանդր Մանթաշյանց, Գալուստ Գյուլբենկյան, Պողոս Նուբար, Հովհաննես Լազարյան, Միքայել Արամյանց, Ալեք Մանուկյան, բոլորը՝ 2011 թ., քանդակագործ՝ Ֆերդինանդ Առաքելյան, «Բարերարների ճեմուղի»՝ ԵՊՀ հարակից հատվածում) ևն[731]:

2001 թ. աշնանը մայրաքաղաքի «Հաղթանակ» զբոսայգում հայ և օտարազգի շուրջ 20 քանդակագործների մասնակցությամբ բացվեց «Քրիստոնյա Հայաստան» հոբելյանական միջազգային սիմպոզիումը: Այդ օրերին հայ վարպետների ստեղծած գործերից նշենք Ղ. Չուբարյանի «Սեր, հավատ, հույս», Ա. Շիրազի «Քրիստոս», Գ. Բաղումյանի «Քրիստոսի հայտնությունը», Գ. Դավթյանի «Խաչը տանող Քրիստոսը», Յու. Սամվելյանի «Տրդատ թագավորի մկրտությունը» քարակերտ արձանները[732]:

2002-2011 թթ. «Թամանյան» պուրակում տեղադրվեցին Լին Չեդուիքի «Նստած պատկերաքանդակներ» (1980), Բարրի Ֆլանագանի «Ակրոբատներ» (1988 թ.), Արաջ Գուհայի «Այծքաղի ցատկը» (2005 թ., երեքն էլ՝ Մեծ Բրիտանիա), Ֆեռնանդո Բոտերոյի «Հռոմեացի զինվոր» (1986 թ.), «Կատու» (1999 թ., երկուսն էլ՝ Կոլումբիա), Ժոմ Պլենզայի «Ստվերներ 1» (2006 թ., Իսպանիա) և այլ գործեր, իսկ Ֆրանսիայի հրապարակում՝ Օգյուստ Ռոդենի «Նկարիչ Ժյուլ Բաստիեն-Լեպաժ» արձանը (2011 թ., Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի նվերը, բացվել է նրա մասնակցությամբ)[733]:

---

[731] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 319:
[732] Տե՛ս նույն տեղում:
[733] Տե՛ս նույն տեղում:

Էրեբունի թանգարանի մերձակա հրապարակում 2002 թ. հունիսի 22-ին տեղի է ունեցել Արարատյան պետության արքա Արգիշտի Ա-ի արձանի (տուֆ, բազալտ, քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան, ճարտարապետ՝ Էդուարդ Բարոյան) հանդիսավոր բացումը:

2011 թ. նոյեմբերի 9-ին Աբովյան-Մոսկովյան փողոցներին հարող տարածքում բացվել է նորվեգացի հայտնի բևեռախույզ, նշանավոր հումանիստ և հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի արձանը (քանդակագործ՝ Գ. Դավթյան)[734]:

2012 թ. Հայաստանի պատմական 12-րդ մայրաքաղաք Երևանը դարձավ գրքի համաշխարհային 12-րդ մայրաքաղաք: 2013 թ. ապրիլի 20-ին մայրաքաղաքի Խնկո Ապոր անվան գրադարանի հարակից տարածքում տեղադրվեց նկարիչ-քանդակագործ Նուռի՝ Արման Դավթյանի հեղինակած և աշխարհում նախադեպը չունեցող Ընթերցողի ինտերակտիվ արձանը ՝ դառնալով Երևանում առաջին ինտերակտիվ արձանը...[735]:

Որպես «քարե հյուր»՝ Երևան են վերադարձել հայ ականավոր երաժիշտներ Սայաթ-Նովան ու Արամ Խաչատրյանը: 2012 թ. նոյեմբերի 23-ին Ավան վարչական շրջանի Սայաթ-Նովայի անունը կրող թաղամասի համանուն պուրակում բացվել է Սայաթ-Նովայի կիսանդրին (քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան), իսկ 2013 թ. ապրիլի 30-ին՝ Արաբկիր վարչական շրջանի Խաչատրյան-Փափազյան փողոցների հատման հարակից հատվածում Արամ Խաչատրյանի կիսանդրին[736]:

2014 թ. հունիսի 11-ին իր անունը կրող փողոցում բացվել է ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, երգիչ Ավագ Պետրոսյանի հուշաքանդակը, իսկ 2015 թ. դեկտեմբերի 8-ին՝ Աբովյան փողոցում տարբեր սերունդների երեք վարպետներին՝ դուդուկահարներ Լևոն Մադոյանին, Վաչե Հովսեփյանին

---

[734] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 320:
[735] Տե՛ս նույն տեղում:
[736] Տե՛ս նույն տեղում:

և Ջիվան Գասպարյանին նվիրված «Ուշացած լուսանկար» արձանախումբը (քանդակագործ՝ Դ. Մինասյան)[737]:

2012 թ. ապրիլի 18-ին Աբովյան փողոցում բացվել է հայ մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի արձանը (քանդակագործ՝ Տ. Արզումանյան), ապրիլի 23-ին՝ Օղակաձև զբոսայգում «Մշո ճառընտիր» հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագրին նվիրված «Վարք հավերժության» բրոնզաձույլ կոթողը, ապրիլի 25-ին՝ Մոսկովյան և Նալբանդյան փողոցների հարող տարածքում ասորի ժողովրդի 1915 թ. անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը (քանդակագործ՝ Ռ. Նալբանդյան)[738]:

2016 թ. մայիսի 23-ին Ավան վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի հարակից պուրակում բացվել է Խորհրդային Միության հերոս, ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի արձանը (քանդակագործ՝ Հ. Մատինյան, ճարտարապետ՝ Միքայել Միսակյան), իսկ մայիսի 28-ին՝ Հանրապետության փողոցի վրա գտնվող պուրակում պետական և ռազմական գործիչ, ազգային գաղափարախոս Գարեգին Նժդեհի արձանը (քանդակագործ՝ Գ. Ստեփանյան, ճարտարապետ՝ Ա. Մխիթարյան): 2016 թ. հունիսի 28-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի տարածքում բացվեց հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի հուշարձանը (քանդակագործ՝ Հ. Համբարչյան)[739]:

2004 թ. ապրիլի 1-ին՝ Ծիծաղի օրը, Երևանում հիմնադրվեց Հայաստանի երգիծանկարիչների ասոցիացիան (նախագահ՝ Ս. Թորոսյան), որի գործունեությունը նպաստում է հայկական գրաֆիկայի ընդհանուր աշխուժացմանը: Ընկերակցության հիմնադրման օրը Հայաստանի նկարիչների միության հարկի տակ բացվեց ահաբեկչության դեմ ուղղված «Ականազերծում հայկական ձևով» ցուցահանդեսը, որին հաջորդեցին ևս մի քանի միջոցառումներ. հունիսի 14-ին մայրաքաղաքի «Մոսկվա» կինոթատրոնում տեղի ունեցավ «Ար-

---

[737] Տե՛ս նույն տեղում:

[738] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 320:

[739] Տե՛ս նույն տեղում:

վեստն ընդդեմ կոռուպցիայի» ցուցահանդեսը, սեպտեմբերի 30-ին Հայաստանում Ռուսաստանի դեսպանատանը կայացավ «Ահաբեկչությունը տեղ չունի երկրագնդի վրա» ցուցահանդեսը, իսկ դեկտեմբերի 10-ին Ամերիկյան համալսարանի բիզնես-կենտրոնում կազմակերպվեց «Նկարիչներն ընդդեմ ծխելու (No smoking)» ցուցահանդեսը: 2005 թ. Նկարիչների միության ցուցասրահում դռները բացեց արդեն ավանդույթ դարձած ապրիլմեկյան պատկերահանդեսը («Տեղ արևի տակ»)[740]:

Հայաստանի նկարիչների միությունը (նախագահ՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Կարեն Աղամյան) կազմակերպել է բազմաթիվ ու բազմաբնույթ ցուցահանդեսներ:

Երևանում իր գործունեությունն է շարունակել Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան (ռեկտոր՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Իսաբեկյան):

գ. Թանգարանային գործը

Այսօր Երևանի մշակութային կյանքում իրենց անփոխարինելի դերն ու նշանակությունն ունեն թանգարանները: Քաղաքում այսօր գործում է շուրջ 40 թանգարան, որոնց հիմնական մասը ենթարկվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, իսկ հինգը՝ Երևանի քաղաքապետարանին:

Առաջին պետական թանգարանը Հայաստանի պատմության թանգարանն է, որը հիմնադրվել է Հայաստանի առաջին հանրապետության պառլամենտի № 439, 09.09.1919 թ. օրենքով, իսկ այցելուների համար բացվել է 1921 թ. օգոստոսի 20-ին: Այն կոչվում էր Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան, որի տնօրենն էր Երվանդ Լալայանը (1931 թ. այն կոչվել է Կուլտուր-պատմական, 1935 թվականից՝ Պատմական, այնուհետև՝ Հայաստանի պատմության պետական թանգարան (1962թ.), 2003 թվականից՝ Հայաստանի պատմության թանգարան)[741]:

---

[740] Տե՛ս Ա. Ասատրյան, Արվեստը Երևանում նորագույն ժամանակաշրջանում // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 320:
[741] Տե՛ս նույն տեղում:

Թանգարանի հավաքածուի ընդհանուր քանակը կազմում է 400 000 առարկա, որի համար հիմք են հանդիսացել Թիֆլիսի հայոց ազգագրական ընկերության, Նոր-Նախիջևանի հայկական (Երվանդ Շահազիզի հավաքածու) թանգարանների, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Անիի հնադարանի, Էջմիածնի պետական թանգարանի, Մատենադարանի հավաքածուները[742]:

Հայաստանի պատմության թանգարանը հաճախ անվանում են մայր թանգարան, որովհետև դրա բաժիններից հետագայում առանձնացել և ձևավորվել են նոր թանգարաններ:

Հայաստանի ազգային պատկերասրահը հիմնադրվել է Հայաստանի պատմության թանգարանի Արվեստի բաժնի հիման վրա և այցելուների համար բացվել է 1921 թ. օգոստոսի 14-ին, որի առաջին տնօրենն էր Մարտիրոս Սարյանը: Հավաքածուի համար հիմք են հանդիսացել մայր թանգարանի արվեստի բաժնի, Լազարյան ճեմարանի առարկաները, 1921 թ. Հայաստանի կառավարության գնած մի քանի տասնյակ աշխատանքները, իսկ հետագայում՝ տարբեր անհատների և երկրների կողմից արված բազմաթիվ նվիրատվությունները, որոնցում ընդգրկված են ոչ միայն հայտնի հայ, այլև օտարազգի արվեստագետների ստեղծագործությունները:

Ազգային պատկերասրահն իր մասնաճյուղերն ունի Էջմիածնում, Հրազդանում, Ջերմուկում, Մարտունիում, Գյումրիում, Վանաձորում, ցուցասրահները՝ Ալավերդիում, Եղեգնաձորում[743]:

Ազգային պատկերասրահը երկրի խոշորագույն գեղարվեստական թանգարանն է, որի 56 ցուցասրահներում ներկայացված են ոչ միայն ազգային կերպարվեստը, դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ, այլև եվրոպական, ռուսական, արևելյան արվեստի բաժիններում կարելի է ծանոթանալ Հ. Այվազովսկու, Մ. Սարյանի, Վ. Կանդինսկու, Դոնատելլոյի և այլ նշանավոր գեղանկարիչների գործերին[744]:

---

[742] Տե՛ս նույն տեղում, էջ 321:
[743] Տե՛ս Ա. Սարգսյան, Երևանի թանգարանները // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 321:
[744] Տե՛ս նույն տեղում:

Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը հիմնադրվել է 1959 թ., այստեղ պահպանվում է շուրջ 20 000 ձեռագիր, որից 7000-ը՝ հայերեն ձեռագիր, ավելի քան 300 000-ը՝ միջնադարյան և նոր ժամանակների պատկանող փաստաթուղթ:

Ձեռագրերի ամենահին պատառիկները թվագրվում են V-VI դարերով: Հնագույն ամբողջական ձեռագիրը VII դարում ընդօրինակված Վեհամոր կամ Բանանցի («Ծեր ավետարան») մագաղաթյա ավետարանն է (Հայաստանի Հանրապետության նախագահները երդման արարողության ժամանակ աջը դնում են այս ավետարանի վրա, այն ընտրել է հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ որպես հիմք ունենալով Ավետարանի՝ Մատենադարանի ամենահին և ամբողջական ձեռագիրը լինելու հանգամանքը), հաջորդը՝ 887 թ. Լազարյան ավետարանն է: Ամենամեծ ձեռագիրը «Մշո ճառընտիրն է», որի էջերի համար ծախսվել է 675 հորթի կաշի (56,3x70,5, 27,5 կգ): Եղեռնի գաղթի ժամանակ այն փրկել են երկու կանայք, որոնք, կիսելով ձեռագիրը, մի կեսը հասցրել են Թիֆլիս և հանձնել Ազգագրական ընկերությանը, իսկ մյուս կեսը փաթաթելով իրենց հագուստի մեջ՝ թողել են ճանապարհին, որը գտնել է մի ռուս սպա և հանձնել բարեգործական ընկերությանը: Կիսված ձեռագրերը հանդիպել են Մատենադարանում: Ամենափոքրը 1434 թ. «Տոնացույցն» է (3x4սմ, 19գ.)[745]:

Մատենադարանն աշխարհում ձեռագրերի պահպանման ամենահարուստ կենտրոններից մեկն է: Այն նաև հայերեն ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցն է, որը ստեղծվել է 1921 թ.՝ V դարում հիմնադրված Էջմիածնի մատենադարանի հիմքի վրա: 1939 թ. մատենադարանն Էջմիածնից տեղափոխվել է Երևան՝ Հանրային գրադարան: 1945 թ. ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով սկսվել է Մատենադարանի շենքի կառուցումը և ավարտվել 1957 թ.: 1959 թ. այն տեղափոխվել է նորակառույց շենք և վերածվել գիտահե-

[745] Տե՛ս Ա. Սարգսյան, Երևանի թանգարանները // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 321:

տազոտական ինստիտուտի: 1962 թ. այն անվանակոչվել է Մեսրոպ Մաշտոցի անունով[746]:

Նոր գիտական մասնաշենքի բացումը տեղի է ունեցել 2011 թ. սեպտեմբերի 20-ին՝ ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակում:

Մատենադարանը ընդգրկված է աշխարհի 100 մեծ թանգարանների շարքում և գրանցված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային հիշողության ցանկում:

Երևան քաղաքի պատմության թանգարանը հիմնադրվել է 1931 թ., սկզբում կոչվել է Կոմունալ թանգարան, իսկ 1936 թվականից վերանվանվել է Երևան քաղաքի պատմության թանգարան[747]:

1936-1994 թթ. թանգարանը գործել է իրանական XVII դարի հուշարձան Կապույտ մզկիթում, 1994-1997 թթ.՝ նախկին իգական Հռիփսիմյան գիմնազիայում: 2005 թ. հաստատվել է Երևանի քաղաքապետարանի նորակառույց շենքում՝ քաղաքապետարանի հետ կազմելով միասնական ճարտարապետական համալիր (ճարտ.՝ Ջիմ Թորոսյան): 2007 թ. ապրիլի 31-ին վերաբացվեց թանգարանի նոր մշտական ցուցադրությունը: Թանգարանում պահպանվում է շուրջ 96 000 ցուցանմուշ, որոնք ներկայացնում են Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը[748]:

Երևան քաղաքի պատմության թանգարանը մայրաքաղաք Երևանի յուրօրինակ այցեքարտն է և գործում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ: Թանգարանի առանձնահատկությունը Երևանի քաղաքապետարանի հետ միասնական ճարտարապետական համալիրում գտնվելն է:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը ստեղծվել է 1968 թ. մայիսի 24-ի ՀՀ կառավարության որոշմամբ, որի համար գիտական հիմք են հանդիսացել Երևան քաղաքում գտնվող երեք նշանավոր հնավայրերից՝ Արին բերդից, Կարմիր բլուրից և

---

[746] Տե՛ս նույն տեղում, էջ 322:
[747] Տե՛ս Ա. Սարգսյան, Երևանի թանգարանները // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 322:
[748] Տե՛ս նույն տեղում:

Շենգավիթից հայտնաբերված գտածոները: Հանրության առաջ թանգարանն իր դռները բացել է 1968 թ. հոկտեմբերի 19-ին Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Թանգարանն ունի «Կարմիր բլուր» ու «Շենգավիթ» մասնաճյուղերը և այսօր ուրարտագիտական կարևոր կենտրոն է տարածաշրջանում[749]:

Թանգարանի հավաքածուն կազմում են Արին բերդ, Կարմիր բլուր, Շենգավիթ հնավայրերից, ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջաններից հայտնաբերված նախաուրարտական, ուրարտական, աքեմենյան, հելլենիստական և վաղ հայկական ժամանակաշրջաններին վերաբերող 11 295 հնագիտական առարկաները[750]:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը գործում է Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո:

Հայոց ցեղասպանության թանգարանը բացվել է 1995 թ., երբ նշվում էր Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցը: Թանգարանի նոր ցուցադրությունը բացվեց 2015 թ.՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Թանգարանում պահպանվում և ցուցադրվում են Մեծ եղեռնին առնչվող բնօրինակ լուսանկարների, բացիկների, հնատիպ թերթերի ու ամսագրերի, քարտեզների, ազգագրական իրերի, վերապրողների անձնական իրերի ու բանավոր պատմությունների, նամակների ու ծրարների և անվանական հավաքածուներ[751]:

Հայաստանի Հանրապետություն ժամանած պաշտոնական պատվիրակությունների այցելությունը Հայոց ցեղասպանության թանգարան նախատեսված է պետական արարողակարգով: Թանգարանը գործում է ՀՀ ԳԱԱ համակարգում:

Երևանում գործում են նաև մեծանուն գրողների՝ Հ. Թումանյանի թանգարանը, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Դերենիկ Դեմիրճյանի, Խաչատուր Աբովյանի, կոմպոզիտորներ Ա. Սպենդարյա-

---

[749] Տե՛ս նույն տեղում:
[750] Տե՛ս Ա. Սարգսյան, Երևանի թանգարանները // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 322:
[751] Տե՛ս նույն տեղում:

նի, Արամ Խաչատրյանի, մեծանուն Կոմիտասի թանգարանը, հայտնի արվեստագետների՝ Մ. Սարյանի, Երվանդ Քոչարի, Հակոբ Կոջոյանի և Արա Սարգսյանի, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանները, Սերգեյ Փարաջանովի թանգարանը, Գևորգ Գրիգորյանի թանգարան-արվեստանոցը (1980 թ.), «Կալենց» թանգարանը[752]:

Երևանում են գործում Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի (1953 թ. հիմնվել է, 1967 թվականից է կրել Չարենցի անունը), Փայտարվեստի (1977 թ.), Ռուսական արվեստի (1984 թ.), Միջին Արևելքի (1993 թ.), «Մայր Հայաստան» զինվորական (1970 թ.), Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ (1990 թ.), պրոֆեսոր Հ. Տ. Կարապետյանի անվան երկրաբանական (1937 թ.), Հայաստանի ժողովրդական արվեստի (1978 թ.) թանգարանները, մանկական պատկերասրահը (1970 թ.), Հայաստանի բնության թանգարանը (1954 թ.)[753]:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ են գործում նաև Ժամանակակից արվեստի (1972 թ.), Կարեն Դեմիճյանի (2001 թ.), Ֆրիտյոֆ Նանսենի (2016 թ.) թանգարանները և «Հայարտ» մշակութային կենտրոնը (1996 թ.):

Մայրաքաղաքում բացվեցին նաև մի շարք մասնավոր և այլ ցուցասրահներ՝ «Ակադեմիա» (2001 թ.), «Գևորգյան» (2004 թ.), «Ալբերտ և Թովե Բոյաջյան» (2001 թ.), «Էդուարդ Իսաբեկյան» (2013 թ.), «Գալա» (2012 թ.), «Դալան» (2011 թ.), «Արև» (1986 թ.)[754]:

---

[752] Տե՛ս նույն տեղում:
[753] Տե՛ս Ա. Սարգսյան, Երևանի թանգարանները // Երևանի պատմությունը, Երևան, 2018, էջ 322:
[754] Տե՛ս նույն տեղում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Երևանը հայ ժողովրդի թե՛ անցյալն է, թե՛ ներկան, թե՛ նրա ապագան: 1991 թ., երբ հայ ժողովուրդը վերականգնեց դարեր երազած իր պետականությունը, Երևանը կրկին դարձավ անկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք: ՀՀ անկախության առաջին տարիներից սկսած՝ նորանկախ հանրապետության մայրաքաղաքը փորձությունների ենթարկվեց: ՀՀ մինչ այժմ շարունակվող շրջափակումը, հարևան Թուրքիայի և Ադրբեջանի կողմից վերջինիս սանձազերծած ադրբեջանա-արցախյան պատերազմը, ադրբեջանահայության բռնագաղթը, սոցիալ-տնտեսական դժվարին իրավիճակը ծանր դրության մեջ դրեցին մայրաքաղաքի բնակչությանը: Այլ կերպ ասած՝ անկախացման և շուկայական պայմաններին անցման սկզբնական ժամանակաշրջանում ճգնաժամային երևույթներին, պատերազմին, երկրաշարժի հետևանքների վերացմանը անմասն չմնաց նաև հանրապետության մայրաքաղաք Երևանը: Բնակչության գնողունակության անկումը, պարենամթերային ապրանքների առաջարկի պակասորդը, հասարակական ծառայությունների ծավալների կտրուկ կրճատումը առավելապես զգացվում էր հենց Երևանում: Դիմագրավելով այդ ծանր փորձություններին՝ մայրաքաղաքը կարողացավ բազմակողմանի օգնություն ցուցաբերել մարտնչող Արցախին՝ իր լիարժեք ու ակտիվ մասնակցությունը բերելով անկախ պետականության կայացման գործին:

Արդեն XXI դարում զարգացման կայուն և դինամիկ փուլ թևակոխած Հայաստանում նոր շունչ հաղորդվեց նաև նրա քաղաքական, տնտեսական, արդյունաբերական մշակութային, կրթական, կենտրոն Երևան քաղաքին: XXI դարասկզբին արձանագրված տնտեսական երկնիշ աճին նպաստեցին նաև մայրաքաղաքում գործարկված նոր արտադրական հզորությունները, շինարարական լայնածավալ աշխատանքները և քաղաքաբնակ բնակչության եկամուտների շարունակական աճը:

Լայնածավալ աշխատանքները հատկապես շինարարության, բարեկարգման, առևտրի ու սպասարկումների, մշակույթի, կրթու-

թյան և սպորտային ոլորտներում տարեցտարի որակական փոփոխություններ մտցրին քաղաքն իր բնակիչների և հյուրերի համար առավել բարեկեցիկ և գրավիչ դարձնելու գործում: Երևան քաղաքի հատակագծի մշակումը և 2005 թ. դրա հաստատումը կարևոր և վճռորոշ քայլ էր, որով կանոնակարգվեցին, նախանշվեցին մայրաքաղաքի զարգացման հիմնական ելակետերը, կատարվելիք աշխատանքների ծավալներիը (այդ թվում՝ շինարարական) և դրանց ֆինանսավորման աղբյուրները:

Միաժամանակ քաղաքային իշխանությունների ուշադրության կենտրոնում էր մայրաքաղաքի բնապահպանական իրավիճակը: Մշակվել և իրագործվել են հստակ միջոցառումներ կանաչ տարածքների պահպանման և նորերի հիմնման ուղղությամբ, անցկացվել են ոռոգման ջրագծեր: Միջոցառումներ են իրականացվել նաև բնակֆոնդի վերանորոգման, հիմնանորոգման, դպրոցների, կրթական և մշակութային օջախների ավելացման ուղղությամբ: Իհարկե, վերոնշյալ գործընթացները մի մասն են այն աշխատանքների, որոնք իրականացվել և իրականացվելու են մայրաքաղաքը առավել բարեկեցիկ դարձնելու, ավանդական արժեքների պահպանմամբ, նրան ժամանակակից տեսք տալու ու միշտ «երիտասարդ» պահելու ուղղությամբ:

ՀՀ անկախության քառորդ դարից ավելին անցած տարիներին մայրաքաղաքի միջազգային տարբեր կազմակերպությունների և քույր քաղաքների հետ արտաքին կապերի ամրապնդումը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012 թ. Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելը նպաստեցին Երևանի միջազգային հեղինակության բարձրացմանը: Մայրաքաղաքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում իրականացրած բարեփոխումները իրենց թերություններով հանդերձ նպաստեցին Երևանի հետագա զարգացմանը:

Համայն հայության մայրաքաղաք Երևանը հայ ժողովրդի հազարամյակների երկար ու դժվարին պատմական ուղու վկան է ու մասնակիցը: Երևանցին միշտ էլ հպարտացել ու հպարտանում է իր հնամենի մայրաքաղաքով, նրա պատմությամբ, մշակույթով ու ա-

վանդույթներով: Պատմության ընթացքում Երևանն ունեցել է իր ծաղկման ու անկման ժամանակաշրջանները, բազմիցս ենթարկվել է փորձությունների, ավերվել ու վերածնվել է իր ժողովրդի հետ՝ որպես նրա հազարամյա ճանապարհի հավատարիմ ուղեկից: Այսօրվա երևանցին ոտք է գցում Նյու Յորքի, Լոնդոնի, Փարիզի և Տոկիոյի քաղաքացու հետ:

Դարերի ու հազարամյակների բովով անցած Երևանի հին ու միջնադարյան շինություններից միայն մասունքներ են մնացել, որոնք սոսկ հնագիտական նշանակություն ունեն:

ՀՀ անկախության տարիներին ևս մայրաքաղաք Երևանը շարունակեց իր հատուկ դերակատարումը Հայաստանի Հանրապետության կյանքում, քանզի այնտեղ կենտրոնացած է հանրապետության բնակչության ավելի քան մեկ երրորդը, պետական, քաղաքական, մշակութային, գիտական կյանքի գերակշիռ մասը, և թողարկվում է համախառն արտադրանքի կեսից ավելին: Վերջին տարիներին Երևան քաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան հատվածների մեջ բավականին մեծ են: Այսպես, 2017 թ. Երևան քաղաքի արդյունաբերության բաժինը կազմել է ՀՀ արդյունաբերության 40,9 %-ը, գյուղատնտեսությունը՝ 1,2 %-ը, շինարարությունը՝ 61,0 %-ը, մանրածախ առևտուրը՝ 74 %-ը, ծառայությունները՝ 80,6 %-ը: Դա նշանակում է, որ ՀՀ տնտեսության առջև ծառացած և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիր է տարածքային զարգացման շարունակական բևեռացման մեղմումը Երևան քաղաքի և մարզերի միջև: Տարածքային զարգացման անհամաչափությունները ՀՀ-ում խորացել են հատկապես 2000 թ.՝ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց:

Մինչև 2009 թվականը Երևան քաղաքի երկու կարևորագույն ճյուղերի՝ արդյունաբերության և շինարարության բաժինը հանրապետության համապատասխան ճյուղերի մեջ բավականին բարձր էր՝ 49,0 և 87,6 %, սակայն ճգնաժամից հետո դա էապես կրճատվեց՝ համապատասխանաբար կազմելով 42,4 և 53,1 %: Դա նշանակում է, որ Երևանը ոչ միայն խոշոր արդյունաբերական, այլ նաև շինարարության իրականացման կենտրոն է:

Անհամաչափ տարածքային զարգացումը նպաստում է ՀՀ տնտեսական թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության անցանկալի արտահոսքին ու մայրաքաղաքում անվերահսկելի կենտրոնացմանը: Հայաստանում առկա են զգալի անհամամասնություններ նաև բնակչության խտության առումով: Բնակչության խտության անհավասարությունն արտահայտվում է Երևանի և մնացած մյուս մարզերի մշտական բնակչության թվաքանակի և խտության ցուցանիշների մեջ: ՀՀ և Երևան քաղաքի 2005-2018 թթ. աշխատանքի շուկայի դիտարկումից պարզվում է, որ աշխատանքի առաջարկի ու պահանջարկի միջև դեռևս պահպանվում է զգալի անհամապատասխանություն: Դա հանգեցնում է աշխատանքի տեղավորման տևողության, հետևաբար նաև գործազրկության տևողության մեծացման և խրոնիկ գործազրկության:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզերի մայրաքաղաք տեղափոխված բնակչության գերակշիռ մասը դեռևս աշխատանք չի գտնում՝ մնալով գործազուրկի կարգավիճակում, չնայած նրանց տեղաշարժի հաշվին աճում է մայրաքաղաքի բնակչությունը: Դրա հաշվին Երևանի խոշորացումը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ առաջին՝ որպես դրական երևույթ. Երևանը շրջակա միջավայրի և մարդկության համար նոր հնարավորությունների միջավայր է՝ ինտելեկտուալ գործունեության, առևտրի, մշակույթի, արտադրողական աշխատանքի, սոցիալական զարգացման կենտրոն, երկրորդ՝ որպես բացասական երևույթ. Երևանում կուտակվել են մի շարք հիմնախնդիրներ՝ գերբնակեցվածություն, ենթակառուցվածքի ձևախեղում, բնակարանային անբավարարություն, տրանսպորտային կոլապս և բնապահպանական խնդիրներ, քաղաքի առանձին շրջանների անհամաչափ զարգացում և այլն:

Վերոնշյալ խնդիրը Երևանում լուծելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է մշակել մայրաքաղաքի զարգացման նոր ծրագիր, որտեղ մայրաքաղաքի զարգացումը պետք է հանդես գա որպես տեղական իշխանության, գործարարության և այլ խմբերի նպատակամետ գործունեության արգասիք՝ ուղղված տնտեսական բարեկացության ապահովմանը, աշխատատեղերի ավելացմանը և քաղաքացիների կյանքի որակի բարձրացմանը: Առանձին բանագավառների նպա-

տակների առաջադրմամբ և առաջնահերթությունների սահմանմամբ պետք է զբաղվեն համապատասխան մասնագիտացված ստորաբաժանումները: Երևանի զարգացման ծրագիրը մշակելիս կարևոր է ճիշտ գնահատել և կանխատեսել ֆինանսական միջոցները: Ընդ որում՝ համապատասխան ծրագրերի իրականացման համար ցանկալի է գնահատել և օգտագործել նաև ֆինանսական ռեսուրսների ներգրավման արտաքին աղբյուրները, ինչպիսիք են, օրինակ, հատկացումները պետական բյուջեից, փոխառու միջոցների ներգրավումը, դոնոր կազմակերպությունների, մասնավոր հատվածի, բնակչության օժանդակությունը և այլն: Այս տեսանկյունից մինչև ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները որոշելը անհրաժեշտ է դիտարկել այն բոլոր ընդհանուր շահերը, որոնք կարող են առաջանալ համապատասխան խմբերի հետ: Երևանի զարգացման ծրագիրը անփոփոխ փաստաթուղթ չէ: Համայնքի իրավիճակը անընդհատ փոփոխվում է, և անհրաժեշտ է պարբերաբար ճշգրտումներ կատարել ծրագրում՝ այն համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին: Անհրաժեշտ է պարբերաբար անդրադառնալ ծրագրով առաջադրված խնդիրների կատարման արդյունքներին, պարզաբանել այդ խնդիրներից շեղումները, և եթե կան նոր սկզբունքային մոտեցումներ, ապա ձևակերպել դրանք և ճշգրտել նոր առաջադրանքներ: Կարևոր հիմնախնդիր է համայնքների ներգրավումը դրամավարկային հարաբերություններում: Օրենքով պետք է հստակեցվի համայնքների կողմից բանկային համակարգից վարկ վերցնելու և համայնքային պարտատոմսեր թողարկելու կարգերը: Առանց այս հիմնախնդրի լուծման համայնքներն ուղղակիորեն չեն կարող իրականացնել լուրջ ներդրումային քաղաքականություն:

Երևանի, նրա վարչական շրջանների տնտեսության հետագա զարգացումը պետք է հիմնված լինի ոչ միայն արդյունաբերության ավանդական ճյուղերի, այլ նաև նոր և գերակա ճյուղերի զարգացման վրա: Մասնավորապես, պետք է առանձնացնել հետևյալ ճյուղերը՝ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերություն, ճշգրիտ սարքաշինություն, կենստեխնոլոգիաների արտադրություն, նանոտեխնոլոգիաներ, դեղորայքային արտադրություն, այլընտրանքային էներգետիկա, որոնք գերազանցապես գիտելիքահենք տնտեսության ճյուղեր են:

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը սահմանել է Երևան քաղաքի առաքելությունը. «Երևանը XXI դարում պետք է լինի բնակչության բարեկեցության անընդհատ բարձրացման, աշխատանքի համար հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաք, զբոսաշրջության զարգացման և էկոլոգիապես մաքուր քաղաք»:

Անկախության շրջանի Երևանի պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ մայրաքաղաքում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումը այսօր հրատապ պահանջ է: Մայրաքաղաքի քաղաքային տրանսպորտի ոլորտում առկա հիմնախնդիրներն են ներքաղաքային ուղևորատար տրանսպորտի ոչ օպտիմալ կառուցվածքը, ներքաղաքային վերգետնյա երթուղային ցանցի և Երևանի վարչական տարածք մուտք գործող միջմարզային երթուղիների ոչ արդյունավետ կառուցվածքը, ներքաղաքային տրանսպորտային միջոցների և Երևանի վարչական տարածք մուտք գործող միջմարզային երթուղիների անկանոն կայանատեղերի առկայությունը, երթակարգավարական կետերի հասարակական տրանսպորտի և տաքսի-ավտոմոբիլների կանգառների ու կայանատեղերի անբավարար վիճակը: Մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ է շարունակել ավտոբուսային հավաքակազմի համալրումը քաղաքային նշանակության ավտոբուսներով և դրան զուգահեռ նվազեցնել միկրոավտոբուսների թիվը: Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալների աճ կարող է տեղի ունենալ միայն գործող գծի ընդլայնման, կայարանների կառուցման և շահագործման, ինչպես նաև վերգետնյա ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցի վերանայման և կարգավորման դեպքում:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում առկա ֆինանսական միջոցներ պահանջող հիմնախնդիրներն են՝ ջրամատակարարման և ջրահեռացման մաշված ցանցերի նորոգում և նորերի շահագործում, էլեկտրաէներգիայի և ջրառի ծախսի նվազեցում, կորուստների կրճատում ջրատար համակարգում և բաշխիչ ցանցում, կառավարման բարելավմանն առնչվող հիմնախնդիրներ՝ «Երևան

ջուր» ՓԲԸ կառուցվածքային բարեփոխումների իրականացում, տեխնիկական կառավարման (ջրաղբյուրների կառավարում) բարելավում, բաժանորդների տեղեկատվական համակարգի ստեղծում:

Երևան քաղաքի էկոլոգիապես ծանրաբեռնված բնակավայր է, որտեղ անբարենպաստ կլիմայական պայմանները շինարարության ներկայիս ծավալները, տրանսպորտային միջոցների շարունակական ավելացումը իրենց բացասական ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա: Հիմնախնդիրների ամենամտահոգիչը թերևս կանաչ տարածքների անբավարար մակերեսն է, որի հետևանքով իջել է օդի խոնավությունը: Բնապահպանմանը զուգահեռ հիմնախնդիրներից առանձնացվում են՝ կանաչ գոտիների վերականգնման և նորերի կառուցման տնտեսական մեխանիզմների, կառավարման միասնական համակարգի մշակումը, կանաչ տնկարկների խնամքի և պահպանման պայմանների բարելավումը, ոռոգման ցանցի համակարգի հետագա ընդլայնումը, կանաչ գոտիների պահպանման նկատմամբ փոխհամաձայնեցված և արդյունավետ հսկողության իրականացումը: Շինարարության, բարեկարգման, մասնավորապես ճանապարհաշինության ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ բնակչության բնակարանային պայմանների բարելավումը, բնակարանային ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակը, բազմաբնակարան շենքերի շահագործման և սպասարկման իրականացումը, բնակարանակին ֆոնդի պահպանումը՝ հիմնական և ընթացիկ նորոգումը, 3-րդ աստիճանի վնասվածության շենքերի ամրացումը և սեյսմազինվածության ուժեղացումը: <u>Կարգավորման կարիք ունեն Երևան քաղաքի վարչական սահմաններում բնակելի և ոչ բնակելի նպատակային նշանակությամբ փաստացի օգտագործվող տարածքների գործառական նշանակության փոփոխության հարցերը:</u>

Առևտրի ոլորտի հիմնախնդիրները կարգավորելու նպատակով առաջարկում ենք՝ Երևանի բոլոր վարչական շրջաններում գյուղատնտեսական մթերքների նոր շուկաների կազմակերպումը, ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի կանոնակարգումը, այդ գործում սեփականատերերի և վարձակալների համաձայնեց-

ված գործառույթների ապահովումը: Մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական կյանքի մյուս բնագավառներում ևս կան հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Դրանք վերաբերվում է բազմաբնակարան շենքերին, նրանց կառավարմանը, մայրաքաղաքի ժողովրդագրական իրավիճակին և այլն:

Չնայած առկա հիմնախնդիրներին՝ անկախության անցած շուրջ 30 տարիները վկայում են, որ առկա բազմաթիվ դժվարությունների պայմաններում այդ ժամանակահատվածը Երևանի համար վիթխարի քայլերով առաջ ընթացող քաղաքաշինական նվաճումների շրջան է: Չնայած առկա դժվարություններին, բացթողումներին, արտաքին ու ներքին մարտահրավերներին՝ Հայաստանի Հանրապետությունն ու նրա մայրաքաղաք Երևանը ընթանում են անկախ պետականության կայացման ճանապարհով: Նոր հազարամյակ թևակոխած հայ ժողովուրդը լիահույս է կերտելու ազատ ու անկախ ժողովրդավարական պետություն:

Մենք սիրում ենք մեր քաղաքը: Երևանի հետ են կապված մեր պայծառ հուշերն ու երազանքները, Երևանը մեր տունն է և միշտ պետք է լինի խնամված, հյուրընկալ ու գեղեցիկ: 2802-ամյա հին ու արևոտ քաղաքը հերթական անգամ նշում է Էրեբունի-Երևան տոնակատարությունը՝ լավատեսությամբ լցվելով մեր երկրի գալիքի ու մայրաքաղաքի վաղվա օրվա նկատմամբ: Հայաստանի 12-րդ մայրաքաղաք Երևանի երեքհազարամյա անցած ճանապարհի պատմությունն արտացոլող, նաև ՀՀ անկախության, երրորդ հանրապետության շրջանի գիրքն ընթերցողին է ներկայացնում Երևանի ժամանակակից պատմությունն իր հիշարժան իրադարձություններով, վաղեմի ու նորոգ թաղերով, ճարտարապետական շքեղ կոթողներով, գեղատեսիլ հրապարակներով, լայնահուն պողոտաներով ու աշխարհահռչակ մշակույթով: Մեր հայոց հին ու հավերժ մայրաքաղաք Երևանի ժամանակակից պատմությանը նվիրված սույն աշխատությունը սիրո ու նվիրումի արտահայտություն է մեր հարազատ ոստանին և պատգամ ապագա սերունդներին, որ սիրեն ու ճանաչեն իրենց պաշտելի մայրաքաղաքը:

Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

Արխիվային նյութեր

1. Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀՀՔԿՓԿՊԱ), Երևան քաղաքի պետական արխիվ, ՀՀ պարգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտե (1987-1996 թթ.), ֆ. Ե-1, ց. 15, գ. 562, 563, 564, 565, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579:

Հայաստանի ազգային արխիվ

2. ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, 371, 372, 373, 374, 563, 564, 713, 714, 715, 874, 875, 876, 1049, 1050, 1243, 1244, 1245, 1246, 1262, 1789, 1490, 1491, 1524, 1808, 1809, 1810, 1811, 1812, 1847, 2093, 2094, 2095, 2096, 2097, 2127, 2128, ց. 163, գ. 398, 408, 473, 489, 619, ց. 165, գ. 41, 42, 57, 59, 85, 95, 153, 176, ց. 166, գ. 219, 457, 462, 586, 617, ց. 167, գ. 91, 119, 253, 380, ց. 169, գ. 77, 120, 218, 526, 571, 602, 629, ց. 171, գ. 187, 188, 582, ց. 174, գ. 40, 41, 44, 45, 85, 86, 87, 91, 93, 129, 134, 242, ց. 175, գ. 178, 301, 320, 324, 412, 528, ց. 177, գ. 74, 101, 140, 345, 463, 579, 580, 589, ց. 182, գ. 254, 255, 256, 257, 287, 508, 509, 510, 511, 543, ց. 191, գ. 224, 225, 226, 227, ց. 197, գ. 264, 265, 266, 267, 325, ց. 209, գ. 267, 268, 269, 270, 272, 726, 727, 728, 729, 730, 1156, 1157, 1158, 1159, 1160, 1161, 1162, 1163, 1164, 1165, 1166, 1167, 1168, 1169, 1170, ց. 215, գ. 1171, 1190:

3. ֆ. Ե.257, ց. 1, գ. 6, 7, 33, 34, 41, 42, 81, 82, 129, 130, 175, 176, 181, 182, 254, 255, 259, 260, 332, 333, 337, 338, 339, 340, 346, 351, 357, 367, 379, 391, 398, 402, 406, 415, 428, 432, 439, 445, 455, 469, 477, 478, 498, 500, 502, 506, 507, 508, ց. 2, գ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 111, 112, 168, 172, 189, 194, 202, 226, 244, 265, 294, 301, 309, 372, 376, 396, 404, 409, 427, 432, 444, 445, 446, 447, 463, 464, 469, 473, 474, 477, 481, 482, ց. 4, գ. 1, 2, 3, 98, 99, 117, 206, 208, 209, 213, 225, 230, 231, 232, 233, 240, 241, ց. 5, գ. 1, 2, 3, 67, 78, 99, 106, 109, 122, 164, 165, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 238, ց. 6, գ. 1, 3, 8, 11, 14, 18, 23, 28, 36, 38, 42, 47, 49, 51, 54, 56, 57, 61, 64, 67, 72, ց. 7, գ. 1, 2, 3, 4, 9, 10, 68, 91, 117, 172, 191, 208, 301, 345, 367, 406, 412, 425, 437, 476, 483, 491, 495, 497, 503, 506, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 639, 640, 647, 648, 654, 664, 670, ց. 9, գ. 1, 2, 3, 16, 19, 28, 74, 106, 109, 183, 184, 206, 209, 264, 291, 318, 394, 402, 405, 443, 486, 497, 509, 522, 534, 539, 542, 544, 546, 547, 548, 549, 550:

4. ՀՀ կառավարության ընթացիկ արխիվային նյութեր և որոշումների ժողովածուներ, 1991 թ., գ. 23, հ. 19, թ. 24-25, 223-242, 27, 28, թ. 257, գ. 4, հ. 35, 36, թ. 438-439, 1996 թ. գ. 7, հ. 8, թ. 402, 403, 1997 թ., գ. 3. հ. 2. թ. 26, 1998 թ., գ. 10, հ. 3, թ. 648-650, թ. 673-674, թ. 724, գ. 11, հ. 5. թ. 58, 1999 թ., գ. 2, հ. 8 թ. 506, գ. 6, հ. 23-24, թ. 68, գ.7, հ. 2, թ. 424, 425, գ. 8, հ. 3, թ. 497, 2001 թ., գ. 6, հ. 9, թ. 72, 73, 74, 1993 թ., № 5, հ. 35, թ. 5, №6, Ի 45, թ. 23-25, 1994 թ., № 1, 2,

h. 5-6, p. 19-20, №4, h.29-34, p. 15-63, №6, h. 49, p. 3-8, h. 51, p. 18-19, № 7, h. 68, p. 92-103, № 8, h. 76, p. 39-69, 1995 p., № 1, h. 11, p. 42-59, №2, h. 18, p. 22, №3, h. 19, p. 3, № 6, h. 63, p. 53-54, h. 90, p. 91-101, № 8, h.88, p. 3-36, № 11-12, h. 100, p. 9, 1996 p., №2, h. 16, p. 11-16, 24-25, № 7-8, h. 69, p. 10-12, 38, 39, h. 70, p. 27-33, № 9, p. 34-35, h. 86, p. 37-44: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 3 սեպտեմբերի, N 19(52) 1998: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 17(115), 1 օգոստոսի, 2000: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, h. 29 (95), 19 նոյեմբերի, 1999: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» 17(50), 10 օգոստոսի, 1998: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, թիվ 21(196), 21 հունիսի 2002: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 6, 31 մարտի, 1997: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 11, 20 մայիսի, 1997: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 12, 5 հունիսի, 1997: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 12 (45), 15 հունիսի, 1998: ՀՀ պաշտոնական տեղեկագիր,N 14, 20 հունիսի, 1999: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 2 (100), 14 փետրվարի, 2000: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 23, 28 փետրվարի, 2000: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 1 (176), 9 հունվարի, 2001: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 3 (135), 31 հունվարի, 2001: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 17 (149), 15 հունիսի, 2001: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 5 (180), հունվար, 2002: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 55 (230), 17 դեկտեմբերի, N 34 (209), 15 օգոստոսի, 2002: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 6 (181), 5 փետրվարի, 2002, N 3-18, N 32 (207), 8 օգոստոսի, 2002:

5. Երևանի քաղաքապետարանի ընթացիկ արխիվ, Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվությունները, արտաքին կապերը (2010-2018 թթ.):

Տպագիր աղբյուրներ

1. Երևանի քաղաքապետարան, տարեկան հաշվետվություններ (2013, 2014, 2015, 2016, 2017 թթ.):

2. Երևանի տարեգրությունը, հնագույն ժամանակներից մինչև 2009 թ. վերջը, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2009:

3. «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 1990 թ. հունվարի մեկից դեկտեմբերի 30-ը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 1991 թ. հունվարի 10-ից մինչև 2018 թ. դեկտեմբերի 30-ը, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 2007-2018 թթ., ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, N1, 1991թվականից մինչև 1996 թ. դեկտեմբեր ներառյալ, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 1997 թ. հունիսի 1-ից սկսած, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Երևան, 1995, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Ա, Երևան, 1999, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Բ, Երևան, 1999, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Գ, Երևան, 2000, ՀՀ գործող օրենքների ժողովածու (2001 թ.), գիրք Դ, Երևան, 2001, ՀՀ գործող օրենքների ժողովածու (2002 թ.), գիրք Ե,

Երևան, 2003, ՀԽՍՀ գերագույն խորհրդի տեղեկագիր N15 (971), 23 օգոստոսի, 1990, ՀՀ գերագույն խորհրդի տեղեկագիր N2 (982), 31 հունվարի 1991:

4. Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, Երևան, 2001, Պատմություններ աղքատության մասին, գիրք երկրորդ, Երևան, 2007: Արտագաղթը Հայաստանից, Երևան, 2003: Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություններ – 2000, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001: «Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծական զեկույց, Երևան, 2002: «Զեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների», ընտրանքային հետազոտություն, Երևան, 2002: «Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին», վերջնական զեկույց (ամփոփագիր), Տոկիո, 1999:

5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1991 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1992, 1992 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1993, 1993 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1994, 1994թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1995, 1995 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1996, 1996թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1997, 1997 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1998, 1998թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1999, 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2000, 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2001, 2001 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2002, 2002 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2003, 2003 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2004, 2004 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2005, 2005 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2006, 2009 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2010, 2010 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2011, 2011 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012, 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2013: 2015 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2015, 2016 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2016, 2017 թ. հունվար-դեկտեմբերին, 2017: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թ., Երևան, 1991: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1991 թ., Երևան, 1994, Հայաստանը թվերով 1992 թ., Երևան, 1994, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994, Երևան, 1995, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Երևան, 1998, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Երևան, 2001, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Երևան, 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, Երևան, 2010, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Երևան, 2011, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Երևան, 2012, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, 2013: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, Երևան, 2015: Содружество независимых государств: Десять лет спустя. 1991-2001. (Исполнительный комитет СНГ), Минск, 2001, Содружество

независимых государств в 2002 году, Статистический ежегодник /Межгосударственный статистический комитет СНГ, Москва 2003, Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001, Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը 1997-2001, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002, ՀՀ կենտրոնական բանկ, Հայաստանի բանկային համակարգ: Հոդվածներ, խմբ.՝ Լ. Դավթյան, Բ. Ասատրյան, Երևան, 2002, Հայաստանը թվերով 2003, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2003:

6. «Ձեկույց առողջապահական կազմակերպությունների և դեղատների ու տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի ընտրանքային հետազոտության», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2001 թ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2002 թ. վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2006 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2006, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2010 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013: «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004, Համաշխարհային բանկ, Երևան, 2006, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2008, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2009, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013: Առևտուր և մարդկային զարգացում, Միավորված ազգերի զարգացման ծրագիր, Երևան, 2011:

7. Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, Երևան, 2011: Սոցիալական պետության հայեցակարգեր, հայկական իրողություններ և հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, փետրվար, 2006 թ., Երևան, 2007: Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրա-

կան քաղաքականության հայեցակարգ, Երևան, 2006, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2004, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005 թ., Երևան, 2005, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2009 թ., Երևան, 2009: ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արագածոտնի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արարատի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արմավիրի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Լոռու մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Վայոց ձորի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Կոտայքի մարզի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ք.Երևանի ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան 2003, ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003:

8. Արդյունաբերություն 1990-1997, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 1999: Արդյունաբերություն 1998-2003, վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2004: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2001: Սպառողական շուկան Հայաստանի Հանրապետությունում 1921-2000, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 1999, Վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999, Երևան, 2000: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1998-2001, Երևան, 2002, Հայաստան 2001, Վիճակագրական գրքույկ, Երևան, 2001, Հայաստան 2002, Երևան, 2002, Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, Աղքատության կրճատմանն ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն, Երևան, 2002: Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Երևան, 2002: «Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում», իրավիճակային վերլուծության զե-

կույց, Երևան, 2002, «Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2010», բարձրագույն կրթության մարտահրավերները, Երևան, 2010, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1999-2003, վիճակագրական ժողովածու, Երևան, 2004: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2000-2004թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2005, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2001-2005 թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2006, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2003-2007 թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2008, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009 թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2010: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012 թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2013, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011-2015 թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2016, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012-2016 թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2017:

Գրականություն

Հայերեն

1. Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890:
2. Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանց դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000, նույնի՝ Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999:
3. Բաղդասարյան Գ., Երևանի քաղաքապետեր, Երվանդ Զախարյան, «Երևան բուք», Երևան, 2013:
4. Բաղդասարյան Գագիկ և ուրիշներ, Երևան, «Մարմարա», 2002:
5. Բաղդասարյան Գ., Երևան, «Տիգրան Մեծ», Երևան, 2008:
6. Բաղդասարյան Գ., Երևան 2800, «Ամի բուք» ՍՊԸ, Երևան, 2018:
7. Գրիգոր Խլաթեցի, Յիշատակարան աղետից, Վաղարշապատ, 1890:
8. Գրիգորյան Վ. Ռ., Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800), Երևան, 1958:
9. Երևան, գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության հարցերին, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2006:
10. Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 2, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2009:
11. Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 3, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2012:
12. Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 4, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2016:
13. Երևան, գիտական հոդվածների ժողովածու, 5, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2018:

14. Երևան պատմաշխարհագրական ատլաս, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2009:

15. Երևանի պատմությունը, հեղ. խումբ, գիտական խմբագիրներ՝ Ա. Մելքոնյան, Է. Մինասյան, «Երևան բուք» ՍՊԸ, Երևան, 2018:

16. Երևան XX դար, 2-րդ հրատ., Երևան, 2017:

17. Հին ու նոր Երևան, պատմական տեղեկագիր-ուղեցույց, Երևանի քաղաքապետարան, Երևանի քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2009:

18. Երևան (ալբոմ-ուղեցույց), Վ. Ազատյանի հեղինակությամբ (հայերեն և ռուսերեն եղանակով), «Պարբերական ԱՀՄ», Երևան, 1989:

19. Երևան քաղաքի պատմության թանգարան, գրքույկ, ԵՔՊՐ, Երևան, 2009:

20. Երևան, խմբ.՝ Գ. Աղաբաբյան, Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան, 1960:

21. Երևան 2800, նախագծի հեղինակ և կազմող՝ Գ. Բաղդասարյան, «Ամի բուք» հրատ., Երևան, 2018:

22. Իսրայելյան Մ., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971:

23. Կիրակոսյան Ա., Մայրամուտի շեմին, Երևան, 2002:

24. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (հ. 1-4), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1959-1971 թթ.:

25. Հակոբյան Թ., Երևան 2750 (Ք. ա. 782 թ., 1968 թ.), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1968:

26. Հարությունյան Ա., Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1958:

27. Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Երևան, 2011:

28. Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975:

29. Մարգարյան Տ., Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, ատենախոսություն, ը. 00.02. «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 2013: Նույնի սեղմագիրը, Երևան, 2013:

30. Մարգարյան Տ., Երևանի ավագանու ընտրություններ նախընտրական ծրագիր, Երևան, 2013, Երևան, 2017:

31. Մալխասյան Մ., Ժողովրդագրական գործընթացները Երևանում 21-րդ դարի սկզբին, տե՛ս «Երևան-3» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 74-82:

32. Մալխասյան Մ., Պատմաժողովրդական ուսումնասիրություններ, Երևան, 2015:

33. Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002:

34. Մանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է, հոդվածների ժողովածու, Երևան, 2002:
35. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013:
36. Մինասյան Է., Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, 2018:
37. Մինասյան Է., Մայրաքաղաք Երևանը 1991-2018 թթ., տե՛ս Երևանի պատմություն, Երևան, 2018:
38. Մինասյան Է., Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման պատմությունից, տե՛ս Երևան գիտական հոդվածների ժողովածու, 2, Երևան, 2009:
39. Մինասյան Է., ՀՀ անկախ պետականության կայացման գործընթացի սկիզբը մայրաքաղաք Երևանում // Երևան գիտական հոդվածների ժողովածու, 5, Երևան, 2018:
40. Մինասյան Է., Մայրաքաղաք Երևանի արտաքին կապերը, համագործակցությունը միջազգային կառույցների և քույր քաղաքների հետ // Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, գիտական հոդվածների պարբերական ժողովածու, «Լիմուշ» հրատ., Երևան, 2018:
41. Մինասյան Է., Երևանը Հայաստանի անկախ պետականության վարչաքաղաքական համակարգում // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, ԵՊՀ հրատ., Երևան, 2018:
42. Մինասյան Է., Մայրաքաղաք Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը անկախության տարիներին // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2018, N1:
43. Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով, Երևան, 2001:
44. Նազարյան Ս., Երևանի պարբերական մամուլը (1880-1917), Երևան, 1986:
45. Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), «Լուսաբաց» հրատ., Երևան, 2013:
46. Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը, հ. 1, «Գասպրինտ» հրատ., Երևան, 2013:
47. Սարգսյան Ֆ., հոդվածներ, հ. 2, «Գասպրինտ» հրատ., Երևան, 2013:
48. Սարգսյան Ֆաղեյի մասին հուշեր, հ. 3, «Գասպրինտ» հրատ., Երևան, 2013:
49. Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան, 2006:
50. Քոչարյան Ռ., Կյանք և ազատություն, «Տիգրան Մեծ» ՓԲԸ, Երևան, 2019:

Օգտագործված (ռուսերեն, անգլերեն) գրականություն

1. Арутюнян В. М., Асратян М. М., Меликян А. А., Ереван, М., 1968.

2. Акопян Т. Х., Очерк истории Еревана с древнейших времен до наших дней, Ереван, 1977.
3. Багратян Г., Ереван, «АМИ БУК» ООО, Ереван, 2018.
4. Григорян А. Г., Товмасян М. Л., Архитектура Советской Армении, Ереван, 1986.
5. Ереван в цифрах, Ереван, 1984.
6. Оганесян К., Крепость Эребуни, Ереван, 1980.
7. Яралов Ю., Ереван, Москва, 1948.
8. Bagdasaryan G., Yerevan, 2800, Yerevan, 2018.
9. Bagdassayan G., Erevan, «AMI BOOK», Erevan, 2018.
10. EREBUNI – YEREVAN, Project and compilation outhor Mher Baghdasaryan, Yerevan, 2015.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հեղինակին հաջողվել է Հայաստանի ազգային արխիվի համապատասխան փաստաթղթերի, Երևանի քաղաքապետարանի ընթացիկ արխիվային նյութերի, մամուլի, տպագիր սկզբնաղբյուրների հիման վրա ընթերցողին առաջին անգամ ներկայացնել Երևանի ժամանակակից պատմության գիտական ամբողջական հրատարակությունը: Աշխատությունը գալիս է լրացնելու Երևանի մասին նախորդ տարիներին, այդ թվում՝ 2018 թ. հրատարակված «Երևանի պատմություն» գրքի հանրամատչելի տարբերակի ցանկերը: Սույն մենագրությունը բազմամյա տարիների ընթացքում ձեռք բերած գիտական մտքի ընդհանրացված արտացոլանքն է, կարող է լինել տեղեկատվության և պատմության անփոխարինելի սկզբնաղբյուր մայրաքաղաք Երևանի հետագա ուսումնասիրությունների համար:

Աշխատությունում համապատասխան փաստաթղթերի վերլուծությամբ ցույց է տրվում հասարակական-քաղաքական կյանքը մայրաքաղաքում 1991-2018 թթ., հայոց անկախ պետականության խորհրդանիշների հաղթարշավը մայրաքաղաք Երևանում, նորանկախ հանրապետության ողջ տարածքում: 1991 թ., երբ հայ ժողովուրդը վերականգնեց դարեր շարունակ իր երազած պետականությունը, Երևանը կրկին դարձավ անկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք: Նորանկախ հանրապետության մայրաքաղաքը փորձությունների ենթարկվեց՝ ՀՀ անկախության առաջին տարիներից սկսած: ՀՀ մինչ այժմ շարունակվող շրջափակումը, հարևան Թուրքիայի և Ադրբեջանի կողմից վերջինիս սանձազերծած ադրբեջանա-արցախյան պատերազմը, ադրբեջանահայության բռնագաղթը, սոցիալ-տնտեսական դժվարին իրավիճակը ծանր դրության մեջ դրեցին մայրաքաղաքի բնակչությանը: Բնակչության գնողունակության անկումը, պարենամթերային ապրանքների առաջարկի պակասորդը, հասարակական ծառայությունների ծավալների կտրուկ կրճատումը առավել քան որևէ տեղ զգացվում էին հենց Երևանում: Դիմագրավելով այդ ծանր փորձություններին՝ մայրաքաղաքը կարողացավ բազմակողմանի օգնություն ցուցաբերել մարտնչող Արցա-

խին՝ իր լիարժեք ու ակտիվ մասնակցությունը բերելով անկախ պետականության կայացման գործին: Դրա վերլուծությանն է նվիրված առաջին գլխի ենթագլուխներից մեկը: ՀՀ անկախության քառորդ դարից ավելին, անցած տարիներին մայրաքաղաքի միջազգային տարբեր կազմակերպությունների և քույր քաղաքների հետ արտաքին կապերի ամրապնդումը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012 թ. Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելը նպաստեցին Երևանի միջազգային հեղինակության բարձրացմանը: Մայրաքաղաքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի վերլուծությանը նվիրված աշխատության գլուխներում և ենթագլուխներում ցույց է տրվում, որ այդ ոլորտներում իրականացված բարեփոխումներն իրենց թերություններով հանդերձ նպաստեցին Երևանի հետագա զարգացմանը:

Աշխատությունում առանձին գլխով անդրադարձ է կատարվում մայրաքաղաքի վարչական բարեփոխումներին, ներկայացվում են Երևանը հանրապետության վարչաքաղաքական համակարգում, նրա կառուցվածային փոփոխություններն ու սոցիալ-տնտեսական կյանքը: Համապատասխան փաստաթղթերի վերլուծությամբ ցույց է տրվում, թե ինչպես արդեն XXI դարում զարգացման կայուն և դինամիկ փուլ թևակոխած Հայաստանում վերոնշյալ բարեփոխումներով նոր շունչ հաղորդվեց նաև նրա քաղաքական, տնտեսական, արդյունաբերական, մշակութային ու կրթական կենտրոն Երևան քաղաքին:

Վերջաբանում արվում են անհրաժեշտ եզրակացություններ ու առաջարկներ, որոնք, անշուշտ, կօգնեն մայրաքաղաքի հիմնախնդիրների լուծմանը: Լայնածավալ աշխատանքները հատկապես շինարարության, բարեկարգման, առևտրի ու սպասարկումների, մշակույթի, կրթության և սպորտի ոլորտներում տարեցտարի որակական փոփոխություններ են մտցրել Երևան քաղաքն իր բնակիչների և հյուրերի համար առավել բարեկեցիկ ու գրավիչ դարձնելու գործում: Երևանն աշխարհի հնագույն և միևնույն ժամանակ երիտասարդ քաղաքներից է, XXI դարի երկրորդ տասնամյակ թևակոխած ժամանա-

կակից քաղաք, որն ապրում է զարգացում մեծ քաղաքների հատուկ ռիթմով:

Մենք, իրավամբ, հպարտանում ենք մեր արևային քաղաքով. արևը Երևանի բաղկացուցիչ մասն է, ինչպես նաև վարդագույն տուֆը, «Զվարթնոց» օդանավակայանը, «Հրազդան» մարզաղաշտը, Ծիծեռնակաբերդը, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը և Արարատը:

Մեր հայոց հին ու հավերժ մայրաքաղաք Երևանի ժամանակակից պատմությունը նվիրված սույն մենագրությունը սիրո ու նվիրման արտահայտություն է մեր հարազատ ոստանին և պատգամ ապագա սերունդներին, որ սիրեն ու ճանաչեն իրենց պաշտելի մայրաքաղաքը:

Edik G. Minasyan

THE CAPITAL YEREVAN IN THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA (1991 - 2018)

SUMMARY

Based on the relevant documents of the National Archive of Armenia, current archival materials of Yerevan Municipality, press, printed sources, the author managed to present the reader for the first time the complete scientific publication of the modern history of Yerevan. The work comes to discover Yerevan of previous years, including the lists of the popular version of the book "History of Yerevan" published in 2018. This monograph is a generalized reflection of the scientific thought acquired over the years and can be unique and important source of information for further studies related to the capital Yerevan.

The analysis of the relevant documents shows the social-political life in the capital in 1991-2018, the triumph of the symbols of the Armenian independent statehood in the capital, as well as the entire territory of the republic after the restoration of the independence. When the Armenian people restored statehood in 1991, for which they had dreamed of for centuries, Yerevan again became the capital of the independent Republic of Armenia. The capital of the newly independent republic has seen changes since the first years of Armenia's independence. The ongoing blockade of Armenia, the Azerbaijani-Artsakh war unleashed by neighboring Turkey and Azerbaijan, the deportation of Armenians from Azerbaijan and the difficult social-economic situation put the population of the capital in a difficult situation. The decline in the purchasing power of the population, the lack of supply of food, the sharp decline in the volume of public services were felt more than anywhere else in Yerevan. Resisting these difficult trials, the capital was able enough to provide comprehensive support to the struggling Artsakh with its full and active participation in the establishment of an independent state. One of the sub-chapters of the first chapter is dedicated to this analysis. In the period of almost three decades of the independence the strengthening of foreign

relations with twin cities and various international organizations, as well as the proclamation of Yerevan as the World Book Capital by UNESCO in 2012 contributed to the rise of the international prestige of Yerevan. The chapters and sub-chapters of the work dedicated to the analysis of the social-political, social-economic and cultural life of the capital show that the reforms undertaken in those spheres, together with their shortcomings, contributed to the further development of Yerevan.

The administrative reforms of the capital are given in a separate chapter, where Yerevan in the administrative-political system of the republic, its structural changes and social-economic life are presented. The analysis of the relevant documents shows how the above-mentioned reforms gave a new impetus to Yerevan as a political, economic, industrial, cultural and educational center, which has entered a new sustainable and dynamic era of development in the XXI century.

The necessary conclusions and suggestions are made in the conclusion, which, of course, will help to solve the problems of the capital. Large-scale works, especially in the fields of construction, improvement, trade and services, culture, education, sports, have made qualitative changes from year to year in making the city of Yerevan more prosperous and attractive for its residents and guests. Yerevan is one of the oldest and young cities in the world at the same time, a modern city in the second decade of the 21st century, which lives in a rhythm of development typical for the big cities.

We are really proud of our sunny city. Sun is the integral part of Yerevan, like the pink tuff, Zvartnots Airport, Hrazdan Stadium, Tsitsernakaberd, Karen Demirchyan Sports and Concert Complex and Ararat.

This monograph, dedicated to the modern history of our ancient and eternal Armenian capital, is an expression of love and devotion to our native land, a message to future generations to love and respect their beloved capital.

Эдик Гарегинович Минасян

СТОЛИЦА ЕРЕВАН В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА (1991 - 2018 ГГ.)

РЕЗЮМЕ

На основании соответствующих документов Национального архива Армении, текущих архивных материалов мэрии Еревана, прессы, а также напечатанных источников автору удалось впервые представить читателю полное научное издание новейшей истории Еревана. Работа посвящена Еревану предыдущих лет, в которую включены списки популярной версии книги «История Еревана», изданной в 2018 году. Эта монография является обобщенным отражением научной мысли, накопленной за годы, и может быть уникальным и важным источником информации для дальнейших исследований, связанных со столицей Ереваном.

Анализ соответствующих документов показывает общественно-политическую жизнь столицы в 1991-2018 годах, торжество символов независимой армянской государственности в столице, а также на всей территории республики после восстановления независимости. Когда в 1991 году армянский народ восстановил государственность, о которой он мечтал веками, Ереван снова стал столицей независимой Республики Армения. В столице новой независимой республики с первых лет независимости Армении произошли изменения. Продолжающаяся блокада Армении, азербайджано-арцахская война, развязанная соседними Турцией и Азербайджаном, депортация армян из Азербайджана и тяжелое социально-экономическая ситуация поставили население столицы в тяжелое положение. Падение покупательной способности населения, недостаток продуктов питания, резкое сокращение объема коммунальных услуг ощущались в Ереване больше, чем где-либо. Пройдя сквозь все эти тяжелые испытания, столица смогла оказать всестороннюю поддержку борющемуся за независимость Арцаху, приняв всестороннее и активное участие в создании независимого государства. Этому анализу посвящена одна из подразделов первой главы. В период почти

трех десятилетий независимости укрепление международных связей с городами-побратимами и различными международными организациями, а также провозглашение Еревана Всемирной столицей книги со стороны ЮНЕСКО в 2012 году способствовали подъему международного престижа Еревана. Главы и подразделы работы, посвященные анализу общественно-политической, социально-экономической и культурной жизни столицы, показывают, что реформы, проведенные в этих сферах, вместе с их недостатками, способствовали дальнейшему развитию Еревана.

Административные реформы столицы представлены в отдельной главе, где Ереван представлен в административно-политической системе республики наряду с его структурными изменениями и социально-экономической жизнью. Анализ соответствующих документов показывает, как вышеупомянутые реформы дали новый импульс Еревану как политическому, экономическому, промышленному, культурному и образовательному центру, который вступил в новую устойчивую и динамичную эпоху развития в XXI веке.

В заключении сделаны необходимые выводы и предложения, которые, безусловно, помогут решить проблемы столицы. Масштабные работы, особенно в области строительства, благоустройства, торговли и услуг, культуры, образования, спорта, из года в год вносят качественные изменения, делая город Ереван более процветающим и привлекательным для его жителей и гостей. Ереван - одновременно один из старейших и молодых городов мира, современный город второго десятилетия 21 века, который живет в ритме развития, типичном для больших городов.

Мы действительно гордимся своим солнечным городом. Солнце - неотъемлемая часть Еревана, как и розовый туф, аэропорт Звартноц, стадион Раздан, Цицернакаберд, спортивно-концертный комплекс имени Карена Демирчяна и Арарат.

Эта монография, посвященная новейшей истории нашей древней и вечной армянской столицы, является выражением любви и преданности нашей родной земле, призыв к будущим поколениям любить и уважать свою любимую столицу.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ (1990-2018 ԹԹ.) 22
ա. ՀՀ անկախության հռչակումը և անկախ պետականության
կայացման գործընթացի սկիզբը մայրաքաղաք Երևանում 22
բ. Մայրաքաղաքի օգնությունը մարտնչող Արցախին 42
գ. Հասարակական-քաղաքական գործընթացները Երևանում 82

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ 123

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿԸ 150
ա. Սոցիալ-տնտեսական վիճակը մայրաքաղաքում
1990-ական թվականներին 150
բ. Սոցիալ-տնտեսական վիճակը XXI դարասկզբին 188

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 287
ա. Գրական և գիտակրթական կյանքը 1990-ական
թվականներին 287
բ. Արվեստը 1991-2018 թվականներին 311

ՎԵՐՋԱԲԱՆ 355

Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 363

ԱՄՓՈՓՈՒՄ 372

SUMMARY 375

РЕЗЮМЕ 377

ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.)

ЭДИК ГАРЕГИНОВИЧ МИНАСЯН

СТОЛИЦА ЕРЕВАН В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА (1991 - 2018 ГГ.)

EDIK G. MINASYAN

THE CAPITAL YEREVAN IN THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA (1991 - 2018)

Լուսանկարները՝ Երևանի պատմության թանգարանի և Հայաստանի ազգային արխիվի ֆոտո հավաքածուներից:

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչությունում:
Մաշտոցի պող., 50ա/1 շենք

Ստորագրված է տպագրության՝ 18.09.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 23.75 + 16 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am